

Л.Н.Толстой

Литературные
Бумаги




J. H. Shupps

A handwritten signature in cursive script, likely ink on paper. The signature reads "J. H. Shupps". The "J" is a large, stylized initial, followed by "H." and "Shupps". The "Shupps" part is written in a flowing, connected script. There is a small, thin horizontal line underneath the signature.

891.99

Ահ. 42

✓



Հայոց պատմութեան աշխարհը

Հայոց պատմութեան
աշխարհը


ՀԱՏՈՐ ՎԵՑԵՐՈՐԴԻ

ԼՈՒԽԹԻՒՆ

ՄՈԽԻՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ

ԱՆԴՈՒԽՆԸ

ԿԵԱՆՔԻ ՎԵՊԸ



Բ Ո Ս Ը Ն

1948

ՀԱՅՐԵՆԻՔ ՏՊԱՐԱՆ



Հ 78992

874

201



ԵՐԿՈՒ ԽԾԱՔ

Ժողովածու Երկերի ներկայ՝ վեցերորդ հատորի մէջ ամփոփուած են Ա. Ահարոնեանի հետեւեալ երկերը .— «Լռութիւն», «Մոխիբների Տակից», «Անդունդը» եւ «Կեանքի Վէպը» :

«Լռութիւն»ը առաջին անգամ լոյս է տեսել 1904-ին Թիֆլիսում, իսկ երկրորդ անգամ 1926-ին, Բոստրում : Ներկայ հրատարակութեամբ «Լռութիւն»ը լոյս է տեսնում երրորդ անգամ : «Լռութիւն»ը բարգմանուած է իտալերէն եւ սպաներէն :

1909-ին ոռւս կառավարութեան ձեռքով Թիֆլիսում ձերբակալուած Ա. Ահարոնեանին փոխադրեցին Բաքուի քանտը, ուր նա ծանրապէս հիւանդացաւ : Ազդու միջամտութիւններով կարելի եղաւ դատական իշխանութիւնից արտօնութիւն ստանալ Ա. Ահարոնեանին քանտից հիւանդանոց փոխադրելու : 1909-ի ամառուանից մինչեւ 1910-ի դեկտեմբեր ամիսը Ա. Ահարոնեանը անցրեց Բաքուի բազարային հիւանդանոցում ուր, պահակների հսկողութեան տակ, թէ՛ բժշկուեց եւ թէ՛, օգտուելով համեմատական ազատութիւնից, գրեց մի քանի գործեր : Դրանցից երկուսն են «Մոխիբների Տակից»ը եւ «Անդունդը», որոնք առաջին անգամ հրատարակուած են 1910-ին : «Մոխիբների Տակից»ը երկրորդ անգամ հրատարակուել է «Լռութիւն»ի հետ Բոստրում, 1924-ին : Ներկայ հատորի մէջ «Մոխիբների Տակից»ը լոյս է տեսնում երրորդ, իսկ «Անդունդը» երկրորդ հրատարակութեամբ :

«Կեանքի Վէպ»ը սկսած է գրուել 1898-ին, երբ Ա. Ահարոնեանը Եւրոպա է անցել ուսանելու համար : 1898-ից մինչեւ 1903-ը Ա. Ահարոնեանը գրել է, Եւրոպական կեանքից առնուած մի շարք պատկերներ, որոնք, «Կեանքի Վէպերը» ընդհանուր վերնագրի տակ հետզիետէ լոյս են տեսել Թիֆլիսի «Մշակ» օրաթերթում : 1903-ից մինչեւ 1907-ը «Կեանքի Վէպեր»-ի վրայ աւելացել են հեղինակի կովկասի կեանքից առած պատկերներն ու պատմբաժները : 1908-ին այդ բոլոր պատկերներն ու պատմուածքները լոյս են տեսել Թիֆլիսում «Կեանքի Վէպը» ընդհանուր վերնագրի

տակ : Ներկայ հասորի մէջ «Կեանքի Վէպը» լոյս է սեսմում երկրորդ հրատարակութեամբ :

Առաջին հրատարակութիւնից հեղինակը դուրս էր քողել «Յառաջարանի տեղ»-ը և «Իմ Փոքրիկ Բարեկամուհին», որոնի 1898-ին լոյս են տեսել «Մշակ»-ի մէջ :

Մենք անիրաժեշտ նկատեցինք այդ երկու կտորներն էլ միացընել «Կեանքի Վէպ»-ին այս հասորում :

ԽՄԲԱԳՐՈՂ

1948, Նիւ Եօրկ

ՀՅՈՒԹԻՒՆ



ԼՐՈՒԹԻՒՆ

I

Այն ամառ մի քանի նկարչական էտիւդների համար որոշեցի արձակուրդներս գիւղում անցկացնել։ Յունիսը հասնելուն պէս՝ պայուսակս եւ նկարչական պիտոյքներս պատրաստեցի ու ճանապարհ ընկայ։

Մտածում էի ամբողջ երեք ամիս իսպառ կտրուել աշխարհից, ուստի մի այնպիսի գիւղ էի ընտրել, ուր ոչինչ եւ ոչ ոք ինձ չպէտք է խանդարէր։ Ճանապարհորդ օտարականներ չէին գալիս այստեղ, որովհետեւ կուրորտ չէր, մեծ հիւրանոցներ չկային, մինչեւ իսկ մեծ ճանապարհներից էլ բոլորովին դուրս էր։ Խուզ մենաւորութեան մէջ մոռացուելու, լայնարձակ ու գեղեցիկ բնութեան ծոցում ազատօրէն ապրելու ու երազելու բոլոր յարմարութիւնները ներկայացնում էր այդ գիւղը։ Նրա մի կողմից հոսում էր սահանքաւոր լեռնային գետակը, միշտ աղմկայոյց եւ միշտ էլ վճիտ, միւս կողմում ցցւում էր բարձրաբերձ լեռների մի գեղանկար շղթայ, որի ամէն մի կատարը իր մութ անտառներով ասես թիկունքը մորթիով պատաժ մի հսկայ լինէր, որ դէպի երկինքը ձգուելու գեղեցիկ խենթութեամբ էր բոնուած։ իսկ աւելի հեռուն՝ լեռների ոտների տակ, հրաշագեղ ելեւէջներով տարածում էր գեղեցիկ դաշտավայրը, ինչպէս մի կանաչի ծով։ Ես աշխատում էի մի անկիւն գտնել, ուր կարողանամ բիրտ, գունատ, շատ անգամ գարշելի իրականութիւնից խոյս տալ ու միայն երազել, երազել ու վայելել միայնութեան խոհերով լի թախիծի պատճառած անխառն հաճոյքը։ այժմ ապրում էի մի տեղում, ուր բնութիւնն ինքը մի սքանչելի երազ լինէր ասես, եւ ուր մարդկային հոգին, ծարաւի ու յուղոտ՝ դողում էր գեղեցկութեան ներդաշնակցութեան սքանչելի գաղտնիքի առաջ։ Եւ այս բոլորը ես պիտի վայելէի ամբողջ երեք ամիս։ Երջանիկ էի, եւ սիրութը ուսում էր անխառն հաճոյքից։

Ինձ պէս մի երազող, գեղապաշտ ու բնութեան սիրահար աւելի լաւ ընտրութիւն անել չէր կարող :

Տանտիկինս մի հաստ, շիկահեր ու բարի դէմքով գեղջկուհի էր. յիսունից անց էր երեւում, բայց անփորձ ու պարզամիտ էր, ինչպէս մի երեխայ : Նրա խոշոր թերութիւնը իր շատախօսութիւնն էր, որ էլ աւելի անախորժ էր դառնում չնորհիւ լսողութեան ծանրութեանը : Դեռ առաջին օրը նա ինձ ընդունեց ինչպէս իր վտարանդի որդուն, որ նոր է վերազառնում օտարութիւնից :

— Խաղաղ աշխատանքի՝ կամ պարզապէս հանգստութեան աեղ է, պարո՞ն, ասաց նա ցոյց տալով ինձ իմ սենեակը, անցեալ տարի էլ ես մի նկարիչ ունի հէնց այս սենեակում, աւելացրեց նա հպարտութեամբ, որ սեւ, երկար մաղեր, կարճ միքուք ունէր, հազնում էր մետաքսէ բլուզ, կրում էր լայնեզր ցողէ գըլխարկ, շատ նկարում էր եւ շատ էլ գոհ մնաց . նման էր ձեզ, բոլըրովին նման . այսօր երբ հեռուից ձեզ տեսայ, ինձ թուաց, թէ նա է դալիս . լաւ մարդ էր : Ես բախտ ունեմ, իմ պանսիօնը միշտ լաւ մարդիկ են դալիս :

Եւ այդ պանսիօնը . . . ընդամէնը երկու համեստ սենեակ վերին յարկում, իսկ ներքեւում մի խոհանոց, մի սեղանատուն եւ մի փոքրիկ ննջարան տանտիկնոջ համար : Բայց պառաւն այնպէս էր արտասանում «իմ պանսիօնը», կարծես դա մի շքեղ, հարուստ գղեակ լինէր : Նա երջանիկ էր, որ կարողանում էր ամէն ամառ մի երկու ուսանող կամ քաղաքացի հիւր ունենալ, խօսել նրանց հետ, բաներ իմանալ եւ յետոյ առանձին հպարտութեամբ պատմել իր հարեւանուցիներին : Նոյնիսկ իւրաքանչիւր նոր պանսիօներ ամբողջ ամառուայ ընթացքում ստիպուած էր պառաւից լսել իր նախորդի կեանքի եւ արտաքինի մասին հաղարու մի մանրամասնութիւններ : Խեղճ կինը այնքան գոհ էր լինում, եթէ նորեկն առանձին ուշադրութեամբ էր լսում նրա պատմութիւնները եւ բաժանում նրա զարմանքը, հիացմունքը, համակրութիւնը դէմի բացակայ հիւրերը :

Ինձ վիճակուել էր լսել մի անծանօթ նկարչի մասին, որ իրը թէ ինձ պէս երկար մաղեր ու միքուք ունէր, որ շատ էր նկարում եւ լաւ մարդ էր : Ընդամէնը երկու շարաթ էր, ինչ ապրում էի այս պանսիօնում, բայց արդէն դիտէի իմ նախորդի հասակի

բարձրութիւնը, տարիքը, դէմքի տարբեր մասերի ճիշդ նկարագիրը, աչքերի եւ մազերի գոյնը, նրա զանազան սովորութիւնները, պառկելու եւ վեր կենալու ժամերը, սիրած կերակուրները, ձայնը, շարժումները, մի խօսքով ոտքից գլուխ ծանօթ էի նրան, բայց իմ բարի պառաւը կարողանում էր գեռ էլի նորանոր մանրամասնութիւններ պատմել, որոնք բոլորն էլ ծագում էին առնում ինձանից: Դժուար չէր նկատել, որ ինչ ես անում էի, տանտիկ-նոջ ասելով նոյնն անպատճառ արած էր լինում իմ նախորդը: Ես իմ արտաքինով ու ներքինով, իմ ամրող էութեամբ կարծես մի տեսակ կրկնութիւնն էի ինձ անծանօթ, անյայտ, գուցէ եւ երեւակայական մի մարդու:

Եթէ ես առաւօտներն իջնում էի գետակի ափը, դուրս էր գալիս, որ իմ նախորդն էլ նոյնն էր արել եւ միեւնոյն ժամին. եթէ երեկոյեան ուշ էի վերադառնում, զրօնում էի խոնաւ օդի մէջ, նախորդս անպատճառ նոյն անդուշութիւնն արած էր լինում:

— Միշտ կրկնում էի, ո'րդի, ասում էր նա, երեկոները շուտ ներս արի, խոնաւ օդը լաւ չի, էլի չէր լսում, ձեղ պէս, պարո՞ն, ձեղ պէս, ա'խ այդ նկարիչները. գիտեմ, դիտեմ ձեղ, թափառականներ էք: Եւ նա օրօրում էր գլուխը յանդիմանող եղանակով:

Ես սկզբում չափազանց գոհ էի, որ հարեւան սենեակը պարագ է, որ պանսիօնում ինձ խանգարող չկայ, կարող եմ ապրել ուղածիս պէս, ժամանակս պարապմունքներիս նուիրել, կամ մենմենակ թափառել լեռներում ու խորհել: Բայց կամաց-կամաց պառաւի շատախօսութիւններն ինձ այնպէս ձանձրացրին, որ ի սրտէ կ'ուղէի մի բախտակից ունենալ այս պանսիօնում, նրա հետ բաժանել վիճակիս ծանրութիւնը, որ տանտիկինս երբեմն էլ ինձ աղատ ձգի եւ նրանով զբաղուի: Տարաբախտաբար ամառն արդէն մօտենում էր կիսին եւ սենեակը շարունակում էր պարապմանալ:

Տանտիկնոջս շատախօսութիւնն ինձ սակայն մի օդուտ տուեց, ես այլեւս երբեք տանը չէի նստում: Համարեա ամէն առաւօտ վազ ճանապարհ էի ընկնում լեռները, վերադառնում էի ճաշին եւ յետոյ կրկին գնում՝ միայն ուշ երեկոյեան տուն գալու համար: Երբեմն ճաշս էլ առնում էի հետս եւ այն ժամանակ ամ-

բողջ օրով տուն չէի դալիս . մի քանի անգամ նոյնիսկ դիշերները չդարձայ եւ անցկացրի լեռնային խուղերում՝ հովիւների հետ :

Դա մի զարմանալի կեանք էր, խենթ ու գեղեցիկ, մաքուր յոյզերով հարուստ ու խորը : Ես գարձել էի մի մոլորուած, թափառական քամի, որ էլ ոչ մի տեղ կայան եւ հանդիստ չունի : Ես սիրում էի մենաւոր ու այլանդակ ժայռերը, որոնք կարծես գաղտնիքների վրայ թուխս են նստել եւ նոթերը կիտել պառաւած հսկաների պէս . սիրում էի ե՛ւ մենաւոր ծառերը, որոնք չդիտես ինչ մի անհասկանալի քմահաճոյքով անտառներից խոյս տալով՝ անմատչելի լեռնակատարներն են ընտրում իրանց լուս խոհերի համար, վոթորիկների տակ տնքում են ու հեծեծում, բայց սիրում են երկնքին մօտիկ լինել : Եւ այնպէս հաճելի էր ահաւոր բարձրութիւններից դլխի պտոյտով ցած նայել անդունդները, կամ մի հայեացքով ընդզրկել լայնարձակ հորիզոնները ու վայրենի բնութեան լուռ սարսափը ճաշակել : Մանուկ օրերից ես սիրում էի երեւակայել կենդանութիւնը մեռած ողջ տիեզերքում, ուր ես եմ միայն կենդանի՝ ամայութեան ու անհունութեան մէջ տարուելիս՝ համակուած սգաւոր բնութեան մեծ վըշտով : Այդ վիշտն էր, որ այժմ ես ճաշակում էի այս մենաւոր լեռներում, ուր ժայռերի կատարներից գահավիժուող ջրվէժներն են հառաչում, եւ ուր պատառ-պատառ ամպերը յոգնած կարաւանների պէս հեռու տեղերից գալիս են հանդչելու : Այս հմայիչ բնութիւնն ասես անվերջ երազում էր վեհ լուռթեան մէջ, եւ նրա երազները գեղեցիկ էին ինչպէս դեւթական հէքիաթները : Ես կը կամենայի այդ երազներից մէկն ու մէկը աչքիս առաջ ունենալ կենդանի ու հասկանալի, չնչակտուր, բերանարաց հեւալ նրա առաջ, դուրդուրել, փայտիայել նրան, խնդալ ու լաց լինել նրա հետ : Տարօրինակ, անկարելի մի տենչ, բնութեան երազն ի՞նչ-պէս բռնել, ո՞վ կը տայ ինձ :

Երբեմն ինձ թւում էր, թէ իմ փնտուած երազը մարմնացած է մի գեղեցիկ թռչնի, մի թիթեռի, մի ծաղկի մէջ : Թռչունը բարձրանում էր, թիթեռը բռնել չէի կարողանում, միայն ծաղկին էի քաղում, նայում, խաղացնում ձեռքիս մէջ եւ ապա փետում ու թերթիկները քամուն տալիս : Եւ նայում էի փախչող թերթիկներին, որոնք գնում էին ո՞վ գիտէ ուր, եւ ողջ բնու-

թիւնը իր արտաքին գեղեցկութեան տակ դառնում էր իմ աչքին մի հսկայական գերեզման, ուր մի կոյր անգիտակից ոյժ յեղեղ-ուում էր վեհօրէն, ստեղծում էր ու փշրում, ծնում էր եւ ջնջում չդիտես ինչո՞ւ համար: Բնութեան երազը բռնելու իմ անզօրութեան մէջ՝ ես վհատուած ու մռայլ, ցած էի իջնում դէպի դաշտերը, ուր չարքաշ կեանքը եռում էր մի անխորհուրդ թափով՝ կարծես դարձեալ անգիտակից ու անտարբեր դէպի անխուսափելի վախճանը: Ես էլ այդ կեանքի մի մասն էի, նրանից անբաժան եւ ձեռք էի առնում վրձինս, կտաւի վրայ քարացնում վախչող իրականութիւնը, նրա ցաւոտ վայրկեանները, տառապող մարդու այնքան տանջանքները:

II

Մի քանի օրուայ բացակայութիւնից յետոյ՝ մի երեկոյ տուն վերադառնալիս, գիւղին բոլորովին մօտիկ՝ հեռուից տեսայ երկու կին, որոնք գալիս էին իմ հանդէպ զրօսնողների դանդաղ ու անհոգ քայլուածքով: Նրանից մէկը տարիքով էր երեւում, իսկ միւսը ջահիլ, վերջինս վարդագոյն զգեստ ունէր եւ նոյնպիսի հովանոց, մինչեւ միւսը հագել էր մուգ զգեստ եւ գլխին բռնել մի սեւ հովանոց: Արեգակը վաղուց էր թեքուել դէպի հորիզոնը, նրա շողերը հազիւ էին կարողանում թափանցել ճանապարհի երկու կողմերի ծառերի արանքից, բայց եւ այնպէս զրօսնող կանայք բաց էին պահում հովանոցները, երեւի հէնց այնպէս, առանց մտածելու: Ճանապարհի ստուերոտ Փոնի վրայ եւ կանաչների շրջանակով եղերուած՝ նրանք ծրագրում էին ինչպէս երկու պատկերներ հեռաւոր կիսախաւարի մէջ: Այս կանայք քաղաքացի են անշուշտ, մտածեցի ես, եւ երեւի եկել են մի զրօսանք կատարելու լեռներում: Ես ո'չ ուրախացայ, ո'չ տրտմեցի եւ կ'անցնէի նրանց կողքով անտարբերութեամբ, առանց անդամ ուշք դարձնելու նրանց վրայ, բայց մի անսպասելի հանդամանք այդ անկարելի դարձրեց: Դեռ հեռուից ես նկատեցի, որ նրանք ինձ տեսնելով՝ սկսեցին մի տաք խօսակցութիւն. տարիքով կինը ինչ որ պնդում, համողում, ինդրում էր, իսկ ջահիլը գլխի եւ ձեռքի վճռական շարժումով մերժում էր: Երբ ես բոլորովին՝

մօտեցայ ու պիտի անցնէի ջահիլ կնոջ կողքից, վերջինս հովանոցը թափով վար քաշեց, ամբողջապէս ծածկեց գլուխը ու շտապով անցաւ հակառակ կողմը միւս կնոջ հովանու տակ թագնուելու կամ պաշտպանուելու համար, ինչպէս մի թունիկ, որ բաղէն տեսնելով շտապում է մօր թեւերի տակ պահուել:

Ես ապշած մնացի:

Թւում էր, թէ այդ կինն ինձ ճանաչեց ու դիտմամբ խոյս տուեց, որ ես չկարողանամ իրան ճանաչել: Ուրիշ բացատրութիւն տալ անկարող էի: Առանց կանդ առնելու, առանց յետ նայելու՝ շարունակեցի ճանապարհս, բայց ուշք ու միտքս այն կանանց հետ էր, ո՞վքեր էին նրանք, ո՞վ էր այդ ջահիլ կինը, ինչո՞ւ թագնուեց: Տարարախտարար ո՛չ մէկի, ո՛չ միւսի դէմքը տեսայ: Մէկիկ-մէկիկ մտարերում էի ինձ ծանօթ բոլոր կանանց, յիշում էի իմ անցեալից արկածներ, որոնց մէջ այսպէս թէ այնպէս խառն է եղել մի կին, եւ չգտայ մի հատիկ դէպք, որ հնարաւոր դարձնէր այս աստիճան տարօրինակ հանդիպումն, այսքան վիրաւորիչ մի վերաբերմունք դէպի իմ անձնաւորութիւնը: Անախորժ զգացմունքով, դժգոհ ու մտաղրազ տուն հասայ: Տանտիկինս ցնծութեամբ դիմաւորեց ինձ. նրա լիքը, բարի դէմքը երջանիկ էր, իսկ խեղճ աչքերը վառում էին բաւականութեան կրակով:

— Է, սիրելի! նկարիչ, ուրախ լուր, բացականչեց նա հեռուից, հարեւան ունիք եւ մէկի տեղ՝ երկու:

— Ի՞նչ հարեւան:

— Է՞հ, ես էլ ի՞նչ եմ ասում, հարեւան չէ՛, այլ հարեւանու-հիներ, չպատահեցի՞ք այն կանանց:

— Այո՛, երկու կին տեսայ ճանապարհին:

— Մայր եւ աղջիկ են եւ պէտք է ապրեն միւս սենեակում մինչեւ ուշ աշուն. ինչ լաւ եղաւ, այնպէս չէ՞՛, տունը տխուր էր, հիմա երեք էք, ես էլ չորս: Հը՛, այսուհետեւ էլ շուտ-շուտ չէք փախչի սարերը, ասենք՝ ի՞նչ եմ ասում, փախչում էք՝ փախէք, ես հիմա ընկեր էլ ունեմ, խօսակից էլ, չէ՞ք մնայ տանը... աւելի փատ ձեղ համար: Բայց դիտէ՛ք ինչ կայ, աւելացրեց նա ճայնը ցածրացնելով, այն ջահիլը մի քիչ այնպէս է—նա մատը ճակատին դրեց — մի փոքր տարօրինակ է, բժիշկները խորհուրդ են տուել, որ մեր գիւղը կայ, իմ պանսիօնում ապրի: Այնպէս սի-

ըուն է, այնպէս սիրուն, հա՛, աղնուականներ են, անպատճառ աղնուական, ես առաջ էլ աղնուականներ եմ ունեցել, ճանաչում եմ . . .

Լոռութեամբ բարձրացայ սենեակս, չորերս էի փոխում եւ միեւնոյն ժամանակ մտածում: Որչափ եւ տարօրինակ լինէր այդ, բայց ինձ թուում էր, թէ իմ առաջ դրուած է մի հանելուկ, որ ես անպատճառ պարտական եմ լուծել: Եւ այդ հանելուկը հետեւ եալն էր — «ի՞նչ փոփոխութիւն առաջ կը բերի իմ կեանքում այս նոր հարեւանութիւնը»: Այս հարցը դառնում էր իմ գլխում, կախուած էր իմ շրթունքներից մի պատճառով, որ ես բացատրել չէի կարողանում, մի անորոշ զգացմունք էր պաշարել ինձ, որ երկիւղ չէր, ո՛չ էլ անհանդստութիւն, այլ անհամբեր, սպասողական դրութեան պէս մի բան: Մարդկային կեանքը մեծ ճանապարհ չէ⁹, ուր այնքան անծանօթ դոյլութիւններ անցնում են իրար կողքեց բոլորովին իրարից անկախ ճակատագրերով: ինչո՞ւ համար հէնց այս կանայք որեւէ ազդեցութիւն պէտք է ունենան իմ ճակատադրի վրայ: Իմ հոգեկան կացութիւնը բացատրելու համար սկսեցի մտածել, թէ դուցէ ի բնէ իրար հետ շաղկապուած բախտեր կան, որոնց բաղխումը իրական, առարկայական դառնալու համար պակասում են միայն դիպուածներ: Եւ ահա՛ այդ վճռական դիպուածներից մէկը: Յետոյ այս բնագանցական միտքը ինձ թուաց անհեթեթ ու ծիծաղելի, ժպտացի իմ թեթեւամտութեան վրայ: արդարեւ, ի՞նչ նշանակութիւն կարող էր ունենալ ինձ նման փորձուած, մեծ քաղաքի արկածալից կեանքին լաւ ծանօթ մի նկարչի համար մի ինեղն պառաւի եւ համարեա խենթ աղջկայ հարեւանութիւնը, այն էլ երկու ամսով: Հոգեկան այս կացութիւնը արդիւնք էր երեւի այն ծանր թախիծի, որ ես ամէն անդամ բերում էի ինձ հետ հեռաւոր լեռներից ու անտառներից, ուր միայնութիւնը ամենասովորական երեւոյթները դարձնում էր խորհրդաւոր:

Վերջին միտքն ինձ գոհացրեց, բայց իսկոյն իմ աչքին ներկայացաւ ճանապարհի անցքը յետին մանրամասնութեամբ: այն մուգ Փոնի վրայ ծրագրուած երկու պատկերները, այն վարդադոյն հովանոցը, որ արդութեամբ իջաւ մի անծանօթ դէմքի վրայ, եւ այն բարձրահասակ կինը, որ փախաւ, մօր յետեւում

ծածկուեց : Տանտիկինս ասաց , թէ ջահիլ կինը մի քիչ այնպէս , տարօրինակ է , բայց է՛լի . . . ինչո՞ւ համար փախաւ , կարող էր մի ուրիշ բան անել : Իւրաքանչիւր տարօրինակութիւն , մարդկային հոգու ամենաօտարութիւն արտայայտութիւնն անդամ՝ արտաքին աշխարհում իր շարժառիթները , իր գրդիչներն ունի անշուշտ , ինչո՞ւ ես հանդիսացայ ներկայ դէպօւմ այն կնոջ անօրինակ վարմունքի պատճառ , ի՞նչ կապ գտաւ այդ խղճուկ միտքը իմ արտաքինի եւ իր հոգու մէջ , ի՞նչ հեռաւոր եւ ցաւոտ վերյուշեր զարթեցրի ես նրա դլխում :

Աստիճանների վրայ լսուող ոտնաձայներն ընդհատեցին իմ մտքերը , նրանք բարձրանում էին : Ես սկսեցի ուշաղրութեամբ հետեւել նրանց քայլուածքին , զգեստների խշխոցին , նրանց յողնած հեւքին ու թեթեւ բացականչութիւններին : Ակամայ հայեացք դարձաւ դէպի այն դուռը , որ ինձ բաժանում էր նրանցից , եւ մի անյաղթելի պահանջ զդացի մօտիկից տեսնել նրանց դէմքերը , մանաւանդ նրա դէմքը : Շունչս պահած՝ մօտեցայ զգուշութեամբ եւ աչքս դրեցի կողպէքի ծակին , որ իմ բախտից բաւական լայն էր եւ բանալիով բռնուած չէր : Ինչո՞ւ նայեցի , ինչո՞ւ գործեցի այս յանցաւոր անհամեստութիւնը , չգիտեմ , բացարել չէի կարող , բայց զդում էի , որ կատարում եմ ամենավատ տեսակի գողութիւն եւ կուրծքս սղմում էի՝ սրտիս բարախումը մեղմելու համար : Մայրը յիսունն անց մի կին էր , միջահասակ , հարուստ մարմնով , տակաւին թարմ դէմքով , որ մի ժամանակ պէտք է խիստ գեղեցիկ եղած լինէր : Նա հանեց գլխարկը , դրեց մի կողմ , — ծոյլ-ծոյլ նետուեց դիւանի վրայ ու յենուեց բարձերին : Աղջիկը բարձրահասակ էր ու բարեձեւ կաղմուածքով , կարծես մարմարից կերտուած . մարմնի զանազան մասերի համաշափութիւնը , դասաւորութեան ներդաշնակութիւնն սքանչելի էր : Նա շիկահեր էր , պարանոցը կարապային , աչքերը խոշոր , բայց առանց իր սեռին ու հասակին յատուկ կրակի . դէմքը ձուածեւ էր , նուրբ գծերով , բայց գունատ . ծնօտը կոլոր , իսկ ըիթը՝ հոսմէական մատրոնայի : Մի կանացի դէմք աւելի կատարեալ լինել չէր կարող , եւ սակայն այդ կինը անզօր էր գրաւել ում եւ լինէր : Նրա արտաքին գեղեցկութեան եւ ներքին իմացականութեան ներդաշնակութիւնը խախտող մի բան կար , որ

արտայայտում էր նրա ե'ւ շարժումների, ե'ւ ժպտի, ե'ւ մանաւանդ հայեացքի մէջ: Շըթունքները շարժելիս՝ նրա գեղեցիկ քթի երկու կողմերում, բերանից վեր՝ կաղմւում էին երկու այնպիսի խորչումներ, որոնք մենակ բաւական էին ջնջելու համար նրա գեղեցկութեան բոլոր փայլը, իսկ աչքերը՝ այն խոշոր, սիրուն աչքերը կարծես ապակուց ձուլուած լինէին, տարօրինակ էր թւում նոյնիսկ, որ թերթերունքները շարժւում են: Դա մի սառած, անյոյդ գէմք էր, որի խաղաղութիւնը ոչինչ չէր արտայայտում, իսկ ամենաթեթեւ յոյզը դարձնում էր ողբալի: Այդ կինը զարմանալի յիշեցնում էր միւզէների այն մոմէ դէմքերը, որոնք որքան աւելի են նմանում բնականին, նոյնքան նողկալի են դառնում:

Արդարեւ իմ առջեւ կանգնածը կարծես կին չէր, այլ մի ուրիշ արարած, որի արտաքին փայլի ու գեղեցկութեան տակ ծածկուած էր մի ինչ որ աներեւոյթ, անհասանելի ու մութ բան, որ խանգարել էր նրա հոգու ներդաշնակութիւնը, փշրել էր կամքը եւ նրան դարձրել միմիայն շարժուն մեքենայ: Թւում էր, թէ այն մութ, աւերիչ բանը այդ կնոջ ներքինի եւ արտաքինի մէջ քանդել էր կապերը, եւ այդ պատճառով դէմքը դադարել էր Հոռոգեկան յոյզերի հայելին, արտայայտիչը լինելուց: Այդ սքանչելի աչքերը կարող էին լալ՝ երբ հոգին ժպտում էր, կամ ժպտալ՝ երբ հոգին լալիս էր:

Նա կանգնած էր հայելու առաջ անշարժ, հովանոցը ձեռքին, դլիսարկը գլխին եւ անթարթ նայում էր իր պատկերին, կարծես հմայուած սեփական գեղեցկութեամբ: Մի երկու անդամ ժպտաց, մի անդամ էլ լեզուի ծայրը դուրս հանեց վարդագոյն շրթունք՝ ների միջից:

— Լեզուս ի՞նչ կարմիր է, մայրի'կ, այնպէս չէ^o, տե՛ս:

— Հա՛, կարմիր է, շտապեց համաձայնել մայրը, որ տընրութեամբ հետեւում էր նրա շարժումներին:

— Գլխարկով լաւ եմ, ի՞նչ սիրուն եմ:

— Շատ լաւ ես, շատ սիրուն ես, Կլա՛րա:

— Մազերս կը քանդեմ:

— Քանդի՛ր:

Երեւում էր, որ մայրը վճռել է ամէն բանում համաձայնել նրա հետ եւ երբեք չհակածառել, չզայրացնել:

Զահիլ կինը յետ քաշուեց, դլխարկը հանեց, ներվային չարժումներով երկայն, ոսկեգոյն մազերը քանդեց, փուց ուսերի վրայ ու կրկին եկաւ հայելու առաջ կանգնեց: Այսպէս նա է՛լ աւելի գեղեցիկ էր:

— Ես ի՞նչպէս դեղեցիկ եմ, մայրի՛կ:

— Շա՛տ, շա՛տ գեղեցիկ ես, կլա՛րա:

— Ես մարդու չեմ գնայ, որ տրաքուեն տաղամարդիկ, ո՛չ մէկին չեմ առնի, թո՛ղ աչքները դուրս գայ:

— Հա՛, շատ լաւ կ'անես, մի՛ առ:

— Ա՛յ, ես այն պարոնին էլ չեմ առնի, որին քիչ առաջ տեսանք ճանապարհին:

— Մի՛ առ, նրան էլ մի՛ առ:

— Բայց նա ինձ կ'ուզի, անպատճառ կ'ուզի, ա՛յ, կը տեսնես, տղամարդիկ այդպէս են, հէնց որ մի սիրուն կին տեսնեն, իսկոյն առաջարկութիւն կ'անեն: Մազերն էլ այնպէս երկար էին, տեսա՞ր, բո՞ւհ...

Եւ նա բարձրաձայն քրքջաց, հեռացաւ հայելուց, մօտեցաւ լուացարանին, թեւերը մերկացրեց ու սկսեց լուացուել: Հոլանի բազուկներն սքանչելի էին, նուրբ, բարեձեւ ու սպիտակ: Զեռքերը թաղեց ջրի մէջ, բայց երկար ժամանակ չէր լուացւում, այլ երեխայի պէս խաղում էր ջրի հետ, մերթ բերանն էր լցնում, փը-չում այս ու այն կողմ, մերթ երկու ափի մէջ բռնում, թափով սղմում ու ցնցուղները տարածում շուրջը: Կլարան իր խաղերով թրջում էր անկողինը, պատերը, յատակը, իր զգեստները: Մայրը բաւական ժամանակ տիրութեամբ հետեւում էր այդ տեսարանին առանց համարձակուելու խանգարել նրան, ապա ճարը կտրած մօտեցաւ կամացուկ ու քաղցրութեամբ ասաց.

— Կլա՛րա, ջուր ածեմ՝ լուացուե՞ս:

— Զէ՛, չէ՛, չէ՛, զայրացաւ աղջիկը, դէմքը ցաւալի կերպով ծամածոուեց, շրթունքները գողղողացին կատաղութիւնից, աչքերը փայլեցին մի անախորժ կրակով եւ նա սկսեց ոտները յատակին խփել եւ նետել սենեակի չորս կողմը ձեռքի տակ ընկած իրերը — աթոռ, սալոն, սանտր, ջրաման: Մայրը դրկեց նրան, աղաչում էր, որ հանգստանայ, իսկ կլարան ճշում էր, ոտները թափահարում եւ ապա սկսեց բարձրաձայն հեկեկալ: Այդ լացը

սպանիչ էր, ամբողջ այդ տեսարանը մի ցուրտ, վհատեցուցիչ բան ունէր իր մէջ, որից մարդու մազերն էին փշաքաղւում ու հոգին ցաւում։ Ամաչեցի, որ նայում եմ, յոգնած ու ինձանից դժգոհ յետ քաշուեցի, շտապով դուրս փախայ, որ չլսեմ այդ աւերուած, խեղաթիւրուած հոգու աններդաշնակ հեծկլտանքները, մի կորած դիտակցութեան այս այլանդակ ու անդիտակից սուզը, փախայ դէպի դաշտերը, պէտք էր քայլե՞լ, քայլե՞լ...

Կլարայի ճիչը հալածում էր ինձ։ Երկար թափառում էի ու մտածում այդ օրուայ անցքերի մասին, քննում էի իմ հոգին, որի անակնկալ յուզումները ինձ զարմացնում էին։ Այնուամենայնիւ երկար խորհելուց յետոյ եկայ այն հանդստացուցիչ եզրակացութեան, որ այդ բոլորը թէեւ չափազանց անախորժ, չափազանց անհաճոյ է, բայց այդ խեղճ կանայք պէտք է որ չկարողանան իմ կեանքում որեւէ դեր խաղալ, թեթեւ անհանդստութիւններ պատճառելուց զատ, որ այն ջահիլ կինը, այն օտարուի կլարան որքան եւ գեղեցիկ լինի, ինձ համար մեռած է, քանի որ նրա հրաշալի արտաքինը միայն ցաւ ու ափսոսանք է յարուցանում, եւ վերջապէս ծայրայեղ դէպքում, եթէ նրանք շատ ձանձրացնեն ինձ, կը ձգեմ ու կը հեռանամ այս պանսիօնից, ուր իմ խաղաղութիւնն ու միայնութիւնը այսպէս անակնկալ ու անախորժ ձեւով խանգարուեց։ Ինչ եւ լինէր իմ հոգեկան կացութիւնը, հաստատ էր սակայն, որ սիրային արկածի հեռաւոր հնարաւորութիւն անդամ չկար ինձ համար, իսկ դա աւելի քան կարեւոր հանդամանք էր, որովհետեւ հակառակ դէպքում իմ պարապմունքներն իսպառ կը խանգարուէին։ Գեղեցիկ կինը իմ կեանքում միշտ խաղացել է ճակատագրական դեր, չդիտեմ՝ աշխարհում կա՞յ տըղամարդ, որ իր մասին կարողանայ հակառակը պնդել։ Գեղեցիկ կինը մի սՓինքս է մեծ ճնապարհի վրայ, եւ նրա առեղծուածներից խուսափել անհնարին է։ Փախել էի քաղաքից ու այս խուլ ամայութեան մէջ իմ հանդիսաւը թանդ էի գնահատում։ Ուրախ էի, որ այս կինը իր արտաքինով թէեւ մի սՓինքս է, բայց առեղծուածներ չունի, անվտանգ է։ չէ՞ որ կլարան համարեա խենթ էր։

Արդէն մութ էր, եւ ես իսպառ հանդստացած տուն վերադամայ։

III

Այն երեկոյ էլ ես ու տանտիկինս դարձեալ մենակ ընթրեցինք. իմ հարեւանուհիներն իրանց սենեակումն էին, տանտիկնոջ ասելով այդպէս էլ պէտք է շարունակուէր. նրանք սեղանատուն չպէտք է իջնէին երբեք: Ես չգիտէի ուրախանա՞լ, թէ տրտմել, որ մենք այսուհետեւ էլ մենակ պէտք է լինենք սեղանատանը. մի կողմից այնուամենայնիւ ինձ հետաքրքրում էին այդ կանայք, միւս կողմից այդ օրը տեսածներս անհաճոյ էին դարձնում որեւէ նոր հանդիպումն: Տանտիկինս այդ օրը չէր խօսում անցեալ տարուայ նկարչից, նա բոլորովին յափշտակուած էր իր նոր հիւրերով:

— Օ՛, մայրը խելացի կին է, պարո՞ն, խելացի կին, անպատճառ աղնուական ծագումից. քիչ առաջ տեսնէիք, երբ վերադարձան, նա մի ծաղիկ քաղեց պարտիզից, հա՛, տեսնելու բան էր, թէ ինչպէս կուցաւ, իսկ եւ իսկ աղնուականի պէս. եւ յետոյ ծաղիկն էլ ա՛յ այսպէս երկու մատի ծայրով բռնեց քնքշութեամբ ու տուեց աղջկան:

— Աղջանո՞ւնը, հարցը ես առանց մտածելու, հէնց այնպէս, եւ դժգոհ մնացի իմ հարցից:

— Աղջանո՞ւնը... ճշմարիտ՝ չեմ յիշում, մի տեսակ էր, մի խոչըր անուն, աղնուականի անուն, բայց էլի մոռացայ. ես աղդանուները երբեք չեմ յիշում, մինչեւ իսկ ձերը շատ անդամ մոռանում եմ, անցեալ տարուայ նկարչինն էլ չեմ յիշում, աւելացը նա ժպտալով:

Դուռը կամացուկ բացուեց եւ չեմքի վրայ յայտնուեց կլարայի մայրը. անսպասելի էր, ես սաստիկ շփոթուեցի, ինձ թուաց, թէ նա գիտէ, որ ես նայել եմ դրան ճեղքից եւ յատկապէս եկել է իմ երեսովը տալու վարմունքիս բոլոր տգեղութիւնը: Պակաս չշիռթուեց նաեւ տանտիկինս. նա թուաւ ոտքի, փորձեց մեղ ներկայացնել իրար, բայց այդ չյաջողուեց, միայն ձեռքը նախ մեկնեց դէպի նորեկը, ապա գէսլի ինձ ու հաղիւ կարողացաւ թոթովել.

— Կենոր է, տիկի՞ն, նկարիչ, լաւ էլ նկարում է:

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ, տիկինը ճեռքը մեկնեց ինձ՝

արտասանելով իր անունը, որ ես լաւ չլսեցի:

— Հերու էլ մի նկարիչ ունէի, կրկին մէջ ընկաւ տանտիկինը, իսկեւիսկ սրա նման, բախտս կտրում է, բոլոր լաւ մարդիկ ինձ մօտ են գալիս:



— Ես անչափ բախտաւոր եմ, որ առիթ ունեցայ այսպէս շուտ ծանօթանալ պարոնի հետ, շարունակեց նորեկը: Զեզնից ներողութիւն խնդրելու հարկի մէջ եմ գտնւում, պարո՞ն, դարձաւ նա դէպի ինձ. դուք անշուշտ չէք մոռացել այսօր ճանապարհին տեղի ունեցած անախորժ միջնադէպը. երեւակայեցէք, տիկի՞ն, պարոնը գալիս է մեր հանդէպ, աղջիկս ծածկում է հովանոցի տակ եւ վագում է իմ յետեւում թագնուելու. տարաբախտաբար իմ խեղճ կլարան տղամարդկանցից եւ մանաւանդ անծանօթներից խոյս տալու ցաւալի մանիս ունի, մի քանի տարի է, որ այդպէս է, խնդրում եմ ներողամիտ լինիք, պարո՞ն, դէպի խեղճ հիւանդը եւ ուրիշ բացատրութիւններ չինտուէք:

— Այն տիսուր միջնադէպը, տիկի՞ն, ես համարեա մոռացել եմ եւ ի բոլոր սրտէ ցաւակցում եմ ձեզ յարդելի օրիորդի հիւանդութեան համար, որից՝ յոյս ունիմ՝ նա շուտով կը բուժուի. լեռնային օդը, արձակ, սիրուն բնութեան մէջ անյոյզ, խաղաղ կեանքը հրաշագործ են մանաւանդ ներվերի համար:

— Շնորհակալ եմ, պարո՞ն, շնորհակալ եմ, որքան բարի էք, ասաց նա եւ գլուխ տալով հեռացաւ:

Ես մնացի լուռ ու մտախոհ, խօսելու հերթը տանտիկնոջս հասաւ:

— Այդ ի՞նչ անախորժ բան է տեղի ունեցել, Տէ՛ր Աստուած, բացականչեց նա. եւ դուք ինձ չասացիք. ուրեմն նա այդպէս ծածկուեց ձեզանից, եւ դուք ինձանից թագցրիք, ի՞նչ ցաւալի բան, եւ այդպէս սիրուն աղջիկ. իսկ մայրը... տեսա՞ք, ինչպէս է խօսում, աղնուականի պէս. չէք էլ վիրաւորուել, ի՞նչ բարի էք, ճիշդ հերուայ նկարչի պէս. երեւակայեցէք, մի անդամ նրա հետ էլ մի նման դէպք պատահեց, անցնում է փողոցով, յանկարծ առաջն է դուրս գալիս մի մարդ, «գինի չե՞ս խմի, ասում է, գընանք մի-մի բաժակ կոնծենք». կարո՞ղ էք երեւակայել այդպիսի վիրաւորանք. այդ անսկիտանին ամբողջ գիւղը գիւտէր, միշտ հարրած էր, եւ անտանելիս: ինքը նկարիչը ինձ ոչինչ չասաց, ես



երեսից իմացայ, վրդովուեցի, ուզեցի գնալ... դէ ախր չի կարելի, ես միշտ պատռաւոր հիւրեր ունիմ, ո՞ւր կ'երթայ, եթէ նրանց վիրաւորեն զանազան հարբեցողներ, իմ պասիօնը պատռաւոր հաստատութիւն է. Հա, դուրս եկայ, որ գնամ... ուր հարկն է յայտնեմ, եւ, երեւակայեցէ՛ք, իմ սիրելի նկարիչը չի թողնում, չթողեց, էլի, «Աստուած իր հետ, ասում է, թողէք նրան հանդիսատ». ահա! այսպէս բարի մարդ էր, ձեզ պէս բարի, փառք Աստծու, բախտ ունիմ:

Հակառակ իմ սովորութեան այն երեկոյ ընթրիքից յետոյ ես զգնացի զրօննելու եւ լուռթեամբ բարձրացայ սենեակս, ձգուեցի դիւանի վրայ, ձեռքերս դլիմիս տակ դրած՝ անթարթ նայում էր այն դրանը, որ ինձ բաժանում էր իմ հարեւանուհիներից: Նրանք լուռ էին, եւ այդ լուռթիւնն ինձ զրադեցնում էր ու խորհել տալիս: Վճռել էի այլեւս երբեք չնայել կողպէքի ծակից, երբեք անհամեստօրէն չդիտել այն կանանց ներքին կեանքը, չտեսնել այն սքանչելի գեղեցկութեան աւերումները, այդ փշրուած բանականութեան ճնշող տեսարանները: Ես արդէն գիտէի համարեա բոլորը. հարեւան սենեակում իր մօր հետ ապրում էր մի հիւանդ, դժբախտ կին, որ ներսում՝ առանձնութեան մէջ իր անհասկանալի քմահաճոյքներն ունի, իսկ դրսում՝ տղամարդկանցից ծածկուելու տարօրինակ սովորութիւնն ունի: Եւ այդ ջահիլ կինը գեղեցիկ է. մի գեղեցկութի՛ւն սակայն, որ ամէն վայրկեան աւերում, խանդարում է ներքին, հողեկան աններդաշնակութիւնից, ինչպէս մի ջինջ լճակի, որ իր յատակին նստած տիղմից պըզտորւում է ամէն անդամ, երբ քամին յուզում է ալիքները: Գիտէի այդ բոլորը, բայց եւ այսպէս նայում էի դրանը, չէի կարողանում աչքս հեռացնել կողպէքի ծակից. արդեօք իմ վատ արարքի ամօթն էր հայեացքս կապել այդ դրանը, թէ՞ մի ուրիշ բան, չէի կարող ասել, բայց նայում էի անթարթ, մտածկոտ ու դժոն:

Մութ էր արդէն, բայց մտքովս էլ չէր անցնում ճրագ վառել, շարունակում էի պառկած մնալ սենեակիս խաւարի մէջ եւ ուրախ եղայ, որ ուշադրութիւնս գրաւեց մի ուրիշ բան, լուսոյ մի փոքրիկ շող ներս էր թափանցել իմ սենեակը եւ խաղում էր պահարանիս վրայ, ինչպէս մի մոլորուած թիթեռ: Նայում էի այդ լոյսին, որ գալիս էր հարեւան սենեակից, եւ մտածում էի

այն մասին, թէ ինչո՞ւ այդ երեկոյ մնացի տանը եւ ինչո՞ւ ճրագէ չեմ վառում: Մտածում էի պատասխան դտնել, չէի կարողանում եւ զայրանում էի: Վերջ ի վերջոյ եկայ այն եղբակացութեան, որ թէեւ չեմ ուղում ինքս ինձ խոստովանել, բայց եւ այնպէս մը նացել եմ տանը դարձեալ այդ կանանց համար, նրանց պատճառով. այս միտքը ե՛ւ ամաշացրեց, ե՛ւ զայրացրեց ինձ: Մի՞թէ՝ ճշմարիտ՝ այդ խեղճ, կիսախելադար կլարան ինձ այդպէս կարող էր հետաքրքրել մի օրում: Այդ անկարելի է: Եւ որպէս ապացոյց՝ թափով վեր թռայ տեղիցս, լամպս վառեցի եւ սկսեցի մէկիկ-մէկիկ նայել ամառուայ ընթացքում իմ կատարած հտիւդները, ու րոնք կարգով շարուած էին սենեակիս պատերի վրայ:

Նկարները բազմաթիւ էին. այստեղ կար մի գիւղացի աղջիկ, որ հանդարս գալիս էր դաշտերից՝ գետնախնձորով լի կողովը շալակած: Բեռը ծանր էր. նա կուցած էր եւ քայլում էր դժուարութեամբ. գեղեցիկ արարած էր, բաց, դրաւիչ դիմագծերով, որոնք սակայն ծոմուում էին նրա ցաւոտ ճիգերով. աշխատանքը, մաշող, տրորող աշխատանքն էր այստեղ աւերած գործողը. բնութեան ներդաշնակութիւնը, որ այնպէս կատարեալ կարող էր լինել այդ անմեղ դէմքի վրայ, դարձեալ այլանդակուում էր. աղջկայ փոյթը չէր, նա գնում էր ու գնում, ապրել էր պէտք:

Լերան վրայից մի պառաւ կին էր իջնում, նա քայլում էր երկուտակ ծալուած խղճալի անկարողութեամբ, թէեւ բոլոր բեռը չոր փայտերի մի քանի կտորտանք էր, որ նա ածել էր իր պատառուած գոգնոցի մէջ: Խրճիթը հեռու էր, եւ նա պիտի քայլէր, քայլէր, լուսութեամբ, առանց տրտնջալու, մինչեւ կը հասնէր:

Մի գիւղացի կար, որ հեռաւոր դաշտերից սայլով իսու էր բերում, փոքրիկ առուակից անցնելիս անիւը կոտրուել էր, եւ նա կանդնած՝ նայում էր հեռուն մի անյուսութեամբ, որ ցաւի խորին չեշտ ունէր, նա էլ պէտք է քայլէր մինչեւ դիւղը նոր անիւ բերելու, գործը մնում էր եւ ժամանակը փախչում:

Մի ուրիշ գիւղացի՝ արեւից այրուած, թխացած դէմքով, որ այնպէս յիշեցնում էր մայր Հոգի գոյնը, հանդարս քայլում էր արօրի յետեւից, եւ աչքը չէր հեռացնում ակօսից, ուր թաղում էր իր քրտինքն ու յոյսերը: Զոյդ եղները քաշում էին՝ օրօ-

բելով հնագանդ գլուխները, երկիրը սեւանում էր նրանց ոտների տակ սերմն ընդունելու համար:

Եւ էլի ուրիշ շատերը... մտարերեցի տեղը եւ ժամը, երբ նկարել էի այդ տեսարանները, մէկիկ մէկիկ մտքովս անցան այն անմեղ արկածները, որոնք այնպէս կազուած են թափառական նկարչի պարապմունքներին դաշտերում ու լեռներում: Ճրագի լոյսի տուաջ փոռուած էր մի ամրող գիւղական կեանք իր բաղմապիսի, պարզ, գրաւիչ արտայայտութիւններով, չարաչար աշխատող, լուսութեան ու խաւարի մէջ տքնող մարդկանց մի ամրող բաղմութիւն, որոնց միայն տեսքը այնպէս առաքինի է դարձնում մեղ, այնպէս մեղմում է փոքրիկ իրերից լուզուած մեր խոշոր կրքերը, նոր սահմանումներ է տալիս մեր անհատական ցաւերին, հասկացնում է մեղ մեր ներքին արժէքը: Այսպիսի տեսարանների առաջ միայն մենք զգում ենք սեփական վշտերի բոլոր ոչնչութիւնը, զգում ենք, որ իրապէս տառապող, մորմոքող սրտերի ցաւերին ծանօթ չենք, եւ շատ անդամ հէնց դրա համար է մերը անտանելի թւում:

Եւ ինչպէս լաւ էին այդ բոլոր տեսարանները, եւ որքան վեհութիւն կար այդ տանջուած դէմքերի, այդ հնագանդ եւ հողին ուղղուած հայեացքների մէջ: Լուսութեան, խաւարի մէջ սահող, ծանր աշխատանքով ծանրաբեռնուած այդ մութ կեանքի ամէն մի կտորը, ամէն մի խորշը աւելի մեծ ցաւ, աւելի խորը յոյզ է պարունակում շատ անդամ, քան բիւրաւոր մեղկ գոյութիւնների սին հառաչանքները: Իսկական ու խորունկ ցաւը լուռ է եւ դաշլարւում է լուռութեան մէջ: Ինչո՞վ էի զբաղուած քիչ առաջ, մտածում էի ես. ի՞նչ էի ինձ համար ծանր հոգսի առարկայ դարձրել, սրտի թրթիռով աշխատում էի լսել, թէ ի՞նչ են խօսում երկու կանայք, որոնցից մէկը նոյնիսկ հողեպէս հիւանդ է. արդեօք նրա համար չէ՞՝, որ նա՝ այդ կինը՝ գիւղացի չէ, այլ եկել է քաղաքից եւ պատկանում է այն դասակարգերի, որոնք երբեք չեն հասկացել բիւրաւոր մութ գոյութիւններին բիւրաւոր տառապանքները:

Ե՞՞հ, աշխարհ... Ես էլ այդ աշխարհի հարազատ զաւակն էի եւ ամաչում էի, որ այդպէս եմ:

Իմ մտքերը ընդհատեց հարեւան սենեակից լսուող խօսակ-

ցութիւնը : Մայրը խնդրում էր, որ աղջիկը անկողին մտնի, իսկ կլարան չէր համաձայնում եւ ինչ որ պահանջում էր, ինչ որ պայման էր դուռմ:

— Զե՞ս գնայ, չե՞մ պառկի, ա'յ, անկողինը կը քանդեմ . . .

Ապա ես լսեցի սենեակի զանազան կողմերը նետուող առարկաների ձայնը, մի փափուկ բան էլ, երեւի մի բարձ, դիպաւ իմ դրանը, որ խուլ թրիկոց հանեց, յետոյ մէկը դուրս եկաւ սենեակից, եւ քիչ յետոյ դուռս կամացուկ թակեցին:

— Նե՞րս մտէք:

Եեմքի վրայ յայտնուեց հիւանդ աղջկայ մայրը անհամարձակ, ամօթահար ու ընկճուած:

— Ներեցէ՞ք, պարո՞ն, առաջին օրն է, որ մենք այստեղ ենք, եւ արդէն քանի անդամ ձեզ անհանդիստ արի. Կլարան խնդրեց ձեզ բարի գիշեր մաղթել:

Ես հասկացայ, դարձեալ մի տարօրինակ քմահաճոյք:

— Բարի՛ գիշեր օրիորդին, ասացի բարձրաձայն՝ հարեւան սենեակում լսելի լինելու համար:

— Շնորհակալ եմ, պարո՞ն, որքան բարի էք, ասաց խեղճինը ու հեռացաւ:

Հարեւան սենեակում կրկին խաղաղութիւն տիրեց, ես հազիւ լսում էի հանուող զգեստների խշխոցը, անկողնի թեթեւ ճոճոցը, քիչ յետոյ այն էլ դադարեց, եւ շուրջս իշխեց խորին լութիւն:

Հարեւանուհիներս երեւի քնեցին, իսկ ես երկար ժամանակ դեռ քնել չկարողացայ: Ո՛րտեղից յայտնուեցին այս կանայք, որոնք իմ կեանքի խաղաղ, երջանիկ ընթացքն այսպէս անակնկալ եւ տարօրինակ ձեւով խանդարեցին: Եւ եթէ այսուհետեւ էլ շարունակուի, կարո՞ղ եմ մնալ այստեղ թէ ոչ: Այս մտքերը պաշարել էին իմ գլուխը, համարեա տանջում էին ինձ: Հեռանալն անշուշտ ինձ համար դժուար չէր, բայց ես չէի կամենում վշտացընել իմ խեղճ, իմ բարի տանտիկնոջս, որ այնքան էր սպասել, մինչեւ երկու սենեակներն էլ վարձուէին, այնպէս երջանիկ էր երեք պանսիօներ ունենալով, եւ այժմ ես ամէն ինչ պէտք է տակնուվրայ անէի: Եւ յետոյ այդպիսի վիրաւորանք ի՞նչպէս

հասցնել լեռներն ապաստանած այս կանանց, մանաւանդ նրան— Կլարային։ Հիւանդներն ու անկարները ուր եւ լինին, իրանց գերագոյն իրաւունքներ ունին, որոնց դիալչելը յանցանք է։ Ուշ գիշեր էր, երբ ես էլ քննեցի՝ թողնելով իմ որոշումը պատահականութիւններին։ Փորձով դիտէի, որ շատ անդամ ամենասովորական, ամենաաննշան գիտուածը աւելի է անում մի խոչոր, կենսական ինդիք լուծելու համար, քան բազմաթիւ խելացի մտքեր ու մշակուած ծրագիրներ։

Անցան մի քանի օրեր։ Ես վերսկսեցի իմ սովորական կեանքը. ամէն առաւօտ վաղ ճանապարհ էի ընկնում դէպի հեռաւոր լեռներն ու խրճիթները եւ երեկոյեան վերադառնում լաւ աշխատելուց ու շրջագայելուց յետոյ։ Տարբերութիւնն այն էր միայն, որ գիշերները հովիւնների խուզերում չէի անցկացնում եւ խրաքանչիւր օր որոշ ժամին տուն էի վերադառնում։ Կեանքիս մէջ առաջ եկած այդ փոքրիկ փոփոխութիւնը ես չէի էլ նկատում, ինձ թւում էր, թէ ես ապրում եմ բոլորովին առաջուայ պէս, որ Կլարան ու իր մայրը մաղի չափ անդամ չեն ազդել իմ ամարալին սովորութիւնների վրայ, եւ սաստիկ զարմացայ, երբ տահտիկինս մի օր ասաց։

— Ի՞նչ լաւ է, որ այժմ ամէն երեկոյ տուն էք դառնում։

Իրաւունք ունէր. դա մի ճշմարտութիւն էր, որ ես չէի գիտակցում, այժմ ստիպուած էի ինքս ինձ խոստովանել, որ այդ փոքրիկ փոփոխութիւնն անխորհուրդ չէր, որ ես վերադառնում եմ յատկապէս իմ հարեւանութիւնների համար, որոնց ամէն երեկոյ ես պատահում էի հէնց նոյն ծառուղիի մէջ, մօտաւորապէս նոյն տեղում, ուր տեղի ունեցաւ մեր առաջին հանդիպումը։ Առաջուայ պէս Կլարան վարդագոյն զգեստ եւ հովանոց ունէր, առաջուայ պէս նա քայլում էր՝ սղմուած մօր կողքին ինչպէս մի վախլուկ այծեամ, դարձեալ ինձ տեսնելիս շտապում էր հովանոցով ծածկել դէմքը, բայց էլ չէր փախչում հակառակ կողմը թագնուելու համար։ Որքան եւ անախորժ լինէր այդ, ես մօտենում էի, բարեւում եւ շտապով անցնում՝ չտեսնելու տալով անհաճոյ տեսարանը։ Կարող էի վերադարձիս ճանապարհը կամ ժամը փոխել, բայց չգիտեմ ինչո՞ւ, չէի մտածում այդ մասին, եւ ինձ թւում էր, թէ նոյնիսկ պիտի վշտանամ, եթէ մի երեկոյ

Հարեւանուհիներիս միեւնոյն տեղում չպատահեմ։ Հողեկան մի վիճակ էր, որ խուսափում էր գլխիս տրամաբանութիւնից։

Եւ ամէն երեկոյ ընթրիքի ժամանակ տանտիկինս պատմում էր ինձ հաղար ու մի անօրինակ մանրամասնութիւններ իր կենողների՝ մանաւանդ կլարայի կեանքից։

— Գիտէ՞ք, պարո՞ն, շարունակ ձեր մասին է հարցնում։ Երէկ սաստիկ աղաջում էր, որ ցոյց տանք ձեր նկարները։ Երեկոները մօրն ստիպում է դուրս գալ զրոսանքի յատկապէս այն ճանապարհի վրայ, որտեղից դուք գալիս էք։

Ծնթրիքից յետոյ ես լուսթեամբ բարձրանում էի սենեակս, ձգւում դիւանի վրայ խաւարի մէջ եւ աչքս յառում կողակէքի ծակից ինձ մօտ ներս թափանցող լոյսի շողին, որ խաղում էր միեւնոյն տեղում։ Իւրաքանչիւր երեկոյ մի բուռն ցանկութիւն, մն կիղիչ տենչ էր զարթնում սրտումս, որ ինձ մղում էր ոէպի դուռը։ Ստիպուած էի մեծ ճիգեր դործ դնել վրաս այն փոքրիկ անցքին չմօտենալու, հարեւանուհիներիս չնայելու համար։ Ի սրտէ կ'ուղէի, որ նրանք ինքնարերաբար, կանացի այն զգուշութեամբ, որ այնքան շրջանկատ է, երբ պէտք է տղամարդի անհամեստ աչքից թագնուել, փակէին այդ անցքը թղթի մի կտորով եւ վերջ առային իմ ներքին կռուին։ Բայց նրանք այդ մասին երեւի չէին էլ մտածում, եւ կլարային դողունի կերպով տեսնելու տենչը ինձնում չէր մարում։ Շատ անդամ ինքս ինձ հարց էի տալիս, թէ ինչո՞ւ եմ ցանկանում անպատճառ դիտել այդ կանանց եւ այն էլ այսպէս, գաղտագողի։ Ինչո՞ւ համար այդ փոքրիկ անցքը դարձել էր ինձ համար մի խորհրդաւոր աչք, որ ամէն երեկոյ առես թարթում, հրաւիրում է ինձ։ Պատասխան չէի գտնում, եւ զալրանում էի, եւ վշտանում։ Եւ ամէն երեկոյ մտքերիս թելը կտրում էր կլարայի մայրը, որ միշտ միեւնոյն ժամին գալիս էր, կանդ առնում դրանս առաջ ու կանչում բարձրածայն։

— Պարո՞ն, կլարան ինդրեց ձեզ բարի գիշեր մաղթել։

Ես պատասխանում էի միեւնոյն ձեւով։ Հարեւանուհիներս անմիջապէս քնում էին խաղաղ, իսկ ես դեռ երկար աչք փակել չէի կարողանում։ Ստիպուած դուրս էի գնում, մենմենակ թափառում ամայի ճանապարհներով կամ գիշերային անհանգիստ ողու պէս նստում գետափին եւ ականջ գնում նրա միակերպ շա-

ուաշին : Խաղաղ գիշերը, աստղազարդ երկինքը, անորոշ ու խուլ փափոցով նիրհող լեռնային բնութիւնը, այս բոլորը, բոլորը փոխանակ հանգստացնելու ինձ՝ է՛լ աւելի նպաստում էին իմ մոռայլ տրամադրութեանը, ծանր, խեղդող անորոշ մտքեր պաշարում էին իմ գլուխը : Ինձ թւում էր, թէ ես մի անդառնալի կորուստ եմ ունեցել, որ մէկն ինձ անողորմ ձեւով խարել է, դաւաճանել է, խլել է ինձանից մի շատ թանկադին բան, որ ես է՛լ երբեք, երբեք երջանիկ լինել չեմ կարող, որ իմ կեանքը վերջնականապէս փշուած է, եւ ես կորած մարդ եմ : Դա մի անորոշ, անհասկանալի սուլք էր, որ կատարուում էր իմ հոգու խորքում, աշխարհից ծածուկ եւ նոյնիսկ ինձ անհասկանալի :

Երբեմն ինձ թւում էր, թէ ես լալիս եմ մեծ բնութեան հսկայ ցաւը, որ՝ ով գիտէ ինչո՞ւ՝ յանկարծ բուն է գրել իմ խեղճ սըրտում : Մտածում էի, թէ երեւի բոլոր բանական արարածներին յատուկ է մի այդպիսի ներքին կացութիւն, երբ մարդ առանց հասկանալու պատճառը՝ լուռ լալիս է, գուցէ տիեզերքի ցաւից, նրա յարատեւ երկունքից մի բաժին կայ մարդկային հոգու մէջ, եւ անհատը իբրեւ գերազոյն պարտք՝ երբեմն պարտական է սդալ մօր հետ :

Անցաւ այսպէս դարձեալ մի շաբաթ : Հեռանալու մասին այլեւս չէի մտածում : Հարեւան սենեակից համարեա ամէն օր լսուող աղաղակները, Կլարայի խենթ քմահաճոյքները ինձ էլ չէին վրդովում, ես կարծես սովորել էի այդ բոլորին : Մի քանի անդամ նոյնիսկ ամբողջ օրը տանը մնացի, ինձ թւում էր, թէ սաստիկ յոդնած եմ լիոների շրջադայութիւնից : Լուսամուտիս առաջ նստած՝ ես անհամբերութեամբ սպասում էի հարեւանուհիներիս դուրս գալուն . սիրտս տրոփում էր, երբ տեսնում էի Կլարային, նրա ոսկեգոյն մազերը, նրա զարմանալի քիթն ու ճակատը, նրա կարապային պարանոցը, աննման հասակը : Նայում էի սիրով ու երկար, մի տեսակ ախորդելի, հեշտապիր զգացմունքով . կանացիութեամբ, հմայքով հարուստ այդ պատկերից մի աներեւոյթ բան բարձրանում էր վեր եւ պարուրում իմ էութիւնը, շշմեցնում ինձ, ինչպէս այն ժամանակ, երբ ես ծաղկաշատ բլրի լանջին փոռուած՝ հեռում էի երջանկութեամբ, արբեցած ծաղիկների անուշահոտ բուրմունքով : Բայց հէնց որ այդ գեղեցիկ դէմքի վը-

բայ փայլում էր ինձ ծանօթ անմիտ ժպիտը, հէնց որ նրա քթի երկու կողմերում կազմւում էին այն սպանիչ գծերը, աչքերի մէջ կարծես մեռնում էր իմացականութեան յետին մնացորդը, ես վշտով երեսս դարձնում էի նրանից, ծանօթ թախիծը պաշարում էր իմ հոգին, կուրծքս ճնշում էր անծանօթ զգացմունքի ծանրութեան տակ եւ քիչ էր մնում բարձրածայն հեկեկայի:

Անտանելի էր, այսպէս շարունակել անկարելի էր: Կամաց-կամաց ես կորցնում էի իմ հանգիստը, աշխատելու տրամադրութիւնն ու խանդը, նոյնիսկ առողջութիւնս: Տանտիկինս մի մօր քնքոյշ հոգատարութեամբ առաջինն այդ նկատեց.

— Հիւանդ չէ՞ք:

Այո՛, ես հիւանդ էի եւ չդիտէի ինչից, ինձ հետ մի վտանգաւոր բան էր կատարւում, մի աւերիչ զգացմունք կամաց-կամաց քանգում էր իմ սիրտը ինչպէս կրծող որթ, եւ ես օր-աւուր խամրում, մաս-մաս մեռնում էի հիւանդ բոյսի պէս:

Վճռեցի այլեւս չսպասել պատահականութեան եւ չուտով ձրդել, հեռանալ այս պանսիօնից, ինչ եւ լինի:

IV

Այն օրն ամբողջ ես թափառել էի լեռներում ու անտառներում, լսել էի իմ սիրած գետակի շառաչը եւ չնչել էի մարդադետինների բուրմունքը: Տուն էի վերադառնում երեկոյեան այնքան նշանակալից դարձած ծառուղիով ու մտածում էի, թէ ուր որ է, կը տեսնեմ իմ խաղաղ գոյութիւնն այսպէս աղմկող կանացի զոյդը: Ճանապարհը դատարկ էր, նրանք չկային: Ես զարմացած մնացի. այնքան օրերից յետոյ՝ առաջին անգամն էր պատահում այդ: Տարօրինակ էր, բայց ես ցաւեցի, որ նրանք դուրս չէին եկել. ինձ նոյնիսկ վիրաւորական թուաց նրանց բացակայութիւնը, կարծես մեռնք լուսութեամբ խօսք էինք տուել իրար միշտ պատահել այս ճանապարհին, եւ այսօր նրանք դրժում էին իրանց խօսքը:

Մի փոքրիկ աղջիկ յայտնուեց, որ պարանով քարշ էր տալիս յետեւից մի վտիտ այծ. կենդանին չէր հնազանդւում եւ անդա-

դար նետում էր աջ ու ձախ՝ ճանապարհի եղբերի խոտը ճարակելու համար. աղջիկը չարչարւում էր, նա տիսուր էր. և նայեցի ու անցայ. ինձ զբաղեցնում էր միայն մի հարց, թէ ինչո՞ւ ծանօթ զոյգը չկայ այսօր: Յետոյ ինքս ինձ վրայ զայրացայ, որ ես կարող եմ միանդամայն անտարբերութեամբ անցնել այս փոքրիկ աղջկայ առաջից, որ այնպէս վշտացած էր եւ այնպէս կարօտ օդնութեան, եւ մտածել միայն այն կանանց մասին: Ես միշտ հաւատացած էի, թէ լուրջ, բարեխիղճ մարդ եմ, կեանքի իրերի մէջ երկրորդականն ու առաջնակարգը զատել գիտեմ, այժմ տեսնում էի, որ այդ էլ ճիշդ չէ, դրսի աշխարհի երեւոյթների կարեւորութիւնը միանդամայն յարաբերական էր իմ եսի այս կամ այն տրամադրութեանը: Որքան դժուարութեամբ է մարդ ճանաչում ինքն իրան, եւ ինչպէս յաճախ նա անկեղծօրէն վերագրում է իր անձին յատկութիւններ, որոնցից միանդամայն զուրկ է, եւ հերքում է ուրիշները, որոնք իր հոգու իսկական պատկերն են կազմում: Դարձեալ այդ ահաւոր լուռթիւնը, մտածում էի ես, նա՛ է, որ անդամ մեղանից ծածկում է մեր սեփական կարողութիւնները:

Ճեռուում՝ տան դրան առաջ նկատեցի տանտիկնոջս, յիշեցի, որ այս երեկոյ նրան հաղորդելու եմ յաջորդ օրը մեկնելու իմ վճռական որոշումը. նա ընդառաջեց ինձ, ինչպէս այն առաջին երեկոն, երբ եկել էին իր նոր պանսիօններները:

— Է՛, սիրելի՛ նկարիչ, ասաց նա, տիկինը մեկնեց շտապով եւ ինդրեց մնաս բարի ասել ձեզ:

— Մա՞յրը:

— Այո՛, նա ինքը, ուրիշ ո՞վ:

— Իսկ Կլարա՞ն:

— Նա այստեղ է:

— Մենա՞կ:

— Ո՛չ, ինչպէս կարելի է խեղճին մենակ ձգել. նրան այսուհետեւ քոյրն է խնամելու, որ քիչ առաջ եկաւ: Զահիլ, սիրուն այրի է, այնքան սիրուն է, այնպէս նման է քրոջը, այնպէս նման, որ կարելի է շփոթել. անունն էլ իմացայ՝ Մարդարիտ, ես սիրում եմ այդ անունը...

Նա էլի շատ բան պիտի պատմէր, անշուշտ վերջ ի վերջոյ

աւելացնելու էր, թէ ինքը տարիներ առաջ ճանաչում էր այդ անունով մի սիրուն այրի, բայց ես առաջ անցայ, մտախոհ ու լուռ բարձրացայ սենեակս: Մէկը գնացել է, միւսը նրան փոխանակել: Մարդիկ են, իրանց համար ապրում, իրանց ցաւերն ու հոգսերն ունին, իրանց ուրոյն ճակատագիրը, որ իմի հետ ոչ մի կապ չունի անշուշտ, ինչպէս այն փոքրիկ աղջիկը, որ քաշ էր տալիս յետեւից իր վտիտ այծը: Եւ այնուամենայնիւ այդ երեկոյ ես չկարողացայ տանտիկնոջն յայտնել իմ մեկնելու որոշումը: Վարժունքս ինձ տարօրինակ էր թւում: Բացարձակ անհատականութիւնը՝ մտածում էի ես, երեւի մի անհիմն, անտրամարան հակացողութիւն է, մի անկարելիութիւն այս մեր ողբայի աշխարհում: Կեանքը իր ամենապարզ արտայալութիւններով անդամ խճողուած բախտերի մի ցանց է, ուր մէկի ուրոյն, ըստ երեւոյթին միանդամայն անկախ շարժումը՝ միւսի համար մի անակնկալ ու վճռական դիպուած է: Տիեզերքում ոչինչ եւ ո՛չ ոք բացառապէս իր համար չի շարժւում, ինչպէս որ ծովի ոչ մի ալիք օդակ չի կազմում առանց բիւրաւոր ուրիշ ալիքներ հրհրելու:

Ինչո՞ւ տանտիկնոջն չյայտնեցի վաղը մեկնելու իմ որոշումը: Պատասխանի փոխարէն յիշեցի նրա խօսքերը՝ «Ճահիլ, սիրուն այրի է, քրոջը նման»: Վերջին երկու խօսքերը մեխի պէս ցցուեցին զլիխումս: «Քրոջը նման»... ինձ չափաղանց հետաքըրքիր էր թւում իմանալ, թէ որքան ճշմարիտ է այդ: Ես, որ մի կէս ժամ առաջ այդ անծանօթ կնոջ գոյութիւնն անդամ չգիտէի, այժմ ամբողջապէս տարուած էի նրանով եւ այրեւում էի նրան տեսնելու ցանկութեամբ: Ի՞նչ է կատարեւում լուռթեան մէջ, որ մեղանից այնպէս խուսափում է եւ յայտնուում, երբ ինքն է կամենում. մի՞թէ մեր բախտերի տէրը միշտ լուռթիւնն է եւ ո՞չ խօսքը:

Սենեակումս քայլում էի յետ ու առաջ եւ ամէն անդամ հարեւանուհիներիս ինձնից բաժանող դրանը հասնելով՝ դարձեայ մի անյալթելի պահանջ էի զգում աչքս գնել այն փոքրիկ անցքին: Միւս կողմում այժմ մի անծանօթ կին կար, ջահիլ ու սիրուն, դայթակլութիւնը զօրեղ էր, նախկին կիղիչ տենչը իր բոլոր ուժգնութեամբ զարթեց սրտումս: Նոյն յանցաւոր թուլութիւնը չկրկնելու համար՝ դադարեցի քայլելուց, կանգ առայ լուսամու-

տիս առաջ եւ նայում էի հեռաւոր հորիզոնին : Լեռնակատարների վրայ վերջալոյսի յետին շողերը կամաց-կամաց մեռնում էին, ստուերները մեղմով կախուում էին երկնքից, եւ անտառները հաղիւ էին սեւին տալիս՝ լեռնալանջերի վրայ փռուած : Քիչ յետոյ խրճիթները հեռաւոր դաշտավայրի վրայ լուծուեցին ու չքացան իջնող գիշերուայ մէջ, իսկ նրանց տեղ սկսեցին պլազլալ հատհատ ճրագներ, որպէս լուութեան եւ խաւարի թարթող աչքեր : Ինչքան շատ բան է ասում լուսոյ մի հատիկ շողը . ինձ թւում էր, թէ ես տեսնում եմ այն խաղաղ տնակների ներսը, ուր օրուայ աշխատանքից յետոյ գեղջուկ կեանքը խորհում էր : Շնորհիւ մի հատիկ շողի լուութիւնը խօսում էր եւ խաւարը տեսնում, եւ երբ կը մարի ճրագը, կեանքը կը նիրհի անդորր ու երջանիկ՝ երազելով նոր օրերի, նոր աշխատանքի մասին, եւ այսպէս անվերջ...

Մի փոքրիկ թրիկոց ընդհատեց իմ խոհերը . յետ նայեցի, սենեակումս արգէն իշխում էր խաւարը, եւ դրան ճեղքից ներս թափանցած փոքրիկ շողը կրկին խաղում էր պահարանիս վրայ : Սիրտս մեղմիւ թրթուաց :

Դա էլ լուութեան աչքն էր, այդ փոքրիկ ցուքը . այդ խղճուկ, մոլորուած շողը, որ գալիս էր միւս սենեակից որոշ ժամին լուսու ու դաղտագողի, ինչպէս սպասուած սիրահարը եւ խօսում էր իմ սրտին : Իմ եւ հարեւանուհիներիս մէջ նա դարձել էր մի աննիւթեալ՝ հիւսուած դիւթական երազներից : Այդ շո՞ղը . . . նա կարծես եկել էր ինձ կանչելու, եկել էր փսխալու իմ ականջին մի բան, որ միայն ես կարող էի հասկանալ եւ ուրիշ ոչ ոք աշխարհում : Դիմանալ անկարող էի . այն տենդոտ, խենթ շարժումով, որ յատուկ է անդառնալի, յանդուկն վճիռներին, ես մօտեցայ դրանը, կուրծքս սղմեցի երկու ձեռքով սրտիս ուժգին զարկը խեղդելու եւ բոցոտ հեւքս մեղմելու համար ու նայեցի . . . անօրինակ յուղմունքից ճակատս դրանը դիպաւ, խուլ թրիկոց բարձրացաւ, բայց ես չհեռացայ, այն՝ ինչ որ տեսայ, ասես ինձ քարացրեց, մեխեց իմ տեղում : Մարգարիտը քրոջ հետ թեւանցուկ՝ դնումդալիս էր սենեակի երկարութեամբ եւ մօր քնքշութեամբ դուրդուրում, փայլիայում էր նրան : Ամէն անդամ, երբ նրանք շուռ էին գալիս եւ քայլում դէպի ինձ, ես բերանաբաց, հեւալով նայում էի կանացի այդ երկու դեղանի պատկերներին, որոնք այն-

քան նման էին իրար, որքան կարող են լինել երկւորեակները: Նոյն ոսկեփայլ հարուստ մազերը, նոյն ճակատը՝ լայն ու բարձր, նոյն վարդաղոյն շրթունքները, որոնք կարծես միայն համրոյրի համար են, եւ մանաւանդ նոյն աչքերը խոշոր ու գեղեցիկ, որոնց վրայ երկու թերթերունքները իջնում էին զգուշութեամբ, ասես ափսոսալով, որ մի վայրկեան ծածկում են նրանց հմայիչ փայլը: Տանտիկինս իրաւունք ունէր, երկու քոյրերի նմանութիւնն ապշեցուցիչ էր, տարրերութիւնը միայն այն էր, որ Մարդարտի հայեացքի մէջ կանացի քնքշութեան հետ միաժամանակ փայլում էր իմացականութեան վսեմ կրակը, եւ նրա սքանչելի դէմքի վըրայ գեղեցկութեան ներդաշնակութիւնը կատարեալ էր ինչպէս դարնանային մի լուսազարդ առաւօտ, եւ նրա հոդին վառում էր իր հմայիչ աչքերի մէջ: Դա կին չէր, այլ բնութեան մի սքանչելի խաղ, նրա ուրախ վայրկեանի մի երջանիկ, հաղուադիւտ ծնունդ: Հոյակապ ու բարեձեւ այդ երկու կանացի իրանները ասես իրար պլլուած երկու սիրուն կազնիներ լինէին, որոնք չդիտես ինչո՛ւ՝ թափ առած շարժւում էին միասին. տեսարանն այնքան գեղեցիկ էր, որ ես ծեփուած կը մնայի դրանը, հեւալով, դողդողալով կը նայէի անվերջ, եթէ ոչ ոք եւ ոչինչ ինձ չխանդարէր: Եւ որքան ժամանակ մնացի այդպէս՝ չդիտեմ, դլուխս պտըտում էր, ծնկներս դողդողում էին, ես կարծես մեղմիւ մարում, մեռնում էի երազանքի աշխարհում եւ սթափուեցի միայն այն ժամանակ, երբ մէկը դուռս կամցուկ ծեծեց: Տանտիկինս էր.

— Ընթրիքի ժամն է՝ լինչ է պատահել, այսօր ցած էլ չէք գալիս. ճրադր էլ չունի, Տէ՛ր Աստուած, ախ այդ նկարիչները, ամէն բանում տարօրինակ են:

Իրաւունք ունէր. շտապով դուրս ընկայ սենեակիցս եւ յանցանքի մէջ բռնուած երեխայի պէս լուռթեամբ հետեւեցի նրան:

Ես չիմացայ՝ ինչպէս ընթրեցի եւ շտապով կրկին վերեւ բարձրացայ: Այնքա՞ն բան ունէի մտածելու: Եւ յետոյ սենեակս, այն դուռը, այն փոքրիկ շողը՝ բոլորը միասին քաշում էին ինձ: Ներս մտայ, փոքրիկ շողն այլեւս չկար, նա անյայտացել էր, ինչպէս մի թռչուն: Դրան ծակը միւս կողմից խցուած էր: Կանդ առայ խաւարի մէջ առժամանակ՝ հայեացքս դրանը յառած, ապա անյոյս ու վշտացած նստեցի դիւանի վրայ: Ինքս էի առաջ ցան-

կանում, որ ինձ դայթակղեցնող այդ փոքրիկ անցքը փակուէր, եւ այժմ դժգոհ էի, որ այդ կատարուել է: Հաւատացած էի, որ Մարգարտի գործն էր, եւ այդ աւելի էր վշտացնում ինձ: Մի՞թէ իմացաւ, որ ես նայում էի զաղտաղողի կերպով, թէ հէնց այնպէս, իբրև փորձուած կին ինքնարերաբար, իր սեռին յատուել բնազդով որեւէ անհամեստութեան հնարաւորութիւնն է խափանել: Այսպէս թէ այնպէս այդ նրա գործն էր եւ ես ի սրտէ ցաւեցի. կարծես մի ձեռք կրծքիս հարուածեց ու յետ մղեց ինձ, երբ ես այնպէս մօտ էի իմ երջանկութեանը:

Մի բան սակայն հաստատ էր. ես թէեւ այլեւս զաղտաղողի նայել չէի կարող, բայց Մարգարտի պատկերն այժմ իմ սենեակումն էր այն շողի պէս եւ խաղում էր իմ աչքի առաջ, իմ երեւակայութեան հետ: Եւ ինձ թւում էր, որ վաղուց է, ինչ ես ծանօթ եմ այդ պատկերին, վաղուց է, որ ես նրան գուրզուրում եմ հոգուս խորհում, խօսում եմ նրա հետ անդիտկացարար, լուռ-թեամբ: Լնոներում ու ձորերում մենակ թափառելիս որքան անգամ ես աշխատում էի բռնել, փայփայել բնութեան երաղը կենդանի ու գեղեցիկ. այժմ այդ երազն է ապրում հարեւան սենեակում, եւ վշտանում էի, որ այնտեղից ինձ մօտ թափանցող խորհրդաւոր շողը խաւարեց:

Ճարս կտրած՝ դուրս եկայ սենեակիցս եւ գնացի թափառելու խաւար դաշտերում, ուր նոյնպէս մարել էին բոլոր լոյսերը, լուռ-թեան պլազման աչքերը: Ոչինչ չէր խանդարում ինձ, եւ մըտքերս դառնում էին գլխումս անօրինակ ուժգնութեամբ: Իմ սըրտում սկսուած հին փոթորիկը, բոցոտ յոյզերի շփոթը — անորոշ ու անհասկանալի՝ այժմ պատկեր ու նշանակութիւն էր ստանում: Ընդհատումն չկար. մի օր հոգուս խորքում մի զդացմունք էր ծընել, աճել էր դանդաղութեամբ եւ այժմ կարծես այլեւս պարտը-կել չէի կարողանում, այն աստիճան նա բուռն էր ու խորունկ: Որչափ եւ տարօրինակ լինէր այդ, բայց պարզ էր, որ երկու քոյրերը փոխ առ փոխ բորբոքել էին իմ սրտի կրակը, որ այժմ հըրդեհում էր ինձ: Զդացի, որ այսպէս հեռանալ չեմ կարող, եւ որ լուռ-թեան ու խաւարի մէջ իմ ներքին աշխարհում կատարուել է մի անդառնալի բան:

Տուն դարձայ մտախոհ. հարեւան սենեակում դեռ ձայն ու

խօսակցութիւն կար : Կլարան դարձեալ մի բան էր պահանջում , քոյրը նախ փորձեց համողել , մեղմացնել , եւ երբ այդ անկարելի ևղաւ , դուրս գնաց : Քիչ յետոյ դրանս մօտից տանտիկնոջս ձայնը լսեցի :

— Պարո՞ն , օրիորդ կլարան ձեզ բարի գիշեր է մաղթում :

— Բարի գիշեր օրիորդ կլարային :

Հասկանալի էր , Մարգարիտը քրոջ անօրինակ քմահաճոյքը կատարելու համար ստիպուած էր եղել դիմել տանտիկնոջս օդ-նութեանը՝ անծանօթ պարոնին անձամբ անհանդիստ չանելու համար :

Երբ հարեւան սենեակում ամէն ինչ դադարեց , ես էլ անկողին մտայ , բայց երկար ժամանակ անքուն էի , ուշադրութեամբ լսում էի դրան միւս կողմում քնած կանանց չնչառութիւնը եւ աշխատում էի որոշել , թէ ո՞րը որին է , կամ աւելի ճիշ՝ ես ուզում էի լսել միայն Մարգարտի հետքը : Ապա սկսեցի մտածել , որ բոլոր իմ արածը երեխայութիւն , անմտութիւն է , որ ծիծաղելի է այսպէս զրացուել մի կնոջով , որ իմ երեսն էլ չի տեսել , եւ որին ես դիտել եմ միայն մի անդամ , այն էլ գաղտադողի : Բայց իսկոյն յիշեցի , որ նրանից առաջ քոյրը կար իր այն հմայիչ արտաքինով , որին պակասում էր միայն իմացական կրակը ինձ բոլորովին յափշտակելու համար : Ահա այժմ այդ կրակը , ահա նոյն կլարան կերպարանափոխուած ու կատարեալ եւ իր հոգու խախտուած ներդաշնակութիւնը կարծես հրացքով վերականգնած Մարգարտի մէջ : Առաջինից ես համարձակ կարող էի փախչել , նա վըտանդաւոր չէր , բայց այս երկրորդը , այս աննման Մարգարիտը իսկ եւ իսկ մի սփինքս էր իմ ճանապարհի վրայ , եւ նրա առեղծըւածներն իրանց խորհրդաւորութեամբ ինձ սղմում էին ինչպէս երկաթէ օղակներ : Ինքնախարէութիւնն անօգուտ էր . զգացի , որ չեմ էլ փորձում աղատուել եւ նոյնիսկ ինքս եմ նետում դէպի նա , ինչպէս թիթեռնիկը դէպի բոցը : Ես նման էի լեռնակատարից պոկուած ժայռին , որ արագութեամբ ներքեւ է գլորւում եւ յայտնի չէ՝ թէ ուր կը հանդչի :

IV

Օգոստոսի սկիզբն էր, մի սիրուն առաւօտ : Վճռել էի ամբողջ օրը տանից չհեռանալ . ինչո՞ւ, չէի կարող ասել . գուցէ մի պարզ քմահաճոյք էր՝ արդիւնք իմ ներվային դրութեան կամ գուցէ մի ներքին պատճառ կար, որ ինձանից էլ գաղտնի էր : Մարդ յաճախ իր սեփական վարմունքի դրդիչները հեշտութեամբ գտնել չի կարողանում : Տրամադրութիւնս սկզբում վատ էր . յետոյ չափազանց ուրախացայ, որովհետեւ տանտիկինս հաղորդեց, թէ Մարդարիտը կարող է մեզ սեղանակից լինել ճաշին, եթէ մենք սովորականից ուշ ճաշենք, մինչեւ նա կարողանայ քրոջը կերակրել :

— Խեղճ կինը սաստիկ ձանձրանում է, աւելացրեց տանտիկինս, մեզ հետ գոնէ կը խօսի, սիրող կը բացուի : Քոյքը ճաշից յետոյ պառկում է հանգստանալու, այն ժամանակ նա կարող է ցած դալ :

Այս նորութիւնն ինձ այնպէս ուրախացրեց, որ ես յիմարացած բացականչեցի՝ «չնորհակալ եմ» : Տանտիկինս զարմացած նայեց ինձ, ինքս էլ շփոթուեցի ու կարկամուեցի : Ինչի՞ համար էի չնորհակալ եւ ո՞ւմ . . . Զդիտեմ, բայց ես այնպէս երջանիկ էի, որ վերջապէս մօտիկից պիտի կարողանամ տեսնել այն սքանչելի գեղեցկութիւնը, խօսել նրա հետ, իմանալ վերջապէս՝ ո՞վ է նա, եւ ինչո՞ւ է այստեղ, պարզել մանաւանդ՝ թէ ի՞նչ ներքին կապ կայ իմ եւ նրա բախտի մէջ :

Համբերութիւն չկար, ժամանակից շատ առաջ ցած իջայ սեղանատուն, բայց ինչ անելս չդիտէի : Նստել չկարողացայ, սկըսեցի քայլել մի պատից միւսը : Մօտեցայ հայելուն մազերս յարդարելու համար եւ սարսափով նկատեցի, որ շփոթութեան մէջ մոռացել եմ փողկապս կապել : Շուտով դուրս փախայ սեղանատնից, սենեակս բարձրացայ, կարգի ձգեցի զգեստս, կրկին յետ եկայ : Դարձեալ մենակ էի, դարձեալ քայլել սկսեցի, հայելու մէջ նայեցի, մազերս յետ ձգեցի ու շտկեցի, սիրուն էի, դոհմընացի, որ այդպէս է : Տանտիկինը դեռ աշխատում էր խոհանոցում : Դրան առաջ լսուեց կանացի զգեստի թեթեւ շրջիւն : Ես յետ նայեցի յուզմունքով . . . նա էր, Մարդարիտը, որ մտաւ ու կանգառաւ շուարած : Մենք նայում էինք իրար լոռութեամբ . դա մի վայրկեան էր, որ ինձ շատ երկար թուաց, ուղեցի մի բան ասել,

բայց չկարողացայ եւ զարմացած էի, որ այդ կինն այդպէս շիռթում է ինձ։ Լոռութիւնն ընդհատեց նա.

— Ներեցէ՛ք, պարո՞ն, ես կարծում էի, թէ տանտիկինն այստեղ է . . . ձեր մասին նա ինձ շատ է պատմել, մենք համարեած անօթներ ենք, մեզ ներկայացնող չկայ, անհրաժեշտ պարտքը մենք ինքներս կատարենք։

Նա չնորհալի ձեւով ձեռքը մեկնեց, որ ես բռնեցի հազիւ զըսպըւած յուղմունքով եւ մի անշնորք շարժումով դիպայ աթոռին, որ քիչ մնաց ընկնի։ Մարդարիտը անուշադրութեան տուեց այդ բոլորը, հանդարտ մօտեցաւ լուսամուտին եւ նայում էր դուրս։ Սեւ զգեստի մէջ նրա գեղեցիկ, հոյակապ մարմնի ձեւերը իւրանց բոլոր կատարելութեամբ ծրագրում էին ակնապարար կերպով։ Այդ ընդհանուր սեւութեան վրայ է՛լ աւելի դրաւիչ էր նրա դէմքի քնքոյց սպիտակութիւնը եւ հարուստ մազերի ոսկեգոյն փայլը։ Զգա՞ց արդեօք, որ նայում եմ նրան յափշտակուած, չգիտեմ, միայն յետ դարձաւ, անհոգ կերպով ասաց.

— Հրաշալի վայրում էք ապրում, հրաշալի։ մի գիշեր եմ անցկացրել այստեղ եւ այնպէս լաւ եմ զգում ինձ, այնպէս լաւ։

— Ես շատ ուրախ եմ, տիկի՞ն . . . այո՛, այստեղ շատ գեղեցիկ է, կաղղուրիչ մեղմ օդ. . . յուսամ՝ չէք ձանձրանայ, զբօսանքներ կատարելու շատ յարմար անկիւններ կան, եւ ես . . .

Ուզում էի յիմարաբար ասել, թէ ես պատրաստ եմ ձեզ ծառայելու, բայց զգացի, որ շատախօսում եմ, ոտքովս թեթեւ աղմուկ հանեցի ու լսեցի։ Հաւատացած եմ սակայն, որ նա լսեց ինձ եւ հասկացաւ զբութիւնս։ ինքը բնաւ չէր շիռթւում, ես էի երեխայ դարձել մինչեւ այն աստիճան, որ վախենում էի շարունակել խօսակցութիւնը. զգում էի, որ անպատճառ յիմարութիւն կ'ասեմ։ Մարդարիտը յետ եկաւ մինչեւ սեղանը, յետեւից ձեռներով յենուեց նրան, աջ ոտքի թաթը յատակի վրայ խաղացնելով, ինչպէս անում են մտախոհ կամ երազող մարդիկ եւ գեղեցիկ աչքերը լուսամուտից դէպի հեռուն յառած՝ նայում էր լոռութեամբ։

— Ես ինչպէս նախանձում եմ ձեզ, մրմնջաց նա կամացուկ.

— դուք կարող էք գնալ հեռո՞ւ, հեռո՞ւ, ա՛յ, այն լիոներն ու ձորերը, որոնք կարծես հեւում են մշուշի մէջ։

— Այո՛, այնտեղ շատ գեղեցիկ է, դուք էլ հետութեամբ կարող էք վայելել լեռնային բնութիւնը, այդ ամենեւին դժուար չէ։

— Բայց քոյրս կայ, ես նրան մենակ ձգել չեմ կարող, նա այնպէս հեռու չի դնայ, այսինքն չի կարող գնալ:

Նա մի փոքր լոեց՝ միշտ աչքերը հեռուն ուղղած, ապա յանկարծ աւելացրեց՝ առանց ինձ նայելու.

— Այնպէս չէ՞՝ բարձր լեռներն ու մթին անտառները սարսափելի են դիշերով. դուք զգացե՞լ էք այդ սարսափը:

— Սարսափելի՞... ո՛չ, միայն խորհրդաւոր են ու ճնշող:

— Չդիտեմ, ինձ միշտ թուացել է, թէ նրանք խաւարի մէջ սարսափելի են:

Նա լոեց, բայց շարունակում էր ոտքով խաղալ յատակի վըրայ եւ ըստ երեւոյթին բոլորովին ուրիշ բան էր մտածում: Ներս մտաւ տանտիկինը ճաշի պարագաներով:

— Ախ, դուք արդէն ծանօթացել էք, ինչ լաւ է. դիտէ՞ք ինչպէս ուրախ եմ այսօր. վաղուց է, ինչ երեքով սեղան չենք նստել. այս նկարիչն էլ շատ անդամ օրերով անյայտանում է, եւ ես մընում եմ բոլորովին մենակ, այնպէս տիսուր է լինում, այնպէ՞ս տիսուր: Զեր ոտքը բարի է, տիկին, դուք եկաք, ահա նա էլ տանն է, այսօր դուրս չի դնացել:

— Այսօր ինձ այնպէս յոդնած էի զգում, ասացի ես եւ զգացի, որ կարմրում եմ: Նոյն վայրկեանին Մարդարիտն ինձ նայեց մի հայեացքով, որ կարծես ուզում էր ասել՝ «մի՞թէ»: Ստում էի եւ նրա հայեացքը տանել չկարողացայ, զլուխս քաշ ձգեցի: Եւ վայրկեանապէս զլխովս անցաւ մի անախորժ միտք, թէ զուցէ նա գիտէ իմ ներքինը եւ նոյնիսկ նկատել է, երբ ես նայել եմ դրան ճեղքից: Ճաշի ընթացքում ես ինձ զգում էի յանցաւոր երեխայի կացութեան մէջ, որ սպասում է, թէ չուտով իր ծածուկ արարքը կը բացուի, եւ ինքը կը պատժուի: Տանտիկինը հանաքներ էր անում, Մարդարիտը խօսում էր աշխարհ տեսած ու ապրած կնոջ համարձակութեամբ ամէն բանից: Ես լսում էի լոռութեամբ. ամէն անդամ, երբ փորձում էի նայել նրան, հայեացքս նրա աչքերին էր հանդիպում, խսկոյն զլուխս քաշ էի ձըգում եւ կարմրում, անկարելի էր դիմանալ: Ի՞նչ ունէր այդ կինը իր դէմքի վրայ, մանաւանդ աչքերի մէջ, որ ինձ ստիպում էր լոել, բայց աներկրայ էր, որ նա զգում էր իր ոյժը, որ դա նրա համար նորութիւն չէր, ու կարծես զուարձանում էր իմ յուղմունքով, խաղում էր ինձ հետ, ինչպէս երեխան կը խաղար իր գնդակի հետ: Ես այլեւս չէի լսում, թէ նա ի՞նչ է խօսում, ի՞նչ է

սղատմում, նրա ձայնի ելևէջները հնչում էին իմ ականջին որպես մի անըմբոնելի երաժշտութիւն, եւ միայն մտածում էի այն մասին, թէ ես ինչո՞ւ եմ լոել, ինչո՞ւ չեմ կարողանում խօսել: Դարձեալ այս անօրինակ լոռութիւնը, հզօր, ամենակարող, որ զործում է համբօրէն ու տիրաբար, որ ընկճում, յաղթահարում է, ինչպէս ինձ այս ժամին: Յիշեցի, որ մի տեղ կարդացել եմ: «Երբ շրթունքները նիրհում են, հոգին զարթնում է եւ դործի կենում»: Ո՞րտեղից յիշեցի. այժմ այս նախազասութիւնը դառնում էր իմ զլխում՝ ինչպէս ծանօթ երդի մի կտոր, որ չգիտես ինչո՞ւ՝ մարդ անդադար կրկնում է:

Կացութիւնս խղճալի էր ու վտանդաւոր. ես մի բառ չէի կարողանում ասել խօսակցութեանը մասնակցելու համար: Երբ տըղամբարդը կարկամւում է մի կնոջ առաջ, վստահ կարող է լինել, որ հոգին զործում է անօրինակ ուժգնութեամբ, ինչպէս հէնց նոր վանդակի մէջ դրած թռչնակ, որ թրպրտում է դուրս թռչելու համար: Այս կնոջ հանդէպ իմ շրթունքներն էին կարկամուել, եւ համբ էի կտրել, բայց հոգիս գալարում էր լոռութեան մէջ; եւ ինչ որ մութ իղձեր աղմկում էին նրան:

Դաւադրական մի գեղեցկութիւն կայ այն լոռութեան մէջ, ուր օրօրում է գիմացդ նստած կնոջ պատկերը, եւ երբ համբօրէն, պաշտամունքի երկիւղածութեամբ աշխատում ես քո ներքին աշխարհում պարփակել մի գեղեցիկ գոյութիւն, աներեւոյթապէս միացնել քո հոգուն մի այլ հոգի, որ անզիտանում է իրանից այնքան մօտիկ կատարուող սքանչելի պայքարը: Բաժանուած սէրը կամ տանջնքը խիստ գունատ է այն մենաւոր զգացմունքի հանդէպ, որ բուն է դնում մի սրտում՝ ինչպէս փոքրիկ օձը մի սեւ խորշում կծիկ կծիկ գալարուած: Հոգիների յատակը ծալքեր ունի, որոնք ահաւոր են կտմ սքանչելի, երբ շրթունքները իսպառ համբ են: Սէրը եւ ոճիրը այնտեղ են հանդչում լոռութեան մէջ: Ահա այդ դիւթական լոռութիւնն էր, սիրոյ լոռութիւնը, որ համակել էր իմ ամբողջ կութիւնը, եւ ես ցաւով էի մտածում, որ գուցէ իմ հոգին աղմկող այդ բուռն զգացմունքի ծանրութիւնը մենակ տանեմ, անընկեր ու լքուած:

Ես տանջւում էի...

— Զէի՞ք կամենայ մի փոքր տապակած դետնախնձոր, հարցըց տանտիկինս:

— Ո՞չ:

— Հիւանդ չէ՞ք:

— Ո՛չ:

— Պարոնը համարեա ոչինչ չկերաւ, ասաց Մարգարիտը:

— Մի օր մնաց տանը եւ ահա այսպէս վաստ է զդում իրան:

Պատասխանի փոխարէն ես լուռ նայեցի խօսակիցներիս անոռու, համարեա ապուշ հայեացքով:

Չիմացայ, թէ ինչպէս վերջացաւ ճաշը, ինչպէս մենք պարտէզ դուրս եկանք: Տանտիկինը մեղ շուտով թողեց եւ մենք երկուսով կրկին մնացինք երես առ երես: Մարգարիտը մի շինծու հետաքրքրութեամբ, որ այնպէս յաջողւում է կանանց եւ այնքան դողտրիկ է, նայում էր ծաղիկներին: Մի ամբողջ խումբ մեղուներ աշխատում էին նրանց վրայ՝ զլուխները թաղած ծաղկաբաժակների մէջ: Ես ստիպուած էի ցոյց տալ, թէ բաժանում եմ նրա հետաքրքրութիւնը, բայց իրօք մտածում էի խօսակցութիւն սկսել:

— Նայեցէ՞ք այս մեղուներին, ասաց նա, սրանց ըստ երեւոյթին խելացի, զիտակցական աշխատանքի տակ թաղնուած անդիտակցութիւնը ինձ համար միշտ եղել է մի զարմանալի առեղծըւած:

— Ինչո՞ւ չէք ասում, տիկի'ն, արտաքին անդիտակցութեան տակ թագնուած զիտակցութիւնը. նրանց աշխատանքը մեղ թըւում է մեղենական, բայց այդպէ՞ս է արդեօք:

— Թո՛ղ այդպէս լինի, էականն այդ չէ, այլ ներքինը, որը մնում է առեղծուած:

— Լոռութեան մէջ, տիկի'ն, շատ, չափազանց շատ բաներ կան, որոնք միշտ կը մնան առեղծուածներ. մեղուների ներքինն էլ այն մեծ լոռութեան մի մասնիկն է, որի մէջ կատարում են այնքան սքանչելիքներ:

— Սքանչելիքներ... հաւատացա՞ծ էք:

Նա թափով մի ծաղիկ քաղեց եւ նայում էր թերթիկներին մտախոհ կերպով՝ ասես այնուեղ փնտուելով իր հարցի պատասխանը:

— Մի՞թէ դուք հակառակն էք մտածում:

— Լոռութեան մէջ կատարուածը տարաբախտաբար միշտ ըսքանչելի չէ, ասաց նա եւ ներվային շարժումով վետտեց ծաղկի թերթիկները, ցըիւ տուեց:

Տանտիկինը յայտնուեց:

— Տիկին, կլարան զարթնել է եւ ձեղ է կանչում:

Մարդարիտը հեռացաւ շտապով, թողնելով՝ որ ես խորհեմ նրա վերջին ասածի վրայ: Արդարեւ՝ ի՞նչ էր ուզում ասել «լուս-թիւնը միշտ սքանչելի չէ» խօսքերով: Մի՞թէ նա գուշակել է իմ հոգում կատարուածը եւ դժգոհ էր, մի՞թէ ուզում էր ասել, թէ ինքը գիտէր, որ ես նայել եմ նրան գաղտադողի ձեռով եւ ակնարկ էր անում ինձ պատժելու համար: Բոլոր մտքերս վատ էին, ճա-շից առաջ այդ կնոջը տեսնելու երջանիկ տրամադրութիւնս կո-րաւ, եւ նրա տեղը մնաց մի ճնշող զգացմունք, ուր ամօթն ու ա-նորոշութիւնը, երկիւղն ու թափիծը խառն էին: Ափսոսացի, որ մի քանի օր առաջ չմեկնեցի: Բարձրացայ սենեակս, պայուսակս կապեցի եւ վար իջայ, տանտիկնոջս մնաս բարի ասացի:

— Ո՞ւր դարձեալ:

— Լեռները:

— Երեկոյեան կը վերադառնա՞ք:

— Չեմ կարծում:

— Դարձեա՛լ... ա՛խ այդ նկարիչները:

Ես մեկնեցի, յուսալով՝ որ մինչեւ վերադարձս մի բան տեղի կ'ունենայ, մի անսպասելի փոփոխութիւն, որ ինձ կ'ազատի այս ծանր վիճակից:

VI

Երեք օր յետոյ վերադարձայ:

Պանսիօնում ոչ մի փոփոխութիւն. իրերն ընթանում էին ա-ռաջուայ կարգով:

— Ահա եւ թափառականը, ասաց տանտիկինս ճաշի ժամանակ. կարծում էի, թէ ձեր ոտքը բարի է, տիկին. այսուհետեւ մի քիչ էլ տանը կը նստի, բայց էլի մեղ մենակ թողեց:

— Երեւի ո՛չ միայն ոտքս բարի չէ, պատասխանեց Մարդա-րիտը, այլ եւ ձանձրացնում ենք նրան:

— Տիկին, լաւ գիտէք, որ ձեր ասածը ճշմարիտ չէ, որ դուք ինձ բնաւ չեք ճանձրացնում:

— Ես գիտե՞մ... օհօ՞:

Նա ծիծաղեց բարձրաձայն, եւ ես կրկին կարմրեցի ասածիս համար ու գլուխս քաշ ճգեցի:

— Ես միայն մի բան դիտեմ, որ գուք սիրում էք բնութիւնը, լեռնային տեսարանները, ինչպէս բանաստեղծ-նկարիչ:

— Եւ ձորերի խուլ լոռութիւնը, եւ անտառների հազիւ լսելի շըռկը...

— Թռչունների երգը, ջրերի կարկաչը, խոտերի վախոցը, զեփիւռի սլալոցը, շարունակեց նա կատակելով եւ կրկին քրքը-ջաց բարձրածայն ու լոեց: Նա մտախոհ խաղում էր ձեռքի պատառաքաղի հետ, քիչ յետոյ շարունակեց.

— ...Իսկ ես ձեր այդ լոռութիւնը բնաւ չեմ սիրում... լոռութիւնը զարհուրելի է... նա բարոյական աւերածն է... ներքին թշնամին, որ կրծում է այնքան աղնիւ, անմեղ հոգիներ խուլ խաւարի մէջ. ո՛չ, ես գողում եմ լոռութիւնից:

— Միշտ:

— Միշտ... լոռութիւնը ինքը սոսկումն է. եթէ բնութեան մէջ ձայնը չլինէր, երկիրը սարսափից կը ճայլթէր ու փշուր-փշուր ցրիւ կը դար անհունութեան մէջ. եթէ մարդը խօսք չունենար, հոգին կը պայթէր զարհուրանքից. վայ այն հոգուն, ուր իշխում է լոռութիւնը: Համրերը միշտ խենթեր են նաեւ... ես լոռութիւն չեմ սիրում:

Նրա ձայնը գողում էր. խօսքերը, որոնք հնչում էին անօրինակ ուժզնութեամբ, կարծես մի մութ դաղանիք էին թագցը-նում: Ես չէի սպասում, թէ նա այսքան լուրջ կերպով կը զբաղ-ուի մի անմեղ խնդրով, այսքան կիրք ու յոյզ կը դնի իր համոզ-մունքների մէջ: Զարմացած էի ու հետաքրքրուած, ուստի մեղ-մութեամբ շարունակեցի.

— Ես ձեզ հետ համաձայն չեմ, տիկին, խօսքը լոռութեան մի մասն է միայն, ամենաչնչին, ամենախղճուկ մասը, հաւատացընում եմ ձեզ, կեանքի եւ տիեզերքի խորհուրդը լոռութեան մէջ է: Խօսքը լոռութեան մի անկիւնը բացող քողն է, իսկ նուիրական ստեղծագործութիւնը տիեզերքի մէջ կամ մարդկային հոգում միշտ կատարում է համրօրէն, մի վեհ խաղաղութեան մէջ, ուր վայրկեանները յաջորդում են իրար անշշուկ, եւ ամէն մէկը քար լոռութեամբ կերտում է սքանչելիքներ: Միթէ համաձայն չէք, որ նոյնիսկ անկեղծ ու խորունկ սէրը միշտ համը է լինում. զուր չէ ասուած, որ «երբ շրթունքները նիրհում են, հոգին զարթնում է եւ գործի կենում»:

— Տիկի'ն, ձեր կարկանդակն այսօր հիանալի է, դիմեց նա յանկարծ տանտիկնոց :

Ես կարկանդացի ու զայրացայ, աւելի պարզ ու վճռական ձեռով դժուար էր հեղնել իմ ասածը, մանաւանդ սիրոյ իմ փիլիսոփայութիւնը :

— Ճաշի ժամանակ մետաֆիզիկան բաւական անմարս բան է, այնպէս չէ^o, ասաց նա անհոգ ծիծաղով :

Այրի է, մտածեցի ես, իսկ այրիները նման են այն թռչուններին, որոնք մի անգամ աղատուել են թակարդից : Մէրն իրեւ իդէալական, եթերային մի յարաբերութիւն սեռերի՝ դադարել է նրանց համար որեւէ դին ունենալ, որովհետեւ կեանքը եւ իրերը դարձել են դրական : Իմ բառերը երեւի խիստ օտարութիւն հնչում այս այրի կնոջ ականջին, եւ իմ հոգին բարբոքող կրակը դուցէ երբեք չի վարակի սրան : Ո՞վ դիտէ, դուցէ նա իր գեղեցիկ արտաքինի տակ թագցնում է կեանքի տղեղութիւններից կամ անարդարութիւններից ցաւած, յողնած մի հոգի, հեղնող ու թերահաւատ դէպի ամէնը եւ ամէն ինչ, որ վերաբերում է մարդկային իդէալական յարաբերութիւններին :

Այս բոլորն անցնում էր իմ գլխով այն ժամանակ, երբ Մարդարիտը հանդարտ ուտում էր կարկանդակները եւ վրաս չէր էլ նայում : Այսպիսի լուռթիւնը ճիշդ որ զարհուրելի էր, որովհետեւ իմ ներքին աշխարհում գալարուող լուռ զգացմունքին այս գեղեցիկ, այս դիւթական արարածը պատասխանում էր իր կարկանդակներով : Դա էլ մի տեսակ աններդաշնակութիւն էր, որ իմ սիրութ ցաւեցնում էր : Ինձ թւում էր, թէ գեղեցկութիւնը երբեք բիրտ չպէտք է լինի :

Ճաշը վերջացաւ . մենք կրկին դուրս եկանք սպարտէզ :

— Հրաշալի օր է, ասաց նա՝ դէպի հեռուն՝ դէպի կապուտակ լեռները նայելով . իսկ եւ իսկ թափառելու եւ լոռութեան հմայքը ճաշակելու օր, այնպէս չէ^o . . .

Նա հեղնում էր :

— Ես այսօր զրուանքի չեմ գնալու :

— Ի՞նչպէս ասացիք ճաշի ժամանակ . «Երբ շրթունքները նիրհում են, հոգին զարթնում է եւ դործի կենում» . լաւ է ասուած, բայց ինձ հետ ձեր հոգին գործի կենալու պէտք չի զգայ, որովհետեւ մենք միշտ կը խօսենք : Ա՛յ, գնանք դէպի այն ծառու-

դին, ուր այնպէս զով է, տանտիկինն ինձ կը կանչի, եթէ կլարան զարթնի:

Նա ներս մտաւ, հովանոցը վերցրեց, եւ մենք քայլեցինք լը-ռութեամբ՝ կողք կողքի: Ճանապարհին մի քանի անդամ նրա գիրդ բազուկը դիպաւ իմ թեւին եւ ախորժելի սարսուռով ցնցեց ինձ: Ես նայեցի գաղտազողի կերպով՝ իմանալու համար, դիպ-ռուածո՞վ եղաւ այդ հապումը, թէ դիտաւորեալ, բայց նրա դէմքի վրայ ո՛չ մի փոփոխութիւն: Նա քայլում էր իմ կողքից հոյակապ ու սեւազգիստ եւ անհոդ կերպով խաղացնում էր ձեռքի հովա-նոցը: Ծառուղին հրաշալի էր. երկու կողմից ծառերը բարձրացել էին եւ վերեւում սիրահարների պէս գրկուել իրար հետ՝ ոստ ոս-տի խառնելով: Մեր գլուխների վրայ կանաչի մի սքանչելի կա-մար էր՝ տերեւների մողայիկներով զարդարուած, որոնց արան-քից արեւի շողերը թափանցում էին, մի վայրկեան խաղում իմ գեղեցիկ ուղեկցուհու ոսկեգոյն մազերի, ճակատի, կամ այտե-րի հետ, ինչպէս փայլուն թիթեռներ, իսկ նա շարունակում էր քայլել՝ հայեացքը միշտ դէպի հեռուն, դէմքը մտազբաղ, երա-զող:

Ես լուսում էի յամառաբար եւ սպասում. արդէն ծառուղիի մէջտեղումն էինք, երբ նա ընդհատեց լուսութիւնը.

— Ես ասացի, որ լուսութիւնը զարհուրելի է, իսկ դուք շարու-նակում էք լոել:

— «Երբ շրթունքները նիրհում են, հոգին զարթնում է եւ գործի կենում», պատասխանեցի ես առանց վերեւ նայելու: Նա յանկարծ կանգ առաւ, իր ուժեղ, դիւթիչ հայեացքն ինձ ուղղեց մի վայրկեան, ապա հովանոցի ծայրով մի չոր տերեւ ծակեց ու վերցրեց:

— Դուք ինձ սիրո՞ւմ էք, հարցրեց նա վճռական ու լուրջ կերպով:

Հարցն այն աստիճան անսպասելի էր, որ ես միանդամայն շփոթուեցի եւ մնացի կարկամուած: Մի վայրկեան մենք նայում էինք իրար. նա համարձակ ու իշխող, իսկ ես փոքրացած ու իւղ-ճուկ:

— Զէ՞ք պատասխանում:

— Այսինքն... ես ի՞նչպէս արտայայտեմ... դուք այնպէս — յանկարծակի...

— Դուք ինձ սիրո՞ւմ էք, հարցու կարծեմ պարզ է, եւ ձեր մի խօսքն այժմ՝ աւելի արժէ, քան ձեր լոռութեան ամբողջ փիլիսո-փայութիւնը. ես այդ խօսքին եմ սպասում:

— Այո՛, սիրում եմ...

— Այդպէ՞ս... ես այդպէս էլ ենթագրում էի. երբ տղամար-դը կնոջ առաջ միշտ խրտնած հորթի կերպարանք է շինում, ա-պուշ-ապուշ նայում երեսին, լալկան ճառեր ասում, նա կամ սի-րում է, կամ սիրելու վրայ է:

Նա ծիծաղեց, բայց այս անդամ առհարկի:

— Ո՛չ, տիկի՛ն, երբ տղամարդը կնոջ մօտ համր է կտրում, խօսք չի գտնում ասելու, նա կամ սիրում է, կամ սիրելու վրայ է:

— Լա՛ւ, ընդունենք, որ այդպէս է, բայց համաձայնեցէ՛ք, որ ձեր սէրը շատ է նման մեղուների սիրոյն՝ դէպի ծաղիկները: Քղղաց, թուաւ, ճանապարհին դտաւ մի սիրուն ծաղիկ, թեւերը կը ծալի, կը նստի ծծելու, յետո՞յ... գարձեալ դէպի առաջ, դէ-պի նոր ծաղիկներ, որոնց բոլորին նա հաւասար չափով է սի-րում անշուշտ: Ես ձեր ճանապարհի վրայ յայտնուեցի, այդ ճշշ-մարիտ է, բայց խոստովանեցէք, որ ժամանակը կարճ էր, այն-պէս չէ՞՝ չափազանց կարճ, հազիւ մի շաբաթ:

— Տիկի՛ն, գուցէ դուք նկատել էք, որ ես մի գեղապաշտ ե-րազող եմ: Ես եկայ յատկապէս այս խուլ անկիւնը՝ բնութեան ծոցում մենակ երազելու համար: Շատերին կարող է տարօրինակ թուալ, որ մի լուրջ մարդ երազելը դարձնում է զբաղմունք. բայց ես կը կամենայի, որ դա գոնէ ձեզ համար տարօրինակ չլինէր: Մեր ամբողջ կեանքն էլ մի երազ է, մի տխուր երազ, եւ յետոյ՝ մեր արածի արժէքը մեր մէջ, մեր հոգում պէտք է փնտոել եւ ոչ դրսում: Տարօրինակութիւն չկայ աշխարհում, որովհետեւ հաս-տատուն, յաւիտենական օրինակ նոյնպէս չկայ: Ես իմ ծննդա-վայրում մի մարդ էի ճանաչում, մի խեղճ, աղքատ երաժիշտ, որ փոխանակ իր արհեստով հաց վաստակելու՝ բարձրանում էր գիշերները մի բլրի վրայ եւ նուազում էր աստղերի համար. տա-րօրինակ էր, չէ՞՝ ամէնքն էին գտնում տարօրինակ... բայց մարդն ինքն էր միայն ըմբռնում իր արածի արժէքը եւ իր ձեւով հասկանում կեանքը: Եւ այսպէս, տիկի՛ն, ես այն խեղճ երաժշտի պէս եկայ այս մոռացուած վայրերում աստղերը երգելու խուլ գիշերին: Այստեղ իմ շուրջն իշխող այս սքանչելի ներդաշնակու-թիւն ինձ թւում էր բնութեան մի սիրուն երազ: Իմ անվերջ թա-

փառումների մէջ ես յաճախ ցաւով էի մտածում, որ այդ զարմանալի երազը համբ է ամէն տեղ, որ նրան չի կարելի բռնել, գորուել, գուրգուրել: ինձ թւում էր, թէ արարածների հոգում ապրող յարատեւ թախիծը յատկապէս այդ երազը բռնելու եւ վայելու մշտական, անյագուրդ եւ անկարելի տենչն է, որին բաւականութիւն տալու համար մենք քաղում եւ մի վայրկեան յետոյ ոչնչացնում ենք գեղեցիկ ծաղիկները, վազվզում ենք կանաչի վրայով ու տրորում խոտերը, բռնում ենք գրաւիչ թիթեռը եւ սպանում մեր ձեռքերի մէջ: Ամէն մի մասնակի գեղեցկութեան տակ մենք ինտոռում ենք անհունը եւ չգտնելով՝ ասես զայրացած փշրում ենք ու անցնում: Բնութիւնը ստեղծում է, եւ մարդը միայն աւերում ...

— Վերստին ստեղծելու համար:

— Անշուշտ, բայց աւելի նոււազ կատարեալը, քան բնութեան ստեղծագործութիւնն է: Բայց գուցէ ես ձեզ ձանձրացնում եմ, տիկի'ն:

— Խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, ես սիրում եմ, երբ այսպէս խօսում են:

— Եւ ահա հոգեկան այս կացութեան մէջ անսպասելի կերպով ես տեսայ ձեր քրոջը...

— Իմ քրո՞ջը... կրկնեց նա յուզմունքով: — նստե՛նք այս նստարանի վրայ:

— Ձեր քրոջը, շարունակեցի ես՝ նստարանի վրայ տեղ բըռնելուց յետոյ: — Նրա գլխաթական արտաքինով յափշտակուած՝ ինքս ինձ ասացի: «ահա՛ նա, այն երազը մարմնացած մի չքնազ արարածի մէջ», բայց անմիջապէս այն սպանիչ ժպիտը, նրա խախտուած, խեղաթիւրուած հոգին, նրա փշրուած բանականութիւնն ինձ յետ մղեց: Հոգուս մէջ մնաց միայն մի կիզիչ ցաւ եւ նրա հմայիչ պատկերը աննիւթ, եթերային, զարձեալ երազի պէս, որ չդիմէի՛ ում հետ կապել, ուր մարմնացնել: Որոշել էի հեռանալ այդ ցաւով, դուք եկա՞ք... եւ ինձ համար պարզուեց ամէն ինչ, ես տեսայ վերջապէս իմ սեփական հոգին... Ես ձեզ սիրել եմ առանց տեսնելու, ես ձեզ սիրել եմ ձեր քրոջ մէջ առանց այդ իմանալու, իմ հոգին ձեզ փնտոռում էր՝ ինչպէս թափառական ամպը մի բարձր լեռնակատար, ինչպէս ծովեղը կտրող թռչունների երամը հանդչելու մի ժայռ: Ես անկեղծ եղայ, տիկի'ն, բայց ձեր

յուղմունքը ինձ ընկճում է, ինձ ցաւեցնում . դուցէ դուք մի հիասթափուած էք, մի վշտահար, ներեցէ՞ք ինձ՝ եթէ իմ խօսքերը եկան մի ծածուկ վէրք մորմոքելու, մի հին ցաւ նորոգելու . . .

— Դուք ինձ սիրել էք իմ քրոջ մէջ . . . կրկնեց նա մեքենաբար՝ աչքերը մի կէտի յառած եւ խորին ցաւով . — խեղճ քոլը, խեղճ քոյր, շարունակեց նա յուղմունքով, եւ ես նկատեցի, որ աչքերը թացացան եւ շրթունքները դողդողացին :

Ես սպասում էի . նա հովանոցի ծայրով խաղխղում էր գետինը կիսով չափ առաջ կռացած :

— Շնորհակալ եմ ձեր անկեղծութեան համար, ասաց նա՝ յանկարծ ոտի կանդնելով . — իրաւունք ունէիք ասել այդ բոլորը . . . խօսելը լաւ է, թո՛ղ ամէնքը խօսեն, ամէ՛նքը, լոռութիւնը զարհուրելի է, խեղճ քոյր . . . Բայց մենք շատ ուշացանք այստեղ, քոյրս երեւի զարթնեց, ահա տանտիկինը դուրս եկաւ դըռնից . ցտեսութիւն :

— Բայց, տիկին . . .

— Ցտեսութիւն :

Եւ նա շտապով դիմեց դէսի տունը :

Ես մնացի կանդնած . լուռ նայում էի նրա սքանչելի հասակին, նրա բարձր, նուրբ իրանին, որ թեթեւ օրօրւում էր ծառերի տակ, բոլոր այդ գեղեցիկ մարմնի բարեձեւութեանը, որի վրայ բնութիւնը դործել էր ասես մի կանխամտածուած ծրագրով : Նայում էի, եւ ինձ թւում էր, թէ այդ վախչող պատկերից մի բան մնաց ինձ մօտ, մի աներեւոյթ բան նրա էութիւնից, որ շշմեցրեց ինձ : Էլ ոչ մի կասկած չկար, խենթի պէս սիրում էի այդ կնոջը . իսկ նա՞ . . .

Վերստին նստեցի նստարանի վրայ, երբ նա խսպառ ծածկըց, եւ ընկղմուեցի խոհերի մէջ : Իմ բախտն էր վճռում . . .

VII

Անցան էլի մի քանի օրեր առանց որեւէ փոփոխութիւն բերելու մեր յարաբերութիւնների մէջ : Ճաշին եւ ընթրիքին Մարգարիտն իրան պահում էր այնպէս, կարծես ոչինչ չէր պատահել մեր մէջ, ոչ մի խօսակցութիւն տեղի չէր ունեցել : Երջանիկ տանտի-

կինս խօսում էր մերթ իր հերուայ նկարչից, մերթ ուրիշ կենողներից, յաճախ եղանակից. Մարգարիտը կանացի յամառութեամբ միանդամայն անուշաղիր թողնելով ինձ՝ առանձին հետաքրքրութեամբ լսում էր նրան, ինքն էլ իր կողմից պատմում էր հազար ու մի աննշան բաներ, կեանքի մանր դիպուածներ, անմեղ արկածներ, որոնց յերիւրելու կանայք այնպէս վարպետ են: Երբեմն ես մի խուլ կատաղութեամբ աչքս յառում էի նրա երեսին՝ նրա ուշաղը ութեւնը գրաւելու հաստատ որոշումով. նա երկար ժամանակ տանում էր իմ հայեացքը դիտաւորեալ, խորամանկ ձեւով եւ յանկարծ այնպէս էր նայում, որ ես ստիպուած՝ քաշ էի ձգում գլուխս: Այդ զարմանալի աչքերի լուռ հայեացքին ես երբեք դիմանալ չէի կարողանում: Ես մնում էի վհատուած ու դատապարտուած լսելու այս երկու կանանց խօսակցութիւնները, որոնք կարծես գաւաղիներ լինէին իմ դէմ:

«Այրի է, մտածում էի ես, դուցէ եւ մի անսիրտ կին, իսկ եւ իսկ մի գրաւիչ սՓինքս, որի առեղծուածները լուծել ես երբեք չեմ կարողանայ»:

Ճաշերից յետոյ նա այլեւս բնաւ ինձ հետ պարտէղ չէր իջնում, դէպի ծառուղին չէր գնում եւ փակւում էր սենեակում քրոջ հետ՝ ասես մի անսասելի վտանգի առաջ:

Երեկոները ես լսում էի նրա ձայնը գրանս առաջ:

— Պարո՞ն, Կլարան ձեղ բարի դիշեր է ցանկանում:

Ես պատասխանում էի միեւնոյն ձեւով, բայց վրդովուած, որ այդ կինը ինձ յիշում է միայն այդ ժամանակ. ապա ես լսում էի հարեւան սենեակից կանացի զղեստների այն մեղմ ու հաճելի խշխոցը, որ յիշեցնում է ծառերի սօսափիւնը դիշերին, անկողինների թեթեւ ճռճոցը մարմինների ծանրութեան տակ, եւ յետոյ ամէն բան լսում էր, եւ իմ շուրջն իշխում մի զարհուրելի ամայութիւն: Ես սկսում էի մեղմիւ քայլել սենեակում յետ եւ առաջ միակերպ, անվերջ, լնկճուած խեղդող թախծի ծանրութեան տակ: Ինձ թւում էր այդ ժամերին, որ ես մոռացուել եմ աշխարհից, որ էլ ոչ մի կենդանի շունչ չկայ իմ շուրջը, որ ես մենակ դտնուում եմ մի տեղ, ուր ինձանից դուրս էլ ոչ ոք չկայ: Ապա մի թեթեւ շշուկ, մի չնչին ձայն հարեւան սենեակից ինձ պարզում էր իրականութիւնը, եւ այն դիտակցութիւնը, թէ այս

փոքրիկ դուռը բաժանում է ինձ այն չքնաղ էակից, որ խլել է իմ հանգիստը, աղմկել իմ հոգին, սիրոս համակում էր անհուն ցաւով: Գոնէ հեռու լինէր, գոնէ թողնէր հեռանար, կամ ես կարողանայի գլուխ առնել կորչել, բայց այնքան մօտիկ, միայն մի դոնով բաժանուած՝ այդ անտանելի էր: Երբեմն մի ինելագար տենդ էր բռնում հոգիս, ես մտածում էի մօտենալ այդ դրանը, կամացուկ կանչել նրա անունը, աղերսել, աղաչել, որ դուրս դայ: Եւ այս ցանկութիւնը գնալով աճում, զօրանում էր իմ սըրտում մինչեւ այն աստիճան, որ այդ աներեւակայելի դժութիւնը չանելու համար դուրս էի փախչում սենեակիցս, նստում պարտիդում, կամ դոնում թափառելու խաւար դաշտերում:

Զարհուրելի էր այդ կինը իմ ճակատագիրն էր դարձել, որից ես մի վայրկեան խուսափել չէի կարողանում: Ես հաւատացած էի, թէ նա դիտէ բոլորն, ինչ ես կրում էի, հասկանում է իմ հոգեկան կացութիւնը եւ վարւում է ինձ հետ՝ ինչպէս բազէն իր որսի հետ, ճաշակում է իմ տանջանքը, մաս-մաս ապրում է աւերածի գերագոյն հաճոյքը, ո՛վ դիտէ՝ ինչ մի սարսափելի գաղտնի քէն է յաղեցնում՝ տղամարդի սիրոտ այսպէս քրքրելով: Ես դիտէի, որ խարուած սէրը շատ անդամ սարսափելի է դարձնում կանանց, որ նրանք ընդունակ են այնուհետեւ կոյլը ատելութեան եւ վրէժի առարկայ դարձնել առաջին պատահած տղամարդին: Որքան բուռն ու անզուսպ է մի կին իր սիրոյ մէջ, այնքան կատաղի է եւ ահաւոր իր ատելութեան մէջ. արդեօք մի այդպիսին չէ՞ իմ ճանապարհի վրայ:

«ՍՓի՛նքս, սՓի՛նքս, զարհուրելի առեղծուածներով», մըրմընջում էի ես՝ խաւարի մէջ քայլելով:

Բայց եւ այնպէս մի բան պէտք էր անել, մի վճռական բան:

Մի օր ճաշի ժամանակ, երբ տանտիկինը մի վայրկեան խոհանոց մտաւ եւ մեղ մենակ թողեց, Մարգարիտը դարձաւ ինձ:

— Դուք դեռ երկա՞ր կը մնաք այստեղ:

Պատասխանի փոխարէն ես նրան նայեցի լուռ ու վշտացած:

— Հարցս ձեզ զարմացնո՞ւմ է:

— Ոչ միայն զարմացնում, այլեւ վշտացնում է. եթէ ես ձեզ արդէն խիստ եմ ճանձբացրել, տիկի՛ն, կարող եմ հեռանալ. բայց

կարծում եմ, որ իմ վերաբերմունքը դէպի ձեղ վայելչութեան սահմանից բնաւ չի անցել:

— Օ՛, բոլորովին այսպիսի պատասխանի համար չէր ձեղ տուած հարցս, ասաց նա ժպտելով, — այլ հնաց այնպէս, մի բան ասած լինելու համար — դուք այնպէս լուռ էք միշտ:

— Ի՞նչ կայ որ, լոռութիւնը թէեւ զարհուրելի է ձեր ասելով, բայց նրա պատճառած սոսկումը շատերին խիստ հաճելի է:

— Դուք անարդար էք դէպի մի կին, որին չէք ճանաչում. աւ սենք՝ դա զարմանալի չէ, աղամարդիկ միշտ հեշտութեամբ անարդար են լինում, երբ խնդիրը կանաց է վերաբերում:

— Լսեցէ՞ք, տիկի՞ն, չէ՞ք գտնում, որ մեր այն խօսակցութիւնից յետոյ դուք ինձ գոնէ մի վերջին խօսք պարտական էք:

— Դուք գերազառում էք լոռութիւնը, եւ ես ձեղ հաճելի լինելու համար լուռմ եմ:

Եւ նա դարձեալ քրքջաց իր հնչուն, անհոգ ծիծաղով, որ երբեմն ինձ այնքան հաճելի էր եւ որ այժմ սրի պէս ցցւում էր սըրտումս:

— Մի՛ շահագործէք այդ նախադասութիւնը, մի՛ աղաւաղէք նրա միտքը, աղաչում եմ ձեղ:

Ներս մտաւ տանտիկինը՝ բերելով երկրորդ կերակուրը:

— Հրաշալի է, ես շատ սիրում եմ մակարոնի, բացականչեց Մարգարիտը՝ կարծես ուրախացած, որ ինձ կարող է թողնել անպատճանան:

«ՍՓի՛նքս, սառն, անողորմ սՓինքս», մրմոացի ես՝ ճմբտելով ձեռքիս մէջ անձեռոցիկը:

— Տիկի՞ն, դարձայ ես դէպի տանտիկինս, — մոռացայ ձեղ ասել, որ վաղը մեկնում եմ:

— Դարձեա՞լ, Տէ՛ր Աստուած, քանի՞ օրով. ա՞իս այս նկարիչները:

— Ես մեկնում եմ իսպառ, աւելացրի ես վճռական եղանակով:

— Ի՞նչպէս, ինչո՞ւ այդպէս յանկարծ, բացականչեց տանտիկինս շիռթուած ու լացակամած. — որքա՞ն ցաւալի է... ես ձեղ սիրում էի որդու պէս... յետոյ՝ ամէնքս այնքան ուրախ է-էինք. եւ այն սենեակն էլ, որ պարապ է մնալու:

ջանկութեան երազները. եթէ հնար լինէր բոլոր ցաւերը ջնջել, այնուամենայնիւ դեռ էլի միլիոնաւոր սրտեր չէ՞ին մնայ մենակ ու չասկացուած. դժբախտ սէրը յաւիտենական է, քանի որ մի հոգի անհասկանալի ու բուռն մղումով կը նետուի դէպի մի ուրիշը առանց պատասխան դժոնելու:

Ո՞վ եւ ի՞նչը կարող է ինձ ամոքել. սիրում եմ, չգիտեմ ինչու եւ սիրուած չեմ՝ նոյնպէս առանց հասկանալու պատճառը: Եւ կուրծքս ուռաւ, բարձրացաւ անյոյս վշտից եւ դուրս թափուեց յորդ արցունքներով: Ես լալիս էի դառնագին, եւ իմ հեեկեկոցը միակ աղմուկն էր, որ վրգովում էր բնութեան լոռութիւնը: Գիշերային վեհ գեղեցկութեան, այս զարմանալի հմայիչ ներդաշնակութեան մէջ մէկ ե՛ս էի լալիս, եւ իմ հեծկլտանքն էր հնչում աններդաշնակ կերպով: Եւ դա հասկանալի էր, չէ՞ որ մարդը բոլոր արարածներից ամենադժբախտն է:

Եւ նոյն վայրկեանին ես լսեցի իմ յետեւում խոտերի մեղմ խշխոց եւ մի ձեռք քնքութեամբ դրուեց ուսիս: Յետ նայեցի... առջեւս կանդնած էր մի բարձրահասակ սպիտակաղղեստ կանացի պատկեր. չգիտէի՝ աչքերիս հաւատա՞լ թէ ոչ. նա՛ էր, Մարդարիտը:

— Դուք շա՞տ էք տանջլում, ասաց նա քնքութեամբ:

— Տանջլում եմ, թէ ոչ, մի՞թէ դա կարող է ձեղ զբաղեցնել:

— Զբաղեցնե՞լ, ինչո՞ւ չէ, ես սիրում եմ տղամարդի արցունքը: Այնպէս լաւ էր հնչում ձեր հեծկլտանքը խաւարի ու լըռութեան մէջ. դա խիստ բանաստեղծական է, լոռութեան մէջ հեկելա՛նք... այնպէս չէ՞՝ եւ ես վաղուց էի ձեղ լսում հաճոյքով:

— Դուք խստասիրտ էք, օ՛, չափաղանց խստասիրտ, եւ դուք կի՞ն էք:

— Այո՛, եւ հէնց դրա համար ինձ արցունք է հարկաւոր:

— Ձեմ հասկանում:

— Զէ՞ք հասկանում. արցունքը, ծածուկ վիշտը, սիրոյ միակ, հաստատուն նշանն է, իմ կանացի ինքնասիրութիւնը դոհանում է, երբ ե՛ւ ինձ համար լալիս են, հասկացա՞ք:

— Միայն այսքա՞ն:

— Բաւական չէ՞:

— Շնորհակալ եմ ձեր անկեղծութեան համար. բարի՛ գիշեր.

Ես կ'աշխատեմ մոռանալ ամէն ինչ եւ միւս անդամ երբեք, երբե՛ք չարտասուել որեւէ կնոջ համար :

Ես վեր կացայ եւ պատրաստւում էի ներս գնալ: Նա բոնեց ձեռքս :

— Նստեցէ՛ք այստեղ :

Ես լուութեամբ հնազանդուեցի : Մենք տեղաւորուեցինք նըստարանի վրայ կողք կողքի : Միառժամանակ լուութիւն տիրեց . ես լսում էի նրա ընդհատ ընդհատ շնչառութիւնը, ես տեսնում էի, թէ նա ինչպէս ձեռքը տանում էր դէպի ճակատը եւ յետ ձգում մաղերը ներվային շարժումով . պարզ էր, որ նա ինձ կարեւոր յայտնութիւն ունէր անելու եւ չգիտէր ինչպէս սկսել :

— Լսեցէ՛ք . դուք վաղը մեկնո՞ւմ էք :

— Ես արդէն ասացի, որ մեկնում . . .

— Զեմ հաւատում :

— Դուք տարօրինակ էք, ես յայտնեցի տանտիկնո՞ց հէնց ձեր ներկայութեամբ :

— Դա դեռ ոչինչ չի նշանակում . երբ մի կնոջ համար լաց են լինում, այդպէս հեշտութեամբ չեն հեռանում :

— Ի՞նչ էք ուզում ասել :

— Ուզում եմ ասել այն, որ դուք չէք հեռանայ, եւ այդ վատ, շատ վատ կը լինի թէ ձեզ եւ թէ մանաւանդ ինձ համար :

— Եւ թէ մանաւանդ ձե՛զ համար, կրկնեցի ես դանդաղութեամբ, — աղաչում եմ ձեզ, տիկի'ն, մի՛ խօսէք այսպէս հանելուկներով, դուք տեսնում էք, որ իմ բախտը ձեր մի խօսքից է կախուած . խօսեցէ՛ք պարզ, հասկանալի լեզուով, որ ես իմ անելիքը գիտենամ : Աղնիւ խօսք եմ տալիս ձեզ կատարել բոլորը, ինչ որ պահանջէք ինձանից, միայն ես ճանաչեմ ձեր հոգին :

— Իմ հոգի՞ն . . . դա մի խղճուկ թռչուն է, որ իր աւերուած բնի մօտ նստած սղաւոր ու անյորս՝ էլ սիրտ չունի երկրորդը հիւսելու : Ես այրի եմ, իմ եւ կեանքի միջեւ մէկի տեղ երկու դերեղման կայ . . . այսքանը բաւակա՞ն է ձեզ արդեօք :

— Իւրաքանչիւր հոգի ծնուռող եւ մեռնող յոյսերի գերեղմանների մի շարք է, բայց եւ այնպէս կեանքը պատկանում է երիտասարդութեանը, դուք դեռ որքա՞ն ջահիլ էք . . .

— Այդ թողնենք, չէ՞ որ դուք էիք ասողը, որ իւրաքանչիւր

մարդ կեանքը հասկանում է իր ձեւով : Իմն էլ այսպէս է : Բայց աւելի լաւ է խօսենք ձեր մասին : Քանի ժամանակ է, ես լաւ նկատում եմ, թէ ի՞նչ է կատարում ձեղ հետ : Նոյնիսկ իմ եկած առաջին օրը ես լաւ հասկացայ ձեր ներքին յուղմունքը : Դուք երեւի շատ չզարմացաք, երբ դրան ծակը փակած գտաք . կանայք շըրջանկատ են : Այս երեկոյ էլ ես լաւ լսում էի, թէ դուք ինչպէս զնում գալիս էիք ձեր սենեակում, լսեցի, ինչպէս դուրս եկաք, կամացուկ հետեւցի ձեղ, վկայ եղայ ձեր գաղտնի արտասուլքներին եւ մօտեցայ ձեղ հարցնելու, թէ ի՞նչ էք սպասում ինձանից :

— Ես ձեղ սիրում եմ :

— Առանց ճանաչելո՞ւ, ի՞նչ երեխայութիւն :

— Զգիտեմ, անուանեցի՞ք երեխայութիւն, յիմարութիւն, թեթեւամտութիւն, բայց ես ձեղ սիրում եմ խենթի պէս եւ ձեղ համար լալիս եմ խաւարի մէջ : Գիտակցութիւն չկայ, բանականութիւնս չի գործում, սիրատ է միայն, որ լուսթեան միջից մը-իում է, իսկ ձեր ներկայութեամբ թրպրտում է՝ կարծես կրծքիցս դուրս թռչելու եւ ձեր ոտքերի տակ ընկնելու համար : Սա մի տանջանք է եւ գերագոյն հաճոյք միաժամանակ, բայց շարունակել չեմ կարող, իմ էութիւնը փշրում է, ես մեռնում եմ կամաց կամաց, ահա թէ ինչու ես աշխատում եմ փախչել ձեղանից, թէև, դիտեմ, երբեք կամ շատ երկար բուժուելու չեմ այս վէրքից : Մինչեւ այժմ ես վարել եմ մի կեանք, որ յատուկ է ուսանողական տարիներին, սիրոյ վրայ ես նայել եմ ինչպէս մի թռչնի, որ երբեմն ներս է մտել իմ գոնից՝ լուսամուտից դուրս թռչելու համար, բայց այս մէկը ուրիշ բան է. նա խնամքով հիւսեց իր բունը սրտիս ամենանուելիրական անկիւնում, հիւսեց ու նստեց՝ էլ երբեք չչուելու համար : Իմ ամրող կեանքը այժմ ձեր ձեռքումն է . մի խօսք, միայն մի խօսք : Օ՛, փոյթ չէ, եթէ դուք դրուած էք ինձ երջանկացնելու անկարելիութեան մէջ, փոյթ չէ, եթէ դուք ինձ պատկանել չկարողանաք, եթէ մեր բախտերը անկարելի լինի միացնել յաւիտենականապէս, բայց գոնէ ես իմանամ, որ ձեր սիրու համը չէ, որ դուք էլ զգում էք դէպի ինձ իմ զդացածի մի չնչին մասը, ես կը ձգեմ բոլոր աշխատանքներս, օր ու դիշեր կը նըսաեմ, կը պատկերացնեմ ձեղ կտաւի վրայ, կ'առնեմ այդ թանկապին աւանդը, եւ ձեր հրամանով կը ծածկուեմ յաւիտեան : Տե-

ուէք, ծունկ չոքած աղաջում եմ ձեղ, արտասանեցէ՛ք ինձ համար ճակատագրական այդ խօսքը:

Ես կամացուկ ծունկ իջայ նրա առաջ եւ մեղմով բռնեցի ձեռքը: Նա յետ չքաշեց, ձեռքը դողում էր եւ ջերմ էր:

— Ի՞նչ էք սպասում ինձանից:

— Ասացէ՛ք, վաղը մեկնե՞մ, թէ մնամ:

— Դուք դանում էք, որ լոռութիւնը գերազանց է խօսքից, իսկ եթէ այժմ ե՞ս լում:

— Ես կը մնամ, մինչեւ խօսէք:

— Լոռում եմ, ասաց նա վճռական եղանակով եւ շտապով ոտքի ելնելով՝ շարժուեց դէպի դուռը: Ես մնացի տեղումս քարացած, մի վայրկեան նայեցի նրա սպիտակ սպատկերին, յետոյ այն էլ ծածկուեց, եւ յողնած ընկայ նստարանի վրայ: Կէս դիշերն անց էր, եւ ես դարձեալ ներս չգնացի, սենեակի օդը կը խեղդէր ինձ:

VIII

Յաջորդ առաւօտը ես շատ ուշ զարթնեցի: Մի ախորժ զգացմունք համակել էր ինձ: Ապաքինուող հիւանդի կացութեան մէջ էի, սենեակումս ամէն բան ժալտում էր ինձ: Առաջին միտքը, որ ծագեց գլխումս, այդ այն էր, որ ես վճռել էի չմեկնել եւ գոհ էի: Վերստին յիշեցի նախրնթաց երեկոյեան անցքը իր բոլոր մանրամասնութեամբ եւ ամէն ինչ բացատրում էի յօդուտ ինձ, մանաւանդ Մարգարիտի վերջին խօսքը. «ի՞նչ տեղին, ի՞նչ գողտրիկ ձեռքի ասաց՝ «Ես լոռում եմ»: Ամէն բան այդ կնոջ մէջ մի գրաւիչ խորհրդաւորութիւն ունի. անդամ նրա կատակները, նրա ըստ երեւոյթին անմեղ խօսքերը, նրա հնչուն ծիծաղը, ինչպէս եւ դաղսնի վիշտը, այդ բոլորը, բոլորը մի արբեցուցիչ հմայք ունի. այդպէս է բնութիւնը, ուր չկայ փոփոխութիւն, որ իր տակ թագցրած չլինի սքանչելի խորհուրդ:

Երազելու ժամանակ չունէի, սաստիկ շտապում էի տեսնել նրան ցերեկով, ինձ թւում էր, թէ նախընթաց գիշերից յետոյ նա փոխուած պէտք է լինի, մի այլ կերպարանք պէտք է ունենալ:

Այն դիշերը փոքրացրել էր մեղ բաժանող անջրակետը, այժմ ես ինձ աւելի մօտ էի զգում նրան:

Նախաճաշը շատ ուրախ անցաւ, տանտիկինս ի հարկէ շատ դոհ էր, որ ես մնում եմ, նրան նոյնիսկ պէտք չէր իմանալ պատճառը:

Մարդարիտը թէեւ դունատ էր, ինչպէս մի անքուն գիշերից յետոյ, բայց անդադար քրքջում էր բարձրածայն, նոյնիսկ ամենաչնչին պատճառից: Այսպէս նրան սաստիկ ծիծաղեցրեց մեղքի մէջ թաթախուած մեղուն, որի թեւերը կպել էին մարմնին, էլ թուշել չէր կարողանում. անուշադրութիւնից տաք ապուրով շըրթունքներն այրեց եւ դարձեալ ծիծաղեց, յետոյ նրան երկար զբաղեցնում էր լուսամուտի վարադոյրի արանքից ներս ընկած շողը, որ թիթեռնիկի պէս խաղում էր նրա դէմքի վրայ:

— Ի՞նչ աներես շող է, բացականչեց նա ու դարձեալ քրքջոց:

Ես վեր կացայ, վարադուրով խափանեցի շողը:

— Շնորհակալ եմ, ի՞նչ բարի էք, ասաց նա, դարձեալ ծիծաղեց:

Ես նկատեցի, որ նրա ծիծաղի մէջ մի տարօրինակ բան կար. դա այն հիւանդուտ ծիծաղներից մէկն էր, որոնք հեշտութեամբ կարող են լացի փոխուել. նրա բոլոր շարժումները տենդուտ էին, ներվային, ծայնն աւելի հնչուն, ծիծաղի համարեա անվերջ պահանջ. նայում էի նրան եւ վախենում մի մութ բանից:

— Գիտէ՞ք՝ պարոնն ինչու չի մեկնում, դարձաւ նա յանկարծ տանտիկնոջը. — Երեւակայեցէ՞ք, նա վճռել է ինձ նկարել. նկարիչները տարօրինակ են, այնպէս չէ՞՝, — եւ նա կրկին բարձրածայն ծիծաղեց:

— Ի՞նչ խելացի միտք, որքա՞ն դուրեկան, բացականչեց տանտիկինը:

— Եւ ես համաձայն եմ, աւելացրեց Մարդարիտը. — բայց եթէ լաւ չի եղել...

Նա մատը թափ տուեց չարածճի ձեւով:

Ես մնացի զարմացած, նա այնպէս բացսիրտ, այնպէս համարձակ էր խօսում, որ մի բոպէ ինձ թուաց, թէ անպատճառ կը պատմի գիշերուայ անցքը:

Ի՞նչ էր պատահել, ես նրան նայեցի խորհրդաւոր հարցական հայեցքով. նա անուշադիր թողեց այդ:

— Հը՛, ինչո՞ւ էք լոել, դարձաւ նա դէպի ինձ. — Սլինի՞ թէ

էլի վտանգաւոր բան կայ, ես միշտ վախենում եմ ձեր լոռութիւնից :

— Երեւակայեցէ՞ք, տիկի՞ն, որ ձեր խօսակցութիւնը իմ լոռութիւնից այսօր աւելի վտանգաւոր է :

— Մի՞թէ :

Եւ նոյն վայրկեանին զգացի, թէ ինչպէս սեղանի տակ մի փոքրիկ, շարժուն բան դիպաւ ոտքիս : Ես ցնցուեցի, սիրոս թափով սղմուեց ու թրթուաց, կուրծքս բարձր ու ցածր եղաւ յանկարծական յուղմունքից, զդացի՝ թէ ինչպէս մի ամորթ ջերմութիւն ներքեւից, ոտքիս ծայրից բռնեց ու բարձրացաւ ելեկտրական հոսանքի պէս, վարակեց ինձ, հասաւ սրտիս, դէմքիս, որ երեւի սաստիկ կարմրեց : Այտերս սկսեցին այրուել : Զգուշութեամբ նայեցի, նա շարունակում էր հանդարտ ուտել իր կարկանդակը : Մի՞թէ դիմուածով էր նրա ոտքը իմ ոտքի վրայ, մտածեցի ես, առանց շարժուելու . նա էլ անշարժ էր : Ես ոտքիս թաթը կամացուկ շարժեցի, նա յետ քաշեց իրը, մի վայրկեան յետոյ կրկին դրեց եւ սեղմեց բոլոր ուժով :

Կասկած չկար, դա մի չարաճճի խաղ էր լոռութեան մէջ, մէկն այն խաղերից, որոնցով կանայք դիտեն խենթացնել տղամարդին : Ես իրօք խենթի պէս էի, էլ խօսել չէի կարող, բերանս ու կոկորդս չորացել էին, դողդոջուն ձեռքով վերցրի առաջս դրած ջրով լի բաժակը եւ մի անդամից դատարկեցի : Նա նայեց ինձ ժպտադէմ ու խորամանկ :

— Ի՞նչ ծարաւ էք, լոռութիւնից է այդ, թէ՞ խօսելուց . ես որքան դիտեմ՝ խօսելիս է մարդու բերանը չորանում, բայց դուք այսօր շատ էլ չէք խօսել, եւ նա կրկին քրքջաց ներվային ծիծաղով :

— Իմը լոռութիւնից է չորանում, որովհետեւ լոռութիւնը շատ անդամ աւելի ջանք է խլում մեղանից, քան խօսքը : Գուցէ երբեք ես այդպէս խոր կերպով չեմ զգացել լոռութեան լեզուի ոյժը, ինչպէս այժմ, տիկի՞ն :

Տանտիկինը դնաց դէպի խոհանոց, Մարդարիտը շտապով յետ քաշեց իր ոտքը եւ ընդունեց միանդամայն սովորական լուրջ կերպարանք, կարծես նա իր բոլոր խաղերը դիտմամբ անում էր

մի երրորդ անձի ներկայութեամբ, որ ես անկարող լինէի պատասխանել:

— Դուք այսօր չափաղանց տարօրինակ էք, ինչո՞ւ էք այդպէս, հարցրի ես սիրահարներին յատուկ շշուկով եւ դէպի առաջ կուացած սեղանի վրայ:

— Տարօրինակ... ինչո՞ւ. ինձ թւում է, որ ձեր հարցն է տարօրինակ. ամէն մի արտաքին կացութիւն, որ համապատասխանում է մեր ներքինին, բնաւ տարօրինակ չէ. դրա հակառակը՝ կեղծիք է, դուք այդ լաւ պիտի գիտենաք իրբեւ գեղարուեստագէտ եւ փիլիսոփիայ: Երբեմն մի գիշերը մի կեանք է. մի դիպուածը՝ մի ճակատագիր: Այս գիշեր ես այնքա՞ն ապրեցի: Դուք լաւ քննե՞լ էք:

— Ո՞չ:

— Ինչո՞ւ. սովորաբար մարդ չի կարողանում քնել կամ վըտից կամ երջանկութիւնից, ձերը ո՞րն է:

— Դուք գիտէք, որ վերջինը...

— Ե՞րբ էք նկարելու ինձ, դիտմամբ խօսքը փոխեց նա:

— Երբ կամենաք, հենց այսօրուանից:

— Գիտէ՞ք ինչ կայ... նա մի փոքր լոեց, իր սովորականի պէս մազերը յետ-յետ տարաւ ճակատի վրայից, ապա շեշտակի նայեց ինձ, յետոյ կուացաւ դէպի առաջ ու փափսուկով ասաց.

— Երեխա՛յ էք, երեխա՛յ, երեխա՛յ...

Տանտիկինը ներս մտաւ. ես մնացի կարկամուած ու շփոթուած, իսկ Մարգարիտը հանդարտ վերցրեց նոր բերած կերակուրը եւ սկսեց ուտել լուսութեամբ: Ոչինչ չէի հասկանում, այս կնոջ վարմունքը իր անօրինակութեամբ ճնշում էր իմ միտքը մի բեռի պէս: Ես պատրաստ էի ճաշալ, աղերսել, որ այդպէս չվարուի, չխօսի, կարծես թէ մի գիշերուայ մէջ նա էլ խենթացել էր քրոջ պէս: Ճարս կտրած՝ սկսեցի սեղանի տակ վնասուել նրա ոտքը, որպէսպի սղմեմ ցաւելցնելու չափ, բայց չդտայ: Նա երեւի այդ հասկացաւ եւ նայում էր ինձ մի հայեացքով, որ կարծես ուզում էր ասել՝ «չես գտնի, չես գտնի»:

Ճաշը հաղիւ վերջացած՝ նա շտապեց դուրս գնալ. ես հետեւցի նրան: Սանդուխների ծայրից նա վար նայեց դէպի ինձ:

— Եթէ այս գիշեր էլ դուրս գաք պարտէզ, ասաց նա ժպտա-

լով, անպատճառ հարբուխ կը ստանաք եւ յետոյ էլ ինձ նկարել չէք կարող:

— Բայց եթէ դուրս չդամ, կը խեղդուեմ:

— Միթէ՞ եւ նա ծիծաղեց ու ներս գնաց:

Ես մնացի մտքերի մէջ. նրա վարմունքից ոչինչ չէի հասկանում. ինչո՞ւ էր այնպէս տարօրինակ, ինչո՞ւ ոտքս սղմեց, ինչո՞ւ ասաց, որ երեխայ եմ, այս բոլոր հարցերը դառնում էին իմ գըլխում, եւ ես քարացած կանգնել էի սանդուխների առաջ՝ առանց կարողանալու վեր ենի կամ դուրս գնալ:

Յետոյ ինձ զբաղեցրեց նրա վերջին խօսքը. Ի՞նչ էր ուզում ասել այդ կատակով, արդեօք դա դիշերային տեսակցութեան մի հրաւէր չէ՞ր, թէ մի անսիրտ խաղ իմ այսքան բուան զգացմունքի հետ: Այսպէս թէ այնպէս՝ ես որոշեցի դիշերը պարտիզի ծառի տակ սպասել նրան, թէկուզ մինչեւ լոյս եւ դուրս գնացի, որ թափառելով սպանեմ անտանելի դարձած ժամանակը:

IX

Աննման դիշեր էր, աստղազարդ ու բուրալից. Համատարած լոռութեան մէջ ծաղիկներն ու խոտերը կարծես մեղմիւ ճաշկում էին ջինջ ցողերի կաթիլները եւ դլուխ գլխի տուած, փսփըսում խորհրդաւոր ու անուշիկ: Բայց այդ ժամին ոչինչ չէր կարող ինձ դրաւել. Հոգուս մէջ ոչ մի ազատ տեղ չկար, ուր կարողանայի թէկուզ մի հատիկ վառ աստղ տեղաւորել, այս զարմանալի գիշերը մի փոքր վայելել: Սիրածս կինը իմ ամբողջ էութիւնը լցրել էր մի զգացմունքով, որ յիշեցնում էր մրսող մարմինները դուրգուրող արեւի ախորժ ջերմութիւնը: Ինձ թւում էր, որ բնութեան բազմաթիւ գեղեցյակութիւններից ես վերջապէս գըտել եմ այն, ինչ նա կարող է տալ մի ընտրեալ մահկանացուի, եւ ես չեմ կարող ուրիշ իմաստ փնտուել կեանքում, աշխարհում, բացի այդ չքնաղ արարածը, որ յայտնուել է իմ ճանապարհի վրայ:

Միեւնոյն նստարանի վրայ, միեւնոյն ծառի տակ նստած՝ ես սպասում էի: Նա ոչ միայն ինձ որոշակի չէր ասել, թէ գալու է, այլ նոյնիսկ ճաշից յետոյ ամբողջ փակուել էր սենեակում

առանց գուրս ելնելու եւ ընթրիքն էլ քրոջ հետ էր արել, բայց ես սպասում էի: Հեռաւոր հաւատ ունէի, թէ նա անպատճառ կը դայ, եւ գլխումս զառնում էին այն բոլոր հանդամանքները, որոնք ամրապնդում էին իմ այդ հաւատը եւ հաստատում անորոշ, տարտամ յոյսը: Սիրոյ իմ տրամաբանութիւնը պարզ էր. ես ինքս ինձ մտածում էի, որ Մարգարիտն իրաւունք չունի ինձ այսպէս չարչարել, որ այս կացութիւնը մի ելքի պիտի յանդի վերջապէս, որովհետեւ մարդկային որեւէ կարողութիւնից վեր է տանել այս բոլորը, իսկ թէ ո՛վ էր տուել ինձ իրաւունք այդպիսի պահանջներ դնել, այդ ես չէի քննում. սիրոյ ճանապարհի վրայ, երբ մի կին ու մի մարդ հանդիպում են իրար, սովորաբար պարտքերն ու իրաւունքները իրանք իրանց են սահմանում. Մարգարիտը պարտական էր դալ, իմ խորին համողմունքն էր այդ. եւ ես սպասում էի:

Աչքս պարտիղի դրանը յառած՝ ես նայում էի անթարթ, այնքան ուշադիր հայեացքով, որ երբ յոդնած թերթերունքներս մի վայրկեան բաց-խուսի էի անում, ես ցաւում էի կորցրածս ժամանակի համար. կ'ուղէի, որ աչքերս միշտ չուծ մնան, որ դուռը, ճանապարհը, այն միակ լուսաւոր պատուհանը հայեացքիցս չծածկուեն: Նայում էի, եւ սիրոս թրթում էր ամենաչնչին շշուկից, խոտերի սլսլոցից, ծառի տերեւների թեթեւ սօսափիւնից: Երբեմն մի որեւէ թուփի կամ մացառ ճանապարհի ուղղութեամբ ձեւափոխուում, ընդունում էր կանացի կերպարանք, իսկ եւ իսկ նրան նման, բարձրահասակ, հոյակապ, որ առաջանում էր դէպի ինձ թեթեւաքայլ, արտորանքով, ասես շտապում էր, լարում էի տեսողութիւնս բիբերս պատուելու չափ, եւ պատկերը չքանում էր ինչպէս մի խարուսիկ ստուեր:

Շատ գիշեր անցաւ. գիւղում ու շրջակայքում ճրագները մէկիկ-մէկիկ մարեցին. մէկ Մարգարիտի լուսամուտը գեռ շարունակում էր թարթել խաւարի մէջ, մէկ նա էր հսկում մութ գիշերուայ վրայ: Ես ու այն լուսամուտը երկու խորհրդաւոր արարածներ լինէինք ասես, նայում էինք իրար գիշերուայ միջից եւ մտմտում էինք նոյն բանը: Կարծես թէ այն լուսամուտը գիտէր, թէ ես ինչո՞ւ եմ պարտիզում մենակ, երբ արար աշխարհ քնած է, ինչո՞ւ եմ նայում իրան, եւ ժպտում ու թարթում էր մեղմիւ, որ սպասեմ: Անբուն, թափառական թոչնի պէս խաւարի մէջ, ծառե-

րի տակ ծուարած իմ սէրը այն ողորմած, մենաւոր լոյսի գութն էր շարժում եւ ես պաշտում էի այդ ժամին այն լուսաւոր պատուհանը, որ ծածկում էր իր յետեւում իմ կեանքի նպատակը, իմաստը, բնութիւնից այնքան դժուարութեամբ խլած դադտնիքը: Եւ այն ողորմած լոյսը յանկարծ մարեց. Մարդարիտը հանգցրեց իր ճըրսագը, արդեօք պառկելո՞ւ, թէ դէպի վար, պարտէզն իջնելու համար: Սիրոս թրթուաց ուժգին, յոյսն ու երկիւղը աղմկեցին հոգիս միաժամանակ, իմ շուրջը խաւարը թանձրացաւ, ծանրացաւ եւ ճնշեց կուրծքս խեղդելու չափ: Գիշերը դարձաւ անտանելի, կարծես լուսթեան ու խաւարի մէջ մի սեւ դաւադրութիւն էր կազմուում իմ դէմ ինձ ոչնչացնելու համար. դալի՞ս է, թէ ոչ, ի՞նչպէս իմանալ, դգացի, որ եթէ էլի մի վայրկեան շարունակուի այս կացութիւնը, ես կը ճշամ ցաւից կամ կը վազեմ, նրա լուսամուտի տակ կը կանգնեմ, կը պոռամ, թէ նա չի կարող քնել, նա չպէտք է քնի, երբ ես այսպէս տառապում եմ, եւ հէնց տեղն ու տեղը կը մեռնեմ հոգիս այրող կրակից: Եւ նա չեկա՛ւ... փշրուած, լքուած յետ ընկայ, նստարանի թիկունքին յենուեցի, որ աւելի լաւ չնչել կարողանամ, որովհետեւ լայնարձակ երկնքի տակ օդը պակասում էր, կուրծքս ուռաւ վշտից, պատրաստուում էի ճալ, խորունկ ցաւի ուժգնութեամբ կանչել՝ «Մարդարի՛տ, անողո՞րմ», որ ճայնս հաղար արձագանգներով կրկնուէր այս սարսափելի գիշերուայ մէջ, պատրաստուում էի այդ խենթութիւնն անել, երբ յանկարծ պարտիզի դուռը կամացուկ բացուեց, եւ մէկը շոապ-շտապ դէպի ինձ եկաւ. նա՛ էր... մի լայն շալ ծածկում էր նրա դեղեցիկ հասակը ուսերից սկսած մինչեւ ուսները, իսկ հարուստ մազերը արձակ ու ծիծիան փոռուել էին ուսերին ու թիկունքին՝ տալով նրան գիշերային ոգու կերպարանք: Նա հասաւ ու կանգնեց առաջս իր բարեձեւ հասակի բոլոր վայելչութեամբ եւ լուռ նայում էր ինձ. ես էլ լուռ էի, նայում էի շուարած, ինչ անելս չիմանալով, լեզուս արճիճի պէս ծանրացաւ քիմքիս տակ, պապանձուեցի, միայն պարզ լսում էի սրտիս զարկերը, ինչպէս մէկը ուժգին ու համաշափ հարուածելիս լինէր մի հողաթմբի վրայ՝ խուլ թրմփոց հանելով: Երկու քունքերիս երակները ուռել էին, և ականջներում լսում էր մի անորոշ բզզոց: Հաւատացած եմ, եթէ նա մինչեւ լոյս այդպէս կանգնէր առաջս,

Ես կը մնայի լուռ ու քարացած, խօսելու միանգամայն անկարող: Տիրոջ եւ ստրկի վիճակի մէջ էինք, եւ տէրը նա էր: Հասկացա՞ւ իմ հոգեկան վիճակը, չդիտեմ, միայն նա նետուեց նստարանի վրայ, ինձ բոլորովին մօտիկ, այնպէս որ մեր ուսերը դիպան իւրաք, եւ ես միայն այժմ զգացի, որ դըսում խոնաւ է ու ցուրտ՝ մի ցնցող գող անցաւ մարմնովս, եւ ես կծկուեցի:

— Իսկ ես կարծում էի, թէ դուք այսօր կը մեկնէք, ասաց նա ժպտալով:

— Ի զուր. այդպէս կը վարուէր լուրջ, հասուն մարդը, իսկ ես երեխայ եմ:

— Մե՛ծ երեխայ.— Եւ նա ձեռքով կամացուկ խիեց ուսիս: Ես խլեցի այդ փոքրիկ, քնքոյշ ձեռքը, որ դողդողում էր բռնուած թունիկի պէս, եւ սղմեցի կրծքիս, ապա երկիւղածութեամբ մօտեցրի շրթունքներիս և ջերմ, ջերմ համրուրեցի: Նա չդիմադրեց եւ անուշիկ նապանքով գլուխը կոացրեց ուսիս, նրա հարուստ, փափուկ մազերը թափուեցին պարանոցիս, թիկունքիս ու կրծքիս վրայ՝ բարձրից գահավէժ ընկնող ջրի յորձանքներով: Անուշարոյը մի ամագ էր այդ, որ ամբողջապէս պատեց ինձ, եւ ես վախենում էի շարժուել, որ չլինի թէ նա ցըիւդայ ու չքանայ ինչպէս մի երջանիկ երազ: Եւ այն ամպը ցուրտ չէր, այլ ջերմ. մի վայրկեան առաջ մարմինս ցնցող գողը անցաւ, իմ վրայ թափուած այդ կենդանի մազերի տակ ես այրում էի ինչպէս բոցերի մէջ եւ ձեռքով խաղում էի նրանց անուշահոս փնջերի հետ, ինչպէս երեխան կը խաղայ հոսող վտակի ալիքների հետ:

— Երեխա'յ, երեխա'յ, մրմնջում էր նա փափսալով, մեղմիւ օրօրելով իր գլուխսն իմ ուսին եւ աչքերը երկինք յառած.— դեւ ու երեխայ: Այնքան աստղեր են նայում վերից, մեծ ու փոքր, վառ ու աղօտ, մենաւոր ու խումբ-խումբ, եւ ոչ մէկը, որ կարողանար ասել, թէ ինչո՞ւ, ի՞նչպէս միեւնոյն մարդը ե'ւ երեխայ է, ե'ւ դեւ, ի՞նչպէս է լինում, որ երեխայի սեւ, խորունկ աչքերի մէջ դեւ է նստում, հայեացքը բոց է, բայց հոգին մանուկ:

Ես վերցրի մազերի մի փունջ եւ մօտեցրի շրթունքներիս. նա աւելի մեծ փնջերով ծածկեց երեսս:

— Երեխա'յ ու դեւ, դա լաւ ծածկոց է աչքերիդ, իսկ ես կը նայեմ աստղերին, որոնց հետ խօսելիք ունիմ...

Բայց ես էլ նրան լսել ու հասկանալ չէի կարողանում, նրա ձայնը հնչում էր ինչպէս մի քնքոյշ մեղեղի, որի ամբողջութիւնն օրորում էր ինձ անուրջներում, իսկ առանձին մասերը խուսափում էին իմ հասկացողութիւնից: Նրա բորբոքուած, ուժգին հեւքը, որ կրծքի խորքից դուրս էր գալիս, փչում էր վրաս, որպէս մի պարարիչ զօրութիւն, չոյում էր դէմքս քնքութեամբ եւ կարծես եթերացնում էր ինձ. եւ նրա նուրբ մազերը՝ մետաքսանման ու հոսանուտ, որոնք քսւում էին դէմքիս ու պարանոցիս, իրանց բուրմունքով արբեցնում էին ինձ. եւ դիշերային այդ քար լուռութիւնն ու խաւարը, այդ զարմանալի խաւարը, որ հեւում էր մեզ հետ մեղմիւ եւ որ պատել էր երկսիս ինչպէս մի հսկայական ծածկոց, որպէսպի մեր առանձնութիւնն ու սէրը աստղերից դուրս ոչ մի աչք չտեսնի, այս բոլորը համակեցին իմ էութիւնը մի զզացմունքով, որ չի ասուի, չի արտայայտուի, ինչպէս ամէն մի գեղեցկութիւն, որ վեր է աշխարհից, գունատ իրականութիւնից եւ մասն է տիեզերական անհասանելի գաղտնիքի: Ես էլ չգիտէի, թէ ո՛ւր եմ, ի՛նչ եմ անում, մարմին ունե՞մ, թէ եթերացել եմ, գետնի վրա՞յ եմ, թէ լողում եմ անհունութեան մէջ՝ յաւիտենական երջանկութիւնը գրկած: Գիտէի միայն մի բան, որ իմ բազուկների մէջ է մի գողգոջուն ու թանկագին էակ, մի հրեշտակ, իմ երազների, խոհերի, իմ բոց սիրոյ առարկան, մի չքնար արարած, որ քնքոյշ ամպի պէս կարող է եթերանալ ու փախչել, եթէ բաց թողնեմ մի վայրկեան, եւ խենթի պէս համբուրում էի նրա շրթունքները, պարանոցը, այտերը, մազերը, ճակատը, սղմում էի նրա գլուխը իմ կրծքին ջերմութեամբ, ասես աշխատելով լուծուել նրա հետ, կամ միասին ոչնչանալ ունայնութեան ծոցում, ես խեղլում, մարում էի անչափ երջանկութիւնից: Ես բռնել էի վերջապէս բնութեան սքանչելի երազը իմ բազուկների մէջ, գըրկել էի այնքան տարիների իմ անորոշ, մութ իղձը, միշտ փախչող գաղտնիքն իմ կեանքի, գեղեցկութեան գերագոյն մարմնացումը եւ պատրաստ էի մեռնել հազար տառապանքով, վերստին կենդանանալ, զգալ այդ դիւթիչ էակն իմ կրծքին, կրկին տառապել, մեռնել, գարձեալ կենդանանալ եւ այսպէս անվերջ, յաւիտեան:

Որքան երկար տեւեց այդ կացութիւնը, ես չգիտեմ, միայն ուշքի եկայ այն ժամանակ, երբ ես արդէն ուժասպառ էի սաստիկ

յուղմունքից, իսկ Մարդարիտը հեկեկում էր իմ կրծքի վրայ յորդ արցունքներով։ Մի մութ սուգ էր այդ ինձ անյայտ պատճառից, եւ արցունքները՝ կարծես վաղուց հետէ զապուած՝ այժմ թափւում էին, քանդելով իրանց պատուարը, եւ երջանկութեան արցունքներ չէին, նրանք այնքան խորից եւ այդպէս առատութեամբ չեն դալիս։

Յանցաւո՞ր էի ես, ասել չէի կարող, բայց աննկարագրելի ցաւի մի զգացմունք համակեց ինձ եւ սիրտս խայթեց ինչպէս թունաւոր օձ, այդ արցունքի մի հեղեղ էր կարծես, որ սրբեց տարաւ երջանկութիւնս իր վառ երազներով եւ ինձ բաժին մնաց միայն մի խոր ապաշաւանք, որ մի սառնարիւն զեռունի պէս անցաւ մարմնիս վրայով, լիդեց իմ թիկունքը ու սարսոեցը ինձ, եւ զլուխս յուսահատ ու վշտարեկ կախուեց կրծքիս արճիճի ծանրութեամբ։ Կարծում էի, թէ վերջապէս հասկացել եմ այդ հրաշդեղ սՓինքսին, որ նրա հոգին իմն է, ինչպէս իմ սիրտը եւ սակայն այս արցունքը վկայ էր, որ ես դարձեալ խարուեցի։

Այնպէս դժբախտ էի. դուցէ երբեք այնքան մեծ, անխառն երջանկութիւնն այդպէս արագ չէր թունաւորուել արցունքով, երբեք բախտ ու դժբախտութիւնն այնքան մօտիկ չէին եղել իրար։ Թողեցի, որ նա հեկեկայ իմ կրծքի վրայ, իսկ ես մտածում էի մէկը միւսից սեւ բաներ եւ նզովում էի իմ ճակատագիրը։ Ի՞նչ դաշտնիք ունի այս կինը, Տէ՛ր Աստուած, մտածում էի ես. անցեալները նա խօսեց ինչ որ գերեզմաններից, չլինի՞ թէ՝ ճշշմարիտ՝ ես առանց իմանալու խաղում եմ մի ազնիւ կնոջ թուլութեան հետ, վիրաւորում եմ մի գերեզման, որին նա ուղում է դեռ հաւատարիմ մնալ։ Կամ չլինի՞ թէ ես վիրաւորել եմ նրան իմ բիրտ վարմունքով, իմ չափազանց տաք, չափազանց փութեկու համբոյրներով, որոնք չեն եղել քնքոյշ, մաքուր, ինչպէս լինում են սիրոյ առաջին արտայայտութիւնները, երբ խօսում է միայն հոգին՝ մարդկային զգացական բնութիւնից անկախ։ Ես քնքութեամբ բարձրացրի նրա դլուխը եւ բռնեցի արցունքով թրջուած ձեռքը ու մօտեցը շրթունքներիս։

— Ներեցէ՛ք ինձ իմ կոպառութիւնն, ասացի, իմ անվայել թուլութիւնը. ես այժմ տեսնում եմ, թէ որքան դժուար է ճանաչել մարդկային հոգին եւ մանաւանդ կնոջ հոգին. ինձ թւում էր, թէ

այն բոլորից յետոյ, ինչ մեր մէջ պատահեց, այդքան համարձակութիւն դուք ինձ կը ներէք, բայց նորէն սխալուեցի եւ դժբախտ եմ: Բաւականացէք այդքանով, որ ես դժբախտ եմ, խորապէս դժբախտ, որպէս երկնքից գահավիժուած, մերժուած մի հրեշտակ, որ իր անկման սարսափի մէջ անդամ սղում է սխալը: Ես վիրաւորեցի ձեզ, այդ տեսնում եմ, եւ որպէս պատիժ՝ վաղը եւեթ ես կը հեռանամ այստեղից՝ տանելով սրտումս ձեր նուրբական սլատկերը, որպէս արտասուող, վշտացած հրեշտակի, եւ նրա հետ ամօթի մի խորունկ զգացմունք: Եւ թող այդ զգացմունքը շիկացած երկաթի պէս օր ու գիշեր այրի իմ սիրտը միեւնոյն տեղում, որպէսպի երբեք չմոռանամ, թէ ես մի օր, մի տեղ անվայել կերպով վիրաւորել եմ մի քնքոյշ սիրտ, մի աղնիւ կնոջ, որին ես արժանի չեմ եւ որին չեմ հասկացել:

Նա ուղղուեց, աչքերը սրբեց, գողտրիկ շարժումով յետ-յետ ձգեց ճակատի վրայ թափուած մաղերը, ինչպէս նա սովոր էր անել, երբ յուղուած էր լինում, կամացուկ յենուեց նստարանի թիկունքին, կուրծքը դուրս ձգեց ու լայն շունչ առաւ: Ես լուռ հետեւում էի նրա բոլոր շարժումներին, եւ սպասում էի, թէ ինչ է լինելու, երբ յանկարծ նա կոացաւ դէպի ինձ, երկու ձեռքով բոնեց զլուխս, նայեց աչքերիս մէջ երկա՛ր-երկա՛ր, ասես նրանց խորքը թափանցելու, նրանց ներսը կարդալու համար նոյնիսկ դիշերային խաւարի միջից, ու կամացուկ ասաց՝ թափահարելով իր հերարձակ, նազելի գլուխս:

— Օ՛, իմ փոքրիկ զեւ ու երեխայ. — Եւ ապա մի տաք ու երկար համբոյր դրոշմեց շրթունքներիս. ահա քեզ որպէս ապացոյց՝ թէ դու երեխայ ես եւ գեւ, — շարունակեց նա. — դու ինձ չես վիրաւորել, սի՞րելիս, միայն մէրը քեզ մոռացը է անդամ լուռթեան փիլիսոփայութիւնը. ինչո՞ւ չես ուղում մտածել, որ տիեզերական հրաշագործ ու սարսափելի լուռթիւնից դուրս կայ եւ մեր խղճալի կեանքի լուռթիւնը, որ մաս-մաս ապրում է հոգիների մէջ, ծածկում է մեզանից վտանդաւոր ճշմարտութիւններ, մարդին մարդու համար դարձնում է մի մութ առեղծուած, սրտերը պատում է անթափանցիկ քօղով, եւ ամէնքը, օ՛, ամէնքը խարխափում են խաւարի մէջ, փոխադարձ յարաբերութիւնները դառնում են կեղծիք, եւ մարդիկ իրար դանելու, ճանաչելու հա-

մար քայլում են մի մշտական մշուշի մէջ: Ե՛հ, թողնենք, դու լաւ ես հէնց նրա համար, որ շատ բան չգիտես, կեանքը քեզ թւում է մի բաց պարտէղ, ուր ամէն ինչ գրաւիչ է. երեխաներն այդպէս են, նրանց փոքրիկ ճշմարտութիւնները իրերի սկիզբն ու վախ- ճանն են. երեխայ ես, ի'մ բարեկամ, հոգով՝ երեխայ, աչքերով՝ դեւ:

— Ի'մ հրեշտակ, ի'մ կեանք ու արեւ, օ՛, խօսի՛ր, խօսի՛ր, այդպէս դու վանում ես իմ հոգու մոռայլը, իմ փշրուած երջան- կութիւնը յետ տալիս. ես աղաչում էի քեզ միայն ներել ինձ, մի քանի կաթիլ ցող կաթեցնել իմ այրուած հոգու վրայ, իսկ դու ինձ բարձրացնում ես զով բարձունքները եւ դիւթական, երջա- նիկ օրօրներով հանդիսա տալիս իմ տանջուած, պապակուած սրտին: Խօսի՛ր, խօսի՛ր, քո շրթունքներով միշտ լուռ անհունու- թիւնն է փափսում իմ ականջին, եւ այժմ ինձ թւում է, թէ այլեւս ես երբեք մեռնելու չեմ: Առաջին անգամն է քո շրթունքներից լսում եմ «դու» եւ «սիրելի», եւ կարծես թէ դու ինձ տանում ես մի այլ, անծանօթ աշխարհ, ուր մահը մեղ էլ երբեք հասնելու չէ: Այս բոլորից յետոյ մի՞թէ ճշմարիտ չէ, որ անհուն ժամա- նակներից երկու էակներ դեռ աշխարհ չեկած անգամ նշանակ- ուած են լրացնելու իրար, որ նրանց հոգիները թէկուզ բեւեռից բեւեռ կը նետուեն դէպի իրար մի անյաղթելի մղումով եւ հէնց այդ մղումն է, որ մարդկային խղճուկ լեղուն անուանում է դիպուած:

Նա կրկեն դլուխը դրեց ուսիս նազելի ձեւով, ես գրկեցի նրա պարանոցը քնքշութեամբ: Երեխայի պէս մոռացած մի փոքր ա- ռաջ թափած արցունքը, նա մեղմիւ մրմնջում էր ականջիս տակ կարծես ինքն իրան.

— Ի՞նչ լաւ է այսպէս, երբ աստղերը թարթում են, երբ խո- տերը փափսում են, եւ հոգիների մէջ դաղտնիք չկայ, որովհետեւ արցունքը լաւ է, նա հոգիների խաւարը լուսաւորող ջահն է, ե- թէ մարդիկ բնաւ արտասուել չիմանային, նրանք սարսափելի կը լինէին, եւ նրանց կը տակ ո՛չ մի հայեացք չէր թափանցի: Մի՛ վշտացիր իմ արցունքից, սի՛րելիս, երբ կուտուել է, լաւ է թափ- ուի, մոռացի՛ր, հոգի՛ս, մոռացի՛ր, որ ես արտասուեցի:

— Օ՛, Մարդարիտ, աղաչում եմ քեզ, մի՛ թող, որ մեր եր-

ջանկութեան վրայ թէկուղ մի փոքրիկ ամպ մութ կապի, չէ՞ որ դու ասում էիր, լոռութիւնը ծածկում է վտանգաւոր ճշմարտութիւններ. մի՞թէ դեռ ես արժանի չեղայ քո արցունքի պատճառն իմանալու:

— Իմ արցունքն անցեալին է պատկանում, իսկ մենք ապրում ենք ներկայով, եւ նա աւելի մօտ սղմուեց ինձ, գլուխը ուսիցս վար ձգեց կրծքիս վրայ, մազերը փաթաթեց պարանոցիս եւ չարաճճի ձեւով նայում էր երեսիս:

— Դե՛ւ, դե՛ւ, կրկնում էր նա գողտրիկ եղանակով, դու իսկ եւ իսկ դեւի աչքեր ունիս, մին հին դեւի, որին ճանաչում եմ մանկութիւնից: Երբ ես դեռ շատ փոքր էի, միշտ երազում էի, որ մի դեռ ինձ խլել է, փախցնում է, նա սարսափելի աչքեր ունէր, որոնք ինձ այրում էին բոցի պէս, ես սոսկում էի նրանցից, բայց աշխատում էի նայել եւ թափանցել դեւի հոգու մէջ, տեսնել ինձ այրող բոցի աղբիւրը, քանի սարսափում էի, այնքան աւելի էի նայում: Գիտե՞ս, ես սիրում եմ սարսափը, մե՛ծ սարսափ: Եւ ահա այդ դեւը տանում էր ինձ առասպելական գետերի, հովիտների, ձորերի, լեռների վրայով, որոնք բոլորն էլ նոյնաչս սարսափելի էին: Քանի հեռանում էինք դէպի այդ անծանօթ աշխարհի խորքերը, այնքան սարսափն աւելի էր մեծանում, ես դողում էի, բայց չէի ճշում, կ'ուղէի փախչել, աղատուել եւ կ'ուղէի մնալ միաժամանակ: Յետոյ մեր յետեւից սրարշաւ հասնում էր մի սասպետ, ողջ պատած դէնք ու զրահով, ահագին ու անհեթեթ, մի նոյնքան հսկայ նժոյդի վրայ. նա դալիս էր, սպանում էր դեւին եւ ինձ կրկին փախցնում դէպի անծանօթ աշխարհներ, ես դարձեալ դողում էի, բայց պինդ-պինդ կպչում էի նրա թիկունքին եւ մենք սլանում էինք չդիտեմ ուր. եւ լա՛ւ էր, լաւ էր այդ բոլորը, միայն սաստիկ ցաւում էի, որ սապետը դեւի պէս աչքեր չունի, հայեացքը հեղ է ու մեղմ: Այժմ նայում եմ եւ իսաւարի միջից անգամ ես տեսնում եմ իմ կորցրած դեւի աչքերը, որոնք այրում են ինձ, ես տեսնում եմ նրանց բոցերի աղբիւրը. դե՛ւ, դե՛ւ:

Եւ նա փոքրիկ ձեռքով կամացուկ, քնքութեամբ խփեց երեսիս ու յետոյ մազերով ծածկեց իր երեսը: Այս բոլոր պատճութիւնը, նրա արածները, այդ չարաճճի եւ գուրգուրոտ ձայնը

խենթացնելու չափ գեղեցիկ էին, խօսքերը մարեցին իմ շըրթունքներին, ես խսպառ մոռացայ ինձ, աղահութեամբ կոացայ նրա վրայ համբոյրի ծարաւով, բայց նոյն վայրկենին նա կատուի արադութեամբ թռաւ տեղից ու կանգնեց առաջս:

- Լսի՛ր . դու շա՞տ ես սիրում ինձ, ասաց նա:
- Ուզում ես՝ ասե՞մ խօսքերով:
- Ես ի՞նչ դիտեմ . ես հարցնում եմ՝ շա՞տ ես սիրում ինձ:
- Մէրը խօսք չէ, այլ գործ, ուստի ես լուսմ եմ:
- Ի՞նչ կ'ուզէիր ինձ համար:
- Մի սարսափելի վտանգ, որից ես կարողանայի քեզ աղատել իմ կեանքի դնով:
- Բոլոր տղամարդիկ այդ ասում են:
- Ոմանք կատարում են:

Նա լրեց մի վայրկեան . կամացուկ մոմուաց «Ֆառևստի» Մարդարիտայի ողբից մի կտոր . ապա յանկարծ հարցրեց :

- Եթէ ես մեռնեմ, դու շա՞տ կը տիրես:
- Աղաչում եմ, Մարդարի՛տ, սա ի՞նչ խօսակցութիւն է, ի՞նչո՞ւ համար են այս տարօրինակ հարցերը, ինչո՞ւ այս սեւ քողը, որ ձգուած է մեր յարաբերութիւնների վրայ, չէ՞ որ առանց այն էլ քո կեանքի խաւարը խեղդում է իմ հոգին:

Պատասխանի փոխարէն նա կրկին նստեց կողքիս, նազելի թուլութեամբ դլուխը ձգեց կրծքիս ու երկար ժամանակ լուռ, մտախոհ նայում էր աստղերին: Ես նոյնպէս լուռ էի ու անշարժ, վախենում էի խանգարել նրա հմայիչ խաղաղութիւնը, միայն զգուշութեամբ խաղում էի նրա հարուստ մաղերի հետ, որոնց մետաքսանման վնջերը իմ մատների արանքից հոսում էին ջրի ալիքների պէս եւ մեղմով թափւում նրա կրծքին: Ապա նա քնքոյլ ձայնով սկսեց մի պատմութիւն, միշտ երազուն, միշտ մելամաղձոտ, ասես աստղերի հետ խօսելիս լինէր: Եւ այն պատմութիւնը դողտրիկ էր ու տիսուր, ինչպէս այն դիշերը, ուր խաւարի միջից աստղերը նայում էին, որպէսզի համարեն նախընթաց օրը մեռած կեանքերի լուռ շիրիմները:

Նա ասում էր .

«Լիճն այնքան վճիտ էր, որքան մանկան արցունքը, եւ այն-

քան խորը, որքան կասլուտակ երկինքը։ Ոչ ոք չէր տեսել նրա անդունզները, ոչ ոք չէր կարդացել նրա սիրտը։

«Յերեկը նրա վրայ լողում էին ձիւնափայլ կարապները, եւ արեւի շողերը ոսկեզօծում էին նրա կոհակները։ դիշերը աստղերն էին նայում նրան եւ ժամանակակից դողդոջուն պատկերին։

«Վերջալոյսից յետոյ անհանգիստ ու արկածախնդիր հովն էր փչում նրա վրայ, սիրահարի պէս մի մեզմ համբոյր էր խում նիրհող գեղեցկուհու երեսից ու խոյս տալիս դէպի լեռները։

«Եւ լեռները, որոնք գրկած պահում էին իրանց հսկայ բազուկների մէջ երկնքի այս չքնաղ աղջկան, խոժոռում էին իրանց աչքերը եւ դուրս քշում չարաճճի ու յանդուգն հովին իրանց ձորերից։

«Եւ ամէն դիշեր, երբ նիրհում էին կարապները, այն լճի վրայ յայտնուում էր մի նաւակ՝ երկու փոքրիկ առազաստ բացած ինչպէս հրեշտակի թեւեր, եւ այն նաւակի մէջ նստած էին զոյգ սիրահարներ։ Նրանք սուրալով անցնում էին լճի երեսից դէպի խորքերը, ուր չեն հասնում լեռների ստուերները, ուր կարապները երբեք չեն լողում։

«Աստղերը վերից նայում էին նրանց, իսկ կարապները զարթնում էին իրանց ականակիտ ու յեղյեղուկ անկողնում, փսփսում սիրահարների դաղտնիքը ու կրկին քուն մտնում՝ օրօրուելով դողդոջուն ալեակների վրայ։

«Եւ մինչեւ լոյս այն նաւակը օրօրւում էր ջրերի վրայ՝ մանածելով իստարի մէջ այն դաղտնի սէրը, եւ մինչեւ լոյս աստղերը ժպտում էին նրանց։ Նաւակն անյայտանում էր, երբ արշալոյսի շողերի տակ լիճը ցնցուում էր ու յօրանջում, երբ կարապները կըրկին յուղում էին ալիքները։

«Հովը նախանձեց այդ չքնաղ սիրուն, ուռաւ ու պայթեց. գոռ փոթորիկը ալիքներ հանեց, նաւակը խորտակեց, սիրահարներից մէկն անհետ կորաւ, իսկ միւսին ձկնորսները կիսամեռ հանեցին ջրից։

«Եւ նա ապրեց, անընկեր ու վշտոտ, նոր սէր չփնտռեց, սեւ հագաւ, փակեց իր սրտի գռները ու այնտեղ սպաց ու գգուեց իր դժրախտ սիրոյ յիշատակները։

«Եւ տարին մի անդամ Ամենայն Սրբոց տօնին, նա կէս դիշե-

րին գաղտագողի դուրս էր գալիս, զգուշութեամբ իջնում լիճը՝ ձեռքին մի պսակ թարմ ծաղիկներից. մեն-մենակ նստում էր մի նաւակ, առանց ճրադի եւ առանց առաջնորդի դիմում էր այնտեղ, ուր թաղուեց իր ընկերը:

«Դարձեալ աստղերը թարթում էին երկնքից, դարձեալ կարապները զարթնում էին իրանց արցունքէ բնի մէջ, օրօրւում էին վշտով, կարծես նրա հետ միասին սգում էին ջրերի տակ թաղուած սէրը»:

«Վշտարեկ սիրահարը հասնում էր այնտեղ, ուր մի գժրախտ օր թաղուեց իր ընկերը, եւ մի ծանր քար կապելով բերած պսակին՝ ձղում էր ջուրը ու կրկին յետ գալիս, եւ այսպէս տարիներ:

«Եւ մի գիշեր փոթորիկը դարձեալ բարձրացաւ, աստղերը վերից ծածկեցին իրանց աչքերը, լեռները գլուխները քաշ ձղեցին, եւ սգաւոր նաւակը խորտակուած՝ իջաւ ալիքների տակ. այս անգամ դոյդ սիրահարները ջրերի տակ գտան իրար»:

Նա վերջացրեց ու լոեց:

— Իսկ իմ պատմութիւնը լաւն է, այնպէս չէ՞՝, ի՞մ փոքրիկ դեւ:

— Հրաշալի է, պատասխանեցի, բայց շատ է տխուր, եւ չդիտեմ՝ ինչո՞ւ պատմեցիր:

— Երեխա՛յ, մե՛ծ երեխայ, բոլոր գեղեցիկ բաները միշտ տխուր են, գեղալաշտ ու երազող երեխա՛յ, չե՞ս նկատել, որ բնութեան սքանչելի տեսարանի հանդէպ մեր հոդին համակւում է մի անուշ, դուրեկան վշտով, մի քնքոյչ տխրութեամբ, «որից կ'ուղէինք երբեք չբաժանուել. իսկ երաժշտութիւնը նոյնպէս չի յուղում մեր հոդին անհասկանալի, բայց միշտ տխուր երազներով: Եւ այս սիրուն ու տխուր բանը պատմեցի քեզ ասելու համար, որ եթէ ես խեղդուեմ, դու այնպէս չես սգայ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ դու տղամարդ ես, իսկ տղամարդի սէրը, ես քեզ ասել եմ ուրիշ անդամ, նման է մեղուի սիրուն դէպի ծաղիկը:

— Սիրոյ ուժդնութիւնը կապուած է միայն սրտի հետ, սեռը չափ չէ:

— Ի՞նչ ես կարծում, ո՞վ է իմ պատմութեան մէջ հաւատարիմ սգաւորը, կի՞նը, թէ մարդը:

— Կենդանի մնացածը մի իսկապէս սիրող սիրտ էր :

— Կին էր, կին էր, ի՞մ դեւուկ... Տղամարդն այդպէս չէր վարուի, նա կը մոռանար եւ նոր բուն կը հիւսէր, մեղունե՛րը... բայց եւ այնպէս...

Նա խօսքն ընդհատեց, յանկարծ փաթաթուեց իմ պարանոցով, ալինդ, ալինդ համբուրեց ու ոտքի թուաւ:

— Բարի՛ գիշեր, էղուց միեւնոյն ժամին այստեղ, դե՛ւ, դե՛ւ ու երեխայ:

Մինչեւ ես կարոցացայ ուշքի դալ եւ ձեռքերս տարածել խաւարի մէջ, նա փախաւ առաջիցս այծեամի պէս:

— Մարգարի՛տ...

— Սո՛ւս, ց'տեսութիւն. վաղը գիշեր, — լսուեց հեռուից, եւ նա անյայտացաւ իմ աչքից: Մնացի տեղումս քարացած, կարծես թէ երաղ էր այս բոլորը. մի քանի վայրկեան էր ինչ նա հեռացել էր ինձանից, եւ արդէն ինձ թում էր, թէ նա բնաւ այնտեղ չէր եղել եւ թէ դա մի անկարելիութիւն է: Նրա հմայիչ կանացիութիւնից մնացել էր իմ վրայ միայն մի եթերային բան, շրթունքներիս վրայ զգում էի նրա համբոյրի ջերմութիւնը, ականջումս դեռ հնչում էր նրա դուրգուրիչ ձայնը, դեռ չնչում էի նրա մակերի բոյրը, այնուամենայնիւ ես անուրջների մէջ լինէի կարծես եւ չէի հասկանում ինձ հետ կատարուածը: Հեռու խաւարի մէջ դարձեալ լուսաւորուեց նրա սենեակը, պատուհանից լոյսը դարձեալ թարթում էր ինձ ժպտով, քաղցրութեամբ. նա էր, նա այնտեղ էր, այն լուսամուտի յետեւում:

— Իմ հրեշտա՞կ, իմ գողարիկ հրեշտա՞կ, մրմնջում էի ես, բարի՛ գիշեր... որքա՞ն երջանիկ եմ...

X

Մենք յամբաքայլ ու անձայն գնում էինք անտառային նեղ արահետով, մինչդեռ մեր գիլսից վեր, մեր շուրջը գիշերն իր սեւ, հսկայ թեւերը տարածել էր ու թուիս նստել նիրհող բնութեան վրայ: Մարգարիտի մի տարօրինակ քմահաճոյքն էր այս՝ ուշ գիշերով անցնել մօտակայ անտառով, հասնել գետափին եւ այնտեղ ականջ դնել ջրերի ձայնին գիշերային համատարած լուսութեան մէջ: Ես համաձայնել էի կատարել նրա ցանկութիւնը, որովհետեւ սիրուած կինը քմահաճոյք չունի, որ մի տղամարդ յանձն չառնի:

կատարել, մանաւանդ երբ դա զրօսանքի, միասին առանձնանաւու, երազելու հետ է կապուած :

Նա քայլում էր իմ կողքից թեւանցուկ, եւ ես զգում էի, թէ ինչպէս աւելի սղմուում է ինձ, ասես վախենում է խաւարից : Մեր ճանապարհի երկու կողմում բարձրանում էին հինաւուրց կազնիները, ինչպէս լուռ ողիներ, որոնք կարծես զարմանքով էին նայում մեզ :

Խորին լուռթիւն էր :

Միայն երեմն մեր ոտքերի տակ խշխում էր մի չորացած տերեւ, կամ որեւէ ծառի կատարից թեթեւ ճռոցով ցած էր ընկնում մի վաղաժամ չորացած ոստ, որեւէ զեռուն կամացուկ չարժում էր մօտիկ մացառները, մի փոքրիկ կենդանի հալածականի կամ որսի յետեւից, յանկարծ յայտնում էր մեր ճանապարհի վրայ եւ շտապով կորչում հակառակ կողմը, ապա ամէն ինչ խաղաղում էր ու լուռմ : Եւ բնութիւնը դարձեալ գործում էր լուռթեան մէջ :

— Ի՞նչ լաւ է, ի՞նչ լաւ է անտառը գիշեր ժամանակ, փափսուկով ասում էր Մարգարիտը . . . մարդ ամէն վայրկեան սպասում է մի բանի, մի անորոշ բանի, որից վախենում է եւ ուզում է . . . Գիտե՞՞ս ինչ . . . այժմ ինձ թւում է, որ զու իմ մանկութեան դեւն ես բոց աչքերով, բոցն չնչով ու խլած փախցնում ես ինձ ո՞վ գիտէ ո՞ւր . . . ի՞նչ լաւ է . . . հապա մէկ ինձ նայի՞ր . . . ա՞յ աչքերդ . . դեւի աչքե՞ր . . . բայց ես քեզանից չեմ վախենում : Ես կ'ուզէի այժմ մի ուրիշ բան, մի մեծ սարսափ, օրինակ՝ որ այս խաւարը յանկարծ կենդանանար, շարժուէր, գալարուէր մի առասպելական հազարդլանի հրէշի պէս, եւ ես սոսկումով ճչայի, փաթաթուէի քեզ պինդ, պինդ, ի՞նչ կ'ասես :

— Ա՛յ, զու ես այժմ երեխայ, զու գեռ ապրում ես հէքիաթների աշխարհում փոքրիկ աղջիկների նման :

— Ես միշտ այնպէս սիրել եմ հէքիաթների աշխարհը . իրական կեանքը, ամենօրեայ չար ու բարին շատ է խղճուկ ու ճանձրալի, նա ինձ երեք չի դոհացըել . ես միայն ցանկացել եմ, որ իմ կեանքն անցնի դիւթական հէքիաթի պէս, ուրիշներից բոլորովին տարբեր : Եւ իմ ցանկութիւնը մասսմբ կատարուեց, բայց իմ հէքիաթը սոսկալի եղաւ :

— Եւ այդ հէքիաթը դու ծածկում ես ինձանից մինչեւ այժմ,

կարծես ես անարժան լինէի ապրել քո անցած, դուցէ եւ ներկայ ցաւը:

— Լսի՛ր .— նա ուժով ցնցեց բազուկս ու կանդ առաւ:

Մի թոչուն աղիողորմ ճիչ արձակեց սաղարթների մէջ, եւ նրա յուսահատ ձայնը ինչպէս մի ցաւի մորմոք անցաւ քնած անտառի վրայով:

— Ի՞նչ է այս :

— Մի թոչուն, մի դժբախտ արարած, որ բուի ճանկն ընկաւ:

— Ահա դարձեալ մի սոսկալի հէքիաթ . . . Մի՞թէ ոչինչ չի կարելի անել, ի՞մ ընկեր, ասաց նա յուզուած ձայնով:

— Ոչինչ . առաջ գնանք, անօգուտ է սպասել, բնութիւնը լի է այդ ճիչերով . անխուսափելի են նրանք:

— Զարհուրելի է բնութիւնը . . .

Մենք քայլեցինք դարձեալ, բայց Մարդարիտը յանկարծ կանդ առաւ, նորից սղմեց բազուկս եւ ականջ դրեց : Հեռու անտառի թաւուտի մէջ մի գաղան տնքալ սկսեց, եւ նրա հեծեծանք-ները խուլ արձագանգներով տարածուեցին անտառի մէջ : Մառերը կարծես ցնցուեցին ու փափսացին, նրանց վրայ թառած թոչուն-ները կամացուկ ճթճթացին, թւում էր նոյնիսկ, թէ խաւարը գողում է, այն աստիճան սոսկում ունէր իր մէջ դժբախտ կենդանու տնքոցը, որ շարունակում էր լսուել աւելի եւ աւելի թուլանալով :

— Լսո՞ւմ ես, այս ի՞նչ է, ի՞մ ընկեր, — մըմնջում էր Մարդարիտը յուզուած, համարեա լացակամած :

— Նոյն բանն է, սիրելի՛ս, ինչ լսեցինք քիչ առաջ . տարբերութիւնն այն է, որ այն՝ ծառի վրայ էր կատարւում, այս՝ ծառի տակ . դա մի անմեղ կենդանի է, գուցէ եւ մի գաղան, որին յօշո-շոտում է իրանից աւելի մեծը :

— Բզկտում, ուտում են իրար . ո՛չ, զարհուրելի է անտառը դիշեր ժամանակ, նրա հէքիաթները լի են սոսկումով, խոկ խաւարի մէջ գործող կենքը այստեղ ահաւոր է : Յետ գնանք, սիրելի՛ս, եւ թող մեղ չհասնեն այդ ձայները, որոնք խեղդում են մարդու հողին :

Ես զգացի, թէ ինչպէս նրա թեւը դողում էր իմ թեւի տակ, նա աւելի ու աւելի մօտ էր սղմւում ինձ : Քիչ յետոյ մենք դարձեալ սպարտիզի ծառի տակ էինք, նուիրական դարձած նստարանի վը-

բայ: Մարդարիտը երկար ժամանակ դեռ չէր հանդստանում ստացած ցնցող տպաւորութիւններից: Նա լուռ էր:

— Ինչո՞ւ չես խօսում, հարցրի ես կամացուկ՝ վերցնելով նրա ձեռքը եւ մօտեցնելով շրթունքներիս:

— Ես դեռ մտածում եմ անտառի դիշերային հէքիաթների մասին:

— Ի զուր, դա կեանքն է, ես ու գու ոչինչ փոխել չենք կարող:

— Զարհուրելի էին այդ աղաղակները. ես անտառը դիշեր ժամանակ աւելի դրաւիչ, աւելի գեղեցիկ էի երեւակայում.

— Նա դարձեալ գեղեցիկ է, բաց լուռթեան մէջ:

— Այդ քո լուռթիւնը... որով աշխատում ես ամէն ինչ բացատրել բնութեան մէջ, դու մոռանում ես, որ տառապող կենդանին իր ճիչով յայտնում է միայն մի չնչին մասը այն ահագին սարսափի, որ գործում է քո լուռթեան մէջ: Հաւատա՛, բարեկա՛մ, որ եթէ աղաղակը չլինի, տառապանքի սարսափին աւելի ահաւոր կը լինի:

— Լոռթեան մէջ գործող սարսափը յարաբերական համկացողութիւն է, հոգի՛ս. տիեզերքի ամբողջութիւնը անհատական ցաւերի գիտակցութիւնը չունի, նա լուռ գիմում է դէպի մի անյայտ ու դերագոյն նալատակ. անհատները դիպուածներ են նրա համար. յաւիտենականութիւնը վայրկեաններ չգիտէ: Բայց թողնենք այդ, հո՛գիս, այսպիսի վէճի ոչ տեղն է եւ ո՛չ ժամանակը, եւ ես էլ անկարող եմ շարունակել, որովհետեւ իմ սիրած էակի շրթունքներով ինձ համար միշտ ճշմարտութիւնն է խօսում: Այդ բոլորի փոխարէն պատմի՛ր ինձ խնդրում եմ քո ներքին ցաւը. ինչո՞ւ երբեմն այնքան տարօրինակ ես գու, ինչո՞ւ էիր լալիս երէկ գիշեր եւ խոյս տուիր պատասխանից: Հաւատա՛, սիրելի՛ս, որ ես չեմ կարող հանդստանալ, մինչեւ այս բոլորի վրայ ձգուած քողը չրարձրացնես: Ես քեզ պաշտում եմ, բայց գու ինձ համար մի դիւթական, մի սփանչելի դիշեր ես, ուր լուսոյ մի շող չկայ իմ ուղին լուսաւորելու համար:

— Ես երկար հաւատացած էի, որ մենք կը բաժանուենք՝ առանց որ ես պէտք զգամ պատմելու քեզ իմ կեանքը. այժմ տեսնում եմ, որ սիալը ում եմ: Դու իրաւունք ունիս, երբ գետը յորդանում է, նա պատուարներ տանել չի կարող. եւ երբ երկու

սրտեր զեղւում են իրար մէջ, նրանք բաց են անում վորխաղարձ դաղտնիքները: Ես քեզ ճանաչում եմ, պէտք է որ դու էլ ինձ ճանաչես: Զգում եմ, որ այս հանդիպումը սովորականներից չէ, ճակատագրական է համարեա: Իմ անցեալը մի հէքիաթ է, որ այնպէս նման է քիչ առաջ անտառի պատմած սոսկալի հէքիաթին: Իմ կեանքի, իմ բախտի հետ կապուած մի լոռութիւն կայ, մի ծանր լոռութիւն, որ այնպէս ծանրացած է իմ խղճի վրայ, նրա մասին ոչ թէ խօսել, այլ նոյնիսկ մտածելն ինձ համար ծանր է, բայց դու իրաւունք ունիս այն իմանալու: Զվշտանաս սակայն, եթէ այդ պատմութիւնը քո երջանկութեան վրայ ոչինչ չաւելացը-նի: Ճշմարտութիւնը որքա՞ն անդամ միայն դառնութիւն է բերում մեզ:

— Խօսի՛ր, խօսի՛ր, իմ աննման հրեշտակ, ինչ եւ յայտնելու լինիս, իմ վիճակը ձգուած է:

«Հօրս չեմ յիշում, այսպէս սկսեց նա՝ հոգոց հանելով ու յետ-յետ տանելով իր ճակատի խոպոպները...— Ես երկու, եւ քոյրս չորս տարեկան էր, երր նա մեռաւ: Մեղ դաստիարակողը եւ ինամողը եղել է մայրս, մի սիրող, քնքոյց սրտի տէր մայր, որ մեղ համար ոչինչ չի խնայել: Բարեբախտաբար հայրս, որ մի յայտնի բժիշկ է եղել, այնքան միջոցներ թողել էր, որ մենք նիւթական դժուարութիւններից միանգամայն ազատ՝ անկարօտ ապրել կարողանայինք:

Ես ու քոյրս շնորհիւ մօրս քնքոյց հոգածութեան՝ լաւ դաստիարակութիւն եւ կըթութիւն ստացանք եւ համարեա միաժամանակ հասած աղջիկներ էինք: Ինչպէս դու էլ նկատել ես, մենք՝ ես ու քոյրս խիստ նման ենք իրար. այդպէս ենք եղել դեռ շատ վիքրից, մեր ծանօթները յաճախ դժուարացել են մեզ որոշել իրարից: Սակայն այդ նմանութիւնը միայն արտաքուստ է, մեր ընաւորութեան, մեր ճաշակների ու հասկացողութեան, առհասարակ մեր ներքինի մէջ երբեք որեւէ նմանութիւն չի եղել: Բը նութեան մի տարօրինակ խաղ էր կարծես մեր արտաքինի այդ ապշեցուցիչ նմանութիւնը եւ մեր ներքինի նոյնքան ապշեցուցիչ տարբերութիւնը: Եւ այդ տարբերութիւնը միշտ յօգուտ ինձ չի եղել. որքան քոյրս լուակեաց էր, լուրջ, խոճուն, իրերի վրայ պարզ հայեացքի տէր, նոյնքան ես թեթեւ էի, շատախօս,

երաղող, յափշտակուող, ինչպէս մի միամիտ երեխայ: Եւ իմ երազները... բոլորը թեւաւոր, բոլորը վարդագոյն, անօրինակ: Կեանքն ինձ թւում էր որպէս հաճելի երազների, դրաւիչ հէքիաթների մի անվերջ շարք: Երէկ քեզ պատմեցի, թէ ինչպէս երկար ժամանակ հաւատացած էի, որ ինձ կը փախցնի մի դեւ կամ մի առասպելական սպայ ու կը տանի հեռո՛ւ, հեռո՛ւ. եւ այդ անորոշ, խուլ հեռուները ես կարողանում էի երեւակայել, ապրում էի նըրանցով: Քանի-քանի անդամ ես պարտիզում, ծառի տակ նստած՝ մոռացել եմ դիրքը ծնկներիս վրայ, նայել եմ վերեւ, երկնքից սահող ամպերին եւ դրանց հետ տարուել մի ուրիշ հրաշալի աշխարհ, ուր ամէն բան տարբեր է մերինից:

Մայրս ու քոյրս ինձ սաստիկ սիրում էին, գուրդուրում էին վրաս՝ որպէս տան փոքրիկ, այնպէս որ ես մի մօր տեղ՝ երկու մայր ունէի: Քրոջս սէրը մասնաւորապէս այնքան բուռն էր իր արտայայտութիւնների մէջ, որ յաճախ հասնում էր անձնուիրութեան: Նա ընդունակ էր ամենատեսակ զրկանք, նեղութիւններ յանձն տոնել՝ ինձ դոհ եւ երջանիկ դարձնելու համար: Ցիշում եմ, ես մի անդամ ծանր հիւանդացայ. Եւ նա քիչ մնաց խելագարուէր վշտից ու յուսահատութիւնից: Զնայելով որ մենք այնպէս նման էինք իրար, բայց նա միշ աշխատում էր ինձ աւելի գեղեցիկ դարձնել մի աւելորդ ժապաւէնով, մաղերի մի առանձին հիւսուածքով: Նա զուարձանում էր ինձանով, ինչպէս փոքրիկ աղջիկը իր տիկնիկով, իր մասին կարծէք բնաւ չէր մտածում, երջանիկ էր ինձ տեսնելով ուրախ, կայտա: Նրա եւ մօրս քնքոյչ վերաբերմունքը կամաց-կամաց ինձ դարձրին է՛լ աւելի պահանջող, չարածճի, երես առած, նոյնիսկ եսասէր: Ես սովորեցի շարունակ զոհեր ընդունել՝ առանց երբեք մտածելու զոհաբերութեան մասին: Ինձ թւում էր, որ ուրիշ կերպ չի էլ կարող լինել, որ իմ մերձաւորները պէտք է ինձանով զրադուեն, կատարեն իմ ամէն տեսակ քմահաճոյքները, սիրեն ու փաղաքշեն ինձ, իսկ ես ապրեմ իմ ուղածի պէս, անհոգ ու աղատ ինչպէս թռչունը եթերի մէջ:

Եւ ես ապրեցի ու մեծացայ ինչպէս աղատ ու անհոգ թռչուն... դա կեանք չէր, ի՛մ ընկեր, այլ մի գողարիկ երազ...

Մի անդամ մեր տուն եկաւ մի ծովային սպայ՝ մեր հեռաւոր

ազգականի որդին : Նա ջահիլ էր ու սիրուն, բարձրահասակ, թիկնաւէտ, միշտ ուրախ, զուարձախօս : Ես չգիտէի, թէ նա ինչո՞ւ է եկել, բայց ուրախ էի եւ երեխայի պէս յուզմունքս թագ-ցընել չէի կարողանում : Ինձ սաստիկ գրաւում էր նրա յաղթ երանը գեղեցիկ համազգեստի մէջ, նրա վճռականութիւն ու յանդընութիւն արտայայտող դէմքը, եւ ամէնից աւելի նրա ոլորուն բեխերը, որոնք միշտ այնպէս վեր էին ցցուած եւ նրա կերպարանքին տալիս էին կտրիմ արտայայտութիւն : Եւ այն ժամանակ ես սաստիկ սիրում էի, որ տղամարդը կտրիմ, արի տեսք ունենայ, որ նրա շարժումները, քայլուածքը զօրեղ բնաւորութիւն եւ ոյժ արտայայտեն : Իմ մեծագոյն հաճոյքն էր ինձ երեխայ եւ հովանաւորուած զգալ մի լաւ տղամարդի մօտ : Ինչո՞ւ միայն ես, ինձ թւում է, որ իւրաքանչիւր կնոջ իդէալը հուժկու, թիկնաւէտ ու բարեձեւ տղամարդն է, առնական էներգիայով լի : Ես չեմ ուզում ասել, որ կինը միանդամայն աչք է փակում ուժեղ սեռի հոգեկան, մտաւոր կարողութիւնների վրայ, բայց անպայման է, որ ոյժ ու զօրեղ առնականութեամբ չնչող օրդանիզմները համարեա անդիմադրելի գրաւչութիւն են ներկայացնում կանանց համար :

Դեռ առաջին գիշերը, երբ ամէնքը քնեցին եւ ընդհանուր խաղաղութիւն իջաւ մեր տան վրայ, ես երկար ժամանակ անքուն էի եւ լուրջ կերպով մտածում էի, թէ գուցէ մեր հիւրը, այս անծանօթ ու գեղեցիկ տղամարդը եկել է յատկապէս ինձ փախցնելու համար : Ես հաճոյքով երեւակայում էի, թէ ինչպէս նա կը մօտենայ, խաւարի մէջ խարխափելով կը գտնի ինձ, ես կը դողամ, սիրու կը բարախի, բայց չեմ ճշայ, յետոյ նա իմ ձեռքից կը բռնի, կը բարձրացնի, ես վախվխելով կը հետեւեմ նրան, մենք գուշոս կը գանք, կը նստենք դբանը սպասող կատաղի նժոյդի վրայ եւ կը սլանանք հեռո՞ւ, հեռո՞ւ, դէպի մի անծանօթ աշխարհ, ուր նա կը փակի ինձ մի դիւթական դղեակի մէջ...

Յերեկինելն ամբովզ ես նրա հետ էի անցկացնում մտերմաբար . կարծես մենք հին ծանօթ ընկերներ լինէինք : Ես նրա հետ վարւում էի այնպէս, ինչպէս երեխաները զիտեն վարուել իրանցից մեծերի հետ, երբ նրանց երես են տալիս ու փաղաքըում : Ամենակարծ ժամանակում ես այնքան համարձակութիւն ստացայ, որ երբ նրան գտնում էի պարտիզում նստած, յետեւից դադտաղողի մօտենում էի, աթոռը թիկունքից քաշում ու վայր գլորում, կամ

ձեռքից խլում փախցնում զանազան իրեր, կարդալու գիրքը, յաճախ գլխարկը։ Նա ինձ հալածում էր, ևս քրքջալով ու հեւալով փախչում էի շտապով եւ թագ կենում պարտիզում, յանկարծ յայտնում էի մի ուրիշ անկիւնից, պինդ-պինդ քաշում մաղերը կամ բեխերը եւ կրկին անյայտանում անտառային Փէյայի նման։ Նա թոյլ էր տալիս ինձ անել իր հետ ինչ կամենամ, նոյնիսկ օժանդակում էր իմ մանկական չարութիւններին, միայն յաճախ մատը թափ էր տալիս վրաս եւ ժպտալով ասում։

«Չարաճճի՛, թէ կը բռնե՛մ . . .»

Եւ մի անդամ պարտիզի մի հեռաւոր անկիւնում՝ ծառերի տակ բռնեց ինձ, գրկեց իր ուժեղ բազուկներով եւ պինդ համրուրեց։ Միայն մի վայրկեան այդ ժամանակ ես նրա աչքերին նայեցի ու սաստիկ կարմրեցի . . . բայց այնուամենայնիւ այդ համբոյրն ինձ չխրանեցրեց, ես երկար, երկար ծիծաղեցի եւ այնուհետեւ նրան աւելի էի չարչարում։ Միայն լաւ յիշում եմ, աշխատում էի էլ երբեք չըռնուել, որ նա այնպէս չհամբուրի ինձ, թէեւ կ'ուղէի, որ նա կարողանար ինձ բռնել հակառակ իմ ջանքերի. ծայրայեղ գէպքում վճռել էի, եթէ այդպիսի բան նորից պատահէր, չնայել նրա աչքերին, նրանց արտայայտութիւնը համբոյրի վայրկեանին մեր խաղերին նման չէր, սակայն կասկած չկար, որ կը նայէի։ Ես միշտ այդպէս եմ, սիրում եմ նայել այն ամէնին, ինչից վախենում եմ . . . եթէ կարելի լինէր մահը տեսնել առանց իսկոյն մեռնելու, ես հաճոյքով կը փնտռէի նըրան . . .

Քեզ ասացի, որ ես սիրում եմ սարսափի։

Մայրս իմ բոլոր չարութիւնների ու խաղերի համար կամ ժպտում էր՝ երբ նկատում էր, կամ քաղցրութեամբ յանդիմանում էր առանց խստութեամբ արգիլելու։ Տարօրինակ էր մանաւանդ քոյրս. նա հեռու նստած՝ ժամերով գիտում էր մեր խաղերը, լուռութեամբ ժպտում էր իմ արածների վրայ, յետոյ երկար մնում էր մտախոհ։ Ես շատ ուշ նկատեցի այդ եւ հաւատացած էի, որ քոյրս չի սիրում սպային, մանաւանդ՝ որ հետը խօսելիս կարճ պատասխաններ էր տալիս եւ գլուխը քաշ ձգում։ Քրոջս այդ վերաբերմունքը որքան ինձ անհասկանալի էր, նոյնքան էլ դուր չէր գալիս, որովհետեւ ես մեր հիւրին համարում էի շատ լաւ մարդ, լաւ ընկեր, որի հետ կարելի էր շատ հաճելի ժամեր անցկացնել։ Ցաւում էի քրոջս համար, բայց ես երջանիկ էի եւ

բնաւ չէի մտածում իմ վարմունքի մէջ փոփոխութիւն առաջ բերել:

Մեր հիւրը ամբողջ ամառ մնաց մեղ մօտ: Նա գիշերները միայն անց էր կացնում հիւրանոցում, իսկ ցերեկները մեր տանը: Ժամանակն անցնում էր ուրախ, մենք յաճախ դրօսանքներ էինք կատարում քաղաքի շրջակայքում ոտքով, ձիով: Ես դժողով էի սակայն, որ նա ինձ չի փախցնում գիշերով. ձի նստելիս՝ քաղաքից դուրս, երբ մեր առաջ փուռում էր լայնարձակ հորիզոնը, այն անորոշ հեռուն, որից գէնը մարդ սիրում է երեւակայել խորհրդաւոր աշխարհ, ես լայն չունչ էի առնում ազատ կրծքով, կարծես եթերանում էի թամբի վրայ եւ քիչ էր մնում մօտենամ իմ սիրուն ասպետին, կամացուկ փսփսամ՝ «ԵՇ, քշի՛ր փախչենք, յի՛մար»... եւ կը փախչէի, եթէ նա քչէր:

Տղամարդու հետ փախչելու իմ այդ բուռն ցանկութիւնը միանդամայն երեխայական էր. ամուսնութեան մասին այդ ժամանակ ես լուրջ հասկացողութիւն չունէի. գիտէի, որ հէքիաթների մէջ սիրուն աղջիկներին փախցնում են... եւ ես սիրուն էի: Բայց թէ ինչո՞ւ են փախցնում, ես այդ մասին բնաւ չէի մտածում: Երիտասարդ սպային չէի սիրում, կամ թէ սիրում էի այնպէս, ինչպէս երեխան կը սիրէ իրանից մեծին, որ փաղաքում է, գըղտում է իրան. գուցէ եւ կար սեռական բնազդը, որովհետեւ ես սաստիկ ուզում էի նրա հետ լինել, բայց դիտակցութիւն, կնոջ պէս սիրուելու պահանջ չէի զգում:

Ես տասնեւվեց տարեկան էի:

Մի օր մայրս ինձ առանձնացրեց եւ ասաց ժպտալով.

— Գիտե՞ս, Մարդարի՛տ, մեր հիւրը քեզ ուզում է, ի՞նչ կ'ասես:

— Ի՞նչպէս թէ ուզում է, բացականչեցի ես դժկամակութեամբ:

— Ուզում է քեզ հետ ամուսնանալ, քո ձեռքն է խնդրում, չե՞ս հասկանում:

Ես հասկանում էի, բայց կարկամուեցի, կարմրեցի եւ մի վայրկեան լուռ կացայ՝ գլուխս քաշ ձղած: Մայրս սպասում էր եւ ձեռքով չոյում մաղերս:

— Թող փախցնի, ասացի ես յանկարձ՝ գլուխս բարձրացնելով ու փախայ, հեռացայ մօրս աչքից: Առաջին անդամ իմ կեանքում ես ամաչեցի մօրիցս եւ առաջին անդամ այդ պատճառով

լացս եկաւ . ես թաղնուեցի եւ լաց եղայ : Ինչո՞ւ էի լալիս , չգիտեմ , կարծեմ նրա համար , որ իմ մանկութեան վառ երազները , դողմորիկ հէքեաթների հետ կապուած վարդապոյն յոյսերը ցընդուռմ էին անդառնալի կերպով : Այնքան տարիներ իմ սպասած , երազներիս մէջ փայտայած «ասպետը» եկել էր վերջապէս եւ ինձ չէր փախցնում , չէր տանում բիւրեղեայ պալատները մութ անտառների , խոր ճորերի , բարձր լեռների միջով , այլ «ուղում էր» ... Դա իմ առաջին եւ խիստ դառը յուսախարռութիւնն եղաւ , այդ օրը ես ոտք դրի կեանքի շէմքին եւ արդէն ողբում էի փախչող մանկութիւնս , մօտիկ անցեալի դիւթական հէքիաթները , որոնք այնքան տարիներ փայտայել էին իմ երեւակայութիւնը : Արցունքներս դեռ վճիտ էին , նրանց աղբիւրը հոգուս խորքում դեռ չէր պղտորուել , բայց անորոշ կերպով զգում էի , որ կեանքը հէքիաթ չէ , երազներն այնտեղ ցնդուում են , որպէս արշալոյսի վաղանցուկ գոյներ : Սիրտս փղձկաց մի անորոշ ցաւից , առանց իմանալու ես կատարում էի կեանքի սուզը , ես ողբում էի այն մէծ ցաւը , որ մաս-մաս ապրում է արարածների մէջ : Եւ լացեցի՞ , լացեցի՞ ...

Զեմ երկարացնի . ես նրա հետ այնուամենայիւ նշանուեցի կարծես հանաքով եւ յետոյ ամուսնացայ դարձեալ կարծես հանաքով : Մայրս ցանկանում էր , որ ես ամուսնանամ , որովհետեւ հաւատացած էր , թէ աւելի լաւ ընտրութիւն անել անկարելի է , փեսացուն հարուստ էր եւ լաւ ծագումից , լաւ էլ ապագայ ունէր առաջը : Ես էլ սաստիկ շտապում էի իմանալ , թէ ինչ ասել է նըշանուած լինել մի տղամարդի հետ : Իմ փեսացուն ինձ համար ո՛չ թէ սիրելի , այլ պարզապէս հետաքրքրիր էր : Փոքր ժամանակ ես միշտ անհամբեր էի իմանալու հէքիաթի վախճանը , այժմ էլ աշխատում էի շուտով իմանալ , թէ ինչով է վերջանալու իմ սեփական հէքիաթը :

Քոյրս քանի դնում մուայլում էր եւ անձնատուր լինում մի մութ թախծի : Նշանադրութեանս երեկոյին նա այնքան տխուր էր , որ ես մօտեցայ նրան եւ ասացի յուղուած .

— Կլա՛րա , հոդի՛ս , ճշմարիտն ասա ինձ , աղաչում եմ , դու չես սիրում նրան , չես ուղում , որ ես նրա հետ ամուսնանամ , այնպէս չէ՞ . երեւի դու մի բան գիտես , ինչո՞ւ ես ծածկում ինձանից . ասա՛ , եւ ես յետ կը կենամ . ես քեզ այնպէ՛ս եմ սիրում :

— Երեխա՛յ , պատասխանեց Կլարան ժպտալով , նա այնպէ՛ս

լաւ մարդ է : Եւ յետոյ ինձ գրկեց ու պինդ, պինդ համբուրեց : Նա երբեք ինձ աւելի ջերմ, աւելի անկեղծ համբոյը չէր տուել, եւ նրա հոգին զգում էի նրա շրթունքների վրայ, նրա համբոյը մէջ : Եկեղեցի գնալուց առաջ նա դարձեալ գրկեց ինձ ջերմութեամբ եւ համբուրեց երկար, երկար ու ասաց .

— Բախտաւոր լինիս, քոյրի'կ, օ՛, ինչպէս եմ ուղում, որ դու բախտաւոր լինիս... աշխարհում այնպէ՞ս դժուար է երջանիկ լինել...

Եւ ես տեսայ նրա աչքերում արցունքներ : «Ուրախութեան, յոյզի արցունքներ են», մտածեցի ես :

Իմ ամուսնութիւնից յետոյ քոյրս իսպառ մռայլուեց . նրա ժամանակակից գարձաւ աւելի եւ աւելի սակաւ, առհարկի, իսկ թախիծը մշտական : Մայրս անհանդիստ էր, բայց նա էլ ինձ պէս ոչինչ չգիտէր : Կլարան ժամերով մնում էր մտազբազ, ասես մի վերին աստիճանի ծանր խնդրի վճռով զբաղուած, յաճախ մեն-մենակ թափառում էր պարտիզում, աշխատելով աչքի չընկնել . իսկ երբ ես ու ամուսինս հանդիպում էինք նրան զրօսանքների ժամերին, նա մեզ դիմաւորում էր առհարկի ժամանակակից, աշխատում էր կատակել մեր հասցէին եւ իսկոյն մի որեւէ պատշաճ պատրուակ էր դտնում մեղանից հեռանալու եւ կրկին իր սենեակում առանձնութեան անձնատուր լինելու համար : Եւ այդ բոլորը նա կատարում էր այն աստիճան քաղցր վարպետութեամբ, որ ես չնայելով իմ կասկածներին՝ ստիպուած էի մտածել, թէ դուցէ նա հեռանում է իմ եւ ամուսնուս՝ իբրեւ նորապահկների՝ միայնութիւնը չխանդարելու համար : Մի քանի անդամ էլ հարցեր տուի . նա միշտ կարողացաւ վերին աստիճանի հանդստացուցիչ պատասխաններ գտնել, նոյնիսկ մեզ հետ միասին յաճախակի պարտէղ դուրս եկաւ, զրօսանքի գնաց եւ դրանով ամէն կասկած փարատեց :

Հարսանիքիցս մի ամիս յետոյ ամուսինս մեկնեց նաւային վարժութիւններին մասնակցելու, որից յետոյ նա պէտք է դար փոխազբելու ինձ իմ բնակավայրը : Այս վաղաժամ անջատումը, որ տեսելու էր ամսից աւելի, ինձ ամենեին տիրութիւն չպատճառեց : Զգում էի, որ ես նրա հետ բնաւ կապուած չեմ այն քնքոյչ զգացմունքով, որ էլ աւելի ուժդին է դառնում անջատման ժամերին, և որ այնպէս կիզիչ է դարձնում կարօտը : Ինքս ինձ ցաւով խոստովանեցի, որ ամուսնացել եմ յիմարաբար, սոսկ իմ անհան-

դիստ, հետաքրքիր բնաւորութեանը բաւականութիւն տալու համար : Ես այնուամենայնիւ վերսկսեցի իմ նախկին կեանքը, ճշշմարիտ է՝ աւելի պակաս եւանդով, բայց սրտի առանձին զոհութեամբ, ինչպէս մի ծանր բեռից աղատուած : Ամուսինս կարծես մի անծանօթ անցորդ էր, որ եկաւ ինձ ասաց անողորմ ու անմիտ կեանքի դառն խորհուրդը ու հեռացաւ զնաց՝ հոգուս վրայ փուելով մի մութ թախիծ, մի անբացատրելի վիշտ : Ինձ հետ կատարուել էր մէկն այն թիւրիմացութիւններից, որոնցով լի է մարդկային կեանքը, եւ որոնք շատ յաճախ ճակատագրական են դառնում անփորձ, միամիտ հոգիների համար : Ամուսնութիւնն ինձ թւում էր մի երեխայական խաղ, ես չդիտէի, որ անդամ երեխայական խաղերի մէջ լինում են այնպիսի վտանգաւորները, որոնք հեշտութեամբ դառնում են տրագեդիա :

Աշուն էր արգէն . ամուսինս գեռ չէր վերադարձէլ : Մի երեկոյ մենք երեքով նստած էինք ճրադի առաջ . քոյլր տարուած էր մի գրքի ընթերցանութեամբ, մայրս ակնոցները դրած նայում էր մի հաշուեցուցակ, որ հէնց այդ օրը ներկայացրել էր մեր պաշարեղին հայթայթողը, իսկ ես նամակ էի գրում ամուսնուս : Դուրսը վատ դիշեր էր, խաւարը թանձը, եւ առաւօտից սկսուած անձրեւախառն քամին անդադար ծեծում էր լուսամուտները : Տրամադրութիւնս վատ էր . երբ հասայ նամակիս այնտեղը, ուր ասում էի ամուսնուս, թէ առանց նրան ձանձրանում եմ, կանդառայ . . . գրածս ճշմարիտ չէր, ես կեղծում էի : Գրիչս վար դրի եւ մտածում էի վշտով, թէ ինչո՞ւ եմ կեղծում եւ յետոյ՝ թէ ես դեռ որքա՞ն երկար այսպէս պիտի կեղծեմ, քանի որ նրան չեմ սիրում՝ պիտի կեղծեմ աշխարհի առաջ, նրա առաջ, մօրս ու քրոջս առաջ : Եւ այս զարհուրելի կեղծիքի շարքը, որի մէջ ընկել էի կամաւ, շղթայի պէս ինձ նեղեց, խեղղեց : Զգացի, որ ձանձրանում եմ ո՞չ թէ նրա բացակայութիւնից, այլ ե՛ւ կեղծելուց, ե՛ւ նամակ դրելուց : Կուտառած մի անզօր զայրոյթ կրծքիցս բարձրացաւ վեր, ես ներվային շարժումներով պատոցի նամակը եւ դէն շղթանեցի, որ ընկաւ քրոջս ոտների առաջ : Նա գլուխը բարձրացրեց, իր խոչոր, թախծոտ աչքերը ինձ վրայ ուղղեց :

— Ինչո՞ւ պատռեցիր, հարցրեց կամացուկ :

— Զեմ ուղում գրել, ասացի :

— Ինչո՞ւ չես ուղում գրել :

— Տրամադրութիւնս վատ է, անպիտան եղանակ է :

— Տրամադրութիւնդ վա՛տ է, կրկնեց նա ծանր կերպով ու կրկին գլուխը կախեց գրքի վրայ: Ես նկատեցի, որ նա էլ չի կարդում, այլ մտածում է: Մայրս ուշք չէր դարձնում եւ շարունակում էր իր աշխատանքը: Դրսում քամին շարունակում էր ոռնալ, եւ անձրեւը ծեծում էր պատուհանները վհատեցուցիչ յամառութեամբ: Ամէն անդամ, երբ փեղկերը թրիսկում էին, քոյրս գլուխը բարձրացնում էր գրքի վրայից, նայում էր լուսամուտներին վախեցած հայեացքով, մի փոքր մնում այդ դիրքով մտախոհ վիճակում, ապա կրկին շարունակում իրը թէ կարդալ: Քամին դրսում աւելի սաստկացաւ. լուսամուտներն աւելի բարձր թրիսկալ սկսեցին. Կլարան գլուխը բարձրացրեց եւ անհանդստութեամբ ասաց.

— Ի՞նչ անպիտան եղանակ է դուրսը. ծովը երեւի այժմ սարսափելի է:

Նա կարծես սպասում էր, որ ես մի բան կ'ասեմ, կը միանամ նրան, բայց ես լուռ կացայ ու նայում էի լուսամուտին:

— Կարծես չէր կարելի նաւային վարժութիւններն ամառն անել, շարունակեց կլարան, այժմ այս դժոխային եղանակով մարդկանց չարչարել ծովի վրայ...

— Երեւի այդպէս էլ պէտք է, պատասխանեցի ես, չէ՞ որ պատերազմը ամէն մի եղանակի կարող է պատահել:

Կլարան ինձ նայեց մի այնպիսի տարօրինակ հայեացքով, որ որքան ինձ անհասկանալի էր, նոյնքան անախորժ. դա մի լուռ յանդիմանութիւն էր ինձ իմ սառն, անտարեր պատասխանի համար: Նա ինձ երբեք այդպէս վատ չէր նայել, եւ ես առաջին անդամ իմ կեանքում նրա աչքերում կարդացի ինձ համար մի անախորժ միտք: Պարզ էր, որ նա միանդամայն ուրիշ պատասխան էր սպասում ինձնից, չէ՞ որ ալեկոծ, վտանգաւոր ծովի վրայ այդ դիշեր իմ ամուսինն էր: Նա գլուխը քաշ ձգեց գրքի վրայ, դարձեալ չէր կարդում, եւ ես նկատեցի որ նրա դէմքը ընդունեց խիստ երազող տեսք: Այնպէս կ'ուղէի իմանալ, թէ նա ի՞նչ է մըտածում այդ ժամին, ի՞նչ է երազում, ինչ յուշեր են պաշարել նրա գլուխը: Սակայն նոյնիսկ մի փոքր հաւանական ենթադրութիւն անել անդամ չէի կարողանում: Յանկարծ մեր դանդը տըւին. տարօրինակ ոչինչ չկար, բայց քոյրս այնպէս ցնցուեց ու գունատուեց, որ կարծես նա մի վերին աստիճանի անախորժ, մի

սարսափելի տիսուր բան լսելու նախազգացումով էր բռնուած մինչեւ այդ: Դուռը բացուեց, աղախինը ներս մտաւ մի հեռագիր ձեռքին: Կլարան ոտքի թուաւ ու խլեց. ես եւ մայրս նայում էինք եւ սպասում հետաքրքրուած...

Նա բացեց հեռագիրը դողդոջուն ձեռներով, արագ հայեացքով անցաւ վրայից, երերաց կանզնած տեղում, աշ ձեռքով կուրծքը սեղմեց ցաւով, իսկ ձախ ձեռքով հեռագիրը ճմոեց ջըղաձղաբար, շնչարդելուած՝ ընդհատ-ընդհատ հեւաց եւ յանկարծ սկսեց ծիծաղել բարձրածայն, երկա՛ր, երկա՛ր, մի սարսափելի ծիծաղով, ապա կարծես կուրծքը փլաւ ահազին վշտի ծանրութիւնից, նա հեկեկաց խելազար լացով եւ ուշաթափ փլուեց յատակի վրայ: Ես ու մայրս սարսափած վրայ պրծանք, բարձրացրինք եւ անկողնի վրայ դրինք նրան առանց ոչինչ հասկանալու այս բոլորից, եւ երբ երկար չարչարուելուց յետոյ կարողացանք մի փոքր հանգստացնել նրան, ես այն ժամանակ միայն յիշեցի հեռագիրը եւ կամացուկ դուրս քաշեցի նրա սղմբւած մատների արանքից այդ խորհրդաւոր թղթի կտորը եւ կարդացիր... Նաւը՝ որի վրայ դանւում էր իմ ամուսինը, խորտակուել էր չողեկաթսայի պայթումից, սակաւաթիւ զոհերի թւում էր եւ նա՝ իմ ամուսինը: Մայրս ծնկներին տուեց, զլուխը ձեռների մէջ առաւ ու կծկուեց քրոջս անկողնի մօտ, իսկ ես մնացի քարացած իմ տեղում՝ չիմանալով ի՞նչ անել, լա՛լ, թէ ոչ... Եւ լաց չեղայ...

Այն հեռագիրը, քրոջս անօրինակ յուղմունքը, նրա մութ վիշտը, այս ուշաթափութիւնը տաքորինակ կերպով զուգադիպում էին, այս բոլորն ինձ շշմեցրեց, ծանը հարուածի պէս իմ դլիսին իջաւ: Ինձ համար գոնէ լացի ժամանակ չէր, վերջապէս պէտք էր մտածել: Ինձ թւում էր, որ մի մութ բան ինձանից միանգամայն անկախ ու ծածուկ պաշարել է ինձ, խաւարով պատել իմ աչքերը, եւ ես երկար ժամանակ քայլել եմ մոայլ տարածութեան մէջ՝ առանց ոչինչ տեսնելու: Ամէնքը, ամէնքը վախչում, խուսափում էին ինձանից, բոլոր ծանօթ ընտանի պատկերները չքանում էին, եւ ես ինձ գդում էի մենակ, անընկեր, մի հրաբխային լեռան վըրայ քայլելիս, որ ուր որ է պայթելու է ահազին որոտով, եւ որի մոայլ անդունդների մէջ ես պիտի կորչեմ յաւիտեան:

Մի՞թէ գիտէին այս բոլորը մահամերձ քոյրս եւ այս ընկճւած, խեղճ մայրս, գիտէին, որ ես մի կորած արարած եմ, ծա-

նօ՞թ էին այն սեւ գաղտնիքին, որ բոլոր ժամանակ իմ թիկունքից քայլ առ քայլ սողացել է հրէշի պէս, մինչեւ որ ես հասնեմ անդունդի ծայրին, ուր նա վար է գլորում ինձ՝ յանկարծ բանալով աչքերս, որպէսզի տեսնեմ իմ կորստեան բոլոր սարսափը։ Հնարաւառո՞ր է այդ, որ նրանք՝ իմ հարազատները իմանային այս բոլորը եւ լուին դաւազիրների պէս։ Ե՞րբ է տեսնուած այդ աստիճան անողորմութիւն, մտածում էի ես ցաւով։ ո՛չ, այդ անկարելի է։

Դուրսը քամին մոնչում էր թանձր խաւարի մէջ, ես ականջ էի զնում սարսափով, կարծես նա էլ նոյն մութ բանից էր խօսում, աշխատում էր փշրել պատուհանները, ներս խուժել եւ իմ ականջին փափսալ այն սեւ ու սարսափելի բանը։ Հազիւ մի քանի բոպէ էր, ինչ ես ապրում էի այս անօրինակ յուղմունքը եւ սակայն հասունանում էր տարիներով, միտքս գործում էր անօրինակ ուժգնութեամբ։ Ի՞նչ կատ կարող էր լինել իմ քրոջ եւ այն գեղեցիկ սպայի մէջ, որի հետ մի ժամանակ ես այնպէս զուարձանում էի, եւ որը անսպասելի կերպով իմ ամուսինը դարձաւ։ Վերստին յիշեցի բոլոր անցած-դարձածը մինչեւ այս աղէտը, քրոջն ծածուկ վիշտը պաշարեց իմ գլուխը սարդի ոստայնի պէս, ես աշխատում էի, բայց չէի կարողանում որեւէ բացատրութիւն գտնել։ Ի՞նչ էր կատարուել խաւարի ու լուլթեան մէջ ինձանից ծածուկ, իմ դէմ, ահա այն հարցը, որ ճիւազի ճանկերի պէս ճմռում էր իմ ուղեղը, գանկս տնքում էր սեւ մտքերի ծանրութիւնից՝ կարծես պայթելու համար։

Ես այնպէս գժբախտ էի...

Քոյրս երկար հիւանդ մնաց։ Բոլոր այդ ժամանակը նա լուս էր որպէս գերեզման, ուր անդարձ կերպով մարել են յոյզերը, իդաբերը, մտքերը։ Եւ նրա այդ քար լուլթիւնն էլ աւելի էր մեծացըցընում սրտիս վրայ ծանրացած սոսկումը իմ վիճակի անորոշութեան հանդէպ։ Ես չէի համարձակուում նրան խօսեցնել, հարց տալ եւ տառապում էի նոյն մութ ցաւով, որ փշրել էր նրա էութիւնը։ Մեր ցաւերը երեւի մեզ պէս քոյրեր էին եւ մեզ պէս տարբեր բնաւորութիւն ունէին։ Սպասում էի, որ նա բոլորովին կաղդուրուի, որ սիրոս իր մութ կասկածներով փոեմ նրա առջեւ, խօսեմ, խօսեմ... բայց տարաբախտաբար իմ յոյսերն ի դերեւ ելան։ Երբ նա վեր կացաւ անկողնից, արդէն այնպէս էր, ինչպէս դուտեսար։ Յաճախ ծիծաղում էր, ապա անվերջ հեկեկում առանց

արցունքի, իսկ դրսում տղամարդի հանգիպելիս աշխատում էր խոյս տալ, ծածկուել ինչպէս ատելի թշնամիներից : Մարմնապէս բռնորովին կազդուրուած ու առողջ՝ նա մինչեւ վերջը անկարող եղաւ հոգեպէս վերականգնուել, նրա էութեան ներդաշնակութիւնը միշտ խանգարուած մնաց : Մեզ հաւատացրել են, որ նա անբուժելի է եւ կարօտ ամենաքնքոյց խնամքի :

Կարո՞ղ ես երեւակայել իմ ահապին ցաւն ու կսկիծը, երբ վերջապէս մօրս ինձ յանձնած մի յիշատակարանից իմացայ, որ իմ խեղճ, աղնիւ քրոջ անդառնալի դժբախտութեան պատճառը հէնց ես եմ եղել, անդիտակցարար, առանց իմ զործողութեան արժէքն ըմբռնելու ես խլել եմ նրա սէրը, որ ինձ բնաւ հարկաւոր չէր, եւ որ հեռու ծովերի տակ թաղուած տղամարդը աւելի նրա ամուսինն էր, քան իմը, որովհետեւ նա էր սիրել եւ ոչ ես :

ԱԵՇԴ, վատարա՞իստ քոյր...

Նա զեռ սկզբից այնպէս էր սիրել մեզ հիւր եղած սպային, ինչպէս հազիւ է պատահում աշխարհում եւ ինչպէս զիտեն սիրել կանայք, երբ որեւէ տղամարդ նրանց համար դառնում է այն էակը, որի մէջ կենարոնանում է տիեզերքը, եւ որի համար հարկաւոր է զոհուել եւ անցնել աշխարհի երեսից : Քոյրս սիրել էր նրան իր բոլոր էութեամբ, իր երակների արիւնով, իր սրտի բուլոր թելերով եւ միեւնոյն ժամանակ նա աշխատել էր թագցնել այդ զգացմունքը ամէնքիցս, որովհետեւ նրա կանացի հպարտութիւնը թոյլ չէր տուել նրան առաջինը յայտնել իր սէրը մի տղամարդի : Իսկ երբ վերջինս սկսել էր նրանով դրաւուել, քոյրս յանկարծ դարձել էր անտարբեր, սառն, որովհետեւ ճիշտ նոյն ժամանակ նա տեսել էր, որ ես զուարձանում եմ սպայի հետ, երջանիկ եմ, եւ իմ երեխայական խենթութիւնների մէջ իմ սէրն էր նկատել : Սպան վիրաւորուած նրանից, թէ յուսահատուած՝ դարձել էր դէպի ինձ եւ իր անտարբեր խաղերին տուել էր լուրջ կերպարանք, եւ յետոյ իմ ձեռքը խնդրել :

Քրոջս համար շատ հեշտ էր խափանել այդ բոլորը եւ իրերին ուրիշ ընթացք տալ . բաւական էր, որ նա խօսէր, բաց անէր նաեւ իմ աչքերը. բայց նա լուել էր, պէտք էր համարել լուել . ինձ երջանիկ տեսնելու միակ ցանկութեամբ այդ մահացու լուութեան մէջ թաղել էր իր բուռն զգացմունքը, միայնութեան ու խաւարի հետ սպացել էր իր սէրը, իր էութեան բռնոր լարերը ձգուել էին մինչեւ յետին աստիճանի, եւ երբ հասաւ աղէտալի լուրը, նրանք

ճայթեցին, բանականութիւնը խախտուեց : Այս բոլոր տրագեդիան կատարուել էր լոռութեան մէջ . մենք երեքով առանց իրար հասկանալու վազվել էինք խաւարի մէջ իրար յետեւից եւ փոխաղարձաբար անդունդ պատրաստել մէկս միւսի համար՝ դարձեալ լոռութեամբ : Երբ ես մտածում եմ այս բոլորը, ինձ թւում է, թէ մի կոյր ոյժ վարում է մարդկանց ճակատագիրը միանդամայն մեզ անհասկանալի ձեւով, մեզ անյայտ մի նպատակով, մենք տարում ենք նրա թափով՝ ինչպէս մըրկով բռնուած : Մտածում եմ յաճախ եւ միշտ գողում այդ ոյժից, որ տեսնել անկարելի է, որ համր է, կոյր եւ սարսափելի : Դեռ երբեք ես այնպէս խորը կերպով չէի ըմբռնել կղիպպոս թագաւորի անլուր դժբախտութեան բոլոր տրագիկական մեծութիւնը . ինձ թւում էր, թէ Անտիկոնայի դունաստ ու տառապած հոգին դարերի մշուշի միջից հեծեծում է ու լալիս մեզ համար . չէ՞ որ մենք նրա քոյրերն էինք, լըռութեան զոհեր . . .

Քրոջս փշրուած հոգու պատմութիւնը օր ըստ օրէ փոռուած էր իր փոքրիկ յիշատակարանի թերթիկների վրայ, որոնք բոլորն ասես լացել էին նրա հետ : Նայում էի այդ թերթիկներին եւ վըշտով մտածում, թէ նրանց վրայ ցաքուցրիւ անդառնալի կերպով փոռուած են մի երիտասարդ կեանքի բեկորներ, ինչպէս մի բիրտ ձեռքով փետտուած ծաղկի թերթիկներ, որոնց հետ խաղում է քամին եւ որոնց վրայ աշխարհը երբեք չի սգում : Եւ ինչո՞ւ սգայ . ո՞ւմ են հարկաւոր նրանք . զոհեր կան անխորհուրդ ու անմիտ, որոնք որքան մեծ են լինում, նոյնքան աւելի են մեծացնում կեանքում իշխող աններդաշնակութիւնը, մեր գլուխների վրայ ծանրացած հին տրագիմը : Ամէն մի զոհ իր իմաստն ու անունը պէտք է ունենայ . ո՞ւմ էր հարկաւոր քրոջս բերած զոհը . ո՞չ իրան, ո՞չ ինձ եւ ո՞չ աշխարհին . այդ անցնող կեանքը միայն դժբախտութիւնն էր սփոռում իր շուրջը : Մեծ լոռութիւնը որքա՞ն այդպիսի կեանքերի թաղած ունի իր ծոցում . լայնարձակ գերեզմա՞նը յոյսերի . . . Խլեցի այդ յիշատակարանը, վազեցի մօրս մօտ եւ գլուխունրա կրծքում թաղած՝ երկար-երկար հեկեկում էի . դժբախտ էի . ու խորտակուած : Առանց իմանալու՝ ես կողոպտել էի իմ հարազատ քրոջը, կողոպտել էի նրա ամենալաւ մասը, նրա հոգին : Երեխայական խենթութիւններս անցան, եւ ես հասուն կին դար-

ձայ : Իմ եւ կեանքի մէջ երկու գերեզման կար . Ես կրկին այրի էի» :

Նա լայն շունչ առաւ ու լոեց ճակատը ձեռների մէջ առած , ասես սեւ մաքերի ծանրութիւնից : Լուս էի եւ ես , ինչպէս եւ մեր շուրջը նիրհող բնութիւնը :

«Տե՛ս , ինչպէս լուս է մեր շուրջը , ի՞մ ընկեր , շարունակեց նա , տիեզերական լուսութիւնն է , անյայտ ու ծածուկ , բայց դրանից ո՛չ պակաս խուլ լուսութիւն կայ , որ ընթացիկ բարոյականութիւնը , թիւր հասկացողութիւնները , յաճախ նոյնիսկ յիմարութիւնը դնում են մեր շրթունքների , մեր սրտի , մեր հոգու վրայ : Կնոջ բարոյականութիւնը , կնոջ կեանքը հէնց մի մեծ լուսութիւն է , այդպէս է սկահանջել աշխարհը , գարերը սրբազործել են , եւ մենք աղատուել չենք կարողանում : Սիրել խորը ու անզուսպ սիրով , հոգու մէջ կըել մայրութիւնը , ստեղծագործող , սքանչելի բնութիւնը , սրտի մէջ զգալ կեանքը իր ալեկոծ ու փոթորկոտ խորհուրդներով , իր վմեմ իղձերով ու վառ երազներով եւ այս բոլորը , այս գիւթական աշխարհը լուսութեան ու խաւարի մէջ մաշել ու ոչնչացնել կամաց—կամաց — ահա շատ եւ շատ կանանց ճակատագիրը : Վաղաժամ վեստուած վարդի , տրորուած ծաղկի , փշրուած տունկի առաջ մենք երբեմն հաղիւ ենք զսպում մեր արցունքները , մեր հոգին ըմբոստանում է այդ փոքրիկ կեանքերի բռնի մահի առաջ : Բայց յուսախար սրտերի մա՛հը . . . ո՞վ կարող է չափել ցաւի խորութիւնը , որ այդ մահուան ընկերն է : Մեռնող սրտերը լուսութեան մէջ փուլ եկող աշխարհներ են , որոնք այլեւս երթեք չեն գննում :

Այնուամենայնիւ կինը պարտական է լոել , լոել եւ սպասել . վա՛յ նրան , եթէ տղամարդը չեկաւ նրան իր սէրն առաջարկելու : Փէսող աշխարհն է նա , անօգուտ անցնող կեանքը . . .

«Երբ շրթունքները նիրհում են , հոգին զարթնում է եւ զործի կենում» . այս ճշմարիտ է , լուսութեան մէջ հրաշալիքներ են կատարում գուցէ , բայց եթէ այդ բոլորը պիտի թափնուած մնայ նոյն լուսութեան մէջ , խօսքը չպէտք է դայ ծածուկ ճշմարտութիւնների վրայից յետ քաշելու քոյլը , ինչ արժէք ունի լուսութեան մէջ կատարուածը : Ո՛չ , բարեկամ՝ լուսութիւնը զարհուրելի է , եւ իմ քոյլը նրա զոհերից մէկն է :

Երանի՛ թէ մեր այս գժբախտ աշխարհում ճչալ կարողանան բոլոր զոհերը , նրանք , որոնք տառապում են լուսութեան մէջ , ծա-

ծուկ տնքում են ցաւերի բեռի տակ, լալիս են իրանց սրտերի խորքում, եւ նրանք, որոնք տրորուած են ոտների տակ, որոնց հոգին են կողոպտում անողորմ կերպով: Օ՛, ինչ սքանչելի կը լինէր, եթէ իրանց սրտերում ցաւ կրող բոլոր գժրախտները, որոնք շըրջում են աշխարհում, ինչպէս շղթայակիր վտարանդիներ, միասին յանկարծ մոնչային իրանց բողոքը, իրանց վիշտը եւ այնպէս ուժդին ու ցաւադին, որ լսողները սասանուէին ու դողային: Բոլոր ոճիրները լուսութեան մէջ են կատարուամ, ի՛մ լնկեր, ինչպէս եւ բոլոր անօդուած զոհերը, որոնք օժանդակում են խաւարի թանձըրանալուն: Այդ լուսութիւնը ես ատում եմ, նա հրէշի պէս ծանրացած է աշխարհի վրայ եւ խեղդում է, խեղդո՞ւմ... անհատներ, հասարակութիւններ, ու ցեղեր մեռնում են նրա բեռի տակ:

Երբ ես քեզ տեսայ առաջին անգամ, զգացի քո սիրոյ ուժգը-նութիւնն ու խորութիւնը, հասկացայ, որ ստեղծուում է մէկն այն կապերից, որոնցից մարդ էլ չի ազատուում եւ որոնք կարծես ճակատազրական են: Ինձ ամէնից շատ դրաւեց քո սեւ, բոց աչքերի թախիծը, քո անքննադատ ու խենթ ճգտումը դէպի ինձ առանց ճանաչելու՝ ինչպէս թիթեռնիկը դէպի այրող բոցը: Այս բոլորն ինձ յիշեցնում էր իմ սեփական անցեալը, այն երջանիկ օրերը, երբ ինձ համար էլ կեանքը միայն մի հաճելի երազ էր, դիւթական երազ, երբ իմ շուրջը ամէն ինչ բոյը ու սէր, խինդ ու ժպիտ էր միայն: Դու ինձ գրաւեցիր, որովհետեւ ինձ պէս էիր: Եւ իմ այս յափշտակութիւնը նման չէր առաջինին. այրիները, որքան եւ ջահիլ լինին նրանք, հեշտութեամբ չեն սիալւում: Երբ դու ցանցում բռնուած ձկան պէս էիր առաջս, ես ուշի ուշով դիտում, քննում էի քեզ, եւ քանի աւելի մօտիկից էի տեսնում քո հոգին, այնքան աւելի վտանգաւոր էիր դառնում ինձ համար: Քո ներկայութիւնը, հակառակ իմ ջանքերի, դառնում էր ինձ համար մի մութ անդունդ, ուր նայելիս գլուխս շշմում էր, բայց սիրում էի նայել: Քո ախրութիւնը, քո անյոյս վիճակը, այն սիրուն թախիծը, որ քեզ տալիս էր խոռված երեխայի կերպարանք, ինձ համար անդիմադրելի գրաւչութիւն ունէին: Դու տղամարդ ես, սիրելիս, եւ գուցէ չգիտես, թէ ի՞նչ կը նշանակէ մի կնոջ դեռ եւս կոյս հոգու համար այն գիտակցութիւնը, թէ դիմացի երիտասարդը տանջում է իր սիրով. դա մի ամբողջ երանութիւն է:

Այնուամենայնիւ ես որոշեցի իմ սառն վերաբերմունքով, իմ յաճախակի հեղնութիւններով, կծու ակնարկներով հեռացնել քեզ

ինձանից, որովհետեւ ես գողում էի իմ քրոջ համար, գողում եմ եւ այժմ: Օ՛, եթէ նա իմանայ այս բոլորը, եթէ նրա խախտը-ւած բանականութիւնը կարողանայ մի փոքր ըմբռնել, թէ ի՞նչ է կատարում իր շուրջը, թէ ինչպէս կեանքը ընթանում է իր սո-վորական թափով առանց նրան, ես հաւատացած եմ, որ երկրորդ անգամ կը դառնամ յանցաւոր եւ այն գիտակցարար: Յիշո՞ւմ ես, որ ես յուզուած ու թուլացած նստեցի այն ճանապարհի նստարա-նի վրայ, երբ դու ասացիր, թէ ինձ սիրել ես իմ քրոջ մէջ: Հին պատմութիւնն էր կրկնում, ինձ թուաց, թէ ես էլի մի անդամ կողոպտում եմ նրան, սիրտս փղձկաց, քիչ մնաց, որ լաց լինէի, շտապեցի դէպի տուն՝ արցունքս քեղանից ծածկելու համար: Յետոյ քո առաջին համբոյը որքա՞ն արցունք խլեց ինձանից դարձեալ քրոջս պատմառու: Նրանից առաջ ես ունեցել էի գիշեր-ներ, տանջանքի, յուսահատութեան գիշերներ, երբ ես պայքա-րում էի, ելք էի փնտում քեղանից աղատուելու համար: Ես լա-լիս էի իմ անդօրութեան մէջ եւ հեկեկանքս խեղդում բարձերի տակ: Պայքարեցի երկար, եւ յաղթող չհանդիսացայ, դու բոնել էիր իմ հոգին, եւ նա ի զուր էր թռչնի պէս թրալըրտում քո ափե-րից գուրս թռչելու համար: Այս բոլորի հետեւա՞նքը... ահա, ի՞մ ընկեր, ի՞մ հմայիչ դեւ, մենք գիշերներ ենք լուսացնում այս նըս-տարանի վրայ թառած՝ որպէս զոյդ սիրահար աղաւնիներ: Դիպ-ուածները երեւի բախտեր են վճռում, խուսափել անկարելի է: Ես այժմ յաղթահարուած՝ թողել եմ իմ նաւակը ջրերի երեսին, ա-ռանց զեկի, առանց առազատի եւ երէկ պատմածս սղաւորի պէս տարւում եմ, մինչեւ վրայ կը հասնի փոթորիկը:

Դու այժմ գիտես ամէն ինչ, սիրելի՛ս, օգնի՛ր ինձ, որ փո-թորիկը չտանի մեղ, նա — կլարան չիմանայ, չհասկանայ մեր յարարերութիւնները, թէ չէ էլի մի ցնցում, եւ նա կորած է, ես էլ նրա հետ: Զարհուրելի է այն դոյլութիւնը, որի հետ կապուած է մի յանցանք, թէկուզ ակամայ: Իսկ ես դեռ ջահէ՛լ եմ, այնքա՞ն ջահէլ. մատաղ տունկի վրայից երբ փչում է կատաղի հողմը եւ կուացնում, դետնին հաւատարեցնում, մի՞՛թէ նա նորից չի բար-ձըրանում եւ ժապտում արեւին: Ա՛հ, կեա՞նքը»...

Նա վերջացրեց, կոացաւ իմ կրծքին եւ սկսեց մեղմիւ հեծ-կըլտալ: Ես գրկեցի նրա գլուխը եւ միիթարում էի.

— Մի՛ լար, ի՞մ հրեշտակ, ես կ'անեմ բոլորը, ինչ կամենաս, միայն թէ դու չտանջուես, մի նոր վիշտ չդայ քո հոգին պաշարե-

լու։ Կլարան չի կարող իմանալ, նա չպէտք է իմանայ, անհո՛դ եղիքը։ Ես քեզ կը լինեմ հլու հպատակ, քո հածոյակատար ստրուկը, կը հետեւեմ քո թեթեւ նշանին, քո աջքի շարժումին՝ քո ամենաչնչին ցանկութիւնները կատարելու համար, միայն թէ դու մի՛ լար, աղաչում եմ։ Կեանքը միայն ցաւին չի պատկանում։

— Կեա՞նքը . . . ցաւերի հովիտ, տանջանքի պարտէզ, ուր ծաղիկների բոյրը մահառիթ թոյն ունի, ուր ամէն մի պտղի արմատին մի թունաւոր օձ է գալարուել ու Փշչում, եւ ուր խոտերը բուլոր փշաւոր են։ Հեռուից այնտեղ ամէն ինչ գեղեցիկ է, զրաւիչ, վայելքի, երջանկութեան ծարաւով ներս ես մտնում համարձակ եւ հէնց առաջին քայլից ընկնում ես փշրուած ու արիւնոտած՝ ինչպէս որսորդի գնդակով եթերային բարձունքից վայր գլորուող թոչուն։ Ես հաղիւ քսան տարեկան եմ եւ, տեսնում ես, թէ արդէն որքա՞ն եմ ապրել։ Է՛հ, կեանքը . . . նա մի թունաւոր պարտէզ է։

Մի աստղ ցոլաց երկնքից, լայն բոց արձակեց, իջաւ դէպի հորիզոնը ու կորաւ։

— Աստղը բոց արձակեց ու մեռաւ . . . — մրմնջում էր նա կարծես ինքն իրան։ — աստղերն էլ են մեռնում . . . ի՞նչ լաւ է, որ նըրանք էլ են մեռնում . . . Տիեզերքի մէջ երեւի ամէն ինչ մահ ունի . . . անմահը միայն տառապանքն է, որ կապուած է մարդկային խղճուկ ճակատագրի՞ն . . . մեռնո՞ւմ են, մեռնո՞ւմ են ամէնքը . . . ի՞նչ լաւ է, որ աստղերն էլ են մեռնում, թէ չէ մեռակ մեր մահը սարսափելի կը լինէր . . .

— Իմ վշտացած հրեշտակ, անխուսափելին տիեզերքում միայն մահը չէ, հապա եւ ծնունդը. երկրի վրայ իշխողը սէրն է, հզօր ու ստեղծագործող, գեղեցիկ սէրը, որի բոցը խլուած է արեգակից, իսկ գեղեցկութիւնը՝ երկնքի աստղերից։

— Հա՛, հա՛ . . . սէ՛րը, իրաւունք ունիս, գոնէ սէ՛րը . . . էլի բան է, խորհուրդ է տալիս մեր ցաւոտ գոյութեանը, մեր ճակատագրին, գերեզմանի երկիւղն է թուլացնում, եւ ոչնչութիւնը մի փոքր լցնում . . .

Նրա խօսքերը լի էին քնքոյց ու տիսուր յոյզով, ձայնը գողդողուն ու մեղմ՝ ինչպէս հովի առաջ լացող ծաղիկը՝ հմայիչ շեշտունէր։ Նրա գլուխը կամաց-կամաց կոացաւ ուսիս, կարծես իր շուրջն իշխող թանձր խաւարն ու մահու երկիւղը վանելու համար նա զօրավիդ էր փնտուում։

XI

Սեպտեմբերի սկիզբն էր, թաց, լալկան օրեր. աշունը փութեառ էր: Եւ անձրեւը... հինգ օրից ի վեր մուայլ երկինքը գիշեր ու ցերեկ մոմուռ էր քամում, մանրիկ կաթիլները մաղմղում էին վերից միակերպ, ճանձրալի՛...

Պատուհանիս առաջ նստած ես յուսահատ ու ցասկոտ՝ հայեացքս գարձրել էի դէպի հորիզոնը, ուր լեռների վրայից դորչ ամպերի կարաւանները սողում էին դաւադիրների պէս, բարձրանում էին, իջնում, կծկում, բացւում եւ ի վերջոյ լուծւում երկնքի միապաղադ սեւութեան մէջ: Խոնաւ ու ցուրտ էր իմ շուրջը. եւ ամէն ինչ կարծես ինձ պէս մուայլ էր. ե՛ւ պարտիզի ծառերը, որոնց գեղնած տերեւների վրայից լալկան ճղփոցով մի խեղդող ներդաշնակութեամբ ընկնում էին ծանրացած կաթիւները միեւնոյն տեղում՝ փոքրիկ փոսիկներ առաջցնելով, ե՛ւ կծկուած ու խեղճ խոտերը, որոնք երկնքից յուսահատ՝ էլ վեր չէին նայում. աւելի հեռուն՝ մուգ անտառը իր մառափուղէ ծածկոցի տակ սրթսրթում էր դժգոհ ու մուայլ, իսկ նրա վրայ բարձրից հսկող մենաւոր ժայռը կարծես աշխատում էր ամպերի պատառներով ծածկել իր այլանդակ մերկութիւնը:

Բնութեան թախծոտ պատկերը, այս լացող ծառերն ու խոտերը, կապարի պէս ծանրացած երկինքը ինձ ո՛չ միայն տիրեցընում, այլեւ զայրացնում էին — հինգ օրից ի վեր գիշերները դուրս գալլ անկարելի էր գարձել: Թուում էր, թէ իմ շուրջն ամէն ինչ հեղնում է — ե՛ւ երկինքը, ե՛ւ լեռները, ե՛ւ մանաւանդայն սողացող ամպերը, որոնք իրանց մութ ծալքերի, անթիւ զալարումների մէջ բռնած տանում էին իմ դաղտնիքը, եւ դիտէին իրանց արածը: Դեռ երբեք ես այդպէս չէի ատել բնութիւնը եւ դեռ երբեք մի զայրոյթ այդ աստիճան անզօր ու խղճուկ չէր եղել: Իմ զէմ էր դուրս եկել ինքը բնութիւնը, այդ հսկայ ու համբ վըհուկը, որ չգիտես ինչո՞ւ այդպէս անողորմ կերպով դիտէ խաղալ մահկանացուների բախտի, նրանց երջանկութեան հետ: Ո՞վ կարող էր վերադարձնել ինձ այն, ինչ ես կորցնում էի իւրաքանչիւր զիշեր, այնքան երջանիկ ժամեր ու վայրկեաններ, որոնք այն ամպերի պէս լուծւում էին յախտենականութեան ծոցում: Եւ յետոյ մեր կեանքը միշտ այնքան խաւար է, այնքան սեւ առանց այդ

վայրկեանների, արցունքը մշտատեւ, ժպիտը վազանցուկ, յոյ-սերը երկչոտ, այս բոլորի հանդէպ վայրկեանների մոռացութիւն, որի մէջ լուծում ենք մեր ցաւոտ անհատականութիւնը. այն էլ անցնում է երազի պէս՝ էլ երբեք, երբեք յետ չգալու համար:

Մտքերս սեւ էին, բայց անձրեւը դալիս էր միակերպ, տաղտկալի... կարելի էր խենթանալ զայրոյթից ու յուսահատութիւնից. այլեւս ոչ մի փիլիսոփայութիւն ինձ չէր օգնում, երեւի սեփական վշտի փիլիսոփայութիւնը ո՛չ համոզիչ է եւ ո՛չ մեղմացուցիչ: Երբ կեանքի հազուազիւտ լուսաւոր վայրկեաններն են փախչում, նրանց տեղը սառը միտքը ոչինչ չի կարող դնել, ինչ-պէս անկարող է լցնել գերեզմանի պարապը, վանել մահուան դարշանքը, յաւիտենական ձմեռը չերմացնել:

Մխիթարւում էի նրանով, որ Մարգարիտն ու իր քոյրը դեռ երկար պիտի մնան ամրանոցում, դուցէ մինչեւ հոկտեմբերի վերջը: Ինչ ասել կ'ուզի, որ ես էլ մեկնելու մասին չէի մտածում: Ցերեկները մենք պատահում էինք սեղանատունը, ուր մեր յիմար ու բարի տանտիկինը մի վայրկեան մեզ մենակ չէր թողնում. բը-նութեան պէս նա էլ էր դարձել անտանելի: Այն գոզտրիկ, սիրազեղ զիշերներից մեզ մնացել էր սեղանի տակ մեր ոտների զաղտագողի հպումը, լուռ հայեացքները, մութ ակնարկները, որոնցից տանտիկինը ոչինչ չէր հասկանում, եւ սրոնք մեզ համար այնքան խորհուրդ ունէին: Սիրոյ, երջանկութեան այն ծովից յիտոյ այս բոլորը միասին կաթիլներ էին, որոնք չէին կարող զովացնել իմ պապակած հոգին:

Լաւ որ Մարգարիտը դեռ սիրտ ունէր հանաքներ անելու. երբ տանտիկինը մի վայրկեան խոհանոց էր մտնում, նա կուանում էր դէպի ինձ իր սովորական ձեւով ու կամացուկ ասում:

— Գիշերը լաւ քնեցի՞ր, դե՛ւ:

Պատասխանի փոխարէն ես աշխատում էի սեղանի տակ ոտքը սղմել ցաւեցնելու չափ. նա շտապով փախցնում էր ու վրաս ծիծաղում:

— Խոռվա՛ծ երեխայ, ի՞նչ լաւ է, որ դու այդպէս ես...— շարունակում էր նա քրքջալով: Իսկ դուրսն անձրեւը դալիս էր, դալիս: Ներս էր մտնում տանտիկինը:

— Այնպէս չէ՞ն, տիկի՞ն, այս անձրեւը դեռ երկար կը շարունակուի, գառնում էր նրան Մարգարիտը: Հարցն ինձ չարացնելու համար էր անշուշտ:

— Ո՞վ գիտէ , մոմոռում էր տանտիկինը՝ յուսահատ կերպով նայելով գէպի լուսամուտը . անցեալ տարի այս ժամանակ զարձեալ անձրեւու էր , բայց էլի մենք դեռ մի փոքրիկ ամառ կ'ունենանք մինչեւ ձմբան գալը : Խեղճ տանտիկին , նաև աշխատում էր մեղ միսիթարել , որ չթողնենք հեռանանք :

Անցաւ դարձեալ մի անխորհուրդ ու տխուր օր , վրայ հասաւ նոյնքան անօդուտ , վհատեցուցիչ գիշերը : Ես բարձրացայ սենեակս , նստեցի լուսամուտի առաջ , նայում էի այն թաց խաւարին եւ մտածում էի , թէ ի՞նչ հնարով կարելի է դլուխ բերել մեր ընդհատուած տեսակցութիւնները , մեր սիրուն գիշերները : Զանազան մտքեր ու ծրագիրներ անցնում էին գլխովս , բայց բոլորն էլ անհեթեթ էին , անիրազործելի : Հաւատացած էի , որ դրանցից եւ ոչ մէկը Մարգարիտին ընդունելի չի լինի : Նա սիրում էր այն ամէնը , ինչ որ գեղեցիկ էր , անդամ գաղտազողի սիրային տեսակցութիւնը նրա համար մի գեղարուեստական հաճոյք էր : Յիշում էի , որ մեր սիրոյ ամենաբռուն զեղմունքի բոպէին նա իրան չէր կորցնում երբեք , իր շարժումները մնում էին նազելի , շշուկը քաղցը ու քնքոյշ , անդամ իր արտաքինի մէջ նա թեթեւ անկարգութիւն տանել չէր կարողանում , ո՛ւր մնաց թէ յանձն առնէր տեսակցութիւն ոչ գրաւիչ պայմաններում : Իմ մտածած հնարներից եւ ոչ մէկը գեղեցիկ էր , որ ես համարձակուէի յայտնել առանց նրան վիրաւորելու : Կանայք միշտ աւելի հնարամիտ են սիրոյ մէջ , — մտածում էի ես . . . եթէ Մարգարիտը կամենայ , դուցէ մի աւելի գեղեցիկ , աւելի խելացի միջոց գտնել կարողանայ : Սակայն զբաղուած էր նա այդ հարցով , թէ՛ ոչ , ես չդիտէի . նա միշտ այնպէս ուրախ էր ճաշի ժամանակ , իմ հարցերին պատասխանում էր զանազան կատակներով , որոնցից ես ոչինչ չէի հասկանում : Երբ կամենար , նա միշտ գիտէր դառնալ անհասկանալի , առեղծուածական , ինչպէս մի սփինքս : Զուր չէր , որ ես նրան հէնց այդ անունը տուի սկզբից :

Գիշերը քանի գնում սեւանում էր , եւ խաւարը լալիս էր իմ պատուհանի տակ իր անվերջ արցունքով : Զայրոյթիցս քիչ էր մնում ես էլ լաց լինէի նրա հետ : Ես լսեցի թէ ինչպէս հարեւանուէիներս պատրաստում են քնել , ինչպէս Մարգարիտը մօր պէս հողում է քրոջ պէտքերը , կատարում է նրա բազմաթիւ մանր գըրմահաճոյքները , մերթ ծիծաղում է նրա հետ , մերթ համողում է երեխայի պէս . յետոյ կամաց-կամաց ամէն բան խաղաղուեց : Ես

էւ վեր կացայ, անկողին մտայ, գլուխս թաղեցի վերմակի տակ, որ ըսեմ դրախց անձրեւի կաթիլների միակերպ, վհատեցուցիչ ձայնը, այդ խեղդող խաւարի լացը, աշխատում էի մոռանալ ինձ, մի կերպ քուն մտնել մինչեւ յաջորդ առաւօտ, երբ գուցէ արեւ ծագի, բնութիւնը նորից հաշտ ժապտայ մեզ: Սակայն ի զուր, քնել չկարողացայ եւ թաւալում էի անկողնումս տենդով բռնըւածի պէս, ճմոռում էի բարձս, գլուխս ցաւում էր, խեղդում էի օդի սակաւութիւնից, եւ լուսարացը դեռ հեռու էր:

Կէս գիշերն անցաւ. հարեւան սենեակից փոքրիկ իրարանցման ձայնն իմ ուշադրութիւնը գրաւեց: Մէկը կամացուկ ցած իշաւ անկողնից եւ երեւի կանգ առաւ լուսութեան մէջ, որովհետեւ շարժուելու ձայնը դաղարեց: Ես նստեցի եւ ականջ էի դնում, թէ ի՞նչ է լինելու: Ո՞վ էր արդեօք, Կլարա՞ն, թէ Մարդարիտը: Ես համարեա հաւատացած էի, թէ դա Կլարան է, որ զարթնել է, ով գիտէ ինչ հրէշաւոր երազներից յետոյ, եւ այժմ հալիցինացիայով բռնուած՝ պատրաստում է մի սարսափելի խենթ բան անել, լուսամուտից վար նետուել, կամ քրոջը խեղդել: Վերջին միտքն ինձ սոսկումով պատեց եւ բոլորովին հաւանական թուաց. Ես վար ցատկեցի անկողնիցս, առաջացայ դէպի զուռը, որ հէնց փոքրիկ աղմուկ, կասկածելի ճիչ, խոխոց լսեմ թէ չէ, խորտակեմ մեզ բաժանող դուռը եւ օգնութեան հասնեմ: Այս վատ գիշերն այնպէս տրամադրում էր ինձ դէպի սեւ մտքերը, որ ես երեւակայում էի խաւարի մէջ Կլարային կլսամերկ, մազերը խոիւ, աչքերը չուած ու կատաղի, բերանը ծոմռած ու փրփրոտ, եւ նրա երկաթէ մատների տակ Մարդարիտը սոսկումից ու ցաւից այլանդակուած ու կիսամեռ: Պատկերը զարհուրելի էր, եւ ես զգացի, թէ ինչպէս դողում եմ: Լսողութիւնս լարած՝ ես լուռ սպասում էի, լոռութիւն էր եւ այնտեղ, պարզ էր, որ նա էլ շարունակում է ականջ դնել: Անտանելի վայրկեան էր: Ես լսում էի իմ սեփական սրտի բարախիւնը, սաստիկ յուղմունքից՝ նա բռնուած թուզունի պէս աշխատում էր գուրս փախչել կրծքիս տակից: Ապա ես լսեցի, թէ ինչպէս խորհրդաւոր անձը շարժուեց զգուշութեամբ, կամացուկ, այնպէս որ ես հազիւ էի կարողանում հետեւել նրա մերկ, թեթեւ ոտների ձայնին յատակի վրայ: Մի արկղ կամացուկ բացուեց ու փակուեց՝ հաղիւ լսելի քսոց հանելով, կրկին լուսութիւն. նա երեւի գարճեալ ականջ էր դնում: Մի՞թէ իմ կասկածները ճշտում են, մի՞թէ Կլարան իր խենթութեան մի զար-

հուրելի վայրկեանում պատրաստում է դործել մի անլուր ոճիր. դուցէ մի գանա՞կ էր, որ նա դուրս քաշեց արկղից . . .

Սոսկումս գաղաթնակետին հասաւ, ես էլի մի քանի քայլ մօտեցայ դրանը, հետում էի, կուրծքս սղմուռմ, ներս էր ընկնում եւ կրկին ուռչում, բարձրանում, շունչս դուրս էր գալիս ընդհատ-ընդհատ հառաջանքներով: Բննեցի դրան կանթը ու մտածում էի, էլի մի այդպիսի ձայն, եւ ես կը քաշեմ կատաղի թափով:

Հաւատացած էի, ինչքան որ ամուր լինի դուռը, այնուամենայնիւ կը խորտակեմ. Մարդարիտի թեթեւ ճիչը մինադամայն բաւական էր, որ ես երկաթէ պատուարներ փշրելու կարողութիւն ստանայի: Սպասում էի... եւ յանկարծ լսեցի, թէ ինչպէս նա մեղմիւ քայլեց դէպի դուռը... մի բանալի ներս սողաց կողպէքի մէջ, պտոյտ դործեց, եւ պողպատը չոր, անախորժ ճռոց արձակեց: Ես ակամայ յետ-յետ քաշուեցի դէպի իմ անկողինը եւ կանդառայ քարացած... մի վայրկեան, միայն մի վայրկեան զլիսովս անցաւ մի երջանիկ միտք՝ ինչպէս փայլակ, ցնցեց ու շշմեցրեց ինձ... իսկ եթէ այս բոլոր հրէշաւոր կասկածներս անհիմն են եւ դուռը բայ անողը հէնց Մարդարի՛տն է... սիրող կինը ինչե՛ր չի կարող հնարել: Բայց այդ միտքը մինչեւ վերջը տանել, լրացընել չկարողացայ, նրա բոլոր մանրամասնութիւնները նոյնիսկ ըմբռնելու անկարող եղայ: Այդ միտքն այնքան անբեւակայելի, այնքան երջանիկ էր, որ նրա ծնունդն անդամ ինձ շշմեցրեց, մըտածելու կարողութիւնս դադարեց, աւելի հեռուն տանել չէի կարող, արիւնը յանկարծ կանդ առաւ երակներիս մէջ... Դուռը կամացուկ բացուեց, եւ իմ առաջ խաւարի մէջ ծրագրուեց մի կանացի սքանչելի պատկեր: Միանդամայն ինձ կորցրած այս անկընկալ, աներեւակայելի երջանկութիւնից՝ ես արդէն պատրաստում էի ակամայ բոլոր ուժով ճչալ՝ «Մարդարի՛տ»... բայց նոյն վայրկեանին բաղուկներիս մէջ զգացի նրա լիքը ու քնքոյչ մարմինը, եւ շրթունքներիս վրայ հեւքս մարեց մի բոց համբոյրով... նա՛ էր... ես նուազեցի՝ այսքան երջանկութիւնը տանելու անկարող... «թափութի՛ր, անձրե՛ւ, թափութի՛ր հազար դարեր, եւ թող այս գէշերը էլի սեւանայ եւ շարունակուի անվերջ». Երեւի վերջին բառերը ես մըմնջում էի, որովհետեւ Մարդարիտը բըռնըւած եղնիկի պէս դողդողում էր իմ բաղուկների մէջ եւ բերանս փակում ձեռքով :

— Սո՛ւս, սո՛ւս, երեխա՛յ, փսփսուկով ասում էր նա, զարհուրելի է, եթէ նա լսի, հասկանո՞ւմ ես, զարհուրելի՛... բայց նա չի լսի... նա միշտ քնում է մինչեւ լուսաբաց... ժամացոյց կա՞յ... հա՛, այսպէս, լուցկի էլ պատրաստի՛ր... երեք օր է փնտռում եմ գրան բանալին, այսօր վերջապէս կարողացայ գըտնել խոհանոցում եւ վեր բերի... դէ սո՛ւս, սո՛ւս:

— Այդ գո՞ւ ես... մի՞թէ այդ գու ես, օ՛, ես կը մեռնեմ, եթէ դու լինիս... այդ անկարելի է... այդ անկարելի է... ես ի՞նչպէս կարող եմ երկնքից աստղ խլել եւ զրկել այսպէս...

— Սո՛ւս, սո՛ւս, թէ չէ կ'երթամ, զարհուրելի է, եթէ նա իմանայ, հասկանո՞ւմ ես, ի՞մ հողի... ես քեզ համար արել եմ անկարելին, անհնարինը... դեռ երեք մի կին այսքան յանդուզն չի եղել... ոճրի մօտ եմ, շա՛տ մօտ... այս ի՞նչ արի, Տէ՛ր Ասուած... տե՛ս, նա չղարթնի՛, նայի՛ր, ակա՛նջ դիր, մի՞թէ զարթնեց. շարժուե՞ց... լո՞ւռ է, լաւ է այսպէս:

Օ՛, այն փսփսոցը խաւարի մէջ, մեղմ, գուրգուրիչ ու սարսափելի, նրա հմայիչ ձայնի իւրաքանչիւր հնչիւնը որպէս մի երկնային երաժշտութեան ամենանուրբ խաղ ընկնում էր իմ վըրայ, եւ ես լուծուում, չքանում էի ասես մի դիւթական անձեւի կաթիլների տակ:

— Մարգարի՛տ... ես մեռնում եմ, այսքան երջանկութիւն տանել անկարելի է, սարսափելի է... միայն այս սէրը բաւական է տիեզերքը զարդարելու համար... կեանքի ցաւը նրան դիմանալ չի կարող...

— Սո՛ւս, սո՛ւս...

Եւ նա փաթաթւում էր ինձ՝ ինչպէս բաղեղը ծառին՝ պի՞նդ, պի՞նդ. մերթ խեղուում էր իր շշուկը, մի վայրկեան ականջ դնում, ապա կրկին տաք համբոյրով վանում իր երկիւզը: Եւ մենք փոխազարձաբար պատուիրում էինք իրար լոել, եւ իւրաքանչիւրս այնումենայնիւ մի բան էր գտնում ասելու, միշտ մեղմիւ, միշտ փսփսուկով: Լուութիւնն էր խօսում մեր շրթունքներով, նա՝ որ օրերի, շարաթների ընթացքում մեր հոգիների մէջ մեղմիւ կերտել էր մի կախարդական աշխարհ, ուր ամէն ինչ կեանք էր, բոյր ու սէր: Եւ մենք խօսում էինք այն սիրուց, մաքուր, դեղեցիկ սիրուց, որ մեր բախտերը խառնել էր իրար եւ պիտի լուսաւորէր այնուհետեւ մեր ուղին, պիտի փայլ եւ գին տար մեր գոյութեաւ-

նը: Մեր իւրաքանչիւր մեղմ շշուկի, զգոյշ ձայնի իւրաքանչիւր ելեւէջի մէջ լսում էր այն անրիծ, քնքոյշ զգացմունքը, որ յատուկ է խսկական սիրուն, որ մարմնից աւելի հոգուն է խօսում եւ երազանքների մէջ մեղմիւ օրօրում մարդու երջանիկ էռթիւնը:

Երբ խօսում էինք, մենք ցնցւում էին մեր ձայնի չեշտից, այն աստիճան յոյզ ունէր նա. խակ երբ լուսմ էինք, մեր հոգիները փոթորկուած ու բոցոտ՝ վառում էին մեր շրթունքները մի բան ասելու, ճշալու, կանչելու անյագուրդ ծարաւով: Լոել անկարելի էր, խօսել նոյնպէս: Եւ յանկարծ ես զգացի, թէ ինչպէս նա սարսուաց բռնուած եղնիկի պէս:

— Ես վախենում եմ, ասաց նա կարճ լոռութիւնից յետոյ:

— Ինչի՞ց, ի՞մ ընկեր:

— Խաւարից. լսի՞ր՝ ինչպէս նա լալիս է դրսում. ինձ թւում է, թէ նա մի հսկայ սուզ է անում, որի մէջ ես բաժին ունիմ, ինձանից ծածուկ:

— Սքանչելի մանուկ, հէքիաթները քեզ հանդիսաւ չեն տալիս. խաւարն անզօր է մեր այսքան երջանկութեան հանդէպ:

— Ես յանցաւոր չեմ, այնպէս չէ՞ց, ես, ես ջահի՛լ եմ...

— «Փոթորկի տակ կուցած տունկը, մի՞թէ էլ չի բարձրանում», կեանքը միայն ցաւին չէ, հո՛գիս:

— Այն ի՞նչ է փայլում է այնտեղ... խաւարն է նայում կարծես պլազման աչքերով:

— Կեանքը տեսնելու համար խաւարն աչք ունի:

— Նա վեր կացա՞ւ... դալի՞ս է, լսեցի՞ր...

— Քամին է զարկում փեղկերին, հանդստացիր, սի՛րելիս, ոչինչ, ոչինչ չկայ: Նա քնած է խորը, երջանիկ քնով, քամին ու անձրեւը օրօրում են այդ քունը:

— Կեանքի փոթորկից յոդնած՝ խսկական փոթորկի տակ նա քնած է երջանիկ... Եւ կեանքը ընթանում է առանց նրան. խե՛ղճ մե՛ղճ...

— Սո՛ւս, սո՛ւս, մենք նրան կը զարթեցնենք:

Եւ նա հանդստացած, կրկին փարում էր ինձ, բուռն զրկախառնութեան ու համբոյրի մէջ խեղդում իր երկիւղը: Սիրոյ մի անօրինակ պոռթկումն էր այն, որ դուրս էր զեղւում մեր կրծքերից ու խեղդում մեզ: Մենք այնքան երջանիկ էինք, որ կարող է-

ինք մեռնել խնդալով, աչքներս փակ, շրթունքներս ի մի ձուլուած: Եւ եթէ յանկարծ մեռնէինք, մենք մեղ հետ կը տանէինք ողջ տիեզերքը, մեզանից ոչինչ չէր կարող խուսափել, ո'չ մի աստղ, արեւի ո'չ մի շող, տիեզերական համերգի ո'չ մի հնչիւն: Ողջ տիեզերքն այդ ժամին մենք էինք, նրա կամքը՝ անհսականաւլի ու անմահ՝ մեր մէջ էր մարմնացած, մեղ օրօրում էր անուրջների մէջ, եւ մենք տարւում էինք եթերային բարձունքներից... զարհուրելի էր եւ սքանչելի միաժամանակ... երազներից ամենավսեմը

· ·

Եւ իմ գերկը դատարկ էր... Ե՞րբ գնաց... եկե՞լ էր արդեօք... թէ՞ բոլորը մի անսիրտ երազ էր միայն: Ես նստած էի անկողնիս վրայ՝ գլուխս ձեռքերիս մէջ առած, մինչդեռ դրսում դեռ մաղլում էր անձրեւը: Լուսաբացի գունատ, վախճակ ցոլքերը մառախլապատ օդը պատռելով՝ ներս ընկան սենեակս, ուր առարկաներն իրանց դալուկ, մթնապատ պատկերներով սկսեցին դուրս սողալ խաւարի միջից՝ ինչպէս քանդակագործի մուրճի տակ սեւ մարմարի միջից դուրս սողացող ձեւեր: Նրանք բոլորը ասես զարմացած նայում էին ինձ եւ կամացուկ հարցնում: «Այստե՞ղ էր նա արդեօք»... անկարելի է... մի շող կար, որ մի ժամանակ միւս սենեակից ներս էր սպրդում այստեղ եւ յետ փախչում, այդ ճիշդ է, բայց նա՝ այդ անկարելի է... Նայեցի շուրջս, իմ կողքին անկողնի վրայ դեռ երեւում էր այն տեղը, ուր նա նստած էր, խորութիւնը դեռ պահելի էր նրա հմայիչ մարմնի ձեւը ակնապարար ճշդութեամբ. ձեռք տուի, դեռ տաք էր այնտեղ. յանկարծ մատներս շօշափեցին մի փոքրիկ առարկայ, նրա զլիսի սանտրն էր մնացել՝ կարծես ինձ ասելու, ինձ համողելու համար, թէ նա այստեղ էր... վերցրի, ջերմութեամբ համրուրեցի: Այո՛, այո՛, նա այստեղ էր, երեւի կեանքը, իրականութիւնը նոյնպէս իր երազներն ունի, շատ անգամ աւելի գեղեցիկ, աւելի գրաւիչ, քան քնի երազները: Իմ երազը սքանչելի էր. նրանից մնացել էր մի անուշ բուրմունք, որ լցրել էր իմ սենեակի օդը, պարուրել էր ինձ, եւ որի մէջ ես նստած էի այժմ անչափ երջանկութիւնից հարրած: Որքա՛ն ապրեցի... էութիւնս յողնած էր, ծանրացած գլուխս ընկաւ բարձի վրայ եւ այն փոքրիկ սանտըրը կրծքիս պինդ-պինդ սղմած՝ քնեցի խորը, երջանիկ քնով:

XII

Անձրեւը դադարել էր. ցողաշատ, խոնաւ ու մուայլ օր էր, ծառերի տերեւների վրայից անկանոն կտկտոցով վար էին ընկնում ծանրացրած վերջին կաթիլները, հէնց որ թեթեւ հովը սուլում, շարժում էր նրանց: Խոնաւութեամբ յդփացած օդը մրսեցնելու չափ ցուրտ էր, բայց եւ այնպէս ես դուրս եկայ եւ անորոշ կերպով քայլում էի դէպի հեռուն:

Հոգիս ծով էր կտրել յորդացած զգացմունքից, եւ ես դուրս եկայ իմ երջանիկ էութիւնը տալու հովերին, մաս-մաս բաժանելու ծառին, ծաղկին, ժայռին, սարին ու ձորին, ամէնքին ասելու, ճշալու թէ ես երջանիկ եմ: Մի զօրեղ զգացմունք երրեք մի հատիկ կրծքի մէջ, մի յարկի տակ պարտակուել չի կարող, նա պէտք է բաժանուի: Լայնարձակ բնութիւնը հրապուրում էր ինձ, եւ ես քայլում էի թեթեւացած՝ տանելով իմ կրծքում կենսական եռանդի մի հզօր բոց: Այդ ժամին այնքա՞ն բան կ'ուղէի անել, այնքա՞ն գեղեցիկ, բարի, մեծ գործեր: Գեղեցիկ սէրը իմ հոգին դարձրել էր մի բացուած ծաղիկ մեծ ներշնչումների համար: Ես սիրում էի, սիրուած էի, եւ այս գիտակցութիւնը խորունկ ու սիրուն՝ համապատասխան արտայայտութիւնն էր փնտում աշխարհում:

Հորիզոնի վրայ լեռները կարծես յոդնած մառախլապատ երկընքի ծանրութիւնից՝ կոյլը հովերի թափով դժգոհութեամբ ցընցում էին իրանց անտառէ բաշերը եւ հեռու մղում սղիտակ կամ գորշ ամպերի անվերջ կարաւանները: Եւ հալածական ու անհանգիստ այն ամպերից երկրի վրայ քաշ էին ընկել գունատ, վախլուկ ստուերներ, որոնք վազում էին իրանց եթերային քոյլերի յետեւից, վազում էին՝ երկնքին, նրա ազատ բարձունքներին երբեք չհամենելու համար: Նրանց յեղյեղուկ ոտների տակ մի պահմթագնում էին ձորերն ու դաշտերը, իսկ լեռնալանջերի անտառները սեւանում էին, ապա ամպերի արանքում բեկրեկուած դաղչ չողերի անդօր ու տխուր փայլի մէջ մեղմիւ հեւում մշուշի տակից:

Եւ ամպերը սահում էին իմ գլխի վրայով. իմ հոգու պէս նըրանք էլ էին հարուստ ու գեղուն, բայց գնում էին բարիքը ցողելու տառապող երկրի վրայ: Ստուերի պէս մի թախիծ իջաւ իմ

սրտին . ի՞նչ էի անում ես . գուրս էի եկել երջանկութիւնս բաժանելու սարին , ձորին ու դաշտին . եկել էի մայր բնութեանն ասելու , թէ ես բախտաւոր եմ : «Քի՞չ է , քի՞չ է »... մըմնջում էին իմ շրթունքները . սէրը մի՞թէ անհատական հաճելի երազների աղբիւր է միայն , ինձանից գուրս մեծ կեանքը կայ , միշտ սեւ , սեւ ...

— է՛յ , ծերունի , այդ ի՞նչ ես անում :

Ծերունին կանդ առաւ , թեւով սրբեց ճակատի քրտինքը , կկոցեց կնճիռների տակ կորած խորը աչքերը ու լուռթեամբ նայեց ինձ առանց յոյզի ու զարմանքի : Բայց հարցս յիմար էր , անմիտ , ծիծաղելի , ես տեսնում էի , թէ նա ինչպէս իր պառաւ , վըտիտ կնոջ հետ քաշ է տալիս մի ահազին կոճղ դէպի վեր , ուր ծըխում էր նրանց խրճիթը : Կոճղը անտառից բերել էր նախընթաց օրուայ հեղեղը , հաստ էր , ծանր ու անճոռնի , բայց երեւի պէտք էր տանել , վառելիք էր , եւ երկու ծերերը քաշում էին ցեխսերի միջից , քաշում էին , վարելով խոնաւ գետինը , հեւում էին , տընքում , քրտնաթոր ու տանջուած : Այս բոլորը տեսնում էի , դիտէի այդ կոճղի , այդ քրտինքի , հեւքի տանջանքի տակ ծածկուած դաղտնիքը , մութ գոյութիւնների նոյնքան մութ տառապանքը , էլ ինչո՞ւ հարցը , ինչո՞ւ կանգնեցը : Խօսել էի ուզում , միայն խօսել , մի լաւ բան ասել ու յիմարացայ : Ծերունին շարունակում էր նայել ինձ , պատասխանի փոխարէն նա իր թուխ ու կոշտացած ձեռքը մեկնեց դէպի վեր , դէպի փոքրիկ խրճիթը , որ կծկուած էր բլրի լանջին ինչպէս գողղողացող մուրացիկ , ապա դարձաւ կնոջը :

— Քաշ'ր , պառա՛ւ :

Վերստին լծուեցին երկու ծերերը , վերստին կոճղը սկսեց վարել խոնաւ գետինը ոլոր-մոլոր ակօսով դէպի վե՛ր , դէպի վե՛ր : Ես միաժամանակ քայլում էի նրանց յետեւից առանց համարձակուելու խօսել , զգում էի , որ էլի յիմար բան կ'ասեմ , միայն քայլում էի՝ հայեացքս յառած այդ ծոմուռող , խղճուկ թիկունքներին , այդ այլանդակ կոճղին , որ հող վարելով զնում էր դէպի վեր այն խրճիթում կեանք ու ջերմութիւն սփոելու ձմրան դաժան օրերին , դէպի վե՛ր , դէպի վե՛ր ... Զմօտենա՞մ արդեօք , կախուեմ այդ կոճղից եւ մեն-մենակ քաշեմ հանեմ խրճիթի մօտ , մըտածում էի ես . քայլերս արագացը , եւ յանկարծ կանդ առայ ... ամաչում էի այն ծերերից , ինձ թւում էր , թէ նրանք կ'ասեն՝

«ծիծաղելի է քո արածը, կեանքի ցաւը դրանից մազի չափ անգամ չի փոխուի, հանգիստ ձգիր մեզ ու գնա»: Ա՛հ, այս մարդիկ, այս հնագանգ ճակատները, այս ցաւոտ, տառապած դէմքերը, որոնց երբեք չես ճանաչի, ապրում են ու հեղնում, նրանց հողին մութ բնութեան մի մասն է, եւ յատկապէս այն մասը, ուր ցաւերն են դարբնում, յարատեւ երկունքն է ճղնում:

Յետ դարձայ եւ շարունակեցի ճանապարհս դէպի հեռուն, եւ կեանքի թափիծը քայլ առ քայլ սողում էր իմ յետեւից: Գիւղից դէպի դաշտն էին գնում ծերեր, երիտասարդներ, մանուկներ, հաղարդվանի կարիքն էր այն, որ գալարւում, փուռում էր եւ այն երկու ծերերի պէս սեւ օրն էր լալիս: Ահա եւ փոքրիկ աղջկէը իր այծիկի հետ, իմ հին ծանօթները, ամրան սկզբից քանի՛ քանի անդամ եմ տեսել այդ զոյթը: Աղջկէը պարանով դարձեալ քաշ է տալիս կենդանուն, եւ երկուվ էլ գոհ են, որ անձեւոտ օրերից յետոյ վերջապէս արձակ դաշտեր են դուրս դալիս:

— Բարե՛ւ, ի՞մ փոքրիկ, այծդ արածելո՞ւ ես տանում:

Պատասխանի փոխարէն նա ժպտաց ու կարմրեց. երեւի ուղում էր ասել՝ «ի հարկէ, տեսնում ես, էլ ի՞նչ ես հարցնում»: Եւ արդարեւ մի բոլորովին աւելորդ հարց. Ես լաւ գիտէի, որ նա արածելու է տանում իր այծը, բայց խօսեցի նրան մի լաւ բան ասելու, նրան ուրախացնելու ներքին մղումով: Ես նմանում էի այն մարդին, որ յանկարծ դանձ է գտնում եւ ուղում է ամէնքին բաժանել, ամէնքին բախտաւորեցնել եւ չղիտէ ինչպէս: Գեղեցիկ սիրոյ բեղուն զղացմունքը իմ հոգում յորդացած գետի պէս դուրս էր թափիւում ափերից: Ես ուղում էի ամէնքի հետ խօսել, ամէնքի հետ բաժանել իմ հողին եւ մի տարօրինակ ճակատութեամբ ինչ որ ասում էի, յիմար էր դուրս դալիս: Ես յիմարացայ նոյնիսկ այս փոքրիկ աղջկայ առաջ:

— Մայրիկս ասաց, որ տանեմ արածեցնեմ, քանի օր է, դուրս չի գնացել այծը:

Փոքրիկ աղջկին էր խօսում առանց ինձ նայելու: Կեանքի, կարիքի գիտակցութիւնն ունէր այդ փոքրիկ դլուխը, եւ ասածը խելացի էր, ինձ ճնշում էր:

— Հա՛, այդ լաւ է, տա՛ր, տա՛ր, թո՛ղ արածի, — շտապեցի պատասխանել, որ խօսակցութիւնը կնքուի. ինչ որ ասում էի, ինձ զայրացնում էր իր յիմարութեամբ:

— Փախուզում է, որ թողնեմ, կը փախչի, էլ բռնել չեմ կարող. այնպէ՞ս է վաղում:

— Զա՞րն է:

— Հա՛, շատ չարն է, սիրում է հէնց մենակ լինել, շո՛ւտ արի, — դարձաւ նա իր այծին՝ ուժով թափ տալով պարանը: Նըրանք էլ միւսների հետ գնացին հեռու, հեռու, դէպի մարդագետինները, միառժամանակ ես լսում էի փոքրիկ աղջկայ գեղջուկ երդը, յետոյ այն էլ լռեց:

Ես մնացի մենակ իմ մտքերի հետ եւ յետ դարձայ տուն. այնքա՞ն բան ունէի ասելու Մարդարիտին: Մտածում էի պատմել նրան իմ այդ օրուայ տպաւորութիւնները, փռել նրա առաջ իմ խոհերը եւ լսել նրան, որ միշտ այնպէս խելացի էր: Կոճղը քաշող ծերերի ծովուած մէջքերը իմ աչքի առաջն էին:

Քայլում էի եւ մտմտում ինքս ինձ. «Ամենազեղեցիկ, ամենաբուռն սէրը դարձեալ մի նեղ, եսասէր զգացմունք է, եթէ նրանից անմտասն է մնում մեծ կեանքը, որ յորդացած հեղեղի պէս անցնում է՝ փշրելով այնքան խեղճութիւններ: Իսկական գեղեցկութիւնը կեանքի մէջ իրագործուած բարիքն է: Անհատական երջանկութիւնը մի անկարելի ցնորք է, երբ կեանքն իր ամբողջութեամբ ցաւագին ճիշերի, խեղճուած հառաչանքների մի հսկայական համերգ է: Սէրը մի ամպ չէ, որ արագութեամբ սահում է երկնքի երեսից եթերային թեւերով՝ առանց մի կաթիլ ցողով փափկացնելու այրուած, պապակուած երկիրը»: Մտմտում էի այսպէս եւ հաւատացած էի, որ Մարդարիտը իր պայծառ, հասուն խելքով, իր խորին տրամարանութեամբ ինձ այնքա՞ն նոր ճանապարհներ ցոյց կը տայ կեանքի մէջ գեղեցիկը բարիք դարձնելու հրաշագործ սիրով: Նա որ այնպէս ըմբռնում էր կեանքի լուռ թախիծը, նրա մխացող յարատել վէրքը, կը հասկանար անշուշտ իմ հողին աղմկող այս խոհերը, եւ կը կարողանայինք միասին լուծել կեանքի մեծ առեղծուածը...

Նա կանդնած էր լուսամուտի առաջ եւ երեւի ինձ էր սպասում. նայեցի եւ մոռացայ բոլորն, ինչ մտածել էի, վայրկենապէս մաշուեցին բոլոր տպաւորութիւններս, եւ նրանց տեղը մնացնա, միայն այն գեղեցիկ գլուխը, որ լուսամուտի շրջանակի միջից ծրագրում էր մուգ Փոնի վրայ իր բոլոր գրաւչութեամբ: Ներս մտայ. նա մենակ էր սեղանատանը. մնացի դրան առաջ եւ նայում էի հմայուած:

— Թափառական երեխա'յ, այսպիսի եղանակով չեն գնում զբունելու, ասաց նա:

— Դաշտերում սակայն աշխատողներ կան այսպիսի եղանակով:

— Աշխատանքն իր հիմքն ունի, որ քեզ նման թափառաշըր-ջիկները հասկանալ չեն կարող:

— Երկու ծերեր քաշ էին տալիս մի կոճղ, այնպէս ծանր էր, քիչ մնաց գնայի ինքս քաշէի, բայց . . .

Նրա բարձրաձայն քրքիջը ընդհատեց իմ խօսքը:

— «Բայց», կրկնեց նա հեղնութեամբ եւ շարունակ ծիծաղելով, բայց ի հարկէ չարիր, եւ լաւ որ չարիր, դրանից ի՞նչ օգուտ, երեխա'յ, երազող երեխա'յ, որ կոճղը քաշէիր, կարծում ես, թէ աշխարհի կարգը կը փոխուէ՞ր:

Նա կրկին ծիծաղեց. ես կանգնած էի տեղումս իսկ եւ իսկ երեխայի պէս, որին յանդիմանում են իր յիմարութիւնների համար: Ասածս իսկապէս յիմար դուրս եկաւ:

— Այդ թողնենք, շարունակեց նա՝ խօսքը փոխելով, չէ՞ դու խոստացար ինձ նկարել, ա'յ, այդ քո բանն է. նկարիր ու երազիր, թէ չէ զնում է զաշտերում պառաւների հետ կոճղը քաշի, կարծում է՝ մեծ բանի վրայ է: Ե՞րբ ես նկարելու ինձ:

Հիանալի՛ միտք. ես լուռեթեամբ բարձրացայ սենեակս, վար բերի անհրաժեշտ պարագաները:

Նա նստեց իմ դէմուգէմ, ամբողջ իրանով յետ ընկաւ բազկաթոռի թիկոնքին, գլուխը յենած աջ ձեռքին, նայում էր դէպի դուրս՝ հետեւելով ամպերի եւ ստուբների խաղին: Մոռացայ իմ գործը եւ հրապուրուած նրա քնքոյց կանացիութեամբ՝ յափլշտակուած նայում էի, ասես առաջին անգամն էի տեսնում գեղեցկութեան այդ զարմանալի ներդաշնակութիւնը: Երազուն գէմքը, կապուտակ վճիտ աչքերի նայուածքը, ուր կարծես մեղմիւ պլը-պլըում էր հողու կրակը. իր անհոգ, նազելի կեցուածքը յիշեցը-նում էր անդիտակից գեղեցկութիւնը վաղորդեան վարդի, որ մի գիշերում փիթթում է եւ բուրմունք սփոռում իր շուրջը:

— Տեսնո՞ւմ ես այն ամպը, — նա ձեռքը մեկնեց գէպի դուրս. նայի՛ր, կարծես փախչող այծեամ լինի. այծեամները միշտ փախչում են:

— Բնութեան մէջ ամէն ինչ փախչում է, հոդի՛ս, աւելի լաւ է հանդիսատ նստիր եւ թող նկարեմ. ես տեսնում եմ, որ չարաձնի

երեխայի պէս դու մի վայրկեան միեւնոյն դիբքում մնալ չես կարողանայ:

— Այսօր ի՞նչ վատն ես դու, վատ, վատ. որ վախչե՞մ . . .

— Որ վախչես, կը բռնեմ եւ կը նստեցնեմ տեղդ:

— Դէ բռնիր: Եւ նա վերկացաւ, արագ-արագ քայլել սկսեց սենեակում՝ չարաճճի հայեացքը միշտ ինձ վրայ: Ես վար դրի վրձինս, հետեւում էի նրա դողտրիկ խաղերին: Նա լաւ էր տրամադրուած:

— Եթէ փորձես վեր կենալ, նոյնիսկ մի փոքրիկ չարժում, եւ ես կը վախչեմ գոնից դուրս:

Եւ շարունակում էի նայել առանց շարժուելու, մինչդեռ նա իր աննման հասակով տարւում էր այս ու այն կողմ, կրունկներով աղմուկ էր հանում յատակի վրայ, իրար խառնում աթոռները: Այդ բոլորն այնքան գեղեցիկ էր, այնպէս դրաւիչ, նրա շարժումների մէջ այնքան անարուեստ չնորհք, նազանք կար, որ ես հմայուած՝ չէի էլ մտածում վեր կենալ եւ միայն նայում էի, նայում էի աղահաբար:

— Ա՛յ, այսպէս. վեր կենալ չես համարձակուի, տեղումդ քար ես կտրել. եթէ նկարել կարողանայի, ես կը նկարէի քեզ, զարմացած երեխայի պէս ես, դէ՛ւ. դէ որ այդպէս խելօք ես, ես կը նստեմ տեղս:

Նա քաշեց մազերս, ծիծաղելով կրկին տեղ բռնեց իմ առաջնախկին դիբքով: Ես վերսկսեցի ընդհատուած աշխատանքս, բայց այնուհետեւ նա դարձեալ մի քանի անդամ ընդհատում էր իմ դործը իր չարաճճի խաղերով: Մերթ մի թիթեռ էր նրան զրաղեցնողը, մերթ մի թռչուն կամ մի բղէզ: Ներս մտաւ տանտիկինը:

— Սքանչելի՛ է, բացականչեց նա՝ միամիտ ժպիտն երեսին.

— սքանչելի է, երբ ես ձեզ տեսնում եմ այդպէս, յիշում եմ իմ զոյդ ծիծեռնակներին. նրանք միասին աշխատում էին ու երդում, բոյն էին շինում. գողտրիկ զոյդ էր. ես շատ եմ սիրում թռչուններին, այնպէս լաւ են: Յետոյ նրանք փոքրիկներ հանեցին, իմ աչքի առաջ կերակրեցին, մեծացրին ու թոցրին: Ամէն աշնան զնում էին ու գարնանը յետ գալիս, բոյնը կարկատում, դարձեալ երդում, փոքրիկներ հանում ու թոցնում: Եւ այսպէս տարիներ: Երբ նրանք չլում էին, ինձ միշտ թռում էր, թէ ինձ մնաս բարի են ասում տիրութեամբ, կարծես վախենում էին իրանց հեռաւոր ճամբորդութիւնից: Նրանք հեռու են գնում, այնպէս չէ՞ , շա՛տ

Հետու: Կայեցի՞ք, նրանց ըոյնի խղճուկ աւերակները զեռ երեւում են այստեղ:

Ես ձանձրանում էի՝ անհամբերութեամբ սպասելով, որ պառաւը վերջանին իր շաղակատութիւնը: Մարդարիտը լուսէ էր խորին ու չաղողութեամբ, ինչպէս փոքրիկ մասնելու կը լուրէ իր տառի հրապարի հէքիաթը: Բայց աստիճանը լուց անհանուն անտարքութեամբ եւ սկսեց զասաւորել խոտնուած աթոռները: Ես պարտասում էի ձեռք առնել վրձնին, երբ Մարդարիտը ուրի կանոնց մեջ, ժօնեցաւ լուսամուտին եւ ուշադրութեամբ նայում էր ծիծնենակների աւերուած բրդին:

— Եթոյ ի՞նչ եղան ծիծնենակները, զարդաւ նա զի՞սի տանակինը, որ պառաւում էր յարդարի սմանակը՝ ըստ կերպութին բոլորովին մոռացած եւ իր պասմութիւնը, եւ մեզ:

— Ծիծնենակները... նրանք մի անգամ դաշտին, էլ յստ չեղան:

— Էլ յստ չեղան ծիծնենակները... անսնես ի՞նչ եղան ինդէրք:

Մարդարիտը խօսում էր ի՞նքն իրան՝ աչըս լարունակ աւերակ բրդին յաստ. նրան գէմքը ընդունեց այս խօնուն, երազող արտայայտութիւնը, որ յատուկ էր նրան, երբ մասածում էր տիուր բաների մասին:

— Ի՞նչ եղան ծիծնենակները, Տի՛ր Աստուած, բացահանչց տանակինը, եղանք էլ յստ չեղան ասպի, երեւ չեղան ծովերի վրայ փոթորիկ բանւեցին ու մեռան ճահապարհին: Դէ՛, արդպէս է, յախտնեան ապրէլու չին, մնաք էլ ննք մեռնում, ամէնքն են մեռնում, ամէնքն համար էլ փոթորիկ կայ, նրանք էլ պէտք է մեռնէնք...

— Կուցք կարող էին զեռ չմեռնել, ապրէլ, բայց մեռան փորիլոց... ծիծնենակի հէքիաթը՝ զարդամ մաս ծովերի վըրայ, չամիների չնոյն ցատոցին, լուսուկ փետութիւնը եւ աւերակ բրդին: Ահա յամառ այխասանքով հիւսուած, յարգարուած բրդին, ուր երեսի մի օք այխան լաւ էր խաղաղ նիրեւու եւ երազների համար... դնացին, էլ յստ չեղան. ծիծնենակի հէքիաթն էլ լաւ է. ա՛հ, այս կեանքի հէքիաթնը մէկը մէկից պալսա չէ:

Մարդարիտը յստ եկաւ, նաև իր տեղում, բայց աւելի ժըտիքն, աւելի երազուն կէրպարանքով: Այս զարմանալու կինը նման էր մէքը լուծակի, որ զանասաւում ու խամրում էր դրիւթիւնը:

Ի՞նչ հովից: Երեխայի պէս իինդն ու լազը, ժպիտն ու թափիչը նրա հովում արագութեամբ յալորդում էին իւար փոխ առ փոխ: Եթի իր խաղընը ու ուրախ սրախօսութիւնները կէնդանի էին, տիուր լլունին խորունի էր եւ երարատեւ: Իր կնանցի արշալոյնին նա համուրուն էր եւ դանի փորան, որ մարդարային երջանին թիւնը մի անձարելիութիւն է, մի ցաւանին ցնորք, որ կիսնել սկզբունք մաս է եւ նա մզունմ է ասանում յութեան մէջ դրորդ մութ, անմունելի ոյժերից: Խուսափել անկորցի է: Լութիւնը կը ամար խաւոր, պարտութիւն կորորդունն էր, որ իր քաշանացում շիշայով կիշանադրում է մարդարային բախտերը եւ փորում, արիւստում այլքան սրաբը: Հոգիների մէջ յարատեւ շունչ միուում մեղմի պալպացոր կրավի պէս, մոռացութիւնն է միան, որ վայրկեանական սփոփոխն է բերում: Նրա խոհուն ու խորուն թափիծ աղքիւրը լայն զիտախաղութիւնն էր մարդկային ծանր ճահասապարի: Կոչ խինն ու ծիծաղը ըստում էին միայն վայրկեանական մոռացութիւնը, որ յառակ է երիտասարդ կենսութ տարիքին: Երբեմն նա ինձ ասում էր.

— Երարդ թի մարդ յամախալի կարուզանայ մոռանալ, որ ինչն ապրում է. Հնդկական նիրվանան լաւազան իմաստութիւնն է, որին երբեւցէ կարուզացի է հանել մարդկային միտուքը. բոլոր հէքիաթները լուծում, մենուում են այստեղ:

Տանօնիին ինձ վայրգցից եւ իր ներկայութեամբ, եւ մանաւուն իր պատութեամբ: Մինչ էր կիսուում մի կիրա տառով ալատուն նրանին, բարեխախարաք նա ինը լուծեց հարցը:

— Հարաւանիցէց մեր զարդեր, ասաց նա. ես կ'իրթամ վիրեւ, լի՛ք օրիորդու զարդին, կը կանչեմ ճեղ, ափին, հանգստ եղիք, թող պարնը նապի:

ի. նա զուրու զնաց:

— Ռ'հ, այս պառաւը, բացականչեցի ես սրանեղած:

— Ի՞նչ մէղանուր է արդ ինչն մասնի կինը, որ կիսնելի հէքիաթները սարսակելի են. քեզ ասեւ եմ, որ նիրվանն լաւազան իմաստութիւնն է. կ'է, թողնեմ այլ էլ, ինքը ասացիր չի ասալ, որ կեանքու ամէն ինչ փախչամ է. բոլոր, ինչ այսար կայ, վաղը կամ նոյնիս մէ ժամ յուսոյ կորոր է լինել. աւելի լուս է նկարի եւ մէ՛ վայրունար:

իս լուցի, որպէսիք նա շուտում մոռանայ տիուր մէկնառչալը.

րիկ հովից : Երեխայի պէս խինդն ու լացը, ժաղիտն ու թախիծը նրա հոգում արագութեամբ յաջորդում էին իրար փոխ առ փոխ : Եթէ իր խաղերն ու ուրախ սրախօսութիւնները կենդանի էին, տիսուր լրջութիւնը խորունկ էր եւ երկարատեւ : Իր կեանքի արշալոյսին նաև համոզուել էր եւ դառն փորձով, որ մարդկային երջանկութիւնը մի անկարելիութիւն է, մի ցաւագին ցնորք, որ կեանքի սկզբունքը սեւ է եւ նա մղումն է ստանում լոութեան մէջ դործող մութ, անըմբունելի ոյժերից . խուսափել անկարելի է : Լոութիւնը նրա համար խաւար, զարհուրելի կարողութիւնն էր, որ իր քմահաճոյքի չղթայով կաշկանդում է մարդկային բախտերը եւ վշրում, արիւնոտում այնքան սրտեր : Հոգիների մէջ յարատեւ ցաւն է մխում մեղմիւ պլազացող կրակի պէս, մոռացութիւնն է միայն, որ վայրկենական սկսիանք է բերում : Նրա խոհուն ու խորունկ թախծի աղքիւրը լայն դիտակցութիւնն էր մարդկային ծանր ճակատագրի . իսկ խինդն ու ծիծաղը բխում էին միայն վայրկենական մոռացութիւնից, որ յատուկ է երիտասարդ կենսալի տարիքին : Երբեմն նա ինձ ասում էր .

— Երանի թէ մարդ յաճախակի կարողանայ մոռանալ, որ ինքն ապրում է . հնդկական նիրվանան լաւագոյն իմաստութիւնն է, որին երբեւիցէ կարողացել է հասնել մարդկային միտքը . բոլոր հէքիաթները լուծում, մեռնում են այնտեղ :

Տանտիկինն ինձ զայրացրեց ե'ւ իր ներկայութեամբ, ե'ւ մանաւանդ իր պատմութեամբ : Միջոց էի փնտում մի կերպ շուտով պատուել նրանից, բարեխախտաբար նա ինքը լուծեց հարցը :

— Շարունակեցէք ձեր գործը, ասաց նա . ես կ'երթամ վերեւ, եթէ օրիորդը զարթնի, կը կանչեմ ձեզ, տիկի'ն, հանդիստ եղէք, թող պարոնը նկարի :

Եւ նա դուրս դնաց :

— Ո՞ւհ, այս պառաւը, բացականչեցի ես սրտնեղած :

— Ի՞նչ մեղաւոր է այդ խեղճ միամիտ կինը, որ կեանքի հէքիաթները սարսափելի են . քեզ ասել եմ, որ նիրվանան լաւագոյն իմաստութիւնն է . է'հ, թողնենք այդ էլ, ինքը ասացիր քիչ առաջ, որ կեանքում ամէն ինչ փախչում է . բոլորն, ինչ այսօր կայ, վաղը կամ նոյնիսկ մի ժամ յետոյ կարող է չլինել . աւելի լաւ է նկարիր եւ մի' զայրանար :

Ես լոեցի, որպէսզի նա շուտով մոռանայ տիսուր միջնադէպը .

վրձինը ձեռք առայ, շարունակեցի ընդհատուած դործս, բայդ նրա դէմքն էլ չէր բացւում : Եւ որքա՞ն գրաւիչ էր նա իր տըխութեամբ : Երբ նայում էի այդ թախծապատ, բարձր ճակատին, խորունկ կապուտակ աչքերին, որոնք թարթում էին անուրջների միջից, ինձ թւում էր, թէ գեղեցկութեան մի ծովէ է առաջս, հմայիչ, կախարդական ծովէ, որի հրաշալիքները անծայր են, որպէս իր ափերն ու անդունզները : Տիսուր դեղեցկութեան պօէզիան անհուն է : Անդունզները պրատող արծուի պէս ես աշխատում էի թափանցել այդ անհունութիւնը, բռնել արձանացնել կտաւի վրայ նրա նրբագոյն խաղերը, որոնք նոյնքան սիրուն են եւ նոյնքան վաղանցուկ, որքան արշալոյսի գոյները : Օ՛, սիրած եւ գեղանի կնոջ տիրութիւնը... դա նոճիներով եղերուած մէլամաղձուտ ու վճիտ լճակ է, ուր մարդ իր պատկերը միշտ գունատ է տեսնում, եւ որը իր ափերին ժապացող հոգուց արցունք էլ է ուզում : Կանացի այս գողարիկ պատկերի առաջ հայեացքս մթնել էր, միայն երեւակայութիւնս էր գործում տենդուտ ինքնամոռացութեամբ : Ես կարծես մի հարուստ ու կախարդական բնութեան միջից դիմում էլ գէպի հեռաւոր լոյսը, որ քանի գնում՝ այնքան բոցավառում եւ յափշտակում, շլացնում էր ինձ : Զեռքս աւելի եւ աւելի թափ էր առնում եւ երեւակայութիւնս թեւեր :

Ես նման էի այն անապատականին, որ տարիների ծանր տըխութիւնից յետոյ մի հրաշալի եւ երջանիկ տեսիլքի մէջ բռնում է գերադոյն սրբութիւնը եւ աշխատում է այն ամբողջապէս իր հոգու մէջ ամփոփել : Ես էլ տարիներից յետոյ բռնել էի իմ երազը, եւ այժմ, երբ ուզում էի նրա պատկերն իր բոլոր գրաւիչ մանրամասնութիւններով գրոցմել հոգուս վրայ, զարմանքով տեսայ, որ նա վաղուց ի վեր այնտեղ է : Հոգիս մի կաղապար էր, իսկ եւ իսկ այս տեսիլքի ձեւով, որ սէրը եկաւ ու լցրեց ծանօթ պատկերով : Երեւակայութեանս հետ խաղացող սքանչելի ձեւերը, այս գեղանի գէմքի թովիչ մանրամասնութիւնները այն աստիճան ծանօթ էին ինձ, որ եթէ յանկարծ կուրանայի, դարձեալ աւելի լաւ կը տեսնէի, քան բաց աչքով :

Եւ վրձինս շարժում էի առանց նայելու : Անխառն ու բռւռն զգացմունքով փոթորկուած իմ հոգին յափշտակութեան այս գերադոյն վայրկեանում իր ծոցից գուրս էր մղում կանացի սքանչելի ձեւերը ինչպէս ստեղծագործող, հզօր ոյժ, ինչպէս մալր

բնութիւնը, որ երկունքի անդուլ ճիգերով կերտում է այնքան աշխարհներ, ծնում է այնքան կեանքեր: Առջեւս նստած հմայիչ կինը իսկապէս իմ հոգում է տպում, եւ նրա բոլոր ձեւերը իմ ներքին զգացմունքի բոցերի մէջ զտուած՝ անխառն ու կատարեալ զեղեցկութեամբ դուրս էին գալիս եւ աչքիս առաջ կանգնում: Դեռ երբեք ես այսպէս խորունկ կերպով չէի զգացել ստեղծադործող արուեստի մէջ պօչզիան:

Աստուածութիւնն էր շարժում իմ ձեռքը:

— Դու ի՞նչ տարօրինակ ես, ի՞նչ պատահեց քեզ, աչքերու փայլում են, կարծես ինքնամոռաց յափշտակութեան մէջ լինես:

— Գեղարուեստը պաշտամունք է մի գերագոյն էակի, մի՛ շարժուիր, խնդրում եմ:

— Դու այնքան քիչ ես նայում նկարելիս, որ կարելի է ասել՝ փակ աչքով ես նկարում:

— Այո՛, ի՛մ ընկեր, ես քեզ կարող եմ նկարել նոյնիսկ առանց նայելու, եւ իմ գործը այնուամենայնիւ կատարեալ կը լինի: Երբ արուեստը մղումն է ստանում սիրուց, նա ամենակարող Աստուած է: Ինձ թւում է, թէ նկարել, կերտել, քանդակել կարելի է միայն այն, ինչ մենք սիրում ենք խորապէս: Չոր, փչացած ուղրտերը միշտ ամուլ են: Եթէ այս աշխարհը մի Աստուած է յօրինել, ապա նա պաշտում է իր ձեռագործը, որի յաւիտենական դադապիարը իր հոգուց է դուրս քաշել ինչպէս իր էութեան մի կտոր:

Դուռը կամացուկ բացուեց եւ չէմքի վրայ յայտնուեց տանտիկինը:

— Օրիորդը զարթնեց ու ուզեց տեսնել, թէ պարոնն ինչպէս է նկարում ձեզ, տիկին, ասաց նա ժպտալով. ահա նա էլ եկաւ:

Եւ նոյն վայրկենին պառաւի թիկունքից երեւաց օրիորդի վախկոտ, գունատ պատկերը իր հանդած աչքերով, իր մեղմ դիմագծերով. նա մի վայրկեան դադտագողի նայեց մեզ տանտիկնոջ ուսի վրայից, ապա թողեց ու փախաւ գէպի վեր, իր սենեակը: Մենք լսեցինք միայն նրա բարձրաձայն քրքիջը, որ հնչուեց աստիճանների վրայ, եւ յետոյ դրան ձայնը, որ թրիսկալով բացուեց ու խիուեց: Ես մնացի շուարած. Մարդարիտը ոտքի կանգնեց դունատուած. մենք իրար նայեցինք ակամայ, եւ անշուշտ մեր մտքերը նոյնն էին: Տանտիկինը առանց մտածելու մեզ մատնել էր. կատարուածը անախորժ էր, չափազանց անախորժ: Մարդա-

ըիտը շտապեց դէպի վեր, ես մնացի ընկճուած ու դժկամակութեամբ նայում էի այս խղճուկ պառաւին, որ ըստ երեւոյթին քնաւ չէր հասկանում, թէ ի՞նչ կատարուեց :

— Ներս մտայ, զարթնեց, — պատմում էր նա միամտարար . — այնպէս ուրախ էր, ծիծաղում էր, կատակներ էր անում : Հարցրեց քրոջ մասին, ասացի՝ ներքեւումն է, պարոնը նրան նըկարում է : Նա աւելի ուրախացաւ : «Պարոնն այսպէս երկար, երկար մաղեր ունի» ասաց, ձեռքով զանազան չարժումներ արեց ու ծիծաղեց : Այնպէս լա՛ւ էր ծիծաղում : Յետոյ ասաց՝ «գնանք տեսնենք ի՞նչպէս է նկարում» : Ես հագցրի, եկանք, հազիւ ձեզ տեսաւ ու փախաւ ծիծաղելով : Շատ է ծիծաղում, — վերջացրեց նա ցածր ձայնով . . . լու չէ, օր աւուր այնպէս . . . խե՛ղճ աղջիկ :

Ես այլեւս նրան չէի լսում . ամրող ուշքս կենտրոնացել էր պատահածի վրայ . Մարդարիտի գունատ պատկերը մի վայրկեան չէր հեռանում աչքիցս : Շուտով վերի սենեակից խառնիխուռն ձայներ լսուեցին . ես ծանօթ էի այդ ձայներին, սկսւում էր մէկն այն ներվային դրութիւններից, երբ այդ խեղճ հիւանդը դառնում էր անտանելի : Ես լսում էի, թէ ինչպէս նա փոխ առ փոխ ծիծաղում է, լալիս, ճշում, դէս ու դէն չպրտում ձեռքի տակ ընկած իրերը : Ի՞նչ էր պահանջում այդ խեղճ խեղաթիւրուած հոդին, ինչո՞ւ էր այդպէս աղղել նրա վրայ մեր երկուսին միասին տեսնելը, ես չգիտէի, բայց նրա աղաղակները քրքրում էին իմ հոգին : Սիրտ չէի անում վեր բարձրանալ իմ սենեակը, վախենում էի սարսափելի բաներ լսել : Մի ժամանակ նրա այսպիսի կացութիւնը զարթեցնում էր իմ հոգում այն հասկանալի կարեկցութիւնը, որ զգում ենք մեր նմանի դժբախտութեան առաջ : Այդ աւերուած հոդին ինձ յուղում էր ինչպէս մի տրորուած ծաղիկ, փշրուած տունկ կամ մի թեւակոտոր թռչուն, որ վեր խոյանալու իր ցաւոստ անկարողութեան մէջ մերթ լուռ նայում է դէպի բարձունքները, մերթ անօգուտ փորձեր է անում՝ ճշալով ու թըրպըրտալով գետնի երեսին : Խորունկ, աղնուացնող մի կարեկցութիւն էր այն, որի տակից չեն ցցւում խղճի խայթի թունաւոր փշերը : Այժմ ես դարձեալ ցաւում էի, բայց անորոշ կերպով զգում էի, որ կատարուածի մէջ անմասն չեմ : Ես այն մարդի կացութեան մէջ էի, որ մի դժբախտ դիպուածով ճանապարհի վը-

բայ ոտքով տրորում է մի անմեղ արարած, ապա աչքերն անդօր արցունքով լի՝ տեսնում է իր զոհի ցաւոտ գալարումները:

Եւ սրտաճմլիկ աղաղակները շարունակում էին լսուել վերից. դրութիւնն զառնում էր անտանելի: Տանտիկինս վազուց էր զուրս զնացել՝ թողնելով, որ ես անձնատուր լինեմ իմ ծանր խոհերին: Զգիտէի ինչ անել, վերե՞ւ գնալ, թէ՞ փախչել դուրս, վրձինը ձեռքիս, սիրածս կնոջ կիսատ պատկերն առաջիս, եւ հոգիս աղմկուած անորոշ երկիւղի եւ խղճի խայթի զդացմունքով՝ ես քարացել էի տեղումս: Յանկարծ ներս ընկաւ Մարդարիտը՝ յուղուած, աչքերն արցունքով լի, շորերն անկարգ, ինչպէս ճողոպարած ու փախած մէկի ձեռքից:

— Սարսափելի՛ է, սարսափելի՛, բացականչեց նա՝ նետուելով բաղկաթոռի վրայ եւ գլուխը ձեռքերի մէջ առած. սկսւում է փոթորիկը, տարիների լուռթիւնը խզուեց, քարը խօսեց... Նա ասում էր, որ ես խլում եմ քեզ նրանից, նա հաւատացած է, ոչ դու նրան ես սիրում, իսկ ես մէջ եմ ընկել խանդարելու, անիծում էր ինձ, մօրս, աշխարհը, թող երթայ, հեռանայ, ասում էր, ո՛չ ինձ, ո՛չ քեզ, թո՛ղ նա էլ դնայ ծովերի տակը, հասկանո՞ւմ ես, ծովերի տա՞կը. Հին պատմութիւնը յիշեց այնքան տարիներից յետոյ առաջին անդամ: Սարսափելի՛ է... կեա՞նք, ցաւերի պարտէզ:

Ես խօսք չունէի ո՛չ միիթարելու, ո՛չ պատասխանելու, ես նմանում էի լեռնալանջի այն վիրաւորին, որ տեսնում է եթերում իր գլխին սաւառնող արծիւը. եւ բաց թողնում է իր վիրաւոր կուրծքը, որ նա իջնի ու քրքրի: Կեա՞նք, ցաւերի պարտէզ, ի՞նչ լաւ է ասուած, մտածում էի ես:

— Ի՞նչ պէտք է անել, Տէ՛ր Աստուած, — շարունակեց Մարդարիտը՝ գլուխը բարձրացնելով. — ո՛ւհ, այս նկա՞րը, բացականչեց նա յանկարծ, վեր կացաւ, թափով խլեց ու ճմռեց ձեռների մէջ:

— Ի՞նչ արիր, ի՞նչ արիր, — բացականչեցի ես, բայց արդէն ուշ էր. տրորած, պատռած նկարը ձեռքին՝ նա սենեակից շտապով դուրս գնաց. երեւի տարաւ այդ գնով քրոջը հանդստացնելու: Դարձեալ մնացի մենակ, շմած ու փշրուած: Կարծես մի կայծակ էր, որ ճամթեց գլխիս եւ ես չէի կարողանում ուշքի դալ ծանր ցնցումից: Բնակարանը դարձաւ մի բանտ, որ խեղդում էր

ինձ : Թէեւ ճաշը մօտ էր , բայց դուքս ընկայ ինչպէս փախստական եւ եթէ չամաչէի , կը վաղէի որքան կարելի է հեռու , հեռու : Լայնարձակ գաշտն առաջս էր , սկսեցի քայլել առանց ինձ հաշիւ տալու : Գլխիս վրայ ծանրացած էր երկինքը , իսկ սրտիս վրայ մի բեռ , անորոշ բեռ , որի ինչ լինելը չէի համարձակւում պարզել : Առաջին անգամն էի զգում մի հեռաւոր վտանգ , որ մութ Փանտոմի պէս ցցւում էր իմ սիրոյ ճանապարհին եւ իմ ապագայի պարզ գիտակցութիւնը պղտորում : Իմ երջանկութեան մէջ ես խսպառ մոռացութեան էի տուել այն գժրախտ էակին , այդ խեղճ Կլարային , որ իսկապէս իմ սիրոյ սկզբնապատճառը եղաւ . մոռացել էի նոյնիսկ , որ նա ապրում է , կայ , մոռացել էի նրա ցաւալի պատմութիւնը , ես խնամքով զատել էի նրանից իմ սիրած էակին՝ Մարգարիտին , կտրել էի նրանց կապերը եւ երջանիկ էի : Այժմ այդ մոռացուած արտրածը , այդ կապտուած հողին դալիս էր ասելու , թէ ինքը ոչ միայն կայ , այլ կապուած է ինձ հետ , աշխարհի հետ թէեւ աննիւթ՝ բայց այնպիսի ամուր կապերով , որոնցից հեշտութեամբ ազատուել չի կարելի : Փոթորկի տակ հեծեծող ծառն էր նա , որ արմատից ճռնչում էր ցաւով , բայց մենակ խորտակուել չէր ուզում , կախուել էր կեանքից : Քար լուռ-թիւնն էր խօսում , եւ նրա ձայնը սպառնալի ու վրէժինդիր Հնչում էր մեր գլուխների վրայ , կարծես հաշիւ էր պահան-ջում աշխարհից իրան վիճակուած ճակատագրի համար :

Եւ այն լացն ու ծիծա՛ղը...

Մէկը ցաւ՝ միւսը հեղնութիւն , ո՞ւմ վրայ է ցաւում կամ ո՞ւմ է հեղնում այդ գժրախտ արարածը :

«ի՞նձ , ի՞նձ , ի՞նձ»... իմ սեփական փոփոցից ես վախենում էի :

Լաց ու ծիծա՛ղ... ի՞նչ են նրանք , միայն աղաղակներ . աշխարհը լի է նրանցով . մի՞թէ նրանց ելեւէ ջների մէջ հէնց իմ գատավճիռն է հնչում : Ո՞վ կարող է իմանալ , թէ ո՞րտեղ եւ ո՞վ է վճռում իր բախտը :

Լաց ու ծիծա՛ղ... ցաւ ու հեղնութիւն . նրանք ծանրացած են մարդկութեան տառապալից գլխին , իւրաքանչիւր ոք լսում է քրքիջներ ու հեկեկոց եւ կեանքը ցաւի ուժգնութիւնից ծիծաղում է ու լալիս միաժամանակ : Հեղնութի՛ւն , անխառն երջանկութիւնը հեղնութի՛ւն է ...

Հոգիս տառապում էր այդ հսկայական հեղնութիւնից : Վերեւ՝ բլրի վրայ կծկուած էր ծերերի խրճիթը, եւ ծխի պտոյտը այնտեղից զեռ բարձրանում էր ոլորմոլոր : Աշնան թխալոտ երկինքը ցօղերով յղի՝ էլ նոր բեռ չէր ուզում, եւ ծուխը տապակտապակ ծաւալում ու անշարժ կանգնում էր խրճիթի վրայ որպէս թանձր ու գորչ աստառ երկնային հսկայական վրանի : Ծխի եւ ամպերի բեսի տակ խրճիթն այնուամենայնիւ ապրում էր, մի կոճղը բաւական էր եղել այնտեղ կենդանութիւն սփռելու : Այնտեղ դուցէ ո՛չ լաց կար եւ ո՛չ ծիծաղ, ո՛չ ցաւ, ո՛չ հեղնութիւն, իշխողը բութ անդիտակցութիւնն էր, սփոփիչ մոռացութիւնը :

Երանի՛ ձեզ...

Եւ քայլեցի հեռո՞ւ :

Գետն էր առաջս . յորդացած ու կատաղի նա թաւալ-թաւալ զարկւում էր ափերին, ծեծում էր միեւնոյն ժայռի կուրծքը, ծեծում էր, քրքջում ու հեծեծում :

Լաց ու ծիծաղ ե՛ւ այստեղ . գետի յորձանքները ցաւում էին ու հեղնում . նրանց խուլ մոնչոցի մէջ լսում էր տիեզերական համերդը, կոյր ոյժերը զառանցում էին, թէ երջանկութիւնը անկարելի է . յոյս ու յոյզ, սէր ու իղձեր, ձգտում ու երաղ լոկ ցաւ են ու հեղնութիւնն : Ահ, տարուել, տարուել այդ յորձանքների մէջ . ե՛ս էլ, ամէնքն էլ, ողջ մարդկութիւնը :

Հոգիս ուռած էր արցունքով :

— Գնա՞ց, գնա՞ց, գնա՞ց ...

Փոքրիկ աղջիկն էր վաղում դետափով եւ ճչում սրտապատռո, եւ ալիքները մոմուալով բերում էին այծին : Իմ զոյգ բարեկամները . . . որպիսի դժբախտ զուգագիտութիւն . կենդանին երեւի փախել էր նրա ձեռքից, վագել եւ գետը գլորուել :

— Գնա՞ց, գնա՞ց ...

Այծն էլի մի քանի պտոյտ գործեց ալիքների մէջ, որոնք յորձանք տուին մեծ ժայռի տակ եւ իրանց զոհին ծածկեցին անդունդներում :

Աղջիկը շարունակում էր վագել ճչալով . նա դեռ յոյս ունէր, չէր ուզում ընդունել, որ կորուստն անդառնալի է :

— Կա՞ց, կա՞ց, ի՞մ փոքրիկ :

Նա իմ ձայնը չլսեց . վաղում էր գետափի մացառների ու քարերի միջով, ճչում էր աղիողորմ կերպով առանց նայելու գե-

տին,ուր այծը վաղուց էր ծածկուած: Մացառները պատռառում էին նրա զգեստները ծուէն-ծուէն կախկախով, քարերի վրայ նա ընկնում էր, դարձեալ վեր կենում ու վաղում անընդհատ:

— Կա'ց, կա'ց, ի'մ փոքրիկ:

Ես արդէն մօտ էի: Նա կանգ առաւ, վերջին անգամ նայեց ալիքներին, որոնք մոմոռում էին ու պտոյտներ էին գործում ժայ-ռերի տակ. այծը չկար: Փոքրիկ աղջիկը յողնած, ուժասպառ նստեց մի քարի վրայ, գլուխը ձեռների մէջ առաւ եւ դառն դառն հեկեկաց:

Կեանքի ալիքները առաջին անգամ թաղեցին նրա յոյսերը:

Ես մօտեցայ. մեր ցաւերը նոյնն էին. ձեռքից բռնեցի եւ աշխատում էի միմիթարել. խօսք չգտայ, գրկեցի փոքրիկ, գանգըա-հեր գլուխը. եւ զապուած արցունքներս թափուեցին: Ես լալիս էի իմ խեղճ սէրը, իմ վարդ յոյսերը, որոնց վրայ խտացած էր մի շանթարեր ամպ, իսկ աղջիկը՝ իր այծը:

Եւ գետը մեր ոտների տակ քրքջում էր ու մոնչում. նա հեղ-նում էր մեր ցաւն ու լացը:

Լա՛ց ու ծիծաղ, ցա՛ւ ու հեղնութիւն . . .

XIII

Գիշե՛րը, գիշե՛րը . . . ո՞վ կը տար ինձ անմիջապէս մի մութ ու անձայն գիշեր, որպէսզի ես վերստին կարողանայի զգալ նրան ինձ մօտ, փարել նրան նիրհող խաւարի մէջ, համը լոռութեան գրկում: Իմ գերազոյն իղձն էր շուտով լսել նրա շրթունքներից, թէ նա իմն է եւ աշխարհում ոչինչ չի կարող այլեւս մեզ անջա-տել. նրա մի հատիկ համբոյրի շերմութիւնը կարող էր ցրել բո-լոր իմ մութ կասկածները, որոնք սպառնալի ամպի պէս խտա-ցած՝ խեղդում էին ինձ: Եւ յետոյ պէտք էր խօսել, խօսել: Նա ա՛յնքան բան կարող էր ասել մեր խուսափող երջանկութիւնը բռնելու համար:

Գիշե՛րը . . . բայց դեռ մի քանի ժամ կար մինչեւ նրա դալը, մի քանի՛ ժամ . . . մի յաւիտենականութիւն: Հողիս այրում էր անհամբերութիւնից: Ինձ թւում էր, թէ մինչեւ կը հասնի նա՝ այդ փրկարար ու սփոփիչ խաւարը իր անվերջ յօրանջող ու ե-

բազող լոռւթիւնով, կը պատահի մի անդառնալի, մի վճռական բան, որ կը խորտակի իմ երջանկութիւնը: Իրօք ինչ պիտի պատահէր, ինչումն էր կայանում վտանգը՝ ես որոշակի ասել չէի կարող, բայց վախենում էի, հոգուս մէջ խախտուած էր հաստատուն յոյսը, երկիւղը չար օձի պէս ներս էր սողում այնտեղ, եւ ես ինձ զգում էի պաշարուած ու հալածական: Գիշե՞րը, միայն նա կը փրկէր ինձ:

Եւ սպասում էի խաւարին, բայց մի չարախընդաց զուգադիպութեամբ այդ մառախլապատ, ամպամած օրը վառ ու երկար վերջալոյս ունեցաւ: Արեւմուտքում ամպերը շառագունեցին եւ երկար ժամանակ կախուած էին լեռների վրայ ինչպէս հսկայական լապտերներ, որոնք արեւի ծածկուելուց յետոյ ասես աշխատում էին որքան կարելի է երկար ժամանակ լուսաւորել խաւարող բնութիւնը: Դա մի ցաւոտ վերջալոյս էր, որպէս հոգեվարքը մարտում ընկած երիտասարդ վիրաւորի, որ հեշտութեամբ չի ուզում բաժանուել կեանքից, աշխարհից, իր վարդ երազներից:

Եւ խաւարը չէր գալիս, երկինքը չէր մթնում, շառագունել էր ու մնացել, «մահկանացուի ցաւերը հեգնող անողո՞րմ բնութիւն», մտածում էի ես՝ նայելով կարմրատակած ամպերին:

Ամբողջ օրը երկու քոյրերը փակուած մնացին իրանց սենեակում, եւ ես հակառակ իմ բոլոր ջանքերի անկարող եղայ տեսնել Մարդարիտին: Վար կ'իջնէր նա ընթրիքին, թէ ոչ, ես չգիտէի. բայց վաղուց էի սեղանատանը եւ սպասում էի սրտատըրով՝ քայլելով յետ ու առաջ:

Նա ներս եկաւ գունատ ու տանջուած, աչքերի մէջ անօրինակ վիշտ: Ես նրան յաճախ էի տեսել տխուր, բայց այսքան խորունկ ցաւ դեռ երբեք չէր մռայել նրա բաց, բարձր ճակատը: Նա քիչ կերաւ, շատ լուռ մնաց, տանտիկնոջ հարցին պատասխանեց հատ-հատ բառերով: Երբեմն-երբեմն նայում էր ինձ մի հայեացքով, ուր ես կարդում էի արդահատանք գէսլի ինձ: Տանտիկինը շարունակ ներկայ էր, խօսել չէր լինում. նա հազիւժամանակ դտաւ ինձ ասելու, որ գիշերը պարտէղ իջնեմ: Երեւի ասելիքը լուրջ էր ու երկար, այլապէս նա չէր իջնի պարտէղ գիշերով, երբ այնպէս խոնաւ էր ու ցուրտ:

Ժամանակից շատ առաջ ես արդէն այնտեղ էի, յիշողութիւններով հարուստ վայրում, ուր երկու խնձորենի գլուխ գլխի

տուած զոյդ քոյրերի պէս՝ Հովանի էին անում մի նստարանի վը-
րայ: Մոայլ գիշեր էր, մթնոլորտը տամուկ, որ թափանցում էր
իմ զգեստները եւ հասնում մարմնիս: Հով չկար, բայց եւ այն-
պէս մի-մի տերեւ պոկւում էր ծառից եւ փոփոալով ընկնում իմ
դլիսի վրայ կամ ոտներիս առաջ: Աշնան խղճուկ ու թօշնած տե-
րեւ, որ մեռնում էր որպէս փշրուած յոյս՝ այլեւս երբեք չվերա-
ծնելու համար: Հեռուից լսում էր վարարած գետակի շառաջը,
նա դարձեալ ծեծում էր իր ափերը, դարձեալ հեղնում ու սգում
եւ լուռ խտարը արձագանդ էր տալիս նրա ցաւոտ հեծեծանքնե-
րին ու խենթ քրքիջներին: Է՛հ այս կեանքը: Ինչ կատարուում է
մեր աչքի առաջ, ինչ մենք տեսնում ենք, չօշափում եւ զգում,
այն եղկելի է, լացի եւ հեղնութեան արժանի, իսկ այն՝ ինչ
թագնուած է մեծ լուութեան տակ, միշտ խուսափում է մեղանից:
Ո՞ւր է խորհուրդը մեր ցաւոտ գոյութեան: Մաքերս սեւ էին:

Նուիրական լուսամուտը դարձեալ թարթում էր վերից.
բայց ես սիրո չունի նրան նայելու. երկու ձեռքով ու ծնոտով
յենուած ձեռնախայտիս, ես նայում էի դէսի հեռուն, եւ վշտա-
ցած ու հայտական դեւի պէս իմ հայեացքը կորչում էր թանձր
խաւարում, որի անհուն ծոցում ես փնտոում էի լուծումը ինձ
տանջող առեղծուածի: Կեանքի ցաւոտ գաղտնիքը ես փնտոում էի
խաւարի մէջ, որի իւրաքանչիւր մութ ծալքը ինձ համար
ցաւի մի ձեւ էր: Ամպերի տակից հատ-հատ աստղեր երեւում էին
ու ծածկուում, որպէս ծնուող ու մեռնող յոյսեր մարդկային հո-
գիներում:

Յոյսեր...

Բայց մի՞թէ նրանք բոլորը պէտք է մեռնեն իմ հոգում, մի՞-
թէ այն հիւանդ աղջկայ գունատ ուրուականը, որ այնպէս ցա-
ւագինօրէն եւ սպառնալի ցցւում է մեր մէջ՝ պիտի կարողանայ իր
սառն, գերեզմանային չնչով խամրել մեր սիրոյ այնքան վարթամ
ծաղիկը. մի՞թէ Մարդկարիտը նրա երկիւղից պիտի խոյս տայ
ինձանից եւ դժբախտացնի թէ՛ ինձ, թէ՛ իրան: Վերջապէս ո՞վ է
կապել մեր բախտերը նրա հետ. ինչո՞ւ նրա սեւ ճակատագիրը,
որ արդիւնք է մարդկային պարտաւորութիւնների իր անհեթեթ
հասկացողութեան, պիտի ծանրանայ նաեւ մեղ վրայ: Աշխար-
հում իւրաքանչիւր արարած կեանքի եւ երջանկութեան իր ան-
րոնաբարելի իրաւունքներն ունի. զոհերը զեղեցիկ են ու նուի-

բական, երբ իմաստ ունին, ինչո՞ւ թաղել սեփական կեանքը մի ուրիշի ոտների տակ, երբ դրանով ոչինչ չի կարելի ուզգել:

Փախչել, փախչել, մտմտում էի ես, եթէ Մարդարիտը իսկապէս սիրում է ինձ, ապա նա յանձն կ'առնի հեռանալ ինձ հետ. մի սէր պարտկելու, ծածկելու համար աշխարհը չափականց լայն է: Այսպէս էի մտածում ես, եւ իմ սեփական տրամարանութիւնն այն աստիճանի խելացի, հիմնաւոր թուաց ինձ, որ խռոված հոգիս մի փոքր հանդստացաւ: Հաւատացած էի, որ Մարդարիտը կը համողուի, մենք կը յայտնենք մօրը եւ կը հեռանանք: Քրոջը խարելը երբեք դժուար չէր լինի: Այս միտքն այնպէս դրաւեց ինձ, որ կ'ուզէի վայրկեան առաջ բաժանել Մարդարիտի հետ: Փախչել, չուտով փախչել, այս երկու բառերը կախուած էին իմ շրթունքից, եւ ես ակամայ անդադար կրկնում էի ինքս ինձ եւ նայում դէպի դուռը, որտեղից պիտի յայտնուէր սպասածս կինը:

Եւ նա եկաւ, ինչպէս միշտ՝ թեթեւաքայլ ու երկչոտ: Ես ոտքի թռայ, ձեռներս տարածեցի դէպի նա եւ աղերսագին կանչեցի:

— Փախչե՞նք, փախչե՞նք, Մարդարի՞տ, հաւատա՛ ինձ, դալաւագոյն ելքն է: — Պատասխանի փոխարէն նա երկու ձեռքս բռնեց եւ նայում էր դէմքիս լոռութեամբ, կարծես նոյնիսկ խաւարի միջից աշխատում էր հոգիս կարդալ: Ես մնացի կարկամած:

— Երեխա՛յ, Երեխա՛յ, ասաց նա՝ դլուխն օրօրելով անուշ յանդիմանութեամբ: — ո՞ւր փախչենք, մարդ ինքն իրանից ի՞նչպէս կարող է փախչել. վտանգի առաջ եսասիրութիւնն է խօսում քո մէջ, իմ ընկեր: Փախուստի ժամանակ ամէն տեսակ բեռ կարելի է ձգել ճանապարհին, բացի այն, որ մենք կրում ենք մեր հոգում: Նստի՛ր, նստիր այստեղ ու լսիր ինձ:

— Օ՛, ո՛չ, ո՛չ, նախ ասա՛, որ դու ինձ սարսափելի բան հաղորդելու չես, ասա՛, որ դու դարձեալ իմն ես, որ ամէն ինչ կորած չէ, ասա՛, որ այսօրուայ տիսուր միջնադէպը անդառնալի անջատման նախաբանը չէ:

— Նստի՛ր, քեզ ասում եմ, այսքան լալկան փոքրոգութիւնը անվայել է մի տղամարդի, ես քեզ անուանում եմ երեխայ, բայց էլի... սարսափելի բան չկայ, միայն խօսք տուր ինձ լսել հան-

դարտութեամբ, եւ հաւատացած եղիր, ինչ էլ ասելու լինիմ, դա մեր երջանկութեան համար է :

Մենք տեղ բռնեցինք նստարանի վրայ :

— Այսպէս չէ՞, սի՞րելիս, դու կը կատարես, ինչ որ պահանջեմ քեզանից, շարունակեց նա .— յիշո՞ւմ ես, դու ինձ խօսք ես տուել հէնց այս նստարանի վրայ, այս իսկ ծառերի տակ, որոնք մեր առաջին համբոյրի, մեր ուխտի վկաներն են եղել : Այժմ հասել է ժամանակը, ասա՛, կամենո՞ւմ ես կատարել քո տուած խոստումը, թէ ոչ :

— Բայց . . .

— Ոչ մի «բայց», ինչքան եւ քեզ սիրելիս լինիմ, ինձ համար մահու չափ ծանր կը լինի, եթէ սիրածս տղամարդը խոստմնազանց լինի :

— Քո ցանկութիւնն ինձ համար օրէնք է, միայն աղաչում եմ, ասա՛ շուտով :

— Այդպէս, ես այդպէս էլ սպասում էի, այժմ լսիր առանց վրդովուելու եւ յուղուելու . դու պէտք է հեռանաս այստեղից վաղը եւ եթ :

— Անողո՞րմ . . . անողո՞րմ . . .

— Դու լա՛ց ես լինում . . . ա՛խ դու երեխայ, կարծում ես, որ քո բացակայութիւնն ինձ համար աւելի քի՞չ արժէ, քան իմը քեզ համար : Կեանքն է այդպէս, ի՞մ ընկեր, իմ խեղճ փիլիսոփայ, մեր վայելքի, երջանկութեան իւրաքանչիւր վայրկեանը մենք ստիպուած ենք ձեռք բերել զոհերով . այն էլ լաւ է, որ զոհի եւ արցունքի մէջ համաչափութիւն պահպանուի, յաճախ այդ էլ չի լինում : Եւ այսպէս դու պէտք է հեռանաս :

— Բայց ինչո՞ւ . . . ինչո՞ւ . . .

— Դու գարձեալ հեկեկում ես, մի՞թէ ես պէտք չունիմ քաջալերութեան, սփոփիչ խօսքերի, ո՞ւր փնտում մխիթարութիւն, երբ դու արտասւում ես : Գերագոյն անհրաժեշտութիւնն է մեր անմիջական անջատումը, հնազանդուենք, հոգի՛ս, որ բոլորը չկորցնենք : Դու գիտես, որ հիւանդ գլուխների մէջ որեւէ դաղափար մեխի պէս ցցւում է անդառնալի կերպով : Խեղճ քոյրս հաւատացած է, որ դու նրան սիրում ես, ու անդադար կը կնում է, թէ ես նրա ճանապարհը վիակում եմ : Նրա ատելութիւնը դէպի ինձ զարհուրելի է . այսօր սենեակում նա քիչ մնաց բոլոր շորերս պա-

տառոտէր. Ես վար իջայ յատկապէս նրա պահանջով, նկարը վերեւ տարայ, պատուեցի, այլապէս ամբողջ սենեակը քարուքանդէր անում: Դա մի խենթ կտտաղութիւն էր, որպիսին ես դեռ երբեք չէի տեսել: Նա այսօր հին, կուտուած մաղձն էր դուրս թափում, սարսափելի էր նրան տեսնել: Ես հաւատացած եմ, որ նա այդպէս էլ կը մնայ ե՛ւ վաղը, ե՛ւ միւս օրը, ե՛ւ միշտ, քանի դու այստեղ ես. ահա թէ ինչո՛ւ պէտք է հեռանաս եւ անմիջապէս:

— Յետո՞յ...

— Յետոյ... Ես այդ էլ եմ մտածել, ես դիտէի, որ դու այդ պիտի հարցնես, այսօր գրեցի, որ մայրս շուտով գայ, ես նրան կը պատմեմ բոլորը, ես կը յայտնեմ նրան նաեւ իմ անդառնալի վճիռը քեզ հետ ամուսնանալու, ապա մենք քաղաք կը դանք, ուր մեր տեսակցութիւնը յոյս ունիմ անկարելի չի լինի:

— Յետո՞յ...

— Մեր ապագան, մեր ելջանկութիւնը ի՞նձ հաւատա, սի՞րելիս, եւ վստահ եղիր: Թո՞ղ, որ այս փոթորիկն անցնի, այս ծանր հանդամանքները մի փոքր պարզուեն նաեւ ինձ համար. մնացածը մենք կը տեսնենք: Բաւականացի՛ր այս իմ հանդիսաւոր խոստումով — ես կամ քոնն եմ, կամ գերեզմանին: Մի՛ լինիր այդքան պահանջող, չէ՞ որ ես էլ եմ ընկճուած այս անակնկալ դիպուածի ծանրութեան տակ, դու այնպէս ես պահում քեզ, առեմ հարուածը միայն դու ես ստացել: Իսկ ե՞ս... չէ՞ ես էլ եմ կարօտ օդնութեան, քաջալերութեան, միսիթարութեան...

Նրա ձայնը խղուեց, եւ արցունքները թափուեցին աչքերից:

Ես կամացուկ դրկեցի գլուխը եւ համբուրում էի թաց աչքերը ու մեղմիւ միսիթարում:

— Քո սիրոյ համար, հոգի՛ս, չկայ այնքան ծանր զոհողութիւն, որ ես յանձն առնել չկարողանամ, ես վաղը կը մեկնեմ անպատճառ:

• •

Ուշ դիշեր էր՝ խաւար սենեակում անկողնիս վրայ նստած լուռ մտածում էի ծանր օրուայ ընթացքում անցած դարձածի մասին: Մի քանի բոպէ առաջ բաժանուեցի սիրածս կնոջից եւ արդէն ինձ թւում էր, թէ նա անդառնալի կերպով կորած է ինձ համար: Էլի մի քանի ժամ, լոյսը կը բացուէր, եւ ես պէտք է մեկնէի... Յետո՞յ... այդ սարսափելի «յետոյ»-ին նա էլ պա-

տասխան չգտաւ . դա մութ անորոշութիւնն է , այն զարմանափի խաւար ոյժը , որ մղում է մեղ դէպի մեր մարդկային ճակատագիրը . մենք ստիպուած ենք հնազանդուել եւ քայլել , քայլել . . . Երկու ամիս առաջ եկայ այստեղ մայր բնութեան ծոցում հանգիստ ու խաղաղութիւն դանելու եւ այժմ մեկնում եմ այստեղից՝ տանելով իմ հոգում մի ծանր թախիծ : Զարհուրելի են բախտի խաղերը :

Խոստացայ մեկնել , երբ միասին էինք , այժմ մենակ մնալով՝ զգում էի այդ սարսափելի խոստումիս բոլոր ծանրութիւնը : Ո՞ւր մեկնեմ եւ ինչո՞ւ : Ի՞նչպէս կարելի է զատել իրարից մարմինն ու հոգին եւ յետոյ ստիպել նրանց , որ ապրեն առանձին-առանձին : Ի՞նչպէս կ'ուզէի վերստին տեսնել նրան , որ իմ վշտի եւ երջանկութեան աղրիւրն էր , ծունկ չողել առաջը , աղերսել , որ յետ տայ ինձ տուածս սարսափելի խոստումը , որ չստիպի ինձ մեկնել : Ես նրան կ'ասէի . «Եերի՛ր ինձ , հո՛գիս , ես ոյժ չունիմ , ես անկարող եմ առանց քեզ ապրել , համարիր ինձ երեխայ , փոքրողի , ուրիշ էլ ինչ կ'ուզես , բայց չեմ կարող , ես կը մեռնեմ առանց քեզ» : Բայց նա չկար , մենակ էի սենեակումս , խաւարը թանձրանում էր ու ճնշում իմ կուրծքը ինչպէս մի մութ զանգուած : Ի՞նչ պէտք էր անել . վեր կացայ , մօտեցայ լուսամուտին եւ նայում էի դէպի դուրսը , ուր նոյնպէս խաւար էր , որպէս իմ սրտում : Նայում էի եւ մտածում՝ դուրս չզա՞մ արգեօք եւ քայլեմ այդ խաւարի միջից հեռո՛ւ , հեռո՛ւ , դէպի լեռները եւ մթին ձորերը , գնամ՝ էլ երբեք յետ չդառնալու համար : Զէ՞ որ ես համարեա հալածական էի , մերժուած ու խեղճ . . . զնա՞մ , յետո՞յ . . . ո՞ւհ , դարձեալ այս «յետոյ»-ն , ոչ նրանից ազատուելու ոյժ եւ ոչ ընկճելու քաջութիւն էի զգում : Դուռս կամացուկ քսսաց ծխանի վրայ , սիրտս թունդ ելաւ , ես թափով յետ դարձայ . նա՞ էր . . . քիչ մնաց բարձրածայն ճշամ . «Չե՛մ դնայ , չե՛մ դնայ , Մարդարի՛տ , ազատիր ինձ իմ ծանր խոստումից» : Բայց նա իր սովորութեան համեմատ երկու ձեռքով փակեց բերանս :

— Սո՛ւս , սո՛ւս , ի՛մ ընկեր . . . այս վերջին խենթութիւնն է , որ ես կատարում եմ քեզ համար . . . յանցաւոր խենթութիւն , այնպէս չէ՞ . . . բայց նա խորը քնած է օրուայ ցնցումներից յետոյ . . . համբերել չկարողացայ . . . եկայ վերջին անդամ իմ բուռն սիրոյ

ապացոյցը տալու... անջատումը հիմա էլ այնպէս ծանր չի լինի
քեզ համար, այնպէս չէ՞...

Մոռացայ բոլորն, ինչ ուզում էի նրան ասել, իմ տէրն ու
հրամայողն էր խօսում, եւ ես չէի կարող չհնապանդուել, միայն
լսում էի նրա հմայիչ ձայնը, գուրգուրիչ փափսոցը խաւարի մէջ,
լսում էի եւ երջանիկ էի, այդ երջանիկ վայրկեանների փոխարէն
նրա պահանջած զոհարերութիւնը, այդ ժամանակաւոր անջա-
տումը չափազանց չնչին էր: Ո՞չ, ես մերժուած, հալածական չէի,
Մարդարիտի սիրոյ այս ուժգնութիւնը հեշտացնում էր իմ վի-
ճակը, վերահաստատում այնպէս անսպասելի կերպով խախու-
ւած հաւատու:

Մենք լուռ էինք. էլ խօսք չկար. հերթը զգացմունքին էր.
Մարդարիտը լուռ նստած՝ գլուխը յենել էր իմ ուսին, մեղմիւ.
Հեւում էր, ապա կամաց-կամաց խոր քուն մտաւ:

Այդ չարաբաստիկ օրուայ ընթացքում կրած հոգեկան բուռն
յոյզերը երեւի խիստ յողնեցրել էին նրան: Ես երջանիկ էի, որ նա
այնպէս հանգստանում է իմ ուսին, այդ դիրքով նա սքանչելի էր:
Չէի համարձակւում անդամ ամենաչնչին շարժում դործել, որ
չխանգարեմ նրա հանդիսացը: Լուսաբացը հեռու էր, քոյրը շու-
տով չէր զարթնի, այդ ես գիտէի, վճռեցի անշարժ մնալ, հսկել
եւ երբ արեւելքում հորիզոնը դունատուի, արթնացնել Մարդա-
րիտին, որ իր սենեակն անցնի: Նա շարունակում էր իր խաղաղ
եւ առողջ քունը: Ես հաճոյքով զգում էի նրա մեղմ շունչը իմ
աջ այտի վրայ, լսում էի անուշ շնչառութեան ձայնը եւ մտածում
էի այս տարօրինակ դիպուածի մասին, որ իմ բախտը դրեց այդ
քնած գեղեցկուհու ձեռքում, որ կապեց մեր կեանքերը անդառ-
նալի կերպով: Այս իրականութիւնը՝ չնայելով իր պատճառած
հոգեկան այնքան բուռն, յաճախ ցաւոտ յոյզերին, անուրջի պէս
գեղեցիկ էր, երազների հմայքն ունէր: Այս առեղծուածական կի-
նը մի փոթորիկ էր, որ ինձ տանում էր իր ոլորտների մէջ. ես եւ
տառապում էի ե՛ւ երջանիկ էի: Երեւի իւրաքանչիւր սէր մի փո-
թորիկ է, մտածում էի ես, որ մեղ տանում է բարձունքներից
շնչեցնող արագութեամբ. ով ճաշկում է նրա վսեմ քաղցրու-
թիւնը, նա անհրաժեշտապէս պէտք է տանի եւ դառնութիւննե-
րը: Եւ նա հանդչում էր ... ինձ վիճակուած փոթորիկը, հանգ-

չում էր հէնց իմ ուսին, ինչպէս իմ անբաժան բախտը, ես վախենում էի նրանից եւ դողում էի նրա համար :

Գետը շարունակում էր որոտալ հեռաւորութեան մէջ, եւ նրա ձայնը, որ քիչ առաջ խօսում էր ցաւից ու հեղնութիւնից, այժմ էլ այնպէս վհատեցուցիչ չէր. ես լսում էի նրա խուլ շառաչը առանց սեւ մտքերի, նրա որոտը նոյնիսկ մի ինչոք նիրգացնող, օրօրող բան ունէր իր մէջ. ականջ էի դնում, եւ կամաց կամաց նա ամբողջապէս դրաւեց իմ ուշադրութիւնը: Ես վերատին յիշեցի փոքրիկ աղջկայ դժբախտութիւնը, յիշեցի նրա ահագին վիշտը իր այծի կորուստի համար, եւ սիրտս ճմլուեց ցաւից: Փոքրիկ հով եկաւ եւ կամացուկ սլուացը լուսամուտիս առաջն գանուող ծառի տերեւները. մի թուչուն նրա վրայ մեղմիւնթաց եւ կրկին քուն մտաւ: Յետոյ ինձ թուաց, թէ փոքրիկ աղջիկը եկել է իմ լուսամուտի տակ կանգնել, լաց է լինում աղիողորմ ձայնով եւ իր այծը իննդրում ինձանից: Լսում էի նրա հեծկլտանքը, վշտոտ, յուսահատ, որ հոգուս խորքն էր թափանցում. աշխատում էի վեր կենալ, նայել լուսամուտից, կամ վար իջնել, մխիթարեկ նրան, բայց շարժուել չէի կարողանում... եւ յանկարծ փոքրիկ աղջկայ լալկան մրմունջները, նրա մեղմ հառաջանքները, գետի որոտը, ծառերի սօսափիւնը դադարեցին, եւ նրանց փոխարէն հէնց իմ ականջի տակ մէկը ճչաց ահագին ձայնով՝ «գո՞ղ, գո՞ղ, գո՞ղ, էլի՞», ուո՞ւհ»... Զարհուրեկի էր. այդ ձայնը կարծես կոկորդիկ չէր հնչւում, այլ մի պատուած, աւերակ դարձած կրծքից, եւ իր հնչիւնների հետ միաժամանակ դուրս էր քաշում սրտի արիւնոտ կտորտանքը: Այդ վերջին «ուո՞ւհ»ը... դա սոսկ ցաւի հառաջանք չէր, այլ միաժամանակ անհուն վշտի եւ զայրոյթի աղաղակ, որ որքան աղեխարշ էր, նոյնքան սոսկալի: Այդպէս է ճշում նա, ով յանկարծակի մի աներեւոյթ ուժով տարւում է անդունդների վրայ, բաց աչքով տեսնում է մահը, զգում է նրա շունչը եւ մեռնել չի կարողանում: Այդ սպանիչ ճիչը որոտի պէս ճայթեց իմ գլխին, վշաքաղեց մարմինս, ես դողալով ու շշմած ոտքի կանգնեցի եւ կիսախար սենեակում տեսայ ինչպէս Մարգարիտը երկու ձեռքով բազուկս սղմած՝ դողում է իմ կողքին, միեւնոյն վայրկեանին ինչպէս մի յանկարծական երեւոյթ իմ աչքին ներկայացաւ մի այլ ահաւոր պատկեր: Ես տեսայ կլարային կից դրան չէմքում կի-

սամերկ, բաղուկներն ու կուրծքը հոլանի, հարուստ մազերը խառնիխուռն փոռած ուսերին, աչքերը չոած ու զայրացկոտ, դէմքը ծռմռած, բերանը բաց կարծես մի անհնարին սարսափից, ձեռները բողոքող ու սպառնալի ձեռով, բաց դռներից դէպի մեզ տարածած։ նա' էր ճշում այնպէս զարհուրելի կերպով։ Այս սպանիչ սպատկերը ինչպէս մի շացուցիչ փայլակ անցաւ իմ աչքով, յետոյ Կլարան կանդնած տեղը քրքջաց զիլ, երկար, եւ այդ քըրքիջի հնչիւնները, նրա այլանդակ ելեւէջները դնալով գնալով նուաղեցին, ապա յանկարծ մարեցին ինչպէս կտրուած լարի հեծեծանք, եւ նա ամբողջ հասակով փոռուեց յատակին։ Միայն այդ ժամանակ Մարդարիտը թողեց իմ բաղուկը, ճչալով դուրս վաղեց եւ ընկաւ քրոջ վրայ։

Եւ այդ բոլորը—այն ճիչը, այն քրքիջը, Կլարայի ուշաթափութիւնը—կատարուեց այնպիսի արագութեամբ, որ ես կանդնած էի քարացած՝ առանց հասկանալու, թէ տեսածս ի՞նչ է, երա՞դ, թէ՞ իրականութիւն... Ես ուշքի եկայ միայն այն ժամանակ, երբ լսեցի Մարդարիտի օգնութիւն կանչող աղաղակը։ Մօտեցայ, մենք երկսով զգուշութեամբ բարձրացրինք կիսամեռ Կլարային եւ տեղաւորեցինք անկողնի վրայ։ Նա չոած աչքերը յառել էր առաստաղին, նայում էր անթարթ ու յամառ հայեացքով՝ ասես այնտեղից սպասելով մէկին։ Մարդարիտը երկու ձեռքով ծածկեց իր դէմքը, ծունկ չոքեց նրա կողքին եւ գլուխը կուացրած անկողնի վրայ՝ մեղմիւ հեկեկում էր։ Ես կանդնած մնացի հակառակ կողմում համր ու քարացած, չդիտէի ի՞նչ անել, ի՞նչ ասել։ Սակայն իրեն ինձ համար կամաց-կամաց պարզուում էին, կատարուել էր այն, ինչց այնքան դողում էր Մարդարիտը, մեր գլխին կուտակուած փոթորիկը պայթել էր յանկարծ, մեղնից անկախ, մեղնից դուրս, եւ մենք շանթահարուած էինք։ Վերստին յիշեցի գիշերուայ անցքերը, յիշեցի գետի գոսոյը, փոքրիկ աղջկայ հեծեծանքները իմ լուսամուտի տակ, որ անշուշտ մի երազ էր։ ասել է, որ ես էլ քնով էի անցել, ինչպէս եւ Մարդարիտը, լուսաբացին մօտ զարթել էր Կլարան եւ բաց դոնից տեսել էր մեղ. մնացածը հասկանալի էր։

Յանցագործ էինք առանց յանցապարտ լինելու, դժբախտ է-ինք ու խորտակուած վերջնականապէս։ այժմ սարսափելի իրողութեան հանդէպ սիրտ չէինք անում իրար նայելու։ Այդ լուռ

ու գունատ ուրոււականը, որ ձգուած էր մեր առաջ անկողնի մէջ, իր քար լուսթեան տակ ծածկում էր մի անողոք դատավճիռ մեր դէմ՝ արձակուած ո՛վ զիտէ ում ձեռքով։ Ո՞ւր է բանականութիւնը, հաշուի առնուած իրերի տրամարանութիւնը, ո՞ւր է անհատականութիւնը իր անրոնարարելի իրաւունքներով, ո՞ւր է զերադոյն ներդաշնակութիւնը յանցանքի եւ հատուցման մէջ. մեղ զեկավարող, մեր ողբալի գոյութիւնը պայմանաւորող իրերը մի՞թէ մեղանից անկախ, մեղանից դուրս են միշտ։ Ո՞վ է մեղ տանում, ո՞ւր եւ ինչո՞ւ։ Ահա մեծ լուսթեան մէջ մեղ անհասկանալի ու խաւար ոյժեր կամաց-կամաց, վայրիեան առ վայրիեան դարբնել էին մեր բախտը կաշկանդող զդթաները եւ այժմ դարան մտած որսորդների պէս յանկարծակի կապոտում, պրկում էին մեղ՝ անկարող դարձնելով մի հատիկ քայլ անելու դէպի մեր երազած երջանկութիւնը կեանքի մեծ ճանապարհով։ Խեղճ, ողորմելի ու անդօր էինք այդ ոյժի առաջ, որին համարում ենք կոյր դիպուած, եւ որը երեւի մեղ անհասանելի իր տրամարանութիւնը, իր զարհուրելի բանականութիւնն ունի, քայլում է դէպի մութ նպատակ-ներ՝ դատ-դատ բախտերն ու անհատները իր ձեռքին իրը արիւնոտ շաղախ գործածելով։ Շաղա՛խ են, շաղախ, ե՛ւ սէր ու բոյր, կեանք ու արեւ, յոյզեր ու յոյսեր, ծիծաղ ու արցունք, երիտասարդութիւն ու վայելքներ, երազներ ու ցաւեր, ողջ շաղախ են լոկ մի յաւիտենական չէնքի, որի ինչ լինելը չդիտենք եւ որը շինուում է, շինուում, բայց վերջ չունի։

Փշուած էինք ու անյոյս. Մարդարիտը լալիս էր, իսկ իմ գլխում դառնում էին սեւ մտքերը ժիորով, եւ հողիս մխում էր։ Սարսափի պէս մի բան էր թագաւորում սենեակում, մեր չուրջը, մեր գլխի վերեւ եւ մանաւանդ կլարայի բաց մնացած, չուած աչքերում։ Ո՞ւհ այդ աչքերը, այդ քարացած բիբերը... ես աշխատում էի չնայել նրանց, խոյս տալ այդ սպանիչ հայեացքից, որ մարդկային չէր. կ'ուղէի գոնէ, որ նա թարթէր, մի շարժում դործէր, մի բան ասէր, թէկուզ անհծէր մեղ այնպէս, որ բառերը հալուած մետաղի պէս կաթ-կաթ ընկնէին մեր գլխին, այրէին, փոթոթէին։ Բայց նա անշարժ էր ինչպէս մի մարմարէ մահարձան մի հին գերեզմանի վրայ. նրա գունատ, մահատեսիլ դէմքի եւ ոչ մի ջիլը չէր շարժուում, շրթունքը չէր գողուում, կոպերը չէին թարթում, ճակատը չէր կնճուում, նրա հողում յանկար-

ծակի մեռան յոյզ ու իղձ, ցաւեր ու երազներ՝ տեղի տալով գերեղմանային ցրտութեան ու խստութեան։ Եւ այդ արձանացած դիմակը այնուամենայնիւ նայում էր այն յամառ ու անվերջ հայեացքով, որով մեռնողները կարծես պրապտում են անհունը, ուր տիեզերքի աներեւոյթ ոյժերը միլիոնների բախտերից ու երազներից գարբնում են յաւիտենականի շէնքը։ Նա նայում էր, եւ ինձ թուում էր, թէ նա տեսնում է, ե՛ւ իր, ե՛ւ մեր, ե՛ւ ամէնքի ճակատագիրը, խօսում է գերմարդկային լեզուով մեր կեանքը ղեկավարող մութ, անսանձ կարողութեան հետ, կեանքի առեղծուածի լուծումն է փնտուում, այս գերագոյն ժամին վերջապէս ճգնում է իմանալ, թէ ո՞ւր է խորհուրդը մեր սեւ գոյութեան, ինչո՞ւ մինչեւ իսկ սէրը, որի վրայ իրը թէ հաստատուած է տիեզերքը, նոյնպէս ցաւոտ է, ինչո՞ւ համար ինքը աշխարհ եկաւ, ապրեց ու տառապեց եւ անցնում է այժմ որպէս մի չնչին հիւլէ տիեզերական խօլ մրրիկի մէջ։

Սարսափելի հայեացք, ընկճող, խեղդող հարցեր, որոնցից կ'ուղէի աղատուել. նրանք այրում էին իմ ուղեղը շիկացած երկաթի պէս, ես սասանուած էի... կանգնած էի տեղումո՝ չիմանալով ինչո՞ւ եւ տառապում էի կարծես իրականութիւնից կտըրուած մի երազական աշխարհում։ Սա մի տանջանք էր, որի գիտակցութիւն ունէի եւ որից խուսափելու հնարաւորութիւնից զրկուած էի։

Սենեակում դեռ իշխում էր վաղորդեան կիսախաւարը, մի պարզ, խորհրդաւոր ստուեր, որ պատել էր կահ-կարասիքը, պատերը՝ ինչպէս մի նուրբ քօղ, գիշերային մթութեան յետին մնացորդ, որ անկարող էր եղել ծածկել մեղ պատահականութեան այս կոյր եւ ահագին հարուածից։

Դրսում գիւղը կամաց-կամաց շարժւում եւ գործի էր կենում. անսառնները անհոգ բառաչով դիմում էին գաշտ. լսում էին ճանապարհով անցնող գիւղացիների հատ-հատ ձայներ. ամենօրեայ կեանքն էր վերսկսում միակերպ, անյոյզ եւ երջանիկ անդիտակցութեամբ, իսկ մենք մեր տեղում որպէս յանցաւորներ, որոնք անկարող են՝ խոյս տալ իրանց յանցագործութեան տեղից։ Ո՞վ է Աստուածային գիտակցութեանը կցորդել ցաւերի այս ահագին բաժինը։

— Թո՛ղ ինձ մենակ :

Ես ակամայ չորս կողմօնայեցի՝ զարմացած, որ քար լոռւթեան մէջ խօսող կայ : Սակայն այդ նա՛ էր, Մարգարիտը :

— Բայց այս ժամին... այս կացութեան... դնամ, տանտիկնոցը կանչեմ :

— Թո՛ղ ինձ, խնդրում եմ, մենակ եւ ոչ ոքի մի՛ կանչիր, — կրկնեց նա առանց գլուխը բարձրացնելու :

Շեշտը վճռական էր . զգացի, որ աւելորդ կը լինէր հակածառել, եւ յետոյ ես մի՞թէ կարող էի իմանալ, թէ ի՞նչ է փնտում այս խեղճ ու տանջուած հոգին իր միայնութեան մէջ : Հողիները ծովեր են, որոնց յատակը երբեք արեւի չողը չի լուսաւորում : Դուրս եկայ դդուշութեամբ, բայց անկարող եղայ տնից հեռանալ, փակուեցի իմ սենեակում :

Արեւը կամաց-կամաց բարձրացաւ հորիզոնի վրայ, որտեղից ամպերը իսպառ քաշուել էին . պայծառ երկնքի տակ բացուեց աշնանային մի սիրուն օր : Լուսամուտից թափանցած չողերը ողողել էին սենեակս ոսկեգոյն ցոլքերով, որոնց մէջ լողում էին բոլոր առարկաները, բայց իմ հոգում գեռ իշխում էր մութ դիշերը : Մտքերի, տպաւորութիւնների բեռով ծանրացած դլուխս երկու ձեռքով բռնած՝ ընկայ աթոռի վրայ . ի՞նչ էր կատարում ինձ հետ, ո՞ւր էի ընթանում այսպէս, ասել չէի կարող . զգում էի միայն, որ կեանքիս յենակէտը կորցնում եմ ինչպէս նաւարեկումից յետոյ ծովի ալիքների կատաղութեան մատնուած մի դժբախտ արարած, որ ափ ու փրկութիւն դտնելու էլ յոյս չունի :

Խոհերս ընդհատեց մի կատքի աղմուկ, որ ըստ երեւոյթին մեր դրանը կանգ առաւ : Անմիջապէս յետոյ ես լսեցի, թէ ի՞նչ-պէս տանտիկինը շտապ-շտապ բարձրացաւ, բաց արեց հարեւան սենեակի դուռը եւ բացականչեց .

— Զեր մայրը, տիկի՞ն :

Թեթեւ սարսուռ անցաւ մարմնովս : Ա՛յդ մայրը... նրա գալուստը խռովեց ինձ . ի՞նչ կապ կար նրա եւ իմ մէջ . նա տակաւին ոչինչ չդիտէր, ոչինչ, եթէ դիտենար էլ, մի՞թէ մեղաւոր էի նրա առաջ, մի՞թէ յանցագործ էի . անշուշտ ոչ, բայց եւ այնպէս դողում էի, կարծես այդ կինը դալիս էր յատկապէս ինձանից հաշիւ պահանջելու իր զաւակի դժբախտութեան համար : Ընկերական, հասարակական յարաբերութիւնների, իրար բաղխուող կըր-

քերի, բախտերի բարդ ցանցի մէջ մայրերը միշտ իրանց առանձին եւ եղակի իրաւունքներն ունին, որոնք չեն ենթարկվում սովորական տրամաբանութեան, որովհետեւ նրանց հիմունքը տարբեր է: Անկախ բոլոր հանգամանքներից, անհատական իրաւունքներից, օրէնքներից, բարուական հասկացողութիւնից՝ մայրը իր զաւակի երջանկութիւնն է փնտում աշխարհում, կատարեալ, գեղեցիկ երջանկութիւնը, որպիսին միայն նա՛ դիտէ երազել: Ոչ ոք եւ ոչինչ չի կարող հերքել նրա այս գերազոյն իղձը, որովհետեւ նա մայր է, եւ նրա առաջ մեղաւոր են բոլոր նրանք, որոնք իր սիրելիների դժբախտութեան պատճառ են հանդիսանում թէկուզ ակամայ: Վշտացած մայրութիւնը մի ծանր վիրաւորանք է մայր բնութեանը: Եւ ես գողում էի երեւի հէնց այդ մայրութեան առաջ, իմ գոյութիւնը հակառակ իմ ցանկութեան դարձել էր ցաւերի աղբիւր նրա զաւակների համար. բացատրութիւն չկար, նա մայր էր...

Մէկը դուռս ծեծեց եւ առանց սպասելու իմ ձայնին՝ թափով ներս ընկաւ, տանտիկինն էր, դունատ, վախեցած, խղճալի:

— Ա՛խ, ո՞րպիսի դժբախտութիւն, պարո՞ն, դուք երեւակայել չէք կարող. խե՞ղճ օրիորդ, նա համարեա կիսամահ է... գիշերը կաթուածահար է եղել եւ անկողնում քարացել: Մայրն եկաւ... խե՞ղճ Մարդարիտ. ի՞նչպէս է պատահել. երեւի դուք էլ լսել էք որեւէ ձայն, այնպէս չէ՞, անհանգիստ էք եղել. իսկ Մարդարիտն ի՞նչպէս է վախեցել, նա էլ կարծես ուշքը կորցրել է, չի իմանում՝ ի՞նչ է անում: Լաւ է, մայրն եկաւ, պատրաստըում են մեկնելու անմիջապէս. իսկե՞ր... ի՞նչպէս են արտասում, լսո՞ւմ էք...

Ինչպէս չէ... բոլոր ժամանակ, ինչ խօսում էր պառաւը, իմ ուշքը դրաւել էին միւս սենեակից լսուող մեղմ հեծեծանքները. մա՞յրն էր արդեօք, թէ՞ Մարդարիտը, ես չգիտէի, բայց դա այլեւս հետաքրքիր էլ չէր. երկուսի արցունքն էլ հաւասարապէս ինձ էր վերաբերում, ես բաժին ունէի, ես լալիս էի նրանց հետ, ապրում էի նրանց ցաւը, հոգիս լուռ մխում էր:

— Ո՞վ կը սպասէր, շարունակեց տանտիկինը. երէկ նա լաւ էր, իսկ այսօր, սարսափելի է, միայն նայում է. այս յարկի տակ այսպիսի դժբախտութիւն գեռ երբեք պատահած չէր: Զեղ համար էլ երեւի ծանր է, ի՞մ սիրելի պարոն, հարեւանութիւնն ու-

բախ չեղաւ, բայց ի՞նչ արած, ո՞վ կը սպասէր, Տէ՛ր Աստուած, սկզբում ամէն ինչ ա'յնպէս լաւ էր ընթանում եւ յանկարծ այսպէսի վախճան :

Ախ, այս պառաւը, որ գիտէ միշտ անտանելի լինել. չգիտէի ինչպէս խօսակցութիւնն ընդհատել եւ ճանապարհ դնել նրան :

— Ի՞նչ պայծառ է օրը, այնպէս չէ՞ , տիկի'ն :

— Այո՛, օրը պայծառ է, այսուհետեւ մենք շատ այսպիսի օրեր կ'ունենանք, սկսում է մեր լեռների փոքրիկ ամառը :

— Յետոյ այնուամենայնիւ ձմեռը կը գայ. դաժան, մահաշունչ :

— Հա՛, ի հարկէ, աշխարհի բանն է. ամէն ինչ իր ձմեռն ու վերջն ունի. խեղճ Կլարա, նրան շուտ վրայ հասաւ :

— Աշխարհի բանե՞րը...

Ես սկսեցի մեղմիւ սուլել չգիտեմ ինչ... տանտիկինս լոեց եւ դարմացած նայում էր, երեւի արածու նրան թւում էր տարօրինակ :

— Դուք գունատ էք, ինչո՞ւ էք գունատ :

— Մի՞թէ :

— Այո՛, շատ գունատ. ի՞նչ է պատահել. երեւի գիշերը վատ էք քնել. հասկանում եմ, բոլորովին մօտիկ այսպիսի դժբախտութիւն... ի հարկէ՝ դժուար էր քնել :

— Աշխարհի բաներն են այդպէս, մէկը գունատ է, միւսը լալիս է, իսկ օրը պայծառ է :

— Խեղճե՞րը, հա՛, լալիս են... ես էլ խօսքով ընկայ, հազար ու մի բան պէտք է անել, մեկնում են ախր : Դուք ցած գնացէք նախաճաշելու, այսօր մեն-մենակ կը լինիք. ո՞ւհ, պառաւները, մոռացայ, որ եկել էի ձեզ նախաճաշի կանչելու :

Վերջապէս թողեց ինձ. ա'յնքան բան ունէի մտածելու: Վայրկեանները խոհերով բեռնաւորուած՝ պաշարել էին դլուխս, չգիտէի ինչից սկսել, ուր յանդել. տրամաբանութիւնը խոյս էր տուել, եւ ուղեղումս ստեղծուել էր մտքերի մի ժխոր: Մի բան միայն գիտէի խիստ որոշ, որ «նրանք մեկնում են այսօր»: Այդ ինձ ոչ զարմացնում էր, ոչ վշտացնում, նոյնիսկ ինձ թւում էր անհրաժեշտ, որ նրանք մեկնեն: Յետոյ գարճեալ սկսեցի սուլել ինքս ինձ եւ յանկարծ զարմանքով ու դժգոհութեամբ նկատեցի, որ այդ տարօրինակ, անպատեհ սուլոցի մէջ ես կամա-

յուր ասում եմ՝ «Նրանք մեկնում են, նրանք մեկնում են, մեկնում են»...

Եւ նրանք մեկնեցին երեկոյեան դէմ, երբ հասաւ յատկապէս պատուիրուած փակ կառքը։ Ես գուրս եկայ միայն այդ ժամանակ եւ մօտեցայ մօրը։ Խօսք չունէի ասելու, նայել էլ չէի կարողանում, նա երեւի հասկացաւ յուզմունքս եւ ինքը առաջինը մեկնեց ձեռքը։

— Շնորհակալ եմ, պարո՞ն, դուք անչափ բարի էք, դուք միշտ այնպէս բարի էք եղել, մենք ձեղ էլ երբէք չենք մոռանայ։

Մարդարիտը ձեռքս բոնելով հազիւ կարողացաւ շշնջալ։ «Սպասեցէք նամակիս»։ Եւ կառքը շարժուեց դանդաղութեամբ։ Ես ու տանտիկինը կանդնած մի առժամանակ նայում էինք գնացողների յետեւից, յետոյ կառքը պտոյտ դործեց, անցաւ փոքրիկ բլրի յետեւը, եւ ամէն ինչ ծածկուեց։

Նոյն վայրկենին կարծես աշխարհն ամայացաւ ինձ համար, եւ ես մնացի մեն-մենակ, աննպատակ, անմիտ քաշ տալու իմ արտասուելի գոյութիւն անծայր անապատների միջով։ Դարձեալ նոյն չարագուշակ սուլոցը՝ «Նրանք մեկնեցին, նրանք մեկնեցին, մեկնեցին»...

— Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած — մըմնջում էր պառաւը, որպիսի դժբախտութիւն. . . դարձեալ մնացինք մենակ. . . չուտով երեւի դուք էլ կը չուէք տարափոխիկ թռչունի պէս, եւ ես կրկին կը մնամ մեն-մենակ. . այնպէս տխուր է այստեղ ձմեռը. քամիներ են փչում, ձիւն է թափուում անընդհատ, գիշերը խաւար, երկար, ցերեկը անլոյս, վհատեցուցիչ եւ մարդ մենակ, մենակ. . .

Ես լուռ նայում էի այս խղճուկ պառաւին, որ այժմէն սղում էր իր միայնութիւնը եւ ամենեւին չէր կասկածում, որ աւելի մենակները, աւելի մոռացուածները կան աշխարհում. սարսափելի՝ միայնութիւն բազմութեան մէջ, ամբոխի մէջ։ Մենակ, մենակ, մարդիկ բոլորը մենակ են, եւ հոգիների ձմեռն աւելի խեղդող է, քան բնութեանը։

XIV

Հի՞նգ օր էր... դժոխքի օրեր, եւ գեռ այն նամակը չկար: Շուրջս իշխող դատարկութեւնը ոչնչալ չէր լցւում: Տանտիկինս՝ անծանօթ իմ հոգու սեւ փոթորկին, խօսում էր անընդհատ, միամիտ ու յիմար եւ առանց հասկանալու արածը՝ չօշափում էր իմ թարմ վէրքերը: Ես փախչում էի տնից, նրանից, զնում, նստում էի գետափին եւ ամբողջ ժամերով զլուխս ձեռներիս մէջ առած՝ լսում էի նրա շառաչը, միակերպ, ծանր: Եւ տուն էի վերագառնում երեկոյեան մռայլ ու մռլար, հարեւան սենեակում իշխող քար լուռթիւնը խեղդում էր ինձ, իսկ սպասուող նամակը գեռ չկար:

— Տիկին, ես այսօր մեկնում եմ:

— Մեկնում էք, ես այդպէս էլ դիտէի. տարափոխիկ թըռչուններ, բարի' զնաք, բայց այնտեղ մի նամակ ունիք, հէնց այս բոպէին բերին, աւելացըեց տանտիկինս անտարբերութեամբ:

Ծնկներս դողացին, սիրաս թնդաց, խեցի նամակը, շտապով սենեակս բարձրացայ եւ դողդոջուն մատներով բաց արի. նրանից էր...

«Քոյրս մեռաւ, իմ դժբա՛խտ բարեկամ, մենք նրան թաղեցինք երէկ եւ նրա հետ իմ սիրտը, խոցոտուած, արիւնոտ սիրտը: Ամէն ինչ վերջացաւ... փոթորիկը պայթեց, անցաւ՝ թողնելով իր յետեւից մահ ու գերեզման: Հոգուս տառապանքն անհուն է, արցունքները քարացել են այնտեղ, և նրանց վրայ թեւատարած սաւառնում է ոչնչութիւնն ու խաւարը:

«Այս գիշեր երկար ժամանակ թափառել եմ մեր պարտիզի ծառերի տակ. քո մասին էի մտածում, իմ խեղճ ընկեր, եւ ամէն անդամ, երբ քո պատկերը ներկայանում էր աչքիս, իսկոյն յայտնում էր քրոջս ուրուականը, գունատ, աչքերը չուած, կեանքի, երջանկութեան ծարաւը յաւիտեան քարացած դէմքին, դալիս կանգնում էր մեր երկուսի մէջ, մեռելատիպ ու զարհուրելի: Յետ փախայ պարտիզից, ուր ծառերը ողջ ուրուականներ էին, եւ ամէն տեղ նա՛ էր, նա՛ էր... Օ՛, այդ ուրուականը, ի՞նչպէս ապատուեմ նրանից, ո՞ւր փախչեմ...

«Դու չդիտես, թէ սոսկումի ու ցաւի այս օրերում ի՞նչ ա-

հագին չափերի է հասել իմ դժբախտ սէրը դէպի քեզ, եւ ես... ների'ր ինձ, հոգի'ս, ես աշխատում եմ խեղդել այն. կ'ուզէի մասմաս՝ ինչպէս իմ արիւնոտ սրտի կտորները, դուրս քաշել իմ կրծքից այդ խղճուկ սէրը, որ հեծեծում է ու լալիս հիւանդ երեխայի պէս գիշեր ցերեկ՝ եւ չի ուզում բաժանուել ինձանից : Մեր ցաւոտ կեանքի ընթացքում քրոջս ուրուականը երկու ճանապարհների հանգոյցում սպառնալի կերպով ցցուած մի արձան է, որ ցոյց է տալիս մեր ուղին դէպի հակառակ կողմեր : Քայլենք, քայլենք լուրթեամբ :

«Եւ այսպէս մեր ճանապարհներն այսուհետեւ տարբեր են, ի'մ ընկեր, ոչինչ չի կարող հեռացնել իմ աչքից քրոջս ուրուականը, որ քայլ առ քայլ ընթանում է ինձ հետ ամէն տեղ : Գիշերներ ունեցայ, սոսկումի, զարհուրանքի գիշերներ, երբ իմ երեւակայութիւնը փորձում էր խաղալ անցեալ սպատկերների հետ, եւ միշտ քո փոխարին նա՝ այն ուրուականը ցցուեց աչքիս առաջ խաւարի մէջ, միշտ քարացած հայեացքը դէպի անհունը, միշտ իր մահատեսիլ դունատութիւնը, իր տանջանքը սպառնալի կերպով ի ցոյց գրած երկնքին, աշխարհին, ինձ : Ա՛հ, ես մի կենդանի ողջակէզ եմ այն աստծուն, որի անունն է կոյր պատահականութիւն եւ որ այնքան հզօր է մարդկային բախտերը տնօրինելիս : Ի՞նչ յանցանք եմ քաւում այս զարհուրելի զոհով, ես չգիտեմ, բայց զգում եմ, որ անկարող եմ ուրիշ կերպ վարուել :

«Ոչինչ ազատ, ոչինչ ինքնուրոյն, ինքնագլուխ այս մեր ողբայի աշխարհում : Մեռելներ ու կենդանիներ, ծանօթներ ու անծանօթներ, թշնամիներ եւ բարեկամներ ողջ միացած են իրար հետ աներեւոյթ կապերով, քաշքում, տրորում, մաշում, կրծոտում են իրար եւ կեանքը դարձնում ցաւերի, դժբախտութիւնների մի անհատնում շարք : Եւ այդ բոլորի վրայ իշխում է միշտ մեծ լուռութիւնը, համը հսկայական վհուկը, միակ ինքնակալը, միակ տէրը, միակ անհասանելին, որի թեւերի տակ անհատներ եւ հասարակութիւններ սողում են երջանկութեան երազների յետեւից՝ երբեք չհասնելու համար :

«Ես երկար մտածել եմ քո «Լուրթեան» մասին, իրաւունք ունիս, իմ դժբա՛խտ բարեկամ, նրա տակ է թագնուած իսկական կեանքը, նա է, որ իր առանձին օրէնքներն ու տրամարանութիւնն ունի, որ փշրում է եւ անցնում դէպի մի գերագոյն նպատակ, եւ

սամերկ, բազուկներն ու կուրծքը հոլանի, հարուստ մազերը խառնիխուռն փոռւած ուսերին, աչքերը չուած ու զայրացկոտ, դէմքը ծովուած, բերանը բաց կարծես մի անհնարին սարսափից, ձեռները բողոքող ու սպառնալի ձեւով, բաց դռներից դէպի մեզ տարածած։ Նա՛ էր ճշում այնպէս զարհուրելի կերպով։ Այս սպանիչ պատկերը ինչպէս մի լացուցիչ փայլակ անցաւ իմ աչքով, յետոյ Կլարան կանգնած տեղը քրքջաց զիւ, երկար, եւ այդ քըրքիջի հնչիւնները, նրա այլանդակ ելեւէջները գնալով գնալով նուաղեցին, ապա յանկարծ մարեցին ինչպէս կտրուած լարի հեծեծանք, եւ նա ամրող հասակով փոռեց յատակին։ Միայն այդ ժամանակ Մարդարիտը թողեց իմ բազուկը, ճչալով դուրս վաղեց եւ ընկաւ քրոջ վրայ։

Եւ այդ բոլորը—այն ճիչը, այն քրքիջը, Կլարայի ուշաթափութիւնը—կատարուեց այնպիսի արագութեամբ, որ ես կանգնած էի քարացած՝ առանց հասկանալու, թէ տեսածո ի՞նչ է, երա՞զ, թէ՞ իրականութիւն... Ես ուշքի եկայ միայն այն ժամանակ, երբ լսեցի Մարդարիտի օդնութիւն կանչող աղաղակը։ Մօտեցայ, մենք երկսով զգուշութեամբ բարձրացրինք կիսամեռ կլարային եւ տեղաւորեցինք անկողնի վրայ։ Նա չուած աչքերը յառել էր առաստաղին, նայում էր անթարթ ու յամառ հայեցքով՝ ասես այնտեղից սպասելով մէկին։ Մարդարիտը երկու ձեռքով ծածկեց իր դէմքը, ծունկ չոքեց նրա կողքին եւ գլուխը կուացրած անկողնի վրայ՝ մեղմիւ հեկեկում էր։ Ես կանգնած մնացի հակառակ կողմում համր ու քարացած, չղիտէի ի՞ն՞չ անել, ի՞նչ ասել։ Սակայն իրերն ինձ համար կամաց-կամաց պարզուում էին, կատարուել էր այն, ինչից այնքան դողում էր Մարդարիտը, մեր գլխին կուտակուած փոթորիկը պայլթել էր յանկարծ, մեղնից անկախ, մեղնից դուրս, եւ մենք շանթահարուած էինք։ Վերստին յիշեցի գիշերուայ անցքերը, յիշեցի դետի դուոցը, փոքրիկ աղջկայ հեծեծանքները իմ լուսամուտի տակ, որ անշուշտ մի երազ էր։ ասել է, որ ես էլ քնով էի անցել, ինչպէս եւ Մարդարիտը, լուսաբացին մօտ զարթել էր Կլարան եւ բաց դռնից տեսել էր մեզ։ մնացածը հասկանալի էր։

Յանցագործ էինք առանց յանցապարտ լինելու, դժբախտ էինք ու խորտակուած վերջնականապէս։ այժմ սարսափելի իրութեան հանդէալ սիրտ չէինք անում իրար նայելու։ Այդ լուռ

ՄՈԼՍԻՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ



ՄՈԽԻՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ

Այն առաւօտ տիկին Սօֆիան շատ ուշ զարթեց :

Ննջարանի թանձր վարագոյների բացուածքից թափանցող աշնանային արեւի ցնցուղները քնքօրէն շառագունել էին սենեակի կիսախաւարն ու պատերը եւ գունաւոր կիսաստուերով դողդողում էին կահ-կարասիների վրայ :

Երիտասարդ կինը՝ խորունկ մտածմունքի մէջ, անշարժ պառկած էր չքեղ, փափուկ անկողնում իր մտախոհ ու վշտոտ հայեցքը ծաղկանկար առաստաղին յառած : Նրա սեւ ու փարթամ մաղերը ալիքաւոր ու քմահան ծալքերով փոռւել էին բարձերի սպիտակութեան վրայ՝ ինչպէս մութ ու գալարուն ամպը լերան ձիւնապատ կատարին :

Նա ներվոտ շարժումով մի փոքր յետ ձգեց վերմակը — սենեակի օդը տաք էր :

Մետաքսէ վարդագոյն շապիկը բաց թողնելով նրա երկար մարմարէ պարանոցն ու ձիւնաթոյր լանջը, ակնապարար վայելշութեամբ ծածկում էր կուրծքը, որ մեղմիւ վերուվար էր լինում ինչպէս վաղորդեան թափանցիկ մշուշի տակ խայտացող ալիք : Խոչոր, երազուն աչքերի տակ մուտք կապոյտ գծերը — անքուն, տագնապալից գիշերուայ լուռ վկաներ, է՛լ աւելի հրապուրիչ ու խորունկ էին դարձնում գեղանի կնոջ հայեացքը, որի մէջ լողում էր վիշտը, որպէս նօսր ամպը երկնքի անհուն կապոյտի վըրայ :

Անհոդ ու անդիտակից նաղանքով նա բարձրացրեց գլուխը եւ չքեղ մաղերը քաշ ընկան՝ բարձունքից դահավէժ ալիքներով . նա թափով ի մի հաւաքեց նրանց ճոխ փնջերը, ուսի վրայով ձգեց կրծքին, ապա հոլանի կոները բոլորած պսակաձեւ՝ ձեռները գլխի տակ դրեց, ասես ինքն իրան շշնջալով՝ «այսպէս աւելի լաւ է»...

Եւ կրկին աչքերը յառեց առաստաղին անթարթ ու մտախոհ :

Ննջարանի լուռ խաղաղութեան ու վարդագոյն մշուշի մէջ նա գեղեցիկ էր ինչպէս մի դիւթիչ երազ :

Տարտամ վիշտը նրա դէմքին աւելի եւ աւելի խորունկ էր դառնում որպէս երեկոյեան նիրհող լճի վրայ թանձրացող մէդը :

Պատկերներ ու յուշեր մերթ ցաւոտ, մերթ ժպտուն, եւ միշտ հրապուրիչ պաշարել էին գլուխը, աշնան հողմերի բերանն ընկած տերեւների պէս խելայեղորէն տարւում էին, գալարւում, բարձրանում, իջնում, ցրիւ դալիս, կրկին կուտակւում եւ այսպէս անվերջ...

Սեփական կեանքն էր փոռւել իր աչքի առաջ:

Սօֆիան դիտում էր իր անցած օրերը, ինչպէս մի հին նուիրական գիրք, որի փոշոտ ու գունատ թերթերի արանքներում շարուած են ծաղկի թերթիկներ, վաղուց հետէ չորացած, դալուկ, բուրմունքից զրկուած, եւ որոնք սակայն պահում են հին յուշերի պատկերները: Թախծոտ համբերութեամբ թերթում էր Սօֆիան իր կեանքի գիրքը, մէկիկ-մէկիկ նայում էր իր յուշերի չորացած ծաղիկներին եւ նրա հոգին լուռթեան մէջ մերթ ժպտում էր, մերթ լալիս:

Եւ ի՞նչ շատ էին այդ յուշերը. և նրանցից իւրաքանչիւրը յարուցանում էր հաղար ու մի խոհեր, յոյզեր, պատկերներ ու ամէնքը միասին թիթեռնիկների խօլ ու խայտարդէտ երամով՝ դարձութիւն իրան, տեսնում էր իր անցեալը եւ անողոք դատաւորի պէս քմահամ լողում էին նրա վշտի դունատ մշուշի մէջ:

Կախարդական մի ձեռք այսօր հզօր շարժումով յանկարծ դադար էր տուել նրա գոյութեան ընթացքին եւ երիտասարդ կինը կանդ առած կեանքի մեծ ճանապարհին, բաց աչքով տեսնում էր ինքն իրան, տեսնում էր իր անցեալը եւ անողոք դատաւորի պէս քրքրում էր սեփական հոգին վճիռ արձակելու համար:

Պատկերը վհատեցուցիչ էր եւ դատավճիռն անողորմ — նա ինքն իրան խարել էր՝ կապելով կեանքը մի մարդու հետ, որ միշտ թափուր պիտի թողնէր խորունկ ու բուռն յոյզերի տենչացող իր հոգին: Մեղմացուցիչ հանգամանք չկար, իր սեռին յատուկ պերճ երեւակայութեամբ նա պատրանքներից հիւսել էր երջանկութեան յնորական մի աշխարհ, որ այժմ ինքնաքննին հոգու սառը չնչից ցրիւ էր դալիս շամանդաղի պէս:

Նա խորը հառաջեց:

Եւ դիշերուայ պէս սեւ ու ծանր թախիծը իջաւ, սղմում էր նրա կուրծքը, կոկորդը. նա խեղդւում էր օդի պակասութիւնից:

Տենդոտ շարժումով իսպառ գէն չպրտեց վերմակը, ցած թըռուաւ անկողնից, կանգնեց փափուկ գորդի վրայ եւ յանկարծ ինքն իրան տեսնելով պահարանի դրան ահագին հայելու մէջ՝ մնաց քարացած: Ասես իր ամուսնութեան ութ տարիների ընթացքում

առաջին անգամ էր տեսնում հայելու մէջ իր ամբողջ գեղանի մերկութիւնը, իր քնքոյց կանացիութիւնը։ Ամուսնական կեանքն անցել էր այդ հապուրիչ կերտուածքի վրայով խնայելով նրա կուսական թարմութիւնը, ինչպէս որ կոյս էր մնացել նրա հոգին։

Եւ նայում էր անյագ ու երազուն...

Մազերը հարուստ փնջերով վար թափուեցին ինչպէս վլչող գիշեր եւ թիկունքի վրայից յորձանք տուին մինչեւ մէջը։ Քաջ ընկած շապկի տակից բարձրացող կողոր ուսը, հոլանի կոներն իրենց գիրդ վայելչութեամբ, թրթոռն լանջը եւ անհանդիստ շնչառութեամբ խայտացող կուրծքը կազմում էին մի ներզաշնակ, ակնապարար ամբողջութիւն, որ հանճարեղ արուեստագէտի ձեռքը կարծես նոր էր դուրս քաշել մարմարի զանդուածից։ Մերկ սրունքներին ու փոքրիկ ոտներին նայեց, որոնք զոյգ տառը կների պէս իրար կողքի սղմուած, ասես նայում էին հայելուն ու ժպտում։ Մի տեսակ մանկական հաճոյք էր զգում դիտել սեփական մարմնի գեղը, եւ քանի շատ հրապոյըներ էր երեւան հանում, այնքան աւելի էր տիսրում, դէմքի թախիծն աւելի էր թանձրանում։ Մետաքսէ շապկի խորհրդաւոր նըրութեան տակ թըրթըրացող այդ դիւթիչ գեղեցկութիւնը, որ սիրող տղամարդի համար հզօր ու խենթ ներշնչումների անհատնում աղքիւր պիտի լինէր, ութ տարի շարունակ մնացել էր ինչպէս հողի տակ թագցրած գանձ։

Եւ առաջին անգամ այնքան անխորհուրդ տարիներից յետոյ, նա հասկացաւ, թէ ինչո՞ւ մի տեսակ կուսական երկչուութեամբ միշտ սքողուած է պահել իր մերկութիւնը ամուսնու առաջ, հասկացաւ, թէ ո՞ւր է թաղնուած իր այդ յամառ, յարատեւ ամօթիածութեան աղքիւրը։ Միայն անհունօրէն սիրուած ու յաւէտ ցանկալի տղամարդի համար է կինը միշտ շռայլ իր հրապոյըներով, անսպառ՝ իր սիրոյ դողտրիկ, բազմազան արտայայտութիւններով։ Հակառակ դէպքում նա անգիտակցօրէն ժլատ է սիրոյ մէջ եւ իր սառնութիւնը բացատրում է ամօթիածութեան զգացմունքով։

Խղճուկ պատրանք, որ ժպտում է սիրոյ գերեզմանի վրայ ու տանելի դարձնում տաղտուկ զոյգերի անմիտ կենակցութիւնը։

Նա խորը հառաջեց ու յետ փախաւ հայելուց։

Յոզնած, յուսաբեկ շարժումներով, նա հազնւում էր։

Նա չնախաճաշեց . անցաւ ընդունարան , ուր աւելի լոյս ու օդ կար , ուր հեշտ էր չնչել , խորհել : Թախիծը , որ երէկուանից յանկարծ ներս էր խուժել բնակարանը , մեղմիւ սողաց նրա յետեւից ինչպէս սեւ գալարուն օծ : Սօֆիան ամէն կողմ զգում էր նրա սառը շունչը , նրա հազիւ լսելի փափսուկը իր զգեստի շրջինի , իր տարտամ ոտնաձայների , իր չնչառութեան , անդամ օդի նուրր , աննկատելի երերումների մէջ : Ամէն տեղից նա էր նայում , այդ խեղդող , սեւ թախիծը , ե՛ւ վարագոյրների ծալքերի միջից , ե՛ւ կահ-կարասիների տակից , անդամ պատերից թարթող նկարների հայեցքներով :

Աշնանային առաւօտեան դուրեկան արեւը թափանցել էր լուսամուտից եւ նրա շողերի հետ դողդողում էին յատակի վրայ փողոցի ծառերի ստուերները նկարագեղ ձեւերով :

Նոյն շողերի մէջ լողալով , յատակի վրայ խաղում էր երեք-չորս տարեկան մի մանուկ հիւանդոտ , գունատ ու նուազ : Նրա սրուած քիթը խիստ լայնացած քթածակերով , խոչոր , պաղ ու խոր ընկած աչքերը , որ կարծես ձանձրանում էին թարթել , մանկան դալուկ դէմքին տալիս էին խղճալի արտայայտութիւն : Երբ արեւի շողերն ընկնում էին ուղիղ երեսին , նրա անարիւն թափանցիկ մորթին թեթեւ գոյն էր ստանում եւ երակները երեւում էին , ինչպէս ճերմակ շղարշի վրայ բանուած կապտաւուն թելեր : Երբ շարժում էր , կամ փորձում վեր կենալ , թւում էր , թէ նրա բարակ ոտները կը ճկուին , երկուտակ կը ծալուին անդամ իր խղճուկ մարմնի շնչին ծանրութեան տակ :

Այդ քնքոյչ , եթերային արարածը կարծես ապրելու համար չէր եկել աշխարհ , այլ հէնց այնպէս , որ նայի ու անցնի , ինչպէս ուշ աշնանը լեռնալանջին ծլած մի մենաւոր ու գունատ ծաղիկ , որ առաջին հողմի հանդէպ թօշնում , գլուխը քաշ է ձգում փոշիների մէջ : Նա շատ էր դալուկ , շատ էր փխրուն կեանքի համար :

Եւ սակայն մանկութիւնը խօսում էր այդ վախտ , վատոյժ կազմուածքի մէջ . չնայելով իր ծայրայեղ թուլութեան , մանուկը փորձում էր բռնել յատակի վրայ խաղացող ժապաւինաձեւ , նկարչագեղ ստուերներն ու շողերը , մեղրամոմի պէս բարակ մատներով չանդուում էր յատակը , շրջաններ էր կատարում , ծափդարկում ու քրքջում նուազ , լալկան ձայնով :

Մայրը դիտում էր .

— Զդո՞յշ , Փօ՛րժիկ , վար չընկնես :

Նրա ձայնի մէջ մայրական խնամու հոգացողութիւնից դուրս անհանդիստ, երկչու մի շեշտ կար. ասես մանկան փոքրիկ սայթաքումից կախուած լինէր մի ահապին, մի սպառնալի վտանգ:

— Ես չեմ ընկնի, մա՛մա, պատասխանեց երեխան թոթովելով եւ կրկին անձնատուր եղաւ իր խաղերին:

Մայրը շարունակեց իր ընդհատուած մտածմունքները:

Իր ձեռքով նա խառնում էր անցեալի մոխիրները եւ նրանց տակ նիբհող կայծերը ճարճատում, բարձրանում էին եւ հրդեհը բորբոքում, փոթորկում էր էութիւնը:

Կրակը մխում էր վաղուց ի վեր, եւ հրդեհը բորբոքուեց յանկարծ...

* * *

... Հրդեհը հանգչում էր մոխիրների տակ եւ բռնկուեց յանկարծ...

Երէկ առաւօտեան նա անցնում էր փողոցով, ինչպէս շատ անդամ անցել էր: Ո՛չ մի տագնապ, ո՛չ մի անհանդստութիւն չէր խոռվում նրա հոգին: Նոյնիսկ ախորժ, ժպտուն տրամադրութեան մէջ էր: Օրը պայծառ էր, օդը՝ յստակ, աշնանային արեւը՝ դուրեկան: Եւ յետոյ՝ չէ՞ նա դեղեցիկ էր ու ջահել, ընդամէնը քսան եւ եօթ տարեկան... Նրա կայտառ, թեթեւ քայլուածքի, մարմնի ալեծածան շարժումների մէջ այն անըռնադատ վայելչութիւնը, այն խենթացնող նազանքը կար, որ յատուկ է միայն խսկապէս դեղեցիկ կանանց գնում էր ինքն իր համար եւ իր հետ տանում էր հրապոյըների մի ցնորական աշխարհ, ու այնքան հայեացքներ...

Վարդապոյն շրթունքների վրայ մի ժպիտ կար, դեղեցկութեան ու երիտասարդութեան ժպիտը... իր համար: Ամբոխի միջից անցնում էր, ինչպէս այծեամն անտառում, ուր բոլոր ծառերը գուրգուրում են նրան եւ ինքը՝ ո՛չ մէկին: Նա խաղացնում էր ուսին բաց հովանոցը, բայց արեւից չէր պաշտպանւում. հաճելի էր զգալ երեսին մեղմ ճառագայթները, որոնք խտաղում էին նրա նուրբ մորթին հեշտալի համբոյըի պէս: Յիշեց սակայն որ ամուսինը միշտ պատուիրում էր նրան պաշտպանել իր քնքոյչ մորթին արեւից, յիշեց ու բարակ, բոսորային շրթունքներով հեղնական շարժում արեց:

Ժպիտը խամբեց...

Կանդ առաւ զդեստեղինի խանութի առաջ, ուր ցուցադրուած

էին եղանակի պատշաճ նորութիւններ : Նայում էր երկար : Նրա ուշադրութիւնը գրաւեց ճապոնական տարազի մի վերնազգեստ, յիշեց, որ ամուսինը սիրում է նրան տեսնել արտասովոր, նորահնալը զգեստների մէջ եւ կրկին շրթունքների վրայ խաղաց նոյն հեղնութիւնը — զգեստ գնելու միտքը թողեց :

Փոքրիկ տղայի մի ձեռք սիրուն զգեստ ընկաւ աչքին, երեք-չորս տարեկանի յարմար : «Ժօրժիկին», մտածեց նա, «բայց այնպէս նիհար, այնպէս անոյժ է ինեղճիկը . բժիշկը պատուիրել է յատուկ զգեստ պատրաստել տալ նրա համար» : Ու տիրութեան մի քող իջաւ դէմքին, որ ժօրժիկն այնպէս նիհար է, այնպէս իուլակաղմ :

Հովանոցը պատացրեց ուսին եւ առաջ անցաւ :

Արտասովոր մի շարժում կար դէպի մեծ հրապարակը :

Անորոշ ու դորշ մի զանգուած՝ երերուն՝ համաչափ քայլ-ուածքով մեծ ծառուղիով դանդաղ իջնում էր դէպի հրապարակը :

Հասան :

Մի քանի դինուորներ շրջապատած էին մի հատիկ կալանաւոր : Անօրինակ ոչինչ չկար : Համարեա ամէն օր միեւնոյն փողոցներով ցեխերի ու աղքերի միջից տարւում էին ամէն կարգի կալանաւորներ մերթ ընկճուած ու վախկոտ, մերթ հպարտ ու համարձակ, եւ մերթ հեղնօրէն ցասկոտ մարդիկ, որոնք անցնում էին համարեա աննկատելի . սովորական երեւոյթ էր : Միայն փողոցի թափառաշրջիկ մանուկներն էին մի վայրկեան վաղում նըրանց յետեւից, ապա ցըիւ գալիս քրքալով :

Այսօր սակայն իրարանցումն ու հետաքրքրութիւնը մեծ էր :

Բոլորը վազում էին դէպի հրապարակը . բոլոր հայեացքներն ուղղուած էին դէպի մուայլ թափօրը . գործի մարդիկ անդամ մի վայրկեան կանդ առած մայթերի վրայ՝ դիտում էին . խանութպանները գլուխները գուրս հանած զոներից՝ թաթերի վրայ էին բարձրանում կալանաւորին լաւ տեսնելու համար . ոմանք՝ աւելի հետաքրքիրները, հեռուից քայլում էին զինուորների հետ, ուրիշները առաջ էին անցնում, անկասկած իրանք էլ չիմանալով ինչո՞ւ համար :

Ընդհանուր հետաքրքրութիւն ու շփոթ էր . ինչ որ խօսում էին, ինչ որ հաղորդում իրար կիսաձայն եւ դլուխներն օրօրելով :

Ամէնքի հետ նաեւ Սօֆիան կանդ առաւ մայթի վրայ եւ սպա-

սում էր, մինչեւ կալանաւորի թափօրը անցնի առաջից :

Եւ սուխնների կուռ շարքը գլուխներից բարձր, արեւի տակ փայլվելով օրօրւում էր, նեղանում, լայնանում : Ամբոխի աճող հետաքրքրութիւնից դժգոհ՝ զինուորները դաժանօրէն մոմուում էին, աւելի պինդ սղմում հրացանների կոթերը եւ կիտած յօնքերի տակից՝ խոժոռ հայեացքներ նետում այս ու այն կողմ :

Ահա նրանք մօտեցան . ահա արդէն անցնում են Սօֆիայի առաջից . զինուորներն աւելի էին, քան հարկաւոր էր մի մարդ տանելու համար : «Անկասկած խիստ կարեւոր կալանաւոր է, վտանգաւորներից», մտածեց Սօֆիան, թաթերի վրայ բարձրացաւ լաւ տեսնելու համար, նայեց եւ յանկարծ . . . ասես մէկն ուժգին խփեց նրա ծնկներին, որոնք դողդողացին, Սօֆիան երերաց, թեթեւ ճիչ արձակեց, յետ յետ քաշուեց դէպի պատը, ձախ ձեռքով սիրտը սղմած, որ խելայեղօրէն թրպրտում էր կրծքի տակ . ապա փորձեց նորից բարձրանալ, նորից տեսնել այդ դէմքը, բայց ուժերը դաւաճանեցին նրան : Գունատ ու դողդողուն՝ նա աջ ձեռքով փակեց մթաղնող աչքերը եւ ձախ արմունկով յենուեց պատին չընկնելու համար ու մնաց քարացած : Սուխնների միջից անխոռվ ընթացող այդ գունատ, բարեկազմ երիտասարդը նա էր, Սուրէնը, իր առաջին եւ միակ սիրոյ անզուգական առարկան :

Մի վայրկեան, միայն մի զարհուրելի վայրկեան — որ փայլակի պէս վառուեց ու անցաւ՝ նրանց հայեացքներն իրար փարեցին քոյր բոցերի պէս . Սօֆիան շքնաղ երազի պէս տեսաւ այն աչքերը, որոնք մի օր փոթորկել էին նրա կուսական հողին եւ որոնք այսօր էլ նոյնն էին, ինչպէս շատ տարիներ առաջ : Տեսաւ . . . ու կարծես սասանեցուցիչ կայծակ ճայթեց նրա դլիսին, չըմեցրեց եւ մի ուժեղ ձեռք բռնեց նրա թրթուն սիրտը, բոլոր թափով ուղաց, եւ բաց թողեց, որ հանդարտ արնի :

Եւ նա արնում էր այդ խեղճ, այդ վիրաւոր սիրտը . . .

Ահազին ու խորունկ յուզմունքից միշտ կուրծքը սղմած՝ նա փորձեց փախչել, շուտով ծածկուել, բայց ոտները չհնաղանդուեցին, մնաց մեխուած իր տեղում, դողդողալով զարնուած թռչունի պէս : Հեռացա՞ւ արդեօք նա . . . գլուխը բարձրացրեց, երկչոս հայեացքը ուղղեց դէպի այն կողմը, ուր տարան նրան . . . սուխնների շղթան պաղ ցուքերով օրօրւում էր արեւի շղղերի տակ եւ զինուորների շարքի միջից մերթ ծածկուելով, մերթ բացուելով՝ երեւում էր նրա թիկունքը, գլուխը, պարանոցը :

ԱՌ, դէթ յետ նայէր մի անդամ ... Սօֆիան զգում էր, որ նրա հայեցքին, նրա աչքերի բոցոտ փայլին այլեւս չի դիմանայ, կը ճշայ ահագին ձայնով եւ կը նուաղի, բայց եւ այնպէս ուզում էր, որ նայի... Ո՛չ, նա չէր նայում, գնում էր նոյն հաստատ, համաշափ քայլերով, հեռանում էր աւելի եւ աւելի. Սօֆիան բերանաբաց, հեւալով, աչքերը չուած՝ նայում էր նրա յետեւից, զգում էր, թէ ինչպէս իր կուրծքը դատարկուում է եւ իր էութեան լաւագոյն մասը քամւում, ևթերանում է նրա յետեւից ... Գոնէ յետ նայէր էլի մի անդամ, Տէ՛ր Աստուած. մի՞թէ չի նայի, մրմնջում էին նրա շրթունքները, մի՞թէ չի նայի...

Եւ նա յետ չնայեց...

Գնում էր գլուխը բարձր, սեւ, երկար մազերը փուած հպարտ պարանոցին, գնում էր այնպիսի քայլուածքով, որ ասես զինուոր-ների հրամանատարը լինէր եւ ո՛չ կալանաւոր : Դարձեալ մի քանի քայլ եւ նրանք ծածկուեցին հեռաւոր փողոցի անկիւնում :

Վերջացա՞ւ... այլեւս ո՛չ օրն էր պայծառ, ո՛չ երկինքը յըստակ, եւ ոչ արեւն անուշ . նա՝ այն սէդ կալանաւորը տարաւ բուլութ :

Սօֆիան խոր շունչ առաւ, հովանոցը գլխին քաշեց, ոչ ոքի շտեննելու համար եւ դիմեց դէպի տուն : Շտապում էր ինչպէս մի ծանր վլրաւոր, որ աշխատում է վայրկեան առաջ վէրքը կապել տալ : Հին խորունկ վէրքը, որ բացուեց յանկարծ, որ արնում էր կրծքի տակ աշխարհից ծածուկ :

Հեւ ի հեւ տուն հասաւ. շտապով դէն շպրտեց հովանոցը, դըլ-խարկն ու ձեռնոցները, նետուեց անկողնի վրայ, դէմքը ձեռներով ծածկեց եւ յանկարծ կուրծքը փուլ եկաւ. նա երկար, երկար լալիս էր : Խորունկ հեկեկոցից նրա ուսերն ու թիկունքը ցնցւում էին, արցունքը հոսում, թրջում էր բարձը եւ սենեակի կիսախաւար մենութիւնը քրոջ պէս գրկում էր նրա հեծեծանքն ու ծածուկ վիշտը : Երիտասարդ կինը սգում էր իր անցած երջանկութիւնը, որի յուշերը սուր փշերի պէս այսօր խոցուեցին, արնոտեցին նրա սիրտը :

... Ամբողջ գիշերն անքուն անցրեց. ճակատն այրուում էր. աչքի առաջից անցնում էին զինուորները, սուինները եւ նրանց մէջ նա, իր Սուրէնը, բարձրահասակ ու բարեկազմ, նուրբ, աղնիւ դիմագծերով, կրակոտ, հմայիչ աչքերով այն տղամարդը : Եւ յետոյ այն քայլուածքը, որի մէջ այնքան անբոնադատ վայելչու-

թիւն, այնքան անարուեստ արիութիւն կար: Ութ տարուց ի վեր չէր տեսել, ուխտել էր երբեք չտեսնել, ու յանկարծ տեսաւ սունների մէջ... այս ի՞նչ եղաւ, ի՞նչ անել... անկողնի մէջ նա տապակում էր տօթից, կոկորդը սղմուռմ, խեղդւում էր. զարհուրելի գիշեր անցրեց: Միայն լուսաբացին քնեց եւ շուտով զարթեց:

Լուսաբացը նրան հանդստութիւն չբերեց: Թախիծը կծկուել էր անկողնի կողքին, որ աչքերը բաց անի թէ չէ, կրկն բռնի նրա սիրալ եւ սղմի, սղմի: Երկար պառկած մնաց, երկար խորհեց այդ ճակատագրական անակնկալի մասին, որ այնպէս անողորմ կերպով եկաւ տակն ու վրայ անելու նրա կեանքը, որ քաշեց ու չորթեց հին վէրքի վիրակապը:

Եւ այժմ ընդունաբանում նոյն պատկերը, նոյն խոհերը նրան դադար չեն տալիս մի վայրկեան: Փոթորկուած կրծքի տակ մի բան ուռչում, բարձրանում է. նա դժուարութեամբ է զսպում արցունքները երեխայի ներկայութեամբ. զդում է, որ երէկուայ պէս մի ահագին, մի սրտապատառ ճիչ եռում է կրծքի տակ. նա ճգնում է խեղդել այդ ճիչը, թաշկինակն է սղմում ատամների տակ, շրթունքներն է կծոտում:

— Ժօ՛րժիկ, ժօ՛րժիկ, արի՛ ինձ մօտ:

Երեխան վերկացաւ եւ երերալով դիմեց դէպի մայրը, որ գրեց նրան, բարձրացը ու դրեց ծնկան վրայ:

— Ժօ՛րժիկ, դու շա՞տ ես սիրում մայրիկին:

— Մա՛մա, ես քեզ շատ եմ սիրում:

Մայրը համբուրեց նրան ջերմագին, սղմեց կրծքին խանդաղատանքով, յետոյ նայեց աչքերին, խորը, խորը ու երկար:

— Ժօ՛րժիկ, ժօ՛րժիկ, մայրիկը լա՞ւն է:

— Հա՛, մաման լաւն է:

Մայրը վերստին սղմեց նրան գրկի մէջ խելայեղօրէն, կատաղաբար. սրտում զարթած բոց զգացմունքը չդիտէր ո՞ւր թափել եւ տրորում էր իր բաղուկների մէջ զաւակի փիսրուն մարմինը: Ժորժիկը նայում էր մօրը զարմացած, նրա խոշոր աչքերը էլ չէին թարթում.

— Մամա՛, մամա՛...

Երեխայի ճայնի մէջ վախ կար:

Սօֆիան զանգը տուեց. եկաւ աղախինը, օրուայ լրագիրը ձեռքին, որ դրեց սեղանի վրայ:

— Տա՛ր երեխային պարտէզ, ասաց նա :

Աղախինը դուրս գնաց երեխայի հետ :

Սօֆիան խլեց թերթը, շտապ, տենդուտ շարժումներով բացեց, որոշ լուր փնտռողի ուշադրութեամբ արագ անցաւ առաջին երեսները, կանգ առաւ երրորդ երեսի վրայ, կարդաց լուելեայն մի քանի անդամ... այդ նրա մասին էր, խուղարկութեան ու բանտարկութեան մասին. թերթը անյուսօրէն ցած թողեց ծնկներին, սիրտը փղձկաց ուժգնօրէն :

Սօֆիան վեր կացաւ եւ վերստին ծածկուեց ննջարանում ամբողջապէս անձնատուր նրան, որին տանում էին զինուորները : «Սուրէ՛ն, Սուրէ՛ն» կանչում էր նա մեղմօրէն՝ ինչպէս տերեւի շնչվիւնը ուշ գիշերին թեթեւ հովի առաջ, ինչպէս խոտերի տակ գալարուող ջրերի հեծեծիւնը : Եւ այնքան տարիներ հոգու խորքում հանդչող սէրը զարթեց, ձգձգուեց, բարձրացաւ, բռնեց նրա ամբողջ էռութիւնը, սիրտը հալուեց այդ զգացմունքի ջերմութիւնից ինչպէս մոմ, ախորժ ու հեշտալիր մի դող անցաւ ամբողջ մարմնով, սենեակի կիսախաւարն ու լուսութիւնը թանձրացան, մարմին առան, փարեցին նրան, սղմում են, տաք, դողդոջուն գրկի մէջ... այդպէս միայն նա գիտէր գրկել... Սօֆիան աչքերը կիսախում հեւում է անուշ վշտի ու հեշտանքի գերազոյն հաճոյքից փոխ առ փոխ...

«Սուրէ՛ն, Սուրէ՛ն»...

Աքանչելի՛, կախարդակա՞ն պատրանք...

Նա աչքերը բացեց, ճակատը շփեց, լնկաւ փափուկ բաղմոցի մէջ եւ վերստին անցած կեանքի օրերը, որպէս հորիզոնի վրայով տարուող ամպերի կարաւան՝ շարան-շարան անցան աչքի առաջ :

Անցնում են նրանք խելադար վաղքով բեռնաւորուած իր կուսական յոյզերով ու երազներով, տանում են այն ցնորական կեանքը եւ ամէնքը միասին գլորուում են բախտերի մութ անդունդը :

Այդ անդո՞ւնդը...

Սօֆիան կոացած այդ անդունքի վրայ, նայում է հեւալով, աչքերը չուած, փնտռում է, գտնում է բախտերի ժխորի մէջ սեփական կեանքը, վիրաւոր, արիւնոտ իր կեանքը, ինչպէս զարկըւած, կիսամեռ այծեամ, որ թրպտում է օրհասի ճիրաններում :

Նայում է...

Ա՛, ինչպէս կ'ուզէր մի հզօր, գերմարդկային ճիգով յետ կանչել, դուրս քաշել խորտակումների, անդարձ աւերռումների այդ մըրրկի միջից իր խեղճ, իր վիրաւոր կեանքը, որ անխորդութ, գունատ սահեց ու ընկաւ փշուր փշուր: Ինչպէս կ'ուզէր ասլրել վերստին այն տաս տարին, նրա իւրաքանչիւր վայրկեանը ինչպէս բոց վառել, կրակէ հողմերի հետ տարռուել սարսափների վրայ. կ'ուզէր խելայեղօրէն ապրել սոսկումը, տանջանքը, գերազոյն տանջանքը սիրած տղամարդի հետ, եւ ապա նրա հետ վերստին անդարձ գլորռուել ոչնչութեան գիրկն ու փոշիանալ: Նա այնպէս կ'ուզէր ճակատագրի ձեռքից շորթել այդ կեանքը, գըրկել իր արշալոյսը եւ շաղ տալ նրա ցոլքերը տառապողների, հաւածականների, զրկուածների ճակատներին...

«Իմ կեա՞նքը, իմ կեա՞նքը, յետ տուր իմ կեա՞նքը»...

Ումի՞ց էր պահանջում, ո՞ւմ էր աղաղակում բաղուկները անյուռորէն տարածած օդի մէջ:

Եւ կուրծքը վերստին փուլ եկաւ, առաւօտից խեղդուած ճիչը պայթեց...

«Սուրէ՞ն, Սուրէ՞ն... ո՞ւհ»...

Լալիս էր, արցունքները մարդարիտի շարաններով գլորռում էին այտերի վրայից, եւ չգիտէր ո՞ւմ համար էր լալիս, Սրւրէ՞նի, որ քայլում էր սուխների միջից, թէ՞ իր վիրաւոր կեանքի համար, որ թրպրտում էր բախտերի ժխորի մէջ...

* * *

Եւ այդ կեա՞նքը...

Տաս տարի առաջ էր. Սօֆիան՝ կենսուրախ, գեղանի աղջիկ, Սուրէնը՝ տակաւին ուսանող, եւ նրանք հանդիպեցին համալսարանական քաղաքում: Սօֆիան ուսանելու էր եկած եւ հէնց սկըրբից յափշտակուց նրա սիրով իր կայտառ, կենսաթրթիո հոգու բոլոր խանդով:

Նա սիրում էր Սուրէնին նրա բոց ու դիւական աչքերի, նրա թաւ երկար մազերի եւ մանաւանդ նրա ապօլօննեան ճակատի համար, ուր այնքան իմացականութիւն ու ազնիւ արիութիւն կար: Հուժկու ու մարմնեղ երիտասարդի ամէն մի շարժումը, ամէն մի խօսքը, մանաւանդ նրա հայեացքը իրենց տիրական առնականութեամբ այն աստիճան արեցուցիչ էին, որ Սօֆիան նրա ներ-

կայութեամբ միշտ ընկնում էր երազական, հեշտալի վիճակի մէջ:

Երբ որեւէ ուսանողական ժողովում նա ոտքի էր ելնում, յետ յետ տանում ճակատից գանդուրները եւ խօսք առնում, Սօֆիան յուզմունքից բերանաբաց հեւում էր, աշխատելով կլանել նրա իւրաքանչիւր խօսքը, խլել եւ իր հոգու մէջ թագցնել նրա հայեացքից ցայտող բոլոր կայծերը եւ մանաւանդ նրա աջ ձեռքի դեղեցիկ, տիրական շարժումը, որով Սուրբնը գիտէր այնպէս իշխել ու ընկճել իր ունկնդիրներին: Սօֆիան հաւատացած էր, ոչ ոք այնքան չի հասկանում նրան, որպէս ինքը, եւ երջանիկ էր, որ այդ այդպէս է. Սօֆիան ուղում էր որ նրա հոգու բանալին իր ձեռքում միայն լինի, որպէսզի ինքը մեն մենակ իշխի նրա ներքին աշխարհում, ինչպէս մենաւոր ու հպարտ կարապը կապուտակ լնի վրայ:

Սիրում էր, սէրը փոխադարձ էր, այդ նա շատ լաւ գիտէր: Թէեւ նրանք դեռ ո՛չ մի բառով չէին արտայայտել իրենց հոգին փոթորկող զգացմունքները, բայց հայեացքները պերճախօս ու սիրազեղ, ժպիտները՝ քնքոյշ ու նշանակալից, մանկական ներվայնութիւնը առանց պատճառի, մէկի յանկարծական մելանխոլիան միւսին քրքիջը, ձեռքերի ջերմ հպումները, թեթեւ դողը ոտներից մինչեւ մազեր, այլեւս խօսքի տեղ չէին թողնում: Եւ մի նուրբ, անխառն հաճոյք էին զգում լոելեայն խաղալ այդ համը, բայց գողտրիկ զգացմունքի հետ. չէին շտապում սովորական բառերով յետ քաշել նրան ծածկող թափանցիկ շղարչը, որ միշտ այնքան խորհրդաւոր եւ այնպէս գիւթիչ է դարձնում մատաղ սրտերի սիրային զեղումները:

Սիրում էր բուռն սիրով, սէրը փոխադարձ էր, ինչո՞ւ էր սակայն երջանիկ միայն Սուրբնի կողքին, նրա հետ, զրոսանքի ժամերին. բայց հէնց որ մենակ էր մնում, կասկածի սեւ օձը զլուխը բարձրացնում էր նրա հոգում եւ անորոշ վախը սեւ ամպի պէս ողմում էր նրա կուրծքը: Այդ մենութեան ժամե՛րը... երբ Սօֆիան քունքերն ափերի մէջ, ժամերով նստում էր ու մտածում, մտածում չար բաներ. նրան թւում էր, թէ ճակատագրական մի ձեռք՝ դանդաղ՝ բայց հաստատ հիւսում է նրանց բախտի ճանապարհին մի մութ բան, որի ինչ լինելը չգիտէ Սօֆիան, բայց որից գողում է բնազդօրէն: Ինչ որ աւելի դաժան էր, իր սիրոյ հետ մեծանում էր նաեւ այդ վախը եւ անկարող էր մէկի մասին մտածել, առանց

անձնատուր լինելու միւսին։ Ճարը կտրած՝ վաղում էր Սուրէնի մօտ, դուրս էր քաշում նրան զբօսանքի, լսում էր նրա ձայնը, նայում էր նրա աչքերին, բռնում էր նրա ձեռքը եւ հանգստանում։

Եւ քանի ճանաչում էր Սուրէնին, կամաց կամաց լուծում էր վախի առեղծուածի հանգոյցը։ Յափշտակութեան երջանիկ ժամերից յետոյ՝ նա զգում էր, որ Սուրէնի կեանքը անհանդիստ ու երերուն աստղի պէս պիտի անցնի աշխարհի ամպամած հորիզոնի վրայով։ Նա պարզ ու յստակ տեսնում էր իր սիրած տղամարդի ծով հոգու յատակում տակաւին չծնուած փոթորիկների գալարումները։ Ի զուր չէր, որ նրա խօսքը միշտ այնպէս անկեղծ եւ այնքան հզօր էր հնչում, որպէս գալիք անխուսափելի անցքերի խուլ ու ահաւոր դղրդիւն։ Սօֆիան վախենում էր այդ անցքերից, դողում էր Սուրէնին սպասող ճակատագրից, նրա հոգու բոց տենչերից, նրա տարերային խոյանքներից, Սուրէնի ողեւորութեան, ցասկոտ, բայց ազնիւ բռնկումների ժամերին համախմբումների մէջ, Սօֆիային թւում էր թէ նա մարդ չի, այլ մի գերբնական արարած, փոթորկի, ծովի մի կտորն է, յաւիտենապէս անհանդիստ, ու յաւիտենապէս բողոքող՝ որ ճգնում է միանալ մայր տարերքին եւ անկարելիութեան հանդէպ երեւի կ'անցնի աշխարհի վրայով եւ աւերածի մէջ ինքն էլ կը խորտակուի։

Մտածում էր այս բոլորը եւ ցաւադինօրէն դիտակցում, որ ինքը հեւք չի ունենայ կեանքը կապելու այդ ապշեցուցիչ երիտասարդի մըրկատենչ հոգու հետ։ Մելամաղձօրէն դեղասէր ու քնքօրէն յափշտակուող իր երազուն հոգին այնքան յաղթ թեւեր, այնպիսի հզօր թոփչք չունէր նրա հետ շշմեցնող բարձունքները կտրելու համար։

Եւ ուշ դիշերներին՝ իր մենութեան ժամերին, նա անձնատուր իր երկիւղին, յուսահատարար ճմոռում էր մատները թաւալելով անկողնում, հեծեծում էր ու լալիս։ Նրան խեղդում էր այն հարցը, թէ ինչու նա՝ այդ դեւ Սուրէնը այնքան հրապուրիչ է եւ այնպէս սարսափելի միաժամանակ՝ ինչպէս մութ անտառը փոթորկի ժամերին, ինչպէս հսկայ ջրվէժը, որ փրփուրէ ամպերով դահավիժւում է անդունդը, ինչպէս անծայրածիր ծովը իր հազար ու մի յեղյեղումներով։

«Ծո՞վ, ծո՞վ, մըմնջում էր նա, ծո՞վ եւ նրա պէս անհուն, եւ նրա պէս հազար ու մի գաղտնիքներով»...

Ո՞ւհ, այդ դաղտնիքները. ինչպէս կ'ուզէր Սօֆիան այդ գաղտնիքներն իր ձեռքում ունենալ, եւ նրանց հետ Սուրէնի խռացերը, նրա երկաթէ կամքը, ամբողջ կամքը:

Պայքար էր իր եւ աշխարհի մէջ եւ պայքարի առարկան նա էր, այդ զարմանալի երիտասարդը, իր ուխտուածի ճակատով:

Ո՞չ, Սօֆիան չի զիջի. սէրը ամենակարող է եւ նրա իրաւունքից վեր ու նուրբական՝ աշխարհում ոչինչ չկայ:

Ո՞չ. նա չի զիջի. աշխարհի դէմ նա ունի իր խորունկ զդացմունքը, իր հրապոյրները, իր չքնաղ կանացիութեան անդիմադրելի հմայքը, իր աչքերի բոցը, որով հրդեհ կը վառի Սուրէնի հոգում...

Ո՞չ, աշխարհը նրա առաջ անգօր է, նա չի կարող խլել Սուրէնին... եւ սակայն վերստին յուսահատական ճիչը՝

«Սուրէն, Սուրէն, ինչո՞ւ դու այդքան սարսափելի ես եւ այդքան հրապուրիչ միաժամանակ»...

* * *

... Զրունում էին եւ բաց դաշտի մէջ փոթորկի բռնուեցին:

Անձրեւ չկար տակաւին, բայց մութ ամպերը որոտում էին եւ կայծակը ճայթում էր անընդհատ: Սօֆիան վախում էր, եւ թոյվի բնազդով աշխատում էր մօտ, շատ մօտ քայլել երիտասարդին: Քանի մօտենում էր փոթորկիլը, Սօֆիան այնքան աւելի էր դողում երկիւղից, աւելի էր սղմուռմ նրա ուսին: Զէր համարձակում թեւն անցնել, այդ դեռ երբեք չէր պատահել, կանացի ամօթխածութիւնն արգելում էր նրան առաջինն անել համարձակքայլը, ի՞նչն էր արգելում Սուրէնին... նա մտածկոտ էր, ասէս չէր լսում ամպերի որոտը, կայծակների խլացուցիչ ճայթիւնը, չէր նկատում Սօֆիայի ծայրայեղ յուղմունքը: Այդ անտարբերութիւնը խորապէս վշտացնում էր Սօֆիային:

— Շո՛ւտ, շուտ գնանք, շտապեցրեց Սօֆիան, փոթորկ'կը...

Նոյն վայրկեանին, հէնց նրանց գլուխների վրայ կայծակը ճայթեց այնպիսի խլացուցիչ որոտով, որ ասես երկինքը փուլ եկաւ, շրջակայքը մի վայրկեան բոցավառուեց ցասկոտ, անհաճոյ փայլով, ծառերն ու կանաչ բլուրները կարծես սարսափից դունատուեցին ու սարսուացին, իսկ Սօֆիան սոսկումի ճիչ արձակեց ու երկու ձեռքով գրկեց գլուխը:

— Մի՛ վախենաք, չէ՞ ես ձեզ հետ եմ... ասաց Սուրէնը եւ

առանց սպասելու թոյլտուութեան, իր այն առնական շարժումով, որ այնքան գրաւում էր ՍօՓիային, մեկնեց աջ ձեռքը, դըրկեց նրա իրանը, թափով սղմեց իր կողքին, ծածկեց վերաբկուի փէշով, իսկ ձախ ձեռքը առջեւից բերելով՝ ձգեց նրա պարանոցով։ ՍօՓիան քնքութեամբ ու դողդողալով գլուխը կոացրեց նրա ուսին, անզօր ու վախլուկ երեխայի պէս կծկուեց, փոքրացաւ, ու մեղմիւ թրթում էր նրա գրկում։ Այժմ նրանք քայլում էին տենդօրէն իրար սղմուած, ու ՍօՓիան զգում էր նրա մարմինը, նրա ուժեղ բազկի խաղերը, զգում էր նրա ջերմութիւնը, որ այրում էր իր ձախ կողմը, տարածում, բռնում էր ամբողջ մարմինը ախորդելի դողով։ Նրանք քայլում էին համաչափ, կայտառ ու թեթեւ, ասես մի մարդ քայլելիս լինէր...

Կայծակը ճայթում էր աւելի թափով, ամպերը որոտում էին աւելի ահաւոր, երկինքը՝ շանթերից պատառ պատառ, տընքում էր նրանց գլխին — ինչպէս արնաքամ վիրաւոր, երկիրը խուլ արձադանդ էր տալիս նրան, բայց ՍօՓիայի փոյթը չէ այլեւս...

— Էլ չէ՞ք վախենում...

Ա՛, անկիրաւ, նա լաւ գիտէ, որ ՍօՓիան այլեւս չի վախենում, ինչո՞ւ է հարցնում։ Պատասխանի փոխարէն ՍօՓիան սղմւում է նրա կողքին, աշխատում է մօտ, աւելի մօտ տանել իր դլուխը նրա դէմքին, խառնել իր չունչը նրա չնչին, փարել, ոչնչանալ եւ միեւնոյն ժամանակ հաճոյքով զգում էր, թէ ինչպէս նրա ուժեղ բազուկը սղմում է, սղմում է իր իրանը...

Եւ ինչպէս լա՛ւ է, լա՛ւ...

Կայծակը վերստին ճայթեց անօրինակ որոտով, ՍօՓիան ցնցուեց Սուրէնի բազուկների մէջ, ինչպէս բռնուած թռչուն, որ դուրս պըծնել է ուզում։

— Վախենո՞ւմ էք... չէ՞ ես ձեզ հետ եմ... եւ Սուրէնը աւելի պինդ սղմեց նրան իր կողքին։

— Ո՛չ... ես այնպէս... ես չեմ վախենում... ձեզ հետ... չեմ վախենում, ի հարկէ...

Օ՛, ո՛չ, նա չի վախենում, թո՛ղ ողջ երկինքը բոց կտրի եւ կայծակների անձրեւ տեղայ նրանց գլխին՝ այսպէս նրա գրկի մէջ ՍօՓիան պատրաստ է մոխիր դառնալ, միայն նրա հետ, նրա հետ... ու նա սղմւում է երիտասարդի կողքին, փարում է պինդ, պինդ, դողում է անասելի հաճոյքից։ Եւ կ'ուզէր, որ այս ահաւոր

փոթորիկը երբեք չդադարի, որ այս ճանապարհը վերջ չառնի...

Տեղատարափ անձրեւը շփեց եւ անցաւ նրանց վրայով:

— Ֆէ՛ա, վախլո՛ւկ Փէա, ասաց Սուրէնը, կուանալով ու շեշտակի նայելով նրա աչքերի մէջ:

Այդ հայեացքը, ուր անհուն քնքշութեան ու խորունկ սիրոյ հետ միաժամանակ մի վիշտ կար, անորոշ, տարտամ վիշտ, «որ խաղում էր նրա բիբերի վրայ: Նուազած, աչքերը կիսախոսի, շրթունքները կիսաբաց՝ Սօֆիան սպասում էր երիտասարդի համբոյրին, ինչպէս վարդի կոկոնը սպասում է վաղորդեան առաջին շողին փթթելու համար. սպասում էր մեղմիկ հեւալով, քնքշորէն...

— Ֆէ՛ա, Փէ՛ա... և երիտասարդը բաց թողեց նրա իրանը... առանց համբոյրի. փոթորիկը դադարում էր:

Խորապէս դառնացած այդ յուսախարութեամբ, Սօֆիան հազիւ էր զալում արցունքները, որոնք եռում էին կրծքի տակ:

«Ո՛չ, նա չի սիրում ինձ», մտածում էր Սօֆիան շրթունքները կծոտելով. նրա կանացիութիւնը վիրաւորուած էր մինչեւ հոգու խորքը:

Նրանք քայլում էին կողք կողքի, լուռթեամբ, եւ իւրաքանչիւրն ըստ երեւոյթին անձնատուր իր խոհերին: Երեկոյեան մըշուշն իջաւ, իջաւ պարուրեց դաշտ ու ձոր. ամայութեան ու լըռութեան մէջ նրանց ոտնաձայներն այժմ լսում էին ուրոյն-ուրոյն, խորթացած իրարից:

— Դուք սարսափելի էք, ասաց յանկարծ Սօֆիան կերկերուն ձայնով. Սուրէնը նայեց նրան զարմացած, բայց խաւարը չթողեց տեսնել դէմքը:

— Զէի սպասում... ես սարսափելի՛ եմ, կըկնեց երիտասարդը ծիծաղելով:

— Այո՛, դուք սարսափելի էք...

— Եւ ես միամիտս հաւատացած էի, թէ դոնէ ձեղ համար ես սարսափելի չեմ եւ մի բան արժեմ. Սուրէնը դարձեալ ծիծաղեց:

— Մի՛ կեղծէք, այդ ձեղ չի սազում, դուք լաւ գիտէք, թէ ինձ համար ի՞նչ արժէք... բայց եւ այնպէս դուք սարսափելի էք... ասացէք, ինչո՞ւ էք դուք այդպէս, ինչո՞ւ... Սօֆիան կանգառաւ, նրա ձայնը կերկերաց ու խզաց, դլուխը քաշ ձղեց եւ հազիւ կարողացաւ զսպել արցունքները:

— Ես ձեզ չեմ հասկանում . Սուրէնը դարձեալ կեղծում էր :

— Ձեզ հետ... ձեզ հետ անկարելի է ...

— Վիճել... Սուրէնը կատակում էր ժպտալով :

— Ո՛չ, Սօֆիան ոտքը դետին զարկեց անհամբեր երեխայի պէս, ձեզ հետ, ձեզ հետ անկարելի է, հասկանո՞ւմ էք... ինչո՞ւ դուք ուրիշների պէս չէք, որոնք այնպէս սիրում են ապրել, եւ դիտեն ապրել, վերջացրեց Սօֆիան համարեա ճշալով :

— Կարծո՞ւմ էք միթէ որ ես չեմ ուզում ապրել :

— Ո՛չ, դուք չէք ուզում ապրել, դուք հէնց նրա համար էք սարսափելի, որ չէք ուզում ապրել... դուք... ո՛վ գիտէ՝ ի՞նչ... ձեր կեանքը...

— Ուզում եմ ապրել, հաւատացնում եմ ձեզ, ինչպէս ամէնքը . միայն ապրելու ըմբռնումը մարդուց մարդ՝ տարբեր է : Վայրկեաններ կան, որոնք յաւիտենականութիւն արժեն : Նայեցէք այս թիթեռնիկներին — երիտասարդը ցոյց տուեց առաջին պատահած լապտերը քաղաքի սահմաններում — նայեցէք սրանց, ամէնքն էլ խուռներամ ու խելայեղօրէն դիմում են դէպի բոցը, իրար հրհրում, իրարից առաջ են անցնում եւ... այրուած թեւերով վար են թափւում ու մահանում . եւ նրանք յաւիտեանն ապրում են մի վայրկեանում :

Սուրէնի խօսքի մէջ խորունկ համոզմունքի հետ հնչւում էր նաեւ խորունկ վշտի շեշտը :

— Յաւիտեանն ապրել մի վայրկեանում, կրկնեց Սօֆիան մտածկոտ, ապա յանկարծ ըմբռնելով այս խօսքերի բոլոր ճակատադրական իմաստը, յետ ձեզ գլուխը ու բացականչեց .

— Ո՛չ, ես ատում եմ մահը... գեղեցիկ մահ չկայ... ապրել, ապրել, որովհետեւ ես ծնուել եմ ապրելու համար, ամէնքը ծնուել են ապրելու համար, թո՛ղ ապրեն, ես գործ չունեմ, ես ուզում եմ ապրել, ապրել . ճայնը վերստին կերկերաց եւ նա յանկարծ թողեց իր ուղեկցին, շտապով առաջ անցաւ ու անյայտացաւ քաղաքի փողոցներում :

Սուրէնը կանգ առած՝ նայում էր նրա յետեւից խորը վըշտով...

Այն գիշեր Սօֆիան դարձեալ երկար, երկար լաց եղաւ, թէ ի՞նչու իր սիրած տղամարդը այնքան հրապուրիչ է, եւ այնքան վախ է ներշնչում միաժամանակ :

Եւ այդ զարմանալի երիտասարդը նրա ճակատադրի տէրն էր ,
որից բաժանուել չէր կարողանում :

Աշնանային մի պայծառ օր նրանք երկար թափառում էին քա-
ղաքի շրջակայքի անտառապատ ձորակներում : Երեխանների պէս
վազվզում էին մի ուշացած ծաղիկ քաղելու համար , ապա հրհրում
իրար եւ թաւալ տալիս կանաչների վրայ քրքջալով : Սօֆիան
թօշնած տերեւներ ու ծաղիկներ էր ցանում Սուրէնի գլխին , կամ
խլում էր նրա գլխարկը , ձգում հեռու թաւուտի մէջ , չարաճճի
մանկան նման յետեւից դադտագողի մօտենում մազերն էր քա-
շում , կամ վտակի եղրով անցնելիս՝ բռնով ջուր էր ցանում նրա
վրայ՝ ապա վազում , թագնուում խիտ մացառների մէջ :

— Ֆէ՛ա , Փէ՛ա , կրկնում էր Սուրէնը , երբ գտնում էր նրա
թագստոցը եւ բռնում քնքշութեամբ . Սօֆիան նկատում էր այդ
վայրկենին նրա դիւական աչքերի կրակը , նրա բորբոքուած այ-
տերն ու եռուն յոյզերից ուռած կուրծքը . տեսնում էր , այդ իր
յաղթանակն էր եւ երջանիկ ու խնդագին դուրս էր պրծնում նրա
ձեռքից , վախչում քիչ հեռու , քրքջալով իր հնչուն , խանդադըր-
դիու ծիծաղով :

— Եղնիկ , վախլուկ եղնիկ , ասում էր Սուրէնը :

— Ա՛յ , կ'անյայտանամ անտառում եղնիկի պէս եւ դուք ինձ
այլեւս երբեք , երբեք չէք գտնի :

— Ո՛չ մի թաւուտ կամ մացառ , ո՛չ մի ձոր կամ այլ ձեզ
ծածկել չի կարող ինձանից :

— Ճշմարի՞տ . . . եւ Սօֆիան ծնօտը կախում է կրծքին , ձեռ-
քերը յետեւ ձգում , թեթեւ կուանում առաջ , նայում կամրա-
կապ յօնքերի տակից ժպտուն , սիրազեղ հայեացքով , որ այնքան
դուր էր գալիս Սուրէնին ու այնպէս շփոթում : Եւ միայն մի
վայրկեան , մի կարճատեւ վայրկեան :

— Ապա նորից նայեցէ՞ք այդպէս :

— Ո՛չ , էլ չէք տեսնի . դուք խօմ նկարիչ չէք :

— Իսկ ձեզ նկարել եմ :

— Ո՛ւր է նկարս :

— Դուք գիտէք ո՞ւր է , ինչո՞ւ էք հարցնում :

— Ո՛չ , չգիտեմ , ո՞ւր է :

Պատասխանի փոխարէն Սուրէնը ձախ ձեռքը մեղմիւ դրեց
սրտի վրայ . . . առաջին խօսքն արտասանուեց . . .

Լոռութիւն տիրեց . երկսով էլ տիրեցին . մանուկներ էին ,

երբ վազվզում էին իրար յետեւից, անհոգ մանուկներ, ընկճուեցին, երբ կեանքի հզօր ճիշը հնչուեց նրանց շրթունքներից: Իւրաքանչիւր երջանկութեան տակ դարանակալ անխուսափելի ցաւը կամացուկ զարթեց ու յօրանցից: Ծառերը մեղմիւ սօսափում էին նրանց գլուխների վրայ. կեանքից յողնած բզէզները անձայն մեռնում էին թօշնած տերեւների մէջ եւ չորացած խոտերը հեծեծանքով սղում էին անցած դարունը, որ այլեւս երբեք, երբեք դառնալու չէր:

Նրանք քայլում էին լոռութեամբ ու նրանց խոհերը նոյնն էին...

Անտառի խորքից դուրս եկաւ մի կին, երկու փոքրիկ աղջիկների հետ. երեքով էլ նիհար, գունատ ու ցնցոտիների մէջ: Իւրաքանչիւրը փէշի մէջ ինչ որ բան ունէր փաթաթած, երեւի արմը-տիք, եւ ուսին ծառի մի մի չոր ճիւղ: Կարիքի զաւակներն էին. ձմեռը մօտ էր, պէտք էր մի կերպ ապրել... իրենց բեռը քաշում էին լոռութեամբ, նոյնիսկ չնայեցին անծանօթ զոյդին: Բայ երեւոյթին գոհ էին, որ մի փոքր արմտիք եւ մի մի չոր ճիւղ են ճարել ձմրան կատաղութիւնը մեղմելու համար: Անցան. հաղիւ մի քանի քայլ հեռացած՝ նրանց առաջը փակեց անտառի ծեր պահապանը: Երեք խեղճերը կանգ առան եւ լոռութեամբ նայում էին խստադէմ ծերունուն:

— Դարձեալ զո՞ւք... ասաց պահապանը զայրոյթով եւ մօտեցաւ փոքրիկ աղջիկներից մէկին ու թափով քաշեց նրա ձեռի ճիւղը: Երեխան բարձրածայն հեկեկաց: Սուրէնը նրանց մէջ նետուեց:

— Լսեցէ՞ք, բա՛րեկամ, ասաց նա ձեռքը ծերունու ուսին դնելով, գուք չար մարդ չէք երեւում, ես ձեզ շատ եմ խնդրում չվշտացնել այս խեղճերին, թող տանեն, մեծ բան չէ այդ երեք ճիւղը:

— Զգիտէ՞ք, թէ սրանք որքան են նեղացնում ինձ, մէկ չէ, երկու չէ, հարիւրներ են, եւ ամէն օր. յետոյ՝ ամբ կալուածատէրը կայ, որ սրանց պատճառով սպառնում է ինձ դուրս անել. Երեխաներ ունեմ, պարո՛ն, մի տուն լիքը երեխաներ:

— Իրաւունք ունիս, ի՛մ բարեկամ, բայց այս անդամ շատ եմ խնդրում սրանց չվշտացնել. շատ եմ խնդրում:

Ծերունին յետ քաշուեց. կարիքի թափօրը առաջ շարժուեց. կինը երկու անդամ յետ նայեց լոռութեամբ եւ նրա աչքերից հո-

սում էին արցունքները։ Սօֆիան յենուած մի ծառի, նայում էր այդ տեսարանին։ Սուրբնը վերադարձաւ եւ նրանք առաջ շարժուեցին։ Սօֆիան լոռոթեամբ խաղացնում էր ձեռքին մի կանաչ ճիւղ, Սուրբնը կամացուկ սուլում էր մի եղանակ։

— Այն կինը լալիս էր, ասաց յանկարծ Սօֆիան։

— Մերունին ասաց նրանք մէկ չեն, երկու չեն, հարիւրներ են, կարող էր ասել միլիոններ են, պատասխանեց Սուրբնը։

Իրկին լոեցին։

Հասան լեռնային վտակին, որ սահանքներով իջնում էր նեղ անտառապատ ձորակով։ Պէտք էր անցնել, բայց դա այնքան էլ հեշտ չէր. աշնանային առաջին անձրեւներից յորդացած, փոքրիկ վտակը դարձել էր մի գետակ։ Նա որոտում էր, մռմռում զարկուելով նեղ ափերին եւ ծառերի մերկ արմատներին։

Տեսարանը վեհօրէն դրաւիչ էր. ախորժ տրամադրութիւնը վերստին համակեց նրանց. ափերով առաջ շարժուեցին անցք դանելու համար։ Մացաների, ծառերի եւ քարերի մէջ դալարուող արահետը կանդ առաւ։ Հասան. այստեղ երկու խոչոր քար կար գլորուած ջրերի մէջ որոնք կամրջի տեղ էին ծառայում։ Հարկաւոր էր ցատկել նախ մէկի՝ ապա միւսի վրայ, ու յետոյ հակառակ ափը։ Սովորական, ծանօթ անցք էր, յաճախ էին տեսել, բայց այսօր դահավէժ ու սրընթաց ջրերը բարձրացած ու փրփրուն, զարկում են քարերին ասես տեղահան անելու համար։ Սօֆիային թուաց նոյնիսկ, որ այդ քարերն արդէն դողում են, արդէն շարժում են։

— Անցնե՞նք, առաջարկեց Սուրբնը։

— Օօ՛, այդ անկարելի է... ես վար կ'ընկնեմ. ես վախենում եմ... Սօֆիան մօտեցաւ, աչքով չափեց տարածութիւնը եւ յետ քաշուեց։

Սուրբնը ծիծաղում էր.

— Վախլուկ եղնիկ, ա՛յ, ես կը ցատկեմ առաջ եւ ձեր ձեռքից կը բռնէմ։

— Դուք էլ չէք կարող, կ'ընկնէք, տեսէք քարերը դողում են։

— Լաւ, կ'ընկնենք միասին եւ ջուրը մեղ միասին կը տանի. Սուրբնը ժպտում է խորհրդաւոր կերպով։

— Ես չեմ ուզում ընկնել, չեմ ուզում, որ ջուրն ինձ տանի,

Եւ Սօֆիան կէս վախեցած, կէս ժպտուն հայեացքն ուղղում է երիտասարդին:

— Անդամ ի՞նձ հետ...

— Դուք այնպէս ուժեղ էք, դուք կ'ազատուէք, ու կը թողնէք որ ես խեղդուեմ... Սօֆիան դարձեալ ժպտում է, դարձեալ իրանը թեթեւորէն առաջ ձգած, ձեռքերը յետ եւ նայում է յօնքերի տակից, չարաճճի, խորամանկ հայեացքով նայում է եւ սպասում...

Եւ սպասուած պատասխանը չուշացաւ:

Երիտասարդը գլխարկը յետ ձգեց ճակատից, մի ոստիւն դործեց, ահազին բազուկները տարածեց եւ մինչեւ որ Սօֆիան ուշքի կը գար, դրկեց, բարձրացրեց նրան երեխայի պէս իր կրծքին սղմած, եւ ուժեղ թոփչքով նետուեց դէպի վտակը: Սօֆիան մեղմիւ ճշաց ու փաթաթուեց նրա պարանոցով: Սուրէնը՝ գեղանի ու քնքոյշ բեռը բազուկներին, թափով թուաւ նախ առաջին քարի վրայ, յետոյ երկրորդի, ապա կանգ առաւ վտակի մէջտեղում, հեւալով, բորբոքուած դէմքով ու երջանիկ:

— Ֆէա՛, ձգեմ քեզ գետը տանի, չնջում էր նա Սօֆիայի ականջին:

— Զգի՛ր, ձգի՛ր... նուաղած ուշակորոյս, Սօֆիան դողդողում էր գերազոյն հաճոյքից. աչքերը կիսախուսի, շրթունքները կիսաբաց, նա դէմքը սղմել է երիտասարդի կրծքին, աներեւակայելի հեշտանքով լսում է նրա սրտի հզօր բարախիւնը ինչպէս իր կրծքի տակ, զգում է նրա ջերմութիւնը, որ հոսում, տարածում է իր մարմնի ամենամանրիկ թելերի մէջ, չնչում է նրա առնական արբեցուցիչ հեւքը եւ շշմած, իսպառ թուլցած ու անզօր՝ քաշ է ընկնում նրա բազուկների վրայ: Գետակը շարունակում է որոտալ, փրփրուն կոհակները զարկւում են քարերին, կաթնային ցնցուղները բարձրանում են ամպի պէս ու պարուրում նրանց. այդ նուրբ շամանդաղի մէջ, ծառերի հովանու տակ, կատաղի սահանքների վրայ՝ երիտասարդը սիրային մի խենթ քմահաճոյքով շարունակում է օրորել իր չքնաղ բեռը, բոց աչքերը միշտ նրա երեսին յառած... Եւ Սօֆիան անէացած՝ ըզգում է ինքն իրան մի ցնորական աշխարհում, ուր յաւիտենական երաժշտութիւնը գուրգուրում է նրա լսելիքը գերբնական մեղեղիներով: Մի անգամ, միայն մի վայրկեան նա բացում է աչքերը, տեսնելում է իր երեսին յառած Սուրէնի աչքերը, որպէս զոյտ վառ-

ուած ածուխներ, որոնք թափանցում են մինչեւ նրա հոգին, պաղ մշուշի միջից զգում է նրա գոլ, բուրաւէտ շունչը եւ յանկարծ նրանց շրթունքները միանում են անհուն, բոց համբոյրով։ Սօֆիան աչքերը փսակում է, տիեզերքը ջնջում է, նրանք իրար պլուլուած՝ լուծւում, եթերանում են, մնում են միայն հոգիներն ի մի ձուլուած, եւ ալիքների խօլ երաժշտութիւնը, որ լսում է մի այլ գերազանց աշխարհից...

Սուրէնի ծնկները դողդողացին, նրան թուաց՝ թէ քարը դընում է ոտքերի տակից, աճապարանքով թուաւ միւս ափը, ցած գրեց իր կախարդիչ բեռը։

Երկուսով էլ նուաղած՝ փոռւեցին խոտերի վրայ։

Լուռ էին ու յոդնած անսահման երջանկութիւնից...

Արեւը ծածկուեց. հովերը կամացուկ իջան. անտառն իր մեծ ու փոքր ծառերով անշշուկ մաշտում էր թանձրացող խաւարի մէջ. ձորակը տնքում էր գետակի ձայնից աւելի բարձր, աւելի ցաւաղին. եւ նրանք տակաւին պառկած էին խոտերի մէջ։

— Սո'ւրէն...

— Սօ'Փիա...

— Տո'ւր ինձ ձեռքք, խաւարը թանձրանում է, եւ ինձ թըւում է, թէ ձեռքդ չբոնեմ, նա քեզ կը տանի։

— Երեխա՛յ, վախլո՛ւկ երեխայ...

Սօֆիան բոնեց նրա ձեռքքը, քաշեց եւ ձգեց իր կրծքին, իսկ միւս ձեռքը մեկնեց եւ մատները թաղեց նրա թանձր մաղերի մէջ։

Կրկին լոեցին։

— Սուրէն, ասա՛, ինչի՞ մասին ես մտածում։

Երիտասարդը լուռ էր եւ անթարթ նայում էր ընկերուհու աչքերին, կարծես առաջին անգամ էր տեսնում նրան։

— Զի՞ս պատասխանում, ա՛յ քեզ. եւ Սօֆիան պինդ քաշեց նրա ժաղերը ծիծաղելով։

— Ֆէա՛, ասա՛, ինչո՞ւ դու այդպէս գեղանի ես եւ այդքան փխրուն... եւ յայտնուեցիր իմ կեանքի ճանապարհին, ինչպէս ճակատագիր. Սուրէնի ձայնի մէջ երազուն տիրութեան շեշտ կար. վերջին խօսքերը նա արտասանեց կարծես ինքն իր համար։

— Դժգո՞հ ես, ա՛յ, կ'երթամ ջուրն ընկնեմ։

— Ո՛չ, ի՞մ հրեշտակ, դու շատ ես սիրուն ջուրն ընկելու համար. ասա, ինչո՞ւ ես դու այդքան սիրուն... ես քեզ պաշտում

եմ. Սուրէնը բռնեց նրա գլուխը երկու ձեռքով, մոլեգնաբար համբուրեց նրա շրթունքները, ապա վերստին յետ ընկաւ խոտերի վրայ, ձեռքերը գլխի տակ դրեց, աչքերը յառեց դէպի վեր խորին մտածմունքի մէջ:

Կրկին լուցին. Սօֆիան նստած էր. նա հաղիւ էր նկատում երիտասարդի պատկերը խաւարի միջից:

— Ո՛չ, ես ուզում եմ իմանալ ինչի՞ մասին ես մտածում, Սուրէն, բացականչեց յանկարծ Սօֆիան, ես ուզում եմ իմանալ, լսո՞ւմ ես, այսուհետեւ ես միշտ պիտի իմանամ քո բոլոր մըտքերը, քո բոլոր գաղտնիքները: Նրա ձայնի մէջ լալագին, բայց վճռական շեշտ կար:

— Շա՞տ ես ուզում իմանալ:

— Այո՛, շատ, շա՞տ. Սօֆիան կռացաւ, գրկեց նրա գլուխը, բարձրացրեց եւ նայում էր աչքերին, — ասա՛, ի՞նչ ես մտածում...

— Ես մտածում եմ այն կնոջ եւ այն երկու աղջիկների մասին, որ տեսանք քիչ առաջ. այնպէս չէ՞՝ այն աղջիկներն իրենց խեղճութեան մէջ այնպէս գողարիկ էին, այնպէս գրաւիչ, դատանջանքի դեղեցկութիւնն է, որ տրորուած ծաղկի պէս լալիս է անաղարտ հոգիների մէջ... յետոյ մտածում եմ քո մասին... եւ դու այնքան սիրուն ես, այնպէս քնքոյլ եւ կեանքն այնպէս դաժան... Սօ՛Փիա, Սօ՛Փիա, իմ վախլո՛ւկ եղնիկ, ինչպէս սիրում եմ քեզ...

Սօֆիան կամացուկ ցած թողեց նրա գլուխը, յետ քաշուեց, ձեռքերով ծածկեց դէմքը, կռացաւ եւ յանկարծ գետակի որոտի մէջ լսուեց նրա ուժգին հեծկլտոցը:

— Սօ՛Փիա...՝ Երիտասարդը թուաւ եւ գրկեց նրա իրանը, Սօ՛Փիա ի՞նչ ունիս:

Պատասխան չկար, Սօֆիան լալիս էր յորդ արցունքներով, նրա իրանը ցնցւում, թրպրում էր երիտասարդի բազուկների մէջ:

— Սօ՛Փիա, չէ՞ ես քեզ սիրում եմ... պաշտում եմ քեզ...

— Ես վախենո՞ւմ եմ, ասաց Սօֆիան արցունքի միջից կերկերուող ձայնով, ես քեզ հասկանում եմ... քո մտքերը սարսափելի են... քո գաղտնիքները, քո ծրագիրները... ես չեմ ուղղում, որ աշխարհը քեզ խլի ինձանից, չեմ ուզում, դու պիտի

ի'մը լինիս ամբողջապէս եւ ես քո բազուկների վրայ եւ կեանքը քո ոտների տակ՝ ինչպէս քիչ առաջ այս գետակը:

— Սօ'Փիս, ի'մ Սօփիս... Սուրէնը դրկեց նրա գլուխը, համբոյրներով ծածկեց թաց աչքերը, շրթունքները, այտերը, ապա առան իր բազուկների մէջ եւ ծունկի եկած, որպէս պաշտամունքի մի գերազոյն աստուածութեան առաջ, օրօրում էր նրան փոքրիկ լացող երեխայի պէս եւ խօսում ականջին:

Եւ ալիքները որոտում էին...

— Ասա՛, երդուի՛ր, որ դու միայն իմն ես յաւիտեան, հեծեծում էր Սօփիսն:

— Ֆէ՛ա, Փէ՛ա, լսո՞ւմ ես ալիքների ձայնը, ասում էր Սուրէնը, — ականջ դիր այս մէկին, որ տնքում է այնպէս անյուսօքէն. չի՞ թւում քեզ, ի'մ Փէ՛ա, որ դա հսկայ կարիքն է հեկեկում: Տե՛ս, իմ գողարիկ. նա երկաթ բազուկներ, լայն կուրծք ու հզօր թիկունք ունի. բախել է աշխատանքի բոլոր դռները, չանգուել է մայր երկրի կուրծքը, ի զո՞ւր... եղունզներն արիւնոտուել են, աչքերը մթազնել յոյսի հեռաւոր ճամբաները նայելով... Եւ հսկայ տղամարդը հօնքուր-հօնքուր լալիս է ցաւից ու զայրոյթից, մինչդեռ հեռու, հեռու տնակում մի խումբ երեխաներ կան մերկ, սովորած ու վտիտ....

— Մի՛ խօսիր, լո՞ւռ... համբուրի՛ր ինձ, մրմնջում էր Սօփիսն աչքերը կիսախումի, գլուխը յետ ճգած ու մարած նրա դրկում:

Երիտասարդը շրթունքների վրայ համբուրեց նրա հոգին:

— Ֆէ՛ա, ի'մ չքնաղ, չի՞ որ Փէաները լեռներից յաճախ իշնում եմ, մոլորուած ճամբորդի ուղին լուսաւորում ու դժբախտի ցաւն ամոքում. չի՞ նրանք նոյնիսկ լացող եղնիկի արցունքն են սրբում, ու թօշնած ծաղկի վրայ մորմոքում... Զե՞ս լսում ալիքների որոտի մէջ այս միւս ձայնը... պառաւ մայր է, երկու որդիները գնացին մի օր, այլեւս երբեք յետ չդալու համար. նրանք կենդանի խորովուեցին չոգեկաթսայի պայմթիւնից: Եւ պառաւ մայրը վշտից խելագար սառը խրճիթի մէջ օրօր է ասում հեռաւոր մեռելներին...

— Սո՞ւս, սո՞ւս, համբուրիր ինձ:

Երիտասարդը համբուրեց նրա հոգին աչքերի մէջ:

— Ականջ դիր ձայների այս ժխորին, իմ երազների քնքոյշ

դաւակ, լսի՛ր, հառաջանքներ են բոլորը՝ սեւ օձերի պէս իրար դաւարուած....

... Երաշտ է, երկինքը պղնձուած, արտերը՝ ցամաք, դաշտերը՝ խոպան, հարթութիւնը տնքում է մօտալուտ քաղցի սոսկումից. մարդ, կին, մեծ ու փոքր, ծեր ու երեխայ երկինք են նայում, աղաղակում, լալիս, աղօթում մի կտոր չոր հացի համար.. եւ կապարէ երկինքը նայում է, չե՞ս լսում ձայները... ո՞վ կը տայ մի կաթիլ լոյս նրանց հոգուն, որ հացի ճամբան գտնեն, որ քաղցից չկոտորուին...

— Մի շարունակիր, անողո՛րմ, չեմ ուզում, համբուրի՛ր ինձ, համբուրիր անվերջ, խեղդի՛ր, ոչնչացրո՛ւ ինձ:

Երիտասարդը բոց համբոյըներով խեղդում է նրա մրմունջները:

— Ֆէ՛ա, քո համբոյըով իմ հողին փթթում է, եւ հայեացք՝ որպէս վեստալկայի մշտավառ կրակ՝ սիրտս է բորբոքում... քո սէրը որպէս ճաճանչաւոր փարոս իմ ուղին կը լուսաւորի... Օ՛, եթէ դիտենաս, թէ դու ինչ հզօր ես, եթէ կամենաս միայն.—

— Համբուրի՛ր, համբուրի՛ր...

• • • • • • • • • • • • • • •
Խաւար էր. հոգեհան, խեղդող խաւար. երկնքում ոչ մի աստղ եւ թաւ անտառը վախից շշնջում էր. ծառերը խօլ ձեւերով դալարում էին, ընկեր-ընկերի մօտ ձգւում, կծկւում ու մեղմիւ տրտնջում խաւարից:

— Սուրէն, ես վախենո՛ւմ եմ...

— Զէ՞ս ես քեզ հետ եմ, մատա՛ղ, երիտասարդը գրկում է նրա իրանը, սղմում է իրան պինդ, պինդ, եւ նրանք քայլում են ծառերի միջով եւ խաւարը չորս կողմից թանձրանում է, հա՛ թանձրանում:

Եւ հեռու ձորակի մէջ գետակն է մոնչում իր յաւիտենական երգը, որ ո՛չ սկիզբ ունի եւ ոչ վախճան ինչպէս տառապանքը...
.... եւ աշխարհը յաղթեց, ցաւոտ մարդակեր աշխարհը...

Նա խից Սուրէնին:

Կեանքի մեծ ծովի վրայ յաւիտենական մրրիկը բաժանեց նրանց :

Սօֆիան յուսաբեկ ու անզօր՝ խոյս տուեց դէպի ափը, դէպի խաղաղ ափը, ուր անյոյզ երջանկութիւնն էր ժպտում, իսկ նա՛, տարերքի այն զաւակը, դէպի գոռ ալիքները, դէպի մութ խոր-

քերը նաւեց, ուր ծնունդ են առնում բոլոր փոթորիկները, բոլոր արհաւելքները...

Եւ յետ չնայեց... անիրաւը.

Սօֆիան նայում էր վշաահար ու գունատ. կ'ուզէր նետուել յետեւից, հասնել, փարել նրան, բայց ծովը շատ էր ալեկոծ, ամիքները շատ էին ահարկու եւ ինքը շատ էր թոյլ ու անզօր:

Սուրենն անյայտացաւ:

Սօֆիան ուժգնօրէն սղաց՝ ու մնջեց:

Կին էր... եւ ամուսնացաւ:

* * *

Այս էլ մի երազ էր, այս ամուսնութիւնը:

Սրտի մխացող աւերակների վրայ Սօֆիան փորձեց բարձրացնել մի այլ տաճար, որ երբեք չպիտի կարողանար մոռացնել առաջինը:

Ահա նա այնտեղ է, գրասենեակում, իր ամուսինը՝ փաստաբան Գարբիէլ Զանիկեանը, հաստ, կարճ սպարանոցով, խոշոր, ճաղատ գլխով, հեղ, խելացի աչքերով մարդը:

Բարութիւն ու անդորրութիւն է կաթկաթում նրա դէմքից, շարժումներից, մանաւանդ նրա միշտ հարթ, թաւ, ու թեթեւուէն խոպոտ ձայնից: Վերջին տարին Զանիկեանի աչքերը կամաց կամաց փոխում են, որոնք էլ աւելի հեղահամբոյր են դարձընում նրա դէմքն ու հայեացքը:

Հաստատ համոզմունքների եւ նոյնքան հաստատ սովորութիւնների տէր մարդ է: Դեռ բոլորովին մատադ երիտասարդ, նա այլպէս էր. սակաւախօս, լուրջ, աղմուկից խորչող եւ ամբողջապէս անձնատուր իր պարապմունքներին, միանդամայն անմասն գլքոցական կամ համալսարանական «խենթութիւններին»: Մշտական և անփոխիս սկզբունքն էր, ոչ ոքի վնաս չտալ, ի հարկին բարիք անել, երբ դա առանձին, ծանր զոհաբերութիւնների հետ կապուած չէ, եւ ոչ ոքի գործին չխառնուել: «Աշխարհում ամէնքի համար էլ տեղ կայ, պէտք է միայն աշխատել» կրկնում էր նա յաճախ որպէս գերազոյն իմաստութիւն եւ չէր ընդունում ամլութեան ու քաղցի դատապարտուած աշխատանք:

Կեանքի մէջ՝ նոյն մարդն է. «Լուրջ, բարի, լաւ մարդ է», ասում են նրա մասին իր շրջանում: Իր իրաւաբանական զբաղմունքից դուրս ուրիշ ոչինչ չդիտէ, եւ հմուտ է իր մասնագիտու-

թեան մէջ, բարեխիղճ աշխատաւոր յանձն առած գործի մէջ։ Առաւտեան դարթնում է միշտ որոշ ժամին, գրասենեակում փակւում, աշխատում է մինչեւ որոշ ժամ, ապա գնում է դատարան միշտ կառքով եւ ամէն օր ճիշդ երեքին տուն դառնալով, թղթապանակը թեւի տակ, յոզնած ու քրտնաթոր, նա սանդուխքների վրայից կանչում է.

— Սօ'Փիկ, ճաշը պատրա՞ստ է :

Եւ ճաշը միշտ պատրաստ է :

Սեղանի վրայ խօսում է դատաւորներից, դատից, արդարացածներից ու դատապարտուածներից իր խաղաղ ու հարթ ձայնով, ինչպէս կը պատմէր փողոցում դիպուածով տեսած սագերի մասին։ Կինը լսում է լոռութեամբ, վաղուց հետէ ձանձրացած այդ բոլորից։

Մի անդամ միայն ամուսինը խիստ ոգեւորուած էր. նա ընտրուած էր միջնորդ դատարանի նախադահ՝ իրեւ չէղոք, անկողմնակալ մարդ, այդ նրա խոշոր հասարակական ծառայութիւնն էր։

— Այսպէս է, ի՞մ ընկեր, ասում էր նա կնոջը հպարտութեամբ. արդարութիւնն ու իմաստութիւնը միշտ սառն, անաչառ չէղոքութեան մէջ է, որ իր հաւասարակշուութիւնը չի կորցնում անդամ կեանքի ամենափոթորկու շրջաններում։ Հասկանալի է թէ ինչո՞ւ միշտ նրան են դիմում հրապարակների վրայ ճշացողները, երբ իրաւունք են փնտում։

Չէղոքի իմաստութեան մասին կինը լսել է անթիւ անդամ՝ ութ տարուց ի վեր. իրենց տան մթնոլորտն անդամ ծծուած է այդ իմաստութեամբ. եւ դարձեալ լսում է լոռութեամբ ու սպանիչ ձանձրոյթով։

Այդ անյոյդ ու անդորր հոգու տէր մարդը սակայն մի հատիկ հզօր, անդիմադրելի կիրք ունէր — իր բուռն սէրը գէպի կինը, որի գեղեցկութեան հրապոյըների լուռ գերին էր։ Սակաւ էր արտայայտում խօսքերով, բայց նրան միշտ թարմ, կայտառ, կենսուրախ տեսնելու համար Զանիկեանը պատրաստ էր ամէն զոհողութիւն յանձն առնել։

Եւ առաջին տարիները Սօփիայի խենթ քմահաճոյքներն անվերջ էին։ Երեխայի պէս նա աջ ու ձախ փետտում էր կեանքի ծաղիկները եւ միշտ մնում էր յուսախար, ու նետւում դէպի այլ

հաճոյք, այլ վայելք։ Մերթ պերմ, մեծագին դգեստներ, մերթ ճամբորդութիւն դէպի անծանօթ վայրեր, բուժարաններ, խընջոյքներ, ներկայացումներ, երբեմն էլ արտառոց, խելացնոր պահանջներ։ Սօֆիան անդիտակցարար փորձում էր իր յարաճուն ու բազմազան քմահաճոյքներով լցնել մի դատարկութիւն, որ սակայն անյատակ էր... հոգու ծարաւը չէր յագենում, եւ նա աւելի ու աւելի յաճախ անծնատուր էր լինում յուսաբեկ թախծութեան։

Վերջին տարիները նա կամաց քաշում էր աշխարհից եւ ամփոփում ինքն իր մէջ։ Ամուսինն էր ստիպուած, զանազան հնարներով նրան դուրս քաշել այդ անհասկանալի անձկութեան ճիրաններից, ի զո՞ւր... Սօֆիայի հոգում մեղմիւ զարթնում էր փշրուած կեանքի կսկիծը, որպէս քնած սարդը եւ հանդարտ հիւսում էր իր սստայնը։ Հնչուն ծիծաղի տեղ բռնում էր մելանխօմիկ ժպիտը եւ բերանաբաց յօրանջող ձանձրոյթը։ ամէն ինչ այժմ նրա համար տաղտկալի էր ե՛ւ շրջապատը, ե՛ւ իր բնակարանը, ե՛ւ իր դգեստները, իր ամբողջ կեանքը, եւ մանաւանդ՝ այդ ամուսինը իր կարճ պարանոցով, վաղաժամ հերազուրկ գլխով, լիքը մարմնով, աչքերի տակի անհաճոյ պարկերով։ Զայրոյթի աստիճան անտանելի էր Սօֆիային նոյնիսկ ամուսնու բարութիւնը, եւ կ'ուզէր, որ նա չար, այլանդակ հրէշ լինի. բայց նա բարի էր, կամակատար, եւ ամէն օր որոշ ժամին յայտնում էր սանդուխքների վրայ իր անբաժան թղթապանակով եւ հեւ ի հեւ բացականչում։

— Սօֆիկ, ճաշը պատրաստ է։

— Պատրաստ է, պատրաստ է, պատասխանում էր կինը մի եղանակով, որի մէջ հնչում էր արդէն անհրապոյր, գունատ կեանքի բոլոր տաղտուկը։

Մի ցրտութիւն, որի աղբիւրը անյայտ էր ամուսնուն, օրաւուր սաստկանում, տարածւում, բռնում էր նրանց ամբողջ բնակարանը։

Նրանց հոգիները լուռ սրսփում էին սեփական յարկի տակ։

* * *

Վրայ հասան անակնկալ օրեր։

Դրսում կեանքը փոթորկում էր ալեծուփի ծովի պէս։

Նոր գաղափարներ ակօսում էին ծթուած հասկացողութիւն-

ների մռայլը եւ նրանց յանկարծական փայլի տակ բացւում էին սարսեցուցիչ պատկերներ :

Լրագրերի մէջ վերջին ժամանակ յաճախ էր լուռում Սուրէնի անունը. ո՞ւր էր նա մինչեւ այժմ, ո՞րտեղից էր յայտնուել, Սօֆիան այդ չգիտէր. եւ ինքն իրեն հաւատացնում էր, որ չի էլ ուզում իմանալ, որ միանգամայն անտարբեր է դէպի նա, որ հին սէրը անդարձ թաղուել է մոխիրների տակ այլեւս երբեք չբորբոքուելու համար : Եւ սակայն՝ ամէն առաւօտ լրագիրը բանալիս, նա նախ Սուրէնի անունն էր վինտուում, արագութեամբ կարդում էր այն բոլորը, ինչ նրան էր վերաբերում, կարդում էր, զայրանում ինքն իր վրայ այդ հետաքրքրութեան համար, դէն էր շպրտում թերթը, եւ գլուխը յետ ձգած ձեռների վրայ, մնում էր երկար ժամանակ մտախոհ : Եւ չարիքի պէս այդ անիրաւ երիտասարդը ամէն տեղ էր, նրա հզօր, անդիմադրելի խօսքը հնչում էր ամէն օր, նրա ձայնից ամբոխը եռում էր ու ծփծփում . . .

Սօֆիան ուխտում էր այլ եւս երբեք չկարդալ նրա մասին. յաջորդ լրագիրը ձեռք առնելիս աշխատում էր խոյս տալ այն տողերից, ուր նրա անունն էր, ի զուր . . . վերջը կարդում էր, ու սոսկումով նկատում, որ միայն նա' էր հետաքրքրում իրեն :

Եւ այստեղ, նրանց յարկի տակ այս հաստ մարդը իր թղթապանակով, որ կարծես նրա մարմնի մի մասն էր, իր կարճ վղով, ճաղատ գլխով, եւ ամենօրեայ կանչը . . .

— Սօֆիկ, ճաշը պատրա՞ստ է . . . Միշտ անյոյզ, միշտ խաղաղ, ասես դրսում ոչինչ չէր կատարւում :

Ա՛հ, ինչպէս կ'ուզէր Սօֆիան չլսել այդ ձայնը :

Երբ մօտենում էր ճաշի ժամը, նա անհանգստութեամբ նայում էր պատի ժամացոյցի սլաքին. զայրոյթով նկատում էր, թէ ինչպէս մետաղի այդ փոքրիկ սուր կտորը խաղում, շարժում է դէպի ճակատադրական ժամը, յամառ ու հաստատ, որպէս օրհաս :

Այդ անիծուած սլաքի շարժման մէջ նա տեսնում էր գիտակցական անողորմ ձղտում տանջել, չարչարել իրեն, թւում էր, թէ հէնց այդ սլաքը տեղ հասնելուն պէս պիտի ճշայ՝

— Սօֆիկ, ճաշը պատրա՞ստ է :

Նա պատրաստ էր փշրել այդ ժամացոյցը, կամ բռնել սլաքը

որ նա առաջ չշարժուի, չհասնի խեղդող, հոգեհան ժամին, որպէսզի չլսուի այն սպանիչ ձայնը:

Նա ատում էր այդ ձայնը, ատում էր ժամի երեքը, սանդուխքները, մանաւանդ այն թղթապանակը, որ պարունակում էր այնքան տաղտուկ թղթեր, գրոտած ու համարներով, որպէս իր ամուսնու չափած, ճեւած հոգին էր:

Ատում էր... եւ հոգու խորքում մոխիրների տակից, իրենից ծածուկ, բարձրանում էր «միւսի» պատկերը, այնպէս, ինչպէս տեսել էր նրան տարիներ առաջ, այն ահաւոր պատկերը, հմայիչ ու սարսափելի դիշեր, մռայլ ու խորհրդաւոր անտառ, անդունդում եռացող կատաղի ջրվէժ, բարձունքները խոյացող արծիւ...

— Արծիւ, արծիւ, շշնջում էր նա, եւ իր ձայնից վախեցած, լռում:

Եւ այն արծիւը սաւառնում էր ամբոխների վրայով, ո՞վ կը հասնի նրան. եւ նրա ոտների տակ հազարներ, ինչպէս անտառի դետակը այնքան տարիներ առաջ... ինչո՞ւ այժմ ինքը նրա բաղուկների վրայ չէ...

— Սօ՛ֆիկ, ճաշը պատրաստ է...

— Ա՛հ...

Կինը ցնցուեց, գէմքը կնճռեց եւ արհամարհանքի ու ցասումի ժպիտը ծոմռեց նրա շրթունքները:

Ճաշն այն օրն անցաւ կատարեալ լռութեամբ. ամուսինը աչքի տակով նայեց մի քանի անդամ, բայց հասկանալ չկարողացաւ:

— Սօ՛ֆիկ, գոյնդ լաւ չի, հիւանդ չե՞ս:

Կինը նայեց նրան թախծոտ հայեացքով, ու դարձեալ լռու մնաց:

Ամուսինը գլուխն օրօրեց, վեր կացաւ:

Հասկանալ չէր կարողանում. չէ՞ ինքը միշտ այնպէս բարի, այնպէս հաճոյակատար ամուսին է եղել: Մի վայրկեան կանդ առաւ, մտախոհ նայեց ոտքերի առաջ, ապա հանդարտ շարժուեց դէպի ննջարանը ճաշից յետոյ՝ ըստ սովորութեան, մի փոքր հանգստանալու համար:

— Գա՛րիէլ:

Ամուսինը յետ նայեց արգէն ննջարանի դրան մօտ:

— Ես ուզում եմ գնալ արտասահման, ասաց ՍօՓիան հաստատ ու վճռական:

— Արտասահման... Զանիկեանը ականջներին չէր հաւատում:

— Այո՛, արտասահման:

— Ա՞յժմ, երբ ձմեռը մօտենում է:

— Այո՛, ա'յժմ, անմիջապէս:

— Բայց... բայց, սպասի՛ր, հոդիս... դու գիտես, որ քեզ համար ես ոչինչ չեմ խնայի. ինչո՞ւ սակայն այժմ գնալ, մենակ, ձմբանը. դարնանը միասին կ'երթանք: Ու նա մօտեցաւ կնոջը:

— Ո՛չ, ես այժմ եմ ուզում, ես հիւանդ եմ. նուազում եմ. այստեղ ամէն ինչ ինձ ձանձրացնում է, ես... ես... նա չկարողացաւ շարունակել եւ բարձրաձայն հեկեկաց ու դլուխը թաղեց ձեռքերի մէջ:

— Սօ՛Փիկ, ի՞նչ է պատահել, ամուսինը չփոթուած մօտեցաւ, քնքութեամբ դրկեց նրա դլուխը եւ համբուրեց... ինչո՞ւ համար այս լացը, ի'մ ընկեր, երեխայ չե՛ս... շատ լաւ, գնա՛, երբ ուզում ես, գնա՛, մատաղ, ուր ուզում ես... ա՛յ, բոլոր դորձերս կը ձգեմ եւ քեզ հետ կը դամ...

— Ո՛չ, ո՛չ, դորձերդ մի թող, աիսոս են... մենակ եմ ուզում գնալ, մենա՛կ...

— Թո՛ղ այդպէս լինի, ի'մ աղաւնեակ, գնա մենակ. գնա՛, լաւ կաղղուրուիր որեւէ կուրօրուում... իսկ երեխա՞ն...

— Երեխա՞ն... ՍօՓիան իսպառ մոռացել էր երեխան...

— Լա՛ւ, այդ մասին յետոյ կը մտածենք, առայժմ հանգստացիր, ես կը հոգամ մնացածը, կ'ուզես տար երեխան, կ'ուզես ես կը պահեմ... ամուսինը կրկին համբուրեց նրան ու հանդարս ու մտածկոտ հեռացաւ ննջարան:

ՍօՓիան մնաց իր տեղում եւ հիացած էր իր յանկարծական երջանիկ մտքից. գնալ, փախչել, երկուսից էլ միաժամանակ փախչել, քանի չի հանդիպել նրան. այլապէս նա զգում էր, որ մօտենում է զարհուրելի աղէտը: Փախչել ժամ առաջ նրան թւում էր միակ ելքը, միակ փրկութիւնը. այս միտքը նրան իսպառ հանգըստացրեց:

Զէր սպասում թէ կը հանդիպի նրան մինչեւ մեկնիլը:

Դիպուածը սակայն այլ կերպ էր տնօրինել. տեսաւ եւ ի՞նչ պարզագութեամ...

Այժմ այլեւս ո՛չ մի նպատակ, ո՛չ մի ծրագիր չունէր. կեանքից կտրուած տարւում էր մի անծանօթ աշխարհում, անխորհուրդ ու անմիտ։ Մի հատիկ պատկեր էր մնացնել գլխում, այդ Սուրէնի դէմքն էր, նրա դիւական աչքերը, այնպէս, ինչպէս նըրան տեսաւ երէկ հրապարակում, սուբիների մէջ։ Աչքերը փակ երազում էր, եւ միշտ նոյն պատկերը… եւ նրան տարան զինուորները։

Խնքնախարէութեան այլ եւս տեղ չկար։ Սօֆիան զդում էր, որ սիրում է Սուրէնին, սիրել է միայն նրան բաժանուել նրանից, փախչել, հեռանալ չի կարող. ուր էլ գնայ, այդ սէրը նրա անբաժան ուղեկիցն է։

«Վայրէեաններ կան, որոնք յաւիտենականութիւն արժեն»։ Տարիներ յետոյ այս խօսքերը հնչում էին նրա ականջին որոշ, մէկին, ինչպէս ճակատագրի վճիռ, ինչպէս դագաղի վրայ ընկնող քարերի ձայնը։

«Յաւիտեանն ապրել մի վայրէենում»։ Սօֆիան միայն այժմ էր ըմբռնում այս խօսքերի ամբողջ արժէքը, այժմ՝ երբ նա արդէն ճաշակել էր անյոյզ, տափակ, անխորհուրդ կեանքի բոլոր դառնութիւնը։ Զգում էր որ սիրել էր Սուրէնի մէջ հէնց այն անհանդիստ, այն հոյակապ դեւը, որի դէմ կուռում էր իր սիրով, իր կանացի հրապոյրներով եւ որից յաղթուեց։ Մի միամիտ ու չքնաղ հակասութեամբ, որով այնպէս հարուստ է սիրող կնոջ հոգին, այն ժամանակ նա ուղում էր, որ իր պաշտած տղամարդը լինի այնպէս, ինչպէս որ կայ, տարերային հոգով, խօլ, շշմեցընող խոյանքներով, որ նա լինի ամրոխի կուռքը, բայց եւ պատկանի միմիայն իրան. խաղաղ, երջանիկ, վտանգից աղատ ապրի ռեփական յարկի տակ, իր զրկի մէջ։

Խեղճ սէր… հակասութիւններից հիւսուած խղճուկ երաղներ…

Այդպէս էր մտածում այն ժամանակ, տաս տարի առաջ՝ եւ այժմ իր ապրած կեանքի գունատ, անհրապոյր խեղճութեան մէջ, նա կարօտ է բուռն յոյզերի, որ ալեկոծէին նրա սիրով, կարօտ է սոսկումի, հոկայ տանջանքի խելայեղ հրապոյրներին,

որ նա կ'ուզէր մի համբոյրով ծծել տառապանքի շրթունքներից ու «յաւիտեանն ապրել մի վայրկենում» :

Վերստին յիշեց վտակի ափին ապրած չքնաղ ժամերը, կոհակների շառաչը, Սուրէնի ձայնի խորհրդաւոր ելեւէջները, այն արքեցնող շշուկը, երբ նա խօսում էր աշխարհի ցաւից եւ իր կը-րակ համբոյրներով աշխատում էր իր հոգին հալուած մետաղի պէս ձուլել սիրած կնոջ հոգու հետ :

«Ֆէ՛ա, Փէ՛ա, դու ինչո՞ւ չհասկացար նրան...»

Դուրս եկաւ պատշդամբ . Ժօրժիկը խաղում էր պարտիզում .

— Մա՛մա, մա՛մա... երեխան մեկնեց իր թաթը դէպի մայրը :

Բաց օդում, արեւի առաջ նա աւելի վտիտ ու գունատ էր երեւում . ի՞նչ կը ծնուէր «նրանից», միւսից, մտածեց Սօֆիան տիրութեամբ :

— Մա՛մա, մա՛մա, տե՛ս...

Երեխան մի փոքրիկ, հիւանդ թիթեռ ունէր ձեռքին, որ բանել էր ծաղկի վրայից, ուր կենդանին փորձում էր յետին ճիգով ջերմացնել իր յոդնած նուաղած կեանքը :

Այդ երեխան... միշտ հիւանդ, միշտ դալուկ, ու այդպէս էլ ծնուած էր, իր տարակուսանքների, հոգեկան գաղտնի տազնապների, լուռ ցաւերի այդ խղճուկ պտուզը, ասես մայրական արդանդում ապրել էր ծնողի բոլոր տանջանքը : Մանուկը տառապում էր քթի յաճախակի արիւնհոսութեամբ, որ երբ սկսում էր խիստ դժուարութեամբ էր դադարում : Եւ ամէն անդամ արեան կորստից յետոյ՝ խեղճ ժօրժիկը անկողին էր ընկնում :

Մայրը տիրութեամբ մտածում էր յաճախ՝ թէ գուցէ ինքն է պատճառ այդ անմեղ արարածի դժբախտութեան, որ իր ցաւատանջ հոգին է գրել մանուկի մէջ, խամրել նրա մատաղ կեանքը եւ գուցէ վաղաժամ գերեզման պատրաստել իր զաւակին : Եւ մի անողորմ զուզադիպութեամբ՝ այդ մանուկը որ պիտի հաշտեցնէր նրան իր կացութեան հետ, պիտի կապ դառնար մօր եւ այն սենեակում աշխատող մարդու մէջ, դարձել էր ընդհակառակը մարմնացած կոկծալի ապաշտանք, եւ շըջում էր նրա աչքերի առաջ որպէս մի մխացող, թանձրացած ցաւ : Իր կեանքն էր, կենդանի վկան մի մեծ, մի անդառնալի սխալի :

Ներս եկաւ . դադար չունէր . թափառում էր սենեակից սեն-

եակ եւ ամէն տեղ հետը ման ածում սիրտը գալարող տանջանքը : Մտաւ սեղանատուն , անցաւ ննջարան , ապա վերստին յայտնը- ւեց ընդունարանում եւ հայեացքը յառեց խորքի դրանը : Ամու- սինը դեռ այնտեղ էր : «Ի՞նչ է մնացել , Տէ՛ր Աստուած , զոնէ շուտ գնայ դատարան , կամ փակուած մնայ այնտեղ , դուրս չդայ զոնէ այսօր , ո՛չ , յաւիտեան դուրս չդայ» : Սօֆիան զգում էր , որ էլ ոյժ չունի լսելու այն սպանիչ բացականչութիւնը .

— Սօ՛Փիկ , ճաշը պատրա՞ստ է . . .

Ա՛յս , զոնէ այսօր չլսէր այդ ձայնը , որ ութ տարուց ի վեր սղոցի պէս կտրատել , արիւնոտել է նրա սիրտը , որի ամէն մի խօսքը մուրճի պէս է ընկել իր գլխին . զոնէ այսօր , այսօր ազատուէր այդ թունալից բաժակից , որ ութ տարի շարունակ խմել է լուռթեամբ , մտածում էր նա : Թուլացած նստեց , ար- մուկներով յենուեց սեղանին եւ զլուխը ձեռքերի մէջ առաւ :

Դուռը բացուեց :

Սօֆիան ցնցուեց ու դողաց :

Ամուսինը ժպտագէմ , ինքնագոհ ու երջանիկ դուրս թուաւ իր սենեակից ձեռքին մի թուղթ բռնած .

— Սօ՛Փիկ , Սօ՛Փիկ , դարձեալ ընտրուած եմ նախագահ պատւոյ ատեանի , որ պիտի դատի ի՞նչ ես կարծում , ո՞ւմ . . . Սուրէն Դ . . . ին եւ Ն . . . թերթի խմբագրին :

Այդ միջաղէպը , որ հասել էր միջնորդ դատարանի , ծանօթ էր Սօֆիային . մի քանի շաբաթ առաջ մի հրապարակային ժողո- վում արդար ցասումի վայրկենին Սուրէնը Ն . . . թերթի խմբագը- րին անուանել էր «ստորագրաց վարձկան» :

Սօֆիան լուռ էր , արձանի պէս քարացած եւ մտածում էր . «Այս ողորմելի եսասէրը չդիտէ նոյնիսկ որ նա բանտարկուած է , երբ ողջ քաղաքը դիտէ» :

— Նայի՛ր , ամուսինը մեկնեց ձեռքի թուղթը , տես ո՞վքեր են դատաւորները :

— Ցնծութիւնդ վաղաժամ է , յետ մզելով թուղթը՝ պատաս- խանեց կինը առհարկի խաղաղութեամբ . դու այս անգամ տարա- բախտաբար քո հասարակական խոշոր գործունէութեան ապա- ցոյցը տալու հաճոյքը չպիտի ունենաս : Եւ նա սեղանից առաւ ու մեկնեց ամուսնուն օրուայ լրագիրը : Ամուսինը կոտրուած ու

շիոթուած՝ լոռութեամբ առաւ թերթը, կարդաց կնոջ ցոյց տը-
ւած տեղը.

«Երէկ խուզարկեցին ու կալանաւորեցին երիտասարդ իրա-
ւաբան Սուրէն Դ...ին. պահակների խիստ հսկողութեան ներ-
քոյ՝ նրան կենտրոնական բանտ տարան»: Վերջացրեց ու հեղնօ-
րէն ժպտաց շրթունքները ծովոելով.

— Յիմա՞ր, աւելացրեց Զանիկեանը լրագիրը շպրտելով սե-
ղանի վրայ:

Սօֆիան՝ անորոշ հայեացքը հեռու, մատներով ջղաձգա-
րար խաղում էր սեղանի սիոոցի հետ:

— Կարելի՞ է հարցնել, թէ ինչո՞ւ «յիմար», հարցրեց նա
աշխատելով իրան զսպել, բայց զգաց, որ շրթունքները դողդո-
ղում են:

— Միայն յիմարը՝ ունենալով նրա տաղանդը, նրա խօսքի
ոյժը, իր իսկական պարապմունքը, իր կոչումը կը թողնէ բանտ
կ'երթայ իշու նահատակութեան համար: Զանիկեանի տոնը
ծանրախոհ էր, եւ նա մի քանի քայլ յետ ու առաջ արեց, ասես
հաստատելու համար իր խօսքերի ճշմարտութիւնը:

Սօֆիան վճեց լոել եւ վերջ տալ այս խօսակցութեանը, որ
ընդունում էր սպառնալի կերպարանք. բայց հոգին շրթունքների
վրայ էր, վիրաւոր, բողոքող հոգին. նրան էլ զսպել չէր կարող:

— Եթէ տաղանդ ու խօսքի ոյժ ունի, ի՞նչպէս է յիմար:

— Յիմար է, էլի... այլապէս ինչո՞ւ է բանտ դնում:

— Անկասկած, փոխանակ պարարտանալու եւ ամէն օր ժամի
երեքին սանդուխքներից ճչալու՝ «ճաշը պատրա՞ստ է»...

Հարուածը շեշտակի էր, դիսլաւ նպատակին:

Ամուսինը կանգ առաւ, լոռութեամբ յետ յետ քաշուեց, ձեռ-
քերը ծալեց կրծքին, նայեց կնոջ չուած աչքերով, որոնց մէջ
զայրոյթից աւելի վախ կար եւ նրանց հայեացքներն իրար հանդի-
պեցին. նոյնքան թոյն, նոյնքան ատելութիւն կար կնոջ աչքերի
մէջ, որքան քիչ առաջ արտասանած նախադասութեան մէջ: Զա-
նիկեանը պարանոցը մեղմիւ ճգեց առաջ, նա հեռում էր ու նայում
յօնքերի տակից, ասես առաջը խորխորատ էր բացւում, ապա
կլուխը յետ ճգեց եւ լայն շունչ առաւ:

Սօֆիան լուռ էր:

— Սօ՛ֆիկ... Սօ՛ֆիկ, բացականչեց նա կերկերուն, խեղ-

դուկ ձայնով ու շրթունքները կծոտելով. Սօ՛Փիա, կշռեցի՞ր ասածդ:

Ու կ'ուզէր, որ կինն ասէր, թէ յանկարծական, անմիտ բռնկման արդիւնք էր այդ չար նախաղասութիւնը, կամ երեսը ծածկէր, լոէր, իսպառ լոէր, ինքն էլ մոռացութեան կը տար, այո՛, կը համբուրէր կնոջը ու մոռացութեան կը տար:

Ո՛չ, ՍօՓիայի հայեացքի մէջ մեղմութիւն չկար. նոյն թոյնը, նոյն ատելութիւնը, նոյն պայքարող վճռական կեցուածքը:

— Սօ՛Փիա, Սօ՛Փիա... եւ նրա ձայնի մէջ այժմ հնչում էր աղերսանք, պաղատանք, նա կարծես լալաղին հայցում էր կնոջը մեղմել այդ զարհուրելի հայեացքը, արցունքի, անուշ յուզմունքի մի շիթ քամել այդ չքնաղ կոպերից, որոնք այսօր չէին թարթում, այլ շանթում էին նետերի պէս:

Կինը լուռ էր...

— Բայց, այդ անկարելի՛ է... սպասի՛ր... սպասի՛ր, ես շշմում եմ, այդ դու չասիր, — նա տարածեց ձեռները դէսի կինը — այդ դու չասիր, քո շրթունքները չարտասանեցին այդ խօսքերը... Սօ՛Փիա...

— Ո՛չ, ո՛չ, ե՛ս ասացի, ե՛ս...

— Սպասի՛ր, մի՛ շարունակիր, անողո՛րմ, դու չկշռեցիր ասածդ... այնպէս չէ՞ , չկշռեցիր, Սօ՛Փիկ, Սօ՛Փիկ...

Կինը ոտքի կանգնեց:

— Կշռեցի, այո՛, վաղուց եմ կշռել... ես տարել եմ, ես համբերել եմ տարիներ, որ մեր կեանքը դառնայ լոկ ճաշ ու անսանկան վայելք, որ մեր տան պատերի վրայ փշրուկն բոլոր աղնիւ ճիչերը, որ ոչինչ, ոչինչ չաղմկի այս յարկի եսասիրական տաղտուկ մթնոլորտը: Եւ ի՞նչ եմ եղել ես քեզ համար, խաղալք, մի զարդարուած տիկինիկ, որ ուրիշ հոգս չպիտի ունենայ, բացի քեզ դրաւելու, քեզ վայելք պատճառելու հոգսից... եւ քո երազած երջանկութիւնը ութ տարի շարունակ ես քեզ տուփ լիւլի... ի՞նչ ստացայ ինքս. դու ինձ երբեք չտուփը քեզ վտանգի մէջ զգալու դաժան, բայց ազնիւ, հզօր հաճոյքը. երբեք քո կեանքի մեղկութիւնը մի վսեմ իսենթութիւն չաղմկեց. իմ գեղեցկութիւնն ու թարմութիւնը՝ որպէս իսկական եսասէր, դու քաշ տուփը ու տրորեցիր անասնական անիմաստ կեանքի փոշիների մէջ եւ քո տափակ հոգու դատարկութիւնից փչող ձանձրոյթի

հովը, իմ լաւագոյն օրերը խամբեց, թող այդպէս լինի, բայց գոնէ առաքինութիւնն ունեցիր խոնարհուելու անձնազոհ հերոսների հպարտ, ազնիւ խոյանքների առաջ եւ... ճաշի՛ր, ճաշի՛ր... ուշ...

Նա հեկեկաց, կուրծքը բռնեց ու ընկաւ դիւանի վրայ:

Ամուսինը քարացաւ. ծնկները ծալւում էին, չընկնելու համար բռնեց բազկաթոռի թիկունքը: Իր կի՞նն էր խօսողը, Սօֆի՞կը, իր դեղանի Սօֆի՞կը... հաւատաւ չէր կարողանում աչքերին, ականջներին... բազկաթոռը դողում էր ձեռքի մէջ, բերանի ձախ անկիւնը խաղում, ծոմուում էր... նա բաց աչքով տեսնում էր ինչպէս փլչում, խորտակուում է իր տունը. իր կեանքը, իր ամբողջ կեանքը... խօսք չունէր, պատասխան չունէր... գլխում անասելի ժխոր էր, անկապ մտքերը արտառոց պատկերների հետ իրար խառնուած, դառնում էին ինչպէս մըրկի շնչով. եւ կրծքի տակ մի բան թանձրանում, բարձրանում էր, ուռչում, եռում եւ... պայթեց.

— Սօ'ֆիկ, Սօ'ֆիկ... այդ ի՞նչ արիր... ու ընկաւ բազկաթոռի մէջ: Սովորական աղաղակ չէր, այլ սրտապատառ, ահագին ճիչ մի անդառնալի աւերածի առաջ. մի բան փլաւ, մի բան փշրուեց նրանց հոգիների մէջ...

Տիրեց լուութիւն, աւերածից յետոյ իջնող ծանր, մեռելային լուութիւնը. լսում էր միայն Սօֆիայի մեղմ հեծկլտոցը, լուսամուտի ապակու վրայ յամառաբար ծեծւում, բզզում էր աշնան մի ճանճ. սեղանատանը ժամացոյցը խիեց տասներկու, լալաղին, դողդոջ հարուածներով. Զանիկեանը ոտքի ելաւ. նա հետում էր թափով եւ կուրծքը պայթեցնելու չափ. աչքերի մէջ այժմ կատաղի ցասում կար, յօնքերը կախուել էին մինչեւ թերթերունքները, ճակատին խորունկ կնճիռներ, շրթունքները պինդ իրար սղմած եւ ձեռքերը դարձեալ ծալած կրծքին: Նա մօտեցաւ կողմը դանդաղութեամբ, կանդ առաւ առաջը, երկար նայեց, ապա ձեռքը դրեց նրա ուսին.

— Լսի՛ր, դու պէտք է ինձ լսես... դու իրաւունք չունիս ինձ չլսելու... — ճայնը վճռական էր եւ տոնը խիստ — լսի՛ր, ասածներդ հասկացայ. եւ «Ճանձրոյթի Հողմ», ե՛ւ «ազնիւ խոյանքներ» ե՛ւ «լսեմ խենթութիւն»... ե՛ւ «տափակ Հոգի»... այդ բոլորը լսւ, բայց դրանցից գուրս մի ուրիշ՝ աւելի նշանակալից բանն

երեւի մոռացար ասել, եւ պէտք է ասես, այդ ես պահանջում եմ, որպէս քո ամուսին. ասա՛, դու սիրո՞ւմ ես նրան...

Սօֆիան գլուխը բարձրացրեց, թաց արտասունքների միջից նայեց նրան չեշտակի.

— Այս՛...

— Աա՛... ամուսինը կրկին յետ յետ քաշուեց լոռութեամբ, աջ ձեռքով ճակատը բռնեց, աչքերը յատակին յառած՝ ապա դանդաղօրէն դիմեց իր գրասենեակը · · · · · · · · · · · ·

— Մամա՛... մամա՛... այդ նուազ ձայնը, խղճուկ՝ որպէս մորթուղ գառան հառաչ, որ յանկարծ լսուեց նախասենեակից: Սօֆիան դիւանու վրայ եւ ամուսինը գրասենեակի դրան առաջ քարացան, իրար նայեցին սոսկումով. այդպէս էր կանչել ժօրժիկը քանի մի ամիս առաջ զարհուրելի արնեհոսութեան ժամին. այդ ճիշն էր, որ հնչեց վերստին ասես գերեզմանից, որ պէս մահուան մրմունջ...

Մի՞թէ նորից...

Դուռը բացուեց, աղախինը ներս ընկաւ հեւալով, դունատու վախեցած եւ երեխան գրկին արնաքամ, ուշակորոյս — մամա՛... մամա՛...

Մայրը ճչաց ու նետուեց դէպի մանուկը, խլեց աղախի դըրիկից, սղմեց կրծքին ու խելագարի պէս վազվում էր սենեակում.

— Բժի՛շկ, բժի՛շկ շուտով, հեծեծում էր նա:

Ամուսինը նետուեց դէպի հեռախօսը:

Ճնչեց զանդը տենդոտ, արագ արագ... բժի՛շկը տանը չի միւսին՝ նորից զանդ... հիւանդ պառկած է... երրորդ բըժիշկը, հասցէն չկայ... ի՞նչ եղաւ հասցէների գիրքը... այստեղ էր... ահա, գտաւ, թերթում է դողդոջուն մատներով... ո՞ւր է նրա անունը, համարը... գտաւ, վերստին զանդ, տանն է, կը դայ, կը դայ...

Եւ ուշացաւ...

Ֆօրժիկը՝ աչքերը փակ, կտաւի պէս սպիտակ դէմքով, նուազած ընկած էր մօր բաղուկների վրայ, մեռած թիթեռնիկը պինդ սղմած թաթիկի մէջ, եւ արխնը հոսում էր, հոսում էր քթից: Բարակ, վարդագոյն թելով ծորում էր մանուկ կեանքը եւ ան-

դառնալի կերպով տանում էր իր հետ մի ուրիշ բան, որ ծնողներին պահում էր նոյն յարկի տակ...

Ժօրժիկը մեղմիւ մարեց, ինչպէս ճրագ:


Զանիկեան ամուսիններն այժմ երկու այրիներ էին դէմ առ դէմ կանգնած օտար, խորթ, ասես երբեք իրար տեսած չլինէին. կանգնած էին իրենց ոտների առաջ բացուած խորխորատի երկու ափերին, ուր կուլ գնաց մանուկ կեանքը...

Մի շաբաթ յետոյ՝ նրանց տան դրան վրայ կարդում էին յաճախորդները. «Երդ. Հաւասարմատար Գ. Զանիկեանը հիւանդութեան պատճառով պարսովմունքները դադարեցրել է»։ կարդում էին ու յետ գնում, իսկ ներսում նա մենակ ծխում էր ու շրջում դատարկ սենեակներում:

Սօֆիան չկար...



Ա Ն Դ Ո Ւ Խ Ն Դ Ը



ԱՆԴՈՒԽԴԸ

1

Ուժասպառ ու յոգնած՝ նա նստեց ամայի ծովափին:

Շատ էր քայլել...

Ընկաւ աւազի վրայ ինչպէս փլչող ալիք, գրկեց ծնկները
եւ պղտոր հայեացքը ուղղեց դէպի անորոշ հեռուն: Ոչինչ չէր
տեսնում, նայում էր այնպէս՝ ինչպէս կը նայեն, երբ մի թան-
կագին էակ անդառնալի կերպով ծածկւում է հեռաւոր մշուշի
մէջ:

Եւ նրա յետեւում ախտաւոր ու ջուտ՝ հսկայ քաղաքն
էր մոմոռում. առջեւը՝ հեռուն, անծայրածիր ծովն էր ծըփ-
ծըփում:

Աշնան երեկոյի հովը կրքոտ հպումով խաղում էր ջրերի
հետ, հազար-հազար մանրիկ, փրփրուն կոհակներ վազում էին
դէպի ափերը, թաւալ տալիս խճերի վրայ լողացող մանուկ-
ների պէս ու յետ էին փախչում քրքրջալով:

Մով ու երկինք տակաւին լողում էին վերջալոյսի արնե-
գոյն ցոլքերի մէջ, որոնք կամաց-կամաց գունատում, քաշ-
ում էին լեռնակատարներից՝ տեղի տալով մօտեցող մառա-
խուղին:

Ստուերները մեղմիւ իջան, որպէս դարանակալ դաւագիր-
ներ, այլանդակօրէն ձգւեցին երկըի ու ծովի վրայ եւ նրանց
լայն քղանցքների ծալքերում, որպէս հսկայական պատանի
մէջ մեռան լոյսերը առանց բողոքի եւ առանց սուգի:

Ճայերը վերջին անգամ ճչացին վշտոտ, երկար ու կորան
հեռաւոր եղեգնուտների մէջ:

Նաւերի ու նաւակների առադաստներն ու կայմերը չուող
թռչունների պէս կամացուկ լուծուեցին մշուշի մէջ. հեռո՛ւ,
հեռո՛ւ ծովի խորքերում մէկը ցաւագնօրէն տնքաց ու լոեց:
Մառախուղը ծովից բարձրացաւ, թանձրացաւ եւ խաւարի հետ
եղբայրացած՝ հոսանուտ ծալքերով իջաւ, իջաւ, պարուրեց
շրջակայքը:

Մարդն իր տեղումն էր, միշտ ծնկները գրկած եւ հայեցքը դէպի անորոշ հեռուն:

Եւ նրա շուրջը ծովի պէս անհուն, ծովի պէս խորը մի թախիծ իջաւ խաւարի հետ՝ վաստակաբեկ ու մոայլ կեանքի վրայ, քրտնաթոր ու խոշտանգուած խոնջանքը, ծանրացած բազուկները կախ՝ ծունկի եկաւ, ապա կուացաւ, դրեց մայր երկրի կրծքին իր յոդնած գլուխը. երկնքից նրա վրայ թարթեց առաջին աստղը:

Ծովի խորքում դարձեալ մէկը տնքաց երկա՛ր, ցաւագին ու լուեց:

Այն կեանքի անքուն ցաւն էր հեծեծում վաղուայ երկիւղից...

Մարդը լսեց այդ հեծեծանքը եւ նրա գլուխը մեղմիւ քաշ ընկաւ կրծքին...

Աւազը խշխչաց, մի երիտասարդ եւ մի մատաղ կին բաղեղի պէս իրար փարած՝ անցան ու լուծուեցին խաւարի մէջ տաք համբոյրի ձայնը խառնելով ալիքների շրշիւնին:

Մարդը մի վայրկեան յետ նայեց նրանց, ապա կրկին ուղղուեց եւ հայեցքը վերստին դէպի հեռուն, նայում էր եւ ոչինչ չէր տեսնում: Նա ասես մեխուած էր իր տեղում:

Մի ամսից ի վեր, քաղաքում անընդհատ թափառելուց յետոյ, յոդնած ու յուսաբեկ, նա գալիս էր այստեղ՝ ծովափը, նստում էր նոյն դիրքով, նայում էր անթարթ դէպի հեռուն, մինչեւ որ խաւարը պարուրում էր աշխարհը: Ինչո՞ւ էր դէպի ծովը գալիս, եւ ի՞նչ գաղտնի ձեռք էր մղում նրան յատկապէս դէպի նոյն տեղը. նա ասել չէր կարող, բայց հոգին այստեղ թեթեւանում էր: Յիշում էր, որ նաւից առաջին անդամ այստեղ ափ դուրս եկաւ, այստեղ առաջին անդամ ոտք կոխեց այն ցամաքը, ուր եկել էր այնքան հրապուրիչ երազներով, որոնք այնպէս վաղ պիտի ցնդուէին, որպէս վաղորդեան շամանդաղը արեւի առաջին շողերի տակ:

Ծովի հետ մէկտեղ՝ նա խորհում էր եւ կ'ուզէր լուծել իր կեանքի դաժան առեղծուածը, որ ծիծիում էր այդ անհանգիստ ալիքների մէջ: Եւ նա ի՞նչ սիրով կ'ուզէր պատմել այս հինաւուրց վհուկին իր կեանքը, իր ամբողջ կեանքը, պատմել եւ ճչալ՝ «ասա՛, ծո՛վ, ինչո՞ւ այսպէս. տե՛ս, երկաթ բազուկ-

ներ ունիմ եւ հզօր կուրծք ու թիկունք, ես այնպէս եմ ուղում աշխատել, եւ այնպէս գիտեմ աշխատել. քա՛նի հոգի են ինձ սպասում, աչքերը դրանը, ախր եթէ ստեղծուել են, պէտք է ապրեն, այնպէս չէ՞... ախր մեծերն են ասել, «Երբ Աստուած ստեղծում է մարդուն, ապրուատն էլ հետն է ստեղծում»։ ապա ո՞ւր է նրանց ապրուատը. ո՞ւմ մօտ, ո՞ւմ ձեռքին, փնտռում եմ, դռներ եմ բաղխում, բազուկներս ու թիկունքս եմ առաջարկում, չկայ, չկայ... ասա՛, ծո՛վ, ի՞նչո՞ւ այսպէս...»։

Երջանիկ զոյգը եկաւ. դարձեալ աւազները խշխշացին, դարձեալ լսուեց տաք համբոյրների ճայնը...

Մարդն այս անդամ յետ չնայեց, նա խօսում էր ծովի հետ. ալիքները ուժգին թափով եկան եւ նրա ոտների առաջ փշրուեցին տնքալով։

«Ասա՛, ծո՛վ, ի՞նչու այսպէս... ի՞նչու ես տնքում խաւարի մէջ...»

Ծովը լոեց :

Նա գլուխը քաշ ձգեց, մօտիկ անցեալի յուշերը, պատկերները պաշարեցին նրա երեւակայութիւնը. բոլորն էլ հրապուրիչ ու վշտոտ, բայց այնքան հեռու, որքան այս անեղը հորիզոնը եւ այնպէս անհաս, որպէս այս խաւարի մէջ փախչող ալիքներն իրենց սեւ գաղտնիքներով։

2

Ա՛յդ պատկերները... նա աչքերը փակեց ու երազում էր...»

Փոքրիկ մրոտ խրճիթի մէջ՝ պառաւ մայրը մանում էր մի հին ճոճուան ճախարակ, որ այնպէս լաւ էր, այնքան սիրելի։ Շատ պառաւ մայրեր էին ձիթել նրա ականջները, ձգձգել, ձիւթել նրա լարերը, ուղղել, մաքրել նրա իլիկը եւ մանե՛լ, մանե՛լ...»

Եւ այժմ իր մայրն էր մանում։

Սպիտակ բամբակի պատրոյգները նրա չորացած մատների արանքից հոսում, փաթաթւում էին իլիկին, ապա ճերմակ, բարակ թելը ձիւնեղէն շերտով դնում էր պարուրելու վիլակը եւ կաժն էր կաղմւում։

Եւ մայր ու ճախարակ երգում էին միասին։

Ճախարակը ճոռում էր լալագին եւ մայրը երգում էր մի

հին վշտոտ երդ, որ ոչ սկիզբ ունէր եւ ոչ վախճան։ Անծայր ու խորունկ հառաջանքի մի կտոր էր այն երդը, դարաւոր զուլումի երդը, որ անհուն ժամանակներից հնչում է աշխարհի վրայ եւ որի մէջ միշտ լալիս է տրորուած, անզօր խնդութիւնը, կորած գոյութիւնների հոգեմաշ աշխատանքը եւ անճարակ ցաւը թոյլերի, որոնք փշրուում են հզօրների երկաթ կրունկների տակ, փշրուում են եւ խոյս տալիս հայրենի երկրից վտարանղի, հալածական, քաղցած։

«Սեւ սարերից դումանն իջաւ դաշտերին,
«Անուշ հաւքեր, ո՞ւր է գնում ձեր ճամբան,
«Չուլումն եկաւ ցաւը տիրեց աշխարհին,
«Դարի՛ք հաւքեր, թոէ՛ք, անցէ՛ք անգուման։
«Սեւ սարերից դումանն իջաւ դաշտերին,
«Ո՞վ է լալիս հօնքուր հօնքուր, էն ձորում։
«Անճա՛ր եղնիկ, մատաղ աչքիդ արցունքին,
«Ո՞ր չար ձեռքից նետը դիպաւ քո սրտին»...

Եւ պառաւ մօր հետ լալիս էր ճախարակը, հեծեծում, տնքում...

Եւ ճախարակի հետ մէկտեղ լալիս էին այնքան պառաւ մայրեր, որոնք մի օր ծեր, անզօր ձեռքերով դարձրել էին նրա թեւը, շտկել իլիկը, երդել կարիքն ու անճարակ, անյոյս ցաւը մի մրոտ խրճիթի մէջ։ Բոլոր այդ մայրերը՝ կորած, անթիւ սերունդների ողբասացներ, նոյնակս վշտահար, նոյնակս փշրուած խեղճութեան ծանր բեռի տակ, դուրս էին դալիս իրենց դերեկմաններից, մեղմիւ շարուում էին խրճի պատերի տակ, ճայնակցում էին այս պառաւին, որ երդում էր հին, լաւ երդը, եւ մանում էր հին, լաւ ճախարակը։

Լացով էր գառնում թեւը ճախարակի, լացով թանձրանում թելն իլիկի վրայ, յետոյ կտաւ դառնում, արցունքի պէս մաքուր, սպիտակ կտաւ, որ պիտի ծածկէր դեղջուկ մերկութիւնը, պիտի պատանէր մեռելներին հողի տակ։

Երեսուն տարի առաջ այրիացած մայրը իր մինուճար որդու՝ Արութի սիրուն, ծունկը ծալել էր իր տանը նստել, սեւ մազն սպիտակ հիւսել, մանե՛լ էր, մանե՛լ... որ զաւակը հասնի, օջախը վառ պահի, առաստաղը սեւացնի, իր ծեր օրերին նեցուկ դառնայ։ Եւ երեսուն տարի շարունակ մայր ու ճախա-

րակ միասին վաստակել էին, լացել ու ժպտացել, երգել ու տիրել:

Արութը սիրում էր մօրը, նրա վաղաժամ կնճիռներով պատաժ անուշ գէմքը, նրա մեղմ աչքերը, որոնցից վիշտ ու սէր էր կաթկաթում, նրա քնքոյշ ու դարդուտ ձայնը, որ հնչում էր խրճիթում լացող հողմի պէս: Սիրում էր այն ամէնը, ինչով այդ վաստակաբեկ, վշտահար կինը ապրել էր այնքան տարիներ, սիրում էր նրա ճախարակը, նրա ճռոցը, եւ հայրենի, աղքատիկ, մրոտ խրճիթը: Եւ մայր ու ճախարակ, խրճիթ ու թոնիր, դոմ ու աքաղաղ, նրա գլխում միացել, դարձել էին մի գրաւիչ ամբողջութիւն եւ բոլորի վրայ, ամէն առաւօտ, որպէս երկնային օրհնութիւն, որպէս մայրական աղօթքի մըրմունջ, բարձրանում էր եւ գալարւում հայրենի տան ծուխը պալան—պալան:

Յետոյ այդ ամէնի վրայ աւելցաւ իր կինը, իր գեղանի ծովիկը, որի գեղեցկութեան հրապոյրը փայլ տուեց մռայլ խրճին եւ պառաւ մօր կնճիռների վրայ խաղաց որպէս վաղորդեան արեւի ցոլքը: Ապա խրճիթը կենդանացաւ երեխաների ձայնով, որոնք հետզհետէ աշխարհ գալով, իրենց հետ բերին ցնծութիւն ու կեանք:

Մայրը թխում էր, եփում ու յետոյ մանում էր իր ճախարակը, ծովիկը կարում էր, կարկատում, իսկ ինքը՝ Արութը աշխատում էր դաշտերում, որ երեխաները խաղան, երգեն, զուարձանան ու աճե՞ն.. .

Եւ լա՛ւ էր, լա՛ւ էր այդ բոլորը...

Գիւլը զուլում շատ ունի. կարկուտ ու վաշխառու, հարկ ու մտրակ, երաշտ ու հեղեղ, մորեխ ու կալուածատէր-բէդ: Մենակ մարդ էր, մենակութեան տէրը մեռնի.

«Բաղի ու սաղի ձաղն էլ,

«Թո՛ղ լճերում մենակ չը՛լնի...»:

Գիւլն անիծած է... Միշտ տրորուած ու իրաւագուրկ, նա էլ կատաղարար տրորում է ու զրկում իր ծոցում եղած թոյլերին, անզօրներին, անճարներին:

Վա՛յ խեղճին...

Մենակ մարդ էր, թեւ ու թիկունք չունէր. ծեծում էին՝ ջուրը կտրում, արտը չորացնում, ծեծում էին՝ հարկը երկու-

տակ առնում, ծեծում էին՝ կալից ցորենը քաշում բէգի ծառաները. ծեծում էին հէնց այնպէս՝ երբ հարկաւոր էր մէկին ծեծել ու բանտ նետել... չէ՞ որ բանտը նրա համար է որ մէջը մարդ լինի...

Անողո՞րմ գիւղ...

Այնտեղ գլուխ թափելու համար կամ պէտք է դրանի ոյժ ունենալ, կամ բոռնցքի. Արութը չունէր ոչ մէկը եւ ոչ միւսը. մենակ էր եւ աղքատ:

Ուտող բերանները տանը շատացան, նա չարչարւում էր ինչպէս աւազի վրայ թրպրտացող ձուկը, բայց պարտքը աճեց, հողը քչացաւ, կարկուտն ու երաշտը վրայ-վրայ լրացրին մը-նացածը: Ճախարակը մանում էր համար մանում, բայց պառաւած մօր թոյլ բազուկները հաղիւ էին դարձնում նրա թեւը եւ աչ-քերն էլ չէին ջոկում թելի հաստն ու բարակը. գեղանի Ծովիկը գլուխը քաշ կարում էր հա կարում, բայց ձմբանը ալիւր ըլ-կար եւ պարտատէրը աւելի եւ աւելի յաճախ էր թրիկացնում նրանց դուռը: Այդ թըխկոցը... միշտ վաղ առաւօտեան, դեռ աչքը չբացած, դեռ երեսը չլուացած, դեռ դէպի աղօթա-րանը երեսը չխաչակնքած: Եթէ նա՛, այդ անիրաւ պարտա-տէրը կէսօրին դար, երեկոյեան դար, այնքան ցաւ չէր լինի, բայց վաղ առաւօտի բարիլոյսին նրա թրիկոցը հնչում էր որպէս սեւ անէծք, որ նստում էր ամբողջ օրուայ աշխատանքի վրայ:

Հուռո՞ւ, աղքատի օրն անիծած...

Արութը կամաց կամաց մոայլուեց, թափառեց մեն-մե-նակ, մտածեց, ելք էր փնտում եւ ելք չկար: Եւ մի օր նա տուն եկաւ, կանգնեց խրճթի մէջ տեղում.

— Ես գնում եմ, մա՛յրիկ, ասաց, էլ չի ապրում. գնում եմ գլուխս սար ու քարի տալու. տղամարդ եմ, չէ՞՞, եւ աշ-խարհը լայն է... մանի՛ր քանի կ'ուզես, խե՛ղճ պառաւ, էլ բան չի դուրս դայ. երեխանները թոնիր ձգես մշահոտ չի դայ, ձըմ-չի դուրս դայ. աշխան հարկը հեռու չէ, պարտատէրը վաղն էլի դուռը կը թրիկացնի, տուր թող տանի էն կովը եւ ես... գնո՞ւմ եմ. աշխարհը լայն է, չէ՞՞...

Շուարած մայրը ճախարակը թողեց եւ ձեռքերը ծնկնե-րին ձգեց. Ծովիկը գլուխը բարձրացրեց, երկիւղի հետ խառն

խանդաղատանքով ամուսնուն նայեց, ապա երեք հայեացքներն իրար հանդիպեցին եւ լռելեայն հասկացան իրար...

Ախր զարիբութի՛ւն... տէ՛րը մեռնի... ես ի՛նչ գիտեմ, հազար ու մի խեր ու շառ... էլի էստեղ... Աստուած ողորմած է... բոլոր դռները խօմ չեն փակուի մեր առաջ... կուրանան աչքերս... եւ երկու կաթիլ արցունք իջան, իջան ու կորան պառաւի կնճիռների մէջ:

Ծովիկը լուռ էր եւ կամացուկ ձեռքը աչքերին տարաւ ու սրբեց :

— Մա՛յրիկ, Աստուած մենակ մարդու Աստուած չի. գիւղըն անիծած է, կամ փող պէտք է ունենաս այստեղ, կամ բըռունցք գլուխ թափելու համար. ախալէր չունիմ, փող կը ճարեմ. քչե՞րն են գնացել մարդ դարձել. Մնոյի տղան երէկ մէկէլ օր եկաւ, ինչե՞ր էր պատմում, տղամարդի համար վաստակի հազար ճամբայ կայ... Ծուտ կը դամ:

— Ախր զարիբութի՛ւն... հազար ու մի խեր ու շառ, ո՛րդի...

— էլ չի ապրում, եղաւ պատասխանը:

Ծովիկը այն օրը շատ լաց եղաւ. երեխաներն իրար նայեցին եղնիկի անմեղ աչքերով եւ բարձրաձայն հեկեկացին, մայրը կծկուեց, փոքրացաւ իր ճախարակի տակ ու լռելեայն քամեց արցունքները, Արութը զսպեց իրեն... տղամարդ էր... եւ գնաց...

Նաւը՝ մի ահապին հրէշ, կանգ առաւ մեծ քաղաքի ծովափին, Արութին ուրիշ շատ շատերի հետ ցամաք շվրտեց եւ յետ դարձաւ, մոնչալով գնաց կորչելու հեռու հորիզոնում: Արութը մնաց կանգնած եւ մի ահապին վիշտ՝ ծանր ու սեւ համակեց նրա հոգին այս անծանօթ ցամաքի վրայ, ուր ամէն ինչ այնպէս սառն էր, անողորմ ու խորթ. նրան շփոթում էին ե՛ւ կեանքի պայքարով բռնուած այս կատաղի ամբոխը, ե՛ւ այս ահապին, խոժոռ ոստիկանները, ե՛ւ ճչացող, աղմկուող բեռնակիրները, որոնք քաշքում էին հասած ճամբորդներին:

Եետ նայեց դէպի հեռացող նաւը եւ հայեացքի մէջ մխում էր ափասսանքն ու ցաւը. ու թւում էր նրան, թէ այդ նաւը անդառնալի կերպով իր հետ տարաւ նրա վերադարձի, նրա եր-

ջանկութեան յոյսը, տարաւ նրա հայրենի տունը։ Երկար նա-
յում էր եւ քանի հեռանում էր նաւը, նրա երկիւղն ու յուսա-
հատութիւնն աւելի էր աճում, ու կ'ուղէր ճշալ ահագին ճայ-
նով, աղաչել, լալ, որ նա կանդ առնի, յետ գայ իրան տանե-
լու... նաւը անտարբեր ու անողորմ սլանում էր մռնչալով ջը-
րերի վրայ, նրա կողերի տակ ալիքները փրփրում, եռում էին
եւ ահագին, մռւգ զանգուածը կամաց կամաց լուծում էր մա-
նուշակ մշուշի մէջ... եւ ծածկուեց։

Այնուհետեւ դեռ երկար շուարած մնացել էր Արութը,
շշկլած այծեամի պէս չորս կողմն էր նայում ասես փախուստի
ճանապարհ որոնելով, ականջներում հնչում էր նաւահան-
դըստի ժխորի աղմուկը, անորոշ, անհասկնալի մռմռոցը, ապա
երբ կամաց կամաց բազմութիւնը քաշուեց, նա շալակեց իր
պարկը եւ դանդաղ, յամրաքայլ ընթացքով կորաւ փողոցներից
մէկում։

Պէտք էր շուտով դործ գտնել, փող վաստակել եւ շատ,
շատ փող...

3

Եւ մի ամիս շարունակ նա դործ էր փնտուել. բաղսել էր
բոլոր գործարանների դռները, կանդ էր առել բոլոր մեծ վա-
ճառատների առաջ, դիմել էր փողոցով անցնող ամէն մի լաւ
հագնուած մարդի եւ միշտ ձեռնունայն, միշտ մերժուած։ Ու-
տիկանները նրան հրճել, հայհոյել էին, անցագիր պահան-
ջելիս. գռնապանները ծաղրել, կառքերը դիպել էին, դէն ըլ-
պըրտել եւ ամէնքը կարծես խօսք մէկ արած՝ ուխտել էին ժամ
առ ժամ փետտել նրա լաւ յոյսերը։ Արութն զգում էր, թէ ինչ-
պէս օր աւուր ոտները թուլանում են, բազուկները անմտօքէն
քաշ ընկնում եւ երկարում, ու սիրտը ճմլում էր անորոշ վա-
խից ու յուսաբեկութիւնից։

Արութը կորչում էր...

Նա թափառում էր ամբողջ օրը, յաճախ քաղցած, միշտ
դառնացած ու անհանդիստ, ապա երեկոյեան ուժասպառ, յու-
սահատ գնում էր դէպի ծովափ ասես գտնելու այն նաւը, որ
նրան այսպէս անսիրտ կերպով շպրտել էր այս անհիւրընկալ,
քարսիրտ քաղաքը։

Եւ նաւը չկա՛ր, չկա՛ր...

Այս երեկոյ նա դարձեալ ծովափումն էր, դարձեալ նա-
յում էր հեռուն ու անծայր թախիծը համակել էր նրա հողին:
Հայրենի պատկերները մառախուղի պէս եկան անցան աչքի
առաջից, եւ Արութին թողին իր տեղում: Նա էլ ոչինչ չէր
մտածում, օրօրւում, տարուբերւում էր անորոշութեան մէջ,
ինչպէս ալիքն անեղը ծովում: Եւ անզգայօրէն՝ նա նախ թեք
ընկաւ նստած տեղում, ապա ամբողջ մարմնով ձգուեց, փըռ-
ւեց աւազի վրայ, ձեռքերը դլիսի տակ, եւ աչքերը յառած աստ-
ղերին: Ծովափի ճրագները մէկիկ-մէկիկ վառուեցին եւ երե-
րուն ցոլքեր էին արձակում ջրերի մէջ: Ալիքները դալիս փըռը-
ւում էին ափին եւ նրանց ձայնը օրօրւում էր Արութին երազ-
ների մէջ: Նա այնպէս կ'ուղէր մնալ այսպէս անշարժ, հալուել,
լուծուել մայր երկրի հետ, այլ եւս ոչինչ չզգալ, ոչինչ
չխորհել:

Ժամեր անցան, խաւարը թանձրացաւ, աստղերը եկան
բոյլերով, լողում էին ջրերի մէջ, թրթոում, խաղում արձա-
թափայլ ձկների պէս եւ Արութը ոյժ չունէր վեր կենալու, ա-
նուշ թմրութիւնը բռնել էր նրա ամբողջ կութիւնը եւ նա աչ-
քերը խուփ՝ օրօրւում էր վշտոտ անուրջների մէջ:

Աւազը շատ մօտիկ խշխաց. յանկարծ մէկը կանգնեց նրա
դլիսալերեւը, ապա կռացած՝ նայում էր նրա դէմքին, ըստ
երեւոյթին իմանալու համար քնա՞ծ է, արթո՞ւն, թէ՞ մեռած:

Արութը աչքերը բացեց՝ նայում էր:

— Հօ... բանդ լաւ չի երեւում, բարեկա՛մ, ասաց ան-
ծանօթը:

Արութը լոութեամբ նստեց. նրա առաջ կանգնած էր մի
կարճահասակ մարդ, որի դէմքը սակայն տեսնել չէր կարողա-
նում:

— Տօ՛, մի ձայն տուր, ոտքի ել, հիւանդ չե՞ս, ի՞նչ ես
շինում այստեղ այս չամին, կրկնեց անծանօթը:

— Ե՞ս... չէ, ես հիւանդ չեմ... հէնց այնպէս պառկել
եմ... Արութն եմ, Խ... դիւղացի... պառկել եմ ինձ համար...
միտք եմ անում, պատասխանեց Արութը շփոթուած, ու ոտքի
ելաւ, ձեռքը բնազգօրէն դէպի գրպանը տանելով, ուր իր վեր-
ջին մի քանի ըուբլիներն էին:

— Արո՞ւթն ես... պա՛ քո տունը շինուի... Արո՞ւթն ես...

անձանօթը յիտ յիտ քաշւեց սաստիկ ծիծաղելով, ապա կրկին մօտ եկաւ, բանեց նրա ուսում և նայում էր աչքիրին, տօ՛, Արո՛ւթ մանաւո՞ւմ ես ինձ ...

— Այս մութէ, որտեղից ճանաչմ մասնաւում էր զարմացն, դժվար մուշկում էր նրան, նայում էր ինչ ասմէ, չարունակեց Երութը, ձախող ոնց որ ճանաչում եմ ...

— Բողիկնց թրոսուր ...

— Վա՛ս, քո տոնը լինուի, թո՛րոս, ո՞վ կը սպասէր: Երինի՞ց իլար դու ինձ համար նրանք մեռց մնինցին իրար, համապատասխան էին, հեռու աղջականներ, մանկութեան լաւ ընկերներ:

— Տօ՛, գու ապա՞ղ դու, Արո՛ւթ, Արո՛ւթ, չենանս գու, Թորոսը կրկին նսից նրա ուսին, ու ծիծաղեց մէքը, անհոգ ծիծաղով:

— Եկայ, էլլի, եկայ յու էլլա ապրել չիր լինում մէր քաշրատում ... խօ դիմես ու եկայ, բայց երանի թէ ուսու կոտրուէր, չըալի ...

— Հըլ, հարէ հալ չի երեւում ...

— Էլ մի ասա, մի երկու օր էլ այս լինակում մնամ, ծով կը լինինք ...

— Եղովը քո գուշւանն ընկերի ... բանիդ կաց, ես այստեղ եմ ... փող, բան կա՞յ չէքրդ:

— Մի քանի կոսէկ գեռ մնում է ... մի ամիս անեղործ թափառում եմ, էկս կուտա, կէս քաղցած ... կ'է, քաղցած էլ մի բան չի, թո՛րոս, կուպաչան են, ամէնքը կուպաչան են:

— Հա՞յ կոս թորոսը կրկին բարձրամայք ծիծաղեց ... դու քաղցած էլ կը լինես. նա մեռքող նսից Երութիւ փորին, պա՛, քո տոնը լինուի, փորդ քաղցած աղուէսի պէս մէջիդէ է կրկիւ:

— Ասացի չի՞ս, որ ամէն օր կուշտ ուտէի, հիմա երկու շարաթ առաջ էի ծովն ընկիւ, վերում մնացել է երկու բուրմի լիսուն կոսէկ, մի վերին յոյս ու ապաւէնը:

— Ցեսնեմ:

Արութը մեռքը ծոցը տարաւ, գուըս հանեց այնտեղից մի փոքրիկ քանի եւ մնինց թորոսին, որ լուսթեամբ առաւ, առանց բանարու մեռքում խաղացնում էր:

— Այս է թորոսը ... ը՛հ, ես աղքատութեան տիրու... եւ բոլոր թափով քանից զպտեց ծովը եւ սկսեց սաստիկ ծիծաղեցին, մինչեւն Արութը շաբաթ նայում էր լուսթեամբ ու մը-տածում, իմաստը չէ՝ արքեօչ իր ճնկերը:

— Տօ՛, գու գի՞տ ես...

Թորոսը գորը բռնած քրջում էր. ապա յանկարծ լույս, ու մեռքը զննում կը ուսին լրաց լիութեամբ ասաց.

— Հիմա, ամիսէր տղայ, գու իմն ես ... քո զործն էլ, քո ապրուածն էլ էս զնիս ... կ'ը, մի թա՛փ առ, լարտուիր ... Բողիկնց թորոսն եմ ես, անոն կաց, տղամարդ եղիր ... էլ ո՞ր օրուայ համար ենց ընկեր, աղջական ...

Մի որդ սուուց լուսեց ծովի խորդից. Թորոսը պատասխանեց մասն ուղղում եւ ականիները սրբ: Քիչ յատոյ հաւարի մէջ, յերի վրայ լուսեց թիանենիր շփոցը. մի նատակ էր թափառում ծովի վրայ անկոյս ու խորհրդաւոր: Թորոսը շատապ շապ զիմեց դէպի այն կողով, ուր նատակն էր. թիանիների ձայնը լուց. նաւակը մտուցաւ ափին. երեւացին մի քանի շատուենիր աղօտ ու անորոշ. Թորոսը քառորդ ժամի չափ նրանց հնա խօսում էր. նրա մայնի լուսում էր մէրժի որպէս զատակիր փափսուկ, եւ մերժ որպէս ցավուստ մէջ հրաման: Արութը ունինչ չիր համանում, նայում էր զարմացած: Այս բոլորը նրան թը-ւում էր մի տարօրինակ հէշիսթ:

Թորոսը իմ եկաւ:

— Ա՛յ, թէ կը յանդուի՞ ... հուռ՛ւ ես մեր ... նա բռնեց-քը ցցէց խաւարի մէջ սպանալով աներեւոյի մնին ... զը-նա՞նք, զու քաղցած ես ...

Եւ նրանք լուսուեցին խաւարի մէջ ...

Նրանք միասին իշնն մէ ճաշարան:

Թորոսը պատուիրեց մի ճոխ ընթիրիք եւ լաւ զինի:

— Խմի՛ր, ամիսէր տղայ, զո կենացած, զո գալատեան կենացը. եւ երկու ընկերները բաժանենը շիփկացրին ու դատարկեցին: Արութը երջանիկ էր: Այս ընկերոջ անակնիւս հովանու տակ ինչն իրան փոփոխած էր համարում: Ուսում էր ու խուզ համարով: Եւ յետոյ յուչեք ունին, հին, լաւ յուչեք, ման-

— Այս է բոլորը... ը՛հ, ես աղքատութեան տիրու... եւ բոլոր թափով քսակը շպրտեց ծովը եւ սկսեց սաստիկ ծիծառել, մինչդեռ Արութը շուտարած նայում էր լոռութեամբ ու մըտածում, խելագար չէ՞ արդեօք իր ընկերը:

— Տօ՛, դու գի՞ծ ես...

Թորոսը փորը բռնած քրքջում էր. ապա յանկարծ լոեց, ու ձեռքը դնելով նրա ուսին լրջութեամբ ասաց.

— Հիմա, ախազէ՛ր տղայ, դու իմն ես... քո գործն էլ, քո ապրուսոն էլ էս վզիս... հը՛, մի թա՛փ առ, շարժուիր... Բողիկենց Թորոսն եմ ես, անհոդ կաց, տղամարդ եղիր... էլ ո՞ր օրուայ համար ենք ընկեր, ազգական...

Մի սուր սուլոց լսուեց ծովի խորքից. Թորոսը պատասխանեց նման սուլոցով եւ ականջները սրեց. քիչ յետոյ խաւարի մէջ, ջրերի վրայ լսուեց թիակների շրփոցը. մի նաւակ էր թափառում ծովի վրայ անլոյս ու խորհրդաւոր: Թորոսը շտապ շտապ դիմեց դէպի այն կողմը, ուր նաւակն էր. թիակների ձայնը լոեց. նաւակը մօտեցաւ ափին. երեւացին մի քանի լսուերներ աղօտ ու անորոշ. Թորոսը քառորդ ժամի չափ նրանց հետ խօսում էր. նրա ձայնը լսում էր մերթ որպէս դաւադիր փափսուկ, եւ մերթ որպէս ցասկոտ մի հրաման: Արութը ոչինչ չէր հասկանում, նայում էր զարմացած: Այս բոլորը նրան թըւում էր մի տարօրինակ հէքիաթ:

Թորոսը յետ եկաւ:

— Ա՛յ, թէ կը յաջողուի՛... հուո՞ւ ես ձեր... նա բռունցքը ցցեց խաւարի մէջ սպառնալով աներեւոյթ մէկին... գընա՛նք, դու քաղցած ես...

Եւ նրանք լուծուեցին խաւարի մէջ...

Նրանք միասին իջան մի ճաշարան:

Թորոսը պատուիրեց մի ճոխ ընթրիք եւ լաւ գինի:

— Խմի՛ր, ախազէ՛ր տղայ, քո կենացը, քո գալստեան կենացը. եւ երկու ընկերները բաժակները ըրխկացրին ու դատարկեցին: Արութը երջանիկ էր: Այս ընկերոջ անակնկալ հովանուտակ ինքն իրան փրկուած էր համարում: Ուտում էր ու խմում հաճոյքով: Եւ յետոյ յուշեր ունէին, հին, լաւ յուշեր, ման-

կութեան ու պատանեկութեան օրերից . Արութի լեզուն բացուել էր, նա խօսում էր, խօսում էր անվերջ...

— Տօ՛, մի՞տդ է, ագռաւների ճուտեր էիր ցած բերում, թո՛րոս, ու բարձրացար բարդու ամենաբարձր տեղը: Ճուտը հանեցիր բնից ու յանկարծ ընկար ահազին բարձրութիւնից, մէկ թեւդ կոտրուեց, միւս ձեռքով պինդ սղմել էիր ճուտը ու խեղդել ձեռքիդ մէջ, իսկ մենք երեխաներով նայում էինք ծառի կատարին ու ծիծաղում, այնտեղ քաշ էր ընկել պատուած վարտիկիդ էիսը... Ա՛յ, թո՛րոս, թո՛րոս...

— Հի... հի... հի... թորոսը ծիծաղում էր. քո կենացը, ախալէ՛ր տղայ:

— Մի անդամ էլ, յիշո՞ւմ ես, պառաւ հուրիխանը դաշտից էր գալիս ու նստեց ձեր բաղի պատի տակ հանդստանալու, դու կամացուկ մօտեցար, ճիպոտով խառնեցիր պատի ճեղքի մեղուների բունը. նրանք դուրս թափուեցին ու խեղճ պառաւին ուղղակի քրքրեցին. նա թաւալ էր տալիս, ճչում, լալիս, օդնութիւն կանչում, իսկ մեղուները կծոտում էին աւելի եւ աւելի, եւ մենք փախանք:

— Հի... հի... հի...

— Եետոյ երբ հուրիխանը դանդատուեց հօրդ, դու ջիպրու նրանց իշխ պոչը կտրեցիր, օյին էիր էէ՛:

— Հի, հի, հի... Տօ՛, ի՞նչ լաւ յիշում ես... օրեր էին համա՞:

— Ամա չար էիր համա՞... մի՞տդ է, մի անդամ էլ աշուղ Աղամին, որ երկու աչքով կոյր էր, ձգել էիր յետեւդ եւ տանում էիր գեղամիջից. խեղճ կոյրին հաւատացրել էիր թէ դիշերն անձրեւ է եկել, գետինը ցեխ է, ջրեր կան. «այստեղ ջուր է, թոփ'ր, ուստա Աղամ», ասում էիր, առաջ անցնելով եւ խեղճ հալլեւը կոյրը թափ էր առնում, թոչում չոր գետնի վրայ, ու դու հռհռալէն ծիծաղում էիր... Ա՛յս, թո՛րոս, թո՛րոս....

— Հի, հի, հի... խմի՛ր, ա'խալէր, մեր գիւղի կենացը, բայց խօսքը մեր մէջ մնայ, գիւղն էլ մի բան չի... հուո՞ւ, գիւղը հիմնողին ես ինչ ասեմ... գիտե՛ս, անասունների պէս չարչարւում են չուն ու գէլի համար, ու յետոյ քաղցած, քաղցած, հ՛ը ես աշխարհի հիմքն անիծեմ, թորոսը բոռւնցքով ուժդին

հարուածեց սեղանին եւ աչքերը փայլատակեցին։ Արութը զարմացած նայում էր ընկերոջ այս յանկարծական փոփոխութեանը. Թորոսը շարունակեց.

— Աշխարհը սրանք են լափում էէ՛, այս քաղաքացիք... Աստուած, Քրիստոս, սուրբեր, ժամ, պատարադ ծալել են մի կողմ գրել, ձեռները վեր են քաշել ու չորթում են, տղամարդի տեղ է... ում թուրը կտուր է, աշխարհը նրանն է, վայն եկել է խեղճին տարել... Զօրս կողմում ալանթալան է. ով ում կարող է կոփում է, փետրում է հաւի պէս... ով ում կարող է, տրորում է. ուների տակ չընկնելու համար, ուրիշի վրայ բարձրացիր, ու ոտքով հուպ տուր, թող թաղուի, յետոյ փող շատ կայ է՛է... ծով, ծո՛վ եւ... Աստուած չկայ...

— Թորո՞ս, Թորո՞ս... Արութը ցնցուեց, ինչպէ՞ս թէ Աստուած չկայ...

— Վախեցա՞ր... հի, հի, հի...կայ, կայ, այս էլ խմենք Աստծու կենացը եւ նա բաժակը ուժդին զարկեց ընկերոջ բաժակին, որ փշուր փշուր եղաւ նրա ձեռքի մէջ եւ ապակու կըտորները ցրիւ եկան յատակի վրայ. երկսով էլ լոեցին. Թորոսը նայում էր բաժակի կտորներին մտախոհ. լ՞նչ էր մտածում նա, Արութը չգիտէր, բայց աշակերտի պէս նայում էր նրա դէմքին, նրա կարճ, հաստ բեխներին, որոնց մէջ այնքան վճռականութիւն ու եռանդ կար, նրա լայն բերանին ու հաստ շրթունքներին, որոնց ծիծաղն այնքան դիւական էր եւ մանաւանդ նրա աչքերին, ուր փայլում էր մի խենթ, անհանդիստ կրակ :

— Գնա՞նք, ասաց յանկարծ Թորոսը գլուխը բարձրացնելով, բայց չմոռանաս, որ ես այստեղ Թորոս չեմ, այլ Բուլատ, լսեցի՞ր, չմոռանաս երբէք, եւ այսուհետեւ էլ ինձ Թորոս չկանչես, հասկացա՞ր...

— Շատ լաւ, պատասխանեց Արութը հնազանդ երեխայի պէս. Թորոսը վճարեց ընթրիքի փողը. «որչափ փող ունի անիրաւը», մտածեց Արութը, նայելով նրա թղթադրամներով լիքսակին :

Նրանք դուրս եկան :

տակաւին եռում էր : Կառքերը սլանում էին դէպի զրօսավայրերը տանելով երջանիկ զոյգեր : Կենսասէր ու պճնուած մի բազմութիւն բռնել էր մայթերը, եռում էր, քրքջում, մըումում : Զարդարուն ու դեռատի կանանց զղեստների խշխչոցը, հոտաւէտ իւղերի բուրմունքը շշմեցրել էր հեշտասէր ու արկածախնդիր տղամարդկանց, որոնք մոլորակների պէս պտոյտներ էին գործում այս կամ այն գեղեցկուհու յետեւից աշխատելով յափշտակել մի խոստմնալից հայեացք, տարփալից մի ժամկետ, կամ կանացի դալար ու գրաւիչ մարմնի հեշտագրդիումի շարժում : Փակ բնակարանների ու առանձնասենեակների կիսախաւարի մէջ շպարուած ու կոկուած պերճութիւնն ու փայլը դուրս էր թափուել փողոց եւ կրքի ու զգայական բուռն հաճոյքի տարփանքով արբեցրել բոլոր առնացի գլուխները, գերել բոլոր հայեացքները : Զլախտաւոր ու հիւանդ կեանքը լուղում էր հեշտանքի ախտաւոր ծփանքներում եւ նրա բոց գրկի մէջ, որպէս հսկայական հնոցում լուծում, շողիանում էր հարիւր հազարների քրտինքը :

Արութը բերանաբաց ու ապշած՝ նայում էր լուռթեամբ . Բուլատը ցնցեց նրա ուսը :

— ՀՇը, տեսնո՞ւմ ես, այսպէս են ապրում մարդիկ աշխարհում . քեզ պէս չեն գնում քաղցած փորով ծովի ալիքներին նայելու :

— Աստուած է տուել, բախտի բան է, պատասխանեց Արութը խորը ախ քաշելով :

Բուլատը բարձրաձայն ծիծաղեց դիւական քրքիջով :

— Աստուած է տուել . . . բախտի բան է . . . հի, հի, հի . ճշմարիտ դու օյին մարդ ես, Ա'րութ . . . եւ նա խիեց ապշած ընկերոջ ուսին, ճշմարիտ դու օյին մարդ ես . . .

Արութը զարմացած նայում էր ու չէր կարողանում հսկանալ, թէ ի՞նչի վրայ է ծիծաղում ընկերը, քանի որ ի՞նքը արդար, խելօք բան է ասել :

— Գիտե՞ս ի՞նչ — Բուլատը շրթունքները մօտեցրեց ընկերոջ ականջին, Աստուած չի տուել, այլ ճանկել են, որտեղից կարողացել են . . . ա՞յ, մի գիրք կայ, նրա մէջ շատ այդպիսէ բաներ կայ դրուած :

— Գե՞ն աշխատել . . .

— ԱՌ:

Արութը դլուխը քաշ ձգեց, մտածում էր, ու հասկանալ էր կարողանում, թէ այս լաւ հազնուած, կրթուած, այս աղա մարդիկ ինչպէս կարող են վատ ճանապարհներով այսքան հարստութիւն դիպել:

— Լաւ, խօմ չեն գողացել, տնաշէն, ասաց նա համարեա յուսահատ զայրոյթով:

— Զէ, չեն գողացել, վերցրել են, օրը ցերեկով վերցրել են, ինձանից, քեզնից, ումից որ կարող են:

— Սուտ է, ինձանից ոչինչ չեն վերցրել, ես ո՞ւր, նրանք ո՞ւր... զայրոյթով բացականչեց Արութը:

Բուլատը դարձեալ ծիծաղեց իր հնչուն, դիւական ծիծաղով, որ այնպէս դուր չէր դալիս Արութին:

— Կոօ՛, յետոյ կը խելօքանաս :

Արութը քիչ էր մնում լաց լինի վիրաւորանքից :

Մի շքեղ կառք անցաւ եւ նրա մէջ մի պճնուած զոյդ — մարդ ու կին : Կնոջ ականջներից քաշ ընկած ոսկէ օղերի խոշոր, թանկապին ակները շլացուցիչ ցոլքեր էին արձակում լապտերների խուսափուկ լոյսի տակ :

— Տեսնո՞ւմ ես, ասաց Բուլատը. այս կնոջ ականջներից հաղարներ կայ քաշ ընկած. կողքի մարդն է ընծայել, հարիւր հաղարներ, միլիոններ ունի, եւ իր կինը չի, այլ սիրուհին. հասկացա՞ր, կոօ՛.

— Իր փողն է տուել :

— Դառն քրտինքով աշխատած փողը այդպէս հեշտ կերպով սիրուհուն չեն տայ :

— Հօր աշխատածն է, պապից է մնացել, ես ի՞նչ դիտեմ, Աստուած որ մարդուս տուեց, կը տայ, բախտի բան է, բախտի տէրը մեռնի :

— Ապա դու ի՞նչու չես աշխատում ու շարաթներով քաղցած զկրտում ես փողոցներում :

— Այդ էլ իմ բախտիցն է, ախտէ՛ր... ամէն մարդու ապրուստը վերից է սահմանուած, ա՛յ, այնտեղից. Արութը ցոյց տուեց երկինքը :

Բուլատը վերստին քրքջաց :

Արութը կծկուեց, խեղճացաւ. այդ քրքիջի իւրաքանչիւր հնչիւնը թափանցում էր մինչեւ նրա հողին, ցուրտ էր սփռում

նրա կրծքի տակ, ասեղներով ծակոտում էր նրա միսը: Ինչ ուզում էր թող ասէր Բուլատը, բայց այդպէս չծիծաղէր:

— Լաւ տեսա՞ր այն մարդուն, ասաց յանկարծ Բուլատը ձայնը փոխած:

— Ո՞ր մարդուն:

— Այն որ անցաւ այն կնոջ հետ:

— Ի՞նչ կայ ո՞ր...

— Ոչի՞նչ... Բուլատը լռեց, մնաց մտածկոտ, աղա կամացուկ սուլեց մի անհասկանալի եղանակ, որ ոչ երդ էր, ոչ պար:

Քայլում էին լռութեամբ. Արութը լաւ չէր յիշում այն մարդու դէմքը, նրան զբաւել էր կնոջ պերճութիւնը եւ նրա ականջների ակները, բայց միտն էր, որ այն մարդը սրածայր եւ դէպի այտերը ցցուած բեխեր ունէր:

— Բեխերը սուր էին, ասաց նա բաւական ուշ:

— Ի՞նչը:

— Բեխերը:

— Ո՞ւմ բեխերը:

— Այն մարդու:

Բուլատը երեւի մոռացել էր այդ, ուրիշ մտքեր էին ոլաշարել զլուխը, եւ ծիծաղեց մեղմօրէն:

— Հ'ը, լաւ աչքեր ես ունեցել, ախաէր տղայ, եւ վերստին սուլեց նոյն եղանակը:

Վերստին լռեցին եւ քայլում էին կողք-կողքի: Արութը մտածում էր. նա այլեւս փողոցի անց ու դարձին, պերճութեանը, խանութների լուսաւոր ցուցափեղերին չէր նայում. նոր, դաժանօրէն անհասկանալի մտքեր թափով դառնում էին նրա զլխում, ճմոռում էին ուղեղը եւ նա անկարող էր այդ բոլորից մի հասկանալի ամբողջութիւն կազմել, մի ելքի յանդել: Մշուշ էր գլխում, եւ այդ մշուշի մէջ հնչում էր Բուլատի վատքրիջը դժոխային շեշտերով եւ փայլում էին նրա դիւական աչքերը: Նա իրան լաւ չէր զգում:

— Գնանք այստեղից, հեռանանք:

Բուլատը հասկացաւ. նրանք առաջ անցան, թեքուեցին այլ փողոց: Նրանց առաջ հասարակաց ժողովարանի հսկայ շինութիւնն էր, լուսաւոր, պերճ ու հպարտ: Բազմաթիւ կառքեր էին սպասում փողոցում:

— Գիտե՞ս, այստեղ փողի դէղեր կան. այստեղ ունեւորները թուղթ են խաղում եւ իրարից շատ փող են տանում... հաղարներ...

— Հաղարներ...

— Հա՛, հաղարներ, հարիւր հաղարներ. գիտես որքան է հարիւր հաղարը, միլիոնը...

Ո՛չ, Արութը չգիտէր. նա գլուխը տարուբերեց լոռութեամբ եւ կրկին ընկղմուեց խոր մտածմունքի մէջ. նա այժմ ճգնում էր ըմբանել, թէ որքան է հարիւր հաղարը, միլիոնը եւ միտքը չէր զօրում. թողեց այդ, կրկին միտքը դարձաւ Բուլատին:

Ընկերը քանի գնում էր, նրան դուր չէր դալիս. նրա ասածները իր համար մի մոայլ անդունդ էր, ուր նայել չէր կարողանում առանց դվիսի պտոյտի: Այդ անդունդը՝ ահաւոր ու խաւար, լի էր իր համար անհասկանալի հաղար ու մի պատկերներով, որոնք ինչպէս մըրկի չնչով դառնում էին ու քաշքըշում իրար: Եւ բոլորի վրայ դարձեալ հնչում էր Բուլատի վատ քրքիջը: Նա վախենում էր իր ընկերից, վախենում էր նրա սուր, խայթող աչքերից, նրա դիւական, չար քրքիջից եւ սոսկում էր եւ զգում էր միաժամանակ, որ նրանից աղատուել չի կարող: Նա կանգնած էր մի առասպելական վիշապի բոց երախի առաջ, զգում էր նրա այրող, մահարեր շունչը, դողում էր, կ'ուղէր փախչել, աղատուել, բայց բաց աչքով տեսնում էր, որ դէպի մահն է գնում: Նրա փողի քսակը ծովը նետելով, ընկերը ասես կախարդել էր նրան:

— Լսի՛ր, ասաց նա երկար լոռութիւնից յետոյ, անհամարձակ, խեղդուած ու դողդոջ ձայնով — լսի՛ր, ախպէ՛ր, տունտեղ, ընտանիք, թողել եմ եկել մի կտոր արդար հաց վաստակելու. աշխարհ տեսած, խելօք, աչքաբաց մարդ ես, հաղար ճամբար գիտես, ի սէր Աստուծոյ, թէ ուղում ես լաւութիւն անել, վաղն եւ եթ մի գործ ճարիր, բանւորութիւն, մշակութիւն, ինչ ուղում է լինի... ու մինչեւ մահս կ'օրհնեմ քեզ, աղաչում եմ, ախպէր, քաշածս ինձ բաւական է. ոչխարն իր ոտից կը կախեն, այծը իր ոտից... քո բանն ուրիշ է, իմն ուրիշ:

— Ի՞նչ եմ ասում որ, իմ ցանկութիւնն էլ այդ է, գնանք ինձ հետ այս գիշեր, կը խօսենք, հանդստացիր, լսիր իմ խոր-

հըրդին, եւ գործը պակաս չի լինի. ինչ որ ես եմ անում, նոյնը դու կ'անես. խօ հաւատո՞ւմ ես ինձ, ախալէր տղայ:

— Հաւատում եմ, պատասխանեց Արութը, բայց խեղդը-ւած ձայնը վկայում էր, որ չի հաւատում, այլ եւ վախենում է. ասաց, լոեց, կծկուեց, փոքրացաւ եւ կրկին նոյն անդունդը բացուեց աչքերի առաջ:

Բուլատը լաւ հասկացաւ նրա հոգեկան ընկճուած վիճակը եւ վայրկենապէս տոնը փոխելով ուրախ կատակի՝ դարձաւ նրան խփելով ուսին:

— ՀՇ... քա՞նի մանէթ ես ուզում, հարի՞ւր, հազա՞ր, տա՞սն հազար... բաւակա՞ն է... նա կանդնած էր փողոցի մէջ-տեղում, ձեռները խաչած կրծքին, մի ոտքը առաջ՝ միւսը յետ, դլուխը յետ ձգած զոռող, համարձակ դիրքով եւ նայում էր ընկերովը: Լապտերի լոյսի տակ նրա վառ, անիրաւ աչքերից, հաստ ու խիստ բեխերից, իրար վրայ սղմուած շրթունքներից, նրա ամբողջ այդ դիւտական պատկերից մի դաժան, անողորմ բան, աներեւոյթ ու գալարուն, ինչպէս օձը խաւարի մէջ, սո-ղում դալիս էր, փաթաթւում Արութին, ցուրտ օղակներով պատում էր նրա հոգին եւ ճնշում, ճնշում:

Արութը նայեց, դլուխը քաշ ձգեց ու լոեց:

— Տղամա'րդ եղիր, ասում եմ, ու հաւատա' ինձ, անփորձ ես դեռ, չորս կողմդ նայիր, ու մի քիչ խորը միտք արա...

Արութը հնազանդ երեխայի պէս գնում էր այդ սարսա-փելի մարդու յետեւից, որ նրան քաշում էր աներեւոյթ օձի դալարներով, քաշում էր ու տանում դէպի խաւար զարհուրելի անդունդը...

6

Կորած, խաւար բակում, այն սենեակը, ուր ներս մտաւ Արութը ընկերով յետեւից, թաց, լզրծուն մթնոլորտ ու այն-պիսի հոտ ունէր, որ Արութը անուանել չէր կարողանում. կծուկ ու բորբոսի ծանր հոտն իրար խառնուած, կսկծեցնում էր նրա քիթը եւ Արութը փնչացնում էր փրչտացող կատուի պէս: Այնուամենայնիւ սենեակը նրան թուաց խիստ չքեղ զար-դարուած: Պատերի տակ ներկած սեղաններ, աթոռներ, փա-փուկ թախտեր, լուսամուտների վրայ ծաղկաւոր վարագոյր-ներ, եւ որ ամենից աւելի դրաւիչ էր Արութի համար, մի խո-

չոր հայելի, ուր նա կարողացաւ ինքն իրան տեսնել ամբողջ հասակով : Իր կեանքում առաջին անդամն էր այսպիսի հազուագիւտ բախտի արժանանում, ուստի ընկերոջից ծածուկ, ամաչելով, երկրորդ անդամ անցաւ հայելու առաջից, նայեց իր պատկերը, իր գունատ դէմքը, հանդած աչքերը, քաշ ընկած ուսերը, ապա անցաւ նստեց թախտի վրայ : Նայում էր իր շուրջը զարմացած . աղտոտ, կասկածելի սենեակը նրան թւում էր պալատ :

— Այստեղ դո՞ւ ես ապրում :

— Այստեղ ով ասես կ'ապրի, հարկաւոր է միայն փող ունենալ :

Արութը ոչինչ չհասկացաւ : Հարցը չկրկնեց . օրուայ տըպաւորութիւններից գլուխը ծանրացած, նա թեք ընկաւ թախտի վրայ . բայց քնել չէր ուզում . նա սպասում էր, եւ չդիտէր ինչու անհանդիստ էր :

Աւելի անհանդիստ էր Բուլատը . նա չէր նստում, ծխում էր ու անդադար յետ ու առաջ քայլում, երեմն նայում էր գլունից դուրս, մերթ կանգ էր առնում ականջ դնում, մերթ մօտենում էր յետ քաշում լուսամուտի վարագոյրը, նայում բակը, ապա վերստին քայլում էր մտախոհ ու ծխում, ծխում :

Արութը հետեւում էր նրա բոլոր շարժումներին, նայում էր նրա կարճ հասակին, թաւ, ցասկոտ բեխերին, խոր ընկած, կրակոտ աչքերին, նայում էր, մտածում ու վախենում էր անորոշ բանից : Նրան թւում էր, թէ այն՝ ինչ սպասում է ընկերը, այն անորոշ, մութ բանը մի ահագին վտանգ է, որ դաւիս է խաւարի միջից, գաղտադողի, սողալով, որ նա այժմ բակումն է, պատի տակ անշոռով գալարում է եւ ուր որ է կը ցատկի ներս իր կոկորդը կը բռնի : Ապա այս բոլոր սեւ մտքերը համարում էր արդիւնք իր վախկոտ անփորձութեան, եւ Բուլատը նրան թւում էր մի բարեսիրտ, բարետես մարդ, որ կարեկցութիւնից յանձն է առել իր բախտը տնօրինել, եւ ծածուկ ամաչում էր իր վատ մտքերի համար :

Արմունկը, որի վրայ յենուած էր, ցաւեց . նա կամացուկ գլուխը ցած ձղեց մի բարձի վրայ . ապա յիշեց մօրը, Ծովիկին, երեխաներին... ճախարակը ճոռում է, մայրը երգում է անուշ ու լալկան... նաւը սլանում է ծովի վրայ... ահագին նաւ, որ կատաղի աչքեր ունի, սեւ երախ ու մոնչում է... ծովը

փոթորկոտ, ծովը վրափրուն... նաւը ճռուռմ է, տնքում... ալիքները բարձրանում են... բարձրացան... նայում են ցասկոտ աչքերով, սրում են ճիրանները. բոլորը դաղաններ են... ժանիքներ ունեն... փնտոռում են յատկապէս Արութին... նրանցից մէկը առաջացաւ, սուր եւ վեր ցցուած բեխեր ունի... ծիծագում է դիւական քրքիջով, եւ աչքե՛րը... շպրտեց Արութին ծովը...

Դրան շրխկոցից Արութը աչքերը բացեց: Իրար յետեւից, հետիհեւ, ճշալով հայհոյելով, երդելով ներս ընկան երեք երիտասարդ: Արութը նայում էր եւ հասկանալ չէր կարողանում, թէ ո՞ւր է ինքը, ի՞նչ է կատարում իր շուրջը...

— Ուռուա՛, կանչում էր իւրաքանչիւր ներս մտնող ձեռքին ճօճելով փողփողուն թղթադրամների ծալքեր եւ իւրաքանչիւրը իր ձեռքի փողով հարուածում էր Բուլատի դլիսին, երեսին, քթին, զգին... Բուլատը ժպտում էր երջանկութեամբ:

— Կեցցէ՛ք, տղէրք... Բուլատը հովանաւորովի քաղցրութեամբ խիում էր սրա նրա թիկունքին, ուսին եւ ժպտում:

Արութը կամաց կամաց ուշքի էր դալիս. նա յիշեց ծովի վրայի խորհրդաւոր նաւակը, Բուլատի սուլոցը, նրանց ծածուկ խօսակցութիւնը... ուրիշ ոչինչ պարզել չէր կարողանում.

— Ուռուա՛... ուռուա՛... ուռուա՛...

— Գինի եմ ուզում էէ՛, դինիի՛, ճչում էր միականի երիտասարդը թափ տալով Բուլատի թեւը... հայ ես քո... շամպայն մեղ նման տղամարդին, շամպայն, իօմ տեսնո՞ւմ ես... եւ նա վերստին ճօճեց թղթադրամների ծալքը Բուլատի դլիսին:

— Աղջի՛կ, տասը աղջիկ, ճչում էր չեչոտ, իծամօրուք մի երիտասարդ, որին Զօփուռ էին ասում. էս սհաթիս, Բո՛լատ, ես քու մարդ ասողի... դու էտ ինչպէս ես ընդունում մեղ, կը պատռեմ, ես սրանց տիրու... եւ նա պատրաստում էր սպատառոտել ձեռքի թղթադրամները... Բուլատը խլեց եւ իր ծոցը դրեց: Զեչոտը ընկաւ միականու յետեւից, նրա փողը խլելու:

Արութին կարծես չէին նկատում. առաջինը նրա վրայ ուշք դարձրեց երրորդ նորեկը: Նա մեծ, բրդբրդոտ գլուխ ունէր, հաստ պարանոց, լիքը կարմիր երես, հաստ շրթունքներ եւ

իւղու աչքեր . նրան Արջ էին ասում : Երբ առաջին շփոթը մի փոքր հանդարտուեց , Արջը քրտինքը սրբեց , չուրջը նայեց , կամացուկ հրեց Բուլատի թեւը ցոյց տալով Արութին :

— Ախալէր տղայ է , եղաւ պատասխանը :

Արջը պատասխանից բոլորովին գոհ , մօտեցաւ , ձեռք տը-ուեց Արութին , նատեց նրա կողքին եւ սկսեց հանդարտ համա-րել թղթագրամները :

— Գինիի՞ ... աղջի՞կ ... լսում էր միւս կողմից :

Արութը կծկուեց , փոքրացաւ , աշխատելով չերեւալ . յե-տոյ նրա մտքով անցաւ , թէ լաւ կը լինի զազտնի դուրս գալ ու փախչել . բայց ո՞ւր դնալ ուշ գիշերով այս անիրաւ քաղա-քում ... սսկւեց , յետ քաշուեց , թիկունքը տուեց պատին ու սպասում էր , թէ ի՞նչ է լինելու ...

Բուլատը թրմակացրեց խորքի դուռը , դուրս եկաւ մի պա-ռաւ , յետ դնաց եւ խակոյն բերեց մի քանի շիշ գինի , խցան-ները թռան տրաքոցով ... խմում էին :

— Խմիր' , Արութ , խմիր' ... աղէ՛րք , իմ աղդականն ու ըն-կերը . ախալէր տղայ :

Արութը աւելի կծկուեց . նրան դուրս քաշեցին իր տեղից եւ բոլորի բաժակները դէպի նրան ուղղուեցին ...

— Կենա՛ցդ , կենա՛ցդ , կենա՛ցդ ...

Արութը մի փոքր բացուեց . նա նախ անհամարձակ , դըժ-ուարութեամբ , ազա աւելի եւ աւելի համարձակ խմում էր : Եւ քանի խմում էր , մութ երկիւղը նրա սրտում թուլանում , մաշում էր եւ կենսուրախ տրամադրութիւնը համակում էր էութիւնը :

Մի ժամանակ նա նոյնիսկ սկսեց նախ՝ կամաց կամաց , ապա բարձրաձայն երգել .

«Բաղի ու սաղի ձաղն էլ

«Թող լճերում մենակ չըլնի» ...

Զայնը լաւ էր . երգել դիտէր . զգացմունք կար :

— Ինչպէ՞ս , ինչպէ՞ս ...

Արութը կրկնեց լիքը կրծքով , լայն ու համարձակ :

— Ախալէ՛ր տղայ , անուշ ձայն ունիս . երգի՛ր , երգի՛ր ...

Եւ Արութը երգեց յոյզով , վշտով , ամբողջ իր ցաւած հո-դու եռանդով : Երգի հնչիւնների հետ ասես սիրտն էր կտոր . կտոր դուրս թափւում : Ծովիկի կարօտն էր վառում հոգին :

Այժմ նա երդում էր «կարաւան կոտորող» աստղը, որ ծագում է «Լուսաստղից» առաջ եւ խարում է ճամբորդներին.

«Բոցոտ աստղ, պայծառ աստղ գիշերւայ,
«Կարաւան մատնող, քեափուր աստղ, յետ դարձիր.

Դարձի՛ր, դարձի՛ր, դարձի՛ր . . . »

«Բոցոտ աստղ, կարմիր աստղ մի ծաղիր,

«Տես իմ եարից չեմ կշտացել, յետ դարձիր.

դարձի՛ր, դարձի՛ր, դարձի՛ր . . . »

— Ապրի՛ս, ապրի՛ս . . .

Բուլատի աչքերում անդամ արցունքներ երեւացին. հայրենի հողն էր հեծեծում խաւարի, մշուշի, ցաւի միջից. նրա հոդու մի կորած անկիւնում զարթնեց մի մոռացւած, լքուած, մոխրապատ զղացմունք, դէպի այն բոլորը, ինչ նա անդարձ կերպով թաղել էր մեծ քաղաքի գարշանքի մէջ:

Գինին հոսում էր եւ երգը լավիս . . .

— Ա՛հ, անիրաւ աստղ, դու ինձ էլ խարեցիր եւ կարաւանս թշնամուն տուիր . . . ջարդուած եմ, ջարդուած եմ . . . ասաց Արութը ու լոեց, աչքերը սրբելով:

— Խմենք, ախապէ՛ր. Բուլատը զարկեց իր բաժակը Արութի բաժակին եւ առաջին անդամ նրանք խմեցին նոյն յոյզով:

Բուլատի յոյզը սակայն վայրկենական էր որպէս հայրենի զոյլ զեփիւռ, որ վչեց ու անցաւ. իշխողը գինին էր եւ խենթ, կատաղի խրախճանքը: Զեշոտն ու միականին ցատկեցին եւ սկսեցին սպարել ոտքի տալով սեղաններն ու աթոռները. Արջը լուռ խմում էր ու մոմուում. Արութը չուած աչքերով նայում էր, ապա յանկարծ մի թափով դատարկեց առաջի լիքը բաժակը, յետոյ թուաւ համբուրուեց Բուլատի հետ, անցաւ փաթաթուեց Արջի բրդոտ պարանոցով:

Դուռը մէկ էլ բացուեց . . . եւ ինչպէս մըրիկ ներս ընկաւ մի դեռատի կին, յետոյ երկրորդը, երրորդը, չորրորդը, բուլորն էլ շիկահեր, կապուտաշեայ, հոլանի կռներով ու կրծքով. բարակ թափանցիկ շղարչի տակ նրանց վարդադոյն, մատաղ մարմինները թրթուում էին, գալարուում պազոտ ցնցումներով, եւ ներկած յօնքերի տակից աչքերը վավաշոտ փայլ արձակում: Ներս ընկան ինչպէս շղթայաղերծ, կատաղի կիրք, եւ մի վայրկեան յետոյ նրանցից իւրաքանչիւրը կախուած էր

մի տղամարդի պարանոցով, կամ նստած էր ծնկանը: Միականին խլեց նրանցից մէկին ինչպէս ախտաբորբոք սատիր, նստեցրեց իր պարանոցի վրայ, եւ միւսին ջեչոտը դրեց իր թիկունքին, եւ սկսուեց կրքի կատաղութեան պարը: Նրանք ցատկուում էին, ճշում, վազվզում, մինչդեռ Արջը իր ծնկան վրայ նստացրած կնոջը, բաժակի ձեւ տուած մի հարիւրանոց թղթադրամով գինի էր խմացնում, կամ թափում գլխին:

Արութը թէեւ հարբած՝ տեսարանի անօրինակութիւնից ցնցուած, վերստին կծկուեց ու գունատուեց. բայց դա միայն մի վայրկեան. եւ երբ աղջիկներից ամենից դերը, բոց աչքերով, մազերը փողփողուն իր գիրդ մարմնով փլաւ նրա ուսին ու նստեց ծնկանը եւ փաթաթուեց պարանոցով, Արութը ցաւի մի սուր ճիչ արձակեց, ապա խսկոյն սկսեց երկայն ու ներվային ծիծաղել:

— Գինիի... .

Ո՞վ էր կանչում գինի. Արութը նոյն բաժակից փոխ առ փոխ խմեց կնոջ հետ, ապա շալակեց նրան եւ երերալով, տընքալով խառնուեց միւսներին, պարում էր պագչոտութեան անդուսպ, անասնական պարը: Ցետոյ նա աղօտ կերպով տեսաւ, թէ ինչպէս Զօփուոը ծոցից հանեց թղթադրամների ծալը, նրանով խփում էր կնոջ մերկ ստինքներին, ապա ինչպէս շաղ տուեց նրա գլխին... թղթադրամները թիթեռների պէս խաղացին օդում եւ ցրիւ եկան սենեակի չորս կողմը: Տեսաւ, ինչպէս Արջը պատուեց գինով թացացած հարիւրանոցը եւ կտոր կտոր փորձում էր կոխել կնոջ բերանը, որը ճշում էր, քրքչում էր, պաշտպանուում... յետոյ Արութը թուլացած ընկաւ իր կենդանի եւ ծանր բեռի տակ... յետոյ համբոյըներ, կատաղի չնական համբոյը, պատառող, արիւնոտող ժանիքներով... ճիչ... ծւռոց... լամպը մարե՞ց, թէ մարեցին...

Խաւար էր...

Եւ խաւարի մէջ շարունակուում էր դարշելի օրդիան...

Աթոնների արանքում, թախտերի վրայ, սեղանների տակ հարբած ու անպատկառ թաւալում էին, մոմուում, տնքում, ճիչ... լաց... հեծեծանք... ծիծաղ միաժամանակ:

Արութն ընկած էր սեղանի առաջ երեսնիվար, նրան տըրորում էին, քաշքում. նա անմտօրէն տարածում էր ձեռները խաւարի մէջ, չանգոռում էր գետինը, կամ բռնում էր մի ձեռք,

մի ոտք, մի գլուխ, մաղերի մի վունջ, որ նա քաշում էր առանց հաշիւ տալու ինքն իրան: Յետոյ նրա աչքին բացուեց ծանօթ անդունդը, եւ նրա խորքում իրար դալարուած, կրքոտ, մերկ մարմիններ, ինչպէս օձեր, որոնք խածոտում էին իրար, քաշքում, տրորում...արիւնը ժայթքում էր...դաղաններ էին, որոնք լիզում էին իրենց դունչերը... վերստին կատաղօրէն պտոյտներ գործում, մոնչում, քրքջում, լալիս... եւ յետոյ... Ծովիկը... ճախարակը... մայրը... նաւը... եւ դարձեալ մերկ կանայք, կատաղի աչքերով... մաղերը հողմածածան...

Նա դառանցում էր...

• • • • • • • • • • •

7

Ինչպէս տունը կորցրած, ծեծուած շուն, Արութը վերստին մեն մենակ քայլում էր փողոցներով: Առաւօտեան նա դուրս էր փախել գիշերային որչից, հէնց որ ուշքի էր եկել, թողնելով միւսներին քնած: Խոր ընկած աչքերի տակ կապոյտ՝ եւ հայեացքը խելայելորէն անորոշ՝ նա քայլում էր բաղմամբոխ փողոցներում, ինչպէս անապատում, մենակ ու մոլար:

Եւ մտածում էր ցաւադին ճիղով. նա երբեք այսպէս խորը չէր մտածել. գանդը տնքում էր մտքերից եւ ճակատն այրուում:

Մշուշը պատել էր նրա ուղեղը, չնայելով իր բոլոր ջանքերին վերապրել այդ անխծուած դիշերուայ դարշելի պատկերները եւ տանջել, խարազանել իրան զարթնած գիտակցութեան մտրակով: Շատ բան չէր յիշում, բայց ինչ որ յիշում էր, այն էլ բաւական էր, որ նրա գեղջուկ, անաղարտ հոգին ամօթից կարմրէր, ինչպէս բարկ թոնիր: Պատկերները, ինչպէս այլանդակ ճիւաղներ, խօլ ձեւերով երեւում էին շամանդաղի մէջ եւ արագութեամբ ծածկում. ու նրանց տեղը մնում էր անարդանքի մի խորին զգացմունք, որ համակել էր նրա ամբողջ էռութիւնը ինչպէս մինչեւ ոսկորները թափանցող ցուրտը: Ու նրան թւում էր, թէ մէկը մահացու անարդանք է հասցրել նրա կնոջը, պղծել է հօր գերեզմանը, նրա բոլոր մեռելներին, թէ նրան ծեծել են, տրորել ցեխերի մէջ ինչպէս աղտոտ փալաս, ու թքել վրան: Կ'ուղէք փախչել այդ անասելի անարդանքից, բայց զգում էր, որ նա սողում, դալիս է իր յետեւից ինչպէս աղտոտ հեղեղ:

Ինքն իրան թւում էր անդառնալի կերպով ապականուած, քայլում էր կարծես ճար ու հնար փնտռելով սրբել իր հոգին ինչպէս օձը, որ մի ճեղք է փնտռում վրայից իր խորխը հանելու համար:

Ո՞ւր էր գնում, չգիտէր. բայց գիտէր, որ պիտի քայլի, քայլի, մինչեւ իրան մի բան պատահի, մի չար, ու ճակատադրական բան. թող հրեն ու վար ճգեն, փշըն, թող մի մոլորուած գնդակ դիսլի, թող կառքի տակ ընկնի ջարդուուի:

Եւ քայլում էր միակերպ ու մոլար քայլուածքով...

Վերստին յայտնուեց նոյն փողոցում, որոնցով երէկ երեկոյ անցել էր Բուլատի հետ. նոյն կառքերը, նոյն պերճութիւնը, նոյն ախտաւոր ու հեշտասէր բազմութիւնը, նոյն կանայք եւ բոլորը մշուշապատ, բոլորը անորոշ ու անձեւ: Նա շատ պարզ, շատ որոշ տեսաւ միայն այն կնոջը, որի ականջներից կախուած էին հաղարնոց ակները եւ դարձեալ շլացուցիչ փայլ էին արձակում արեւի շողերի տակ:

Կինն այժմ մենակ էր. նա քայլում էր, ինչպէս ամբոխի թագուհի, շքեզօրէն զուգուած ու հպարտ, բարձրահասակ, ճկուն եւ տարփօրէն բորբոքիչ: Արութի աչքովն ընկան նրա մարմնի ալեծածան խաղերը, թանձր դիստերի չափածոյ ցընցումները նրա ամէն մի քայլի հետ եւ մտածեց «այդ նրանցից է, որ շրջազգեստի վերի մասը նեղ է. եթէ լայն լինի, այդպէս չի երեւաց. ինչո՞ւ է այդպէս նեղ... երեւի կինը չգիտէ, որ յետեւից նա այնպէս ամօթալի է... մէկն ասէր այդ նրան»:

Կնոջ փոյթը չէր, նա երեւի չէր բաժանում Արութի մտահոգութիւնը, քայլում էր հպարտ ու համարձակ. լայնեղր դըլխարկի վրայ փողփողում էր գոյնզգոյն փետուրների մի ահագին փունջ ինչպէս մի կենդանի թուզուն. եւ ձախ ուսից թիկունքի վրայից մինչեւ աջ թեւի տակ կախուած էր մի սպիտակ փափլիկ բան, որ Արութին թուաց ամպից շինուած մի օձ, թեթեւ ու թրթուուն, որ մեղմօրէն շոյում էր կնոջ ձախ այտը, բարձր կարապային պարանոցը: Ի՞նչ էր այն, ինչի՞ էր հարկաւոր. Արութը հասկանալ չէր կարող, բայց ականջների փայլփլուն օղերից ու ակներից աւելի նրան դրաւում էր այդ օձանման ամպը: Նա քիչ էր մնում մօտենայ եւ գաղտագողի ու կամացուկ ճեռք տայ, շօշափի... նա նոյն իսկ քայլեց մօտ, շատ

մօտ այդ կնոջը եւ յանկարծ ոտքով կոխեց նրա երկար շրջաղ-
գեստի պոչը: Կինը յետ նայեց, զեղեցիկ աչքերը խոժուեց.

— Անասո՞ւն... լսեց Արութը, չորացաւ երկիւղից. իսկ
կինը փէջը ձախ ձեռքով բարձրացրեց, քայլերն շտապեցրեց ու
կորաւ ամբոխի մէջ:

Արութը յոդնած էր. նա կանդնեց, յենուեց հեռախօսի
սեանը եւ նայում էր ոտների առաջ: Միշտ ուշակորոյս:

— Ի՞նչ ես ցցուել այդտեղ, մա՛րշ...

Ոստիկանն էր... Արութը թափով պոկուեց իր տեղից եւ
շտապով հեռացաւ, վախենալով նոյն խակ յետ նայել: Դարձեալ
քայլեց երկար, դիտելով խանութներն ու վաճառատունները:
Յետոյ կանդնեց մի մեծ ցուցափեղկի առաջ, ուր մի բրոնզէ
նեղը շարժում էր ձեռքերը, խաղացնում էր աչքերը, ժպտալով
իր հաստ շրթունքներով: Նայում էր Արութը ու հասկանալ չէր
կարողանում, թէ արդեօք կենդանի՞ է այդ սեւ մարդը, թէ...
չէր իմանում՝ «թէ ի՞նչ...»

Եւ նայում էր երկար:

Երկու թափառաջրջիկները յայտնուեցին նրա երկու կող-
մում ու լիքը կրծքով հոհուում էին, երբ նեղը խաղացնում էր
աչքերը, ապա նրանցից մէկը յանկարծ Արութին թափով հրեց
միւսի վրայ. վերջինս յետ քաշւեց եւ Արութը ամբողջ հասակով
փոռւեց մայթի վրայ. անցորդները ծիծաղում էին:

Արութը վերկացաւ, լուութեամբ վերցրեց ընկած դլխարկը,
թափ տուեց փոշին, դրեց դլխին եւ ձեռքերը դրապանը կոխած
առաջ շարժուեց: Մի քանի քայլ յետոյ, նա յանկարծ յետ դար-
ձաւ դունատ ու շփոթուած, հասաւ նոյն տեղը, ուր ընկել էր,
շուրջը նայեց ուշադրութեամբ, պրատեց մայթի քարերը, շըր-
թունքները դողդողացին, նա երերաց կանդնած տեղը, մի բան
մոմուաց, կրկին դրապանները նայեց, եւ յուսահատ հեռացաւ...
Նրա դրապանից անյայտացել էր կնոջ՝ Ծովիկի մատանին...

Այդ մատանին... մայրը մի հատիկ ոսկի ունէր, հին օ-
րերից պահած, երբ որդին ամուսնացաւ, նա այդ ոսկին ձու-
լել տուեց մատանի եւ ընծայեց հարսին: Եւ մի անդամ Ծովիկի
ձեռքից մատանին թոնիր ընկաւ ծոմուեց, կեղտոտուեց: Եր-
կար ժամանակ այնուհետեւ ընկած էր մատանին Ծովիկի փոք-
րիկ արկղում: Երբ Արութը քաղաք եկաւ, վերցրեց հետը, որ
նորոգել տայ յետ տանի: Նա պահում էր այդ մատանին աշ-

քի լոյսի պէս, կապոտած, փաթաթած մի քանի կտորներով։ այնքան յուշեր կային կապուած նրա հետ... եւ այդ մատանին տարան երկու գրպանահատները։

Արութի վիշտն ահապին էր. ամէն բան մոռացաւ, մնաց մատանու ցաւը։ Բախտի վերջին հարուածն էր... եւ դիմեց դէպի ծովը։

Հասաւ նուիրական դարձած տեղին, եւ ամբողջ հասակով երեսնիվար փոռուեց աւազի վրայ. ճեռները դրեց ճակատի տակը, կուրծքը վլաւ եւ դառն դառն հեկեկաց։ Մովք երեկոյեան արեւի պայծառ շողերի տակ մեղմիւ օրօրւում էր ափերի մէջ, ինչպէս յոդնած գեղեցկուհի, եւ մանրիկ, հաղիւ նկատելի կոհակները ափերի մօտ անուշ շրշիւնով համբուրում էին աւաղները, ժպում, քչիչում, անհոդ ու անտարբեր դէպի լացող մարդու ահապին վիշտը։

Արութը շարունակում էր լալ երեխայի պէս. նրա լայն, ուժեղ թիկունքը ցնցուում էր ուժգին հեծկլառոցից, աւազը խըշխըշում էր նրա կրծքի եւ գլխի տակ, եւ նա կարծես իր հեծեծանքով աղերսում էր մայր երկրին յետ առնել նրան եւ թաղել իր ծոցում...

Մէկը կամացուկ նստեց նրա կողքին եւ ճեռքը ուսին դրեց։ — Երեխա՛յ...

Արութը գլուխը բարձրացրեց... Բուլատն էր... որ հետեւել էր նրան քայլ առ քայլ ինչպէս ճակատագիր։

— Ինչո՞ւ ես լալիս։

Արութը լուռ էր. Բուլատը շարունակեց.

— Զէ՛, եղբա՛յր, ես այժմ տեսնում եմ, որ դու այս քաղաքի, օտարութեան մարդ չես. ճանապարհ ընկիր առաջին նառով։

— Հա, հա, գնամ... գնամ... արցունքի միջից մրմնջաց Արութը... իսէ՛ր Աստծոյ, ոտքդ համբուրեմ, ճանապարհ դիրի ինձ... ես խեղճ մարդ եմ, կորչում եմ... ծովը կ'ընկնեմ, իմ երեխաները կը մնան որբ...

— Գնա՛, գնա՛... թէ չէ դու իմ գլխին պատիժ կը դառնաս։

— Ա՛խ այս քաղաքը... ո՛ր կողմը դառնում եմ... կոապաշտներ, անհոդի, անսաստուած մարդիկ... հէնց նոր գրպանիցս հանեցին կնոջս մատանին... ո՞ւր կորչեմ, ո՞ր ջուրն ընկնեմ... *

— Ա՛ռ, ասաց Բուլատը քմծիծաղ եւ մի փոքրիկ կապոց մեկնեց նրան :

Սրութը աչքերին չէր հաւատում. այս, իր կապոցն էր, մատանին մէջը... շուարած նայում էր մէկ կապոցին, մէկ Բուլատին :

— Հ՞ը... զարմանո՞ւմ ես.... հեռուից տեսայ ինչպէս քեզ վար ձգեցին. կանչելի մօս, երկու ապտակ տուի եւ ձեռքերից առայ, ինձ հետ հանաք անելը հեշտ չէ... նրանք ինձ լաւ դիտեն: Խսկ դու երեխայ ես, կատարեալ երեխայ, դիւղ դնա, ու փթիր այնտեղ քաղցած:

Սրութի աչքում այս սարսափելի մարդը դարձաւ մի հըսկայ, ամենակարող, կատաղի հսկայ, որ հազար աչք ունի, որ տեսնում է ամէն ինչ... որ ամէն տեղ է...

— Դործ եմ ուզում էէ՛, դո՞րծ, վերստին հեծեծաց Սրութը, արդար աշխատանք, ես ի՞նչ հող տամ իմ դլիսին:

— Զէ՛, դու գործի մարդ չես, վեր կաց, գնա՛, ա'խպէր, ճամբու ծախսդ իմ վզին, միայն թէ շուտ հեռացիր... տղամարդ խօ չես, կնի՛կ, կնի՛կ... երկու լակոտներն անդամ դետին գլորեցին եւ ջէրդ դատարկեցին... յետոյ մի բան կը պատահի, կ'ասես հարեւան էր, ընկեր, աղդական, տէրութիւն չարեց... քեզնից մարդ չի դուրս դայ...

Սրութը չէր լսում նրան. վերստին յիշեց իր տունը. պառաւ մօրը, ճախարակը... մերկ երեխաներ, հարկ, պարտատէր. հեռանկարը զարհութելի էր... նա մատով խազում էր աւաղի վրայ: Լուռ էին:

— Զեմ ուզում գնալ էէ՛... չեմ ուզում, բայց ճարս ի՞նչ, էս ի՞նչ օր է, որ քաշում եմ մի ամիս... մեռայ թափառելով, հարցնելով, աղաչելով, գործ չկայ. ես ո՞ր ջուրն ընկնեմ... ձեռքս նորից քո փէշն եմ ձղում, ա'խպէր, ոտքդ համբուրեմ, մի՛ թող կորչեմ, մի գործ ճարիր ինձ, փողոց կ'աւելեմ, աղը կը թափեմ, ծառայ կը լինեմ, միայն դատարկ ձեռքով յետ չերթամ. վերստին հեկեկոցը նրա կոկորդը խեղդեց, վերըստին արցունքները թափուեցին:

— Լսի՛ր, ասաց Բուլատը, երբ Սրութը հանգստացաւ, լսի՛ր, նաւը կը մեկնի երկու շաբաթից, ահա քեզ ապրուստի եւ ճանապարհածախսի համար,— նա մեկնեց մի քանի թղթադրամ. եւ գնա՛, կատուած քեզ հետ, քո մեղքը քո վիզը, ես ու-

դում էի քեզ հաղարներ տալ, դու վախչում ես բախտիցդ, վախկո՛տ, վախկո՛տ... դէ մնա՛ս բարի: Եւ նա հեռացաւ հաստատ վճռական քայլուածքով:

Արութը յանկարծակիի եկաւ. նա այդ չէր սպասում եւ շուարած նայում էր մէկ ձեռքի փողին, մէկ հեռացող Բուլատի թիկունքին: «Ես ուզում էի քեզ հաղարներ տալ» ասաց, «ո՞ր տեղից, ի՞նչպէս... բայց Բուլատն ասաց, այս զարհուրելի, այս հզօր մարդը, որից գողում են փողոցի սրիկաներն անդամ: Հաղարնե՛ր... տէր Աստուած... ալիքները քաւում էին ափերին եւ բոլորը միասին շնչում էին «Հաղարնե՛ր...» եւ աւազը հեռացող Բուլատի ոտների տակ այնպիսի ձայն էր հանում, ասես կրկնում էր «Հա՛-զա՛ր, հա-զա՛ր, զա՛ր, զա՛ր...»:

Բուլատը գնում էր սակայն առանց յետ նայելու...

Զփորձել արդեօք բախտը վերջին անդամ, եւ յետոյ տուն... դուցէ հաղարներով...

— Թոր... Բո՛ւլատ...

Բուլատը յետ չնայեց, նա դնում էր անհոգ ու սուլելով. նրա կարծ, լայն ու յաղթիրանը մեղմիւ օրօրուում էր, եւ ոտների տակ աւազը խշչում, ճռոռում...

— Բո՛ւլատ, Արութը աւելի բարձր կանչեց.

Նա կանդ առաւ, ու յետ նայեց լութեամբ:

Արութը ձեռքով արեց եւ դնաց դէպի նա...

— Ես չեմ ուզում վերադառնալ:

Բուլատը քրքջաց, քրքջաց ու փորը բռնեց սաստիկ ծիծաղից:

— Դու կատարեալ օյին ես... չե՞ս ուզում դնալ... ապա լրջութեամբ աւելացրեց.— Հաւատո՞ւմ ես ինձ...

— Հաւատում եմ...

— Համբերիր էլի մի շարաթ... եւ ոչ մի արցունք, լսո՞ւմ ես:

Արութը վերստին քայլում էր նրա յետեւից հնազանդ ու խեղձ:

Նա մնաց վերջին անդամ փորձելու իր բախտը...

տայ, այդ նրա համար յիսուն կոպէկ է. իսկ մենք տաս հոգի ենք, իւրաքանչիւրիս հինգ հազար ըուբլի... շատ չէ, լսո՞ւմ ես, Արութ:

Արութը դլխով լուռ նշան արեց:

— Արդա՛ր աշխատանք, շարունակեց Բուլատը, իսկ նա՛, այդ մարդը արդար աշխատանք՞վ է դիզել այդքանը... ողջ կեանքդ շան պէս պիտի թափառես դռներում մի կտոր արդար հացի համար... հուռո՞ւ ես արդար հացի տիրու... սեւ աղուէսի մորթի է դարձել մի կտոր արդար հացը... այնպէս չէ՞ , Արութ:

Ի հարկէ այդպէս է. Արութը վերստին դլխով արեց, նա էլ չէր բողոքում այս սարսափելի մարդու մտքերի դէմ... հինգ հազար եւ դէպի տուն... մելքն ի՞նչ է, այնքան ունի «այն մարդը». Եւ ինչե՞ր կ'անի Արութը այդ փողով... Նա կ'առնի նախ մի դոյդ եղ, յետոյ մի քանի կով... յետոյ մի այդի, յետոյ... տէ՛ր Աստուած, վերջ չկայ, հինգ հազար էէ՞... ծով փող...

Եւ սիրտը թրթոում էր ցնծութիւնից, նա լոելեայն օրհնում էր «այն մարդուն», նրա կեանքը, նրա հարստութիւնը. օրհնում էր նրա սիրուհուն անդամ, որ ականջներից հազարներ է կախել, նա պատրաստ էր սիրել, պաշտել նրանց, միայն թէ այդ փողը տան... Յետոյ այս Բուլատը, իր բարի հրեշտակը՝ Աստուած հանեց նրան իր ճանապարհին... ի՞նչ ուզի կ'անի, մարդ չի, աժդահա...

Ուշ դիշերային հովը փչում էր, խոտերը բաց դաշտում սլալում էին, համարեա ցուրտ էր. նա կծկուեց եւ ականջ էր դնում: Զեռու տնքաց մի դազան, տնքաց ու լոեց: Դէպի աջ ձոր էր եւ այնտեղ շառաչում էր գետակը. դէպի ձախ՝ լերկ, ժայռոտ լեռն էր. նրանք սպասում էին մի ժայռի տակ, միւս ընկերները պիտի ուր որ է բերէին այն «մարդուն» այստեղից աւելի հեռու, թագստոցը տանելու համար: Արութը անյոյդ, անվախ էր սպասում, Բուլատը կար հետը. եւ յետոյ ամբողջ այս գործի մէջ ուրիշ ոչինչ չէր տեսնում, բայց եթէ մի պարզ հաշուետութիւն. ասես «այն մարդը» իր յօժար կամքով էր դաշու եւ բերելու էր Արութին հինգ հազարը, այն բարի, այն լաւ մարդը, որ հինգ հազարը կը տար, ինչպէս հինգ կոպէկ: Բուլատը ներփային ու անհանդիստ գնում գալիս էր ա-

կանջները սրած, իսկ Արութը լուռ՝ խաղում էր հինգ հազարի հետ, որ նրան ներկայանում էր, որպէս մի կոյտ դեղին ոսկի զընդա՛ն, փայլո՛ւն...

... իսկ եթէ չտա՞յ, յանկարծ անցաւ նրա մտքով:
— Բո՛ւատ, իսկ եթէ չտա՞յ...

Հարցը սեւ ամպ էր մտքերի պայծառ հորիզոնի վրայ:
— Կը տա՞յ, դաժան վճռականութեամբ պատասխանեց Բուլատը եւ շարունակեց քայլել աւելի արագ-արագ. երեւի նրա հաշուով ուշանում էին եւ Բուլատի անհանդստութիւնն աճում էր. նա նոյնիսկ սկսեց քաշքան, փետել իր բեխերը ինչ-պէս սովորութիւն ունէր երբ զայրացած էր:

Արութը սակայն դոհ չմնաց նրա պատասխանից, հարցը ցաւոտ ու անխուսափելի՝ յանկարծ թառել էր նրա ուղեղի վրայ գիշատիչ թռչնի պէս ու կտցում էր, կտցում էր...

— Զէ՞ր, բան է, էլի, ասում եմ... իսկ եթէ չտա՞յ, կրկնեց Արութը:

— Կը տա՞յ, քեզ ասում եմ, ի՛շի գլուխ, կը տայ, որոտաց Բուլատը ոտքով կատաղօրէն դոփելով գետինը:

Նրանք ուշանում էին... Բուլատը զարհուրելի էր... Արութը լոեց, կծկուեց, խեղճացաւ, բայց հարցը մնաց հարց, ահաւոր, չարագուշակ, որ քամում էր Արութի ուղեղը եւ տիրաբար պատասխան պահանջում. նրա հոդին ցաւում էր, կոկորդը սղմուում, ճակատը այրուում...

«Իսկ եթէ չտա՞յ... իսկ եթէ չտա՞յ»...

Այլ եւս չէր համարձակւում հարցնել. Բուլատի զայրոյթից սոսկում էր. նրա աչքերի կատաղի փայլը խաւարի մէջ անդամ նա տեսնում էր... բայց տեսնում էր միեւնոյն ժամանակ մի ուրիշ բան, մութ, անձեւ, որ եռում էր Բուլատի զայրոյթի տակ, տեսնում էր ու դողում...

«Իսկ եթէ չտա՞յ... իսկ եթէ չտա՞յ»...

Երկիւղի հետ մեծանում էր նաև այն խաւար սարսափը տեսնելու ցանկութիւնը, իր կեանքն ու մահը ասես նրանցից էր կախուած: Եւ նա վճռեց մի յետին փորձ անել, այն սեւ անորոշ բանը պարզ ու որոշ տեսնելու համար:

— Ի հարկէ կը տա՞յ, սկսեց նա դասը վատ սերտած աշակերտի պէս, բայց այն եմ ասում, որ պատահում են այնպիսի

թարս, յամառ մարդիկ... թէ վողը՝ թէ հոգին... թարսուեց ու չտուեց, հա՛, այդ եմ ասում էք... ի՞նչ արած. խօ մարդուն չենք սպանի... դլուխը քարը, թող կորչի երթայ... այնպէս չէ^o, Բո՛ւլատ... եւ նա ժամաց խաւարի մէջ, ու կ'ուղէր, որ լնկերը այդ ժպիտը տեսնի:

Կարծես ամպ ճայթեց... Բուլատը կանդ առաւ, հրացայտ աչքերով նրան նայեց, ապա թափով մօտեցաւ մօտ, մօ՛տ, բարձրացրեց ձեռքի ատրճանակի վողը նրա քթի տակ, ատամները կրծտացրեց եւ դաժան, խեղդուած ու սպառնալի ասաց հեւալով.

— Կը սպանենք, եթէ չտայ, ի՛շի դլուխ, հասկանո՞ւմ ես, կը սպանենք եւ քեզ էլ հետը, եթէ խկոյն չես լոի...

Արութը սոսկումով լսեց նրա ատամների ճռոսցը, զդաց նրա տաք ճեւքը իր այտերին, տեսաւ աչքերի փայլը, եւ բնադրդորէն դլուխը յետ ձգեց թափով դէպի ժայռը, դանդը զարկուեց քարին, տեղ չկար թաղուելու, նա շշմեց ցաւից ու լսածից:

— Կը սպանե՞նք... հեկեկաց նա, անմեղ տե՞ղը... արդար մարդո՞ւն... Բո՛ւլատ, Բո՛ւլատ, այդ ինձ չէիր ասել... ինչո՞ւ առաջ չասիր ինձ, անողո՞րմ... մարդաս...

Բուլատը չթողեց նրան վերջացնել... պատասխանը եղաւ մի ուժգին ապտակ, որ քիչ մնաց Արութի ակռաները փշըքը. նա երերաց, արիմնը ցասումով դլուխը խփեց, աչքերի առաջ կանաչ շրջաններ վառուեցին եւ նա ատրճանակի վողից բռնած բարձրացրեց Բուլատի վլսին. վերջինս կանխեց նրան, թափով հարուածեց նրա դաստակին, ատրճանակը թռաւ, կորաւ խաւարի մէջ: Եւ նոյն վայրկենին լսուեց մի սուր սուլոց. Բուլատը պատասխանեց նման սուլոցով, ու դուրս թռաւ ընդ առաջ. ձիռ ու ոտնաձայն, խեղդուկ խօսակցութիւն:

Եկա՛ւ, բերին «այն մարդուն», մտածեց Արութը, նա դողդողում էր կանդնած տեղում, միշտ ժայռին յենուած: Եկողները մի քանի հոգի էին եւ նրանց մէջ եւս «այն մարդը», որին փախցրել էին, եւ որ պէտք է տար յիսուն հազարը:

... «Խսկ եթէ չտա՞յ... խսկ եթէ չտա՞յ»...

— «Կը սպանե՞նք», հնչում էր ականջներում Բուլատի զարհուրելի ձայնը:

Արութի դողն այնքան մեծացաւ, որ ատամներն իրար էին

զարկւում... դլխում քաօս էր եւ այդ քաօսի վրայ իշխում էր ճակատաղբական, անողորմ հարցը. «Իսկ եթէ չտա՞յ»...

Յետոյ մի անյաղթելի պահանջ զգաց նորից տեսնել «այն մարդու» բեխերը, միայն բեխերը. եւ Արութը մի քանի քայլ արեց առաջ խաւարի մէջ փնտռելով «նրա» անօրինակ, ցից բեխերը...

Երկրորդ միտքն էր բարձրաձայն ճշալ, այնպէս որ խաւարը գողայ, ողջ աշխարհը լսի.

— Ե՛յ, խեղած մարդ, քեզ կը սպանե՞ն, կը սպանե՞ն, կը սպանե՞ն...

Յերանը չէր բացւում, միայն ատամները չխէչխկում էին, ծնկները դողդողում էին եւ նա վերստին յենուեց քարին, մինչդեռ Բուլատն ու իր ընկերը ինչ որ խորհում էին, փափսում էին խաւարի մէջ:

Եւ յանկարծ մի խումբ ձիերի սալասմբակ դրոիդիւն հեռւում...

— Ո՞վ էք, լսուեց հեռուից :

Բուլատն առաջինը հասկացաւ վտանդը :

— Փախի՛ք, հրամայեց նա. խումբը վայրկենապէս ցրիւ եկաւ. Արութը քարացել էր իր տեղում, նա կարծես զառանցում էր. Բուլատը սրնթաց անցաւ նրա առաջով, թափով շպրտեց նրան իր հետ.

— Փախի՛ք, շուն շան... խուճապ էր :

Արութը բնաղդօրէն նետուեց դէպի ձորը, վաղեց մինչեւ քարափը, եւ երբ պատրաստում էր ցատկել վար, մի ուժեղ հարուած, ինչպէս ժայռի մի կտոր, դիպաւ թիկունքին եւ նա դիմի վայր գլորուեց դէպի մութ անդունդը... Եւ անկման պահուն մի հատիկ միտք կար դկիսում.

«Իսկ եթէ չտա՞յ»... այս բառերը կրկնում էր ինչպէս յանդերդ...

Հրացանները ճարճատում էին խաւարի մէջ...

Յետոյ ամէն ինչ լոեց...

Արութն ընկած էր ժայռի տակ, փշրուած ու արիւնլւայ, անթարթ աչքերը յառած երկնքին, ուր աստղերը թարթում էին մեղմիւ:

Եւ նրա կողքին հեծեծալով գետակն էր պատմում խաւարին մի հին ցաւ, որ ո՛չ սկիզբ ունէր, եւ ո՛չ վախճան:

Գնդակը թիկունքից դիպչելավ, թափ անցել էր կրծքից, ուսները փշրուած էին գահավլէժ անկումից եւ պատառուած գանդը արճիճի պէս ծանր, թաղուել հողի մէջ: Նա զգում էր, ինչպէս թանձր, լալրծուն, տաք հեղուկը թիկունքի տակ կամաց կամաց լճանում է եւ մահագուժօրէն դուրեկան մի զգացմունք համակում էր նրա ամբողջ հութիւնը...Ամբողջ մարմինը լողում էր այդ գաղջ, ախորժելի հեղուկի մէջ. ամէն կողմ նա էր, այդ գուրեկան հեղուկը ե՛ւ թիկունքի տակ, ե՛ւ դլսի տակ, ե՛ւ կրծքի ու ձեռների վրայ, ե՛ւ բերանում, շրթունքների վրայ ...ու լա՛ւ էր ... լա՛ւ էր ... ցաւ չէր զգում, այլ հաճոյք...

«Մեռնում եմ», մտածեց նա, եւ երջանիկ էր, որ մեռնում էր այսպէս, առանց արիւն թափելու...

«Տեսնո՞ւմ ես, մա՞յրիկ, ես մարդ չեմ սպանել... մեռնում եմ արդար... ձեռներս կարմի՞ր են... չվախենաս... այդ ուրիշի արիւն չի, իմ արիւնն է... արդար արիւն»...

Յետոյ ահաւոր անցքի յեղյեղումները նրա մթագնած յիշողութեան մէջ զառնում էին կտոր կտոր, վայրիվերոյ, ինչպէս շղթայաղերծ գաղանների մի վոհմակ, որոնք ցատկուելով, ճչալով, ոռնալով անցնում էին աչքի առաջից, առանց որ Արութը կարողանայ նրանց նայել: Եւ բոլորը իրար յետեւից գնում էին գահավլէժ ընկնում մի սեւ անդունդ, որի խորքում փայլում էին երկու կատաղի աչքեր, ահազին, լախող բոցեր... քաշում էին Արութին... Յետոյ՝ շիկահեր զլուխներ, կանացի մարմիններ, մերկ, սպիտակ, թրթուն, լիքը ստինքներ, որոնք փախչում էին ձեռքի տակից եւ ցցում պատշոտ կատաղութեամբ ու ժպտում... խելայեղօրէն իրար գալարուած իրաններ, սրունքներ, իրար փակուած բաղուկներ, պարանցներ, կրծքեր... եւ բոլորը քաշքում, տրորում, կծոտում են իրար, դարձեալ արիւնը ժայթքում է շատրուանի պէս, մաղում է դըլուխներին կարմիր անձրեւով, ամէնքը կատաղօրէն եռում են, տնքում, ճչում, մոմում, քրքջում, լալիս... կրքի մրրիկով նրանք պարում են մահուան ու սոսկումի պարը...

«Ծո՛վիկ, Ծո՛վիկ... Բուլատը տարաւ ինձ այնտեղ... ես այնպէս մաքուր եմ... այնպէս արդար... լալի՞ս ես... ինչո՞ւ

.. տես ինչպէս լողանում եմ...ոչ մի կեղտ չի մնայ վրաս...»:

Մի գաղան տնքաց վերստին, ապա երկար երկար կաղկանձեց հեռուում: «Քաղցած բորենի է» մտածեց Արութը, պարզ ու յատակ: Գետը հեկեկում էր, ծեծում ժայռերը, պատմում իր ցաւը. եւ նրա ձայնը հնչում էր Արութի ականջներում որպէս մի անորոշ դրնդիւն:

...«Բո՛ւլատ, իսկ եթէ չտա՞յ»...

Ճախարակը ճռուում էր մրոտ խրճիթի մէջ, պառաւ մայրը մանում էր, մանում էր եւ Ծովիկը կարում էր անվերջ, ինչո՞ւ վեր չեն նայում տնաշնները... դժո՞ն ես, մայրիկ... հաւատա՛, մայրիկ, ձեռքերիս վրայ իմ արիւնն է... չե՞ս հաւատում, դլուխտ օրօրո՞ւմ ես... ա՛յ, հո՛տ առ, մայրերը կը ճանաչեն զաւակի արիւնը հոտից, այնպէս չէ՞... տեսա՞ր, իմ արիւնն է... ճո՛ւ... ճո՛ւ... ճո՛ւ... այն Ծովիկն է կանչում ճտերին եւ նրանց հետ վազվզում են երեխաները... հուօ՛ւ, բալիկներս... եւ երկու կաթիլ արցունքներ կախուեցին ու լճացան բիբերի վրայ...

Գետը լալիս էր... աստղերը թարթում էին...

Մի սեւ բան մօտեցաւ... չէ՛, կանդ առաւ... նայում է, աչքերը փայլատակում են... Բուլատն է... մօտեցաւ, հոտոտեց... ահա նա լակում է իր շուրջը լճացած թանձր հեղուկը... իր տաք արիւնը... դա՞յլ է, բորենի՞, թէ՞ քաղցած, թափառական շուն. միեւնոյն չէ՞... քաղցած է, թող լակի...

Արութի աչքերը փակուեցին, գետն էլ չէր լալիս. աստղերն էլ չէին թարթում. միայն վերջին անդամ աղօտ կերպով դդաց գաղանի տաք հեւքը իր սառը երեսին... եւ սեւ յաւիտենական անդունդի մէջ ընկաւ գահավէժ, այլեւս երբեք, երբեք չբարձրանալու համար... Լուսաբաց էր:

Ոստիկանները լուսաբացին գտան նրա դիակը:

* * *

Եւ հեռո՛ւ, հեռո՛ւ, ծովերից ու սարերից այն կողմը, մը-րոտ ցածրիկ խրճիթի մէջ մի պառաւ կին մանում էր մի հին, յոդնած ճախարակ, մարած աչքերով աշխատում էր ջոկել բարակ թելերը, որ նրանք հաւասար լինին, կոկ, սիրուն... Ո՛չ, անդօր էին աչքերը, թելերը մերթ հաստ էին, մերթ բարակ, իլիկը դառնում էր, լարը հեծեծում, ճախարակը լալիս էր աւելի ցաւոտ, աւելի աղեխարշ, եւ պառաւ մայրը մեղմիւ, նը-

ուաղած ձայնով երգում էր իր հին, վշտու երդը. երգում էր
ու նայում դրանը.

«Սեւ սարերից գումանն իջաւ դաշտերին,
«Ո՞վ է լալիս հօնքուր, հօնքուր էն ձորում,
«Անճա՛ր եղնիկ, մատաղ աչքիու արցունքին,
«Ո՞ր չար ձեռքից նետը դիսկաւ քո սրտին . . .»

1910



ԿԵՐՆՔԻ ՎԻՊՈ



ԿԵԱՆՔԻ ՎԷՊԵՐԸ

ՀԻՆ ԱՌԵՂԾՈՒԱԾԼ

(ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ)

Կեանքն իր լայն, իր տիեզերական առմամբ գեղեցիկ է արդեօք եւ արժէ՞ այն վայելելու համար դոյութիւն կռւում ամբողջ տարիներ մաքառել, արժէ՞ արդեօք լարել կենսական բոլոր ոյժերը, հոգու ու մտքի ամբողջ կարողութիւնը՝ ձեռք բերելու ըմպելիով լի բաժակ, դէպի որը մարդիկ մեկնում են իրանց ջղայնաբար ցնցուող բաղուկները, իրանց պապակած շրթունքները առանց իմանալու, թէ նրա տակը ի՞նչ է թագնուած՝ թո՞յն, թէ՞ մեղը, եւ որը վայելելուց յետոյ էլ՝ գեռ ոչ մի ծարաւ չէ յագեցել:

«Կեանքը զարհուրելի է եւ չարժէ ապրել իսկ», ասել է դարաւոր յունտեսութիւնը, որ մարդկային դոյութիւնն իր բոլոր բարդ երեւոյթներով, իր ցաւերով ու երջանկութեամբ, իր ծիծաղով ու արցունքով համարում է միայն եւ միայն տառապանքների մի շարք, յարատեւ վառ եւ երբեք չյագեցող տենչերի, հոգին այրող ցաւերի մի խաւար հիւսուածք, ուր չկայ մի հատ լուսաւոր բիծ, մի հատիկ լուսաւոր վայրկեան, եւ քարոզում է, թէ տիեզերքի մէջ չկայ աւելի խղճալի, աւելի թշուառ էակ, քան մարդն է, մի անհասկանալի ճակատագրի այս ողորմելի խաղալիքը:

Յաւիտենական մռայլից եւ անխորհուրդ տառապանքներից խօսող այս փիլսոփայութիւնն իր մահացու չնչով դարերի ընթացքում մարդկային անթիւ վշտացած դոյութիւններ է խլել իրականութիւնից եւ դուրս շպրտել դէպի անհունը, բայց եւ այնպէս կեանքը, դոյութիւնը չէ դադարել եւ նրա լայն ծփանքները շարունակում են իրանց հսկայ երերումներով մղել դէպի անյայտը իրար յաջորդող սերունդների շարքերը, տիեզերական համերգի մէջ հնչեցնելով մերթ ուրախութեան եւ մեծ մասամբ խորին ցաւի ելեւէջներ :

Բայց մի՞թէ յիրաւի կեանքը զարհուրելի է, մի՞թէ մարդկային գոյութիւնն այդ աստիճան սեւ է. ահա դարաւոր առեղծլւածը, որը լուծել անհնար է, քանի որ դարերն ու նախապաշարմունքները, կրօններն ու թիւր հասկացողութիւնները ծովը ռեւ, այլանդակել են կեանքի խսկական պատկերը. եւ ժամանակակից հասարակական կարգերն ու հաստատութիւնները, շատ անդամ արդիւնք այդ հին օրերի զարմանալի թիւրիմացութիւնների, անհնարին են դարձնում տեսնել մարդկային կեանքն այնպէս, ինչպէս որ պէտք է լինէր, ինչպէս որ նա կարող էր լինել: Ճշմարտութիւնն այսպիսով խուսափում է մեղանից եւ թաղնըլում թիւրիմացութիւնների մառախուղի տակ, որ մարդիկ իրանք եռանդով թանձրացրել, անթափանցիկ են դարձրել: Շատ քիչ անդամ արեւի մի զօրեղ փայլ, կայծակի մի շլացուցիչ բոցավառութիւն վայրկենապէս լուսաւորում է հասարակական կեանքի մի կողմը, ցոյց է տալիս ահուելի վէրքեր, ցնցող, յուղիչ տեսարաններ, ապա կրկին ամէն ինչ ծածկում է, ամէն ինչ ընդունում է իր սովորական կերպարանքը եւ իրերն ընթանում են առաջուայ կարգով, յամրաքայլ, միակերպ, որովհետեւ խաւարը դեռ շատ է թանձր...

Իր արտաքին միակերպութեամբ հանդերձ մարդկային կեանքը սակայն լայն է, որպէս անեղը ծովը, եւ նրա յեղյեղումները բազմապիսի են ու լայնածաւալ, որպէս ծովի հսկայական յորձանքները: Ինչպէս մի հայեացքով անհնարին է ընդդրկել ջրերի բոլոր գալարումները, նրանց անթիւ կոհակների մանը ու մեծ պայտները, նոյնպէս ամենավառ երեւակայութիւնն անդամ անկարող է պատկերացնել մարդկային կեանքի բիւրաւոր երեւոյթները, յարատեւ շարժուն, յարատեւ անհանդիստ նրա ծըփանքները, որոնք իրանց մութ ծալքերում օրօրում են մերթինդ, մերթ հեծեծանք, մերթ արցունք, մերթ ծիծաղ, հանճար ու խելազարութիւն, խօլական ցնորքներ ու գիւթիչ երազներ, սեւ ոճիրներ եւ վսեմ դործեր: Ծովը մեղ պատկերանում է կամ խոռված ահեղ փոթորկից, երբ ուռած ալիքները, ինչպէս ցաւատանչ է ակներ, լեռնանում, փախուստ են տալիս անհիւրընկալ անդունդներից եւ վեր՝ դէպի երկինքը ձգուելով, համբուրուում են իրանց քոյր ամսկերի հետ, կախուում են նրանց փէշերից, ասես ուզում են փախչել տառապալից երկրից դէպի աղատ անհունութիւն. կամ

մենք տեսնում ենք ծովը ինչպէս մեղկ վայելքներից յդիացած մի տրփոտ գեղեցկուհի, որ նազելով օրորում է երկրի գրկում անդորր նիրհով, իր լայնարձակ, խոնաւ փէշերի տակ թաղցնելով այնքան աշխարհներ, այնքան կեանքեր, այնքան գաղտնիքներ։ Նման ծովին՝ մարդկային կեանքը մեղ ցոյց է տալիս իր ծայրայեղութիւնները, իր անօրինակ, իր հսկայ ալեկոծումները, կըրքերի փոթորկոտ իրար բախւող հզօրների պայքարը, կամ վսեմ հոգիների ըմբոստ ցնցումներ, որոնք երբեմն դղրդում են երկիրը եւ անտարբեր ականջներն անդամ որոտմունքով խլացնում։ Բայց կեանքի ծովն էլ մի նախանձոտ եռանդով իր արտաքին միակեղպութեան, իր արտաքին փայլի տակ ծածկում է անթիւ մանր ցաւեր, անծանօթ, մոռացուած վշտեր, աշխարհի փոքրերի, բախտի խորթ զաւակների սրտերի կսկիծը, նրանց համը տառապանքները։

Կեանքի ճանապարհի վրայ ամէն օր, ամէն ժամ թափւում են մանր արցունքներ, ինչպէս աշնանային երկնքից անձայն քամուող մանրամաղ անձրեւ, շարունակ տեղի են ունենում՝ ըստ երեւոյթին աննշան, բայց խորապէս տրագիկ երեւոյթներ, ցնցը ւում են տառապանքից յոդնած՝ թախծալից դէմքեր, բայց մենք անցնում ենք առանց տեսնելու, կամ տեսնում ենք առանց յուզուելու, որովհետեւ կամ այդ երեւոյթների բազմութիւնը մեղ խսպառ բթացրել է եւ անկարող դարձրել զգալու, կամ համարում ենք դա էլ կեանքում նոյնքան բնական, նոյնքան անհրաժեշտ, որքան երեւոյթների բազմազանութիւնը բնութեան մէջ, որքան ալիքների բիւրաւոր յեղյեղումներ ծովի մէջ։ Եւ սակայն այս մանր-մունր, մոռացուած ցաւերն են կազմում շատ անզամ տիեզերական վշտոտ համերգի ամենայուղիչ շեշտերը։ Օ՛, չկատարդկային աչք, որից քամուած տաք արցունքը սիրո չայրի, չկայ մի տանջուող հոգի, որքան եւ աննշան ու խեղճ լինի նա, որ խորին կարեկցութեան, խորին ուշադրութեան արժանի շլինի։

Կենսական խոշոր դէպքերի, միլիոնների խաղաղ գոյութիւնն ուժեղ ցնցումով ազմկող երեւոյթների, «աշխարհի իշխանների», հզօրների փառքի կամ ոճիրների մասին շատ ու շատ է դրուել. մեծ վշտերն էլ երգել են հանճարները եւ տիեզերքի արցունքով ցողել։ Մոռացուած ու խեղճ գոյութիւններ կան, որոնք խաւար անկիւններն են սողում, չեն համարձակում իրանց բներից արե-

ւի երես գուրս դալ, երկնքի տակ իրանց տեղը գրաւել, որոնք չունեն նոյնիսկ բողոքի մի հզօր ճիշ արձակելու խեղճ մխիթարութիւնը, եւ սակայն նրանք էլ կեանքինն են. նրանք էլ իրականութեան մի մասն են, նրանք էլ կեանքի մեծ առեղծուածի հանդոյցների մէջ են:

Բնութեան մէջ փոթորկի ժամին մենք տեսնում ենք երկինքը պատաժ բարդ բարդ ամպերով եւ կայծակը, որ բոցոտ ակօսներ է քաշում նրա սեւ կրծքին. մենք լսում ենք խլացուցիչ որոտը, քամու կատաղի ոռնոցը, որի տակ կռանում հառաչում են դարաւոր կաղնիները եւ իրանց բողոքը խառնում երկնքի որոտին, բայց ո՛րքան մանր տունկեր լեռան կրծքին մենաւոր, կամ ցցուած փոքրիկ ծառեր արմատախիլ եղած տարւում են մրրիկների մէջ լուռ ու անձայն եւ նրանց տեղն էլ չենք տեսնում: Ահա մարդկային այդ տունկերի, կեանքի մեծ փոթորկի մէջ կորած խեղճ էակների գոյութիւնն է այս պատկերների նիւթը, նրանց ցաւերից եմ հիւսում «Կեանքի վէպերը», որոնք հետզհետէ տպուելու են «Մշակում»:

1898

ՄԵՐԺՈՒԱԾՆԵՐԸ

(1898—1900)

ԻՄ ՓՈՔՐԻԿ ԲԱՐԵԿԱՄՈՒՀԱՆ

Նրա անունն էր Մատիլդ, փոքրիկ Մատիլդ։ Վեց-եօթ տարեկան կայտառ, շիկահեր աղջիկ էր նա, կապոյտ աչքերով, շատ միամիտ դէմքով, ինչպէս առհասարակ լինում են հիւսիսի մանուկները։ Նրա գլուխը պատաժ էր միշտ մի հնոտի թաշկինակով, վզին մի անբաժան շարֆ, որի երկու ծայրերը նա սիրով էր քաշ ձգում կրծքի վրայ։ Թէ ինչ արժէր նրա համար վզի այդ փոքրիկ զարդը, այդ երեւում էր նրանից, որ Մատիլդը ճանապարհ գնալիս անգամ սիրում էր երբեմն-երբեմն կանդ առնել եւ բաւականութեամբ նայել իր շարֆի ծայրերին, յարդարել նրա փնջիկները եւ նոյնիսկ ժպտալ։ Եւ նա իրաւունք ունէր ուրախանալ, նոյնիսկ հպարտանալ։ նախ՝ այդ շարֆը շատ էր սիրում, գոյնդդոյն ու փափուկ եւ երկրորդ՝ նրա մնացած զգեստն այն աստիճան ողորմելի էր, որ այդ միակ զարդն էլ աւելի աչքի էր ընկնում իր փայլով եւ իր փոքրիկ տիրուհու խղճուկ մանկական պերճասիրութեանը մի փոքր բաւականութիւն էր տալիս։ Մատիլդն այն կարգի երեխաններին էր պատկանում, որոնք չդիտեն ինչ ասել է իրանց վրայ ձեւած ու կարած զգեստ եւ որոնք կարծես աշխարհ են գալիս ունեւորների հնոտիները մաշելու, նրանց էժան մարդասիրութեան միջոց դառնալով։ Մի նոր զգեստ երեխային, որ քայլելիս մի փոքր խշխշայ, որ հաղած օրից խունացած չլինի, որ վըրան լաւ նստի, կոճակները միակերպ լինեն, համաչափ շարուած, սա մի ամբողջ երանութիւն է եւ Մատիլդը այդ երանութիւնը՝ միլիոնների համար այնքան սովորական այդ բախտը գեռ չէր ունեցել։ Նա միշտ քարշ էր տալիս իր հետ մի որեւէ հասակաւորի երկայն եւ բազմածալ իւրկա, որի մէջ իր խղճուկ ոտնե-

ըստ շարժուելիս փաթաթւում էին. նա դժուարութեամբ էր քայլում, դժուարութեամբ էր պահպանում իր հաւասարակշութիւնը: Աւելի ողբալի էր գառնում նրա կացութիւնը մանաւանդ վասեղանակներին, երբ փէշերը անձրեւի ու ձիւնի մէջ թրջուելով՝ քաշ էին ընկնում նրա իրանից ինչպէս մի ծանր բեռ եւ ամէն մի քայլը ծղելիս անախորժ շրիոցով ծեծում էին նրա թրջած, դողդոջուն սրտնքները: Այդ ժամանակ փոքրիկ աղջիկը նմանում էր ուշ աշնանը ջրի մէջ ընկած ճափկին, որ ցամաք դուրս դալով թափիթափի է տալիս իր տղկուած թեւերը եւ չփիտէ ինչպէս տաքացնէ իր ողորմելի մարմինը արեւի անդօր չողերով: Եւ ամէն անդամ, երբ նրա ոտները խառնուում էին իրար իւրկալի ծալքերի մէջ, նա օրօրուում էր, ուղղուում եւ իսկոյն նայում էր իր շարփի երկու փնջերին, որոնց գեղեցկութեամբ ասես մխիթարուում էր իր իսեղճութեան մէջ: Երբեմն որքան քիչ բան է հարկաւոր մի սեւ դոյութեան դառնութիւնը մեղմելու համար:

Ո՞րտեղից էր այդ ահազին լայնածաւալ իւրկան, ո՞վ էր տըւել Մատիլդին այդ սիրուն շարփը, դժուար էր ասել. խեղճերի զգեստների պատմութիւնը նոյնքան խաւար է, որքան նրանց կեանքը: Ինչպէս մուրացիկի պարկի հացի պատառներն իրար նըման չեն, որովհետեւ ամէն մէկը մի դռնից, մի ձեռքից են խլուած, այնպէս էլ այդ կարգի մանուկների զգեստի ամէն մի մասը իր տարբեր պատմութիւնն ունի, աշխարհին անձանօթ, բայց հետաքրքիր պատմութիւն, որ խեղճերն իրանք էլ չեն սիրում պատմել, դժբախտութիւնն էլ իր «սրութիւն սրբոցն» ունի:

Բայց տարօրինամկը ո՞չ Մատիլդի սիրուն շարփն էր, ո՞չ նրա անտանելի իւրկան, ո՞չ այն այլանդակ կարճ բաճկոնը, որի ոչ թիկունքն էր յայտնի եւ ոչ մէջքը, եւ որ պարկի պէս քաշ էր ընկել փոքրիկ աղջկայ վտիտ ուսերից: ամէնից ուշադրաւը, ամէնից տարօրինամկը այն մեծ, սպիտակ դաշտամուկն էր, որ շարունակ նրա ուսին էր, խաղում էր պարանոցի վրայ, քրքրում էր մաղերը, լիզում էր դէմքը, շրթունքները, քիթը, դունչը ներս էր կոխում նրա շարփի եւ պարանոցի արանքը, առանց չնչին տհաճութիւն պատճառելու իր փոքրիկ տիրուհուն: Մատիլդը նոյնիսկ երջանիկ էր երեւում իր մկնով. երբ անցորդները հետաքրքրութեամբ ու ժպիտով նայում էին այդ անօրինակ ընկերութեանը, նա ձեռքը դնում էր սպիտակ մկան փափիլիկ մէջքին, սիրով նա-

յում էր նրա աչքերի մէջ եւ կարծես ուզում էր ասել. — Շնորհա-կալ եմ, մո՛ւլի, քո շնորհիւ, տե՛ս, որքան մարդ է հետաքրքրում ինձանով :

Հարուստ, պճնազարդ տիկիններն ու օրիորդները փողոցներում քաշ են տալիս իրանց յետեւից սիրուն շղթայով փոքրիկ պարարտ չներ եւ երբեմն աւելի հետաքրքրի երեւալու համար գըր-կում են նրանց եւ փայտիայում, համբուրում են ինչպէս իրանց զաւակներին : Երջանի՛կ չներ, որոնք միշտ աւելի կուշտ են, աւելի լաւ ինամուած, քան միլիոնաւոր խեղճերի բազմութիւնը. ինչ փոյթ, նրանց տիրուհիները հպարտ են, երբ կարօտ, չունե-ւոր անցորդները հետաքրքրութեամբ, զարմանքով, նաեւ զայ-րոյթով են դիտում նրանց չների պարանոցների արծաթէ օղերը եւ բոժոժները, նրանց մաքուր, փայլուն մորթին : Ինչո՛ւ Մա-տիլդն էր չունենար իր փոքրիկ մուկը, որ ոչ մի ծախս չէր պա-հանջում եւ որ նրան միլիթարում, զուարճացնում էր :

Փոքրիկ աղջիկը բացի իր մկնից ոչինչ չունէր, որով ան-ցորդների ուշադրութիւնը դրաւէր եւ ունէր ամէն ինչ, որպէսզի ամէնքն էլ երես զարձնէին նրանից — նա փոքրիկ թշուառ էր, իսկ թշուառութիւնն ամէն երկրում, ամէն երկնքի տակ խիստ անա-խորժ զարդ է, որ նրանով հնարաւոր լինի ուշադրութեան արժա-նանալ :

Մատիլդը հնուաիներ հաւաքողի աղջիկ էր եւ նրա կեանքը անց էր կենում փողոցներում : Համարեա ամէն օր ես տեսնում էի Մատիլդին իր մօր հետ, մի տոպրակ մի ուսին, սպիտակ մուկը միւս ուսին : Մայրը՝ մի միջահասակ կին, գլխին կրում էր վա-զուց, շատ վաղուց դեղնած մի ցողէ լայնեղը գլխարկ, որ երկու կողմերից քաշ էր ընկել ականջների վրայ, առաջից կաղմելով մի տեսակ սուր կիսաշրջան, եւ որ այնպէս յիշեցնում էր թեւերը քաշ ձգած թռչուն : Այդ հինաւուրց գլխարկի ձեւը եւս առաւել ողորմելի էր գառնում, երբ քամի էր փչում դուրսը, որովհետեւ կինը ստիպուած էր լինում այդ ժամանակ թելով ամրացնել նը-րան իր վտիտ ծնօտի տակից, այսպիսով եզրերը էլ աւելի կախ-ւում էին, ճակատի վրայ կիսաշրջանն է՛լ աւելի նեղանում էր եւ նրա գունատ, տանջուած դէմքը իր խոր ընկած վշտոտ աչքերով հազիւ էր երեւում :

Մայրն էլ միշտ մի տոպրակ ունէր ուսին եւ մի կեռ երկաթ

ձեռքին . նա էլ մի այլանդակ շրջազգեստ էր հագնում , եւ մի կեղտուու խունացած կապայ , ով դիտէ ո՛րտեղից ճարած , բայց ամէն անդամ այդ կնոջը պատահելիս՝ ես միմիայն նրա գլխարկն էի տեսնում իր ամբողջ զգեստից , կարծես դա նրա խեղճութեան խորհրդանշանը լինէր , որ նա ման էր ածում փողցներում ասելու այն , ինչ որ ինքը չէր կարող , կամ չէր կամենայ ասել : Այս մայրն ու աղջիկը միասին կազմում էին մի պատշաճաւոր զոյլ եւ նրանց նմանութեան մէջ մի այնպիսի բան կար , որ ցուրտ , թունաւոր ժամանով հեգնում էր աշխարհի ողորմածութեան երկու հաղար տարուայ գունատ , անզօր պատկեր :

Այն բոլորը , ինչ որ հարկաւոր չէ բախտաւոր ունեւորին , ինչ որ հրաժարում է ուտել ե՛ւ նրա շունը , ե՛ւ նրա կատուն , ինչ որ արհամարհանքով եւ շատ անդամ զղուանքով նա դուրս է շպըրտում իրեւ անպէտք ու աւելորդ , յաճախ նրանով եւ միմիայն նրանով է պահպանում իր տառապալից գոյութիւնը մեծ քաղաքներում կեղտի մէջ կորած , քաղցից տանջուած մի սեւ բազմութիւն : Ահա այդ մուայլ բանակին էր պատկանում Մատիլդն իր մօր հետ : Նրանք զարթնում էին առաւօտը վաղ , արեւածադից առաջ , քանի դեռ աղբակիր սայլերը չէին գատարկել գիշերը դոների առաջ դրած աղբով լի արկղները : Ամառը , լաւ եղանակներին հեշտ էր վաղ վեր կենալ , բայց ձմեռը , ցրտին դրութիւնը դառնում էր անտանելի : Խեղճերի բախտից ձմեռ ժամանակ կարեն է՛լ աւելի հրամայող է դառնում , եւ մայրն ու աղջիկը տոպրակներն ուսին փողոց էին ընկնում եւ վաղորդեան մշուշի մէջ նրանց ուրուագծերը շարժւում էին որպէս խուսափիող ողիներ :

Նրանք անցնում էին ցաւոս դանդաղութեամբ , որ մի գերեզմանական բան ունէր իր մէջ , աշխատելով մանաւանդ հարուստների դռները շուտ հասնել , կանդ էին առնում աղբով լի արկղների առաջ . մայրն իր երկաթը ներս էր տանում այլանդակ դանդուածի մէջ , մուկը նոյնպէս ցած էր ցատկում այնտեղ Մատիլդի ուսից եւ մանուկը հետաքրքիր , բորբոքուած աչքերով նայում էր աղբին : Այդ ժամանակ մուկն իր խկական դերումն էր , նա երկաթից էլ աւելի արագ թաղուում էր մուսրի , կերակրի , լաթերի , թիթեղէ ամանների , ոսկորների , բանջարի մնացորդների այդ զղուելի կոյտի մէջ , հոտոտում էր , փոքրիկ թաթերով փոր-

փըրում էր աջ ու ձախ, երբեմն դուրս էր գալիս փոշոտած դնչով ու մորթիով եւ կրկին ծածկում էր, իսկ Մատիլդը նայում էր ու շաղրութեամբ, երբեմն երբեմն պիտանի համարուած մի բան վերցնում էր իր փոքրիկ ձեռներով, թափ էր տալիս կամ քսում էր իր փէշերին մոխիրը սրբելու համար եւ ճգում էր իր տոպրակը. նոյն բանն էր անում նաեւ մայրը: Թէ ի՞նչն էր պիտանի եւ ի՞նչը անպէտք, այդ միայն նրանք գիտէին, այդ տխուր խուզարկուները: Մի արկղը վերջացնելուց յետոյ՝ նրանք անցնում էին դէպի միւսը եւ այսպէս շարունակ, անվերջ:

Այս նողկալի աշխատանքը իր բազմաթիւ անհաճոյ կողմերի հետ աղատ չէր նաեւ խիստ անախորժ արկածներից: Խեղճերը երկու կարդի կատաղի թշնամիներ ունէին — թափառական շները եւ աղախինները: Առաջինները՝ շատ անդամ նրանցից աւելի եռանդով, աւելի վաղ էին հասնում արկղներին, աւելի շուտ տակն ու վրայ անում եւ փախցնում մէջը գտնուած հացի եւ կերակրեղէնի մնացորդները, իսկ երկրորդները դժգոհ էին, որ աղբը խառնելիս երբեմն արկղների եզրերից մոխիր է թափուում եւ նոր աշխատանք աւելանում: Պէտք էր լինում երբեմն աղախինների դառն յանդիմանութիւնները կամ ուղղակի հայհոյանքը կրել, պէտք էր նաեւ շների հետ կոխ անել նրանցից որեւէ «հարուստ» արկղ խելու համար: Յուրաք տանում էին, անքնութիւնը նոյնպէս, բայց շներն ու աղախինները, իրարից կատաղի, իրարից անախորժ, ահա թէ ինչն էր նրանց զբաղեցնում եւ վշտացընում: Բոլոր շների մէջ ամէնից վտանգաւորը, ամէնից աներեսը մի մեծ միականջանի շուն էր, իր տիրոջ՝ մի ծեր գնդապետի մահից յետոյ անտէր թափառական մնացած. իսկ բոլոր աղախիններից ամենաանսիրուը, ամենաանողոքը դէպի այս խեղճերը մի պառաւ աղջիկ էր, որին Մատիլդը իր խղճուկ վրէժինդրութեամբ կնքել էր «Զար» անուամբ: Եւ նա արժանի էր այդ անուանը, որովհետեւ ամէն հնար գործ էր գնում, որ իրանց արկղին ձեռք չտան, չխառնեն եւ դրա համար նա կանգնում էր աղրի մօտ մինչեւ սայլը դայ, կամ ջուր էր ածում արկղի մէջ, որ խառնելը դժուար ու անօգուտ լինի:

Այսպէս էին նրանք, այսպէս էին ապրում:

Իմ ծանօթութիւնը Մատիլդի հետ կատարուեց շատ բացառիկ պայմաններում: Մի օր շաքարեղէնի խանութի վիտրինի առաջ

տեսայ երեք փոքրիկ աղջիկ, մեծ քաղաքների աղքատ լնտանիք-ների զաւակներ, որոնք սիրում են երբեմն խմբեր կազմել, վաղ-վըզել փողոցներում եւ դիտել մեծ խանութների հագար ու մի բարիքները: Փոքրիկ աղջիկները սկզբում կանգնել էին անշարժ եւ հետաքրքրուած նայում էին խանութիւնները, ուր այնքան համեղ բաներ կային: Յանկարծ նրանցից մէկը մօտեցաւ դրանը, երկու ձեռքը տարածեց ապակու վրայ՝ բացականչելով.

— Այսքանն ինձ:

— Այս էլ ինձ, բացականչեց երկրորդը նրա օրինակին հետեւլով:

Վրայ վաղեց նաեւ երրորդը. նրանք սկսեցին քաշըել, հրհը-ըել իրար պայքարը վերջացաւ նրանով, որ վերջինը դուրս մնաց եւ սկսեց հեկեկալ ու արտասուել: Դա Մատիլդն էր: Ես մօտեցայ:

— Ի՞նչու ես արտասում, փոքրիկս:

— Ինձ տեղ չեն տալիս:

— Բայց միւս կողմում էլի տեղ կայ, դու էլ այն բռնիր:

— Այնտեղ չօկոլադ չկայ, նրանք չօկոլադը բռնեցին, ես իսկի չօկոլադ չեմ կերել:

Խե՞զ Մատիլդ, նա երբեք չօկոլադ չէր կերել եւ աշխատում էր դրսից զոնէ մի բռնիկով իրան չօկոլադի տէր դդալ: Զրկանք-ներին վարժուած եւ վայելքին օտար այդ փոքրիկ խեղճերը փոր-ձում էին դէֆ մի վայրկեան վայելել իլլիւզիայի հաճոյքը, մո-ռանալ խեղդող իրականութիւնը եւ փարել վաղանցուկ երազների: Փոքրիկ Մատիլդն այդ երազն էլ չունեցաւ եւ նա արտասում էր իր մանկական հոգու խորքերից: Ո՞րքան ցաւ կար այդ արցուն-քի մէջ... Ես ներս մտայ, մի ծրար չօկոլադ դնեցի, տուեցի Մա-տիլդին, յանձնարարելով բաժանել այն իր ընկերուհիների հետ: Նա ժպտաց ինձ, սրբեց արցունքները եւ երեք թափառաշըջիկ աղ-ջիկները հռհռալով փախան, անյայտացան:

Ես էլի մի անդամ տեսայ Մատիլդին ոչ պակաս տխուր կա-ցութեան մէջ: Այդ օրը նա միայնակ էր, բարձրաձայն լա-լիս էր եւ քանի ոտներում ոյժ կար փախչում էր պինդ գրկած էր անբաժան մուկը. նրան հետեւում էր իր անողոք թշնամին՝ «Զար աղջիկը», սպառնալով բռնել եւ սպանել մուկը: Դժուար էր աւելի յուսահատ վիճակ երեւակայել քան խեղճ Մատիլդին

էր . նա ճշում էր , վազում էր բոլոր ուժով , լայն իւրկան փաթաթում էր ոտներին եւ նա չդիտէր պարկը պահել , կեռ երկաթը , թէ իր մուկն աղատել . ճարը կտրած՝ նա ձգեց առաջինները՝ իր սիրելի կենդանին աղատելու համար :

— Ես քեզ քանի ասացի , որ մեր արկղին ձեռք չտաս , ճշում էր աղախինը :

— Ել չեմ դայ , Ել չեմ դայ , աղաչում էր երեխան փախչելով : Հէնց այդ վայեկնին նա տեսաւ ինձ եւ ճանաչեց :

— Մո՛ւկս , պարո՞ն , «Զարը» սպանում է մուկս , ճշաց նա ինձ փաթաթուելով : Աղախինն այս տեսնելով հեռացաւ . փոքրիկ աղջկան հանդստացրի . նա կրկին սրբեց արցունքը , վերցրեց իոն պարկն ու երկաթը , մուկը կրկին տեղաւորեց ուսին , ժպտաց ինձ եւ դնաց շարունակելու իր տիսուր աշխատանքը : Մենք բոլորովին բարեկամացանք :

Այդ օրից սկսեալ ամէն անդամ ինձ պատահելիս նա սաստիկ ուրախանում էր , ժպտում էր մեղմով , մատով ցոյց էր տալիս ինձ իր մօրը եւ բացականչում :

— Մա՛յրիկ , տե՛ս , տե՛ս , իմ պարոնը եւ ապա էլի ինչ որ բաներ էր ասում . որքան քիչ բան էր հարկաւոր այդ փոքրիկ , դժբախտ երեխայի սէրը գրաւելու համար : Ինձանում էլ կամաց կամաց մեծանում էր համակրութիւնը եւ հետաքրքրութիւնը դէպի այդ փոքրիկ արարածը . Ես ամէն օր փնտում էի նրան փողում , ինձ համար մի պահանջ էր դարձել նրան տեսնել այնպէս , ինչպէս որ նա կար , իր խեղճ ժպիտով , իր գունատ ուրախութեամբ : Ես սիրում էի նրա մեծ , կապուտակ աչքերը , ուր անմեղութեան ու քնքչութեան հետ այնքան անդիտակից ցաւ կար . Ես սիրում էի նրա փոքրիկ գանդրահեր գլուխը , նրա դէմքի այդ յանկարծական փայլը , որով նա յայտնում էր իր գոհութիւնն ինձ պատահելիս . Ես սիրում էի նրա ամբողջ պատկերը իր տարօրինակ հագուստով , իր խղճուկ քայլուածքով . Ես սիրում էի այդ փոքրիկ դժբախտ արարածի խեղճութիւնն անդամ : Նրա մեղմ ժպիտը , նրա մանկական ցնծութիւնն ինձ այնքան համելի էին , որ Ես անում էի բոլորը , ինչով կարող էի նրան ուրախացնել , նրան ժպիտ պարզեւել : Հեռուից ինձ տեսնելիս , նա ընդ առաջ էր վազում հեւարով եւ սկսում էր ընդհատ ընդհատ պատմել , թէ ինքն ի՞նչ է արել :

— Գիտե՞ս, պարո՞ն, ես այսօր այնպիսի բաներ եմ գտել, այնպիսի լաւ բաներ, պարկիս մէջ են, մայրիկս կը ծախի. «Զարի» արկղի մօտ էլ չեմ գնում, նա ինձ կը ծեծի: Ապա սկսում էր ընտանեկան տոնով հաղորդել ինձ իր տպաւորութիւնները փողոցի միւս աղախինների մասին, որոնց նա բոլորին ճանաչում էր եւ հաւատացած էր, թէ ես էլ եմ ճանաչում:

— Մարդարիտը թղթի մէջ փաթաթած ինձ բաներ է տալիս. Մարդարիտը լաւն է, այնպէս չէ^o, պարո՞ն, նա չար չէ, նա ինձ այնպէս սիրում է:

Ես համաձայնում էի նրա հետ եւ նա ուրախանում էր:

Մի օր Մատիլդին այնպէս ուրախ, այնպէս յուղուած տեսայ. նա վաղէ վազ առաջ եկաւ, կարմրած, կարկամուած, չէր կարողանում հաղորդել իր անօրինակ ուրախութեան պատճառը:

— Պարոն, «Զարը» մեռել է՛, հաղիւ կարողացաւ նա շնջալ, նրան տարան թաղեցին, նա էլ իմ մազերը չի քաշի, մուկս չի սպանի: Ուրիշի դժբախտութեան հանդէպ փոքրիկ երեխայի այս հրճուանքը ինձ չվշտացրեց, ինչպէս չէի վշտանայ, եթէ որսորդի գնդակը տապալելով բաղէին աղատէր նրա ճանկերից փոքրիկ ճնճղուկին. ճակատագիրների ցանցի մէջ մահը շատ յաճախ դժբախտներին ու հալածուածներին բախտ պարզելու պաշտօնն ունի. «Զարը» մեռել էր եւ Մատիլդը հրճում էր, ինչպէս սպանուած բաղէի վրայ ճնճղուկը ճոռողելու իրաւունքն ունի:

Զմրան վերջն էր. փոփոխական եղանակների շարքն էր սկըսած. մերթ անձեւը եւ մերթ անձեւախառն ձիւնը փողոցների անցուարձը դժուարացնում էին սաստիկ. խեղճ Մատիլդը դարձեալ քաջ էր գալիս ցեխերի մէջ իր անտանելի իւրկայով, իր անբաժան տոպրակով: Առաւօտեան ես նրան տեսայ կանդնած մայթի վրայ. նրա առջեւից անցաւ մի փոքրիկ աղջիկ ձեռքին մի մեծ տիկնիկ. այն էր զրաւել Մատիլդին. նա մի քիչ քայլեց տիկնիկի յետեւից, կարծես թէ կ'ուղէր բռնել, նայել, բայց էլի չհամարձակուեց եւ կանդ առաւ մնաց:

— Տեսա՞ր այն տիկնիկը, պարո՞ն, ասաց նա ինձ տեսնելով:

— Ես քեզ համար մի այնպիսին կը գնեմ, Մատիլդ:

— Այսօ՞ր:

— Այո՛, հէնց այսօր, ճաշին կը բերեմ, դու այստեղ սպասիր ինձ:

— Ա՛յ, կը դամ հէնց այստեղ կը կանգնեմ, ասաց նա ուրախացած:

— Մատի՛լդ, էլի մենա՞կ ես այսօր:

— Հա՛, մայրիկս լուացք է անում, ես մենակ էլ չեմ վախենում, պարո՞ն, «Զարը» խօմ չկայ, միայն չնից եմ վախենում, այն մեծ չնից, որ մի ականջ ունի:

— Ախր այն շունը չէ կծում, Մատի՛լդ:

— Զէ կծո՞ւմ, երբ մկանս տեսնում է՞յ մռմռում է. ես փախչում եմ, որ չըռնի. թէ հասնի, կը խեղդի:

Ես աշխատեցի նրան սիրտ տալ, հանդստացնել եւ հեռացայ մտածելով այդ փոքրիկ արարածի մասին, որին կարիքը դուրս էր շպրտել փողոց եւ որին ես անզօր էի տալ այն, ինչ մանկութեանն է պատկանում—անհոգ, ծիծաղկոտ օրեր:

Ճաշին տուն վերադառնալիս՝ ես նայում էի Մատիլդի համար դնած տիկնիկին եւ մտածում էի թէ ինչպէս հեռուից ցոյց կը տամ, ինչպէս նա ուրախ ուրախ կը վաղի, «Հնորհակալ եմ, ի՞մ պարո՞ն», կ'ասի ժպտալով, ինչպէս ես նրա փոքրիկ ծնուն ըստ իմ սովորութեան կը բռնեմ մնաս բարեւ ասելիս։ Եւ երեւակայելով այս բոլորը՝ ես երջանիկ էի եւ քայլում էի շտապով, որ շուտ հասնեմ, շուտ տեսնեմ իմ փոքրիկ բարեկամուհուն։

Դպրոցական մանուկները ուրախաձայն աղաղակներով, իւրար հրհրելով, իրար յետեւից վազվելով վերադառնում էին դէպի տուն։ Ես փնտոում էի Մատիլդին եւ չէի գտնում։ Յանկարծ երեխաններն իրար խառնուեցին, մատով մի բան ցոյց տուին և մէկն վազեցին դէպի նոյն կողմը։ Համարեա միեւնոյն վայրկենին ես տեսայ, թէ ինչպէս Մատիլդը վազվզում էր փողոցում մի ականջանի շան յետեւից աղիողորմ ճշալով։ Երեխան աշխատում էր փրկել իր մուտքը, որ շունը խեղդում էր։ Ես վազեցի օդնութեան, բայց մինչեւ որ ես կը հասնէի, մի անսպասելի բան պատահեց։ աղջկը վայր ընկաւ երեսի վրայ, իւրկայի մէջ ոտները խառնուած, եւ նոյն վայրկեանին փողոցի մի անկիւնից դուրս պըծաւ մի սայլ, որ երկու կատաղի ձիեր խրտնած փախցնում էին սրարշաւ։ սայլապանը անկարող էր զսպել։ Ես տեսայ, թէ ինչպէս սայլը հասաւ այնտեղ, ուր մանուկն էր ընկած։ Ես տեսայ թէ ինչպէս մի վայրկեանում ե՛ւ երեխան, ե՛ւ շունը, ե՛ւ ձիերը խառնուեցին իւրար։ բազմութիւնը սոսկման ճիշ արձակեց, եւ երբ սայլն անցաւ,

տեսարանն արտասուելի էր : Մատիլդն ընկած էր ուշաթափ եւ քթածակերից ու բերանից արիւն էր հոսում . քիչ հեռու ընկած էր նրա անշնչացած մուկը :

Կիսամեռ երեխային տուն տարան . վոքրիկ դժբախտը վողոցում էլ տեղ չունէր . ի՞նչ վոյթ , թէ լայն է աշխարհը , շատ լայն :

Աղքատներին Ճըի բժշկական օգնութիւն են տալիս այն քաղաքում , բայց դրա համար անհրաժեշտ է , որ կեանքի դառնութիւնները նրանց այդ օգնութեան արժանանալու անհրաժեշտ վիճակի մէջ դնեն : Մատիլդի համար այդ պայմանը կատարուած էր , եւ բժիշկն եկաւ : Երեխայի կուրծքն էր թաղուած . նա դժուարութեամբ էր շնչում եւ նայում էր անդիտակից հայեացքով :

Մատիլդը հիւանդ էր , Մատիլդը հաղում էր : Նրա վոքրիկ ճակատը այրուում էր տենդով . նրա խոճուկ , թաղուած կուրծքը բարձր ու ցածր էր լինում եւ աչքերը վառուում էին չարագուշակ կրակով : Խեղաճ մայր , ոչ ոքից չէր գանգատում . նա բողոք չունէր . բախտերի տնօրինողը այն էր տուել նրան բաժին . արցունքը կար , բաւական էր , եւ թափուում էին դառն կաթիլները մայրական սրտի կրակի վրայ :

Մեղաւորը միայն այն չար չունն էր , հասարակութիւնն ի՞նչ անի ...

Իմ վոքրիկ բարեկամուհին հիւանդ էր : Ես գնում էի ամենայն օր , նստում էի նրա կողքին , բռնում էի նրա տաք , վտիտ ձեռքը իմ ձեռքի մէջ : Նա երբեմն բաց էր անում աչքերը , նայում էր ինձ անթարթ , տենդու հայեացքով եւ կարծես յոգնած՝ վակում էր արտեւանունքները եւ մնում անշարժ : Յաճախ հաղում էր կրծքի խորքից , ցաւից կնճռում ճակատը եւ այդ ժամանակ դունաստ շրթունքների վրայ կարմիր վրփուրը կազմում էր մի անխսորժ դիժ :

Օրեր անցան , մի անդամ վերջապէս նա աչքերը բացեց եւ ժպտաց ինձ ցաւոտ ժպիտով : Ես սաստիկ ուրախացայ , տուի նրան իր տիկնիկը : Նա ձեռքով յետ մղեց .

— Զէ՛ , մուկս , մուկս ո՞ւր է , նա հեկեկաց :

— Մի՛ լար , ի՞մ վոքրիկ , երբ որ վեր կենաս , ես քեզ մի ուրիշ աւելի մեծ մուկ կը տամ :

— Սպիտակը :

— Այո՛, սպիտակը, սիրունը. մեր երկրից կը բերեմ, մենք շատ ունենք:

Նա լռեց, աչքերը փակեց, ապա կը կին նայեց ինձ.

— Լսի՛ր, սպարոն, ձեր երկրի չներն էլ կծո՞ւմ են:

— Զէ՛, իմ փոքրիկ, չեն կծում, խելօք են:

— Ես կը դամ ձեր երկրից, ինձ մի լաւ մուկ կը տաս, չունն էլ չի կծի, հաս՞ :

— Հա՛, Մատի՛լդ, դնանք մեր երկրից:

— Ես պարկս էլ կը բերեմ, երկաթու էլ, այնտեղ շատ բան կը հաւաքեմ, մայրիկն էլ կը դայ, կը տանի, կը ծախի. հա՞, մայրիկ:

Արդէն դարուն էր, ծիծեռնակները եկել էին, նրանցից երկուսը դիմացի տան պատշամքի ձեղունի վրայ հիւսում էին ըրանց բոյնը եւ ճռուղում: Բնութիւնը կենդանանում էր, միայն այս փոքրիկ, հիւանդ աղջիկն էր քամուում օր աւուր: Մի օր եկայ, նա դանդաղութեամբ բացեց աչքերը, դուրս հանեց իր վըտիտ, տաք ձեռքը, դողդոջուն մատով ցոյց տուեց լուսամուտից երեւացող ծիծեռնակի զոյտը, ապա բռնեց իմ ձեռքը, նայեց աչքերիս.

— Մայրիկս ասաց, որ ծիծեռնակները ձեր երկրից են դալիս, հաս՞ :

— Հա՛, Մատի՛լդ, մեր երկրից են դալիս:

— Ձեր երկիրը հեռո՞ւ է:

— Հեռու է, ի՛մ փոքրիկ, շատ հեռու է:

— Քանի՞ օր կ'երթան, գիշեր, ցերեկ:

— Տասն օր:

— Կեցիր համարեմ: Եւ նա սկսեց համարել իր բարակ, դողդոջուն մատներով՝

— Մէկ, երկու, երեք... տաս, տասնումէկ, տասներկու:

— Մատի՛լդ, ես ասացի տասն օր:

— Զէ՛, տասներկու է պէտք, ախը շատ հեռու է: Դէ՛, ձեր երկիրը պատմիր ինձ:

Եւ ես պատմում էի: «Մեծ ծովերից, լայն գետերից, խոր ձորերից այն կողմը հեռո՞ւ, հեռու, մի երկիր կայ, այն է մեր երկիրը»:

— էլի՛, էլի՛, մրմնջում էր նա աչքերը փակած։ Ես շարունակում էի։

«Այնտեղ երկինքը կապոյտ է, արեւը՝ պայծառ, լեռները, բարձր ու կանաչ, աղբիւրները՝ վճիտ են ու սառն, ծիծեռնակներն այնտեղից են դալիս, այնտեղ էլի թռչուններ կան չա՛տ, չա՛տ»...

— Ես էլ պատմութիւն չեմ ուզում, մուկ էլ չեմ ուզում... Իմ փոքրիկ բարեկամուհին հաղիւ էր չնչում։ Դարձեալ բժիշկն եկաւ։

— Բժի՛շկ, ի՞նչ կ'ասէք։

— Եթէ ներքին գործարանները վնասուած չեն, կարելի է փրկել։

Եթէ...

Երկու օր յետոյ ես բարձրանում էի սանդուղքներով։ մայրն առաջ դուրս եկաւ հեկեկալով։

— Մեռա՞ւ...

Պատասխանը եղաւ մի աղեխարչ հառաչանք։

Ես ներս մտայ. իմ փոքրիկ բարեկամուհին պառկած էր անշարժ, շրթունքներն ու աչքերը յաւիտեան փակուած, դէմքի վըրայ կարծես սառած էր բոլոր դժբախտների յաւիտենական հարցը, թէ ո՞ւր է այն աշխարհը, ուր խեղճերը չեն տրորւում բիրտ, անադորոյն ոտների տակ։ Ես նայեցի ցաւով այդ վատարախտ, փոքրիկ արարածին, որ կորաւ տիեզերական ցաւի ծովի մէջ, առանց իմանալու, թէ ինչո՞ւ ծնուեց, ինչո՞ւ ապրեց եւ ինչո՞ւ մեռաւ։

Ես լացեցի յորդ, դառն արցունքով, օտար երկնքի տակ։

Զէ՞ որ վիշտը հայրենիք չունի։

ԱՐՁԱՆԻ ՄՕՏ

Յուլիսի կէսն էր . Պարիղը միջօրէի տօթից թուլացած հսկայի պէս հեռում էր : Օրուայ այն ժամն էր , երբ արխատօկրատն ու բուրժուան կուշտ ճաշից յետոյ փակւում են իրանց կիսախաւար բնակարաններում եւ փափուկ դահաւորակների մէջ մեղկ հանդիսաւ ու զով փնտուում , մինչդեռ ամրոխը , նկուղների , գետնափորերի , գործարանների , լուացարանների հասարակութիւնը , բաղմաթիւ անապաստան թափառաշրջիկները , անդործ բանուորապերները , աղախիններն , իրանց խնամքին յանձնուած երեխանների հետ դուրս են թափուում հասարակաց պարտէզները օդ չնչելու , հանդստանալու համար :

Square Monge-ն էլ կենդանացել էր . մի փոքրիկ վանդակապատճենէդ է դա Լատինական թաղում . իսկ եւ իսկ ամբոխի , ստորին դասակարգի մի պարտէդ : Պատահակա՞ն արդեօք , թէ դիտաւորեալ զուգագիպութեամբ այստեղ , ամբոխի , ժողովրդի այս պարտիզի մէջ է դրուած Վօլտերի արձանը : Ֆերնէի նահապետագման է բազկաթոոի մէջ , ինչպէս հին աշխարհի մի ծեր թագաւոր եւ նայում է ներքեւում իր ոտների տակ աղմկուղ բազմութեան վրայ այն զարմանալի ժպտով , որից այնպէս սոսկում էին հին կարգերի սիրահարները : Թւում է , թէ իր շուրջն անցած դարձածի համար է նա այդպէս ժպտում եւ որ սպանիչ սարկազմը մօտ է ընկնելու այդ ծեր շրթունքներից :

Արձանից քիչ հեռու , ծառի ստուերում , նստարանի վրայ , մի հաստիկ , մսոս աղջիկ գաւառական դիմագծերով սէր էր անում մի զինուորի հետ . եւ ամէն անդամ , երբ զինուորը երկու մատով շոյում էր իր սիրուհու առողջ , լիքը թշերը , աղջիկը բարձրաձայն ծիծաղում էր գաւառացու ուրախ , կենդանի ծիծաղով : Երկուսի դէմքերն էլ բաւականութիւն , երջանկութիւն էին արտայայտում : Նրանք երեւի կուշտ էին :

Քիչ հեռու , մի այլ նստարանի վրայ , նստած էր մի ջահիւ աղախին , ծնկների վրայ դրած մօտ մի տարեկան մանուկ : Պարիզի մանուկ , գունատ , ինչպէս այդ վիթխարի քաղաքի միւապատ արշալոյսը : Ուրախ էր երեխան , նա աշխատում էր իր փոքրապատաւում :

ըիկ, վտիտ թաթիկներով խլել աղախնի կրծքի ծաղիկը, բայց ամէն անդամ, որ երեխայի մատները մօտենում էին ծաղկին, աղախնը թափով յետ էր քաշում իր կուրծքը եւ երեխան իր արծաթահնչիւն ձայնով ծիծաղում էր: Գոհ էին երկուսն էլ:

Մի հարրած աղջիկ երերալով մօտեցաւ, կանգ առաւ այն նստարանի առաջ, ուր նստած էին աղախինն ու երեխան: Հարրածին յատուկ անմիտ ժպիտը խաղում էր նրա կարմրած դէմքի վրայ. նա նայում էր երեխային. ապա անցաւ, պառկեց մի նստարանի վրայ եւ վայրկենապէս քնեց: Ոստիկանը մօտեցաւ, նրան ցնցեց, վեր կացրեց:

— Հասարակաց պարտիզում քնել չի կարելի, ասաց նա:

— Ես տուն չունեմ, ինձ արձակեցին, ես գող չեմ... քնում եմ...

Կինը նորից պառկեց, աչքերը փակեց: Ոստիկանը այս անդամ բոնեց թեւից եւ փորձեց քաշելով դուրս տանել պարտիզից, բայց աղջիկը իր ձեռքն աղատեց ու փախաւ. նա չէր ուղում դուրս գնալ: Ոստիկանը յետեւից ընկաւ եւ նրանք սկսեցին պտոյտներ դորձել մի ծառի շուրջը: Փոքրիկ կաւոչների մի խումբ նրանց յետեւից ընկաւ սուլելով, ճչալով, ծիծաղելով: Պարտիզում ընդհանուր քրքիջ բարձրացաւ:

Եւ արձանը նայում էր այս բոլորին եւ ժպտում էր վերեւից:

Ամբողջ պարտիզում չէր ծիծաղում միայն մի մարդ, մի գունատ երիտասարդ: Սա՞ էր արդեօք մոռացել ամէնքին, թէ՞ ամէնքն էին մոռացել սրան. դժուար էր իմանալ, բայց մի խորթութիւն կար այս մոռայլ մարդու եւ քրքչացող ամբոխի մէջ: Նա միայնակ էր մի նստարանի վրայ եւ կարծես չէր էլ ուղում, որ իրան նկատեն: Չոր հացի մի անձեւ կտոր ունէր, որ կրծում էր շտապ շտապ. նա պէտք է որ շատ քաղցած լինէր: Ատամների ոյժը երեւի նրան անբաւարար թուաց իր քաղցը յագեցնելու համար, որովհետեւ հանեց գրավանից մի դանակ, սկսեց նրանով կտրել չոր հացը եւ ծամել: Ո՞վ էր նա—մի մարդ. Պարտիզում մի մարդ, ծովում մի կաթիլ:

Պարտիզում յայտնուեց մի պարոն, նոյնիսկ մի բախտաւոր պարոն. այդ էր վկայում նրա ինքնադոհ, կոկուած արտաքինը, նրա շրթունքների անուշահոտ սիդարը: Լստ երեւոյթին նա լաւ ճաշած եւ մի քանի բաժակ էլ պարսպած պիտի լինէր: Այդպիսի

տպաւորութիւն էր թողնում այս մարդու ամբողջ արտաքինը։ Պարզ էր, որ նա բախտի խորթ գաւակ չէր, ի՞նչն էր ստիպել նրան օրուայ այս տօթին գլուխ դուրս հանել իր կիսախաւար սենեակից, այդ գժուար էր իմանալ. Պարիզը մի լարիւրինթոս է, իսկ աղքարնակութիւնը առեղծուածների մի ժխոր։

Կուշտ պարոնն առաջ անցաւ եւ ուղղակի դիմեց դէպի այն նստարանը, ուր նստած էր չոր հաց կրծող մարդը. կուշտը նստեց քաղցածի կողքին եւ նայում էր, թէ ինչպէս է ուտում նա։ Տեսե՞լ էք երբ եւ իցէ, թէ ի՞նչպէս են նայում հարուստ տան պատշգամբից ներքեւ, փողոցում մրմնջացող մուրացիկի վրայ, կամ ինչպէս մի պճնուած տիկին ուշագրութեամբ դիտում է մօտից անցնող աղքատի ցնցոտիների ծալքերը, ուր կարծես նա թըշուառութեան գաղտնիքներ է վնտում։ Այդպէս էր նայում նորեկը չոր հաց ծամող մարդու շարժումներին։ Հետաքրքի՞ր էին արդեօք այդ շարժումները, թէ՞ ծիծաղելի. խորհրդաւո՞ր, թէ՞ տարօրինակ այդ կուշտ մարդու համար։ Գուցէ եւ մէկը եւ միւսը, բայց ոչ յուղիչ, գոնէ այդ էր վկայում նրա դէմքը, նրա հայեացքը։

Մարդը շարունակում էր ծամել եւ միեւնոյն ժամանակ նայում էր իր խեղճութեան գաղտնիքի այս անկոչ վկային։ Երկար ժամանակ նրանք լուր էին, բայց այդ լուրնեան մէջ կատարում էր կեանքի բիւրաւոր դրամաներից մէկը։ Կամաց-կամաց քաղցած մարդու շարժումներն աւելի ջղոտ, աւելի տենդու դարձան. նա իր զայրացած հայեացքը չէր հեռացնում կուշտ մարդու դէմքից, հայցը զանակով կարում էր առանց նայելու, դողդոջուն ձեռքով, նա նոյնիսկ չզգաց, թէ ինչպէս անուշադրութեամբ կտրեց մատը։ Մի կտոր արիւնոտ հաց բերանը տարաւ ու ծամել սկսեց արագ արագ։ Կուշտ պարոնը նայում էր անդադար։ Քաղցած մարդը յանկարծ ոտքի կանդնեց եւ նրա առաջը ցցուեց սաստիկ յուղմունքից դողալով։

— Պարո՛ն, դուք ճաշե՞լ էք, ասաց նա կատաղած, մի ձեռքում արիւնոտ հացը եւ միւսում զանակը սղմած։

— Անչ՛ուշտ, ժամի երկուսն է, պատասխանեց կուշտ մարդը զարմացած ու վախեցած։

— Կուշտ էք, այնպէս չէ՞...

— Կո՞ւշտ, բայց դա ձեզ չէ վերաբերում:

— Ա՛հ, ես գիտեմ որ կուշտ էք, այդ վկայում է ձեր կոլոր փորը, ձեր իւղոտ, փայլուն երեսը, ապա ի՞նչ իրաւունքով չէք թողնում, որ ես էլ ճաշեմ, կշտանամ:

— Ե՞ս, ես խանդարում եմ ձեր ճա՞շը. բայց դուք չէք էլ ճաշում, պարտիզում չեն ճաշում...

— Զե՞մ ճաշում, կրկնեց մարդը գառն հեգնութեամբ, իրաւունք ունէք, ես չեմ ճաշում ձեղ պէս. ես երեք, երբեք չեմ ճաշել ձեղ պէս. իմ բորբոսնած հացի չոր կտորը ես կրծոտում եմ շան պէս եւ դա ձեղ՝ կուշտերիդ հետաքրքրութիւն, զուարծութիւն է պատճառում, այնպէս չէ՞օ, եւ դուք նայում էք...

— Ես, ես գթութեամբ եմ նայում. ո՞վ ասաց, որ դա ինձ զուարծութիւն է պատճառում:

— «Գթութի՛ւն»... լսո՞ւմ էք, դարձաւ մարդն իր չուրջը հետզհետէ խմբուող ամբոխին, այս հաստափոր, իւղոտ մարդը խղճում է ինձ, զբա համար է եկել նստել կողքիս եւ նայում իմ թշուառութեան վրայ, հա, հա, հա... բայց, գթասիրտ բարեկամ, եթէ դուք յիրաւի խղճում էք ինձ, չնորհ արէք, փակեցէք ձեր աչքերը, եւ մի նայէք այս արիւնոտ հացին, թո՛ղ կարմիր կաթիւներով լինի, ես այն կուլ կը տամ, բայց ձեղպէսների իւղոտ աչքերից թոյնի կաթիւներ են ընկնում թշուառի հացի վրայ, ա՛յդ է, որ ուտել չեմ կարողանում, կուշտի հայեացքը թոյն է քաղցածին:

— Ինչո՞ւ ինքներդ չէք հեռանում հասարակաց պարտիզից ձեր տանը ճաշելու:

— Իմ տունը, իմ տունը Սենայի կամուրջի տակն է, գթասիրտ պարոն, այնտեղ եմ պառկում գիշերները. բարեբախտաբար ձեր թունաւոր աչքերն այնտեղ ինձ չեն տեսնում եւ ես քնել կարողանում եմ: Դէ՛հ, փակեցէք ձեր աչքերը եւ թողէք, որ ես վերջացնեմ այս արիւնոտ ճաշը, թէ չէ...

Նա գունատ էր, հայեացքը զարհուրելի, դանակը դողում էր ձեռքում:

Հէնց այդ բոպէին ամբոխը պատռելով՝ նրա առաջը ցցուեց հարած աղջիկը, որը, ով գիտէ ինչպէս, փախել էր ոստիկանների ձեռքից. նա այժմ զգաստ էր:

— Լսի՛ր, Շա՛րլ, ասաց նա ցնցելով զայրացած քաղցածի ու-

սը, ի՞նչ օգուտ այս բոլորից · բարեկամ, նայի՛ր, ես դեռ դրամ ունեմ, ձգի՛ր այդ արիւնոտ հացը եւ դնանք: Անցեալները դու տուիր ինձ, այսօր ես քեզ կը տամ մի կտոր հաց: Գնանք, մենք կը հասկանանք իրար, սրանք օտար են...

Կուշտ մարդը կարծես մի այսպիսի միջամտութեան էր սպասում, նա կամացուկ վեր կացաւ հեռացաւ: Քաղցած մարդը նայեց նրա յետեւից, մի ինչ որ բան մոմոաց ատամների արանքից, գետին զարկեց ձեռքի արիւնոտ հացը եւ աղջկայ հետ կորաւ ամբոխի մէջ իր թշուառութեան, իր խաւար կեանքի պատմութեան հետ:

Զինուորն ու մսոտ աղջիկն էլ չէին ծիծաղում, աղախինը չէր խաղացնում երեխային, կաւոօչները չէին հոհուում, ամբոխը քրքիջ չէր բարձրացնում, միայն ֆերնէի նահապետն էր նայում իր դահի բարձրութիւնից. նայում էր եւ ժպտում իր սպանիչ ժպտով:

ՄԵՆԱԻՈՐ ՄԱՐԴԸ

“Fatigué de mourir dans un
trop long supplice”.

A. de Musset.

«Խիստ երկար տանջանքով
մեռնելուց յոգնած».
Ալֆրեդ դը Միւսսէ.

Նա մի մենաւոր էր :

Բազմամիլիոն աղմկալի Պարիզում, նա միայնակ էր, ինչպէս
մի տաշեղ ովկիանոսի երեսին, ինչպէս մի ճամբորդ՝ խուլ անա-
պատում :

Դեռ վաղ առաւօտ էր, երբ մարդիկ առաջին անգամ տեսան
նրան Մօն-Պարնասի բարձրութեան վրայ. այժմ առաւօտեան
ժամի տասն էր արդէն եւ նա, անընդհատ քայլելով, հաղիւ մի-
այն հասել էր Սէն-Միշէլի բուլվարի այն մասին, ուր սկսում էր
Լիւքսամբուրդի պարտէզը :

Մի փոքր հեռուից դժուար էր ասել, թէ նա ինչի՞ է նման,—
մի սեւ, երերուն զանգուած, որ չգիտես՝ ինչպէս է շարժւում :
Նրա դէմքը... մարդկային մի դէմք դրանից աւելի չէր կարող
զրկուած լինել որեւէ արտայայտութիւնից, այդ գունատ՝ մահա-
տեսիլ կաշու տակ կարծես այլ եւս կենդանի, շարժուն ներվ չէր
մնացել. այնտեղ ո՛չ ցաւ կար, ո՛չ դիտակցութիւն. ո՛չ բողոք
կար, ո՛չ աղերս. ո՛չ զայրոյթ կար, ո՛չ ատելութիւն, այնտեղ իշ-
խում էր միայն սպանիչ անտարբերութիւն դէպի ամէն ինչ եւ ա-
մէնքը, կամ, աւելի շուտ, այնտեղ մնացել էր միայն դերագոյն
ոչնչութիւնը, որ մեծ ցաւի անիտուսափելի վերջապահն է :

Նա նայում էր միայն մի աչքով. կարծես ապակուց ձուլուած
մի հատիկ բիրը ուղղուած էր շարունակ ոտքերի տակը, բայց
տեսնում էր, թէ ոչ, այդ դժուար էր ասել: Միւս աչքը իր խոռո-
չում ներկայացնում էր մի սեւ կէտ. այնտեղ արտեւանունքները
վերից ու վարից իրար վրայ հաւաքուած, կծկուած, կարծես ա-
սեղով դիտամբ կարուած, քաշկոտուած, կաղմում էին մի
զգուելի հանդոյց: Վերից կախ ընկած բեխերը եւ վարից ցցուած
միրուքը խառնուած՝ իսպառ ծածկում էին նրա շրթունքները ու
բերանը. թւում էր, թէ այդ բերանը վաղուց է, ինչ ծեփուած է

այդպէս, ինչպէս իր դերը կատարած ու ցամաքած մի հին ջըրհոր, որ ծածկում են սալով։ Նա չունչ էր առնում միայն քթածակերով, որոնք անդադար լայնանում էին ու նեղանում, եւ դա այդ գէմքի կենդանութեան միակ նշանն էր։ Նա ոտքից գլուխ սեւ էր հաղնուած։ մի հին ու սաստիկ տրորուած սիւրուկ, ծալծըլուած ու բծերով ծածկուած, պատում էր նրա վտիտ իրանը, թիկունքի վրայ գծագրելով դուրս ցցուած թիակները, իսկ առջեւից՝ չորացած կրծոսկրը։ Աջ թեւի տակ նա կրում էր ինչ որ իր, փաթաթած հազար ու մի ցնցոտիների մէջ։ եւ ամէն անդամ, երբ այդ այլանդակ կապոցը ծուռում էր, կամ քաշ ընկնում։ նա խնամքով շտկում էր, տեղաւորում, պինդ սղմում էր թեւի տակ եւ դարձեալ քայլում։

Արգեօք նա յոդնա՞ծ էր, հիւա՞նդ, թէ՞ կապոցն էր ծանր։ այդ գժուար էր իմանալ, միայն՝ նա քայլում էր չափազանց դանդաղ եւ յուսահատ ջանքերով։ նա ձգում էր մի ոտքը, ապա մեղմով յետեւից քաշ էր տալիս միւսը եւ երբ այսպիսով երկուսն էլ հաւասարուում էին, նա կրկին մի ոտքն առաջ էր գցում, կրկին քաշում յետեւից միւսը եւ այսպէս անվերջ։ Եւ ամէն մի այսպիսի քայլ անելիս, նրա պարանոցը եւ իրանի առաջին մասը երկարանում, ձգլում էին, թիակի ոսկորները դուրս էին ցցուում մի ցաւոտ շարժումով, ինչպէս ծանր սայլին լծուած մի հիւծուած, ուժասպառ կենդանի։

Ո՞ւր է դնում նա։

Ո՞վ դիտէ։

Հսկայ քաղաքը ջլախուաւոր ցնցումներով շտապում էր շուտ ապրել, շատ ապրել, շտապում էր իր եսասէր կեանքի ամենանուրբ պահանջներին լիուլի բաւականութիւն տալ, անհոդ ու անտարբեր դէպի տանջուած մարդը։ Սէն-Միշէլի բուլվարի մաքուր մայթերի վրայ հոծ բաղմութիւնը, վայելքի խելագար պայքարում ախտաւոր տենչով վառուած՝ եռում էր. ամէնքը շտապում էին մարդկային տաք մարմինների խայտաբղէտ զանգուածի միջից մի արահետ բանալ, անցնել, վաղել մի թեթեւարարոյ չօրօրան գեղեցկուհու յետեւից, մեղմով քսուել մի ուրիշի կիսամերկ մսոտ թեւին, մի հայեացք գցել փարթամ, հոլանի կրծքերին եւ կամ մերկացնող, վաւաշոտ աչքերով ախտագրգիռ մար-

մինների գաղտնիքը թափանցել։ Կիսաշխարհիկ կանանց եւ աշխարհի ամէն ծայրերից Պարիղ թափուած կենսասէր ու հեշտասէր ամէն հասակի տղամարդկանց մի չտեսնուած իրարանցումն էր սկսած։ Փողոցները լցնող այդ հազարաւոր մարմինները, իրար ծեփուած, կազմում էին մի հրէշաւոր ամբողջութիւն, կրքոտ ու լիրը, որ գալարւում էր ինքն իր վրայ, ինչպէս մի խոցուած իժ, եւ ախտեր էր ժայթքում։ Բուլվարներում մարմինների ցուցահանդէս էր, ուր կանացի պչըրանքն ու հիւանդոտ վայելքի գրդիւը, գեղեցկութիւնն ու անպատկառութիւնը, սեռական այլանդակ ճաշակն ու գեղեցիկի իրական պաշտամունքը իրար էին խառնուած, եւ այդ հրէշաւոր ժխորի վրայ ձգուած էր դիւթիչ ժպիտների նենդաւոր քողը։ Վայելչասէր բախտաւորները շտապում էին ասպրել։ կեանքը կարծես փախչում էր եւ վիթխարի քաղաքը վաղում էր նրա ետեւից չնչակտուր, հեւ ի հեւ...

Իսկ մարդը... նա շարունակում էր քայլել նոյն ցաւոտ դանդաղութեամբ։ Պճնուած ամբոխի շլացուցիչ փայլի մէջ նա շարժում էր, ինչպէս մի սեւ բիծ, եւ ուր յայտնուում էր այդ բիծը, վայելքից շշմած բազմութիւնը կարծես մի վայրկեան ուշքի էր գալիս, մետաքսէ շրջաղղեստները անուշիկ խշխոցով յետ էին քաշում, գլխարկների փեղոյրները դողդողում էին այս ու այն կողմ, հովանոցները երերւում էին, նրան տեղ էին տալիս, անցնում էին հեռուից առանց նրան դիպչելու, վրան հաղիւ մի շտապ հայեացք էին ձգում, եւ հեռանում։ այդ մարդը մի բան ունէր իր արտաքինի մէջ, որից ամէնքը փախչում էին, ամէնքը խոյս էին տալիս երկիրով։

Նրա փոյթը չէր. նա քայլում էր անընդհատ։ չէր տեսնում ոչինչ եւ ոչ ոքի. նա մենակ էր անհամար ամբոխի մէջ։

Լիւքսամբուրդի պարտիզի դռան առաջ նրա կողքով անցան մի քանի զուգուած երեխաններ, որոնք ուրախ ու կայտառ վաղում էին դէպի պարտէղ, ուր բազմաթիւ ուրիշ մանուկներ աղախինների հսկողութեամբ խաղում էին արուեստական լճի ափին, կամ ծառերի թաւ ստուերի տակ ուրախաձայն աղաղակներով թընդացնում էին օդը։ Մարդը մի ըոպէ կանդ առաւ, իր մէկ հատիկ աչքի մեռելային հայեացքով նայեց վազող սիրուն մանուկներին, մի բան մըմնջաց երեւի, որովհետեւ բերանը պատող մազե-

րի թաւ շերտը մի փոքր շարժուեց, ապա կրկին շտկեց կապոցը, սղմեց թեւի տակ եւ շարունակեց յուղարկաւորի իր ընթացքը:

Ճաշը մօտ էր արդէն... Գարեջրատների առաջ մարդիկ, քրտնաթոր ճակատները սրբելով, կամ զովացուցիչ կամ ախորժակը բաց անող ըմպելիներ էին խմում: Յաճախորդների ոտների տակ, աթոռների արանքներում, սողում էին մի քանի կեղտոտ, պատառոտուն մանուկներ, անապաստան կամ անդործ ծնողների թափառաշրջիկ քաղցած երեխաներ, որոնք մերթ զդուշութեամբ խլում էին սեղաններից եւ մի կումով կուլ տալիս բաժակների տակ մնացած հեղուկները, կամ թաւալւում էին գետին, աթոռների տակից հաւաքում պապիրոսների եւ սիդարների մնացորդները: Ցաւի ու աղքի մէջ աճող մանուկներ, որոնք զայրոյթով են սնւում, սեւ կեանքի չորացած ստինքից զայրոյթ են ծծում եւ այդ զայրոյթով է, որ տնօրինում են Պարիզեան յեղափոխութիւնների բախտը արիւնոտ բարբիկազների վրայ: Սրանք Պարիզի կաւոչներն էին, դժբախտ ու ցինիկ, խեղճ ու աներես, կարեկցութեան արժանի եւ անսիրտ, փոքրիկ խեղաթիւրուած հոգիներ, որոնք չդիտես ինչ մի ըմբռոստ բան ունեն թադցրած իրանց յարատեւ թշուառ եւ յարատեւ ուրախ ու անհոգ արտաքինի տակ:

Կաւոչները Պարիզի փողոցների տէրերն են, որոնց աչքից ո՛չ մի չար ու բարի չէ խուսափում, եւ նրանք առաջինը տեսան կապոցը կրող մարդուն. պատկերը չափազանց տարօրինակ էր եւ ուշադրաւ. նրանք մի վայրկեանում ցատկրտելով դէպի մարդը վալեցին, մոռանալով իրանց փոխադարձ կոիւները պապիրոսների եւ դարեջրի մնացորդների համար, ինչպէս միեւնոյն թաղի չներ, որոնք վայրկեանապէս դադարում են կռուելուց, երբ յանկարծ յայտնուում է մի օտար շուն: Նրանք նախ փսփսացին իրար ականջում, ապա սկսեցին կամացուկ քայլել նրա յետեւից մի-մի պապիրոս շրթունքներին դրած. քիչ յետոյ նրանցից մէկը կատուի դգուշութեամբ մօտեցաւ եւ թափով քաշեց մարդու թեւի տակի կապոցը, որը կախուեց, բայց չընկաւ,— տէրը պինդ էր բոնել: Նա հանդարտ դարձաւ, իր սպանիչ հայեացքով նայեց երեխաններին. նրանք բարձրաձայն ծիծաղում էին՝ ձեռքերով ու շրթունքներով զանազան ծամածութիւններ կատարելով. մէկը քայլում էր նրա պէս, միւսը մի աչքով կոյր էր ձեւանում, երբ բորդը ծուխ էր փչում դէպի նա: Մարդը մի փոքր նայեց, շրթուն-

քի վրայ մաղերի շերտը կրկին շարժուեց . երեւի մի բան ասաց եւ ապա դարձեալ անտարբեր շարունակեց իր ճանապարհը մի եւ նոյն ձեռովկ:

Կաւուզները չեւսացան , նրանք քայլ առ քայլ հետեւում , հաւածում էին նրան :

— Գող է , ասաց մի կաւուզ :

— Հա' , հա' , գող է , վրայ բերին միւսները , բան է փախցը-նում : Ապա բոլորը միասին սկսեցին միաբերան կանչել պարի-դեան ամբոխի յանդով .

— Գո'ղ է , գո'ղ է , գո'ղ է ...

Մարդը լսեց եւ երեւի ժամաց , որովհետեւ բեխերի տակ շրթունքները ծովմոռեցին եւ աչքերի տակ երկու հիւանդու ծալ-քեր առաջ եկան . նա յետ դարձաւ եւ կամացուկ , նուաղած ձայ-նով ասաց .

— Թշուառականնե՛ր , Եթէ ձեզ տամ «կողացած» , դուցէ դուք սարսափից չորանաք . թողէ՛ք ինձ հանդիստ :

Շեշտն այն աստիճան վշտու էր , խօսքերի մէջ այնքան խո-րունկ ցաւ կար , որ կաւուզները սառած կանդ առան , լուցին եւ կրկին ցրիւ եկան դէսլի գարեջրատները : Մարդը շարունակեց իր ճանապարհը :

Ուղիղ ճաշ էր , երբ յոդնած , ուժասպառ նա հասաւ ԱԷն-Մի-չէլի հրապարակին եւ նոյն անուն աւազանի առաջ կանդ առաւ , ե-րեւի , հանդստանալու համար : Զուրը աղմուկով ժայթքում էր երկու արուեստական ժայռերի արանքից եւ զով ցայտումներով թափիւում վանդակապատ աւազանի մէջ : Ժայռերի վրայ բարձրա-նում էր բրոնզէ արձանախումբը , որ ներկայացնում էր հրեշտա-կապետի եւ սատանայի պայքարը եւ բարիի յաղթանակը : Սա-տանան ընկճուած գալարում էր հրեշտակապետի ոտների տակ , իսկ յաղթողը մատով նրան ցոյց էր տալիս երկինքը : Մարդը նստեց աւազանի երկաթէ ցածր վանդակապատի վրայ , կապո-ցը դրեց ոտների առաջ , հանեց գլխարկը , նոյնպէս գրեց գե-տին , վտիս ձեռքով սրբեց քրտնած ճակատը եւ նայում էր ա-ւազանին : Թւում էր , թէ նա ականջ է դնում ջրի ախորժելի ճայ-նին , բայց իրօք նրա մի հատիկ աչքն ուղղուած էր արձանակըմ-բին . երկա՛ր նայեց , ապա ժամաց իր տարօրինակ ժողիտով :

— Բարիի յաղթանա՞կը, մոմուց նա կամացուկ. սո՛ւտ է, սո՛ւտ է, վե՛ր կաց, թշուառական դեւ, ի՞նչ ես անասունի պէս գալարւում այդ թեւաւոր կնոջ ոտների տակ. աշխարհը քոնն է, վե՛ր կաց. քարով ու մետաղով ոչինչ չի փոխուի. դո՛ւ ես աշխարհի իշխանը, հզօր ու ամենակարող սատանայ. պոչաւոր ու եղջիւրաւոր աստուած, վե՛ր կաց :

Ի զո՞ւր, յաղթող հրեշտակապետը ժպտում էր վերեւից, պարտուած դեւը շարունակում էր գալարուել նրա ոտների տակ, միայն թէ երկուսն էլ վեր էին, շա՛տ վեր տանջուած մարդուց, ջրից, ժայռերից :

Նրան մօտեցաւ մի պճնուած, գեղեցիկ տիկին, որ մի ձեռքով բռնել էր իր մետաքսեայ հովանոցը արեւի առաջ եւ միւսում կանաչ կաշուէ ուռած, լիքը փողի քսակը : Տիկինը կանդ առաւ, շնորհալի շարժումներով բաց արեց իր քսակը, հանեց այնտեղից տասն սանտիմանոց մի պղնձէ դրամ*), գցեց գետնին դրուած գլխարկի մէջ եւ գոհ ու ժպտուն առաջ անցաւ դնաց : Համարեա նոյն վայրկեանին մարդը երեսը զարձրեց աւաղանից, նկատեց տիկինոջ վերջին շարժումը, նայեց գլխարկի միջի դրամին, նայեց հեռացող տիկինոջը, մի քանի վայրկեան անշարժ մնաց, չհասկանալով կատարուածը, ապա, յանկարծ ուշքի եկածի պէս, խլեց կապոցը, գլխարկը դրամով, կանգնեց ոտքի եւ քանի ոյժ ունէր, սկսեց ծոմուելով, թրպոտալով վաղել հեռացող տիկինոջ ետեւից : Նրան հասնելն այնպէս հեշտ չէր. մարդը ուժից վեր ճիգեր էր գործ դնում, եւ անցորդները զարմանքով էին նայում, թէ ինչպէս այդ տարօրինակ ուկրակոյաց գալարւում է վիրաւոր սողունի պէս, ոմանք շոտապով յետ էին քաշում մայթից՝ տեղ տալով այդ խեղաթիւրուած մարմնին, որ գլխարաց, հեւալով փորձում էր վաղել, բայց իրօք համարեա միեւնոյն տեղումն էր թրպոտում : Նրա բախտից տիկինը մի խանութի վիտրինի առաջ կանդ առաւ. եւ նայում էր զարդի առարկաներին. մարդը հասաւ եւ առաջը ցցուեց գլխարաց, դողալով ու այլանդակ : Տիկինը վախեցած յետ յետ քաշուեց :

— Մի՛ վախենաք, տիկիին, ես ձեղ չեմ ուտի, ասաց նա յուղուած ու չնչակուոր. միայն խնդրում եմ՝ ասացէք, այս դրամը

*) Մօտ չորս կոպէկ (ռուսական պղնձեայ դրամ) :

դո՞ւք գցեցիք իմ գլխարկը :

— Այո՛, պատասխանեց տիկինը շփոթուած :

— Ինչո՞ւ գցեցիք :

— Ինչո՞ւ... Տէր Աստուա՛ծ, այնպէս... գցեցի, գլխարկը դրա համար չէ՞ր դրուած :

— Ո՛չ, տիկի՛ն, գլխարկը դրա համար չէր դրուած, յետ ընդունեցէք ձեր դրամը, ասաց մարդը, մեկնելով գլխարկը: Բայց տիկինը ո՛չ մի պայմանով յանձն չէր առնի իր քնքոյշ, մաքուր ձեռքը այն կեղտի մէջ կորած, հոտած գլխարկի մէջ կոխել:

— Ես ողորմութիւն տուի ձեզ, այդ ձերն է:

— Յե՛տ վերցրէք ձեր ողորմութիւնը:

Բաղմութիւնը հաւաքուեց. Պարիզում այնպէս շուտ են խմբւում: Տիկինը սրտապնդուեց:

— Նայեցէ՞ք, այս թշուառականներին ողորմութիւն տալն էլ վտանգաւոր է եղել, ճաց նա:

— Բարի՛ տիկին, այդ թշուառականները չեն ուղում ձեր ողորմութեան առարկայ դառնալ: Երկու սո՛ւ... եւ դա ձեզ հնար կը տայ այսօր հանդիսաւ խղճով լաւ ճաշել եւ դիշերը փափուկ անկողնում քուն առնել գոհ ու երջանիկ, որ բարի գործ էք կատարել, որ մխիթարել, սփոփել էք մի վատարախտ՝ երկո՛ւ սուով ... ո՛չ, ես ձեզ չեմ տայ այդ խաղաղութիւնը, քնքոյշ տիկին, ես չեմ դառնայ ձեր ողորմութեան առարկայ. ես կը սատկեմ շան պէս, միայն թէ դուք բարի գործի աժան գիտակցութիւնը չունենաք: Բաւական է, այդ ողորմելի սուերով շատ քայլեցիք մեր ծոռւած մէջքերի վրայ, ես ատում եմ ձեր ողորմութիւնը, ցաւերը խեղդող ձեր ողորմութիւնը. յե՛տ առէք ձեր երկու սուն...

Տիկինը յետ քաշուեց եւ փորձեց ծածկուել բաղմութեան մէջ, բայց մարդը կրկին առաջացաւ դէպի նա՝ միշտ գլխարկը մեկնելով:

Երկար ժամանակից կուտակուած մաղճը, ինչպէս պատուարը քանդած մի հեղեղ, դուրս էր թափում այդ մի րոպէ առաջ խեղճ, կծկուած մարդու բերանից. այդ պատահական, անծանոթ կինը նրա աչքին կարծես մարմնացումն էր ամբողջ հասարակութեան, որի գլխին թափում էր իր զայրոյթի բոլոր թոյնը:

— Մեքենայով խեղաթիւրուած՝ վաղուց է որ ես քաշ եմ տա-

լիս իմ տանջուած գոյութիւնը այս դժոխքում, որի անունն է աշխարհ : Նայեցէ՞ք իմ պատկերին, ես թշուառ եմ, ես զարհութելի եմ . ձեր երկու սուն ոչինչ չի կարող փոխել այդ պատկերից . օ՛, եթէ կարողանայի ձեղպէսների քունը խլել, հազար անգամ աւելի թշուառ կ'ուզէի լինել, հաղար անդամ աւելի սարսափելի, բայց հնարաւո՞ր է ինձանից էլ աւելի թշուառ, աւելի սարսափելի լինել : Այո՛, իմ պատկերը ձեր քունը խլելու բաւական չէ . թո՞ղ դո՞նէս սա ձեզ տանջէ,— եւ նա ձեռքի շարժումով քանդեց կապոցը, դուրս քաշեց այնտեղից մի փոքրիկ երեխայի դիակ, վտիտ ու կապտած, ու բարձրացրեց երկու ձեռքով վեր, վեր . տիկինը ճշաց եւ փախաւ . բազմութիւնն իրար անցաւ :

— Ի՞նչ էք իրար անցնում, սա իմ որդին է, իմ հարազատ դաւակը . սրա մայրը հիւանդ է, մահամերձ, իսկ սա մեռաւ խեղճութիւնից, քաղցից, ցաւից, անտէրութիւնից, առանց դեղի, առանց օգնութեան . նայեցէ՞ք, սա իմ երեխան է եւ ես տանում եմ թաղելու բոլոր թշուառների, բոլոր խեղճերի փրկիչի ծոցում, ողորմած Սենայի ալիքների տակ ինձ հետ միասին . դէ՛հ, փորձեցէք ձեր երկու սուռով կենդանութիւն տալ սրան, թէ կարող էք :

Ապա նա գցեց պղնձէ գրամը գետին, գլխարկը գրեց, գիտակը կրկին փաթաթեց ցնցոտիների մէջ, կապոցը դրեց թեւի տակ եւ պատրաստում էք քայլել, երբ սոստիկանները վրայ հասան :

— Ո՞վ էք դուք, ասաց առաջին սոտիկանը :

— Ե՞ս . . . ես յուղարկաւոր եմ, չէ՞ք տեսնում :

— Անո՞ւնդ :

— Իմ անունն է տանջուած մարդ :

— Ո՞րտեղ էք ապրում :

— Ես ապրում եմ աշխարհից դուրս, ես մենաւոր եմ :

— Խենթ է, ասացին բազմութեան միջից :

— Ես ի հարկէ խենթ եմ . միայն խենթն այսպիսի երեխայ կ'ունենայ . բոլոր ինձպէսները խենթ են . կապեցէք նրանց, թէ չէ ձեզ կը կծեն . երկու սուն էլ չի օգնում, կապեցէք նրանց, եթէ կարող էք :

Նրան հրամայեցին թաղական սոտիկանատունը գնալ : Մարդը լուռ եւ հնազանդ առաջ անցաւ, սոստիկաններով շրջապատուած . բազմութիւնը նայում էր յետեւից . նա դարձեալ մենակ էր . . .

ՊԱՐԻԱՆԵՐԸ

Յուրա էր, ցուրտ...

Զմերային երեկոն չուտ վրայ հասաւ. հեռու՝ ձիւնապատ հորիզոնից փչեց մի մահասարսուռ, ցրտաշունչ քամի եւ վաղ ներս քչեց բոլոր նրանց, որոնք մի անկիւն, դլուխ դնելու մի տեղ ունէին անտանելի ցրտից պատսպարուելու համար: Հաղարաւոր ծինելոյները մի առանձին դիւական եռանդով ծուխ էին արձակում դէպի երկինք իրանց սեւ սեւ բերաններից, իսկ տների ներսերում վառարաններն աշխոյժ ջերմութիւն եւ կեանքի առանձին հաճոյքն էին սփոռում իրանց շուրջը: Այնքան լաւ է, այնքան դուրեկան է բոցերի առաջ նստել տաքուկ սենեակում, երբ դրսում ցուրտ է, երբ քամին մռնչում է:

Ամէնքը սակայն ներսում չէին, ամէնքը չէին երազում բոցերի առաջ. մի մարդ էր անցնում ամայի փողոցով, որի վրայ իջնում էր երկինքը իր կապարագոյն ամսերով՝ որպէս մուրով սեւացած կաթսայի մի հսկայական խուփ: Մարդը յոդնած, ուշացած ճամբորդ լինէր կ'ասես, որ դանդաղութեամբ շարժւում էր առաջ սառած, կոկուած սալայատակների վրայով. նա դողդողում էր ցրտից, բայց գնում էր ուշակորոյս ու մոլորուած: Նա գլխարաց էր ու վատ հագնուած, տառապալից ու յուսահատ դէմքով. նա մի մարդ էր եւ այդ մարդը քաղցած էր: Այդ զարհուրելի ժամին կարիքը, աղիքները դալարող քաղցը դէպի դուրս դէպի փողոցն էր չպրտել այս դողդողացող մարմինը. քամին մի վայրենի հաճոյքով լիդում էր նրա թրթուռն, կապտած միսը, քրքիջով խաղում էր նրա մազերի կեղտոտ խոխիների հետ, նրանցից այլանդակ պսակներ էր շինում դունատ ճակատի շուրջը եւ համբուրում էր այդ պսակուած ճակատը օձի համբոյրով: Մարդը բոլորովին մենակ չէր. նրա յետեւից կամացուկ քայլում էր մի նոյնալէս խղճուկ, նոյնպէս դողդողացող փոքրիկ շուն:

Այս մարդը գոները չէր թակում, լուսամուտներին չէր նայում, քայլում էր գլխակոր, խոպոտ կոկորդից ինչ որ ողբայի հնչիւններ արձակում մերթ ինչպէս մէկը՝ որ ճիգ է գործ յում, քայլում էր գլխակոր, խոպոտ կոկորդից ինչ որ ողբայի ձմեռ ժամանակ սառած ջրաղացի նեղ ջրտան մէջ սղացող քամի: Եւ չէր լալիս, ուղում էր երգել: Եւ նա ասում էր.

«Խուլ փողոցում չորս ենք միայն՝ քամին, քաղցը, շունն ու ես :

«Քամին տէր է, քաղցը՝ անսիրտ, ես ու շունս ենք խղճալի. դժութիւն»...

Փողոցն ամայի էր, լուսամուտներն ու գռները փակ. ցուրտ քամին է՛լ աւելի խստացաւ, տների ներսում, կրակի բոցերի առաջ կեանքն աւելի քաղցրացաւ, բայց քաղցածի ձայնը շարունակում էր բարձրանալ, նրա հեծեծիւնները գալարւում էին քամու մոնչումներին, ասես աղերսում էին տարերքին թոյլ տալ նրա հետ միասին եղրօր պէս հնչուել տարածութեան մէջ, միասին դողդողացնել լուսամուտների ապակինները, ո՛վ զիտէ, գուցէ գթութիւնը... Բայց քամին այդպէս չէր հասկանում իր զերը. նա խորթ մօր քնքշութեամբ իր սառը ծոցում խեղդում էր գթութիւն աղաղակող հնչիւններ եւ վազում էր միայնակ փարելու ծինելոյցներին, միայնակ լիզելու բարձր տների պատերն ու կտուրները. քամին տէր էր :

Մի լուսամուտ բացուեց սակայն վերին յարկերից մէկում եւ այնտեղից վայր ընկաւ մի պղնձեայ գրամ, զընդաց սալայատակի վրայ. մարդը կանգ առաւ, շունը վազեց եւ բերեց տիրողը:

— Շնորհակա'լ եմ, ասա, Սեւո՛ւկ :

Շունը կանգնեց յետին թաթերի վրայ, բարձրացրեց առաջին թաթերը վե՛ր, վե՛ր եւ երկու բերան հաջեց տարածութեան մէջ, կարծես երկնքի վրայ զայրացած : Մարդը գրամը սղմեց կապտած բունցքի մէջ եւ առաջ անցաւ մոմուլով՝ «Խուլ փողոցում չորս ենք միայն... քամին, քաղցը, շունն ու ես...» :

Փողոցի հակառակ ծայրում յայտնուեց մի ուրիշ մարդ, մի տարօրինակ արարած : Նա գլխին կրում էր մի լայնեղր, ճմլուած գլխարկ, որի տակից երկայն մազերը կախվիսուել էին մինչեւ վտիտ ուսերը. փոքրիկ գէմքը եղերուած էր ալեխառն զզլըդւած միրուքով, իսկ փոքրիկ վառվուն աչքերը այնպիսի արտայայտութիւն ունէին, որ կարծես մշտապէս սպասում էին մէկին հարուածելու համար : Ուսերից կախուած էր մի մոխրագոյն կեղտոտ ծածկոյթ, որ ոչ վերարկու էր, ոչ բաճկոն, ոչ բլուզ, այլ մի ինչ որ երկար ու լայնածալ ուսնոց, որի մէջ կորած էր նրա փոքրիկ վտիտ մարմինը, եւ որի երկու փէշերը երկու կողմերից կախուել էին ինչպէս վիրաւոր թոչնի զոյտ թեւեր : Մի

ոտին նա հաղած ունէր հողաթափի պէս մի բան, միւս ոտի սրունքի տեղ երեւում էր մի փայտեայ ցից, ծնկից սկսած։ Նա քայլում էր թեւի տակի երկար գաւազանի վրայ յենուելով եւ ամէն անդամ, երբ քայլը փոխում էր երկու փայտերի եւ մի ոտի օդնութեամբ, փողոցի սալայատակը չոր, անախորժ արձադանդ էր տալիս, որ սարսուս էր աղդում։

Քամին կատաղութեամբ խաղում էր նրա ուսնոցի փէշերի հետ եւ հեռուից կիսախաւարի մէջ մարդը նմանում էր թեւերը լայն բացած մի ահազին չղջիկի, որ քայլում էր դեանի երեսից օրօրուելով։ Նա կարծես ոչ ցրտից էր վախենում եւ ոչ քամուց, քայլում էր նոյնիսկ արագութեամբ եւ մի տեսակ թունոտ զայրոյթով իր փայտէ ոտը թրխկացնում էր սալաքարերի վրայ, կարծէք այդ ձայնը նրան հաճոյք էր պատճառում։

— Հը, էլի դո՞ւ ես փողոցներում ոռնում, թշուառակա՞ն, ասաց նա բարակ, բայց սպառնալի ձայնով։

— Ունո՞ւմ . . . ճարս ինչ, գթութիւն եմ դուրս կանչում լուսամուտներից։

Փայտէ ոտով մարդը բարձրաձայն քրքիջով ծիծաղեց։

— Ողորմելի՛ ապուշ, սրան նայեցէք, գթութիւն է դուրս կանչում։ նա կրկին ծիծաղեց։

— Գթութիւն, շարունակեց նա, թքնեմ այդ քո գթութեան վրայ, երեւի առաւտից սկսած շանդ հետ կաղկանձում ես փողոցներում, տեսնեմ ի՞նչ է տուել քեզ այդ գթութիւնը, բա՛ց ձեռքեւ։

Առաջինն ընկճուած ու խեղճացած բաց արեց կապտած բըռունցքը. այնտեղ միայն երեք պղնձեայ դրամ կար։

— Ա՞յս է միայն։

— Այս է։

— Եւ գթութիւնը երբեք սրանից աւելի չի տայ, թէկուզ շանսատակ լինես փողոցներում. քո խեղճութիւնն ու ոռնոցն անհրաժեշտ է, որ ուրիշները աւելի երջանիկ զգան իրանց, հականո՞ւմ ես, ապո՛ւշ. քանի ասեմ քեզ վազ արի։

— Ուրիշ ի՞նչ անեմ, երբ քաղցած եմ եւ գլուխ դնելու տեղ չունեմ։

— Գլուխ դնելու տեղ չունեն միայն քեզ պէս յիմարները։ Աշխարհում ամէնքը տեղ ունեն, ամէնքը հաց ունեն, միայն գըտ-

նել է հարկաւոր : Տե՛ս , այս քարն էլ մի տեղ է դառել ընկնելու , եւ նա փայտէ ոտքով ուժով զարկեց սալայատակին . մարդն ի՞նչպէս կարող է տեղ չունենալ . ես խօմ դտնում եմ միշտ :

— Գտնո՞ւմ ես , ուրիշինը գողանալ...

— Լո՛ւռ , թշուառակա'ն , ու հետեւիր ինձ , ասաց նա , հրամայող շեշտով :

— Ես վախենում եմ քեղանից , անցեալ օրը հօ տեսար ինչքան թակեցին :

— Հետեւիր ինձ , ասում եմ , ինչ որ էլ լինի , դժութիւն ստանալուց գէջ չի լինի :

— Ես վախենում եմ , թո՛ղ ինձ իմ ցաւի հետ :

— Որ այդպէս է , դու շունը չես ունենայ . Սեւո՛ւկ , Սեւո՛ւկ , ի՞նձ արի :

Շունը երեւի ճանաչում էր , վազեց գէպի նա եւ գնացին : Երդիչը մի փոքր կանդ առաւ , նայեց հեռացող շան ու մարդու ետեւից , գլուխն օրօրեց ու կանչեց .

— Կա՛ց , կա՛ց . գալիս եմ :

Այն ժամանակ խաւարի մէջ կազմուեց մի տարօրինակ թափօր . առաջից գնում էր փայտէ ոտքով փոքրիկ մարդը , թրիկաց ցընելով իր ցիցն ու թեւի տակի դաւազանը սալաքարերի վրայ . նրա յետեւից անվճռական քայլով քաշ էր դալիս երգիչը , իսկ ամէնից վերջը գնում էր փոքրիկ շունը պոչը ոտքերի մէջ սըղմած՝ ցրտից գողդողալով : Քաղցի այս թափօրը կանդ առաւ առաջին պատահած հացագործի խանութիւ առաջ : Ապակեայ գոների յետեւում շարուած էին բազմաթիւ մեծ ու փոքր հացեր , որոնք ախորժակ էին գրգռում . շունը հոտոտում էր շուրջը եւ նայում իր զոյդ տէրերին հարցական հայեացքով :

— Նայի՛ր , ասաց փայտէ ոտքով փոքրիկ մարդը , բռնելով իր ընկերոջ ուսից , այստեղ մէնք էլ բաժին ունենք , որովհետեւ մարդ ենք եւ սոված :

— Ես վախենում եմ , մըմնջաց երկրորդը . տեսա՞ր այն օրը որքան թակեցին :

Առաջինը կատաղած սեւեռեց նրա դէմքին իր փոքրիկ , պլըստան աչքերը եւ պինդ սղմեց ուսը :

— Սպասիր ինձ այստեղ , չփախչէ՛ս , թէ չէ ... նա ցոյց տըւեց ահագին դաւազանը :

Ընկերը լուս էր :

— Կը փախչե՞ս :

— Զէ... չեմ... փախչի :

Երկու կին ներս մտան հաց գնելու . փայտէ ոտքով մարդը նրանց յետեւից խանութ մտաւ եւ անմիջապէս մի մեծ հաց խլեց եւ իր ուսնոցի տակ թաղցրեց . հաղիւ նա մէջքը դարձրեց դուրս դալու , որ հացադործը նրա ուսից բռնեց , հացը խլեց եւ պարանոցից բռնած՝ դուրս չպատեց . այս բոլորը կատարուեց համարեա մի քանի վայրկեանում :

— Տեսա՞ր , ասաց երդիչը :

Փայտէ ոտքով մարդը լուս էր , նրա աչքերն էլ աւելի փայլուն դարձան , եւ փոքրիկ , թաղուած կուրծքը , կատաղութիւնից բարձր ու ցածր էր անում : Նա մի բոպէ մտածեց , ապա քաղցի թափօրը կրկին առաջ շարժուեց եւ կանգ առաւ մի այլ հացագործի խանութի առաջ :

— Զը փախչե՞ս , վերստին սպառնաց փոքրիկ մարդը :

— Չեմ... փախչի...

Եւ նոյն վայրկեանին նա բարձրացաւ մայթի վրայ , յենուեց թեւի տակ տնկած դաւաղանին , բարձրացրեց փայտէ ոտքը եւ բոլոր ոյժով զարկեց ապակէ դրանը , որ շոխնդով փշուր փշուր եղաւ : Յարձակուողն արագութեամբ խլեց երկու մեծ հաց , մէկն ինքը կրծել սկսեց եւ միւսն էլ վախից քար կտրած ընկերին մեկեց :

— Կե՛ր , ապո՛ւշ , ի՞նչ ես չորացել :

Նրանց շրջապատեցին հետաքրքրիներն ու ոստիկանները :

— Տե՛ս , ինչ շատ են , դժութիւն էիր ունում , ոչ ոք իր տաք անկիւնը չէր թողնում , նայիր այժմ , գեռ գալիս են . նա կրծում էր հացը եւ դիւային ծիծաղով քրքջում :

— Գողե՛ր են , մոնչաց ամբոխը , բա՛նտ :

— Դատեցէ՛ք , մենիք մարդ ենիք ու սոված :

— Բա՛նտ , դարձեալ մոնչաց ամբոխը բռունցքները սղմած :

— Փոյլթ չէ , բա՛նտ , այնտեղ մեզ մի կտոր հաց եւ մի անկիւն կը տաք , չնորհակալ' եմ , ասա , Սեւո՛ւկ :

Շունը կանգնեց յետին ոտքերի վրայ եւ առաջին թաթերը բարձրացած վե՛ր , վե՛ր , երկու անդամ հաջեց երկնքի վրայ :

Նրանց տարան ...

ՀՍԿԱՅ ՅԻՄԱՐԸ

Կրկէսը լիքն էր :

Վիթխարի գմբէթայարկ շինութիւնը ներքուստ ներկայացընում էր ամբոխի մի յուզուած, ուռած ծով, ուր մարդկային բաղմազան գլուխների անվերջ շարքեր՝ որպէս օղակ-օղակ ալիք ներ, իրար յետեւից շարուած նստարանների վրայ, բարձրանում, ձգւում էին դէպի վեր, դէպի ծայրագոյն վերնայարկը: Բաղմութիւնը չէր խօսում, այլ մոմուում էր. նա չէր շարժւում, այլ ծփծփում էր ինչպէս յեղյեղուտ թանձր զանդուած՝ որ իր տակ թագցրած ունի ինչ որ աւերիչ եւ հաղիւ պարտկուող զօրութիւն, կրքերի մի հրաբուխ: Հազարաւոր տաքացած ու գաղջ մարմիններից արձակուող դուռը շիները, անհանդիստ ու յուզուած կրծքերից բարձրացող արտաշնչութեան հետ՝ թանձր մը շուշով բակ էին կազմել ճրագների շուրջը՝ ասես կամենալով խեղել նրանց լոյսը իրանց խոնաւ ծոցում:

Ամբոխն էր այն, բուռն կրքերի, ստոր վայելքների ծարաւ ամբոխը, որ իր զուարձութեան եւ մանաւանդ իր զայրոյթի մէջ անսանձ է ու զարհուրելի, որ ծովի պէս իր անհասկանալի գժութիւններն ունի, իր հրէշաւոր յեղյեղումները, անողոք ու կոյր, աւերիչ ու ճակատագրական՝ որպէս տարերքը:

Մի քանի օր էր արդէն, որ քաղաք ժամանած ցիրկի մի նոր խումբ իր պատկերազարդ, գունաւոր յայտարարութիւններով ծածկել էր գլխաւոր հրապարակների եւ փողոցների պատերը: Զգայական ցնցող վայելքների սիրահար բաղմութիւնը խումբ խումբ կանզնած այդ գունաւոր թղթերի առաջ՝ ուշադրութեամբ զիտում էր նկարները, կարդում էր գրաւիչ խոստումները: Հետաքրքիր վարժութիւններ պիտի կատարուէին. կիսամերկ կանանց ճկուն, ախտագրգիռ մարմինների մի ամբողջ ցուցահանդէս պիտի տեղի ունենար:

Զիզի՛... այսպէս էր այն կնոջ անունը, որ ամենամեծ տառերով փայլում էր յայտարարութիւնների վրայ եւ որ մի քանի օրից ի վեր խաղում էր ամբոխի երեւակայութեան հետ: Նրա դեղեց-կութեան եւ հնարագէտ խաղերի մասին բերնէ բերան հրաշքներ էին պատմւում. խօսում էին մանաւանդ ինչ-որ «դիւթական

սանդուղքի» վերելքի մասին, որ Զիզին պիտի կատարէր։ Ոչ ոք որոշակի չգիտէր այդ նորօրինակ խաղի էութիւնը, բայց ամէնքը՝ կրկէսի խաղերին ծանօթ գլուխներ, սիրով երեւակայում էին մի կանացի նրբակաղմ մարմին, մորթագոյն շապիկով հաղիւ հաղ սքողուած թրթուուն միս, որ գեղանկար գծերով գալարում, երերուում է բարձր սանդուղքի վրայ, օդային համբոյըներ ուղարկելով աջ ու ձախ։ Միայն այս երեւակայութիւնն արդէն յիմարացնելու չափ դիւթիչ էր։ հապա անունը...Զիզի, ո՞րքան կարճ, հեշտալուր։ Զիզի՛, սիրով մըմնջում էին բաղմաթիւ շրթունքներ. այս երկու դիւրահնչիւն վանկերը իրանց միակերպութեան տակ թագցնում էին բազմապիսի գրաւիչ գաղտնիքներ. այդ կարդի անունները միշտ պերճախօս են բոլոր զգայասէր արկածախնդիրների համար։ Եւ Զիզին գրաւել, բերել էր այս հաղարաւոր բազմութիւնը դէպի կրկէս, իր մարմնի երեւակայական թովչութեամբ բթացել էր այս ամբոխի բանականութիւնը, ինչպէս առասպելաական Ցիցէան իր դիւթական ըմպելիով։

Կրկէսը լիքն էր արդէն, բայց գեռ դալիս էին։ Քաղաքն իր մութ ծոցից մղում էր այստեղ իր տականքը։ հասարակութեան այն մասը, որ բոլոր գարերում, բոլոր աշխարհներում բոպէական հզօր ցնցումների, բիրտ կրքերի, յանկարծական վայրենի բոնկումների մէջ է փնտոել իր գերագոյն վայելքը։ նա՝ որ գիտէ իր մէջքին բեռ, իր վզին լուծ զնել յիմարաբար, որ գիտէ իր բոնակալների ոտները համբուրել սողալով, եւ աչքերը փակած՝ անմեղների եւ նոյնիսկ իր բարերարների մէջքի վրայ քայլել վայրենի քրքիջով։

Այսօր նա եկել էր դուարճանալու. Զիզին պիտի խաղար, գեղեցի՛կ Զիզին։

Կրկէսի խորքում քաշ ընկած թաւշեայ վարագոյրը հանդիսաւոր կերպով բացուեց, եւ այնտեղից սրբնթաց արշաւելով դուրս եկաւ մի կին՝ մի գեղեցիկ նժոյդի վրայ։ Կինը մի գունատ, տանջուած արարած էր. նրա փոքրիկ մաշուած մարմինը թւում էր ձիու մէջքին կապած փայտեայ խրտուիլակ, կենդանութեան նշանը նրա վտիտ ձեռների շարժումն էր։ Զին սլանում էր այնպիսի դիւրութեամբ, այնպիսի արագութեամբ, որ կարծես իր մէջքին ոչինչ չունէր, ու կինը որպէս մի ստուեր տարւում էր

նրա հետ գլուխ պտտեցնող արագութեամբ։ Փրփրած կենդանին չէր վազում, այլ սլանում էր չէր քայլում, այլ թռչում էր օղի մէջ, սողում էր շրջանակների միջից, ցատկում էր իր առաջը յանկարծակի բարձրացող ցանկապատերի վրայից, եւ միեւնոյն ժամանակ կինը նրա վրայ կանգնում էր, նստում, պառկում, ցած էր իջնում, կրկին հեծնում, անցնում շրջանակների միջից։ իսկ կենդանին սլանում էր, հա՛ սլանում։

Ահա նա կանդնեցրեց ձին։ տխուր ցաւոտ ժպիտ խաղաց նրա տանջուած դէմքին։ նա նայում էր, համբոյրներ էր ուղարկում ամբոխին եւ փոխարէնը սպասում էր ծափի, իսկ մարդիկ նայում էին եւ չէին ծափահարում։ Զիարշաւը գեղեցիկ էր, իսկ կինը՝ տգեղ։ նրա մարմինը հեշտագրդիո չէր, համբոյրը՝ վշտի եւ տանջանքի համբոյրն էր։ ամբոխը զուարձանում էր, ցաւերի համբոյրը նա չէր ուղում։ եւ քար լոռութեան մէջ ձիաւորն անյայտացաւ։

Հրապարակ եկան երկու մանուկներ, քոյր եւ եղբայր, 8-12 տարեկան։ Նրանք ցատկում էին իրար գլխի վրայով, անիւի պէս պարբեկան։ Նրանք ցատկում էին իրար գլխի վրայ։ իրար գալարուած՝ թաւալում էին գետնին։ վերջում եղբայրը՝ մի նիհար երեխայ, բարձրացրեց իր ուսերի վրայ երկու անդամ իրանից աւելի ծանր քրոջը, գողղողալով սպասեց, որ իր կենդանի բեռու բարձրանայ նաեւ իր գլխին, եւ յետոյ սկսեց շրջան կատարել, նայելով դէպի հանդիսականները, որոնց կարծես ուղում էր ասել։ «տեսէ՛ք, ո՛րքան ծանր է, ի՞նչչէս ցաւում է մէջքս եւ պարանոցս, ա՛խ, եթէ իմացաք, ո՛րքան խեղճ, որքան գժբախտ եմ ես»։ Նրանք դժբախտ էին, ամբոխին ի՞նչ փոյթ։ եւ նա լուռ մնաց, մանուկները հեռացան այնպէս՝ ինչչէս ձիաւոր կինը, առանց մի հատիկ քաջալերիչ ձայնի։

Նստարանների վրայ խուլ շշուկ բարձրացաւ։ ամբոյրը ձանձրանում էր։ նա անհամբերութիւնից մոմուում էր։ նա Զիզիին էր պահանջում, նրա համար էր եկել։

«Զիզի՛ն, Զիզի՛ն, որոտաց դահլիճը միաձայն, Զիզին թողդայ»։

Վարագոյրը յետ քաշուեց, եւ հրապարակում յայտնուեց մի հմայիչ կին։ մորթագոյն շապկի տակ նրա գեղանի մարմնի նուրբ գծերը ծրագրւում էին հեշտագրդիո ճշտութեամբ, նա կարծես

մարմբէ կաթնագոյն արձան լինէր, ողողուած ճրագների լուսով:

Զիզի՞ն էր... ամբոխը նախ ապշեց այս յանկարծակի յայտնը լուած դիւթական պատկերից, ապա կարծես ուշքի գալով՝ գահ-լիճը մէկէն դղրդացրեց որոտագին ծափահարութեամբ: Կինը օդային համբոյներ ուղարկեց գժուած ամբոխին, ժպտաց իր վարդագոյն շրթունքներով եւ պչրանքով մօտեցաւ ու բռնեց սուաջարկուած սանդուղքը:

Եւ հաղարաւոր աչքեր նայում էին ծայրայեղ ուշագրութեամբ: Զիզին նորից ժպիտով մի յաղթական հայեացք գցեց իր շուրջը եւ ապա նաղելի շարժումներով բարձրանալ սկսեց: Սանդուղքը ոչնչով ամբացրած չէր յատակին. կինը պահպանում էր նրա ուղղահայեաց հաւասարակշռութիւնը եւ բարձրանում էր միաժամանակ: Վերելքը երեւի գժուար էր եւ վտանգաւոր. կինն ամէն վայրկեան զդուշութեամբ շտկում էր սանդուղքի փոքրիկ երերումներ եւ կրկին բարձրանում: Ահա նա հանդիսատեսների դլուխներից վեր է արդէն:

— Մա՛յրիկ, մա՛յրիկ...

Բազմութիւնը միանդամից նայեց գէպի մուտքը ծածկող վարագոյրը. այստեղ կանգնած էր մի 2-3 տարեկան փոքրիկ, սիրուն երեխայ. նա ձեռքերը մեկնած օդի մէջ, ասես ուղում էր թռչել գէպի բարձրացող կինը, կախուել ոտներից եւ ցած բերել:

Զիզին մա՛յր էր... ամբոխի մէջ ճակատներ կային, որոնք կնճռուեցին. շրթունքներ կային, որոնք ինչ որ մոմուացին: Այդ երեխան մի անախորժ դիւտ էր, մայրական դաղափարը ինչ որ մի ցուրտ բան էր կրքերի տաքութեան հանդէպ. մայրը՝ մայր է, իսկ Զիզիները իրապէս դրաւիչ լինելու համար մայր չպիտի լինեն, այլ միմիայն կին, կամ աւելի ճիշտ՝ միմիայն մարմին, աղատ բոլոր կապերից, — մտածում էին շատ գլուխներ: Այդ երեւի հասկացան ցիրկի վարիչները, եւ երեխան վայրկենապէս անյայտացաւ վարագոյրի յետեւում: Եւ իսկոյն մոռացուեց. այժմ Զիզին այլ եւս մայր չէր ամբոխի համար, այլ կին էր. այդ կինը գեղեցիկ էր, այդ կինը կիսամերկ էր եւ բարձրանում էր, հա՛ բարձրանում: Ահա նա սանդուղքի կէսից աւելի բարձր է. մանր աստիճանների վրայով նրա ճկուն մարմինը գալարում, սողում է, ինչպէս օձ. սանդուղքը չի երերում, ցցուած է, ինչ-

սղէս մեխս, բայց եւ այնպէս բազմութիւնը նայում է ծայրայեղ յուզմունքով, շունչը բռնած եւ... սպասում է մի բանի, որից եւ վախենում է եւ որը ուզում է միաժամանակ. եթէ սանդուղքը օրօրուի մարմնի ծանրութեան տակ, — մտածում էր իւրաքանչիւր դլուխ: Սանդուղքը, սակայն, չէր օրօրուում, եւ կինը բարձրանում էր անօրինակ ճարպիկութեամբ: Էլի երեք աստիճան, եւ Զիգին կը կարողանայ վերից, բարձր դմբէթի տակից նայել այդ չուծ աչքերի, այդ բորբոքուած ճակատների, այդ հաղարաւոր դլուխների ծովի վրայ եւ ժպտալ, հեղնել, կամ արհամարհել իր ոտների տակ մոմուցող այդ բազմութիւնը:

— Մայրի՛կ, մայրի՛կ...

Երեխան կրկին յայտնուեց նոյն տեղում, կրկին մեկնեց իր թաթիկները, ձգուեց օդի մէջ, բայց այս անդամ նրան ոչ ոք չնայեց, նրա ճայնը ոչ ոք չլսեց, ո՛չ մայրը եւ ո՛չ ամբոխը, որ նայում էր յուզուած, ուշակորոյս: Այդ կինը այնքան դեղեցիկ էր այդ վտանդաւոր բարձրութեան վրայ, այնքան դրաւիչ էր այդ մարմինը, որ նայողներն անկարող էին այլ կողմ ուշք դարձնել: Դարձեալ մի աստիճան, մնաց միայն երկուուը, որքա՞ն բարձր է արդէն, իսկ եթէ յանկարծ ընկնի... Գերեզմանական լուսութիւն իջաւ դահլիճում, ո՛չ մի շուկ. մարդիկ չնչերը բռնել էին, նայում էին անթարթ դէպի վեր, ուր տարածութեան մէջ աղօտ լոյսով ծրագրում էր այդ չքնաղ կանացի պատկերը, որ չդիտես ինչո՞ւ կախուած էր այնտեղ անշարժ ու սառած: Կային եւ այնպիսիները, որոնք այլ եւս սանդուղքն էլ չէին տեսնում, այլ միմիայն այդ գեղեցիկ պատկերը, որ լողում էր վերի լոյսերի մէջ, ինչպէս մի անմարմին ոդի:

Դարձեալ մի աստիճան, եւ մնաց վերջինը: Կինը կանգ առաւ, յոդնա՞ծ էր արդեօք, վախենո՞ւմ էր բարձրութիւնից, թէ՞ գըլուխը շշմեց վերի օդի խեղող ծանրութիւնից. ակներեւ էր, որ նա դժուարանում էր վերջին աստիճանը բռնել. աչքերը յառած դէպի մի կէտ, բոլոր ուշքը լարած, նա նայում էր, նայում էր եւ կարծես էլ ոչինչ չէր տեսնում. այժմ սանդուղքը գողում էր նրա ձեռքերի մէջ եւ ոտքերի տակ կամաց-կամաց անդունդ էր բացում:

Իսկ ամբոխը անհամբեր եւ դժգոհ էր այս սպասողական

գրութիւնից, որ այնպէս սղմում էր կրծքերը, այնպէս խեղդում
էր կոկորդները, այնպէս ճնշում էր չնչառութիւնը:
Անտանելի էր...

Չռած աչքերը ասես ուզում էին բներից դուրս ընկնել, ճո-
թըռուել, մարդիկ հեւում էին անհամբերութիւնից, սարսափից
ու հետաքրքրութիւնից: «Կամ ընկնի, կամ բարձրանայ, միայն
թէ վերջ առնի այս կացութիւնը», մտածում էին հազարաւոր դը-
լուխներ:

Իսկ կինը միմիայն նայում էր վերջին աստիճանին, նայում
էր եւ ո՛չ բարձրանում էր ու ո՛չ ընկնում, այլ դողում էր. նրա
դիմում այդ ըոսկէին ստեղծուած էր մի քառս, նա այլ եւս չէր
մտածում, չէր տեսնում, չէր լսում եւ չգիտէր ուր է ինքը:

— Մա՛յրիկ, մա՛յրիկ. վերստին լսուեց մանկան ձայնը:

Այս անդամ դժգոհութիւնն իր դադաթնակէտին հասաւ,
ներքեւում խուլ շշուկ բարձրացաւ. ոմանք ծափահարեցին իրանք
չիմանալով ինչո՞ւ, ուրիշներն ակամայ ոտքի կանդնեցին, բայց
յանկարծ մի զարհուրելի բան պատահեց,— սանդուղքը երերաց
թափով յետ ու առաջ, ապա ծոռւեց մի կողմ. վերեւ, գմբէթի
տակ, մի սուր ճիշ լսուեց եւ կինը, տարածութեան մէջ պտոյտ-
ներ գործելով գնդակահար թռչնի պէս գլորուեց դէպի վար:
Չորս կողմից ծառայակիցները վրայ վազեցին, իրար խառնուե-
ցին, ոմանք ջուր էին բերում, ուրիշները կանչում աննպատակ,
իսկ բազմութիւնը միաձայն «ո՛ւհ» արեց ու քար կտրեց կարծես:

Անկենդան Զիգիին տարան հրապարակից:

Լոռութիւնը շարունակում էր:

— Մա՛յրիկ, մա՛յրիկ... Երեխան ճչում, լալիս էր այս ան-
գամ վարագոյրի յետեւում... . . . - .

Յայտնուեց կառավարիչը:

— Դուք տեսաք զարհուրելի ձախորդութիւնը, պարոննե՛ր,
ասաց նա յուղուած ձայնով, ինձ մնում է միայն աւելացնել, որ
խեղճ կինը մեռաւ: Արդեօք հասարակութիւնը կամենո՞ւմ է,
որ ներկայացումը շարունակուի, թէ՞ ոչ:

Բազմութիւնը լրու էր:

— Մա՛յրիկ, մա՛յրիկ...

Ամբոխը համը էր, սարսափի՞՞, թէ՞ դժութեան պէս մի անո-

բոշ բան էր խաղում այդ գլուխներից բարձր գաղջ մթնոլորտի մէջ, այստեղ, ուր մի քանի ըռպէ առաջ կանացի սիրուն պատկերն էր սաւառնում : Բիրտ զդայական հաճոյքին դէմ առ դէմ կանգնած էր այժմ մերձաւորի ցան ու խեղճութիւնը, որ լալիս էր այն վարագոյրի յետեւում եւ իր գերագոյն իրաւունքն էր պահանջում աշխարհից :

— Գէթ մի քիչ դո՞ւթ, դէթ մի քիչ յարգանք : Բայց գլուխները դեռ շատ էին տաք, վայելքի տենդը դեռ այրում էր ճակատները եւ ամբոխը չգիտէր ի՞նչ պատասխանել : Դեռ որչափ հետաքրիր խաղեր էին տեղի ունենալու, փողն էլ էր վճարուած, էլլի կանայք կան : Ամբոխը լուռ էր . հօտային վիճակ ստեղծուեց . մի ձայն պէտք էր այդ բոլոր ապուշ կտրած, շշմած գլուխներին տիրելու համար . իւրաքանչիւրը զայրանում էր իր հարեւանի վրայ, որ առաջնորդ չի ճչում, եւ լոռութիւնը շարունակւում էր, եւ այդ վճռող ձայնը չկար :

Կառավարիչն սպասում էր . . .

— Շարունակե՞լ :

Ո՞վ արտասանեց այդ անսիրտ բառը . . . Մի ողորմելի արարած, մի փոքրիկ կարճահասակ մարդ, յիմար աչքերով, յիմար դէմքով եւ այնքան յիմար ձայնով ասաց, որ կարծես ինքն էլ վախեց իր ձայնից ու կծկուեց, բայց ի՞նչ փոյթ, դա փոթորկի նշան էր :

— Շարունակե՞լ, որոտացին մի քանի շարքեր, շարունակե՞լ, ոռնաց հազարաւոր բազմութիւնը :

— Մա՞յրիկ, մա՞յ . . .

— Շարունակե՞լ, պատերը դղրդացին այդ կատաղի մռնչոցից :

Երեխայի ձայնը, արտասուող խեղճութեան ճիչը կորաւ, խեղճուեց հաղարաւոր կոկորդներից դուրս թափուող այդ խելադար աղաղակների մէջ :

Խաղը վերսկսուեց . գութն ու յարգանքը փախան այդ սպանիչ մթնոլորտից : Իշխողը բիրտ կիրքն էր ու հոհոսցը :

Եւ պատուում էին ձիերը, տանելով իրանց վրայ հոլանի մարմինները, եւ թնդում էր դահլիճը բուռն ծափահարութեամբ :

Ամբոխը ուրախ էր, ամբոխը զուարճանում էր :

Հսկա'յ յիմարը . . .

ԵՐԵԽԱՆԵՐԸ

Յուրաքանչյուղ մի առաւօտ մեծ քաղաքի զառիվայր փողոցից դանդաղ բարձրանում էր մի վեց-հինգ տարեկան երեխայ: Նա կրում էր իր մէջքին մի փոքրիկ կողով, որ սէտք է լիքը եւ ծանր լինէր, որովհետեւ մանուկը անդադար սայլաքում էր սառած ձեան կոկ մակերեւոյթի վրայ եւ հաղիւ հաւասարակը ուղղութիւնը պահելով՝ քայլում էր:

Արտաքինից խեղճութիւն էր թափուում. մեծ քաղաքի բանուոր ծնողների այն զգզած երեխաներից էր երեւում, որոնք ծընուած օրից սողում են մուլթ ու խոնաւ նկուղների աղբերի մէջ, որոնք ամիսու մի անդամ իրանց ուսին քաշ են տալիս ջարդուած կահ-կարասիներ, կեղտոտ անկողիններ՝ մի տնից միւս տունը եւ որոնց ծանօթ չեն հայրական յարկի, սեփական պարտէզի հետ կապուած քաղցր յիշողութիւններ: Մանուկը լաւ գիտէր, որ այն տունը, ուր իրանք ապրում են այժմ, ուրիշինն է, ինչպէս եւ շատ տներ, ուր եղել են նրանից առաջ: Ի՞նչ փոյթ, նա այդ մասին քիչ էր մտածում, միայն թէ կարողանար չուտ հասնել, շուտ աղատուել այս անտանելի ցրտից:

Եւ նա շտապում էր, որքան կարող էր, բայց նրա քայլուածքը դժուարացնում էին ցուրտը, ձիւնը եւ մանաւանդ կօշիկները, որոնք չափազանց մեծ էին նրա փոքրիկ ոտների համար, ու խեղճ երեխան հազիւ էր քաշ տալիս հին կաշուի եւ մեխերի այդ բեռը: Այդ էլ վնաս չունէր, բայց մի կօշիկի կողքը պատուուած էր եւ ամէն անդամ, երբ մանուկն այն ոտքն առաջ էր ձգում, փոքրիկ թաթի բթամատը, մի ոսկրոտ ու վտիտ մատ, դուրս էր սողում այդ բացուածքից, քսում էր ձեանը եւ կրկին ծածկւում, ինչպէս մի վախեցած սողուն, որ զլուխը դուրս է հանում բնից եւ վտանդ զգալով՝ ներս քաշուում կրկին: Զօր կօշիկներն էին, որոնք ամբողջ տարիներ քաշ էին եկել բանուորի տանջուած ոտներից, նըրանց հետ միասին տեսել էին գործարանական կեանքի բոլոր սեւ կողմերը, արորել, սղմել էին նրանց կարկատանների չոր ծալքերով եւ այժմ էլ կախուել էին նոր սերնդի ոտներից, ասես, նրանց էլ առաջնորդելու այնտեղ, ուր հայրն էր տառապել: Մի քանի շաբաթ առաջ, երբ նրան հագցրին այդ կօշիկներն առաջին անգամ, երբ երեխայի խղճուկ ոտները մէկէն կորան այդ ահագին

խորշերի մէջ, ուր հին օրերի ծալքերը, միանդամ ընդ միշտ կաղ-մըւած ու քարացած, քերթեցին նրա քնքոյշ մորթին, եր նա առաջին անդամ փորձեց քայլել եւ ընկաւ ահագին աղմուկով, նա ցուով նայեց իր ոտներին, եւ նրա փոքրիկ գլուխը չէր կարողանում հասկանալ, թէ ինչի՞ են հարկաւոր այդքան մեծ կօշիկները, այդքան ծանր, այդքան կոշտ :

— Մայրի՛կ, ամբո ուրիշերինը փոքր են ու թեթեւ :
— Մենք չունենք, զաւա՛կս, — եղաւ պատասխանը :

Մայրն ասաց՝ «մենք չունենք», ուրեմն պէտք էր հադնել, պէտք էր քաշ տալ այդ բեռը, պէտք էր կրել նրա պատճառած ցաւը : Այսօր երեխան դարձեալ ցաւով էր նայում իր ոտներին, բայց էլ չէր զարմանում կօշիկների ծանրութեան, այլանդակութեան վրայ . նա այդ դժուարութեանը սովորել էր արդէն, կուզէր միայն, որ իր փոքրիկ վտիտ մատը դուրս չդար այն պատռուածքից, եւ աշխատում էր այնպէս քայլել, որ մատը չբացուի, ձեանը չքսուի, բայց այդ նրան չէր աջողուում եւ ցուրտը կամաց-կամաց ընկճում էր նրան, փոքրիկ, կծկուած մարմինը դողդողում էր, խղճուկ ոտներն ու ձեռները կապտել էին :

Երեխան քայլում էր ու մտածում . նրա մէջքի փոքրիկ կողովն էլ, ինչպէս նրա կօշիկները, իր փոքրիկ պատմութիւնն ունէր : Այդ պատմութիւնը այժմ անցնում էր նրա գլխով իր բոլոր մանրամասնութեամբ : Զմբան սկզբից քոյրն էր նրանով հէնց այս ժամին քարածուխ բերում, վառարանը վառում : Խե՛ղճ քոյր . եղբայրը երբ առաւօտեան զարթնելիս՝ շտապով հաւաքում էր իր զգեստները, վազում էր դէպի վառարանը եւ այնտեղ կրակի առաջ կծկուած հազնուում էր, նրա մտքովն անդամ չէր անցնում, թէ այսքան դժուարութեամբ է ձեռք բերում ածուխը, թէ այդ հիւանդու, միշտ հազարող աղջիկը այսքան ցուրտ է քաշում : Եւ այդ քոյրը մեռաւ : Մի առաւօտ, երբ ինքը զարթնեց, քոյրն անշարժ պառկած էր իր անկողնում . հայրը չէր երեւում, երեխան նրան համարեա երբեք չէր տեսնում, — մայրը կամացուկ լալիս էր, փոքրիկ կողովը դատարկ էր, եւ վառարանը չէր վառում : Երեխան լաւ յիշում է, որ այդ օրը զարթնելուց յետոյ ինքը շատ մրսեց, երբ չորերը հագնում էր, եւ քրոջ մահը ցաւ պատճառեց մանաւանդ այն պատճառով, որ այդ էր արգելք եղել վառարան վառելուն, բայց նա ամենեւին չէր հասկանում, թէ վառարանի կրակը այդպէս դժուար է ձեռք բերուում :

Քրոջ մահից յետոյ մայրն էր գնում ածուխ բերելու եւ երեխան մոռացաւ քրոջ մահը, որովհետեւ առաօտները զարթնելիս նա դարձեալ կարողանում էր իր շորերը տաք վառարանի առաջ հագնել: Այդ ժամանակ մտքովն անդամ չէր անցնում, թէ այդ կողովը վերջ ի վերջոյ իր մէջքին կը նստի: Բայց երէկ առաօտնա զարթնեց եւ մօրը գտաւ հիւանդ պառկած, կողքին մի փոքրիկ երեխայ, որ չքիտես ինչու, ճչում էր անդադար: սենեակը դարձեալ ցուրտ էր, վառարանը սառը: Նա չորերը հագաւ դողդողալով: Մայրն ասաց, որ ինքը հիւանդ է, որ այս պատիկը մի նոր քոյրիկ է, գիշերն է ընկել երկնքից, որ այդ իր մեռած քոյրն է ուղարկել, որ մեծանայ, նրա փոխարէն գնայ, ածուխ բերի:

— Իսկ մինչեւ այդ, — ասաց մայրը, — դու պէտք է գնաս ածուխ բերես:

— Մայրիկ, շուտ կը մեծանայ իմ քոյրիկը:

— Հա՛, ո՛րդի, շուտ կը մեծանայ, որ սենեակը տաք մինի, շատ շուտ կը մեծանայ:

Յետոյ մայրն աւելացրեց, որ իր տղան խելօք է, քաջ տղայ է, որ նա կը լսի մօրը եւ խակոյն կ'երթայ ածուխի: Նա խօմ ճանաչում է ածխալաճառի խանութը:

Եւ այսպիսով՝ փոքրիկ կողովը յայտնուեց նրա մէջքին: Ահա այս էր մտածում երեխան, երբ բարձրանում էր ձիւնոտ զառիվայրով: Ցուրտ էր, բեռը ծանր, ոտների տակ ձիւնը ճռճռում էր, աջ ձեռքը, որով բռնել էր կողովի պարանը, սաստիկ կապտել էր. նա դուրս հանեց գրպանից ձախ ձեռքը, բռնեց պարանը եւ սկսեց փչել սառած ձեռքը տաքացնելու համար, բայց նրա խղճուկ չունչն էլ այնքան տաք չէր, ջանքերն ի զուր անցան:

Վիճակը քանի գնում՝ վատանում էր, բայց մայրն ասաց, որ նա խելօք, քաջ տղայ է, նա չի վախենայ ցրտից եւ կ'երթայ ածուխի: Այո՛, նա չի վախենում ցրտից, բայց ոտի բաց մատը շատ է մորմոքում, աջ ձեռքը շատ է կսկծում, գոնէ շուտ բարձրանար ու ազատուէր զարիվայրից, այնուհետեւ հեշտ էր: Շրթունքները դողդողացին, նա չի ուզում լաց լինել, մայրն ասաց, որ նա քաջ է, այդ միայն ցրտից են դողդողում. ահա նա ներքեւի շրթունքը ներս քաշեց եւ ատամների շարքի տակ սղմեց. էլ չի դողայ: Նա բարձրանում է. Տէ՛ր Աստուած, այս որքան երկար է ձիւնոտ զառիվայրը. վերելքը վերջ չունի. այս անդամ աչքերը թացացան եւ միայն երկու կաթիլ աչքերի երկու խորշերից քաշ ընկան, մնա-

ցին. այդ էլ ցուրտն է, մտածեց երեխան, եւ թեւով սրբեց ու առաջ քայլեց :

Հազիւ զառիվայրի կատարին հասած, անց ու դարձից կոկուած ձեան վրայ ոտքը սայթաքեց, նա ընկաւ ծնկների վրայ, թէեւ իսկոյն վեր կացաւ, բայց աչքերից արցունքները կաթիւ-կաթիւ թափուեցին եւ նա այս անդամ բարձրաձայն հեկեկաց : Հէնց նոյն բոպէին զառիվայրի վրայ յայտնուեց մի ուրիշ երեխայ . նա էլ մի բան ունէր ձեռքին, մի փոքրիկ, կոկիկ սահնակ, որով մանուկները ձմեռ ժամանակ սահում են ձիւների վրայ դարիվեր փողոցներում : Հարուստ ծնողների մի բախտաւոր երեխայ էր, ձեռներին ունէր բրդեայ տաք ձեռնոցներ, ոտներին՝ փոքրիկ, սիրուն կօշիկներ ուտինէ կրկնակօշիկների մէջ, վրան՝ հաստ, տաքուկ վերաբկու, մետաքսի պէս նուրբ մազերի երկար գալարուն խոպապները իջնում էին նրա մորթէ դլխարկի տակից եւ պատում պարանոցն ու ուսերը : Նա վազելով, ուրախաձայն աղաղակներով դուրս թռաւ հարեւան տնից, բայց տեսնելով այս երեխային, որ կողովի տակ կուցած արտասւում էր, կանդ առաւ ինչպէս քարացած :

Կեանքի բոլոր դառնութիւնները, այլանդակող խեղճութիւնը մի կողմից եւ նրա հեշտութիւններն ու վայելքները միւս կողմից, որպէս երկու անթափանցիկ պարիսպներ կանզնել էին այդ երկու մանուկների մէջ, բաժանելով իրարից դժբախտութեան եւ բախտաւորութեան աշխարհները : Նրանք երկար նայեցին իրար երջանիկ, հարուստ երեխան տեսնում էր այդ կեղտոտ, դզզուած երեխայի տանջուած արտաքինի մէջ ինչ որ մի տարօրինակ, մի այլանդակ էակ, մի փոքրիկ գազան, որ կարող էր գուցէ կծել . իսկ արտասուող երեխան նայում էր առաջինին եւ զարմանում էր, որ օրուայ միեւնոյն ժամին, միեւնոյն զառիվայրի վրայ, միեւնոյն ցրտի տակ ճիշդ իր հասակակից մի երեխայ կողով չունի, չի մրսում, որ նրա ոտքի մատը գուրս չի դալիս կօշիկի ծակից, որ նա չի սայթաքում, չի դողում, չի լալիս :

Ամէնից ծանրը, ամէնից անտանելին դարձեալ իր կօշիկներն էին . մանուկը նկատեց, որ իր բախտաւոր հակառակորդը զար-մացած հէնց իր ահագին կօշիկներին է նայում, ինքն էլ աչքի տակով նրա ոտներին նայեց նրա կօշիկները որքան փոքր էին, որքան սիրուն : Խեղճ... նա երբեք այդպէս խորը կերպով չէր դդացել իր կօշիկների բոլոր այլանդակութիւնը, երբեք այդպէս ցաւ

չէր զգացել. նոյնիսկ առաջին օրը, երբ նա ընկաւ երեսի վրայ, նրա վիշտն այս աստիճան մեծ չեղաւ, որքան այսօր: 0', ինչպէս կ'ուզէր նա վոքրիկ կօշիկ ունենալ այս ժամին: Հապա այդ մի կօշիկի պատառուա՞ծքը... Գոնէ այդ չլինէր, մտածեց երեխան, բայց հէնց նոյն վայրկեանին անսպասելի կերպով, կարծես դիտամամբ, կապտած մատը դուրս ցցուեց. նա զգուշութեամբ ներս քաշեց եւ շարունակեց նայել դիմացինին:

Երկար ժամանակ լուռ էին նրանք: Առաջինը խօսեց բախտաւոր երեխան:

— Է՛յ, բլօմ, ինչո՞ւ ես լալիս:

— Յուրատ է... էլ չեմ լալիս — շտապեց աւելացնել երկրորդը, ամաչելով իր թուլութիւնից իր հասակակցի առաջ: Մայրն ասել էր, որ նա քաջ է:

— Յո՛ւրատ է, հէջ էլ ցուրտ չէ... ես չեմ մրսում, — վրայ բերեց առաջինը յոխորտանքով եւ միեւնոյն ժամանակ ցնցեց իր մազերի երկայն խոպապները:

Նրանք կրկին լոեցին, կրկին նայում էին իրար, ոտից դլուխ չափելով:

— Ինչո՞ւ ես տանում ածուխը:

— Քոյրս մեռաւ, մայրս հիւանդ է, տանում եմ, որ պստիկ քոյրս տաքանայ, մեծանայ, յետոյ նա կ'երթայ ածուխի:

— Մերը ծառան է բերում: Գիտե՞ս, ես այստեղից դէպի ներքեւ այնպէս սլլում եմ, այնպէս սլլում եմ, որ դու իսկի չես կարող բռնել:

— Զհաննամը թէ սլլում ես, — պատասխանեց կողովով մանուկը, կարծես զայրացած, որ նրանց ածուխը ծառան է բերում, մինչդեռ իր խղճուկ մէջքը ծոռւած է իր բեռի տակ. ապա նա մի դառն հայեցք ձգեց իր հակառակորդի վրայ ու առաջ շարժուեց: Հաղիւ մի քանի քայլ արած՝ նա յանկարծ զգաց հէնց իր գլխին ձնագնդի մի սաստիկ հարուած. ցաւը խիստ էր, բայց նա է՛լ չարտասուեց, այլ կատաղած յետ գարձաւ: Իր խօսակիցն էր խփողը, որ իր սահնակի վրայ նստած՝ սլանում էր դէպի ներքեւ, յետ յետ նայելով ու հոհուալով:

Վշտացած մանուկը վճռեց վաղել, բռնել նրան, քաշել, պատռել նրա թանկադին, տաք վերարկուն, կախուել նրա երկայն մազերից եւ քաշ տալ սառած ձեան վրայ, որ նա էլ լաց լինի, արցունք թափի իր պէս: Սահնակը շատ արագ էր իջնում, իր կօշիկ-

ները շատ էին ծանր, շատ էին մեծ, մէջքի բեռն էլ ճնշում էր, ճնշում, բայց զայրոյթն այնքան մեծ էր, ցրտից, տանջանքից կուտուած մաղձը այդ վոքրիկ սրտում այն աստիճան թունոտ էր, որ նա, ամէն բան մոռացած, թափով ձգուեց նրա յետեւից. ահադին կօշիկները ճռճռացին ձեան վրայ, նա կրկին սայթաքեց եւ այս անդամ այնպիսի ուժով վորուեց գետին, որ կողովը չուռ եկաւ, ածուխը թափուեց, դէմքը թաղուեց ձեան մէջ, քիթն արնեց, առաջի ատամները խրուեցին շրթունքների մէջ. հակառակորդին բռնելու էլ հնար չկար: Նրա ցաւն ու զայրոյթը գագաթնակչտին հասաւ, բայց նա դարձեալ չարտասուեց, այլ կատաղութիւնից կծոտեց իր վիրաւոր շրթունքները, սղմեց իր կապտած բռունցքը, բարձրացրեց օղի մէջ վե՛ր, վե՛ր եւ ճչաց սպառնալի ձայնով.

— Սպասի՛ր, մենք էլի կը պատահենք:

Նրանք հեռու չեն ապրում իրարից, անշուշտ էլի կը պատահեն...

ՀԵԹԵԹԱՆԻՒՅՆ

(1904—1906)

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Նա անցնում էր փողոցով յամբօրէն ու լուռ՝ այն յուղարկաւորի հանդիսաւորութեամբ, որ մեն-մենակ տանում է իր մեռելը թաղելու:

Եւ այն մեռելը նա կրում էր իր հողում. երեւի հոգիների մեռելը աւելի ծանր է ու ճնշող, քան այն, որ մարդիկ տեսնում են, որովհետեւ նա այնպէս էր քայլում, ասես իր հետ քաշ էր տալիս մի ահագին բեռ, որի տակ իր ոսկորներն էին ճարճատում:

Զգո՞ւմ էր իր ցաւի բեռն արդեօք, չգիտեմ, բայց կապարային դէմքի վրայ ո՛չ մի միտք, ո՛չ մի յոյզ. ամէն ինչ այնտեղ սառած էր ու քարացած, որպէս մի մեռած մոլորակի վրայ՝ ուր կենդանի անցեալը վկայող հետքերն իսկ սոսկալի են իրանց մահաշունչ ցրտութիւնով:

Վայելուչ, մաքուր փողոցի մէջ նա մի գարշելի բիծ էր իր նողկալի արտաքինով: Կեանքի գարշանքն էր այն, որ սողում էր մի անդիտակից ըմբոստութեամբ հեղնելով այն ամէնը, ինչ դըժրախոտ է. անզգա՛յ հեղնութիւն, որից մարդ գող է զգում:

Նրան ասացին, որ յետ դառնայ, նա շատ էր աղտեղի. պատառտած զգեստների ծլանքներից կաթկթում էր գարշահոտ ցաւը եւ թուռմ էր, թէ նրա կոխած տեղը գետինը վառւում է: Եւ, նրա փոյթը չէր, նա շարունակում էր քաշ տալ իր հետ կեղտի եւ գարշահոտութեան այդ բեռը:

— Ո՞ւր ես գնում, յե՛տ գարձիր:

Եւ նա յետ գարձաւ դէպի հակառակ կողմը, կրկին քայլում էր նոյն հանդիսաւորութեամբ, նոյնպէս յամբօրէն, անտրտունչ. նա կարծես ասում էր.

«Զէ՞ք թողնում այս կողմում, այդ միեւնոյն է, իմ մեռելը

կարող եմ ուրիշ կողմը թաղել»։ Գոնէ ինձ թուաց, թէ նա այդպէս է ասում։

Նա քայլե՛ց, քայլե՛ց . . . ո՞ւր էր զնում եւ ինչո՞ւ։ Անշուշտ նա չէր մտածում, թէ ո՞ւր է զնում եւ ինչո՞ւ։ Երբ ոտքերի տակ կարծր գետին կայ եւ քայլեր անել հնարաւոր է, ի՞նչ պէտք է մտածել, թէ ո՞ւր զնալ եւ ինչո՞ւ։ Նրանք երբեք չեն մտածում, թէ ո՞ւր են զնում եւ ինչո՞ւ։ Աշխարհը լայն է, քայլե՛ր, քայլե՛ր, մինչեւ որ էլ չքայլես։ Եւ թող քո տեղ քեզ նմանները քայլե՞ն՝ միկոններ են այդպէս գալիս եւ անցնում . . .

Եւ ես ցանկացայ նայել մուրացիկի աչքերին։ Նայել խորը, այնքան խորը, ուր նրա խղճուկ, գունատ հողին է պլաղում, ինչպէս աւերակ տաճարի մութ կամարների տակ մոռացուած պլաղացող մի կանթեղ։

— է՛յ, է՛յ, բա՛րեկամ։

Նա ցնցեց իր աղտոտ ծլանքները ու կանդնեց։ Նրանք միշտ կանգնում են, ով եւ պահանջելու լինի, ասես ամէն մարդ կարող է նրանց ճակատագիրը լինել, ամէն ճայն բախտի անդառնալի վճիռ։

Եւ նա կանդնեց, դէմքը դարձեալ կապարային էր ու անյոյզ։ Ապակու պէս պաղած աչքերը ինձ վրայ ուղղեց եւ ես հաւատացած եմ, որ նա ինձ չէր տեսնում։ Նրա հայեացքին ներկայացաւ երեւի մի մշուշապատ պատկեր, մէկն այն բիւրաւոր անօդուտ պատկերներից, որոնցից նա այնքան տեսել էր իր ցաւոտ կեանքի ճանապարհին, եւ որոնք բոլորն էլ իրար այնպէ՞ս նման էին։

Ես մօտեցայ, նա անշարժ էր իր տեղում եւ իր ծլանքների դարշահոտութիւնն էր տարածում իր շուրջը։ Զեքս մեզմիւ դրեցի նրա ուսին, չոր, վտիտ ուս։ Ես զգում էի մատներիս տակ նրա ոսկորները, ես շարժեցի, չօշափեցի եւ նրանք խշաշացին ցաւով։ Ես դէմքս մօտեցրի նրա դէմքին եւ չար, անկարեկից հայեացքս յառեցի նրա բիրերին։ Եւ նայեցի երկար, յամառ կերպով, կորած որսը պրատող շան վտանգաւոր հայեացքով, այնպէս՝ ինչպէս փողոցի անցորդները սիրում են ներս նայել այն ցածրիկ լուսամուտներից խղճուկ տների ներսը, ուր կեանքի ցաւն է դալարւում առանց քողի, անպատկառ, հեզնող ու ահաւոր։

Եւ ես նայեցի նրա աչքերին, փորձեցի իջնել խորը, խորը, այն լուռ մթութեան մէջ, ուր հեծեծում է մի կենդանի ցաւ՝ փակուած գաղանի պէս չանգուելով իր բանտի պատերը։ Ես հաճոյքով

էի փնտոռում այդ դադանը, կ'ուզէի լսել նրա յուսահատ ձայնը, նրա խեղղուող հեծկլտանքները, կամ կատաղի մոնչիւնը: Նայեցի խոր ու յամառ, բայց թափառականը ոչինչ չունէր իր աչքերում, ոչինչ իր հոգում:

Նա այնքան դժբախտ էր եւ այնպէս դարշելի. զգեստների կեղտոտ ծլանքներից ցաւն էր կաթկաթում, եւ ես հաւատացած էի, թէ նրա հոգում էլ, ինչպէս աղքատ տնակում մի մութ ցաւ է դալարում թունաւոր ու սպառնալի վիշապի նման: Նայեցի եւ այդ բոլորի տեղ գտայ խաւար ու քար լուսթիւն, ասլրած յոյզեր կային, որոնք իրար գալարուած օձերի պէս կեանքի բեռի տակ քարացել էին ու սառել:

Ես նայեցի. եւ նրա հոգին վորթորիկ չունէր, նա անյոյդ էր ու մեռած, ինչպէս այն լճերը, որոնց ջրերի դառնութեան մէջ ոչ մի կենդանի չի ապրում, չի շարժում, չի յուղում մթին խորքերը, որոնց ափերին ոչինչ չի բուսնում: Այնտեղ հանդչում է միշտ հին օրերի մի տառապանք:

Նա հնազանդ էր իր ճակատագրին. նրա հոգում իշխում էր անսահման հնազանդութեան զաղբելի մահը. եւ դա ինձ զայրացընում էր, նրան ցաւեցնելու, դժբախտ դարձնելու համար ես պատրաստ էի ատամներով կծել նրա կեղտոտ, դորշ մսերը, որոնք երեւում էին ցնցոտիների տակից ինչպէս հողի տակ վատ ծածկած աղբակոյտ: Անդիտակից ու ապուշ հոգիները հիւանդ աշխարհի թիկունքին ամենածանր բեռն են: Բայց հաւատացած չէի, թէ նա ցաւ կը զգար իմ ատամներից. նրա հոգին մեռած էր:

Եւ այդ զարհուրելի մահուան պատմութիւնն ինձ համար մութ մնաց: Աւերակ բերդը կամ տաճարը, որոնց քարերը կամաց-կամաց թափիւում են, մինչդեռ կանգուն են պարիսպները, միշտ անյոյդ աչքերով են տեսնում, թէ ինչպէս իրանք մեռնում են մաս-մաս: Աւերածի, մահուան անուրջները նրանց օրօրում են եւ բոց հողմերը լիզում են նրանց լերկ ճակատները, կեանքը խուսափում է ամէն օր, եւ իրանք չեն կարող ասել, թէ ինչո՞ւ են այդպէս, ինչո՞ւ են մեռնում եւ ե՞րբ կը մեռնեն խսպառ: Թափիւուականը մի աւերակ չէնք էր, որ չգիտէր, թէ իր հետ ի՞նչ էր կատարուել, ե՞րբ եւ ինչո՞ւ:

Մենք լուռ էինք. ես նկատեցի, որ նրա կոսկերը դողդողացին, շրթունքները քաշքառեցին ջղաձգօրէն: Մի՞թէ խօսել էր ուզում. այդ անկարելի է:

— է՛յ...
 Շրթունքները վերստին հանդստացան եւ բիբերը քար կտրե-

ցին :

— է՛յ, դու ի՞նչ ես :

Նա յետ տարաւ կեղտոտ շրթունքները եւ ատամները բացեց :
 Ա՛հ, թշուառական, նա ժպտում էր :

— Դու ի՞նչ ես, ասում եմ :

— Ողորմութի՛ւն արէք :

— Ողորմութի՛ւն... ահա թէ ինչո՞ւ է ժպտում . նրանք բո-
 լորը ժպտում են կշտանալու համար :

— Քաղցա՞ծ եմ...

— Յիմա՞ր... քաղցա՞ծ ես, յիմա՞ր, յիմա՞ր, քաղցած ու յի-
 մար, երկնքի երկու չնորհը միանդամից :

Նա կրկին բացեց ատամները վաստ բերանից գարշահոտու-
 թիւն տարածելով եւ ծիծաղեց հեգնող, զղուելի ծիծաղով :

— Ի՞նչ ես ծիծաղում, յիմա՞ր :

— Քաղցա՞ծ եմ...

Եւ նա փախաւ մի քանի անդամ յետ-յետ նայելով : Ես կանգ-
 նած նայում էի նրա յետեւից, տեսնում էի նրա նիշար, երկար
 պարանոցը, յիմար գլուխը, ողորմելի մէջքը, որի վրայ էլ նստել
 չէր կարելի այն աստիճան ոսկրոտ էր : Եւ նա քայլում էր անխոր-
 հուրդ ու յիմար, առանց իմանալու թէ ո՞ւր, մինչեւ որ մէկը նը-
 րան կ'ասէր՝ «յե՛տ դարձիր», եւ նա յետ կը դառնար նոյնպէս ան-
 խորհուրդ, նոյնպէս յիմար դէպի մի այլ կողմ :

Եւ այսպէս անվերջ, մինչեւ շանսատակ լինէր մի պատի տակ :

Անշուշտ նա շուտով ինձ կը մոռանար, ինչպէս բոլոր նրանց,
 որոնց երբեւիցէ տեսել էր իր պաղած աչքերի մշտական մշուշի
 միջից : Ես կանգնեցրի նրան, նայեցի աչքերին եւ ոչինչ չտեսայ :
 Հողում ցաւ չունէր մարդը, քայլում էր ժամանակից ու տարա-
 ծութիւնից դուրս ինքն իր համար, միշտ քաղցած, բայց անզգայ :
 Ես կանգնեցրի նրան եւ ոչինչ չտուի : Նրա չորացած ու միշտ
 պարզուած ձեռքը ինձ զղուեցնում էր եւ զայրացնում . կանգնե-
 ցըրի հէնց այնպէս, դիտէի որ կը կանգնի :

Եւ փախա՞ւ...

Այդ փախուստն ինձ աւելի զայրացը եց . մարդ է եւ փախչում
 է չդիտես ինչից, փախչում է, գուցէ, որովհետեւ քաղցած է...
 քաղցածները մի՞թէ փախչում են :

Ես հասայ եւ բռնեցի նրան .

— Ինչո՞ւ ես փախչում :

— Վախո՞ւմ եմ . նա կրկին ժպտաց :

— Ումի՞ց , ինձնի՞ց :

— Ամէնքից , ամէն ինչից , երկնքից , երկրից , քարից , պատից , չէնքերից , դռներից , փակ դռներից , վախում եմ եւ քաղցած եմ , օ՛ , ես միշտ քաղցած եմ , միշտ էլ վախում եմ :

Նա դարձեալ ժպտաց :

— Դու քաղցած ես եւ վախում ես . . . ես բռնեցի նրա ձեռքը , ափիս մէջ զգում էի նրա վտիտ մատները , չոր ու սառն ինչպէս բրօնղից ձուլած : Բոնեցի եւ քաշ տուի յետեւիցս : Նա քայլեց իմ յետեւից , հնազանդ կենդանու պէս :

Նա քաղցած էր եւ վախում էր :

Մենք երկար քայլում էինք եւ քաղցն ու վախը սողում էին մէր յետեւից լուսւթեամբ . ինձ թւում էր , թէ ես լսում եմ նրանց մեղմ ոտնաձայնը , նրանց փախոցը :

Մի մութնկուղում մենք նստեցինք՝ քաղցը , վախը , ես ու նա : Ես հաց տուի նրան . աչքերի մէջ զարմանք փայլեց , նա չոած նայում էր ինձ , շրթունքները կրկին ձգձգուեցին , մի բան էր ուղում ասել , երեւի կատարում էր նրա կեանքի ներդաշնակութիւնը խախտող մի անսպասելի բան :

— Սո՞ւս եւ կեր :

Եւ նա սկսեց ուտել նախ անհամարձակ , ապա կատաղաբար : Ես նայում էի նրա ոսկրոտ , դուրս ցցուած ծնօտի շարժումներին , նրա ցնցուող ականջներին , այդ բոլոր խղճուկ մարմնին , որի իւրաքանչիւր թելը կարծես գոհանում էր , երբ կոկորդից ներս էր ընկնում մի պատոս : Երկար ժամանակ ես ուշադրութեամբ գիտում էի նրա ծնօտի անճոռնի շարժումները , նրա վտիտ պարանոցը , որ ամէն անդամ ձգւում , երկարում էր , երբ նա կուլ էր տալիս ծամուած պատառը . նրա չոր մատները , որոնք հացը բըռնելիս , կպչում էին ինչպէս ճիրաններ այլեւս երբեք բաց չթողնելու համար :

Եւ որքան շատ կերաւ նա . նրա քաղցը մի լափող , ոչնչացնող հրէշ էր :

Երեկոյ էր . նկուղն աւելի եւ աւելի մթնում էր , եւ խաւարի մէջ կամաց-կամաց լուծուում էր մուրացիկի դէմքը . ես հազիւ էի տեսնում նրա ցնցոտիների մութ զանդուածը , որ ծրագրուում էր

որպէս մի գորշ աղբակոյտ։ Լուռ էինք. միայն լսուում էր նրա բերանի չփշփոցը, յետոյ խաւար անկիւնում սկսեց ճոռացնել մի ճպուռ, միակերպ, տաղտկալի։ Դրան առաջ լսուեց մի կենդանու փնչփնչոցը. դա մի ծեր, բրդաթող եւ քաղցած շուն էր, որին երեւի գրաւել էր հացի հոտը։ Նա կանդ առաւ շեմքի առաջ եւ նայում էր ներս։ Ես կիսախաւարի միջից տեսնում էի նրա աչքերի փայլը. նա նայում էր աղահութեամբ դէպի այն կողմը, ուր իր պէս մի քաղցած կշատանում էր։

Ճպուռը ճռճռում էր, մուրացիկը չըփացնելով կուլ էր տալիս, իսկ քաղցած շունը փնչացնում էր եւ ցաւագինօրէն հեւում գրան առաջ առանց սիրտ անելու ներս ընկնել։

Եւ ես մտածում էի եւ իմ մտքերն անսիրտ էին։

Ես մտածում էի, թէ ինչպէս դուրս քաշեմ այս մուրացիկ հոգուց իր անխորհուրդ, յղկուած, կոկուած տառապանքը, թունաւոր փշեր տնկեմ վրան եւ կրկին դնեմ կրծքի տակ։ Յետոյ նա կ'ոռնար, կը մոնչէր ցաւից, թունաւոր փշերը կը ծակծկէին։

Եւ լա՛ւ կը լինէր...

Ճպուռը ճռճռում էր, քաղցած շունը հեւում ու փնչացընում, իսկ մուրացիկը հանդարտուեց. նրա ծնօտը էլ չէր շարժւում, բերանը չէր չըփացնում, պարանոցը չէր ձգւում։

— Կչուացա՞ր։

— Ես էլ քաղցած չեմ։

— Յիմա՞ր...

— Ինչո՞ւ ես յիմար ասում։

— Քեզ պէս կերակըում են չներին, հասկանո՞ւմ ես, ա՛յ նրան, որ գրան մօտ փնչացնում է եւ որին դու ոչինչ չտուիր։

— Ես... ախր ես էլ մարդ եմ։

Ես սկսեցի ծիծաղել, բարձրաձայն վիրաւորական քրքիջով։ Իմ ձայնից ճպուռը լոեց, շունը կամացուկ քաշուեց։

— Դու էլ մա՞րդ ես... հա՛, հա՛, հա՛...

Ես երկար, երկար ծիծաղում էի այս մարդու վրայ, որ միշտ քաղցած է եւ միշտ վախում է։

— Հա, ես էլ մարդ եմ... ի՞նչ անենք, որ այսպէս... ինչո՞ւ մի շան պէս... խօս ես մենակ չեմ... մենք այնքան շա՛տ ենք... հաց տուիր, ինչո՞ւ ես ասում շուն...

Ես լոեցի. լսում էի. նրա կոկորդից բառերը դուրս էին գալիս ընդհատ-ընդհատ, խոպոտ մոնչիւններով, յետոյ նա կարծես

սկսեց հեկեկալ, նրա հոգում քնած վիշտը դարթնեց եւ դադանի պէս չանդում էր կուրծքը:

Նա ոտքի կանգնեց, եռ էլ հետեւեցի նրան. մենք դուրս ե-կանք նկուղից: Խաւարի մէջ ես լսում էի նրա մեղմ հեծկլտանք-ները, որոնցից ցնցում էր նրա մարմինը. նա առաջ շարժուեց. քաղցած շունը այնտեղ էր, կամացուկ քայլեց նրա յետեւից: Նա յանկարծ լոեց, յետ դարձաւ եւ ձեռքի ահազին մահակով կատա-դաբար հարուածեց կենդանուն. շունը կաղկանձեց եւ տեղն ու տեղը պառկած մնաց:

— Հանդստացի՛ր, այդպէս լաւ է քեզ համար:

Նա դարձեալ առաջ շարժուեց. նեղ, դալարուն ու խաւար փողոցների մէջ նա մռմռում էր, հեծկլտում ու հեկեկում: Ես քայլում էի յետեւից եւ հաճոյքով ականջ էի դնում իմ նմանի տա-ռապանքի ճիշերին:

Այն կոկուած, յղկուած ցաւը, որ նրա հոգու մէջ կծիկ-կծիկ պառկած էր սառած օձի պէս, ձգձգւում, զարթնում էր:

Դուրս խաւար էր. անաստղ երկինքը սեւ ամպերով կախուել էր վար, երկրի վրայ եւ փափսում էր կտուրների հետ, եւ մարդը քայլում էր ու հեծկլտում:

Նա դժբախտ էր եւ ես դոհ էի. ցաւի եղբայրներ էինք:

ԱՅՆ ԳԻՇԵՐԸ

Ես այնպէս դժբախտ էի այն գիշերը:

Նա ինձ լքեց՝ այն կինը, անսիրտ, անողորմ կերպով լքեց. ներս փախայ շտապով, փակուեցի սենեակումս, որ աշխարհից ծածուկ իմ ցաւն ապրեմ մենակ:

Ցաւի միայնութիւնը:

Դա հսկայ լեռ է կրծքին, որի տակ տնքալ էլ չե լինում: Եւ հողիս միսում էր:

Դուրսը ցուրտ էր ու խաւար. կատաղի քամին անճար, անապատան մուրացիկի պէս յամառ կերպով ծեծում էր իմ լուսամուտը, լիզում էր խոնաւ ապակիները, նվկում էր բացուածքներում, կամ խօլ, այլանդակ ծիծազով՝ քրքջում էր ծխնելոյդի մէջ:

Քամու ձայները մութ գիշերին... երբ վիրաւոր սիրտդ տընքում է, եւ նրա թարմ խոցից արիւնն ընկնում է կաթիլ-կաթիլ, ընկնում է եւ կրծքիդ տակ մի սեւ լիճ կազմում, ուր խեղդւում են քոլոր յոյսերդ ու երազներդ, որի վրայ թեւատարած՝ սաւառնում է մահը:

Վառարանիս մէջ փայտերը վառուում էին ճարճատելով, եւ նրանց մեծ ու փոքր բոցերը, մերթ զեղնակարմիր, մերթ կանաչ, երերում էին, դողդողում, դրսի ձայների ահից մեռնում էին մեղմիւ: Այդպէս մարեցին հոգուս մէջ յոյսերը եւ խաւարը թագաւորեց այնտեղ, մտածում էի ես:

Լամպիս լոյսը կարմիր լուսամփոփի տակ բոսորային ցոլքերով ներկել էր սենեակիս առաստաղը, պատերն ու կահ-կարասին. ամէն ինչ՝ որ երէկ վարդագոյն էր, այս գիշեր լողում էր արիւնագոյն փայլի մէջ: Անդամ անկինների ստուերները բոսորային քող էին առել վրաները եւ առանձնացած ու խեղճ՝ մեղմիւ փիբս-փլսում էին արիւնագոյն ցոլքերի հետ՝ չորս կողմից ինձ վրայ սնկած սեւ անլոյս աչքերը: Ե՛ւ դրսի հողմը, որ նվկում էր ու լալիս, ե՛ւ երերուն բոցերը, որոնք դողդողում էին ու հանդչում խուսափող կեանքերի պէս, ե՛ւ վախլուկ ստուերները, եւ մանաւանդ այս արիւնագոյն առարկաները, ամէնքը ասես իրար հաս-

կանում էին, այն գիշերուայ գաղտնիքը գիտէին, հեղնում էին ինձ, ապրում էին մի կեանքով, որ գուրս էր ինձանից, որ իմ դէմ էր:

Այն գիշեր ես խորթ էի իմ յարկի տակ ու մերժուած:

Վառարանի առաջ նստած՝ նայում էի կրակին, եւ սեւ մտքերով ծանր զլուխս քաշ էր ընկել կրծքիս: Իմ կեանքի ուղին յանկարծ մթնեց. ես պէտք է մեկնէի, հեռանայի այս տեղերից, որ էլ նրան երբեք չհանդիպեմ: Ինձ թում էր, թէ ես նրան պատահելիս կարող եմ սպանել. կը սպանեմ առանց տատանուելու եւ յետոյ անհնարին սարսափից ու սիրուց կը քրքջամ ու կը հեկեկամ՝ վազվելով փողոցներում:

Նա ինձ այնպէս անսիրտ կերպով մերժեց: Վերջին տեսակցութեան ժամանակ նա ասաց, թէ ինձ այլեւս չի սիրում, ճի՛շտայն եղանակով, ինչպէս ճաշի ժամանակ կարող էր ասել, թէ «ես սալաթ չեմ սիրում»:

Մենք խօսք էինք տուել իրար յայտնել այդ զարհուրելի ճըշմարտութիւնը, հէնց որ մեղանից մէկն ու մէկի հոգու մէջ մարող կրակի պէս սէրը հանդէէր. բայց եւ այնպէս, երբ նա ասաց ճակատագրական բառերը, ինձ թուաց, որ նա մի սառը պողլատ մինեց կուրծքս եւ հանդարտութեամբ խառնեց՝ իմ անհնարին տանջանքը գիտելով միանդամայն անտարերեք:

«Գնա՞», մեկնիր այստեղից, սիրելի՛ս, աւելացրեց նա, լաւ ես մտածել, ժամանակն ու տարածութիւնը հզօր սպեղանի են վիրաւոր սրտերին, կ'ապրես եւ կը մոռանաս»: Եւ նա կարողանում էր խօսել այսպէս, երբ ես հեկեկում էի ու չանդուում կուրծքս եղունդներով: Դէմքը պաղ մարմարի պէս, աչքերը անյոյզ, ճայնը հանդարտ. եւ էլլի գեղեցիկ էր:

Ինչ զարհուրելի է կինը, երբ դադարում է սիրելուց. նա կամ հրեշտակ է, կամ վագր: Իմ պաշտած էակը մի վագր էր:

Ապօ՛ւշ կեանք, գնալ, կորչել ժամանակի եւ տարածութեան մէջ, գիտակցարար չքանալ... մարդը գրա համա՞ր է ծնւում, աշխարհ գալիս:

Եւ այդ ժամանակն ու տարածութիւնը... դրանց մասին էի մտածում: Ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը ինձ հաւասարապէս անսահման էին թուում, եւ ես հաւատս կորցրած ու թունոտ հոգով, հալածական, մերժուած ու անյոյս գնում էի լողալու անհունի թախծոտ մշուշի մէջ որպէս մի հիւլէ: Տիեզերքն այն գիշեր ինձ հա-

մար զատարկ էր, մնացել էր միայն քամին, մի խենթ քամի, որ փչում էր շղթայաղերծ եղած, մոնչում էր, հեծկլտում, լալիս ու հաջում. նա գալիս էր այն մութ անյայտից, ուր ես զնում էի կորչելու, եւ ես պարզ ու որոշ լսում էի նրա վզզոցի մէջ «դնա՛, հեռո՛ւ... ո՛ւ, առո՛ւ, առո՛ւ, առո՛ւ». խաւարի այդ այլանդակ զառանցանքիդ հոգիս մըսում էր ու դողդողում:

Փչի՛ր, թշուառական խենթ, փչի՛ր, թա՛փ տուր այս հսկայական ցեխի գունդը, թող նա ճաքճքի եւ փշուր-փշուր ցրիւ գայ անսահմանութեան մէջ:

Ես ատում էի աշխարհը, ուր այնպէս դժբախտ էի, ատում էի ամէնքին, ամէն ինչ: Երբ այս երեկոյ շտապում էի տուն՝ սիրած կող շրթունքներից սոսկալի յայտնութիւնը լսելուց յետոյ, փողոցի բոլոր ժապուն, գոհ դէմքերը ինձ զայրացնում էին, իսկ մի պարոնի, որ ուրախ քրքիջով անցնում էր մի տիկնոջ հետ թեւանցուկ, քիչ մնաց մօտենամ եւ ապտակեմ: Նա այնպէս ատելի էր իր երջանիկ դէմքով:

Զզուելի՛ աշխարհ, ուր միայն ես եմ այսպէս դժբախտ, մերժուած, արհամարհուած: Ո՞վ է բաժանում բախտերը, մի՞թէ մի էակ, որ սիրտ ու գութ ունի:

Դուռս կամցուկ բացուեց եւ ներս մտաւ մի տասն-տասներկու տարեկան փոքրիկ տղայ՝ ձեռքին թղթի մէջ փաթաթուած մի բան: Կարմիր լոյսով շացած՝ նա կանդ առաւ դրան մէջ եւ աչքերը տպապացնելով նայում էր իր շուրջը: Բատ երեւոյթին շոփուուած էր եւ վախենում էր բռնուած թռչնի պէս:

Ես դժոռն էի, որ իմ մտքերն ու միայնութիւնը խանգարեցին:

— Ի՞նչ ես ուղում:

Նա լուռ էր:

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուղում, կրկնեցի հարցս զայրացած:

Նա աւելի շփոթուեց. վիզը ձգձգեց յետ ու առաջ, թուքը կուլ տուեց:

— Այս տուին... ասին, տա՛ր պարոնին, ա՛յ բերեցի...

Նա մեկնեց ձեռքի փաթեթը:

— Ո՞վ տուեց, ի՞նչ, ապո՛ւշ երեխայ:

— Զգիտեմ, խազէյինն ասաց տա՛ր, տուր պարոնին. մի տիկին եկաւ առաւ, այն, որ ձեզ հետ զալիս էր առաջ:

Նա՛ է, ճրաժեշտի փունջն է ուղարկել, վա՛գր... թաթերի մէջ արիւնոտ սիրտս բռնած՝ զուարճանում է, անողո՞րմ, անո-

զո՞րմ, մոմոացի ես եւ կրկին գլուխս քաշ ընկաւ կրծքիս. լուռ էր սենեակումս, միայն վագուող փայտերն էին ճարճատում, դալարում ու բոց արձակում:

Մանուկն իր տեղումն էր:

— Տո՛ւր ինձ այն, ասացի առանց տեղիցս վեր կենալու:

Մանուկն անշարժ էր:

— Տո՛ւր ինձ, չե՞ս լսում:

Նա շարունակում էր անշարժ մնալ:

Ես վրդովլուած ոտքի թռայ. մօտեցայ. նա յետ-յետ քաշուեց ու կծկուեց դրան առաջ:

Խենթ է երեխան, մտածեցի ես, խլեցի ծաղկեփունջը, վետեցի, ձգեցի յատակի վրայ եւ տրորեցի ոտքերով:

Նայեցի երեխային. նա կանգնած տեղում դողում էր եւ աշխատում էր դուրս ընկնել:

— Ինչո՞ւ ես փախչում:

— Վախենում եմ:

— Ինչո՞ւ ես վախենում:

— Կը ծեծե՞ս, այնտեղ, երբ դլխաւորը զայրանում է, ծեծում է, դու էլ զայրացած ես...

Ես մնացի կարկամուած ու ամօթահար, զայրոյթս վայրկենադէս իջաւ. ահա մի զժբախտ արարած, որ հաւատացած է, թէ ով ուղի՝ իրան կը ծեծի...

Մօտեցայ եւ քաղցրութեամբ բռնեցի նրա ձեռքը. նա դողում էր:

— Մըսո՞ւմ ես:

— Հա՛, դուրս շատ ցուրտ էր, ես միշտ մըսում եմ:

— Մօտեցի՛ր, տաքացի՛ր:

Նա չհամարձակուեց: Ես քաշեցի նրան կրակի առաջ եւ այժմ միայն նայեցի ուշադրութեամբ: Նա հազած ունէր հասակաւորի մի իւղու, կարկատած բաճկոն, որի մէջ նրա վտիտ մարմինը բոլորովին կորել էր. տանջուած գէմքը դեռ մի բան պահել էր մանկական թարմութիւնից, բայց աչքերի տակ եւ շրթունքների շուրջը ցաւոտ դժեր կային, աչքերի մէջ ամէն ինչ մարել էր եւ մնացել էր միայն անճար վախի զգացմունքը: Նա երեւի սաստիկ վախենում էր, որովհետեւ երբ ես որեւէ անմեղ շարժում էի անում, նա ինքնապաշտպանութեան բնազդով շտապում էր ձեռքով գըլ-խին հովանի անել՝ սպասելով հարուածին: Նրա իւրաքանչիւր

աչքի տակ, այտի վրայ մի մի կաթիլ արցունք կար կախուած, որ փայլում էր լոյսի ցոլքերի տակ: Նա իր վտիտ կեղոստ ձեռները տարածեց կրակի առաջ եւ շրթունքներն ուռցրած՝ տաքանում էր, աչքը չհեռացնելով ինձանից, ծեծուած կապիկի պէս:

Ես նայում էի նրա արցունքին:

— Դու լալի՞ս ես:

— Զէ, չեմ լալիս... ինչո՞ւ լամ:

Նա աջ թեւով սրբեց աչքերը, բայց մի վայրկեան յետոյ երկու ուրիշ կաթիլներ նոյնքան փայլուն եւ նոյնքան խոչոր, հոսեցին աչքերից եւ սառեցին նոյն տեղում: Նրանց աղքիւրն անսպառ էր. մանուկը առանց իմանալու լալիս էր անվերջ:

Ես դարձեալ նայում էի այդ դոյդ արցունքին, իսկ դրսում լուսամուտիս տակ, ծիսնելոյզի մէջ քամին շարունակում էր հեծեծալ «առ՛ւ, առ՛ւ, առ՛ւ...» եւ բոցերը դողդողում էին, կըծկըւում ու բացում, եւ ստուերները անկիւնում փսփսում էին:

Այժմ աւելի եւ աւելի յիշում էի այդ երեխային. քանի անդամ եմ տեսել նրան, երբ ծաղիկ էի գնում. մի անդամ էլ նրա հետ երկար ծիծաղում էինք ծաղկավաճառի խանութի այս փոքրիկ աշակերտի վրայ, որովհետեւ խիստ ծիծաղելի կերպով գլուխը փաթթել էր մի դունաւոր լաթով. ինչո՞ւ էր փաթթել, մենք չիմացանք, բաւական է որ նա ծիծաղելի էր, մենք էլ այնպիսի խենթ պահանջ ունէինք ուրախութեան, ծիծաղի, մենք այնպէս սիրում էինք իրար, այնպէս երջանիկ էինք:

— Լսի՛ր, դու մի օր գլուխդ կապել էիր անցեալները:

— Հա՛, պատուած էր, արին էր դալիս:

— Ո՞վ էր պատոել:

— Մեր գլխաւորը. նա ամենայն օր ինձ ծեծում է:

— Դրա համա՞ր ես միշտ լալիս:

— Զէ, ես չեմ լալիս, առաջ լալիս էի, հիմա էլ չեմ լալիս, ծեծում է, բայց չեմ լալիս: Եւ նա փորձեց ժպտալ, որ ծեծում են ու չի լալիս:

— Այսօ՞ր էլ են ծեծել:

— Այսօ՞ր... հա՛, ի հարկէ, ինձ ամէն օր ծեծում են, բայց այսօր լաւ էր, բռունցքով խփեց մէջքիս, ա՛յ այսպէս (նա ցոյց տուեց բռունցքները). շատ չցաւեց, անցեալ օրը ոտքով խփեց, շատ ցաւեց. դիտե՞ս,— շարունակեց նա աւելի եւ աւելի վստահացած, — նրա կօշկի ծայրը սուր է, որ կպչում է, շատ է ցա-

ւում, երբ մի կողմ եմ քաշւում, չի կպչում, նա վրայ է հասնում, բռնում, պառկեցնում է, յետոյ վերցնում է ոտներիցս ու ձեռներիցս, բարձրացնում է, յետոյ զարկում յատակին՝ թըրը՛փ, թըրը՛փ. յետոյ մէջքս այնպէս է ցաւում, այնպէս է ցաւում. յետոյ ես ճչում եմ պի՛նդ, պի՛նդ, նա թողնում է. գիտե՞ս, երբ ճչում եմ, միշտ թողնում է. ախր վախենում է, որ մեռնեմ. որ մեռնեմ, նրան կը բռնեն:

Նա կրկին ժպտաց, որ իր տէրը վախենում է, երբ ինքը ճչում է ցաւից, եւ եթէ մեռնի ծեծի տակ, իր դահճին կը բանտարկեն:

— Ինչո՞ւ չես դուրս գնում այլտեղից:

— Ո՞ւր գնամ, ինձ հաց են տալիս, ա'յ, չոր են տուել. նա ցոյց տուեց իր ահազին բաճկոնը. մի անդամ վախայ, մայրս էլի յետ բերեց, ասաց՝ տեղ չկայ, ես դռներում լուացք եմ անում, քեզ ի՞նչպէս պահեմ, յետոյ լաց եղաւ. ես միայն մայր ունիմ, որ վախչեմ, էլի լաց կը լինի. մնում եմ, ծեծում են, շատ են ծեծում:

Նա լուեց եւ շարունակում էր ձեռքերը հանդարտ տաքացնել շրթունքներն ուղցնելով ու փչելով: Ես էլ ամէն բան մոռացած՝ մտախոհ նայում էի այս փոքրիկ դժբախտ արարածին, որ արիւնագոյն լրյուղ ողողուած՝ նկարագրում էր իր անծայր ցաւը, իր կրած տանջանքները մի կտոր արիւնոտ հաց ձեռք բերելու համար: Մարմնացած տառապանքն էր կանգնած իմ առաջ. ի՞նչ էր իմ սեփական վիշտը նրա կրածի հանդէս. այդ մանուկը մի հսկայ էր, եւ ես մի դաճաճ, մարդակեր աշխարհի առաջ նա մի անպաշտապան զոհ էր, որի բոլոր զինքը մնացել էր մի գերբնական համբերութիւն կրելու ցաւը, ատամներն իրար վրայ սղմած փշրելու չափ: Ահա թէ ո՞վ է ծաղիկ պատրաստում մեր հաճոյքի, մեր զուարճութեան համար. ահա թէ ո՞ւմ փշրուած, արիւնոտած ձեռքերն են հիւսում այն ճոխ փնջերը, որոնցով զարդարում են գեղեցիկ կրծքերը: Կեանքը լի է զարհուրելի հակասութիւններով. ինչե՛ր ունի նա թագցրած իր անծայր խորչերում. հոտած, շարաւալից մարմին է նա, գարշահոտ պալարներով, ուր ճիճուներ են եռում իրար գալարուած, իրար կծելով եւ արիւն ու թոյն են ծծում: Իմ խոհերն ընդհատեց երեխայի ձայնը.

— Ի՞նչ կարմիր է ձեր լոյսը, կ'ասես արիւն լինի. գիտե՞ս, էն օրը թքեցի այնքան արիւն եկաւ. նա բռնեց, գլուխս պինդ զարկեց պատին, յետոյ արիւն եկաւ, աչքերս շաղուեցին, լոյսը այս-

պէս տեսայ, ա'յ, այս լամպի լոյսի պէս, կարմիր, կարմիր. ի՞նչ կարմիր է : Եւնա կը կին ժաղաց, որ իմ սենեակի լոյսը արնադոյն է եւ նրան յիշեցնում է իր սեփական արիւնը : Դարձեալ լուռ է-ինք :

— Ա'յ, այ, այ,— բացականչեց երեխան յանկարծ՝ վառարանից հեռանալով,— ես ինչպէս ուշացայ, հիմա ինձ էլի կը ծեծեն, դուրսն էլ քամի է, ցուրտ :

Նա դիմեց դէպի դուռը :

— Կա'ց, ի'մ փոքրիկ, կա'ց, ես դալիս եմ քեզ հետ, չեմ թողնի, որ ծեծեն :

Շտապով հագայ վերարկուս, դլխարկս վերցրի, մի արծաթ դրամ տուի երեխային, նա նայեց ամիկ մէջ, ժաղաց եւ ուրախացած առաջ անցաւ : Մենք դուրս եկանք :

Դուրսը դժոխսք էր, քամի ու ձիւն . նա վազում էր բոլորովին մօտիկ իմ յետեւից՝ քամուց պաշտպաննուելու համար . ծաղկավաճառի խանութը հեռու չէր. այնտեղ մեր առաջ ցցուեց մի փոքրիկ մարդ, փոքրիկ դլխով, կապոյտ, պլստան աչքերով եւ այնպիսի խղճուկ, մեղմ դէմքով, որ կարելի էր կարծել, թէ նա մարմնացած բարութիւն է :

Նոր չէի տեսնում նրան, բայց եւ այնպէս նա այսօր ինձ առանձնապէս անմեղ ու խեղճ թուաց : Մի՞թէ հնարաւոր է այս փոս ընկած, ողորմելի կրծքի տակ մի դաղանային սիրտ . սա ի՞նչ զարհուրելի հակասութիւն է, մտածում էի ես, մինչդեռ մարդուկը կանդնած էր իմ առաջ՝ ձեռքերը յետեւը դրած եւ պլստան աչքերը մէկ ինձ, մէկ փոքրիկ երեխայի վրայ դարձնելով :

— Լսի՛ր, դու ինչո՞ւ ես ծեծում այս խեղճ երեխային :

— Ե՞ս, նրա՞ն . . . նա այնպէս անպիտան ստախօսն է,— պատասխանեց մարդուկը առանց յուրզմունքի . . . դուք էլ հաւատացել էք. ա'յ, այսպէս, ուր դնում է, ուշանում է . նեղանում, խըրատում եմ, վա՞տ եմ անում, քանի ժամ է, կորել է, ասացի շուտ արի :

Երեխան կծկուած՝ դլուխ քաշ էր դցել եւ աչքի տակից վախվըխելով նայում էր մերթ ինձ, մերթ իր դլխաւորին : Ես նշմարեցի, որ նա առանց նկատելու կամաց-կամաց մօտենում է ինձ :

— Ա'յ տղայ, ես քեզ ե՞ր եմ ծեծել, դարձաւ մարդուկը սարսափահար երեխային քաղցրութեամբ :

— Նա ինձ չի ծեծել, պարոն . . . իսկի չի ծեծել . . .

Եւ նա կամացուկ ձեռով սրբեց այտերի վրայից զոյդ կաթիլները, կարծես իր գժբախտութեան վկայութիւնը չնշելու համար:

Իր անդօրութեան մէջ ողորմելին ստում էր:

— Ահա հարցրէք, — դիմեց ինձ փոքրիկ մարդը յաղթական կերպով, — ևս նրան երբեք չեմ ծեծել, ինչո՞ւ ծեծեմ, աչքի լոյսի պէս եմ պահում, գուք էլ գալիս էք մարդու վիրաւորում ի զուր տեղը: Այ տղայ, զնա՛ գործիդ, — վերջացրեց նա՝ ցոյց տալով խանութի խորքի գուռը: Երեխան ծածկուեց. ևս մնացի կանդնած, նայում էի այս բարի գէմքով փոքրիկ մարդուն եւ ինքս ինձ հարցնում, թէ ո՞ւր է նա տեղաւորել իր գաղանը, որի հետ վարւում է իր ուղածի պէս, բաց է թողնում, երբ կամենում է, զսպում է, երբ պէտք է համարում: Մինչ այդ նա անտարբերութեամբ վերցրեց ցնցուղը եւ ծաղիկներն էր ջրում: Միշտ բարի, միշտ խաղաղ:

— Լսի՛ր, ևս քեզ յատկապէս խնդրում եմ՝ նրան չծեծես, նա այնպէս գժբախտ է, մենակ, անճար, անտէր երեխայ է:

— Ի հարկէ, ի հարկէ, ևս գիտեմ, մենակ է, լաւ տղայ է, ինչո՞ւ ծեծեմ:

Եւ նա ժպտաց չոր, անողորմ ժպտով: Ես նայեցի եւ գուրս փախայ այդ որչից՝ ինչ անելս չիմանալով: Բայց պէտք էր մի բան անել այլ երեխայի համար. զնում էի, եւ ինձ թուում էր արդէն, թէ լսում եմ նրա աղիոլորմ ճիշն ու հեծեծանքները: Զիւնը թափւում էր քուլայ-քուլայ, քամին վզզում էր կատաղաբար: Տուն դառնալու ցանկութիւն չունէի, քայլեցի ամայի փողոցներով հեռու, հեռու: Քամին բարձրացնում էր ճիւնից փոշու ամպեր, պատում էր շէնքերը, որոնց ստուերագծերը կորչում էին մի վայրկեան, ապա իրանց այս կամ այն կողը կամ կատարը ցոյց տալիս մութ-կաթնագոյն զանգուածի տակից: Լապտերները պլազմում էին անփայլ եւ նրանց ցոլքերը մենուում էին՝ առանց կարողանալու մառախուղը պատուել: Զիւնը ուժով զարկուում էր իմ երեսին, դաղում էր այտերս, ծեծում էր գլուխս, բայց ես քայլում էի ուշացած ճամբորդի պէս, որ մի անկիւն է փնտուում ապաստանելու համար: Երեք պատկերներ փոխ առ փոխ աչքիս առաջ էին. մերթ տեսնում էի նրան իր մարմարէ գէմքով, իր սառը, անողորմ գեղեցկութեամբ, այնպէս ինչպէս նա էր վերջին անդամ, մերթ այն փոքրիկ գժբախտ երեխային, որ ճչում էր չմեռնելու համար, եւ

մերթ այն փոքրիկ մարդին, որ այնպէս բարի արտաքինի տակ ծածկած ունէր մի արիւնարբու գաղան։ Այս երեք պատկերները դժոխային պարով անցնում էին աջքիս առաջից, մինչեւ որ քամու մի կատաղի հոսանք ձիւնի ամպի մէջ պարփակում էր ինձ, ծեծում էր երեսս, գլուխս. ես սարսուում էի, դէմքս ծածկում եւ կանգ առնում մի վայրկեան։ Անցնում էր քամին, և ես քայլում էի վերստին։ Ուշ դիշեր էր, երբ տուն դարձայ։

Դրանը հասնելով՝ ես կանգ առայ քարացած. իմ առաջ աստիճանների վրայ կծկուած էր նոյն երեխան եւ դողդողում, հեծեծում էր ցրտից։

— Ինչո՞ւ ես այստեղ։

— Ծեծեցին ու դուրս արին… դու եկար բարկացար, նա էլ քեզանից յետոյ կօշկի ծայրով այնպէս խփեց, յետոյ թեւիցս բըռնեց, դուրս ձեց ձեան վրայ, ոտքս քերթուեց, արիւն եկաւ… վեր կացայ, կաղալով եկայ այստեղ. ո՞ւր դնամ… տեղ չգտայ՝ մըսում եմ, ցո՞ւրտ է։

Նրա ատամները իրար էին զարկւում, եւ նա դողդողում էր ամբողջ մարմնով, եւ արցունքն աչքերից թափւում էր, թափւում։ Ձեռքից բռնած ներս տարայ. նա դարձեալ կանգնեց վառարանի առաջ իր նախկին տեղը եւ տաքանում էր, յետոյ կարծես ուժասպառ՝ նստեց, գլուխսը քաշ ընկաւ կրծքին, եւ նա խոր քուն մտաւ։ Ես նրան ծածկեցի վերմակով եւ հեռու նստած՝ նայում էի նրա գունատ դէմքին, նրա անհանդիստ կրծքին, ուր ահազին վիշտը դեռ հեկեկում էր՝ ցնցելով նրա փոքրիկ, ջարդուած մարմինը։ Երբեմն-երբեմն նա շարժում էր ձեռքը կամ ոտքը, կծկում ու ճում «ո՞ւ, ո՞ւ»։ նա լալիս էր երազի մէջ, իսկ քամին դրսից պատասխանում էր նրան՝ «առ՞ւ, առ՞ւ, առ՞ւ»…

Դժոխքի՛ զիշեր։

Մէկը սէրն էր կորցրել, միւսը իր հացն ու ապաստանը, երկը-սով էլ մէրժուած, երկսով էլ սեւստոր ու դժբախտ։

Մի՞թէ երկինքը նզովել է սէրն ու հացը, որ երկուսն էլ արիւնով ու արցունքով շաղախուեն։ Այս երեխան էլ մի բուռն սիրոյ ծնունդ է գուցէ, եւ կոյս շրթունքների բոց համբոյրից թուած կայծն է ապրում ե՛ւ սրա հողում։ Ծնուել է եւ սողում է աշխարհում, ծեծում է, արցունք է քամում միայն կշտանալու համար։

Նզովուա՛ծ սէր, որ աշխարհը լցնում է արցունքով ու հեծեծանքով, որ ծնում է կոյր ճակատագրի պէս, եւ քաղցած միլիոն-

ները ոռնում են մի կտոր հացի համար եւ տրորում են իրանց դաւարուող ազիքները։ Այն սեւ գիշերին ինձ համար ամէն ինչ կորաւ, ե՛ւ սէր, ե՛ւ խինդ, ե՛ւ խենթ յոյզեր, ե՛ւ վառ երաղներ, եւ բոլորի տեղ մնաց միայն մի սեւ անդունդ, ուր դալարւում էր ցաւը հազարդլիսեան վիշապի պէս, եւ նրա մութ զանդուածի վրայ փայլուն կէտերը լոկ արցունքներ էին բիւրաւոր մարած աչքերի։ Նայում էի այդ անդունդին, ուր թաղուեց նաեւ իմ գեղեցկուհին՝ տանելով իր հետ իմ նզովուած սէրը, որի փոխարէն անդիտակցաբար ինձ ուղարկել էր այս դիշեր իմ մերձաւորի ցաւը։ Այն մութ անդունդի պէս այժմ խաւար էր իմ հոգում, եւ վիշաը եռում էր սրտումս, խեղղում էր կոկորդս։ Եւ յանկարծ ուռած կուրծքս փուլ եկաւ մէկէն ինչպէս վարարած գետի աւերած պատուարները, եւ յորդ արցունքները թափուեցին աչքերից։ Զղիտէի, թէ ո՞ւմ համար եմ լալիս, ի՞նձ, այս երեխայի՞, թէ՞ տառապող աշխարհի, որ սիրում է, ծնում եւ լալիս։

Երեխան շարունակում էր քնի մէջ ցնցուել ու նվլալ՝ «ո՞ւ, ո՞ւ...», քամին դրսում կատաղօրէն մոնչում էր ու հեծեծում՝ «աո՞ւ, աո՞ւ, աո՞ւ...» ողջ տիեզերքը լի էր ցաւի անհուն ճիշերով, որոնք ամէնքը միասին նզովում էին ե՛ւ սէրը, ե՛ւ ծնունդները, ե՛ւ աշխարհը։

Քաղցածների հսկայական երգն էր այն ուշ գիշերին։

ՄԵՆՔ ՍՈՂՈՒՄ ԵՆՔ

ԲԺԻՇԿԸ գիրքը փակեց եւ վեր կացաւ. ժամի հինգն էր՝ հիւանդներ ընդունելու ժամանակը:

Գոհ ու երջանիկ՝ նա սկսեց հանդարտութեամբ դնալ-դալ իր առանձնասենեակում. քայլուածքը, շարժումները գեղեցիկ էին եւ ինքնավտահ: Երեւում էր, որ նա զեռ կարդացած զրքի տպաւորութեան տակ է. մտախոհ չէր, այլ երազուն: Դէմքն արտայայում էր այն երջանիկ տրամադրութիւններից մէկը, երբ մարդ մտածում է հաճելի բաների մասին, բայց ուղեղը չէ աշխատում, միտքը չէ տանջւում, երեւակայութիւնն է միայն, որ իրար ետեւից քաշում, բերում է մէկը մէկից սիրուն պատկերներ՝ որպէս գոյնզգոյն թիթեռների մի խայտաբղէտ, ակնապարար երամ եւ խաղում է նրանց հետ, ինչպէս երեխան կը խաղար արեւի շողերի հետ:

Եւ այդ պատկերները... անձնական երջանկութեան, իր փոքրիկ, գծուձ եսի շուրջը դարձող երեւոյթներ չէին, նրանք գալիս էին հեռուից, այնքան հեռու, որքան կարող է թափանցել մի վառ երեւակայութիւն անյայտութեան մշուշի մէջ: Բժշկի մէջ այդ ժամին խօսաւմ էր հաւատը դէպի տպապող մարդու սեւ ճակատագրի փոփոխութիւնը, նա երազում էր այն երջանիկ ժամանակները, երբ գիտութիւնը կը ջնջէ ցաւն աշխարհից, երբ իւրաքանչիւր թարմ հողաթումբ էլ չի ներկայանայ որպէս մարդկային մտքի անզօրութեան եւ ամենակարող մահուան յաղթանակի մի արտասուելի կոթող:

Նա միշտ հաւատացել էր գիտութեան յարաճուն զօրութեանը. այդ հաւատը նրա բնաւորութեան մէջ էր, խառնուածքի մի մասն էր, մի տեսակ բնազդ էր, անընկճելի ու գեղեցիկ, որ առանձին փայլ ու յանդզութիւն էր տալիս նրա բժշկական գործունէութեանը, անդամահատական շատ անդամ վտանգաւոր գործողութիւններին: Եւ այդ ժամերին իր դանակի տակ գալարուող ու ցնցուող միսը նա չէր տեսնում, իր բոլոր աշխատանքը, մտահոգութիւնը կարծես անմիջական զոհի ցաւերը մեղմելու համար չէին, այլ մի ուրիշ, աներեւոյթ էակի, այն զարմանալի հըսկայի, որի անունն է ցաւադար մարդկութիւն: Անհատն ի՞նչ արժէ, երբ տեսակը պէտք է փրկել: Եւ այդ անհատները գունատ

իրականութեան մէջ մեծ դաղափարի ճանապարհի վրայ դիսպուտներ էին միայն. բժիշկը հեռուն էր տեսնում, չափազանց հեռուն. նա մի զօրապետ էր, որ քայլում էր դիմակների վրայից դէպի յաղթութիւն: Ահա' թէ ինչու նա երբեք չէր ճանաչում իր դանակի տակից անցած հիւանդներին: Եւ ի՞նչ հրճուանքով էր դործի կենում ամէն անզամ, երբ նրան ներկայացնում էին մի հետաքրքիր հիւանդ, ախտաբանական մի առանձին նմուշ, որ կարծես դիմութեան սիրուն՝ կեանքը դնում էր նրա առաջ եւ առում՝ «ա՛ռ, կտրտի՛ր, նայի՛ր եւ թող ապազայ մարդկութիւնը երջանիկ լինի»:

«Եւ կը լինի, կը լինի», մըմնջում էր բժիշկն այժմ անցուգարձ անելով իր սենեակում, «յաղթանակը մերն է», աւելացը նում էր նա չփելով ձեռները:

Նոյնն էր ասում նաեւ սեղանի վրայ ընկած այն հաստ դիրքը, որ իր մեծութեամբ եւ պարունակութեամբ իշխում էր իր շուրջը թափթիած բոլոր միւս առարկաների վրայ, եւ որի լեզուն միայն ինքն էր հասկանում, ինքը՝ բժիշկը: Նոյնն էին ասում եւ այն բաց, վսեմ ճակատները, այն խորաթափիանց աչքերը, որոնք հինաւուրց աստուածների խորհրդաւոր, ճնշող լոսութեամբ պատերի վրայից այժմ խօսում էին մաքի երկու հազար տարուայ պատմութիւնից: Քանի՛սն էին... Ամպեղօկլից մինչեւ Պատոր, չըքնա՛ղ գլուխներ...

«Իմ վարդապետները, իմ քրիստոները» — շնչաց բժիշկը, աչք ածելով պատերին եւ մեքենայաբար մօտեցաւ, մէկիկ մէկիկ նայում էր նրանցից իւրաքանչիւրին եւ կարծես ճգնում էր նրանց ճակատների վրայ, աչքերի մէջ կարդալ այն, ինչ չեն կարողացել ասել այդ փրկարար շրթունքները:

Եւ զբառում, փողոցում կեանքը, ինչպէս միշտ՝ եռում էր իր ամենօրեայ թափով: Մարդկի գնում, գալիս էին, աշխատում, տքնում, իւրաքանչիւրը հնազանդ իր ճակատագրին: Բժիշկը թողեց իր երազներն ու իր քրիստոներին եւ մօտեցաւ լուսամուտին: Նրա դէմ ու դէմ՝ փողոցի հակառակ կողմում մի տուն էր շինում, եւ այնտեղ աշխատում էին բազմաթիւ բանուորներ: Նրանցից մի քանիսը մի հաստ գերան ուսերին՝ տնքալով բարձրանում էին ժամանակաւոր սանդուղներից, ուրիշները յամբար եւ հեւալով աղիւսներ կամ կիր էին վեր հանում, ոմանք աշխատում էին պատերի վրայ կուցած, ոմանք շինութեան ճակատից կախ-

ուած, իսկ մի քանիսն էլ խոնաւ գետնի վրայ նստած՝ միակերպ հարուածներով քար էին կոփում՝ թըրը՛խկ, թըրը՛խկ, թըրը՛խկ...

«Ե՞րբ կը վերջանայ այս անիծուած չէնքը», մռմռաց բժիշկը սրտնեղութեամբ: Այդ ազմուկը, որ սկսւում էր ամէն օր առաւոտեան ժամի վեցին եւ վերջանում ուշ երեկոյեան, նրան սաստիկ ձանձրացնում էր ու զայրացնում: Եւ եթէ բժիշկը երբեմն նայում էր դիմացի շնուռող տանը, այդ միայն իմանալու համար, թէ որքան է առաջ գնացել շինութիւնը: Այլապէս նա չէր սիրում տեսնել այդ բիրտ իրականութիւնը, այդ գալարուած թիկունքները, այդ սեւացած մազոտ բազուկները, այդ անյոյդ, սառած, ընկճուած դէմքերը: Պատկերը վհատեցուցիչ էր ու տգեղ, նա ոչինչ չէր ասում իր մեծ գաղափարին ու հաւատին: Ամենօրեայ բիրտ կեանքի անխուսափելի գարցութիւնն է այն, որ քայլայտում, լուծում է իր սեփական քրտինքի մէջ եւ անցնում անհետ, մտածում էր բժիշկը: Եւ նրա հայեացքը կանդ առաւ մի հոյակապ բանուորի վրայ: Դա մի հարուստ մարմնակաղմ էր, յաղթ բազուկներով, կարող կրծքով ու թիկունքով, ջլուտ, հաստատուն ոտներով եւ հնազանդ ու մեղմ դէմքով: Նրա թիկունքին դրեցին մի ահաղին քար. ծանրութեան տակ բանուորի իրանը կուացաւ, պարանոցը ձգուեց առաջ ու կարմրեց, ոտները մի վայրկեան դողդողացին, բայց նա պահեց իրան, մի բան մռմռաց ու շարժուեց առաջ: Նրա ոտների տակ տախտակները ճռճռում էին ցաւով, ինքը հեռում էր ու տնքում, բայց եւ այնպէս բարձրանում էր աստիճաններով վեր, վեր: Բժշկին հետաքրքրեց ու զբաւեց այս տեսարանը. առաջին անդամ շաբաթներից ի վեր նա նայում էր իր լուսամտից ուշադրութեամբ ու սիրով:

«Հիանալի՛ է», բացականչեց նա, երբ բանուորը իր բեռը հասցրեց չէնքի ամենաբարձր մասին, «Հիանալի՛ է, ոյժ, առողջութիւն եւ աշխատանք, երեք հրաշագործ զօրութիւններ մի հատ մարդու մէջ. գեղեցի՛կ է, կեանքի հմայքն է սա»:

Աւելի հեռուն, կառուցուող չէնքից այն կողմը մի կառք էր անցնում փողոցով, բայց աջ կողմի սեւ ձին խրանել էր մի բանից. ծառանում էր յետին ոտների վրայ, փրփրում ու փնչացնում եւ ոչ մի կերպով առաջ գնալ չէր կամ ենում: Կառավանը կատաղած՝ ձգձգում էր երասանակները, հայհոյում էր ու անիծում, նրա երկայն մտրակը խաղում էր օդի մէջ՝ ապա շրակալով իջնում վախե-

ցած կենդանու թիկունքին : Վերջապէս կառքը թափով սլացաւ, կառապանը մի վերջին անգամ կատաղաբար ճօճեց մտրակը եւ մի ուժգին հարուած տուեց փողոցի ցեխերի մէջ նստած մարդուն հայհոյելով .

— Դէ՛, ա՛ռ քեզ, հը, շան պէս թաւալ է տուել ցեխերի մէջ, կ'ասես հօր տունը լինի, տեղը կտրուել է դլսին, ձին խրտնում է, քիչ էր մնում կառքս փշուր փշուր անի :

Ա՛յս էլ հետաքրքիր էր . բժիշկը ամէն բան մոռացած՝ ուշողութեամբ հետեւում էր այս տեսարանին եւ զարմացած նը-կատեց, որ դետնի վրայ նստած մարդը մտրակի հարուածի տակ տեղից չշարժուեց, յետ չնայեց, ձայն չհանեց, չբողոքեց :

«Անդպայ թշուառական, մտածեց բժիշկը, եւ տեղն է . մուրացկանութիւնը նոյնպէս կեանքի զարշութիւնն է, նրա վրայի շարաւոտ պալարն է, աշխատա՞նք, աշխատա՞նք» :

Բայց մարդը նստած էր միեւնոյն տեղում անշարժ, գլխաբաց, թիկունքը դէպի փողոցը եւ երեսը դէպի մայթը դարձրած : Գլուխը յուսահատօրէն կրծքին կախած, պարանոցը ուսերի մէջ քաշած՝ նա իր աղտոտ ցնցոտիներով դետնի վրայ կաղմում էր մի նողկալի կոյտ, որ կարծես աղբատար սայլը զանց էր առել :

Ուշ աշուն էր, մթնոլորտը խոնաւ ու ստոն, երկինքը լալկան ու մրսկան : Փողոցի ծառերի դեղնած տերեւները առանց քամու՝ ինչպէս կեանքից յոդնած, ճանձրացած էակներ, մեղմիւ սղոկւում էին ոստերից, եւ մանրիկ պտոյտներով ու թեթեւ սլոցով ընկնում ներքեւում նստած մարդու բաց դլսին, խառնւում էին մազերին, շարւում ուսերին, ասես, կամացուկ փսփսում էին նրա ականջին անխուսափելի, անողոք մահուան խորհուրդը՝ նրա հետ իրանց անդարձ կորուստը լալու համար : Բայց մարդը շարունակում էր անշարժ նստած մնալ, գլուխը քաշ, մէջքը աղեղնաձեւ երկու տակ ծալուած եւ երեսը միշտ դէպի մայթը, որտեղից անցնում էին այնքան երջանիկ ոտներ, մաքուր, պապղան կօշիկներ :

«Գարշելի՛ է», մոմոաց բժիշկը, երեսը դարձրեց լուսամուտից, մօտեցաւ սեղանին, բացեց նոյն հաստ դիրքը, կրկին խորասուզուեց ընթերցանութեան մէջ : Նա մերթ ընդ մերթ դլուխը բարձրացնում էր, ճակատը շիռում ձեռքով, աչքերը յառում այս կամ այն մեծ վարպետի պատկերին, ապա շարունակում կարդալ . այնքան խելացի, այնքան սիոփիչ, քաջալերիչ բան կար

այդ մի հատիկ գրքի մէջ, մի ամբողջ աշխարհ : Դուռը կամացուկ բացուեց . ծառան էր :

— Պա՛րոն, հիւանդ կայ :

— Թող ներս գայ :

Բժիշկը գիրքը փակեց, ոտքի կանգնեց եւ նորից սկսեց քայլել նոյն ինքնազոհ, երջանիկ տրամադրութեամբ : Դուռը կրկին բացուեց, այս անդամ ներս մտաւ մի տարօրինակ արարած : Յեխիռ ու աղքի մէջ կորած մի տանջուած մարդ էր նա, որ որքան արգահատելի էր, նոյնքան էլ անախորժ իր այլանդակ արտաքինով : Այդ անարդուած, տրորուած խեղճութեան վրայ սակայն իշխում էր մի դէմք, դառնացած ու թունոտ, որի վրայ երկար ձմեռների մոայլ, անշող, երկնքի պէս, վաղուց էր գաղարել ժպիտը : Անփայլ ու խոր ընկած աշքերը՝ յօնքերի հովանու տակ թաղուած, նմանում էին առկայժող ճրագների, եւ նրանց վրայ արագ արագ իշխում էին կոպերը, կարծես վերջին կայծը բորբոքելու համար : Եւ այդ մարդը միայն մի հատիկ ոտք ունէր, որ ցցի պէս տնկել էր յատակին, իսկ միւս ոտքի տեղ նրա իրանից քաշ էր ընկել անճունի կոճղի պէս ազդրի փոքրիկ մնացորդը, որ նողկալի կերպով տարուբերում էր ամէն անդամ՝ երբ մարդը մի չնչին շարժում էր անում : Մարմնի հաւասարակշութիւնը պահպանելու համար նա ստիպուած էր մի ձեռքով յենուել մի հաստ դաւագանին, որ նրան ծառայում էր կտրուած ոտքի տեղ :

Մարդը մտաւ, բայց չառաջացաւ, կանգնած մնաց դրան մօտ՝ ասես վախենալով աւելի հեռուն, դէպի սենեակի խորքը տանել ցնցոտիների եւ կեղտի իր բեռը : Բժիշկը անշարժ նայում էր այս տարօրինակ այցելուին եւ ըստ երեւոյթին զարմացած էր . անծանօթի արտաքինը նրան լաւ բան չէր ասում : Բաւական ժամանակ երկսով էլ լուռ էին . նայում էին իրար քննող հայեացքով :

Առաջինը խօսեց բժիշկը :

— Ի՞նչ ես կամենում :

Պատասխանը մի փոքր ուշացաւ . բժիշկը սպասում էր աճող անհամբերութեամբ . մարդը շարունակում էր լուել եւ շեշտակի նայել բժշկին :

— Ի՞նչ ես կամենում, ի՞նչով ես հիւանդ :

— Ես . . . ոչինչ, չէնց այնպէս մտայ, փողոցից տնցաք այս առաւօտ, տեսայ . . . եկայ մի փոքր զրոյց անելու . . . մենք հին ծանօթներ ենք . . . այնպէս չէ :

Բժիշկը յօնքերը կիտեց, մռմռաց, զանգը տուեց եւ ծառան ներս եկաւ:

— Կանգնի՛ր այստեղ, հրամայեց նա ծառային: Այցելուի պատասխանը չառ էր տարօրինակ. նա յամենայն դէպս խոհեմութիւն համարեց ծառային իր մօտ ունենալ: Ապա կըկին դարձաւ իր այցելուին.

— Ես քեզ հարցնում եմ՝ ինչո՞ւ համար ես եկել ինձ մօտ: Վերջին բառերը բժիշկն աբտասանեց մէկիկ մէկիկ եւ սրտնեղած:

— Ես եկայ... այսինքն եկայ փողոցից, որ ասեմ...

«Հը, հը, շո՛ւտ, թըրը՝ իսկ...» լսուեց դրսից շինութեան վըրայ աշխատողների ճայնը. այնտեղ մի քանի հոգի մի մեծ դերան բարձրացրին եւ վար ձգեցին շառաչիւնով:

— Ա՛խ, թշուառականներ, մռմռաց բժիշկը, ոչինչ չեն թողնում հասկանալ:

— ...Եկայ, որ ասեմ, շարունակեց մարդը, ախր, բժի՛շկ, իմ այս ոտքը գուք էք կտրել:

— Ե՞ս:

— Հա՛, դուք:

— Զեմ յիշում, կարող է պատահել:

— Զէ՞ք յիշում... տարօրինակ է... մի ամբողջ ոտք, կենդանի միս ու ոսկոր՝ եւ չէք յիշում... իսկ ես յիշում եմ, շարունակեց նա մի ժպիտով, որ բժշկին դուր չեկաւ. հա՛, ես լաւ եմ յիշում... կտրեցիք. երբ աչքերս բացի, ձեր ձեռքի մէջ բռնած՝ նայում էիք եւ ասացիք՝ «լաւ ոտք ունիր անիծածը»... եւ յետոյ դէն դցեցիք. իմ մի մասն էր, մարմնիս մասը, կարեւոր մասը, այնպէս չէ՞՝, բժիշկ... դէն դցեցիք, ինչպէս անպէտք, փշրուած իր. պատից ընկայ, շինութեան պատից, փշրուեց... ոսկորների սուր կտորները դուրս էին ցցուել կաշու տակից սուր-սուր... յետոյ դուք կտրեցիք, դէն ցպրտեցիք: Զարմանալի է... մի ամբողջ ոտք, մատ չէր, մի ամբողջ ոտք, ա՛յ, այս կիսատ ոտքիւ մասը եւ... չէք յիշում, զարմանալի է. ես կարծում էի, որ դուք կտրելիս... դէ մարդ, ախր, սիրտ կայ... այնպէս լացս է դալիս ինքն իրան, ուրիշիւ...

— Լաւ, ընդունենք, թէ յիշում եմ, ես եմ կտրել քո փշրուած ոտքը, յետոյ յ...

— Յետոյ այն . . . չնեղանաք, դէ ես ուղում եմ արդար բան ասել. յետոյ այն, որ դուք անողորմ . . .

— «Քաշի՞ր, հը՞ւ, թրե՞խկ, շըրե՞խկ, գը՞ռոռ», լսուեց դըրսից :

— Ա՛խ, վայրենիներ, զայրացաւ բժիշկը, ի՞նչ ասացիր :

— . . . դուք անողորմ ու չար մարդ էք, չար ու անսիրտ :

— Գժուե՞լ ես, նոյն օրը շանսատակ կը լինէիր, եթէ չկտրէի, ես չա՞ր մարդ եմ :

— Հա՛, հա՛, չար մարդ, անողորմ մարդ, ի դուք կտրեցիք իմ ոտքը, ի դո՞ւք . . . շանսատակ կը լինէի, աւելի լաւ, իսկ ա՛յժմ . . . այժմ էլ շանսատակ լինում եմ, սիրելի՝ բժիշկ, այժմ էլ եմ մեռնում . . . վայրկեան առ վայրկեան, ժամ առ ժամ, մաս մաս, եւ ի՞նչպէս եմ մեռնում . . . նա ձայնը ցածրացրեց՝ սողալո՞վ, բժիշկ, սողալո՞վ . . .

Բժիշկը կրկին յօնքերը կիտեց, մի փոքր մտածեց. նա կարող էր իսկոյն դուրս վնասել այս անհաճոյ այցելուին, որի ներկայութիւնը այնպէս ճնշում էր, բայց այդ չէր կարողանում անել. նրա փոխարէն ձեռքի նշանով ծառային դուրս ուղարկեց : Այս մարդն իր նողկալի արտաքինի տակ ծածկում էր մի մութ բան, արդեօք մի մռայլ ահաւոր ո՞յժ, մի մեծ ցա՞ւ, թէ՞ մոռացուած, տրորուած ճշմարտութիւն : Բժիշկը լաւ չէր դդում իրան.

— Ես հասկանում եմ . . . դու այլ եւս չես կարողանում աշխատել . . . տանջլում ես . . . բայց կեանքը . . . դէ տանջանքը միշտ կայ . . . ամէն մարդ էլ . . .

Մարդը մի վայրենի քրքիջով ընդհատեց նրա խօսքը :

— Շատ ենք լսել, օօ՞, չափաղանց շատ . . . «կեանքը . . . տանջանք . . . ամէն մարդ էլ . . .» կշտացանք այդ բոլորից, շատ ենք լսել, սիրելի՝ բժիշկ. տանջա՞նք, միայն տանջա՞նք . . . ո՛չ, ես սողում եմ, եւ յետոյ, ախր այս անիծած աշխարհում ամէն մի տանջանք գոնէ իր անունը, իր արժէքը պէտք է ունենայ. ես առաջ էլ էի տանջլում, ոսկորներս ճռճռում էին բեռների տակ, դէ, ասում էին, դա աշխատանք է, սեւ աշխատանք . էլի անուն է, այնպէս չէ՞՞, դէ աշխարհը ողջ անունների վրայ է . . . մէջը փուչ

է, բան չկայ... իսկ ա՞յժմ, ի՞նչ է իմ տանջանքի անունը. ո՞ր է նրա արժէքը, հը՞ ո՞րն է, ասացէ՞ք, բժի՛շկ, ո՞րն է...

Նրա մի ձեռքում սաստիկ ճնշումից գողղողում էր դաւազանը, մարմինը ցնցւում էր, արիւնոտ շորերով պատած կտրուած ոտքի այն մնացորդը երերուում էր յետ ու առաջ, իսկ աջ ձեռքը նա բարձրացրել էր սպառնալի կերպով դէպի բժիշկը, կարծես հաշիւ էր սպահանջում իր կրածների համար:

Բժիշկը սակայն էլ վեր չէր նայում, նա գլուխը քաշ դցեց ոչ ամօթից կամ խղճի խայթից, այլ մի ուրիշ բանից, որ նա ուրոշել չէր կարողանում: Իր եւ այս աղորմելի մարդու մէջ մի բան էր կատարուում, որ ծանր բեռի պէս ճնշում էր նրա գլուխը, ուղեղը ճմռում, տանջում:

— ... Ես սողում եմ փողոցներում, ցեխերի մէջ, շարունակեց մարդը, սողում եմ, որ կշտանամ... ձիերը խրտնում են, ես չափազանց այլանդակ եմ ու զզուելի, կառապանները հարուածում են թիկունքիս. դէ, իրաւունք ունեն, տեղ եմ բռնում, փողոցը նրանցն է. մայթի վրայ էլ տեղ չունեմ, անցորդները ոտքով կը հրեն, նրանք էլ իրաւունք ունեն. եւ ես կծկում եմ ծառերի տակ, անտէր ու թափառական շների պէս եւ դո՛ւք, բժի՛շկ, դո՛ւք ուղարկեցիք ինձ այնտեղ, որ ես սողամ, սողամ. դո՞հ էք այժմ...

Բժիշկը ձեռքը տարաւ դէպի ճակատը, ապա մատերը խրեց թանձր մաղերի մէջ եւ մնաց այնպէս:

«Հը՛, հը՛, շո՛ւտ, թրը՛խկ, թրը՛խկ...» լսւում է գրսից, բայց բժիշկը էլ չէր բողոքում, նա շարունակում էր մնալ անշարժ: Նա այժմ յիշում էր... քիչ առաջ, այնտեղ... փողոցում, այն կառքը, այն ձին, այն կառապանը, մտրակի հարուածը, ցնցուիների կոյտը... ահա նա: Յիշեց նաեւ այն ոտքը, այն առողջ արիւնոտ ոտքը որ իր ձեռքում խաղացնում էր անյոյզ, անտարբեր, համարեա հրճուանքով, որ կարողացաւ աջողութեամբ կտրել: Նրա աչքին պատկերացաւ նաեւ այն հուժկուաղամարդը, անդամահատական սեղանի վրայ անդգայ փուռած, դէմքը գունատ, աչքերը կիսաքաց, կապտած շրթունքներն իրար վրայ սղմուած, որ չէր տնքում, չէր բողոքում, չէր ճչում. ահա այն մարդը, «ոյժի, առողջութեան, աշխատանքի» ողորմելի մնացորդը, որ զզուելի է, որ սողում է... Հապա գիտութի՞ւ-

նը... իր երազնե՞րը... հեռաւոր երջանկութի՞ւնը... այս գնո՞վ
... բայց սա մարդ է, եւ այդ մարդը իրաւունք ունի ապրելու իր
համար եւ այժմ... սողում է, շան պէս, թշուառ ու տանջուած...

— Ես էլ մարդ եմ, չէ՞ , շարունակեց նոյն դողդոջուն, յուղ-
ուած ձայնը. զգում եմ... միսս էլ է ցաւում, մրսում էլ եմ, ա-
մօթ էլ ունեմ, բան էլ եմ հասկանում, սիրելի՛ բժիշկ, ա՛յ, ես գի-
տեմ, որ մուրալը, օօ'... Նա չկարողացաւ շարունակել, լցուած
կուրծքը փուլ եկաւ յանկարծ, արցունքի հեղեղ էր, որ թափուեց
աչքերից եւ հառաջանքը ինչպէս փլչող պատի որոտ դուրս թռաւ
կոկորդից :

— ...Սողում եմ դրսում... եւ լալիս եմ ձեղ մօտ. մի տեղ
պէտք է լալ... անարգուած եմ ու տրորուած... անպատիւ... ես
ցեխ եմ... շան պէս... բայց էլի մարդ եմ...

Բժիշկը վեր չէր նայում, բայց լսում էր նրա ձայնը միշտ
զլուխը քաշ, միշտ ձեռքը ճակատին. նա յիշեց իր խօսքերը՝
«տեղն է, մուրացկանութիւնը կեանքի գարշութիւնն է» :

«Հը՛, հո՛ւ, գըռ՛ու...» լսուեց դրսից, էլի մի գերան էր, որ
բարձրացրեն ու վար ճկեցին. բժիշկը լուս էր, այդ ձայները էլ
նրան չվրդովեցին: Նա գունատ էր, շրթունքները դողդոջուն,
աչքերը մռայլ, ցաւով լի. նա դանդաղութեամբ մօտեցաւ տան-
ջըւած մարդուն, ձեռքը նրա ուսին դրեց, նայում էր դէմքին, մի
բան պիտի ասէր, բայց չէր ասւում: Սենեակում լուսութիւն էր,
միայն լսում էին գանդատուող մարդու մեղմ հեծկլտանքները:
Բժիշկը թողութիւն խնդրողի պէս բռնեց նրա ձեռքը, կոշտ ու
կեղտոտ ձեռքը, նայեց նրա տանջանքով լի աչքերի մէջ, ու ա-
սաց կամացուկ.

— Ասա՛ ինձ, իմ խե՛ղճ բարեկամ... ի՞նչ կարող եմ անել քեզ
համար :

— Ինձ համա՞ր... օօ՛ ոչինչ, ոչինչ, փշրուած մեքենան էլ
չի կարկատուի, ես անպէտք մեքենայ եմ... եւ... կը սողա՞մ.
միայն, ի սէ՛ր Աստուծոյ, ի սէր բոլոր նրանց՝ որոնք, ա՛յ, այն-
տեղ՝ դրսում տնքում են բեռների տակ, երբ նրանք էլ ինձ պէս
փշրուած ոտքերով քեզ մօտ բերուեն, եւ կը բերուեն, էլ մի՛ կըտ-
րիր, թող մեռնեն, թող մեռնեն, այդ սողալուց լաւ է, իսկ ե՞ս...
է՞հ...

Եւ նա երեսը դարձրեց, դաւազանը թրըլսկացրեց յատակի վը-

ըայ, շարժուեց դէպի դուրս : Բժիշկը կանգնած մնաց միեւնոյն տեղում, դարձեալ դունատ, աչքերը մոռայլ եւ ցաւով լի, նայում էր նրա յետեւից : Աստիճանների վրայ դեռ լաւում էր նրա ծանր դաւազանի թրխկոցը, յետոյ ներքեւի դուռը բացուեց ու խըիռեց, եւ երբ ամէն ինչ լոեց, բժիշկը մեքենաբար, առանց մտածելու նայեց իր սեղանին, հաստ գրքին, ուր այնքան լաւ բաներ կային գրուած, նայեց իր վարդապետներին ու քրիստոներին եւ ընկաւ բաղկաթոոի վրայ ուժասպառ ու խորտակուած : Եւ կեանքն իր ցաւերով, իր անարդարութիւններով նրան ներկայացաւ որպէս մի վարարած դետ, որ յորձանք տալով բարձրանում էր վե՛ր, վե՛ր, իսկ ինքն իր գիտութիւնով, իր գանակներով ու գրքերով շատ էր անզօր, շատ էր թոյլ ահաւոր չարիքի դէմ... էլի մի ուրիշ բան էր պէտք այդ բոլորի հետ, մի հզօր, սրբազան բան ջերմացուցիչ ու սփոփիչ, հիմն ի վեր գարձնելու անիրաւութիւններով հարուստ կեանքը :

Սենեակում արդէն իշխում էր երեկոյեան կիսախաւարը. պատերի վրայի հանճարների պատկերները կամաց կամաց լուծում էին ու ծածկում մթութեան մէջ. բժիշկը գլուխը երկու ձեռքերի մէջ առած հեկեկում էր երեխայի պէս : Դուռը կրկին բացուեց .

— Պա՛րոն, հիւանդ... ծառան կանդ առաւ կարկամուած ու չփոթուած, իսկ լուսամուտից շարունակում էր լսուել՝ «Հը՛, հը՛, օօ՛Փ...» աշխատանքն էր հառաչում :

Դրսում մութ էր, խաւարը խեղզող եւ աշնանային հովը փչում էր մոնչալով :

Փ Ո Ղ Ո Ց Ո Ւ Մ

Ուշ գիշեր էր :

Մեղմութեամբ՝ ինչպէս ճերմակ փետրիկներ, ձիւնի խոշոր ու թեթեւ հատիկները մաղլում էին երկնքից եւ սպիտակ սաւանով ծածկում փողոցները, պատերը, կտուրները :

Թախծոտ ու լալագին մի բան կար գիշերային խաւարի մէջ կծկուած քաղաքի քար լոռութեան մէջ: Թւում էր, թէ հնազանդ մի անիրաւ ճակատագրի՝ նա դատապարտուած է մնալ այդպէս համր ու անշարժ, որպէսով ձիւնը վերից թափուի, դիղուի, բարձրանայ նրա թիկունքին, ինչպէս երկնային անէծք:

Եւ ձիւնը թափում էր, թափում էր, իսկ քաղաքը կարծես լուռ ականջ էր դնում նրա մեղմիկ քսոցին:

Գիշերային լապտերները՝ որպէս ծերութեան յուղնած, մշուշապտ աչքեր, այստեղ, այնտեղ հաղիւ պլալում էին: Նրանց խղճուկ ցոլքերի մէջ ձիւնի թերթիկները նշմարւում էին իրենց քմահաճ ու խենթ պտոյտներով, ինչպէս զիշերային թիթեռնիկները, որոնք խուռն երամով ճախրում են լոյսերի շուրջը:

Յուրատ էր :

Ամայի ու խաւար փողոցում ոչ ոք չկար: Միայն մի լուսաւոր ու փարթամ չէնքի առաջ մեն-մենակ կանգնած էր մի լծուած կառք: Ձիւնը հաստ շերտով վաղուց էր պատել ե'ւ կառքը, ե'ւ մի հատիկ ձին, ե'ւ բարձրում նստած ծեր կառապանին: Բայց մենաւոր կառքը միշտ այնտեղ էր անշարժ ու հնազանդ՝ ինչպէս արձանը:

Եւ ձիւնը թափում էր, թափում էր...

Քաղաքային տան վրայ խիեց ժամը երկուսը: Հեռու, հեռու լսուեց մի սուր ու գալարուն սուլոց, յետոյ դարձեալ մի սուլոց, ապա լոեց:

Այդ ոստիկաններն էին աղղանշան տալիս իրար, ով գիտէ, ինչ մութ դործի համար:

Կառքից մի փոքր հեռու, կիսաշէն տան պատի տակից, մեղմ ու ցաւագին լսուում էր մի մլաւիւն. այն մի կատու էր, մի հիւանդ ու ծեր կատու, որ փողոց էր չպրտուած՝ ու մնացել էր անապաստան: Շները հալածել, խեղդոտել էին նրան, աղիողորմ կերպով բղկտել նրա մորթին, մանուկները քարկոծ էին արել, եւ այժմ ուշ

գիշերին մի քարի տակ կծկուած՝ խեղճ ու դժբախտ նա մլաւում էր, գանգատուում էր, որ գլուխ դնելու տեղ չունի: Եւ մի ծանր ու անհունօրէն յուսահատ բան կար խեղճութեան ու անտէրութեան այդ մենաւոր տնքոցի մէջ, որ լսում էր միակերպ, անվերջ եւ անպատասխան խեղդուում էր խաւարի ու ձիւնի ծանրութեան տակ:

Կառապանն այնպէս կ'ուզէր, որ այդ ցաւոտ ձայնը չլսուէր, եւ կամ այնքան միակերպ, այնքան յուսահատ չլինէր: Ձին էլ գլուխը քաշ ձգած ձիւնի ծանրութեան տակ, ասես՝ խորհում էր աշխարհի իրերի մասին, խորհում էր նաև այն մասին, թէ ինչո՞ւ է կատուն մլաւում այնտեղ եւ ինչո՞ւ ինքն ու իր տէրը, այսպէս ուշ գիշերին, ձիւն-ձմբանը մնացել են գուրսը, երբ արար-աշխարհ կծկուել է յարկի տակ:

Եւ կարծես իր տիրոջը յիշեցնելու համար իրենց ծանր կացութիւնը, նա մերթ ընդ մերթ ուժդին փնչացնում էր կամ ոտքերով գոփում գետինը: Սակայն կառապանին այդ բոլորը յիշեցնելու պէտք չկար. նա էլ էր մտածում այդ բոլորի մասին. գիտէր, որ ձին մրսում է, գիտէր, որ կառապանը պարտական է իր տիրոջն սպասել, բայց հասկանալ չէր կարողանում, թէ ինչո՞ւ չի դուրս գալիս տէրը, կամ եթէ այդքան ուշանալու էր, ինչո՞ւ նրան չարձակեց տուն պատուիրելով որոշ ժամին յետ գալ: Եթէ ինքը մեղք չէ, եթէ իր ծերութիւնը գութ չշարժեց, գոնէ այս դժբախտ կենդանուն մեղքանար. անլեզու անասուն է, բայց ցաւ զգալ գիտէ:

Իսկ տէրը ներսումն էր, ուր չուայտ ու գոռող կեանքը եռում էր իր հազար ու մի յեղյեղումներով, ուր զգայական հաճոյքները, մեղկութիւնը, կանացի պչըրանքները շշմեցրել էին նրան, եւ նա վաղուց էր մոռացել ե՛ւ կառքը, ե՛ւ կառապանին, ե՛ւ ձին:

Երեկոյեան ժամի տասն էր, երբ կառքը եկաւ, կանգ առաւ այստեղ:

— Սպասի՛ր, ասաց պարոնը, ցած իջնելով կառքից:

Եւ կառապանն սպասում է ահա չորս ժամ, ցրտի տակ, անքուն դողդողալով իր ձիու հետ: Եւ մտածում է նա, մտածում է, ու հասկանալ չի կարողանում, թէ աղայի ինչի՞ն պէտք, որ ինքն ու այս կենդանին այսպէս տառապեն փողոցում:

Մտածում է եւ պատասխան չկայ, իսկ հպարտ չէնքը վերից հեղնօրէն թարթում է իր լուսաւոր աչքերը, ծաղրելով նրա խեղ-

ճութիւնն ու անզօրութիւնը:

Եւ ձիւնը թափում է, թափում է...

Սեփական ցաւը մոռացած՝ ծերունի կառապանը վշտով նայում է իր խնամած, փայփայած ձիուն, որ չարունակում է ոտքով դոփել, կամ փնչացնել իր վրայ ուշագրութիւն հրաւիրելու համար: Ահա նա ցած իջաւ, մօտեցաւ կենդանուն, դլուխը չփեց, մէջքի վրայ փուած փալասը յարդարեց:

— Ցուրտ է, այնպէս չէ՞, ի՞մ ընկեր, դարձաւ նա ձիուն. այնտեղ տաք է, նայի՛ր, այն վերեւում, այնտեղ չեն մըսում. է՛հ, ի՞նչ անենք, ախպէ՛ր, աշխարհի բանն է. մէկը վերում, մէկը վարում, մէկը դրասում, մէկը ներսում. համբերի՛ր, համբերի՛ր, տե՛ս, ես էլ եմ համբերում:

Նա խօսում էր ու քայլում յետ ու առաջ ոտքերը տաքացնելու համար, իսկ ձին աչքերով հետեւում էր նրան, սպասելով, թէ նա ճանապարհ ընկնելու նշան կ'անի վերջապէս:

Դուռը բացուեց. կառապանը շտապով բարձրացաւ իր տեղը նստեց. բայց դուրս եկողը նա չէր: Մերունին խոր չունչ առաւ, յուսախարսուած՝ դլուխը քաշ ձգեց կրծքին, եւ կրկին անձնատուր եղաւ իր ծանր խոհերին:

Զին դադարեց շարժուելուց, կարծես նոյնպէս յուսահատուած, եւ արձանի պէս քարացաւ իր տեղում: Զէր լսում նոյնիսկ նրա փնչոցը: Միայն կատուն էր անընդհատ, միակերպ մլաւում իր անկիւնից եւ ձիւնը վերից թափում էր, թափում:

— Ճանապա՛րհ... ճանապա՛րհ տուէք, ասում եմ, նզովուա՛ծ սատանաներ, հուռու... .

Մայթի վրայով դալիս էր մի հարբած մարդ, մի դիշերային թափառաշրջիկ: Նա երերուում էր մայթի լայնութեամբ, բռունցք-ներով ու ոտներով անդադար խփում էր պատերին եւ փակ դռներին եւ շարունակ գոռում էր.

— Ճանապա՛րհ, ասում եմ, կը փշրեմ... քամի եմ էէ՛. ուր ուզեմ կ'երթամ... կը փշրեմ ու կ'երթամ... ես ձեղ... ճանապա՛րհ, ասում եմ էէ՛:

Եւ նա մի քանի քայլ էր անում, կատաղաբար հարուածում մի դրան, ահազին թրիսկոց հանելով, դարկում էր ու ընկնում մայթից վար, թաւալ էր տալիս ձիւների մէջ, վեր էր կենում ու վերսկսում նոյնը:

Վերջապէս հասաւ կառապանին.

— Այս . . . մարդ է . ի՞նչ ես ցցուել այդտեղ, է՛յ, իշխ մռութ:

— Պարոնիս եմ սպասում:

— Պարոնիս եմ սպասում . . . կրկնեց հարբեցողը հեգնութեամբ, ու բարձրածայն քրքջաց . իսկ ես . . . տեսնո՞ւմ ես, չեմ սպասում ոչ ոքի . գնում եմ, ուր քէփս է տալիս . . . աղա՛տ, ինչ-պէս թռչունը . . . աղատութիւն է, չէ՞ , յիմար, մանիֆեստը չե՞ս կարդացել . . . քա-ղա-քա-ցի, սիտուայէն, հասկանո՞ւմ ես . . . Եւ այս ձիւնը . . . սատանան տանի . . . ինձ ի՞նչ կարող է անել . . . Դէ՛հ, յառաջ, ըշտ, դնա՛ . . .

Նա ձեռները թափ ի թափ տուեց ձիու վրայ: Կենդանին գլուխը բարձրացրեց, ականջները խլչեց, փորձեց շարժուել, բայց տէրը սանձերը քաշեց եւ նա դարձեալ անշարժացաւ:

Հարբեցողն անցաւ, եւ կանդ առաւ մլաւող կատուի մօտ:

— Հա՛, այստեղ մէկն էլ կայ, սա ո՞ւմն է կանչում . . . երեւի իր պարոնին . . . ո՛չ, աղաւնեակս, այդ արդէն ի դուր է, քեզ ոչ ոք ներս չի առնի . . .

Նա բարձրացրեց կատուն եւ երերալով յետ եկաւ դէպի կառապանը.

— Հը, ի՞նչ կ'ասես, սա էլ քո խելքին է, աշխարհում բոլորովին աւելորդ է . . . տնքում է . տնքալով բան չի դուրս գայ, աղատութիւն է, չէ՞ . . . թո՞ղ գնա իր գլխի ճարը տեսնի . . . սատանան տանի, ի՞նչ է մլաւում :

Եւ նա բոլոր ուժով շալրտեց կենդանուն դէպի հակառակ կողմը: Կատուն մի քանի պտոյտներ գործեց օդի մէջ, սոսկումի մի ճիչ արձակեց եւ ընկաւ գետին: Փափուկ ձիւնը նրան փրկեց. նա չմեռաւ, սողալով հասաւ պատին եւ կրկին սկսեց մլաւել աւելի ցաւոտ, աւելի խղճուկ քան առաջ:

Հարբեցողն առաջ անցաւ:

— Անողո՞րմ, անողորմ թշուառական, մռմռաց նրա յետեւից կառապանը:

Հարբեցողն արդէն հեռու էր, բայց նրա ճայնը դեռ լւում էր.

— Ճանապարհ, ճանապարհ, ես աղատ եմ, քա-ղա-քա-ցի, դրողը տանի, սիտուայէն . . .

Կամաց կամաց արդ ճայնն էլ լոեց, դարձեալ մնաց կատուի խղճուկ մլաւիւնը: Ծերունու գլուխը քաշ ընկաւ կրծքին, քունը տանում էր: Նա ցած իջաւ իր տեղից, դարձեալ շիեց ձիու դլու-

իր, քայլեց յետ ու առաջ, ոտքերը գետին զարկեց, ի զուր, քունը յաղթում էր, ցուրտն էլ սաստիկ: Արևելքից սկսեց փշել սառը քամին, որ նշարակի պէս ծակում էր: Քամուց պաշտպանուելու համար, նա բարձրացաւ նստեց կառքի մէջ, աշխատելով չքնել:

Խիեց ժամի երեքը:

Անցաւ զինուորական պահակը. նրանց սուխնները մի վայրկեան փայլեցին փողոցի լապտերի լոյսի առաջ, ապա կորան մըթութեան մէջ:

Քամին սաստկացաւ. բուք էր, փոթորկուտ, սոսկալի գեշեր. ձին դողդողում էր ամբողջ մարմնով, դոփում էր գետինը, փընչացնում ու տնքում, ի զուր, նրան էլ լսող չկար. կառապանը խոր քուն մտաւ եւ քամու մոնչոցի հետ լսում էր նաեւ նրա խուլ, կանոնաւոր խոմքիցը:

— Ճանապա՛րհ, ճանապա՛րհ...

Նոյն հարբեցողն էր, որ, ո՛վ դիտէ, ինչ խենթ քմահաճոյքի դրդումով, յետ էր դալիս, դլխարաց, մաղերը քամուն տուած, ամբողջապէս ձիւնապատ: Ուժեղ քամին նրան երերում էր, այս ու այն կողմ ձգում, բայց եւ այնպէս նա էլի պատերից բռնելով, առաջանում էր:

Նա հաստաւ կառքին.

— Դու դեռ այստեղ ես, բացականչեց նա — պարոնին է սպասում, յիմա՛ր, յիմա՛ր...

— Հու-հու-լ, ը՛շտ. եւ նա բռունցքի մի ուժեղ հարուած իջեցը եց ձիու թիկունքին:

Կենդանին կարծես հէնց դրան էր սպասում. վինչացրեց, շարժւեց, եւ առանց կառապանի, առանց դեկավարի առաջ սլացաւ ամայի փողոցներով, մինչդեռ կառապանը շարունակում էր խըռմիւլ ներսում, կառքի մէջ:

— Յառա՛ջ, յառա՛ջ, հնչում էր յետեւից մոլորուած հարբեցողը եւ ուրախ էր, որ կառքը գնաց:

— Պարոնին եմ սպասում, յի՛մար, մոմուում էր նա, նայելով հեռացող կառքին:

Զին գնում էր հաստատ քայլուածքով. նա ճանաչում էր փողոցները եւ շուտով կանդ առաւ տիրոջ դրանը:

Դոնապանը կառքի աղմուկի վրայ դուռը բացեց, դուրս եկաւ եւ զարմանքից քիչ մնաց, որ ճայ, տեսնելով անտէր կառքը: Մէջը նայեց. զարթեցրեց քնած կառապանին: Վերջինս վար ցատ-

կեց, աչքերը տրորելով նայեց շուրջը, առանց կարողանալու հա-
զիւ տալ ինքն իրեն եւ ըմբռնել իր հետ պատահածը:

— Ո՞ւր է պարոնը:

Կառապանը լուր էր. նա յիշում էր միայն, որ երկար կանդ-
նած էր փողոցում սպասելով նրան, յիշում էր թափառական հար-
բեցողին, մլաւող կատուին, բայց հասկանալ չէր կարողանում,
թէ ի՞նչպէս է յայտնուել այստեղ մեն-մենակ:

Նոյն րոպէին մայթի վրայ լսուեց մի ոտնաձայն:

Նա էր, պարոնը:

Լուսաւոր շէնքից դուրս գալով, նա կանչել էր կառքը, սողա-
սել, հայհոյել, եւ վերջ ի վերջոյ ստիպուած ոտքով տռւն էր գա-
լիս:

Հասաւ ու կանդ առաւ. զայրացկոտ ու թունոտ մի հայեցք
ձղեց ծերունու վրայ, մի բան մռմռաց ատամների արանքից, ա-
պա դարձաւ դռնապանին.

— Նե՛րս տար կառք:

Բակի լայն դռները բացուեցին, կառքն ու ձին անյայտացան.
ներս մտաւ եւ ինքը տան տէրը, դռները փակուեցին, եւ մտամո-
լոր ու խորտակուած կառապանը միայն այժմ նկատեց, որ ինքը
դուրս է շարտուած, ինչպէս այն մլաւող կատուն:

Քամին կատաղաբար փչում էր եւ ձիւնը շփում նրա գլխին,
եւ ծերունին քարացած էր իր տեղում, աչքը չեռացնելով այն
դռնից, ուր ծածկուեցին կառքն ու ձին:

Ճարը կտրուած՝ նա սկսեց քայլել ինքն էլ չիմանալով գէպի
ուր... Գնում էր հէնց այնպէս, առանց ինքն իրեն հաշիւ տալու,
գնում էր խաւար փողոցներով, քամու եւ ձեան տակ. մռոացել
էր ցուրտը, մռոացել էր իր գլխից անցածը, եւ գիտէր միայն, որ
պիտի դնայ, պիտի դնայ անվերջ:

Եւ նրան թւում էր, թէ նա վաղուց, իր ամբողջ կեանքն այս-
պէս քայլել է փոթորկոտ, անողորմ գիշերներով, քայլել է անա-
պաստան, դժբախտ ու հալածական, չիմանալով ուր գնել իր յու-
նած, իր չարատանջ գլուխը:

Երկար թափառեց նա ամայի փողոցներով, եւ վերջ ի վերջոյ
ինքն էլ չիմանալով, թէ ինչպէս, նա յայտնուեց այն լուսաւոր
տան առաջ, ուր անց էր կացրել սարսափելի գիշերուայ մեծ մասը
իր ձիու հետ:

Կատուն զեռ այնտեղ էր. դեռ լսում էր նրա լալկան մլաւիւ-

նը: Ծերունին մօտեցաւ, կանդ առաւ նրա կողքին եւ նայում էր լուսւթեամբ: Ապա յանկարծ ոտքը բարձրացրեց, դրեց կատուի պարանոցի վրայ եւ բոլոր ոյժով սղմեց:

Կենդանին վերջին անգամ ցաւազին ճիչ արձակեց, ճանկերով չանգուց ճիւնը, ցնցուեց, թրպուտաց ու անշարժացաւ: Բայց ծերունին դեռ շարունակում էր տրորել նրա դժբախտ մարմինը, շարունակում էր երկու ոտքերով փշրել նրա ոսկորները, մի տեսակ խենթ կատաղութեամբ թափելով նրա վրայ իր հոգում մթերուած բոլոր մաղձն ու թոյնը:

Ճեռուն լսուեց մի սուլոց. դարձեալ զինուորական պահակն էր: Ծերունին սթափուեց, յետ քաշուեց, նայեց ոտքերի տակ եւ սոսկումով փախաւ ոճրագործի պէս: Վերստին լսուեց սուլոցը եւ նրան պատասխանեցին մի քանի ուրիշները.

— Ո՞վ է այնտեղ:

Ծերունին փախչում էր:

— Կա'ց, կա'ց, ասում եմ:

Ծերունին շարունակում էր փախչել:

Մի որոտ լսուեց, մի գնդակ ոլացաւ եւ փախչող ծերունին երեսի վրայ ընկաւ հնձածի պէս:

Նա թաւալում ու չանդուում էր ճիւնը օրհասական ցնցում-ներով:

Եւ անսանձ փոթորիկը ոռնում ու հաջում էր նրա արիւնոտ դիակի վրայ:

«Առ'ւ, առ'ւ, առ'ւ....»:



Բ Ե Ռ Ը

(1903—1906)

Զ Ի Ն

ԱՇՀ, այն վտիտ ու տանջուած ձին իմ ամենօրեայ ճանապարհի վրայ...

Կաշուէ հաստ կապերի մէջ պրկուած նրա իրանը՝ ցցուած կողերի վրայ տրորուած մաշկով, իր երկար ու առաջ ձգուած պարանոցը, խղճուկ ու մռայլ գլուխը ցաւի, անյոյս, անճարակ ցաւի մի մարմնացումն էին, երբ նա դանդաղութեամբ, դալարուելով ճիդ էր գործ դնում քաշել իր յետեւից կախ ընկած լիքը սայլը:

Օ՛, այն վտիտ, տանջուած ձին իմ ամենօրեայ ճանապարհին:

Փողոցը՝ ցից-ցից քարերով շարուած, ինչպէս դժոխքի յատակ, ձգում, բարձրանում էր դէպի վեր և անշուշտ ողորմելի կենդանուն թւում էր անվերջ: Զին գուցէ հասկացել էր, թէ ինչո՞ւ է քաշում աղիւսներով լի սայլը դէպի վեր, բայց երբեք չէր կարող ըմբռնել, թէ ինչո՞ւ համար են իր ոտները փշրող, արիւնոտող այդ ցցուած քարերը, որոնք իր պայտերի տակ կայծ էին արձակում եւ փողոցը լցնում խլացուցիչ աղմուկով:

Եւ քաշո՞ւմ էր, քաշում իր ծանր բեռը, իր արիւնոտ ոտները, իր մաշուած կողերը դէպի վեր...

Պէտք էր քաշել...

Ուղիղ դժով դէպի վեր ձգուել անհնարինի չափ ծանր էր, փողոցը խիստ զախիվայր էր, եւ անասունի ողորմելի ուղեղը նրան թելադրում էր մի մանուածոյ, օճապտոյտ ճանապարհ, միշտ քարոտ ու տաժանելի: Եւ քաշում էր կենդանին փողոցի լայնութեամբ աջ ու ձախ, աջ ու ձախ: Այսպէս քանի՛ անդամ մինչեւ բարձրութեան վախճանը: Ոսկրոտ մէջը աղեղնաձեւ բարձրացած, պոչը, դզզուած կեղտոտ պոչը իր ցաւոտ ճիգով ցցուած, կողերը ուռած ընդհատ չնչառութեամբ, ոռւնդները լայն բացուած, փրփրոտ բերանից լեզուն քաշ ընկած՝ այդ վտիտ կենդանին հեւ ի հեւ հասնում էր փողոցի մայթին, բոլոր ուժով փնչացնում էր տների երեսին, ասես զայրոյթ ու անէծք թքելով անցորդներին

իր կրած տանջանքի համար, ապա յետ դառնում դէպի հակառակ մայթը: Եւ այսպէս անվերջ...

Եւ քաշում էր, քաշում իր ծանր բեռը այն տանջուած, վտիտ կենդանին:

« Հո՛ւ, հօ՛, շը՛խկ... » :

Տէրը կանչում էր յետելից եւ մտրակը շրիկացնում ամէն անդամ, երբ կենդանին մի մայթին համնելով՝ կանդ էր առնում մի վայրկեան իր դողդողացող ոտների վրայ եւ լայն, երկարածիդ հետքով շունչ էր առնում:

« Հո՛ւ, հօ՛, հօ՛... » :

Եւ ձին կրկին ազեղում էր իր մէջքը, ձգում պարանոցը, ցաւադնօրէն փնչացնում եւ առաջ շարժում դէպի վեր, դէպի վե՛ր:

Եւ նրա յետելից քայլող մարդը, այն խստասիրտ ու անողորմ տէրը իմ ամենօրեայ ճանապարհին: Կարճահասակ, լայն ու կռացած թիկունքին մի մաղէ արայ, գլխին քրտինքով ծծուած թաղիքէ զղակ, թաւ ու գեղին յօնքերի տակ մտածող ու տանջուած աչքեր, թաւ ու գեղին միրուք կեղտի մէջ կորած, արելից մաշուած, անհամբոյր մի դէմք: Առանց շուրջը նայելու, առանց անցուդարձը տեսնելու, նա քայլում էր նոյն դանդաղութեամբ քարերի միջից, մռմռալով ինչ որ անէծք ամէն անդամ, երբ մի քար դարկը ւում էր նրա տրեխների ծակոտիներից դուրս ցցուած մատներին:

« Հո՛ւ, հօ՛, հօ՛ » :

Եւ մտրակը շրիկում էր, եւ ձին ճկում, ձգում առաջ, աջ ու ձախ պատերին փրփուր ու արիւն թքելով: Վերելքը վերջ չունէր, զալարուն, մանուածոյ պտոյաները անթիւ. թւում էր, թէ կենդանին ու իր տէրը դատապարտուած են երերալու միեւնոյն տեղում, միեւնոյն փողոցում, այս անիծուած քարերի մէջ:

Եւ այս պատկերը՝ այս տանջուած ձին իր սայլով, այս խըստասիրտ տէրը յետելից ամէն օր իմ ճանապարհին. փախչել անհընարին էր. պատկերն ինձ հետեւում էր ամէն տեղ, տանը՝ սենեակումս փակուած, գիշերը՝ խաւարի մէջ:

Այն տէրը, այն անդութ, անողորմ մարդը: Մինչեւ Ե՞րբ համբերեմ:

— Լսի՛ր, բա՛րեկամ, մարդկանցից չես ամաչում, այդ ես տեսնում եմ, բայց վերեւ նայիր, երկնքին, անողորմ մարդ, այս աստիճան ծանր բեռ՝ այս խղճուկ կենդանուն:

Տէրը կանդ առաւ, ձին էլ լայն շունչ առաւ:

Իր խիստ աչքերը իմ դէմքին յառած, շրթունքները պինդ իւրար վրայ սղմած, չարացած կատուի կատաղութեամբ այդ մարդն ասես պատրաստում էր ինձ վրայ նետուել: Լուռ էր նա եւ ձին հետում էր փինչացնելով:

— Ի՞նչ ես ուզում:

— Ես ասում եմ, մարդկանցից չես ամաչում, գոնէ երկըն-քից...

Մի բարձրաձայն ու չար քրքիջ ընդհատեց իմ խօսքը:

— Մարդկանցից ամաչեմ... քողը յետ քաշիր, պարո՞ն, քօ-ղը, բաց երեսները, տեսնեմ, դուցէ ամաչեմ:

«Խենթ է», մտածեցի ես:

— Եւ քո երկինքը՝ պարոն... օ՛, նա կոյր է. նայի՛ր, նայի՛ր, սրանք ծալւում են, ցաւում են... նա ցոյց տուեց ծնկները, ձեռ-ները:

— Ես հասկանում եմ, դու չարչարւում ես, այդ ցաւալի է, բայց ձին, այդ խեղճ կենդանին...

— Ինձանից աւել արժէ... ձին. ես գիտեմ, տեսել եմ արծա-թէ շղթայով չներ հարուստ խանումների գրկերին, որոնք ինձա-նից աւելի արժեն, բայց «իմ ձի՞ն»... նա չարչարւում է իր տի-րոջ պէս, տառապանքի իմ եղբայրն է նա:

— Եւ դու տանջում ես քո եղբօրը:

— Նա քաշում է իր բեռը, ես իմը, ամէնքն իրանց բեռն ու-նեն, ծանը, անողորմ: Բեռ կայ, որ երեւում է, բեռ կայ, որ չէ երեւում... ամէնքն ունեն, ամէ՞նքը... եւ շալակած՝ քաշում են դէսլի վեր, տնքալով ինձ պէս, իմ ձիու պէս... նայեցէ՛ք, ձեռքի լայն շարժումով նա ցոյց տուեց անց ու դարձ անողներին. սրանք բոլորն էլ կճացած են իրանց բեռի տակ, նրանց ուղիղ մէջքերին մի՛ հաւատաք: Ով ուսերի վրայ գլուխ ունի, մէջքին էլ բեռ ունի:

Ես լուռ էի:

— «Հո՛ւ, հօ՛, շր'խկ» հնչուեց նորից, չոր ու անողորմ մտրա-կը խաղաց օդի մէջ, ձին աղեղեց իր մէջքը, ուղցրեց կողերը, փնչացրեց կրկին եւ առաջ շարժուեց դէսլի վե՛ր, դէսլի վե՛ր:

Մայթի վրայ քարացած իմ տեղում, ես նայում էի այդ տե-սարանին, նայում էի տանջուած կենդանու ծոմուուղ մէջքին, դողդողացող, խզճուկ ոտներին, այս տարօրինակ մարդու լայն թիկունքին ու այրուած պարանոցին, նայում էի եւ մտքերիս ժը-խորի մէջ գլուխս պտտուում էր: Խօսակցութիւնը մոռացայ, անց-

եալն ու ներկան, վայրկեաններով միայն բաժանուած իրարից, ընդունեցին բոլորովին այլ կերպարանք:

Եւ մարդը յետ զարձաւ մէկէն, վերջին անդամ ուղղեց վրաս իր թունոտ, չար հայեացքը, շրթունքները շարժուեցին հեղնութեամբ.

— Իսկ դու, պարո՞ն, մի՞թէ դու բեռ չունես...

Ես ցնցուեցի. երա՞զ էր միթէ... իմ մէջքին բե՛ռ... ո՞վ է ասում. փողոցի քարերի վրայ սողացող այս ողորմելի՞ն...

Խաւա՛ր, անդիտակից դլուխ, որ չգիտէ, թէ ինքն ու իր ձին տառապում են նրանց համար, որոնք ո՛չ բեռ ունին եւ ոչ դութ, այլ սուր ճիրաններ եւ ամուր ժանիքներ իր պէս հաղարաւորների մերկ մսերի մէջ թաղելու համար:

ԴԱՐԵՐԻ ՃԱՄԲՈՐԴԸ

Ես նրան վաղուց չել տեսել, տասը տարուց աւելի, եւ այժմ համարեա ո'չ մի փոփոխութիւն։ Նոյն լայն վերարկուն, երկար հողմածածան վէշերով, ճմռոտած ու կեղտոտ, նոյն լայնեղբ գըլ-խարկը, աչքերի վրայ քաշած, նոյն սեւ ու լայն փողկապը, որի երկու ծայրերը սպանուած ազուաւի թեւերի պէս կախուած էին նրա ներս ընկած կրծքի վրայ։ Տասը տարի առաջ նա ճիշդ այսպէս էր։ Երկար ու ոլոր-ոլոր կախկախուած սեւ միբուք, կեղտոտ ուսերի վրայ թափուած երկար մազեր, միշտ չուած ու մեծ աչքեր, ուր փայլում էր մի անորոշ կրակ, ասես մի մշտական ու անհասկանալի ոգեւորութիւն եւ այդ շրթունքները, այդ գունատ, բարակ շրթունքները, որոնք շարունակ շարժուում էին, որովհետեւ նա ինքն իրան խօսում էր անընդհատ, հազիւ լսելի, խորհրդաւոր ձայնով, համարեա մրմնչալով, անըմբանելի խօսքեր ուրիշների համար, Տէ՛ր Աստուած, այդ իսկ եւ իսկ նոյնն էր, որ ես տեսել էի տասը տարի առաջ, միայն այժմ աւելի մաշուած էր, ինչպէս եւ նրա ամբողջ պատկերը։ Մի բան միայն նոր էր։ Նա այժմ քայլում էր աւելի արագ քան առաջ, շտապով, համարեա վաղէվազ։

Այսօր ես հեռուից տեսայ նրա բարձրահասակ, նիհար պատկերը եւ իսկոյն ճանաչեցի իմ «բնական փիլիսոփային», ինչպէս նա սիրում էր ինքն իրան անուանել։ Նա գնում էր առաջուայ պէս ձեռնախյուր գետնին շրխկացնելով, յօնքերը՝ կախ, եւ աչքերը յառած ոտների առաջ մի բան վնտողի պէս։

Յիշում եմ, տասը տարի առաջ իմ ծանօթութիւնը նրա հետ կատարուեց շատ տարօրինակ պայմաններում։ Նա անցնում էր փողոցով՝ ձեռքերով վրդովուած շարժումներ կատարելով եւ ինչ որ բաներ էր ասում։ Ես կանգնած նայում էի այդ տեսարանին։ Նա նկատեց իմ հետաքրքրութիւնը, շտապով մօտեցաւ ինձ, ձեռքս բոնեց եւ նայում էր ուղիղ գէմքիս։ Աչքերից՝ ասես, կայծեր էին ցայտում, կուրծքը յուղմունքից բարձր ու ցածր էր անում եւ նա ամբողջ մարմնով գողում էր զայրոյթից։

— Երեւակայի՛ր, ասաց նա ընտանեբար, ասես թէ մենք հին ծանօթներ լինէինք. Երեւակայի՛ր, բա՛րեկամ, այս ըոպէիս, հէնց այստեղ, ա՛յ, այն փողոցի անկիւնում ես տեսայ մի խղճալի ծերունու մէջքին ահագին բեռ. նա գնում էր տնքալով, հառաչելով,

ոտները դողդողում էին, եւ մարած աչքերից արցունք էր ցայտում. բեռը ծանր էր էէ՛... եւ ես՝ որ բնական փիլիսոփիայ եմ, ես այդ տեսայ: Գիտե՞ս, մարդիկ ինձ հալածում են. քանի՛ տարի է նրանք, այդ անողորմները, դիտմամբ իմ առաջն են հանում այսպիսի տեսարաններ, որ իմ այս տառապած գլուխն է՛լ աւելի տանջուի, եւ նա տանջըում է. ա՛յ, այն ծերունին այժմ ճմուռմ է իմ ուղեղը, ես բնական փիլիսոփիայ եմ:

Տարօրինակ մարդ, մտածեցի ես, կտմ գուցէ մի խենթ:

— Քայլիր ինձ հետ, բա՛րեկամ, շարունակեց նա, դու խօմ բեռ չունես մէջքիդ, կ'ուզե՞ս քայլել ինձ հետ. ոչ ոք ընկերանալ չէ ուզում ինձ, ես զարմանալի բաներ եմ մտածում մարդկային սեռի փրկութեան մասին:

Ես հնազանդուցի. իր այս տարօրինակութեան, այս արտասովոր խօսակցութեան մէջ նա մի բան ունէր, որ ինձ սաստիկ հետաքրքրում էր եւ զրաւում միաժամանակ. ո՞վ կարող է ասել, թէ ո՞ւր է վերջանում խելքը, առողջ գատողութիւնը եւ սկսում խենթութիւնը, մտածում էի ես: Ես քայլում էի նրա հետ լուսութեամբ: Նա շարունակեց.

— Ասենք ես էլ տարօրինակ մարդ եմ, գիտե՞ս, տարօրինակ գործով զբաղուած: Ա՛յ, աե՛ս, փողոցներում մարդիկ վազվզում են, գնում, գալիս, ոմանք ուրախ, ոմանք տխուր, երջանիկներ ու դժբախտներ, չարեր ու բարիներ, գահիճներ ու զոհեր, լացողներ ու խնդացողներ, իսկ ես դիտում եմ բոլորին, կարդում դէմքերը, եւ մտածում. չե՞ս գտնում, որ ես բնական փիլիսոփիայ եմ:

— Անշուշտ, անշուշտ, պատասխանեցի ես, նրան է՛լ աւելի խօսեցնելու համար:

— Երբեմն ես զնում եմ փողոցով եւ մէկիկ մէկիկ կարդում եմ խանութների ցուցանակները, զանգան յայտարարութիւնները, ճիշդ այնպէս, ինչպէս ես կարդում եմ մարդկանց դէմքերը: Գիտե՞ս, դա շատ հետաքրքիր է, խանութների ճակատներին, սիւների, պատերի վրայ մարդիկ մեծ մեծ տառերով անմեղ անմեղ բաներ են գրում, իսկ ես կարդում եմ մեղաւոր բաները: Այ, շունը պառկած է հանդարս, սիրուն գունչը անմեղ կերպով թաթերի վրայ գրած, ատամները ծածկել է, աչքերը քաղցր են. դա մի ցուցանակ է, մի յայտարարութիւն. կը մօտենաս, կը կծէ: Չորս կողմա այսպէս է, ցուցանակներ, գրաւիչ, ժպտուն, քաղցր դէմքեր, աչքերի անմեղ թարթումն. մօտենում եմ, կծում են: Ես

բանի մէջ միշտ բան եմ տեսնում . ես բնական փիլիսոփայ եմ :

— Գիտե՞ս ինչ , շարունակեց նա մի փոքր լոռութիւնից յետոյ , այն ծերունին էլ ցուցանակ ունէր . դա նրա մէջքի ահազին բեւն էր . միայն այդպիսիները ատամ չունեն կծելու , նրանց ուրիշներն են կծում , եւ ես այդպիսի անատամներին մօտենում եմ սիրով , նրանց փնտում եմ նոյնիսկ , լաւ չէ , որ նրանք այնքան ծանր բեռ ունին , լաւ չէ , բանի մէջը բան կայ : Է՞հ , գնա՛ , ծերուկ , քաշիր բեռդ ու տնքա՛ , այդ այդպէս չի մնայ , ես մի բան կ'անեմ քեզ համար . խօմ չէ կարելի , ճշմարիտ , թողնել , որ բանն այսպէս մնայ . ես մի զարմանալի ծրագիր ունեմ . նա շրթունքները մօտեցրեց ականջիս եւ փսփսուկով ասաց — ա՛յ լիր , ես այդ բոլոր բեռները խեղճերի , ծերերի , դժբախտների մէջքից կը վերցնեմ կը դնեմ իմ մէջքին եւ կը տանեմ հեռու , հեռո՛ւ , լաւ չէ՞ նա ժպտաց գոհութեամբ :

— Ոչ ոքի չասես , աւելացրեց նա . գաղտնիք պահիր , խիստ դադտնիք , պատերին էլ չասես , քարերին էլ չհաւատաս , ծառերին էլ , բոլորը , բոլոր ականջներ ունեն . . . լո՛ւռ կաց . . . իսկ այժմ մնաս բարի , բա՛րեկամ . ես դնում եմ , գործ շատ ունեմ , շատ էէ՛ . . .

Նա ձեռնափայտը թափով զարկեց զետնին , թողեց ինձ եւ արագութեամբ հեռացաւ : Ես կանգնած նայում էի նրան զարմացած , մինչեւ որ այդ երկար , երերուն ստուերը , այդ ու ձախ հողմահարուող փէշերը , այդ գանդբահեր գլուխը իսպառ ծածկըց . ես մնացի ծանր մտածմունքների մէջ ընկղմած , ե՛ւ հետաքրքրուած , ե՛ւ տխուր միաժամանակ :

Այն ժամանակից անցել է ամբողջ տասը տարի եւ աւելի . այժմ ես նրան տեսնում եմ ճիշդ միեւնոյն վիճակում , համարեա միեւնոյն շորերով , միեւնոյն ձեռնափայտով : Ուրախացայ , վազէվազ մօտեցայ եւ առաջը փակեցի :

— Բարե՛ւ , բա՛րեկամ , իմ հին փիլիսոփայ :

Նա գլուխը բարձրացրեց , մի վայրկեան վրաս նայեց եւ ճանաչեց .

— Աա՛ , այդ դու ես . է՛ , բա՛րեկամ , փա՛ռք Աստուծոյ , որ քեզ տեսայ , որքան բան եմ տեսել այն ժամանակից , որ դու ինձ պատահեցիր առաջին անգամ : Ես այժմ մի թափառական ճամբորդ եմ եւ վազում եմ անընդհատ գտնելու դարերի ճամբորդին :

— Ի՞նչպէս թէ դարերի ճամբորդին։ Ես քեզ չեմ հասկանում։

— Դարերի ճամբորդին։ Ի՞նչ կայ չհասկանալու։ ասենք ինձ ոչ ոք չէ հասկանում։ քայլիր հետո, գուցէ կարողանամ դոնէ քո գլուխը մտցնել։ Ես ժամանակ չունեմ, ես պիտի քայլեմ։ Եւ ես դնում եմ անընդհատ։ դնանք միասին մի փոքր։

Նոյն է, մտածեցի ես։ նոյն երազողը, նոյն զառանցողը։ Եւ ես հետեւեցի նրան։ ցանկութիւնս էր իմանալ, թէ նա ուր էր այս քան ժամանակ։ Բնակութիւններից հեռացանք եւ դաշտ դուրս ե-կանք։ Երեկոյ էր, արեւի վերջին շողերի փայլը գեռ ոսկեզօծում էր հեռաւոր զաղաթները։ կանաչաղարդ լեռնադաշտի միջնց լայն ծփանքներով գալարում էր գետը երկնքի ցոլքերով ներկուած։ լեռնալանջից դանդաղութեամբ ցած էր իջնում մի բեռցած սայլ, իսկ նրան հետեւում էր մի դիւղացի, որ հազիւ հաղ քաշ էր գալիս սայլի ետեւից, երեւի շատ էր աշխատել։ Մի խումբ աղջիկներ վերադառնում էին քաղհանից եւ քաղցր երգում էին։ հօտերը գնում էին գիւղ խայտալով եւ փոշու ամպեր բարձրացրած։ Տեսարանը գրաւիչ էր, բայց ընկերս բոլորը թողած՝ նայում էր միայն այն բարձած սայլին, այն զոյդ տանջուած եղներին, մանաւանդ նը-րանց ետեւից քայլող այն յոպնած, փոշու գիւղացուն։

— Անիծուա'ծ աշխատանք, մոմուաց ընկերս։ նայիր այդ մարդուն։ նայիր նրա ցաւագար դէմքին, նրա տանջուած ոտներին, որոնք կարծես երկու փայտեր լինեն քաշ ընկած տիրոջ մարմնից։ այդ մարդն իր հետ քաշ է տալիս աշխատանքի անէծքը, օօ՛, անիծուած աշխատանք։

— Աշխատանքն օրհնուած է, — ասում են այս գետն էլ է օրհ-նըւած, չէ՞՝, չուր է մատակարարում այնքան դաշտերին եւ կեն-դանիներին։ բայց երբ դուրս թափուի ափերից վիշապի պէս եւ շրջակայքը հեղեղէ՝ մահ սփոելով ամէն կողմ, էլ չես ասի գետն օրհնուած է։ այն լեռն էլ օրհնուած է, կանաչաղարդ է ու սիրուն, տես վրան արտեր, բայց եթէ ներսից յանկարծ կրակ դուրս ժայթ-քի, մահ մաղէ աշխարհի վրայ, էլ չես ասի օրհնուած լեռ . . . չա-փը, բա՛րեկամ, չափից դուրս միշտ անիծուած է։

Ես լուռ կացայ, քայլելով հասանք գետափին եւ նստեցինք մի քարի վրայ։ Խաւարն իջաւ եւ ծածկեց ամէն ինչ։ սայլը չկար, գիւղացին չկար, աղջիկների ճայներն էլ չէին լսում։ իսկ գետը հոսում էր այժմ ինչպէս մի մութ, կապարէ զանդուած։ Ծնկերս նայում էր ալիքներին եւ ինքն իրան մրմոռում։

— Գնո՞ւմ են, գնում, ամէն մէկն իր համար, ամէնքը չդիտես ո՞ւմ համար։ Աստղերն էլ վերից պլազմում եւ դողդողում են ջրերի մէջ։

— Էլի նոյնն ես, բա՛րեկամ, ասացի ես. նոյն երազողը, նոյն փիլիսոփան։ Նա նայեց ինձ վշտոտ հայեացքով ու մի առ ժամանակ լսելուց յետոյ հարցրեց։

— Մի՞թէ դու ոչինչ չես տեսնում։

— Ես տեսնում եմ գետը, որ հոսում, գնում է իր համար։

— Դու տեսնում ես գետը, այդ քիչ է, շատ քիչ է, բա՛րեկամ։ Հայի՛ր այստեղ, մեր առաջը. ինչո՞ւ ամէն մի ալիք այստեղից անցնելիս անպատճառ պարտ է համարում մի ճղիխն առաջացընել. ինչո՞ւ է այնպէս գալարում ու յետոյ անցնում գնում։

— Այնտեղ ջրերի տակ ծածկուած ժայռ կայ։

— Ինչո՞ւ ժայռն այնտեղ է եւ ոչ ուրիշ տեղ։

— Ես ի՞նչ գիտեմ։

— Դու երբեք ոչինչ չդիտես, սիրելի՛ս, երանի քեզ։ Երանի բոլոր նրանց, որոնք ոչինչ չեն տեսնում, ոչինչ չդիտեն։ Ես դըժ-բախտութիւն ունեմ բանի մէջ բան տեսնել։ Եւ ինչքան բան... Ախ, այս գիշերները, միշտ այնքան շատ բան ունեն իրանց խաւար ծոցում։ Ինչե՛ր տեսայ, ուր չեղայ։

— Այն ժամանակից դու երեւի շատ ես թափառել։

— Աշխարհի երեսին ես թափառում եմ ինչպէս այս ալիքները, որոնք տարւում են իրար մղելով եւ չդիտես, ե՞րբ պիտի հանգիստ առնեն։ Թափառեցի, բա՛րեկամ, թափառեցի, ման ածեցի այս տառապած գլուխս եւ մի գիշեր իմ ճանապարհի վրայ պատահեցի գարերի ճամբորդին. ի՞նչ գիշեր էր, դու խօմ չես տեսել նրան, չես կարող տեսնել, նրան ոչ ոք չէ կարող տեսնել բացի ինձանից։

— Ո՞վ էր այն գարերի ճամբորդը։

— Ուզո՞ւմ ես իմանալ. այդ լաւ է, չես տեսել, դոնէ պատմեմ քեզ. լսի՛ր, բա՛րեկամ, լսի՛ր, այդ անօգուտ չէ, հաւատա՛, անօգուտ չէ։ Ես կ'ուղէի, որ ամբողջ աշխարհն իմանայ, բայց ինձ միշտ լսող չկայ. իսկ'զն, իսկ'զն թափառական, իսկ'զն ճամբորդ։

Դարիր էի օտար երկրում, ասաց նա հառաչելով. զարիր ու սեւաւոր, ինչպէս լինում են բոլոր զարիբները. դու խօմ համաձայն ես, որ օտարութեան մէջ ուրախ մարդն էլ զարիր չէ։ Յիշում եմ, ուշ գիշեր էր, ցուրտ, ձմեռ, եւ ես դնում էի մի անծայր

անապատով, փախչում էի իմ գլխից աղատուելու համար. ես նոյնիսկ մտածում էի, թէ ինչպէս այդ չարատանջ ուղեղս թաղեմ մի տեղ, թո՞ղ հանգստանայ, իսկ ես փախչեմ, փախչեմ, մի աղաստան գտնեմ ինձ համար: Այդպէս էի մտածում, ոէ ի՞նչ անէի, ես փախել էի բնակութիւններից, որովհետեւ տեսայ փողոցում դարձեալ մի ծերուկ, մի տանջուած ողորմելի ծերուկ, որ ձիւների միջից, ոտարորիկ, դողդողալով քաշ էր տալիս դարձեալ մի ահազին բեռ, տնքալով, հեւալով, լալով. ցաւոտ բան է, էէ՛, ծեր մէջքը մէծ բեռի տակ:

— Աշխարհում այդ շատ է պատահում, բա՛րեկամ, ասացի ես նրան հանգստացնելու համար:

— Ցաւն էլ այդ է, որ շատ է պատահում, եթէ մէկը լինէր, խօմ իմ ուղեղը հանդիսատ կը լինէր. շատ են, շատ են բեռների տակ ճարճատող ոսկորները. եւ քանի տեսակ բեռներ...

Հիւսիսային քամին փչում էր կատաղաբար, մոնչում էր իմ ուլիսի վերեւը, իմ շուրջը, խաղում էր ձեան հետ, մոմոռում հառաջում էր ասես մի տեղ, մի անկիւն էր փնտում իրը աղաստան, բայց ո՞րտեղ, մենք մի վիճակում էինք — ես ու քամին, լայն, ձիւնապատ անապատում մենակ ու անտէր, փախստական ու լալկան :

Ես շտապում էի, ճանապարհս հեռու էր, շատ հեռու. այնապիսի անապատներ ես շատ եմ անցել. գիտե՞ս, ինձ թւում է, թէ ես միշտ անապատում եմ թափառում, լայնարձակ, անծայր անապատում, ուր, ինձանից ու քամուց բացի, ոչ ոք չկայ, ոչ ոք... Ասա՛, աշխարհն ինչո՞ւ է անապատ:

Այն գիշեր հոգիս այնպէս էր ճնշում, սիրոս քամում էր, ճմլում. խաւարը, խաւարը, ի՞նչ խեղդող է: Ես ուղում էի մարդտեսնել, մի կենդանի շունչ պատահել այն մուայլ ամայութեան մէջ, բայց եթէ պատահէի, կ'անիծէի ժամը, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. իմ պատահած մարդիկ եղել են միշտ տանջանքի աղբիւր, ինձ զայրացնում են երջանիկները իրանց անասնական անհոգութեան մէջ, ինձ ցաւեցնում են դժբախտները իրանց խեղճութեան մէջ, իրանց անտէր, անդիտակից թշուառութեամբ:

Ձիւնի փոշու մէջ կորած եւ հեւալով, ես վազում էի շուտ կտրելու անապատը. չէ՞ անշուշտ նա վերջ ունէր, աշխարհում ամէն բան վերջ ունի, ես խօմ փիլիսոփիայ եմ, այդ լաւ գիտեմ, մէկ ցաւն է անվերջ, այն էլ ես կը վերջացնեմ մի օր:

Եւ վազում էի. յանկարծ ինձ թուաց, թէ ոտնաձայն եմ լըսում, ծանր, յողնած ոտքի ձայն, որ գալիս էր հեռուից, բայց ուղիղ իմ վրայ: Ականջ դրի, քամին պարզ, որոշ հասցնում էր ինձ այդ ձայնը, ես շտապեցի էլ աւելի, որ անծանօթ եկողը չհասնի: Մի փոքր յետոյ ձայնն աւելի լսելի դարձաւ, եկողը երեւի ինձանից արագ էր քայլում. մէկ էլ ոյժ տուի ոտներիս, եւ յանկարծ մի ծանր մարմին դիպաւ ինձ եւ քիչ մնաց, որ դէն շպրտէ: Ես օրորուեցի եւ կանդ առայ, նայեցի, — իմ կողքին հեւալով, տընքալով ցցուեց մի տարօրինակ մարդ: Նա նայում էր երեսիս, ուղիղ աչքերիս մէջ. թանձր խաւարում անդամ ես տեսնում էի նրա շեշտակի հայեացքը, տեսնում էի այդ կրակ կտրած աչքերը. մենք նայում էինք իրար, հեւում էինք, դու չնչերով տաքացնում իրար երեսը:

Եւ փչում էր քամին վո՞ւ, վե՞զզ, եւ ձիւնի փոշով ծածկում էր մեր գլուխները. վերջապէս ես մի կողմ քաշուեցի նրան ճանապարհ տալու համար, բայց նա կանգնած մնաց եւ շարունակում էր նայել ինձ միեւնոյն շեշտակի, կրակոտ հայեացքով: Ես աւելի յետ քաշուեցի:

— Ճանապարհ ես տալիս ինձ, այդ լաւ է, ասաց նա, այդ լաւ է, ամէնքն են ինձ ճանապարհ տալիս, երբ պէտք չէ տալ եւ փակում են առաջս, երբ պէտք է քայլել, քայլել...

— Ո՞վ ես դու, հարցրի:

— Ո՞վ եմ ես, չե՞ս ճանաչում:

— Ոչ, չեմ ճանաչում, եւ հաղիւ եմ տեսնում:

— Միշտ այդպէս է, ինձ չեն ճանաչում, երբ պէտք է որ ճանաչեն, եւ ճանաչում են, երբ ամենեւին հարկաւոր չէ:

— Բայց ո՞վ ես դու:

— Ես դարերի ճամբորդն եմ:

— Չեմ հասկանում:

Պատասխանի փոխարէն նա ծանր տնքաց:

— Ինչո՞ւ ես տնքում:

— Ինչո՞ւ եմ տնքում, դու կո՞յր ես:

— Ինչո՞ւ եմ կոյր, ես տեսնում եմ քեզ, տեսնում եմ քո աչքերը, որոնք փայլում են խաւարի մէջ, ես տեսնում եմ, որ դու ծերունի ես, ես լսում եմ քո հեռոցը, քո չնչառութիւնը, քո տընքոցը, ասա՛, ինչո՞ւ ես տնքում:

— Ինչո՞ւ եմ տնքում, ողորմելի անմիտ, դուր չէի ասում, որ

դու կոյր ես, որ դու չես տեսնում այն, ինչի տակ ճռնչում են իմ ոսկորները, ինչի տակ ես հետում եմ ու տնքում։ Նայիր մէջքիւ, մօտեցիր եւ նայիր ուշադրութեամբ։ Ես մօտեցայ, նայեցիւ. նրա մէջքին մի մութ, անձեւ, ահագին զանգուած կար, իսկ եւ իսկ մեզ շրջապատող խաւարի գոյնին, այնպէս որ նա խառնուում էր այս գիշերուայ հետ, ինչպէս նրա մի մասը։

— Այդ ի՞նչ է մէջքիւ։

— Քեզ ասացի, որ ես գարերի ճամբորդն եմ, իսկ այս . . .

Վո՞ւ, վը՞զզ, վուո՞ւ . . .

— Ուհ, այս քամին չէ թողնում, որ խօսեմ, նա քըում է ինձ, քշում անդադար . . . ես գարերի թափառականն եմ եւ մէջքիս՝ գարերի բեռն է, որ քաշ եմ տալիս ինձ հետ անվերջ, անվերջ . . .

— Դարերի բեռն ի՞նչ է։

— Դարերի բէ՞ոը . . . լսի՞ր, եւ նա օրօրեց մէջքի մութ զանդուածը ահագին թափով եւ այնտեղից հնչեցին հողի խեղղող ձայներ, սպանիչ, սրտաճմլիկ։

— Խեցի՞ր, շարունակեց նա. արցունքի, արեան, հառաչանքի մի խաւար զանգուած էր դրուած իր մէջքին, աւելի ծանր, քան լերան ժայռ։ Դու տեսե՞լ ես այն անիծուած մեռելները, որոնց վրայ տարիների ընթացքում ճամբորդները մի մի քար են ձգում եւ կազմուում է մի ահագին բլուր. ա՛յ, այն մեռելներն այնքան իրաւունք չունեն արտնջալու, տնքալու անէծքով շաղախած իրանց բեռից, որքան ես իմ մէջքի այս մութ զանդուածից. նրանց ոսկորներն այնպէս չեն ճարճատում ցաւով, որքան իմ այս խեղճ, տառապած մէջքը. այժմ հասկացա՞ր։

Վո՞ւ, վը՞զզ, վուո՞ւ. քամին սաստկացաւ, ձիւնի մի կատաղի մըրիկի էր, որ բարձրացաւ մեր զլիսին։

— Հանդա՛րտ, հանդա՛րտ, անողո՛րմ, գարձաւ նա քամուն, դնում եմ, դնում, ի՞նչ ես ծեր գնչուի պէս կատաղած ճւճւում. կերար, կերար իմ աննջուած հողին. այ, շուտով կը վաղեմ, ինչպէս մըրիկով բռնուած մի մութ ամպ, որ տարւում է երկնքի խաւար անսահմանութեան մէջ առանց զադար, հանդիսա գտնելու։

Եւ նա վայտը չարժեց, թափ առաւ գնալու համար, ես արդութեամբ բռնեցի թեւից։

— Կա՛յ, ո՞ւր ես գնում։

— Ո՞ւհ, ցաւում է մէջքս, թող որ վաղեմ, այս անիծած քամին մղում է ինձ, կանդնել չեմ կարողանում։ Եւ նա տնքում էր

եւ օրօրւում իր կանգնած տեղում, կարծես մէկը նրան հրում էր յետելից՝ ստիպելով վազել, թռչել, հեռու, հեռո՞ւ տանել իր տարօրինակ բեռը:

— Ինչո՞ւ վար չես դնում բեռդ:

— Տեղ չկայ:

— Տեղ չկայ... այս լայն արար-աշխարհում քո բեռին տեղ չկայ...

— Տեղ չկայ, ասում եմ, չեն ուղում, չեն թողնում, որ վար դնեմ, այնպիսի բեռ է:

— Զգի՞ր այստեղ:

— Ո՞րտեղ:

— Հէնց այստեղ, մեր ոտների տակ:

— Զեմ կարող:

— Զեմ ուղում, ի՞նչ կայ չկարողանալու, ես քեզ չեմ հասկանում:

— Զեմ ուղո՞ւմ... բախտերի շղթան անտեսանելի է, բայց նա կաշկանդում է երկաթից աւելի ամուր, ինձ կապում է մի ճակատագիր, անողոք ու անխուսափելի. այս մութ, մռնչացող, հեծեծող բեռը միայն շարան շարան գերեզմանների վրայ վար դնել կարող եմ, եւ ես վազում եմ այնտեղ հասնելու համար. վազում եմ բեռս թափելու համար եւ չեմ հասնում:

— Ինչո՞ւ, մի՞թէ շատ հեռու է:

— Շատ հեռու չէ, ես երբեմն նոյնիսկ խիստ մօտենում եմ, բայց չեն թողնում:

— Չեն թողնում, ո՞վ:

— Քամիները, բոլոր քամիները, խօսք մէկ արած, դրել են իմ մէջքին այս ահաւոր բեռը եւ ինձ մղում են երկրէ երկիր. եւ ես վազում եմ, վազում առանց դադար ու հանդիսատ դտնելու: Անցեալները նոյնիսկ ես այնտեղ էի, այ, այն լեռնաշղթայի մօտ,

— Նա մատով ցոյց տուեց հեռուն, — մի քանի քամիներ միաժամանակ փչում էին զանազան կողմերից, մէկը մղում էր ինձ դէպի հարաւ, միւսը՝ դէպի հիւսիս, եւ քիչ մնաց՝ ես նրանց ուժեղ թափով վեր բարձրանայի եւ տարուէի երկնքի երեսից. ա՛խ, երանի

թէ այդպէս լինէր, երկրի վրայ էլ տեղ չունեմ, զլուխ գնելու մի անկիւն չունեմ, դոնչ տարուէի վերեւ, ամպերի մէջ, ամպերի հետ, իմ հառաջանքով կայծակների հետ ճայթէի, իմ արցունքով անձրեւի հետ անձծք տեղայի երկրի վրայ, քամիների հետ

մոնշայի ծխնելոյզների մէջ եւ ամէն տեղից , ուր ես անցնէի , ներքեւի ապրողների մազերը գիշանային սարսափից . թէ չէ այսքան ցաւը , հառաչանքը , արցունքն ու արինը ես մենակ ո՞ւր տանեմ , ի՞նչպէս տանեմ : Տեղ չկայ , չկայ . ես յոդնած եմ , ոսկորներս ցաւում են , ես խեղճ եմ ու տառապած : Եւ նա հեկեկաց , եւ ես տեսայ խաւարի մէջ կրակէ արցունքներ , որոնք այրող ակօսներ ձևացրին նրա տանջուած դէմքին :

Վուո՛ւ , վը՛զ , վուո՛ւ . . . քամին էր , կատաղի ու ցուրտ :

— Հանդա՛րտ , հանդա՛րտ , անդո՛ւթ , ահա գնում եմ , քանի՛ դար է , բաւական չէ՞ :

— Լսի՛ր , տռւր ինձ քո բեռի մի մասը :

— Իմ բեռի մի մասը . . . ո՞ր մասը :

— Կէսը :

— Խեղճ , տանել չես կարող :

— Մի փոքր մասը :

— Բոնի՛ր , ահա :

Եւ նա դրեց իմ մէջքին մի փոքրիկ , շատ փոքրիկ մասը այն մութ զանգուածից , այն մոայլ բեռից . եւ ես զդացի ինձ ինչպէս մի հսկայ լերան ծանրութիւնը մէջքիս . կուրծքս ճնշուեց անհնարին ցաւից , ես տնքացի , քամու թափի տակ իմ էլ ոսկորները ճարճատեցին , աչքերիցս արցունքը ցայտեց եւ ես հեկեկացի :

— Ծա՞նը է , հարցրեց նա , ցաւակցաբար :

— Ես մեռնում եմ , քայլել չեմ կարող :

— Այդպէս է , ոչ ոք աշխարհում տանել չէ կարող , բացի ինձանից . յե՛տ տուր ինձ իմ բեռը , թող մենակ կրեմ , չնորհակալ եմ , որ գոնէ փորձեցիր , ուրիշներն այդ էլ չեն անում եւ հռհռում են իմ տնքոցի , իմ հառաչանքի վրայ :

Եւ նա խլեց իմ մէջքից փոքրիկ բեռը , կրկին ձղեց իր մէջքին , ցնցուեց , նորից լսուեցին հառաչանքներն ու լացը , նորից քամին մոնշաց կատաղի կերպով . եւ ծանր ցուպը դետին զարկելով՝ թափ առաւ , սլացաւ քամու հետ , ինչպէս մրրկատար ամպ : Ես լսում էի նրա աղեխարշ հեծկլտոցները , նրա հեկեկանքները . փոշմանեցի , որ բեռը յետ տուի :

— Կա՛ց , կա՛ց , ճչացի բոլոր ուժով :

Ի զո՞ւր , նա հեկեկում էր եւ սլանում քամու հետ :

— Կա՛ց , կա՛ց :

Նա թռչում էր անընդհատ . ես մնացի մենակ , կանդնած խուլ

անապատում, խեղդող խաւարի մէջ. մէջքիս վրայ բեռի տեղը
մոմոռում էր մի կակծեցնող ցաւով. քամին փչում էր կատաղա-
բար. ես ընկայ ձեան վրայ եւ հեծկլտանքը խեղդեց իմ կուրծքը.
Ես լալիս էի մենակ, անտէր ու խեղճ այն մռայլ, սեւ անապա-
տում: Ապա վեր կացայ եւ վազեցի դարերի ճամբորդին հասնե-
լու, եւ այն ժամանակից թափառում եմ աշխարհի վրայ ամէն
տեղ, վնտոռում եմ դարերի ճամբորդին. ասա', դու չե՞ս տեսել
նրան, դարձաւ նա դէպի ինձ երեսին նայելով:

Ես լուռ էի եւ խորասուզուած մտքերի մէջ:

— Զես պատասխանում. նա վերկացաւ, մի փոքր յետ քաշ-
ուեց:

— Է՛հ, մնաս բարով, ես կ'երթամ, իսկ դու նստիր այդտեղ,
նայիր ալիքներին ու մտածիր, մտածելը լաւ բան է, դու էլ փիլի-
սովայ կը դառնաս, մնա՛ս բարով...

Գիշերային խաւարի մէջ նա մի վայրկեանում անհետացաւ
ստուերի պէս. գետը շառաչելով անցնում էր իմ առաջից, խաւա-
րը խեղդող դարձաւ, սիրտս լի էր ցաւի զգացմունքով, իսկ դը-
լուխս՝ սեւ մեռայլ մտքերով:

Այնուհետեւ ես նրան էլ երբեք չպատահեցի:

ԼԱՇ, ՊԱՇՈԱԻ, ԼԱՇ

Նրա որդուն տանում են այսօր :

Հեռո՛ւ, հեռու տեղ են տանում պառաւի որդուն :

Յանցաւո՞ր է արգեօք այդ որդին, թէ ոչ, մօր ի՞նչ պէտքն է . դատապարտուածը՝ այն ջահիլ, սիրուն թիկնաւէտ տղամարդն իր որդին է , իր արգանդի ծնունդը, եւ նրան տանում են այսօր , տանում են ընդ միշտ , անդարձ :

Եւ մայրը զնում է որդուն տեսնելու վերջին անդամ . գնում է նրա պատկերը մի յետին փորձով իր ազօտ, մթաղնած երեւակայութեան մէջ պարփակելու, որպէսզի նրա հետ միասին շուտով հող մտնէ : Բանտը հեռու է . ոտքով գնալ չէ կարող, կառքը թանկ արժէ , բայց նա սղմած ունի իր ոսկրացած , դողդոջուն ձեռքում կեղաստ շորի մի հանդոյց , որի մէջ հինդ կոպէկ կայ , ուղիղ հինդ : Այդքանով նա կարող է բանտի դուռը հասնել , մի-այն հարկաւոր է քայլել մինչեւ ձիաքարշը :

Քայլելու համար տարածութիւնը մեծ չէ , բայց վշտից ու տարիների ծանրութիւնից փշուած կնոջ համար անհուն է : Երկու տակ ծալուած այն ոսկրակոյտը ահադին բեռ է նրա մաշուած , դողդոջուն ոսների համար : Եւ յետոյ աչքերը լաւ չեն տեսնում , եւ փողոցը ազատ չէ , անցուղարձը անվերջ , քանի՛ կառքերից պէտք է խոյս տալ , քանի՛ տեղ պատերից պէտք է բռնել , քարերը , աղիւսները չանդռելով՝ վայր չընկնելու համար :

Աշուն է . երկինքը դորչ ու լալկան . ամպեր կան ծանր ու խիտ , որոնք կախուած են ցած , ցած , կարծես ուզում են գրկել կտուրները իրանց սառն , այլանդակ թեւերի մէջ եւ ծխնելոյզների անցքերից խօսել անհասկանալի , մութ բաներ : Գոնէ անձբեւն , գոնէ պատառուի այդ մութ զանդուածը , որ բռնել է ամբողջ հորիզոնը , որ ծածկել է արեւ ու լոյս , կախուել է զլուխների վրայ , ճնշում է կրծքերը , խեղդում կոկորդները անողորմ կերպով : Բայց ոչ , նա կախուել է ու մնացել կապարի պէս ծանր , կապարի պէս կարծր :

Եւ այդ հսկայական , մռայլ վրանի տակ , որպէս մի անխու-սափելի ճակատագրի ներքոյ , մարդիկ այնուամենայնիւ գնում են , դալիս , վազվում են , հրհրում , բոթբոթում իրար , ամէն մէկը մի տեղ , մի անկիւն է ուղում աշխարհում : Ճխլուած , տրոր-

ուած կեանքն էլ իր այլանդակ հեւքն ու թափն ունի : Կապարէ երկինքը ծանր է ու խեղդող, բայց եւ այնպէս մի կերպ պէտք է ապրել . . . մի կերպ . . . եւ վաղվզում ու շպրտում են իրար, կոխկըռտում ու տրորում են մէկ մէկու, անհանդիստ են, կատաղի . վերից ճնշող ամսերը ամէնքին դարձրել են անձնասէր, մաղձոտ, չար ու մռայլ :

Այն ծեր, սեւազգեստ կինը, կուացած իր փայտի վրայ, քայլում է բոլոր ուժով այդ անզգայ, խելազար ամբոխի միջից . նա մերթ կորչում է, մերթ յայտնուում ինչպէս մի սեւ, երերուն կէտ, որ չգիտես ինչ մութ, ծանր բան ունի իր անորոշութեան, իր ցաւոտ ընթացքի մէջ : Մայր է, գնում է որդուն տեսնելու եւ այն վերջին անզամ . փոքրիկ անցք է միայն ուղում այս եռացող բաղմութիւնից, որ իր փխրուն մարմինը ու իր մեծ վիշտը քաշել կարողանայ :

Վազգվզում են, ամէնքն էլ հոգսեր ունեն, կեանքը ցաւեր է դրել իւրաքանչիւրի սրտին, կրծքին, մէջքին, գլխին. ո՞վ կարող է իմանալ, ո՞ւմ է հարկաւոր իմանալու, թէ այն կնոջը որքան մէծ է, որքան ծանր : Ինքը՝ այն երերուող պառաւը միայն դիտէ իր բեռի ծանրութիւնը, իր վշտի խորութիւնը, բայց գիտէ եւ այն, որ սպարտքերի ու կարողութիւնների ներդաշնակութիւնը աշխարհում միշտ խախտուած է : Լացն ու ծիծաղը, ցաւն ու ցնծութիւն բաժանողը մի անիրաւ ձեռք է, որ թիկունքների լայնութիւնն ու նեղութիւնը, ծունկերի պնդութիւնն ու թուլութիւնը բնաւ չի հարցնում եւ չէ հարցը երբեք : Ծեր կինը գիտէ այդ եւ տանում է իր բաժինը անտրտունջ, միայն մի անցք, մի բացուածք է խընդըրում սողալու կեանքի մեծ ճանապարհով :

— Ա՛խ, հասնեմ գոնէ, հասնեմ ժամանակին, մըմնջում են նրա շըթունքները :

Եւ քայլում է, քայլում է նա երերուելով, տնքալով, հեւալով, միշտ յենուած փայտին աջ ձեռքով, իսկ միւս ձեռքում պինդ սղմած այն կեղառատ հանդոյցը հինգ կոպէկով : Նրա գլխից վեր գորշ, չարազուշակ երկինքը ճնշում է բոլոր ուժով, ամսերը կնճռու ճակատներով վար կախուած, շարունակում են փսփսաւ ծխնելոյներին :

Քաղաքային տան վրայ ժամացոյցը խփեց . կինը կանգնեց ճայթի վրայ, յենուեց պատին, լայն շունչ առաւ եւ համարում է

զարկերը՝ մէկ, երկու, երեք, չորս... զարկերը յամբ են, դօղանը որոշ ուղարկում երկար, նա կարողանում է հետեւել, թիւն իմանալ. խիեց ուղիղ տասն անդամ, ժամի տասն է: Տա՞սն է... նրան տանում են տասնումէկին: Զիաքարշին դեռ չէ հասել: Ե՞րբ կը հասնի: Նա ոյժ տուեց իր ոտներին, խղճուկ, անոյժ ոտներին: Նա այժմ աւելի արագ է երերում իր գլուխը, զարկուում է սրան նրան, օրհնում է մեղմիւ, երբ տեղ են տալիս, մմումում է, երբ արդելում են առաջ դնալ: Զէ՞ նա մայր է, դնում է հարազատ որդուն տեսնելու եւ այն... վերջին անդամ. ի՞նչպէս չեն հասկանում, անողորմնե՞ր, մտածում է նա դառնութեամբ:

Ժամը խիեց տասն ու կէս: Մնաց միայն կէս ժամ: Նրա սիրտը ճմլուեց ցաւով.— Տէ՞ր Աստուած, կը հասնե՞մ արդեօք, չտանե՞ն... նրան...

Հինդ կոպէկն աւելի պինդ սղմուեց չորացած մատների մէջ, ձեռնափայտն աւելի արագ գողդողաց, խղճուկ ոտներին էլի ոյժ տուեց, վերջին ոյժը. շարժուում, թրպուտում է վիրաւոր թռչնի պէս, պէտք է հասնել: Երկու անդամ նրա քաշ ընկած գլխին այնպէս դիպան, որ նա դուրս ընկաւ մայթից քարերի վրայ, բայց էլի դնաց:

Ահա եւ հրազարակը, վերջապէ՞ս... Զիաքարշին սպասող բազմութիւնը շատ մեծ է, ո՞ւր են գնում, մի՞թէ ամէնքն էլ բանտում որդի ունեն, որին տանում են այսօր: Ո՞վ գիտէ, թէ ով ո՞ւր եւ ինչո՞ւ է գնում. երկնքի պէս մութ, երկնքի պէս մոայլ են սրտերը, թէ բանաս՝ մի անդունդ, խորքը նայես՝ սարսա՞վ... Սպասում են, պէտք է գնան, տեղ կը լինի՞... Բայց նա մայր է: գնում է որդուն տեսնելու, տարագրուող որդուն, եւ այն վերջին անդամ, տեղ պէ՞տք է լինի: Պառաւը երերալով հասաւ ու կանզնեց գծին մօտ, բոլորովին մօտ: Թէկուզ տասը տակ տրուրեն, նա չի հեռանայ, չէ կարող հեռանալ, պէտք է տեղ բռնէ, ո՞ւտեղից է եկել եւ ո՞ւր է գնում...

Երկնքից մութ, լալկան ամպերը էլ աւելի կախուեցին, մառախուղն իջաւ, լիզեց կտուրները, քառեց պատերին, հոսանուտ ծալքերով պարուրեց ամէն ինչ եւ խառնուեց միապաղադ, գորշ գետնի հետ: Տների զանգուածները կորան այդ համատարած մշուշի մէջ, որ լցրեց բոլոր խորչերը, բոլոր անկիւնները, թափանցեց բաց բերաններից եւ սառը համբոյրով գրկուեց սրտերի

Հետ : Էլ դէմքեր ու մարդկային ձեւեր չէին երեւում, այլ անորոշ, երերուն ստուերներ, որոնք լողում էին թանձր մառախուղի մէջ, ինչպէս խեղող խաւարում մոլորուած ողիներ :

Լսուեց զանգի ձայնը. ձիաքարշը հասաւ : Ծեր կինը սրտատրոփի, դողդողալով առաջ շարժուեց. բայց բազմութիւնը նոյնպէս իրար անցաւ : Նոյն տենդոտ, չարացած ամբոխը, որ իր տեղն է ուզում : Հրհրում, տրորում են իրար, ջլուտ, հուժկու ձեռներ կան, որոնք պինդ բռնել են կառքի սիւներից, ուժեղ ոտներ կան, որոնք հաստատ յենուել են աստիճաններին . խառնուել, գալարուել են միմեանց բոլոր ձուռած բազուկները, բոլոր մեկնուած ոտները : Մարմինների այդ ժխորի մէջ պառաւ կինը մի վայրկեանում կորաւ, ոչ ոք չլսեց ամբոխի այլանդակ զանգուածի տակից հնչուող ցաւոտ նվվոցները, ոչ ոք չնկատեց այն սեւ, կենդանի կոյտը, որ կարծես յանկարծ լուծուեց ոտների տակ, շաղախուեց գետնի թանձր ցեխին :

Զանգը հնչեց կրկին . կառքը շարժուեց, հրապարակը բացուեց եւ նրա գորշ մակերեւոյթի վրայ ընկած էր պառաւ կինը աջ ձեռքով բարձր բռնած իր հինգ կոպէկը, ձախով յենուած ցեխոտ գետնին : Արցունքն աչքերին նա նայում էր հեռացող կառքին . նայում էր նրա վրայ տարուող բազմութեանը, այն հաստ բռննցքներին, այն անողորմ, կատաղի դէմքերին, ուժեղ թիկունքներին :

— Գնա՞ց . . . տարա՞ն . . . էլ չեմ տեսնի . . . տարա՞ն, մրմընջում էր նա ցաւադինօրէն :

— Ի՞նչը տարան, անխե՞լք պառաւ, ձայն տուին նրան այս ու այն կողմից, կարծելով, թէ նրա բացականչութիւնը ուղղուած է հեռացող ձիաքարշին :

— Վե՛ր կաց, ասաց մօտեցող ոստիկանը, շուտով միւսը կը դայ, կ'երթաս :

Ծեր կինը դողդողալով վեր կացաւ, քաշուեց մի պատի տակ, ընկաւ թուլացած եւ լուռ լալիս էր իր ծերութիւնը, խեղճութիւնն ու անզօրութիւնը, լալիս էր իր անարդուած, բիրտ բռունցքների ու ոտների տակ տրորուած վիշտը, որ էլ տանելու ոյժ չունէր :

— Տարա՞ն . . . տարա՞ն . . . մրմնջում էր նա, եւ ամբոխը նայում էր քարսիրտ ու անտարբեր . . .

Մի եւ նոյն ժամին բանտի բակում գունատ ու մուայլ երիտա-

սարդը իր շուրջը նայեց, այցելուների մէջ վնառում է մէկին. ի զո՞ւր, դէմքերն օտար էին... մայրը չկար: Յուսահատ ու խորտակուած՝ նա գլուխը քաշ ձգեց կրծքին եւ երկու կաթիլ արցունք կախուեցին արտեւանունքներից եւ սողացին մաշուած այտերից վար: Երիտասարդը շղթայուած զոյդ դաստակները մի փոքր բարձրացրեց, դէմքը կուացրեց ու սրբեց արցունքը եւ էլ վեր չնայեց: Շղթաները շառաչեցին՝ զըրը՝նդ, զըրը՝նդ, եւ տարագրուող խումբը թաղման թափօրով դուրս եկաւ երկաթէ դռնից ու լուծուեց մշուշի մէջ... հեռո՞ւ, հեռո՞ւ տեղ էին դնում եւ այն անդարձ, ընդ միշտ:

Եւ այնտեղ հապարակում, պատի տակ կծկուած՝ դեռ լալիս էր պառաւ մայրը. ձիաքարշերը դալիս անցնում էին իրար յետեւից, բայց նա անշարժ էր իր տեղում, նրանցից եւ ոչ մէկը չէր կարող նրան հասցնել իր զաւակին:

Լալիս էր դժբախտ մայրը իր որդու համար միայն. բայց չկար մէկը, որ լաց լինէր այն բիրտ բռունցքների, այն քար սըրտերի, այն խեղդող, անլոյս երկնքի համար, որ խղճերի վրայ ձգել էր մահու ստուեր:

Լա՛ց, պա՛ռաւ, լա՛ց այդ ամէնի համար:

Ք Ր Ք Ի Զ Ը

Չդիտեմ ինչու ուշացայ :

Մութը կոխեց . փողոցները դատարկ էին արդէն : Ճրագա-
լոյցը շուտով ներս քշեց մարդկանց : Պատահում էին միայն հատ-
հատ ուշացած անցորդներ , որոնք շտապով աղմկում էին մայ-
թերը , ապա ստուերների պէս ծածկում մի անկիւնում , կամ
լուծում հեռաւոր խաւարի մէջ :

Ես վերջինն էի . եւ քայլում էի դանդաղութեամբ եւ լսում
էի իմ ոտների ձայնը , որ հնչում էր ամայի փողոցում : Մի ան-
հուն տիրութիւն , անորոշ ու անհասկանալի , համակել էր իմ հո-
գին , եւ ես քայլում էի ինչպէս անծայր անապատում մոլորուած .
ամայութիւնը խեղդում էր ինձ , կեանքի ամայութիւնը :

Տուն դառնալ չէի ուղում . մտածում էի քայլել , քայլել :

Ես գիտէի , որ բոլոր յարկերի տակ իշխում է խինդն ու ցըն-
ծութիւնը , որ ամէնքը դոհ են , ամէնքը երջանիկ , եւ նոյնիսկ
նրանք , որոնք այլ օրերում ընկճուած են կեանքի ծանր բեռի
տակ , այսօր էլի կարողանում են մի վայրկեան հրճուել , մի տաք
խօսք դժոնել իրանց սրտում , մի հաճելի անկիւն լայնարձակ աշ-
խարհում :

Ես չունէի ո'չ տաք խօսք եւ ո'չ հաճելի անկիւն . քայլում էի
տիեղերքից դուրս , եւ կ'ուղէի , որ ոչ ոք , ոչ ոք չխանդարի իմ
անօրինակ միայնութիւնը : Դոհ էի , որ վերջին անցորդների քայ-
լերը լուցին :

Գնում էի մեն մենակ , թողնելով որ ուրախանան ամէնքը ,
ով կարող է :

Որչափ քայլեցի չդիտեմ :

Յանկարծ յետելիցս լսուեցին նոր ոտնաձայներ :

Ես դժկամակութեամբ կանդ առայ եւ յետ նայեցի :

Իմ յետելից քայլում էր մէկը , որ նոյնպէս կանդ առաւ :

Խոյս տալու համար՝ ես քայլերս արագացրի եւ ճանապարհո-
ծուեցի : Անծանօթ ոտնաձայնը լուց :

Երեւի հարբած մարդ էր , մտածեցի ես հանգստացած եւ
վերստին անձնատուր եղայ իմ խոհերին :

Մի տեղ մոնչաց մի խողի ձագ , մոնչաց այլանդակ ձեւով

ու լրեց վայրկենապէս — երեւի մորթեցին։ Մի փոքրիկ տղայ առաջլցոս անցաւ սրարշաւ, դրկած տանելով մի փոքրիկ գառ, որ ցաւագինօրէն մայում էր։

«Մորթելու են տանում», ասացի ինքս ինձ անտարբեր եղանակով։ Մի փակ դրան յետեւում, որ երեւի ճաշարան էր, խարխուլ նուազարանի ձայնն էր հեկելում, նրա հետ խուլ մռմռոց էր լսւում։

Առաջ անցայ։

Մի ներքնայարկից խոպոտ երդի ձայն էր դալիս։

«Թո՛րդ ախալէր, թո՛րդ, որ իմ սիրտ կըակ ու բոց վառուած էղնի,

«Թո՛րդ, որ իմ աչք կլկլացող պղտոր պղտոր աղբիւր էղնի»։

Ղարիբներն էին այդպէս ուրախանում։ Արեւելքը միայն դիտէ, թէ ինչպէս պէտք է ուրախութեան ժամանակ լալ։

«Այստեղ պատմութիւնը միշտ գլմիվայր է ընթացել», մըրմընջացին իմ շրթունքները։

Վերստին լուութիւն։

Եւ քայլում էի։

Յանկարծ դարձեալ մի ոտնաձայն։ Յետ նայեցի, կարծես նոյն ստուերն էր։ Այս անդամ առանց ուշադրութիւն դարձնելու շարունակեցի ճանապարհու։ Ոտնաձայնը սակայն, շատ մօտեցաւ։ Անձանօթը քայլում էր իմ յետեւից համարեա կրնկակոխ։

Զայրացած վերստին յետ նայեցի։

— Ո՞վ ես դու...

Նա լուռ էր։

Ես աւելի մօտեցայ։

Դէմքը խաւար էր, որպէս մութ գիշերուայ մի կտորը, միայն երկու աչքերը վառուում էին երկու բոցերի պէս, եւ բերանից շունչը փչում էր, որպէս տաք խորշակ։ Նա կանգնած էր յամառ ու հպարտ, եւ նայում էր ինձ։ Զգացի, որ նրա հայեացքը խեղդում է ինձ։

— Ո՞վ ես դու, նզովուա՛ծ, ճչացի ես յուսահատարար։

«Ես նա՛ եմ, որին տիեզերական ոյժը մի օր հսկայական ձեռքով դուրս չպրտեց ժամանակից ու տարածութիւնից, եւ որին ձեր աստուածն այլեւս նայել չի կարողանում առանց կարմրելու։

«Ես նա՛ եմ, որին կանչում են մարդիկ իրենց ըմբռատութեան ու զայրոյթի վայրկեաններում, որին նզովում են եկեղեցիներում հօրների առաջ սողացող ճիճուները եւ որին օրհնում են խաւար անդունդներում, ուր իմ գահն է»:

«Ես նա՛ եմ, որին եղբայր են մարդիկ իրենց գործերով, իրենց հոգիներով եւ որին անիծում եմ իրենց աղօթքների մէջ, իրենց Աստծուն հաճելի լինելու համար :

«Ես նա՛ եմ, որի քրքջից դողում են մարդիկ եւ կրծոտում են իրենց շրթունքները, որ չճշան ճշմարտութեան կիզիչ ցաւից, որ կաթիլ կաթիլ ընկնում է իմ ձայնի իրաքանչիւր շեշտից :

«Ես նա՛ եմ, որի հոգին կրում է բոլոր հպարտ ըմբռատութիւնների բոլոր աւերիչ ու զարհուրելի խենթութիւնների մըրիկները :

«Ես նա՛ եմ, որի ոգին կրծում է բռնաւորների փառահեղ գահերը եւ աշխարհի մեծութիւններն հեղնում ու խորտակում :

«Ես «Զարիքն եմ» : Այսինքն գերագոյն ճշմարտութիւնը, որովհետեւ տիեզերքում միայն ե՛ս եմ իրական, անխուսափելի, ահաւոր. բոլոր մնացածը պառաւ կոյսերի եւ ընկնաւոր միայնակեցների զառանցանքն է :

«Ես նա՛ եմ, որին փսխել է արքայութիւնը՝ դժոխքում իշխելու համար եւ որը հեղնում է ե՛ւ արքայութիւն, ե՛ւ երանութիւն ե՛ւ հաւատ ու երկինք :

«Ես սոսկումն եմ ու ըմբռատութիւնը. ես սարսափն եմ ու նղովքը. հասկացա՞ր...» :

— Ասա՛, այժմ, ի՞նչ ես ուզում այս ժամին այստեղ :

— Քեզ պէս քայլում եմ ու խորհում :

— Վաստ օր ես ընտրել. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» . քոյաղթանակի օրը չէ :

Պատասխանի փոխարէն նա մի դժոխային քրքիջ արձակեց, որ ուշ գիշերներին անապատներում ոռնացող հողմի պէս, իեղդող ելեւէջներով տարածուեց լուռ շրջակայթի վրայ եւ գնաց մեռնելու հեռաւորութեան մէջ: Ես տեսայ ինչպէս ցնցւում էր խաւարի մէջ նրա մութ մարմինը. զգացի, որ նրա հնչիւնները թափանցում են հոգուս մէջ սառ նշտրակի պէս եւ նրա հեղնութիւնից կաթիլ կաթիլ թափուող թոյնը քանդեց իմ երազների, իմ խոհերի աշխարհը :

Եւ որքան երկար էր քրքջում նա . կծկուեցի ու խեղճացայ , ինչպէս անողորմ կերպով ապտակուած երեխայ :

— Լսի՛ր , ասաց նա , դադարելով ծիծաղել , ես քեզ տեսայ մտամոլոր քայլելիս , երբ ամէնքը , ամէնքը հրճուանքով նրա յարութիւնն են մրմիջում : Տեսայ եւ ասացի ինքս ինձ՝ ահա մէկը , որ իր գանգի տակ իմ գժոխաքի մասն ունի , որի ուղեղում իմ ողին է թաղաւորում : Ես քայլեցի յետեւիցդ , ահա տեսնում եմ , որ սխալուած եմ եղել , դու դողում ես . . . դնա՛ , տիեզերքից դուրս քայլող չես . . .

Նա յետ յետ քաշուեց :

Եւ ես տեսայ , որ նրա բոց աչքերը մարում են խաւարի մէջ ինչպէս հանդչող կրակներ , եւ նրա մութ զանդուածը լուծւում ու չքանում է ինչպէս սեւ ամպը :

— Սպասի՛ր , ես նղովում եմ քեզ , եթէ չսպասես :

— Ի՞նչ ես ուղում :

— Ասա՛ ինձ , ինչո՞ւ քրքջացիր :

— Ես միշտ քրքջում եմ , երբ աշխարհը խարում է ինքն իրեն . իմ քրքիջը ճշմարտութիւնն է : Ասա՛ , կարո՞ղ ես տեսնել ճշմարտութիւնը :

— Այո , կարող եմ , որքան եւ նա զարհուրելի լինի :

Եւ նոյն վայրկեանին նա առաջացաւ դէսի ինձ մօտ մօտ , բոց աչքերը սենեռեց իմ բիբերին . ես զգացի նրա կիզիչ հայեացքը իմ հոգու խորքերում , եւ նրա տաք հետքը խորշակի պէս լիզեց դէմքս :

• •

Զգիտեմ ո՞ւր էինք գնում : Մեր առաջ մի ահադին չէնք էր կեղտոտ շաղախից ծեփուած , որի պատերից գորշ կաթիլներ ծուրում էին վար ինչպէս կեղտոտ որդեր . իսկ առաստաղից , ինչպէս անձքի անձեւ սեւ մուր էր մաղլում թունաւոր մթնոլորտի մէջ : Գաղջ ու կեղտոտ յատակի վրայ փուած էին հարիւրաւոր մարդկային մարմիններ , սեւացած , խոշտանդուած ու տրորուած :

— Հանդստանում են , ասաց նա եւ դարձեալ քրքջաց , ու նրա ձայնից զարթնեցին բոլորը , ցնցեցին իրենց յոդնած գլուխները , տրորեցին իրենց մթաղնած եւ պղտոր աչքերը եւ միահամուռ տնքոցը , տանջուած կրծքերի տնքոցը տարածուեց չէնքի

կամարների տակ, փարեց կեղտուա առաստաղին, քսուեց գարշահու պատերին ու մեռաւ հեծեծանքով։

— Աշխատանքի դարաւոր նզովքն է իշխում սրանց թիկունքներին. ժամանակը թաւալւում է եւ նա, այդ յաւիտենական նըզովքը օձի պէս ճկուն, օձի պէս թունոտ գալարւում է դարերի միջից միշտ սրանց հետ, միշտ սրանց դլիսին։ Երկնքի փառարանութեան փոխարէն այս տրորուած մարմիններից բարձրանում է քրտինքի տաք գոլորշին եւ կեղտ ու մուրի դարշահոտութիւնը։ Աշխարհը սրանց արիւնը ծծում է դարերից ի վեր, եւ սրանց կապտած, ճմուռած միսը լափում։ Երկու հազար տարի սրանք մրմնջում են «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», հա, հա, հա... եւ նա վերստին քրքջաց։

— Անցնե՞նք։

Եւ յանկարծ բացուեցին մեր առաջ մութ ու խոնաւ նկուղների անվերջ շարքեր, ուր խեղճերի ցաւն էր գալարւում ահազին ու այլանդակ։ Ես տեսայ վտիտ, հիւծախտաւոր երեխաներ, իրենց մայրերի չորացած ստինքներին փարած թոյնը ծծելու համար. ես տեսայ ապակու պէս պաղ աչքեր, մի կէտի յառած, եւ ինձ թւում էր, թէ նրանց հայեացքի տակ գետինը կ'ուռի եւ կը պայթի։ Եւ իրար կողքի սղմած ցաւագարների բազմութիւն, արձանների պէս քարացած՝ որոնց կապտած շրթունքներն իրար վրայ էին իջել զայրոյթով, որոնք այս աշխարհից չէին, այլ կարծես տարւում էին անհունութեան մէջ անդեկ ու անկայուն փնտըռուելու համար այն աստղը, ուր չարիքն այնքան հզօր եւ կեանքն այնքան նողկալի չլինէր։

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց».

Ճչացի ես իմ կրծքի բոլոր թափով։

Բազմութիւնը մնաց համը ու անշարժ, միայն վերստին հնչեց իմ ուղեկցի քրքիջը, որպէս պատասխան իմ ցաւի աղղակին։

Եւ բացուեցին իմ առաջ անծայր ու դժնղակ ճանապարհներ, որոնցմով անցնում էին հազարաւոր վտարանդիներ, չղթայակապ ու ցասկոտ։ Սուեինների շարքերի մէջ նրանք քաշ էին տալիս իրենց տանջուած մարմինները եւ նրանց քրքրուած ոտների տակից փոշին բարձրանում էր բարդ բարդ ամպերի պէս եւ նստում

Նրանց յոդնած գլուխների վրայ: Նրանց յետեւից քայլում էին զինուած ուրիշ շարքեր, քրքջում էին դիւական ծիծաղով:

— Լո՞ւմ ես:

Եւ փակեցի ականջներս, բայց հեռուում բացուեց մի այլ տեսարան, խօլ ու թանձր կամարների տակից հնչում էին շղթաների ձայներ, տնքոց ու մոնչոց: Ամբողջ շնչքը հրէշի պէս գալարում էր ներքին ցաւից ու զայրոյթից:

— «Սրանք բոլորը իմն են. դրանց հոգում ես եմ գրել ըմբռոտութիւնը: Նրանց կրծքերի տակ օճերն են գալարուում ու Փշշացնում եւ նրանց զգացած ցաւի իւրաքանչիւր մասնիկը հազար փուշ ունի: Եւ երբ նրանց ոսկորները մաշուեն, ուրիշները կը գան աւելի կատաղի, աւելի խիղախի:

Սա ճշմարտութիւնն է, ես եմ ուզում, որ այդպէս լինի այն օրուանից, երբ տիեզերական զօրութեան ձեռքը ինձ դուրս շպրտեց ժամանակից ու տարածութիւնից:

Հաւատա՛, ընկե՛ր, երջանկութեան անյագ տենչչը, որ ինոթորկում է մարդկանց հոգին, իմ դիւական հանճարեղ խաղն է:

Նրանք ճանձրոյթից կը մեռնեն ճեր Տիրոջ մտածած արքայութեան մէջ, եթէ ես չլինեմ:

Ճշմարտութիւնը ցաւն է. անկարելիի, յաւիտենականի այլող կարօտը: Սրանք բոլորը ցաւի վարպետներն են եւ զոհերը: Մարդի կատարելատիւզը ե՛ս եմ, եւ ո՛չ թէ նա. մարդկային հոգին ինձ պէս յաւիտենական դժգոհն է: Ցնորքներն ու երազները ես եմ ստեղծում. ես հոգիների պարտիզապանն եմ, բայց թունաւոր փշեր տնկելու համար:

Ոչինչ չկայ, կամ միայն ես...»

— Սո՛ւս է:

— Նայի՛ր հեռուն:

Անհուն դաշտեր էին, ուր հողը բոսորագոյն շաղախ էր եւ որի վրայ խաղում էր կարմիր շամանդաղը: Մարմինների մի անծայր բազմութիւն, խորտակուած անտառների պէս իրար վրայ թափուած, իրար գալարուած, սողում էր ու մոնչում: Եւ բոլոր շրթունքներից նզովք էր կաթկաթում:

— Ի՞նչ ես կարծում, ո՞ւմ են անիծում:

— Քե՛զ:

Եւ նա դարձեալ քրքջաց, հսկայական անվերջ ծիծաղով եւ ինձ թուաց, թէ նրա մութ մարմնի հետ գողում է ողջ տիեզերքը:

— Միամիտ ես, շարունակեց նա, հաւատա՛, որ եթէ ես չկենամ, նրանք իրենց հոգուց գուրս կը քաշեն սեփական կրքերը եւ կը ստեղծեն հաղար ինձ նմանները: Յաւիտենական դժուհներն են, պիտի կրծոտեն, խեղեն եւ լափեն իրար, երբեք չկշտանալու համար: Եւ ողորմելիներն իրենց մխիթարելու համար այդ արիւնոտ պայքարի անունը դրել են առաջադիմութիւն, հպարտ ընթացք դէպի՝ իրենք էլ չգիտեն՝ ո՞ւր ու ո՞ւ այսպէս չէ՞... «Քրիստոս յարեալ ի մեռելոց», այնպէս չէ՞...

Եւ վերստին հնչեց նրա քրքիջը, ես տեսայ, թէ ինչպէս նա լուծում է խաւարի մէջ, ինչպէս նրա աչքերի բոցերը կամաց կամաց մարում են հեռաւորութեան մէջ հանդչող կրակների պէս...

Մենակ էի ու խորտակուած մի ահապին ցաւի բեռի տակ: Դարերը անճոռնի հրէշների պէս իրար հրհրելով անցնում էին առաջից բեռնաւորուած մարդկային արիւնոտած մարմիններով եւ բոլորը, բոլորը գնում էին խորտակուելու այն անյատակ անդունդներում, որոնք բացուած էին իմ առաջ:

Եւ նրանց խելագար ընթացքի թափը ծովի յորմանքի պէս զարկուեց ինձ եւ ես գահավէժ տարւում էի նրանց հետ դէպի նոյն անդունդները:

Զարհուբելի էր...

Լուսաբաց էր. արեւի առաջին շողերը լուսամուտից թափանցելով խաղում էին աչքերիս վրայ: Մայրս կանգնած էր անկողնիս առաջ:

— Քնի մէջ ճշում էիր, ասաց, երեւի կօշմար ունէիր — «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Պատասխանի փոխարէն ես բարձրածայն քրքջացի անմիտ հրէշաւոր ծիծաղով:

Մայրս զարմացած յետ յետ քաշուեց.

— Երա՞զ ես տեսել:

— Հա՛, մայրի՛կ, երազ, երազ, ամէն ինչ երազ է այս նզովուած կեանքում...

Լ Ա Յ Ա Ղ Յ Ո Յ Ս Ե Ր

(1906 — 1907)

Զ Ո Ր Ե Ք Ն Ո Ւ Կ Ը

Մայիսեան մի դրաւիչ երեկոյ էր. պարտիդի ծառերն իրանդ թաւ սաղարթները օրորում էին մեր գլխին մի մեղմ անուշիկ փսփսուկով, որի մէջ զգացւում էր գարնանային բնութեան ստեղծագործական թափը: Լրիւ լուսինը իր գունատ շողերի փնջերով տերեւների արանքից թափանցում էր մինչեւ մեր սեղանը՝ լուսաւորելով մեղանից մէկի ճակատը, միւսի այտը, երրորդի կուրծքը կամ դլուխը: Ծառերի թեթեւ սօսափիւնի հետ այդ արծաթագոյն լոյսերը՝ ինչպէս մոլորուած թեթիւներ, երերում, վաղվղում էին տերեւների մէջ, մեր շուրջը, մեր դլուխների վրայ, երբեք իրար չհասնելու համար: Չորս կողմում, ծառերի մէջ ինչ որ միջատներ, որոնց համար գիշերային խաւարը երեւի արշալոյս էր, գուրս էին սողացել փչակներից եւ խուլ քսոց տարածել ամէն կողմ: Մեր առաջ՝ սեղանի վրայ, ուր եռում էր հեշտաեռը, սիրունիկ դիրքով նստել էր փոքրիկ կատուն, որը կամ նայում էր լուսնի խալացող շողերին, կամ շտապում էր ծառից ընկած այս կամ այն միջատը ճիւլել իր թաթով և խաղալ դիակի հետ:

Գեղեցիկ տանտիկինը իր քնքոյց ձեռներով մեղ թէյ էր մատակարում եւ միեւնոյն ժամանակ մասնակցում ընդհանուր խօսակցութեան: Եւ բնականապէս, ինչպէս վայել էր այս բուրալից, դիւթական երեկոյին, խօսակցութեան նիւթն էր սէր, երջանկութիւն, անխառն վայելքներ: Պատմւում էին արկածներ սրախօսութիւններով ու կատակներով համեմուած, որոնք վերջանում էին ընդհանուրի քրքիջով: Սիրտ բանալու ու երեխայական ձեւով խնդալու այն ժամերից մէկն էր, երբ մարդ մոռանում

է կեանքի սեւերը, միայն լուսաւոր վայրկեանները տեսնելու համար: Մեղանից իւրաքանչիւրը, առանց քաշուելու, պատմում էր մի բան իր կեանքից, սիրային մի արկած, ամէնքիս զուարձացլու անհրաժեշտ պայմանով:

— Բայց դուք ոչինչ չէք պատմում մեզ, ասաց տանտիկինը, դիմելով մեր ընկերներից մէկին, որ ընդհանուր ցնծութեան մէջ լուռ նստել էր մի մութ անկիւնում եւ ասես չէր լսում եւ չէր տեսնում, թէ ինչ է կատարում իր շուրջը: Ամէնքս մէկէն դարձանք դէպի նա:

— Ի՞նչ ասեմ, տի՛կին, պատասխանեց նա, բախտի խորթ դաւակն եմ ես. կեանքն ինձ ոչինչ չտուեց, նրա լայնարձակ ու հարուստ պարտիզից ես ոչինչ չքաղեցի: Ճանապարհս միշտ փշոտ եղաւ, անցրած օրերս՝ անգոյն: Եւ սակայն կեանքում որքան շատ են նրանք, որոնց դիպուածը՝ այս', մի շատ սովորական դիպուած, յանկարծ տալիս է ամէն ինչ, ե՛ւ անուն ու հարստութիւն, ե՛ւ սպատիւ ու փառք: Է՛ս, տի՛կին, ես իմ միակերպ, ձանձրալի կեանքից ոչինչ չհասկացայ:

Եւ նրա գլուխը խղճալի կերպով կախուեց կրծքին: Ծիծաղը լուց, խօսակցութիւնն ու կատակները դադարեցին: Ամէնքս էլ մտածում էինք լուռութեամբ: Մեր ընկերը՝ մի տարիքաւոր ամուրի, իսկապէս իրաւունք ունէր գանգատուել բախտից: Բարի մարդ էր, իր ամբողջ կեանքը անցել էր խաղաղ, միակերպ, ինչու պէս ինքն էր ասում անգոյն ու անհամ, առանց շատ մեծ դժբախտութիւնների, բայց եւ առանց որ եւ է փայլի: Մի խղճալի միջակութիւն էր այդ մարդը, որից միլիոններ գալիս են ու անցնում, առանց որ եւ է հետք թողնելու կեանքի մեծ ճանապարհին:

Մայիսեան երեկոյ, բուրալից պարտէզ, լուսնի երերուն շողեր, զեկիիւոի առաջ սօսափող ծառեր, ջահիլ, գեղեցիկ տանտիկին, այս բոլորը չափազանց բանաստեղծական էր եւ մեր հոգիները լցնում էր ապրելու, վայելելու, հրճուելու մի անզուսպ տենչով, բայց մեր ընկերոջ անակնկալ գանգատը մի տխուր քօղձկեց պատկերի գեղեցկութեան վրայ: Լուռ էինք:

Մինչ այդ՝ տիկինը թէյը բաժանեց՝ վերջացրեց, նազելի պէրանքով ձգուեց պարտիզի թեթեւ բաղկաթոուի վրայ եւ իր հոլանի, գիրդ բազուկների մէջ առնելով փոքրիկ կատուին, քըն-

քոյշ ձեռներով շոյում էր կենդանուն, որ մեղմիւ մռոռում էր աչքերը կիսախոռութիւն:

— Նայեցէ՞ք, շարունակեց մեր ամուրի ընկերը, այդ կատուն անդամ աւելի երջանիկ է, քան ես: Քառասուն հինգ տարիներ բոլորեցին իմ գլխով, եւ դեռ ո՛չ մի անդամ այդքան քնքոյշ ձեռքեր չչոյցեցին իմ յոզնած ճակառը, դեռ երբեք իմ գլուխը այդպիսի բաղուկների վրայ չհանդչեց: Օ՛, ես նախանձում եմ անդամ այդ ողորմելի կենդանուն, որ վայելում է մեր շնորհալի տանտիկնոջ սէրը:

Լոռութիւնը շարունակւում էր. ամէնքիս սրտի վրայ էլ ասես մի ծանր բեռ էր իջած:

— Երբ եւ իցէ չորեքնուկ քաղե՞լ ես դաշտերում, հարցրեց մէկը:

— Քաղել եմ, քաղել եմ, եղաւ պատասխանը:

Այս անակնկալ հարց ու պատասխանը ծիծաղ առաջ բերեց եւ ճնշող լոռութիւնը խղուեց: Ընդհանուր տրամադրութիւնը մի փոքր փոխուեց դէպի լաւը, սակայն տանտիկինը շարունակում էր մնալ լուր ու մոռալ, ասես մի ծածուկ միտք նրան խիստ դրադեցնում էր եւ նա չէր լսում մեր ծիծաղը: Ի յարդանս տիկնոջ ամէնքս էլ ստիպուած էինք վերստին լոել:

— Լաւ յիշեցրեք ինձ չորեքնուկը, ասաց տիկինը, երբ լոռութիւնն ընդհանուր եղաւ. թոյլ տուէք ձեզ պատմեմ մի զրոյց, որ վերաբերում է մեր այսօրուայ խօսակցութեան եւ որ գուցէ անհետաքրքիր չլինի:

— Խնդրում ենք, խնդրում ենք:

«Երկու երիտասարդներ՝ այսպէս սկսեց նա, սրտակից ընկերներ, մի եւ նոյն դիւղից մի դժբախտ տարի հայրենիքի թըշնամիների դէմ կոռուելու գնացին. նրանցից մէկը դիւղում իր յետեւից չէր թողնում ոչ ոք, մանկութիւնից որբ մնացած՝ նա այժմ գլխովին մենակ էր: Միւսը նշանուած էր մի շատ գեղեցիկ աղջկայ հետ, սիրում էր եւ սիրուած էր նրանից: Հրաժեշտի ըուղին նա արցունքն աչքերին անիծում էր իր բախտն ու պատեղին, որ եկաւ իր երջանկութիւնը խորտակելու: Աղջկին էլ բազմը, որ եկաւ իր երջանկութիւնը խորտակելու: Աղջկին էլ հեկեկալով ընկաւ նրա պարանոցով, վերջին համբոյր դրոշմեց նրա շրթունքներին, ապա տուեց իր նշանածին մի մեղալիօն:

— Ա՛ռ, կախի՛ր այս քո կըծքին, ասաց նա, մայրս է ինձ ըն-

ծայել իր օրհնութեան հետ, եւ թող նրա օրհնութիւնը քեզ հետ լինի պատերազմի վտանգների մէջ:

Բաժանուեցին անմխիթար սրտով:

Նշանուած երիտասարդը ճանապարհին խիստ տխուր էր, անդադար յիշում էր սիրած աղջկան եւ գանգատուում չար բախտից:

— Մի՛ տրտնջա, սի՛ րելիս, ասաց նրան ընկերը, դու դարձեալ ինձանից աւելի երջանիկ ես. եթէ մեռնես, երկու կաթիլ արցունք թափող կը լինի քեզ համար, թէ կենդանի վերադառնաս, քեզ սպասում է մի սիրող արարած, որի քնքոյչ բազուկների վրայ կարող է հանդչել քո յոդնած գլուխսը: Իսկ ե՞ս... մեռնեմ՝ թէ կենդանի մնամ, ոչ ոք, ոչ ոք չունեմ, որ ինձ հարցնէ, իմ անունը տայ, մանկութիւնիցս ի վեր ես մենակ եմ աշխարհում: Գոնէ մի կաթիլ արցունք դիւակի վրայ, այդ էլ երջանկութիւն է, թէ մարդ իմանայ մահից առաջ:

Եւ գնացին պատերազմ երկու ընկերները:

Կոիւն արիւնալի էր ու մահացու. թշնամին անողորմ էր. հազարաւոր երիտասարդ, ծաղկափթիթ կեանքեր ընկնում էին պատերազմի դաշտերում, տանելով իրանց հետ յանքան յոյսեր, այնքան երջանկութիւններ, բայց երկու ընկերները դեռ կենդանի էին ու անբաժան:

Մի անդամ յառաջապահ մի գնդի հետ նրանք քայլում էին անտառի նեղ արահետով՝ նշանուածն առաջից եւ միւսը՝ յետեւից. նրանց չորս կողմում թափւում էին ծառերի մէջ հատ-հատ գնդակներ, կատաղած օձերի պէս սուլելով, ասես դժողոհ, որ անօդուտ են գետին ընկնում: Եւ երկու ընկերները ողջ եւ առողջ այնուամենայնիւ քայլում էին առաջ: Սակայն նրանք քանի առաջանում էին, վտանգն աւելի էր մեծանում, որովհետեւ մահարեղ գնդակները բազմանում էին ամէն մի քայլի հետ:

— Լսի՛ր, սի՛ րելիս, դիմեց յետեւից քայլողը իր նշանուած ընկերին, թո՛ղ ես առաջից քայլեմ, դու յետեւից. տե՛ս, գնդակները բոլորն էլ առաջից են դալիս եւ վտանգը մեծանում է: Ես աւելի դոհ կը մեռնեմ, եթէ դու դոնէ կենդանի հասնես նշանածիդ: Իմ կեանքը հայրենիքիցս բացի ոչ ոքի հարկաւոր չէ, իսկ քեզ սպասող կայ: Երկու ընկերները համբուրուեցին եւ տեղերը փոխեցին. նշանուածը սկսեց քայլել յետեւից, իսկ միւսը առաջից:

Եւ նրանք գնում էին այսպէս անտառային նեղ, կանաչ, արահետով եւ գնդակները օձերի պէս սուլում ու Փշչում էին ծառերի մէջ, նրանց առաջը:

— Տարօրինակ բոյս, ասաց յանկարծ առաջից քայլողը գետնին նայելով. ես երբեք այսպիսի բոյս տեսած չեմ. նայի՛ր, չորս տերեւ ունի մի եւ նոյն ցողունի վրայ, ուղիղ չորս, մինչդեռ նա միշտ երեք տերեւանի է լինում. սա մի կատարեալ չորեքնուկ է: Ասաց ու կռացաւ քաղելու անօրինակ բոյսը. նոյն վայրկեանին մի մոլորուած զնդակ սուլեց, անցաւ նրա գլխի վրայով: Երբ նա գլուխը բարձրացրեց եւ չորեքնուկը ձեռքին դարձաւ յետ, նշանուած ընկերը ընկած էր դետին, կրծքից արիւնը հոսում էր եւ դէմքը պատած էր մահուան գունատութեամբ:

— Տո՛ւր ինձ տեսնեմ այդ բոյսը, ասաց վիրաւորը, հաղիւլսելի ձայնով:

Ընկերը սրտակոտոր մեկնեց չորեքնուկը դէպի մեռնողը. նա առաւ գողղոջուն ձեռքով ու նայեց.

— Խսի՛ր, ի՛մ ընկեր, ասաց նա, ես մեռնում եմ, իսկ դու ապրիր. մահը քեզ ինայեց, երբ դու նրա դէմ էիր գնում ինձ համար, իրաւունք ունես ապրելու: Բախտը երեւի միշտ պատկանում է նրան, ով արհամարհում է մահուան վտանգը ուրիշ սիրոյ համար, ով իր կեանքը իր նմանի երջանկութեան զոհ բերելու պատրաստ է: Յետ առ այս չորեքնուկը, որի հետ կապուեց քո բախտը. առ նաեւ այս մեղալիօնը, որի հետ կապուած օրհնութենը քեզ վրայ թափուեց, որովհետեւ դու աւելի արժանի գտնուեցիր: Տար եւ տուր այդ երկուսն էլ իմ նշանածին, պատմիր այս բոլորը, եւ թո՛ղ քո երջանկութենը կատարեալ լինի... ես արցունք չեմ ուզում:

Ասաց ու մեռաւ:

Պատերազմը վերջացաւ. ընկերը մենակ յետ եկաւ գիւղ, բայց իրանից առաջ այդ տխուր եւ անօրինակ անցքի լուրը հասել էր իր հայրենակիցներին: Նրան ընդունեցին փառքով ու պատուով, ծաղիկներ սփռեցին ճանապարհին եւ գլխին պսակ դրին: Ինքը՝ օրուայ հերոսը տխուր էր սակայն իր ընկերոջ կորուստի պատճառով: Սրտաբեկ ու վշտոտ՝ նա խոյս տուեց հանդէսներից, գնաց գտաւ վատարախտ ընկերոջ նշանածին, տուեց նրան չորեքնուկն ու մեղալիօնը եւ երբ փորձեց պատմել եղերական

անցքը, յուղմունքը խեղդեց իր կոկորդը եւ միայն կարողացաւ սպել.

— Զոյդ գնացինք՝ մենակ եմ յետ դալիս, բայց երկինքը տեսաւ ամէն ինչ, նա դիտէ, որ այդ չէր իմ ցանկացածը:

Գեղեցիկ աղջիկը՝ արցունքն աչքերին վերցրեց արիւնոտ չորեքնուկն ու մեղալիօնը, երկար նայեց այդ տարօրինակ բոյսին, ապա երկուսն էլ պահեց իր ծոցում:

Ամիսներ անցան. աղջիկը համաձայնեց իր սպանուած նշանածի անձնաղոհ, ազնիւ ընկերոջ ամուսինը դառնալ, սիրեց նրան եւ երջանիկ դարձրեց: Այն օրուանից մարդիկ սովորեցին բախտը կապել չորեքնուկի հետ:

— Շա՞տ, շատ տեսակ չորեքնուկներ կան աշխարհում, բարեկամներ, վերջացրեց տիկինը, նրանք բոլորն էլ բախտ տալիս են, բայց միայն նրանց, որոնք դիտեն իրանց անբովանդակ, ունայն կեանքի միակերպութիւնը մի գերագոյն վայրկենում յուղել, դիտեն իրանց ողորմելի եսը ուրանալ ուրիշի երջանկութեան համար եւ գեղեցիկ մահի երեսին ժպտալ վեհութեամբ: Ազնիւ արկածները, ինքնամոռացութեան յափշտակութիւնները դիւթական ձեռքեր են, որոնք ընդունակ են գոյն ու փայլ տալ, գեղեցկացնել շատ անդամ ամենաանյայտ, ամենամութ գոյութիւններին:

Լոռութիւն տիրեց: լուսնի չողերը շարունակում էին խաղալ մեր գլուխների վրայ, կատուն նիրհում էր մռառալով, ծառերը սօսափում էին մեղմիւ. մի վաղաժամ գեղնած տերեւ վար ընկաւ ծառից փռփռալով բախտից գանգատուող մեր ընկերոջ առաջ. նա վերցրեց այն, նայեց, խալացրեց ձեռքի մէջ.

— Դուք ճշմարիտ էք ասում, իմ գեղեցիկ տիկին, ասաց նա, բայց ո՞ւշ է, ո՞ւշ է, ահա իմ չորեքնուկը:

Եւ նա ցոյց տուեց իր ձեռքի դեղնած տերեւը:

ՎՐԷԺԽՆԴԻՐ ԶԱՆԳԸ

Vivos voco,
Mortuos plango
Fuldura frango.
Ես կանչում եմ կենդանիներին,
Ես լալիս եմ մեռելները,
Ես փշում եմ կայծակը:

ՇԻԼԼԵՐ

Զարհուրելի գիշեր էր այն գիշերը: Բնութիւնը աւերածի խենթութեամբ բոնուած ե'ւ քըքջում էր ե'ւ հեծեծում միաժամանակ: Հողմերը մոնչալով լիզում էին լեռների կողերն ու ցից ժայռերը եւ ձիւնի կոյտերը բարդ-բարդ գրկած՝ բերում, շիում էին ծեր ճամբորդի գլխին, որ մեն մենակ ու դանդաղութեամբ քայլում էր խաւար տարածութեան մէջ: Թւում էր, թէ այդ շարժուն արարածը մի հեղնութիւն էր իշխող զարհուրանքին, եւ կատաղի, ձիւնաբեր հողմերն աշխատում էին թաղել նրան կեանքի մեծ ճանապարհին: Փոթորիկը մոնչում էր, դայլերը ոռնում էին այլանդակ ու կատաղի, բայց նա քայլում էր, հա՛ քայլում:

Հեռուն գիւղ կար:

Փրկութիւնն ու ապաստանն այնտեղ էր . . .

Հասաւ:

Տները երկնքից մաղուող սոսկումի տակ ճիւլուած՝ մնջել էին. ոչ մի ձայն, լոյսի ոչ մի շիթ, որ մատնէր ներսի կենդանութիւնը:

Տներն անդամ սսկուել էին, գլուխները թաղել դէղերի տակ, որ չլսեն ահաւոր փոթորկի մոնչոցը: Հողմերը լալիս էին ու հեծկլսում խաւարի մէջ, կրծում էին ձիւնակոյտերը եւ շիում երկընքի երեսը, ծեծում էին դռները խրճիթները ներս թափանցելու համար, եւ գիշերը, որպէս մի ահաղին բեռի տակ, ցաւով տնքում էր նրանց հետ:

Գոռ փոթորիկ էր:

Ճամբորդին ապաստան էր պէտք:

Նա մօտեցաւ ու թակեց առաջին պատահած դուռը. զարկեց քանի ոյժ կար իր ցրտահար ձեռներում:

Դուռը տնքաց ու լոեց :

Հողմերը դարձեալ հեծկլտացին, գլշերն աւելի թափով տընքաց: Ներսում մի չուն դժկամակութեամբ մռմռաց եւ գլուխն աւելի խոր թաղեց խոտի տակ:

Դուռը փակ մնաց :

Ճամբորդը մի բան մռմռաց ատամների արանքից եւ քայլեց առաջ աւելի թուլացած, աւելի ուժասպառ, բայց եւ այնպէս գաւազանը բարձրացաւ եւ երկրորդ դուռը շրխկաց: Նա վախեցաւ, թէ բաւական ուժդին չէ, հարուածեց երկրորդ, երրորդ անգամ:

Ի զո՞ւր:

Դուռը փակ մնաց. միայն այս անդամ չների մռմռոցը բարձրացաւ եւ դարձաւ ահագին ոռնոց, որ խառնուեց քամիների մռնչիւնի եւ գիշերուայ տնքոցի հետ:

Ճամբորդը անցաւ փողոցից՝ փողոց, տնից՝ տուն, թակեց բոլոր դռները, զարթեցրեց բոլոր չներին, չանգուեց բոլոր պատերը, կծկուեց բոլոր անկիւններում, եւ գիւղը խուլ մնաց:

Արդարութիւնը քնած էր. ապաստան, տաք անկիւնը մերժըւում էր մոլորուած ճամբորդին, չէն բազմամարդ գիւղում:

Զիւնախառն հողմերը կարծես հրճուելով նրա դժբախտութեամբ, քրքջում ու ծեծում էին նրա ծեր ու յոգնած գլուխը. գիշերը շարունակում էր տնքալ կամ քրքջալ խելագարօրէն, չները մռմռում էին ու ոռնում, բայց ծերունի ճամբորդը ապաստան չունէր:

Եւ կանգնեց նա ձեան ու փոթորկի տակ, ծեր գլուխը կախեց կրծքին, ու միտք էր անում: Եւ նրա մտքերը լացող հողմերի, տնքացող խաւարի, երկնքից մաղուող սոսկումի, եւ քնած արդարութեան միջից էին ծնում, եւ նրանք բոլորն էլ նոյնքան սեւ էին, ինչպէս անիծուած գիշերը, նոյնքան ցաւոտ, որքան վիրաւորուած, արիւնոտուած յոյսը:

Վերստին առաջ շարժուեց :

Եկեղեցին հեռու չէր. այնտեղ էր գնում: Մերթ ծնկների վրայ սողալով մերթ պատերը չանգուելով, մերթ ձիւների մէջ

թաւալգլոր, նա վերջապէս հասաւ ու զանդակատան տակը կանգառաւ:

Եւ յանկարծ հողմերի մոնչիւնի հետ, ինչպէս մի մեռած Աստուծոյ յուղարկաւորութեան ժամին, հնչեց զանդակների դօղանչը ահապին ու այլանդակ:

Զըրը՛նդ, զըրը՛նդ, զըրը՛նդ...

Ուշ գիշերին, գոռ փոթորկի տակ, կծկուած՝ ոչնչացած գիւղի վրայ զանդերը զօղանջում էին խելադարօրէն եւ քամիների կատաղութեան տակ, նրանց ելեւէջները գալարում, ծոմուում էին մերթ ընդհատ-ընդհատ, ինչպէս վշտացած հսկայի հեծկըլտանք, մերթ խառնիխուուն, ինչպէս գերեզմաններից դուրս թափուած մեռելների հառաչանքներ:

Yivos voco, mortuos plango!

Նա կանչում էր կենդանիներին, նա լալիս էր մեռելները:

Զարհուրելի էր:

Սասանուած գիւղը ցնցուեց ու ոտքի ելաւ:

Ի՞նչ է այն, հրդե՞հ, թէ փոթորկոտ գիշերին դաւաճան յարձակումն:

Ահազանզն էր հնչում անընդհատ, յուսահատ ու կատաղի, ինչպէս խենթութեան մի յուսահատ զառանցանք:

Առ' առ', առ'— մզկտում էին չները ամէն կողմից. դռներն իրար յետելից բացուեցին եւ բազմութիւնը կիսամերկ, դողդոջուն եւ երկչոտ՝ շարժուեց գէպի եկեղեցին:

Շրջապատեցին ճամբորդին խիտ շարքերով, լուռ նայում էին այն մութ ստուերին, որ գալարուում, տնքում էր եւ բոլոր ոյժով խիում զանդերը:

Զըրը՛նդ, զըրը՛նդ, զըրը՛նդ. ապշութիւնից ու սարսափից քարացել էին, փոթորկիկը ոռնում էր, քամիները հեծեծում էին, եւ զանդերը մզկտում էին ու քրքջում:

Եւ բազմութիւնը հեւալով, զայրացած, ինչպէս քնահատ գաղան, յանկարծ մոնչաց.

— Լսի՛ր, ո՞վ ես դու, մեռե՞լ, թէ կենդանի. եւ ինչո՞ւ ես զանդահարում, զարհուրելի մարդ: Այս չամին նզո՞վքն է քեզ առաջնորդել, թէ մահը. լսո՞ւմ ես մեր երեխաների ճիշն ու աղաղակը:

— Նզովքի եւ քամիների հետ, ես Աստուծոյ յուղարկաւորու-

թիւնն եմ կատարում . եւ դուք սպանեցիք նրան այս գիշեր , նը-զովուած լինի ձեր յարկը , ուր մոլորուած ճամբորդը ապաստան չունի :

Ես կանչում եմ սպանուած ու վրէժինդիր արդարութիւնը , կանչում եմ մեռելներին , որ ոտքի ելնեն եւ քամիների վրայ մռնչան :

— Ե՞ր դռները բաց են եւ մեր յարկերը հիւրընկալ . . .

— Թո՞ղ նզովքն ապրի այնտեղ , փոթորիկը պայթել է եւ դուք սոսկումից չէք համարձակում իսկ գլուխ դուրս հանել ի-մանալու համար , թէ ո՞վ է շանդուռմ ձեր դուռը : Իսկ ես կ'եր-թամ նորից մեծ ճանապարհով եւ թո՞ղ հողմերը ծեծեն իմ գլու-խը , թո՞ղ փոթորիկը մռնչայ եւ ձիւնի տարափի տակ խեղդի ինձ :

Եւ շարժուեց զարհուրելի ճամբորդը գիւղից դուրս , եւ բազ-մութիւնը քար կտրած նայում էր նրա յետեւից :

Շները ոռնում էին , հողմերը հեկեկում եւ գիշերը տնքում էր ցաւով :

Զանդերը նորից հնչեցին . բայց այս անդամ մեղմ , լալադի՞չ ու թախծոտ : Ազօթքի մրմունջներն էին նրանց հնչիւնները : Բազ-մութիւնը ծունկ չոքած՝ ազօթում էր ազատուելու զարհուրելի անհծքից :

Կարմիր խենթութեան ու սոսկումի օրերում ես միշտ յիշում եմ այն հսկայ ճամբորդին , որ փոթորիկի տակ մենակ ու ըմ-բոստ՝ ահազանդը հնչեցրեց վրէժինդիր արդարութիւնը զար-թեցնելու համար :

Եւ խօլ փոթորիկների ժամին ես սպասում եմ բերանաբաց , ու հեւալով , թէ ահա նա կը հնչի , այն հսկայ ահազանդը , կը հնչի խելագար թափով եւ ողջ աշխարհը կը լսի նրա հպարտ աղաղակը .

«Ես կանչում եմ կենդանիներին ,

«Ես լալիս եմ մեծ մեռելները ,

«Ես դալիս եմ խորտակելու շանթերը» :

ԾՈՎԸ

Ո՞վ ազատ մարդ, դու կը սիրես միշտ լայ-
նարձակ խենք ծովը,
Ուր փնտռում ես ալիքների յեղյեղման մէջ
անհատնում՝
Որպէս հայելում պայծառատես՝ հոգուդ
պատկեր խռովայոյզ.
ԶԵ՞ քո հոգին մի անդունդ է նոյնքան խռ-
րը, նոյնքան դառն:
Դուք երկուսդ էլ մութ ու անհաս ու եր-
կուսդ էլ գաղտնասէր.
Ո՞վ, մարդ, ոչ ոք չի քափանցել ան-
դունդները քու հոգու,
Օ՛, ծով, ոչ ոք դեռ չի տեսել քո գանձերը
քիւրաւոր...
Դուք եռանդով պահել գիտէք գաղտնիք-
ները ձեր խորին:
Շ. Բօդլէր. “Les fleurs du mal”

... Ու նա այսպէս խօսեց.

«Տարիներ յետոյ իմ հայրենի քաղաքը վերադարձայ:

Այնպէս յոդնած էի:

Կարօտում էի մեր ծովին, որի տեսքը միայն, հաւատացած
էի, թէ ինձ կը հանգստացնէր: Օտար հորիզոնների տակ երազում
էի նրա ալիքները, երեւակայութիւնս խաղում էր նրա վաղոր-
դեան խորհրդաւոր մշուշի մէջ եւ աչքիս առաջից անցնում էին
նրա գեղանկար ափերի գալարուն ուրուադերը: Գուրգուրանքի
կարօտ հոգիս նետում էր դէպի հայրենի ծովը, ինչպէս երեխան
դէպի մօր գերկը:

Սիրտս աշնան ծառ էր, յուսաբեկութեան դժնդակ ճամբա-
ներում կեանքի ցրտաշունչ հովերի տակ մերկացած իսպառ:
Կրծքիս տակ էլ ոչինչ չկար: Մէր ու երազներ, հաւատ եւ ցնորք-
ներ ողջ մեռել էին եւ բոլորի գերեզմանի վրայ հոգիս հեկեկում
էր, որպէս աւերակների մենութիւնը ողբացող մի բու:

Ես այնքան էի թափառել եւ այնքան ապրել...

Այն ծովերը տեսայ, որոնք յունական դիցուհիների ձիւնաթոյր մարմիններն էին ցօղել, եւ կղզիների օդը չնչեցի, ուր Վեներան իր մեղկ եւ գեղանի մերկութեամբ աստուածների առաքինութիւնն էր հեղնում: Նուիրական անտառներում թափառեցի, ուր ծառերի սօսափիւնի մէջ աստուածներն էին փափսում պատղամախօսի ականջին, եւ այն ճամբաներով անցայ, ուր հոլանի ու բարեկազմ մարտիկները մի օր ասիական խուժանների բարբարոսութիւնն էին խորտակել իդէան փրկելու համար:

Մի ամբողջ աշխարհ դարերի մառախուղի միջից դուրս ցըցուեց երեւակայութեանս առաջ իր կոյս հոգով, իր մանուկ երեւակայութեամբ, իր շողջողուն երազներով, գեղեցիկ, հմայիչ եւ անբոնադատ պաշտամունքով: Բարձրացաւ ու անցաւ այդ ցնորական աշխարհը, եւ նրա տեղ տեսայ հսկաներից սերուած մի դաճաճ սերունդ, որ հայրերի փառքի ծանրութեան տակ սողում էր դէպի գերեզման:

Եւ գեղարուեստի խորտակուած տաճարներ, հինաւուրց աւերակներ, մամուապատ քարեր, անկումի սարսափով հարսւատ: Բոլորի վրայ անցաւոր իրերի մոռայլ խոհերը կարդացի եւ անխուսափելի, անողորմ վախճանի առաջ հոգիս դողդողաց, որպէս թանձր խաւարի մէջ մոլորուած մանուկը:

Անդարձ կերպով անցած հոյակապ կեանքերի աճիւնների վրայ մարմարէ արձանների անվերջ շարքերը տեսայ, ամէն մէկն ինչպէս խորհող ու անանց ձմեռ, եւ գերեզմանների խորքից բարձրացող մահուան քրքիջը լսեցի, որ հեղնում էր մարդու յուսահատական ճիգերը, յաւիտենականը, անհունը ընդգրկելու նրա մտքի թափը, արձանների պատրանքներով ապրելու նրա խեղճութիւնը: Ապա մեծ լուռթիւնը ժայռի պէս ծանր, ժայռի պէս համր կրկին իջաւ հանճարների եւ նրանց հետ մէկտեղ բիւրաւոր սերունդների վրայ, որոնք եկել էին ու անցել ինչպէս մոլորուած հողմերը դեղին, անծայր անապատներում:

Անխուսափելի մահուան սարսափը խեղելու, կեանքի պարապը լցնելու համար աղգերը աւերածի ու արեան խելագար արբեցութեամբ բախուել էին իրար գեղածիծաղ ափերի վրայ եւ իրար բգկտելով ընկել էին ինչպէս փոթորկի առաջ խորտակուած անտառներ այլ եւս երբեք չբարձրանալու համար:

Զաւակները լավում էին հայրերի աճիւնների մէջ ծլած կանաչին եւ գեղանի կոյսերն իրենց փարթամ կրծքերի վրայ կրում էին գերեզմանի հողի մէջ բռւսած վարդը, որից մահ էր բռւրում:

Թոռների խոփերը արիւնով պարարտ արտերում դուրս էին շալրտում ակօններից հին պապերի դանդերը եւ քաղցած գայլերը կէս գիշերներին ոռնոցով դուրս էին թափւում մռայլ այրերից այդ փթած, զարշահոտ ոսկորները լիղելու:

Մահ, աւերած, ոչնչութիւն ամէն կողմ. ճակատադրական անհուսափելի մի վախճան բոլոր կեանքերի. մի ծով անդունդ՝ ուր ամէն ինչ եւ ամէնքը ընկնում են դահավէժ, երբեք չլցնելու համար:

Զարհուրանք, զարհուրանք, ո՞ւր փախչել...

Ողջ տիեզերքը գերի է մի հատիկ որդի ձեռքին, որ լափում է, լափում է, լափում է...

* * *

Ցուրտ էր, ամէն տեղ ցուրտ էր...

Սատանաները դնդակ էին խաղում հանճարների գանդերով լքուած դամբարաններում. բորենիները լիզում էին բորբոսնած ոսկորները եւ գունչերը ձգած երկնքի երեսին ոռնում իրենց քաղցի կատաղութիւնը. բուերը հեծկլտում էին աւերակներում, օձերը ֆշացնում փթած ծառերի խոռոչներում եւ հսկայական մի չղջիկ իր ջլուտ, զարշահոտ թեւերով շրջիւն էր հանում եւ հողմահարում մռայլ մարդկութեան գունատ, մահադրոշմ ճակատը:

Ցուրտ էր, ցուրտ էր եւ լետ փախայ գէպի իդէան:

Զէ՞ որ նա անցնում էր յաղթական այդ բոլոր աւերակների ու մամուռների, այդ խորտակուած սիւների ու կամարների, այդ գերեզմանների ու ածիւնների վրայով:

Իդէան... թէեւ կրծոտուած, վիրաւոր ու արիւնչաղախ մարդկային խելագարութեան ժանիքներով, այնուամենայնիւ յաւիտենական է, անմահ, եւ իշխում է բոլոր մահերի վրայ:

Նրան փարեցի... գեղեցիկի եւ ճշմարտութեան ծարաւ իմ հոգին անապատի պապակած ճամբորդի պէս կոացաւ նրա աղբիւրի վրայ եւ ծծեց... միա՞յն թոյն:

Գիտութիւնը տեսայ այնքան հոյակապ, մտքերի հրաշալի

ճիպերի արդիւնքը, դրուած աշխարհի հզօրների, ախտաւոր ու բարբարոս հողիների գարշապարի տակ: Բնութեան սքանչելի դաղտնիքները դուրս քաշուած տիեզերքի մոայլ անդունդներից տառապող մարդկութեան բեռը թեթեւացնելու համար: Բայց միլիոններն են տնքում աշխատանքի հին անէծքը շալակած, որպէսզի գարշանքի ու պղծութեան մէջ հեշտանքը վայելելով սողան փոքրաթիւ հզօրները:

Հպարտ գիտութեան կողքին քրտնաթոր Աշխատանքը տեսայ անողորմ կերպով պրկուած անիրաւութեան ժայռերին, ուր նա թրպրտում է գարերից ի վեր հեւ ի հեւ, դժբախտ ու ցասկոտ, ատամներով կրծոտում է սեփական միսը իր քաղցը յագեցնելու համար եւ արդար կատաղութիւնից արիւնոտ եղունքներով քարերն է չանգոռում: Եւ պարարտ անգերը գիշատիչ կտուցներով քրքրում են նրա կուրծքը՝ մաս-մաս դուրս շորթելով նրա արիւնոտ ու թրթուն սիրտը: Արցունքի փոխարէն սոսկումն է կաթկթում նրա չուած աչքերից եւ ցասկոտ հայեացքի առաջ կայծակն է խամրում: Խենթ հողմերը գալիս են քրքջալով, խլում, տանում են նրա օրհասական ճիշերը եւ ցրիւ բերում սեւ հոգիների պղնձուած անապատներում:

Գիտութիւն... հսկայական կեղծիք, որ դարբնում է շըոթաներ տանջուող միլիոնների համար եւ սոսկու չողչողուն պատուանդաններ, նրբացած, գարշելի վայելքներ անարդ գոյութիւնների համար:

Եւ մտքի հզօրագոյն թռիչքը, անհունը պրապտող փիլիսոփայութիւնը, որ յանդում է անողորմ ունայնութեան փոշիանալով տիեզերքի ծազման, նիւթի եւ ոյժի ծննդեան անհասանելի անդունդներում, ուր ստեղծագործող մրրիկներն են սաւառնում մարդկային մտքին յաւէտ անմատչելի:

Եւ գեղարուեստը տեսայ, որ ձրիակեր մեղկ գոյութիւնների հաճելի զրօսանք էր լոկ, մինչդեռ կոշտացած ձեռներով ու փոշոտ զգեստներով աշխատաւորը նախանձոտ հայեացք էր նետում արուեստի տաճարների վրայ եւ անցնում հոգու մէջ խտացընելով ատելութեան թոյնը:

Եւ սէրը տեսայ, տիեզերական վշտի մայրն ու դարմանը, նա, որ գիտէ մեղմել ունայնութեան ու ոչնչութեան սարսափը, եւ անխուսափելի գերեզմանի գունատութիւնը ոսկեզօծել:

Տեսայ սէրը հոլանի ու գեղեցիկ՝ կրքերի շուկայում վաճառքի հանուած պղծութեան աճուրդով, կամ տրորուած ու աղտոտուած փողոցների գարշահոտ ցեխի մէջ պարարտ խողերի ոտների տակ:

Ցուրտ էր, ամէն տեղ ցուրտ էր...
* * *

Դէպի ծո՛վը, դէպի ծո՛վը...

Հայրենի՛ ծով, աղմկայոյզ ու փրփրուն, ես կարօտում եմ քեզ, ինչպէս վտարանդի ու դժբախտ դաւակն իր մօրը:
Եւ քայլում էի մտամոլոր...

Ծովի գաղջ մթնոլորտն ինչպէս խոնաւ ու թափանցիկ պատան պարուրել էր ինձ եւ թափանցում էր մինչեւ ոսկորներս: Ոտներիս տակ լերկ խիճերը ցաւագինօրէն ճռնչում էին ճխլուող միջատների պէս, ծովի գոլ հովերը լիզում էին տենդոտ ճակատո եւ երազներից ու յոյզերից թափուր իմ տանջուած հոդին մրմնջում էր որպէս հիւանդ երեխայ, որ յանկարծ հեռուից տեսնում է մօրը... ծո՛վը:

Քայլում էի եւ նայում հեռուն:

Եւ հեռուն ծայր չունէր:

Միապաղազ ու կապտաւուն մշուշը կապել էր իրար ջուրն ու երկինքը, եւ հորիզոնը մէդի մի հսկայական վարագոյր էր, անհուն, բիւրածալ, երփներանդ, որ յեղեղւում ու գալարւում էր ալիքների վրայ:

Քայլում էի այնպէս, ինչպէս մարդը տիեզերքի մէջ, որ չգիտէ ո՞րտեղից եկաւ, ո՞ւր է գնում եւ ինչո՞ւ: Գիտէի միայն, որ քայլում եմ, ոտներիս տակ աւազն է ճռնչում ճխլուող միջատների պէս եւ հեռուն՝ անծայրածիր ու հսկայ ծովն է մոմոռում ատնքում:

Կանդ առայ մի վայրկեան, շատ էի քայլել եւ յանկարծ փուլ եկայ ծալուող ծնկներիս վրայ, փոռւեցի ամբողջ հասակով ծովափին, կուրծքս թաղեցի խոնաւ աւազների մէջ, դրկուեցի մայր երկրի հետ, տենդոտ, կրքոտ թափով: Ծով մտքերով գլուխս քաշ ընկաւ դէպի հողը ինչպէս քամիների տակ կուացած հասկը, ձեռներս դրի տաք ճակատիս տակ, փակեցի աչքերս եւ երազում էի...

Ա՛հ, թաղուել, լուծուել այս ափերի հետ, ալիքների հսկայ

եւ յաւիտենական օրօրի տակ, եւ վերջ դնել այս հիւանդու, այս դժնդակ գոյութեան:

Զէ՞ որ սաղմուներից ու հաւատից, աղօթքից ու յոյսերից թափուր տաճարները կամաց-կամաց հողին են հաւասարուում եւ լուծում երկը հետ:

* * *

Ո՞վ է այդպէս մերթ հեծկլտում ու տնքում ցաւազինօրէն, մերթ մռնչում՝ ինչպէս անհունի ծոցից գահավէժ ընկած զարհուրանքը, մերթ ոռնում՝ որպէս շղթայազերծ կատաղութիւնը խենթ մըրիկների:

Եւ բոլոր այդ ձայները իրար գալարուած, իրար կրծոտելով գալիս թափանցում են գանդիս մէջ, խօլ ժխորով եռում ու փորփորում են աւերակ գլխիս սեւ գատարկութիւնը, քամում են հոգիս կսկիծի գալարներով եւ ինձ հետ միասին իջնում, կորչում են երկրի անդունդներում, որ ցնցում, թրպրտում ու հառաչում է իմ կրծքի տակ:

Մի բան փուլ եկաւ, մի լեռ, գուցէ եւ մի աշխարհ. փուլ եկաւ ահագնադղորդ թնդիւնով, ափերը տնքացին, հառաչանքի մի անծայր հեւք ձգուեց, տարածուեց ու փոխուեց մի անհուն ու գիւական ծիծաղի, թւում էր թէ անթիւ դիակներ իրենց մսերից թափուր ոսկորները չիկչիկացնում են ու ցատկրտում եւ յետոյ խիճերը քրքջացին իրար քսուելով, ապա մի ցուրտ ու թափանցիկ բան պարուրեց ինձ, սառը ցնցուղները գանդս թրջեցին եւ ես աչքերս բացեցի:

Դարձեալ ծովն էր փոթորկոտ, ծովն էր փրսիրուն. Եւ իններորդ ալիքը տարերքի կատաղութիւնն ու ցասումը շալակած՝ եկաւ խորտակուեց ամիերի վրայ եւ յետ գնաց զարհուրանքի ու խենթութեան գոռ պայքարը վերսկսելու:

Ծո՛վը, ծո՛վը...

Նա էր տնքում ու մռնչում անհասկանալի ու ամուլ երկունքով բռնուած: Նա էր քրքրում իր արդանդը երկնքի երեսին լոկ փրփուր ժայթքելու համար:

Եւ գալիս էին ալիքները թաւալ տուող վիշապների պէս, գալիս էին մռմռալով ու կոխկոտելով իրար, եւ խորտակում էին ամիերի վրայ անզօր կատաղութեան ճիչ ու ոռնոցով:

* * *

Դէպի ափե՞րը, բոլորը դէպի ափե՞րը...

Դաժանօրէն գեղեցիկ մի բան կար ծովի այդ կոյր կատաղութեան, այդ յամառ խենթութեան մէջ, որ մզում էր բոլոր ալիքներին դէպի ափերը: Մի բան ասելու, մի չլսուած, սարսափելի բան իր կողերը սզմող ժայռերին, մի բան աւետելու, մի ճանապարհ բանալու յարատեւ, անչշտենչն է կարծես մզում դուրս այս յեղյեղուկ հսկային: Թւում է, թէ հանգստեան ժամերին նա անհունն է երազում եւ խենթ, աղատական ցնորքների պատրանքներով օրօրուում: Գալիս է փոթորքիկը նոյնակէս խենթ, նոյնակէս անսանձ ու ըմբոստ եւ երկուսը միասին թափ առած, նետուում են դէպի ափերը, հեռուն, հեռուն, ուր բոլոր արշալոյսներն են հանգչում, ուր բոլոր արեւներն են չողջողում:

Գալիս են ալիքները, կատաղութիւնից քրքջում եւ զայրոյթից հեկեկում, հասնում են ափերին ու ծառանում խոլ փրփրուն երիշարների պէս նետուում են դէպի երկինք ամպերի հետ գրկըւելու համար, ասլա յուսահատ անզօրութեամբ, խորտակուում են իրանց մէջքերի վրայ, յետ փախչում դէպի խորքերը, ուր հողմերն են մոնչում աղատօրէն եւ մըրքիկը ծովի կուրծքն է աւերում նոր եւ աւելի կատաղի գրոհը կազմելու համար դէպի այլ ափեր, դէպի այլ հորիզոններ:

Յաւիտենական պայքարը կաշկանդող, խեղող ափերի դէմ: Եւ կեանքի ծովը հոգումս է եռում:

Պղտոր, թունաւոր ալիքները կրծում են կուրծքս, որպէս կենդանի մեռելը իր գաղաղի կափարիչը: Ես լսում եմ նրանց տնքոցը, նրանց աղեկտուր հեծկլտանքը: Ես ապրում եմ նրանց խենթ երազները, նրանց թեւաւոր ցնորքները, անհունը, երկինքը ընդդրկող հուր տենչերը:

Եւ սիրտս լալիս է...

Լո՛ւռ, սի՛րտ իմ, լո՛ւռ, այդ ծովն է հեծկլտում ու տնքում դահամբէժ Աստծոյ հսկայ սուզի մէջ:

* * *

Ո՞ւր է իններորդ ալիքը:

Նա, որ մի անդամ ճակատագրի կուրութիւնը եւ կեանքի սեւը շալակած փուլ եկաւ գլխիս եւ իմ խեղճ մէջքը խորտակեց: Նա, որի ծանրութեան տակ այնակէս ճոնչում են իմ տանջուած

ոսկորները, ծալւում են ծնկներս եւ հոգիս թրպրտում է ինչպէս կարեվեր խոցուած թոշունը:

Ծովն է կատաղի, ծովն է փրփրած:

Ահա դալիս է մէկը, ժպտուն ու կայտառ:

Փրփուրը թափանցիկ է, ինչպէս սպիտակ շղարշը նորահարսի, եւ մէջքը դալար, որպէս ջրերի թագուհու: Նա դալիս է դէպի ափերը խայտալով, ոչ պայքարի, այլ համբոյրի, փաղաքանքի, դուրդուրանքի համար: Նա դալիս է տարփոտ քնքշութեամբ փարելու ծերուկ ժայռերին, նա դալիս է դաղձ խիճերը դրկելու իր յեղյեղուկ դրկի մէջ:

Եկաւ, եկաւ, ու դրկարաց փոռւեց ափերի վրայ, փոռւեց ու սիրոյ բոցերով շոգիացաւ:

Ահա եւ ուրիշները. աւելի ցասկոտ, աւելի խոժոռ, իրաբկուկրտելով վազում են, թաւալ թաւալ ընկնում, բարձրանում, կրծոտում, տրորում են իրար, աշխատելով ամէնից առաջ նետուել դէպի ափերը, միշտ դէպի ափերը: Եւ բոլորի հապճեպ ընթացքի, այս խելազար վազքի մէջ մութ սարսափի մի կտորը կայ, որ ծովի անդունդներից են բերում: Մէկի փրփրադէղ պարանոցի եւ թիկունքի վրայ միւսն է բարձրանում, եւ գալիս են շարան շարան, համում են ափերին, ամէնքը միասին ծառանում երկնքի երեսին, որպէս վշտացած աղօթաւորներ, տնքում են, հեծկլտում, ճչում ու խորտակւում են աւազների վրայ, խիճերը լիզում, հողը կրծոտում կաթնազոյն ամպով ինչպէս իրանց ցաւոտ հեւքը, պատում են մթնոլորտը եւ կորչում չգիտես ո՞ւր:

Էլի՛, էլի՛, վախճան չկայ այս ամուլ պայքարին:

* * *

Ո՞ւր է իններորդ ալիքը, որ կեանքի ծովի մէջ մի օր, մի անիծուած օր մէջքս խորտակեց եւ որի ծանրութիւնը կրելու էլ կարողութիւն չունեմ:

Ո՞ւր է իններորդ ալիքը, որից գողում են անդամ մըրիկները հեղնող ծեր նաւաստիները, որ հին առագաստից պատաններ է շինում յանդուդն ճամբորդներին, հաստակուու կայմերը խորտակում որպէս յօղուններ, նաւերի հոգեվարքի ճռնչիւնը իր գոռ մոնչոցի հետ հիւսում եւ սեւ անդունդների վրայ յաւիտենական մահերդը հնչեցնում:

Հեռուն մի ձկնորսական նաւակ, զոյդ առագաստները բացած՝ խաղում է ալիքների վրայ, թէ՞ պայքարում, չգիտեմ, բայց նա բարձրանում է, իջնում, կորչում վրփուրների դէզի մէջ, կրկին յայտնում, միշտ հպարտ, միշտ կանդուն:

Ո՞վ է այդպէս հեղնում ծովն ու մըրիկը:

Սքանչելի է . . .

* * *

Մենաւոր ժայռի վրայ թառած, ինչպէս մերժուած ու հալածական դեւ, գրկեցի սրունքներս, ծնօտս յենեցի չորացած ծնկներիս եւ մոայլ հայեացքս թաղուեց ծովի անհունութեան մէջ:

Ես ապրում էի ծովի խենթութիւնը, ալիքների կատաղութիւնը, նրանց աւերիչ ցասումը:

Համարեցի ութ շարան ալիքների, որոնք իրար յաջորդելով եկան եւ մեռան իմ ոտների տակ նոյն խոնաւ դերեղմանի մէջ:

Եւ յետոյ ծովի խորքում, այնտեղ, ուր հաղիւ էր հասնում իմ հայեացքը, բարձրացաւ տարերային չտեսնուած, անտելի չփոթ: Ծովը պատառեց, ուռաւ ու բարձրացաւ կարծես իր մութ անդունդները երկնքին ցոյց տալու համար:

Նայեցի նաւակին:

Նա այժմ փախչում էր ինչպէս սեփական ստուերից խոյս տուող մի խելազար, առագաստները հողմածեծ ու ծուէն-ծուէն նա տարւում էր դէպի ժայռերը, դէպի անծանօթ հեռաւոր հորի-դոնները, դէպի մահը, դէպի ուր ասես . . . միայն հեռու, հեռու, իններորդ ալիքն է դալիս:

Զարհուրա՞նք . . .

Ո՞րտեղ ծնուեց նա, ո՞ր հողմը դուրս քաշեց նրան ծովի մը-ռայլ արգանքից, ո՞ր մըրիկը տուեց նրան իր խօլական թափն ու հեւքը:

Ո՛չ, ջուր չէ այն:

Տեղահան լեռների մի շարան է այն, հրէշաւոր, այլանդակ, դալարուն, որ չգիտես բնութեան ի՞նչ խաղով տարւում է շառա-չալից եւ իր կրծքից դուրս է ժայթքում ամպանման փրփուրի դէ-զեր, մոմուում է, հեկեկում, տնքում, ճչում, ընկնում խորխո-րատները աւելի թափով եւ աւելի բարձր նետուելու համար եւ տարւում է անընդհատ դէպի ափերը: Քինախնդիր ու խելազար

մի վիշապ, որ դուրս է պրծել կապանքներից եւ գալիս է աւերելու, ոչնչացնելու, լափելու: Նրանից դուրս ծովի վրայ էլ ոչինչ չկայ, աւերածն ու սոսկումն է գալիս: Բոլոր միւս ալիքները ծըռում են մէջքերը, ցրիւ են տալիս բաշերը եւ փուռում նրա առաջնանապարհ տալու համար:

Իններորդ ալիքն է գալիս...
Եւ նաւը փախչում է, փախչում:

* * *

Ախտաւոր մի հետաքրքրութիւն, թէ՞ հիւանդու մի հաճոյք համակում է հողիս:

Տեսնել, թէ ինչպէս է խորտակւում նաւը:

Չէ՞ մարդը միշտ հզօրի, աւերիչի կողմնակից է, երբ զոհը ինքը չէ:

Անապատի սէրը մեր հոգումն է, մեր կրծքի մի խաւար անկիւնում միշտ նստած:

Նաւակը մօտ է, մշուշի ու փրփուրի միջից ես տեսնում եմ նաւալարին: Նա մի ծեր ձկնորս է, ջլուտ բազուկներն ու սրունքները մէրկ. ճերմակ ու թրջուած միրուքը ոլոր մոլոր հողմածեծ կրծքի վրայ, թաւ սպիտակ մազերը բաց գլխին ցաք ու ցրիւ, ծուէն-ծուէն, ինչպէս իր առագաստները:

Կեանքի ծովն էր նետել դժբախտ ծերունուն այս մրրկոտ ծովի վրայ եւ այժմ մէկը տառապալից, միւսը փոթորկոտ, խաղում էին նրա բախտի հետ անսիրտ քմահաճոյքով:

Բայց ծերունին գիտէ պայքարել, աշխարհիս տառապանքի եւ ծովի մրրիկների մէջ ծեծուած նրա հինաւուրց մէջքը դեռ չի կունում, չի ընկճուում, նա քաշքում է ծուէն-ծուէն առագաստների պարաները, բարձրանում է ալիքների հետ իր նաւակով ինչպէս մրրկահաւ, ապա վար իջնում անդունդները: Կայմի ծայրերը մէրթ կուանում, համբուրում են ալիքները, մէրթ բարձրանում ցցւում երկնքի երեսին բողոքող թափով:

Եւ յետեւից վազում է կատաղի ալիքը, լեռնացած, ահագին անողորմ:

Ծերունին ոչինչ չի տեսնում, նա պայքարում է մեն-մենակ խօլ տարերքի դէմ, մրրիկների կատաղութեանը դէմ արած իր

կնճռոտ ճակատն ու ճերմակ ալիքները, իր բաց կուրծքն ու հող-մածածան միրուքը:

Բրօնդէ բազուկները գործում են արագութեամբ, թափով, բայց հողմերը ի գերեւ են հանում նրա ճիգերը, կայմը նորէն ծուռում է, համբուրում է ալիքները, բարձրանում, իջնում նորից այլ եւս երեք չբարձրանալու համար: Առանց առաջնորդի, առանց կայմի, առանց ղեկի այդ նաւակը տարւում էր խելաղար թափով, փախչում էր կատաղի ալիքներից: Եւ ծերունին էլի մի վերջին անգամ ցցուեց նաւակի մէջ, նայեց երկնքին, շրջակայթին, մուայլ հորիզոնին, նայեց ափերին, որոնք թարթում էին հեռուից եւ կարծես մօտեցող մահը բաց աչքով չտեսնելու համար, երեսի վրայ ընկաւ եւ թաղուեց նաւակի մէջ:

Եւ նոյն վայրկենին հասաւ ալիքը, ահապին, հրէշաւոր ու փրփրուն:

Նաւակը բարձրացաւ, իջաւ, վերստին բարձրացաւ, դարձեալ իջաւ եւ անհետ ծածկուեց:

Ամէն ինչ կորաւ, էլ ոչինչ չկար, ոչ կայմ ու առաղաստ, ոչ նաւակ ու ձկնորս:

Ծովն էր հեկեկում, ծովն էր տնքում, եւ իններորդ ալիքը մեն մենակ մահերդ էր մոնչում անդունդների վրայ, ուր ծածկուեց ծեր ձկնորսն իր նաւակի հետ:

Եւ հեռուն, ծովափին յուղուած ամբոխն էր եռում ու հառաչում. մի պառաւ կին իր երեխաներով աւազն էր չանգուռմ եւ անէծքի հետ մէկտեղ շիռում երկնքի երեսին:

Այրին էր սգում իր որբերով:

Կեանքի ծովն էր այն, որ փոթորկում էր տառապանքը:

* * *

Ո՛չ, ալիք չէ այն, այլ ծովն է դալիս, ամբողջ ծովը: Ամպերը զարմացած հետեւում են նրան:

Եւ գալիս են միասին երկինքն ու ծովը դէպի ափերը, դէպի ափերը:

Քաօ՞ս, բնութեան հսկայ զառանցանք, աւերած, ոչնչացում:

Ինչո՞ւ փախչել... հոյակապ վախճան մի տանջուած, մի աւերակ դոյլութեան:

Ես զգում եմ, ինչպէս ափերը գողում են ոտներիս տակ, խուլ դրնդիւն են հանում: Թւռում է, թէ գետինը վախով ճգնում է տե-

զահան լինելու խոյս տալ, եւ իր անկարողութեան մէջ, տեղն ու տեղը ցնցում է ու թրպրտում սպասելով անխուսափելի սարսափին, որ գալիս է, գալիս է:

Իններորդ ալիքն է գալիս:

Եկաւ, ու լեռներ շալակած հսկայի պէս ծառացաւ ափերի դէմ, խոժոռ հայեացքով հորիզոնն է չափում իր անօրինակ բեռը թափելու համար տեղ վնտոելով. ձգուեց, բարձրացաւ, ապա բոլոր ուժով նետուեց դէպի մայր հողը, դէպի ափերը, փուլ եկաւ հսկայական որոտով:

Թանձր ցնցուղները ամպի պէս դիզացան ու բարձրացան երկինք. աւազները խշացին ու ճռնչացին ցաւագինօրէն, գետինը տնքաց երկար ու խոր հառաչանք հանեց, փրփուրի հեղեղը օղակ-օղակ վիշապի պէս խիճերը լիզելով ու մռմռալով առաջ նետուեց ճանապարհին կուլ տալով ամէն ինչ. մի վայրկեան երկինք, ծով ու գետին իրար խառնուեցին այլանդակ քաօսով:

Դժո՞խք...

Քաղցած գաղանների մի կատաղի վոհմակ կաղկանձեց անապատում, ժայռեր փուլ եկան ահագին դղրդոցով, գահավէժ գեւեր մռնչացին գետնի տակ, յուսահատ որբեր ճչացին ով գիտէ ո՞ւր, կուսական անտառը հեծեծաց դոռ հողմերի տակ, սարսափահար եւ խուճապող ամբոխի ոտների դրնդիւնը հնչուեց ու լայնացաւ, ամէն ինչ մէկէն լոեց ու խաղաղուեց:

Այսպէս մեռաւ իններորդ ալիքը աւազու ափերի վրայ:

Եւ ծովի խորքում նորերն էին բարձրանում, լեռնանում փրփրագէղ ու ահագին:

* * *

Ո՞ւր են գնում թռչունները սեպաձեւ շարանով:

Վայրի բաղերի մի ամբողջ երամ է, որ սլանում է ալեկոծ ծովի վրայով:

Փոթորիկն են հեղնում այդ երջանիկ թեւաւորները, թէ զոռ հողմերի բերանն ընկած տարւում են ծովի արբեցուցիչ խենթութիւնը վայելելով:

Գնում են անխոռվ, միշտ իրար յետելից սեպաձեւ շարանով, միշտ ալիքների վրայից փրփուրը շոյելով իրանց կրծքերով եւ հայեացքները հեռուն, դէպի հորիզոնը, ուր կապարէ ամպերի տակից արիւնոտ ցոլքերը մատնում են արեւի թագստեան տեղը:

Թուչունների շարանը շեշտակի դիմում է դէպի պատառուած ամպը, որտեղից կարմիր ցոլքերն են կաթկլթում ինչպէս արցունքի արիւնոտ կայլակներ, գնում է արեւը փնտուելու, որ համատարած մռայլի տակից մեղմիւ թարթում է արեւմուտքում:

Ահա նրանք կորան մի վայրկեան լեռնացած ալիքի փրփրադէղ թիկունքին, դարձեալ յայտնուեցին կաթնագոյն մշուշի մէջ միշտ նոյն սեպաձեւ շարանով, որի սուր ծայրը գնում է մխըրճուելու արիւնոտ լոյսի ցնցուղների մէջ, իսկ երկու թեւերը՝ նետի պէս ուղիղ, նետի պէս շեշտակի, սլանում են մերթ ալիքների միջից, մերթ ալիքների վրայից:

Դէպի արիւնոտ լոյսը, դէպի արեւը, որ կապարէ երկնքի տակից մեղմիւ թարթում է:

Բոսորագոյն լոյսը փռուեց ու մեծացաւ արեւմուտքում, եթերը հրդեհուեց երկնքի բոցերավ, հազար երանդ բակ կապեցին նրա շուրջը, հազար խաղեր ցուցացին ջրերի վրայ եւ նրանց փայլի մէջ լուծուեց թուչունների երամը:

Փոթորիկի վերջալոյսն է, երկնքի հրդեհից ողջ բռնկուեց եւ ծովը, ողջ արեւմուտքը լողում է բոսորագոյն արեան մէջ:

Մի մարդ էր գալիս դէպի ինձ:

Դժնդակ կեանքը կողոպտել է նրան:

Ցաւի ու անողորմ կարիքի տիղմերի մէջ սողացող թշուառական, ամբոխների մէջ դժբախտ ու խեղճ, մենութեան մէջ զարհուրելի:

Զեռքերը պատառուուն գրավանների մէջ, ծնկների վրայ աղտոտ կարկատաններ, դէմքը լարձուն, աչքերը կարմրած ու հետամուտ չդիտես ինչի՞՝, մի ոտքին կօշիկ, միւսը գարշելի լաթերով փաթաթած, նա քայլում էր խոնաւ աւաղների վրայով շտապշտապ, ասես մի բան ունէր ասելու այս մրրկոտ ծովին, այս ուռած կատաղած ալիքներին:

Ո՞ւր էր գալիս նա դէպի ծովը:

Ի՞նչ էր փնտուում այս սասանեցուցիչ տարերքի մէջ կեանքի ծովից խոյս տուած այս պղտոր ալիքը, այս տրորուած, կրծոտուած գոյութիւնը:

Եւ գալիս էր հեւ ի հեւ, շեշտակի հայեացքը բոց, բերանը՝ բաց, ձեռքերը միշտ գրպանում, եւ ոտները քաշ տալով խշչան աւաղների միջով:

Եկաւ ու անցաւ:

Վազեց մինչեւ ջրերը, մօտ, մօտ նստեց խոնաւ աւաղի վրայ, ծնկները գրկեց, պարանոցն առաջ ձգեց ու նայում էր ծովին, ալիքներին:

Արեւմուտքի բոսորագոյն լոյսը ողողել է նրան, խաղում է ցաւոտ ճակատի վրայ, տանջուած դէմքին, կատաղի հայեացքի մէջ, խաղում է նաեւ նրա կարմիր ու ըմբոստ խոհերի մէջ, որ խօլ ժխորով դառնում են գլխում:

Ծովը մոռացայ իր մըրկով ու ալիքներով:

Սրան եմ նայում, այս խղճուկ, այս մութ գոյութեանը, որ կեանքի ծովը գուրս է շպրտել, եւ որ այժմ նստած է աւազների վրայ ինչպէս մի զզուելի աղբակոյտ:

Նայում եմ նրա աչքերին, կարմիր բոցալառ աչքերին, որոնց հայեացքը շիկացած նետի պէս մխրճուամ է ծովի անհունութեան մէջ, փնտռելով մի բան, որ կորցրել է կեանքում, երազելով մի բան, որ այնպէս նման է ծովի ալիքներին, նրանց աւերիչ կատաղութեանը, նրանց խենթ գեղեցկութեանը:

Եղբա՛յրս...

Կեանքի տականքի մէջ սողացող դժբախտը, հզօրների, ախտաւոր թշուառականների ոտքերի տակ դժնօրէն տրորուած այդ ճիճուն, իր ծուատուած կրծքի տակ պահել էր մարդը, անազարտ, հպարտ մարդը, որ գիտէր յափշտակուել, ապրել մըրիկը, ծովի արհաւիրքը, բնութեան բարբարոս հմայքը, ալիքների խենթութիւնը, նրանց ըմբոստութեան հրապոյրը:

— Է՛յ, մենաւո՛ր Եղբայր, ի՞նչ ես խորհում...

Գլուխը քաշ ընկաւ չորացած ծնկներին, թւում է, թէ նա օրորում է ալիքների հսկայ օրօրով, եւ հոգին լողում է նրանց հետ աղատ անհունութեան մէջ:

Երազնե՛ր...

Ի՞նչ էր բերել իր հետ, իր ցնցոտիների տակ, իր բղկտուած կրծքի տակ:

Մի հատիկ վիշտ չէր, մի ամբողջ խորտակուած գոյութիւն, հազար հազարների տրորուած հոգին, որ ցաւում, եռում էր, ինչպէս ծո՛վը, ծո՛վը...

— էլի՛, էլի՛...

Ծովի պէս բարձրանում ու իշնում էր նրա կուրծքը եւ հոգին

փոթորկում էր ու եռում ալիքների հետ։ Տարերքի աւերիչ կապաղութիւնը լցնում էր նրա հողին պայքարի, աւերածի, ոչընչութեան յոյզերով։

Ալիքների իւրաքանչիւր մռնչոցի մէջ նա լսում էր անէծքը կեանքի դաժան ալիքների, նրանց անիրաւ կաշկանդումների դէմ։

Կողոպտուած, տրորուած, հալածական ու քաղցած, որպէս գերագոյն մխիթարութիւն նա եկել էր տեսնելու աւերածի թափն ու կատաղութիւնը։

Եւ ծովն էր ապրում, ծովն էր վայելում իր ըմբոստ մենութեան մէջ։

Իր հոգու տանջանքի ծովը բերել էր թափելու այս մրրկուած ծովի անհունութեան մէջ։

— Է՛յ, տանջուա՛ծ եղբայր, ի՞նչ ես հեկեկում։

Ճակատը դրել է չորացած ծնկերի վրայ, դալարուած թիկունքի սոկորները ցնցւում են հեծկլատանքից, նա լալիս է մենակի փոթորկուած ծովափին, արցունքները կաթիլ կաթիլ ընկնում են խոնաւ աւազների վրայ եւ գնում են կորչելու ծովի անհունութեան մէջ գրկուած ալիքների հետ։

— Է՛յ, ցաւո՛տ եղբայր, ի՞նչ ես հեկեկում։

Գալարուած թիկունքը ցնցւում է, ճակատը տրորւում է ծնկերի վրայ եւ արցունքը հոսում է, հոսում . . .

Տառապանքով ուռած կուրծքը փուլ եկաւ, վշտի պատուարները քանդուեցին, աշխարհի առաջ ըմբոստ ու կատաղի, տանջըւած մարդը իր ծանր բեռի տակ խորտակուած ընկաւ մենաւոր ծովափին։

Շատկի'ր մէջքդ, բնկե'ր, ցցուի'ր ու ծառացիր, աշխարհն արժանի չէ քո կաթիլ արցունքին։ Հառաչանքդ ծովը կը խեղդի, եւ արցունքդ աւազների վրայ կը շոդիանայ։

Ե՛լ, ծառացի'ր, սղմի'ր բրօնդէ բազուկդ, ալիքների պէս դոռ, ալիքների պէս կատաղի։ Ե՛լ, ծառացի'ր, է՛յ, տանջուա՛ծ եղբայր։

* * *

Ո՞վ է խաղում ալիքների վրայ այսպէս խելայեղօրէն։

Ամէն անդամ, երբ ալիքները բաշերը ցցած վազում են դէպի ցամաքը, ծեր ձկնորսը նրանց թիկունքին պառկած՝ նրանց հետ խաղում, նրանց հետ թափի առած գալիս է համբոյր տալու ցամա-

քին, ապա նրանց հետ մէկտեղ մերթ կորչելով, մերթ երեւան գալով՝ յետ է զնում օրօրուելու ծովի անհունութեան մէջ, յետու առաջ, վեր ու վար...

Մըրկի բաղուկների վրայ ծեր ձկնորսն է օրօրուում ալիքների փրփուրէ անկողնի մէջ յաւիտենական քնով:

Բաղուկները տարածած ջրերի վրայ կարծես անհունը դըրկելու համար, ճերմակ մաղերն ու միրուքը ալիքներին խառնած, ինչպէս ծովային մամուռ, նա իր անշարժ, քարացած հայեացքը յառել է երկնքին, ասես հարցնելու համար, թէ ինչո՞ւ այսպէս:

Հարցը սառել է աչքերի մէջ կեանքի հետ եւ նա միայն օրօրուում է, օրօրուում է...

Երբեմն ծածկում է խապառ ջրերի տակ, եւ երբեմն էլ չդիտես, ալիքների ի՞նչ քմահած խաղով ծովի տակից, փրփուրի միջից բարձրանում է ինչպէս մի ճարպիկ լուղորդ, ցցում է ջրերի վրայ իր հսկայ իրանն ու ոտները քաշ ալիքների մէջ, ես տեսնում եմ նրա դլուխը, նրա ծեր ու փառահեղ դլուխը, նրա ճերմակ մաղերը ոլոր ոլոր ճակատին ու ծոծրակին թափուած, նրա հարուստ միրուքը բաց կրծքին կպած, եւ այդ դէմքը, այդ զարհուրելի դէմքը, որ չգիտես ժպտո՞ւմ է, թէ լալիս, հեծկլտո՞ւմ է, թէ քրքջում ալիքների հետ: Մի վայրկեան, միայն մի վայրկեան, ինչպէս ծովի աստուած նա կանգնում է ալիքների վրայ յալթական, իր քարացած հայեացքով ասես ընդգրկում է ողջ հորիզոնը, ապա կուլ է զնում անդունդները, եւ դուրս դալիս այս անդամ դարձեալ փոռուած ալիքների վրայ, դարձեալ բաղուկները տարածած, դարձեալ աչքերը չուած դէպի երկինք:

Եւ օրօրուում է ծեր ձկնորսը մեն մենակ, յետ ու առաջ, վեր ու վար:

Ո՛չ նաւակ ունի, ո՛չ առագաստ եւ ոչ դեկ ծեր ձկնորսը: Մըրկիների չնչի տակ, ալիքների փրփուրի մէջ, նրանց հսկայ օրօրով նա հանդչում է իր ալեծումի կեանքի ցաւերից:

Եւ դոհ է:

Զի շտապում դէպի ափերը, գերեզման չի փնտուում ցամաքի վրայ:

Եղբայր է ալիքներին եւ նրանց հետ օրօրուում է ծովի անհունութեան մէջ լայնարձակ գերեզմանում:

Եւ ի՞նչ լաւ է...

Բոլոր ղժբախտների, բոլոր զրկուածների, տառապողների երազը: Լայնարձակ, ցնորական մի աշխարհ, աղատ ու հպարտ հորիզոններ, ուր կուրծքը ցաւ եւ աչքն արցունքներ չունի, յոյզ ու ցաւեր, հոգս ու տանջանք ողջ չոգիացած ծով եթերում,— գերեզմա՞ն...

Եւ հեռուն, պառաւ այրին աւագ է ցանում երկնքի երեսին, իսկ որբերը ծունկ չոքած ծովափին հեծկլտում են նայելով դէպի հորիզոնը, ուր դնաց նրանց հայրը այլ եւս երբեք յետ չդալու համար:

* * *

Լոյսեղը կամաց-կամաց մեռան արեւմուտքում:

Արիւնոտ վերջալոյսը հանգաւ փոթորկոտ ծովի վրայ: Ալիք-ները նախ երկնքի հետ գունատուեցին, ապա կապտեցին ինչպէս կապարէ ամպերը, որոնք հաղար ձեւերով ու հաղար ծալքերով կախուեցին ծովի վրայ: Մառախուղը, ցուրտ ու հոսանուտ, ծովի կրծքից բարձրացաւ, ձգուեց, տարածուեց եւ ափերի վրայ փոռուեց որպէս խոնաւ ու յեղյեղուկ պատան:

Ոտարոբիկ ու գզգզուած մանուկները խուռն երամով վազվը-զում են ափերին. իրենց կեղտոտ մազերը և բաց, սկացած կուրծ-քերը հովին տուած՝ նրանք՝ խեղճութեան ու կարիքի կրծքից դուրս սողացած այդ փոքրիկ, այդ վտիտ էակները, դէպի մայր ծովին են վազել աւազների միջից ճանկելու այն բոլորը՝ ինչ ա-լիքները աւելորդ են գտնում եւ դուրս են չպրտում. կատաղի ա-չքեր ունին եւ ջլուտ, անողորմ մատներ, որոնք ճիրանների պէս թաղլում են հակառակորդի մերկ պարանոցի միսերի մէջ, եթէ պէտք է աւազները չանգուելով տիղմերի միջից ճանկել մի թպը-տացող ձուկ, մի խխունջ, կամ մի գարշատեսիլ ճիճու: Մանուկ ծերեր, կեանքի սեւի մէջ կանխահաս ախտաւոր, նրանք ճիչ ու ոռնոցով թափւում են իրար գլխի, քաշքւում, տրորւում աւազ-ների ու տիղմի մէջ, ներքեւ, ոտների տակ ընկածները դորտի պէս տափակացած գետնի վրայ, հեւում են ու տնքում, սղմած բոռնցքի մէջ պինդ պահելով ճանկած որսը, ապա բարձրանում են, քաղցի պայքարից յաղթական թեւերով սրբում են իրենց յեւ-խոտած դէմքը, արնոտած քիթն ու ըթունքները, քրքջում են լացի պէս, եւ վազում դէպի նոր պայքար, կամ սուր հայեցքը

ծովի մէջ միսած՝ սպասում են, թէ ե՞րբ է գալու նոր ալիքը նոր աւարով։

Սպասում են . . .

Եւ եկաւ նա, այն ալիքը, եկաւ մոնչալով ու հեկեկալով, ընկաւ ափին, փշուր փշուր խորտակուեց ու յետ փախաւ, թողնելով աւազների վրայ մի այլանդակ ու սեւ զանդուած։ Մանուկները գրոհ տուին եւ կանդ առան սասանուած . . . ծերունու դիակն էր, որ ծովը դուրս չպրտեց։ Սոսկումի մի ճիչ էր, որ մէկէն փըրթաւ բոլոր կրծքերից եւ նրանք փախան առանց յետ նայելու, փախան ու լուծուեցին երեկոյեան մառախուղի մէջ։

* * *

Լոյսերը մեռան :

Ամպերի թաց աչքերից էլ չի կաթկաթում բոսոր արիւնը խենթ ծովի վրայ : Անհուն ստուերները սեւ արձանների պէս ծունկի եկան, ապա ընկան ու գրկեցին կեանքը :

Ծովն է հեկեկում, ծովն է մոմոռում :

Եւ հեռուն մոնչաց մի ուրիշ ծով, քաղցածների ծովը :

Կարիքի դազանը սուր ճիրաններով քանդում է դաժան աշխատանքի մէջ կոփուած կրծքերը եւ հազար հազարներ երկնքի առաջ բրօնդէ բռունցքները բարձրացած, խոփւ մազերը խելայեղօրէն հողմածածան, հայեացքների մէջ աւերածի հուրը բորբոքած, ճիլուած արդարութեան շուրջը հեկեկում են երգերից ամէնից դաժանը, ամէնից անողորմը :

«Ո՞վ սպանեց արդարութիւնն աշխարհում,

«Զրահ տուէք եւ բրօնդէ բազուկներ» :

Մութ նկուղներից, գետնափորերից, աւերակներից, պատերի տակից բարձրանում է քրտնաթոր ու սեւ ամբոխը եւ նրա երգն է հնչում, քաղցի երգը, անողորմ ու ահաւոր՝ ինչպէս արդարադատութիւնը։ Անիրաւութեան կարծը ժայռերին պրկուած աշխատանքն է, որ ճգճգում ու ցնցում է իր շղթաները, տանջուած հողիների խորքում քնած զայրոյթի գազանն է եռում ու փրփրում եւ ծովի պէս ծառանում ու նետում է առաջ աւերիչ յորձանքներով։

Ո՛չ, երգ չէ այն, այլ փոթորկի մոնչոց, փլչող աշխարհների

դղրդիւն, որ բախւում է ծովի որոտի, ալիքների շառաչիւնի հետ:

Եւ գալիս են նրանք շարան շարան դէպի ծովը: Ամէն մի խումբ մի շղթայաղերծ մրրիկ է բերում իր հետ եւ ամէնքի երգը նոյնն է:

«Այս խողխողուած արդարութեան մեղեղին

«Մըրիկների հետ կը հիւսենք միասին»:

Ծովն է հեկեկում, ծովն է մոնչում եւ նրա հետ միասին սորուկ ու քաղցած ամբոխի ահաւոր երդն է բարձրանում, ծաւալում եւ շառաչալից խորտակում անհուն եթերի մէջ շանթերի ելեւէջներով:

— է՛յ, դժբա՛խտ ընկեր, ի՞նչ ես սողում աւազների մէջ, ե՛լ, սոքի՛ ել՝

«Ալիքների հետ ծառանանք ամեհի,

«Կայծակների բոցը խլենք երկնքից»:

Լացող մենաւորին շրջապատեցին:

Եւ քանի՛սն են... մոայլ ու ակօսուած ճակատների ամբողջ շարանները ցցուեցին ծովափին ինչպէս անհանդիստ թափառական ուրուականներ, որոնց մերժել է աշխարհը, եւ որոնցից դողում են դիշերները: Բոլորը պատառուուն ու քաղցած, բոլորի հայեցքների մէջ աւերած ու ոչնչութիւն: Եւ երդը վերստին հնչեց ահաւոր ու ահագին:

«Ո՞վ սպանեց արդարութիւնն աշխարհում,

«Զրահ տուէք ու բրօնզէ բաղուկներ,

«Ո՞ւր են հանգչում խենթ հողմերը փոթորկի,

«Այս մեր վերջին դոռ պայքարի մեծ ժամին»:

* * *

«Վերջին պայքար...»

Ալիքները քրքջացին անհուն ու խենթ ելեւէջքով:

Ի՞նչ են հեղնում, վերջին պայքարը, թէ հաւատքը դէպի յաղթանակն արդարութեան:

Թող այդպէս լինի, բայց ե՛լ, սոքի՛ ել, տանջուած մարդ, բարձրացրո՛ւ ճակատդ այդ խոնաւ աւազների վրայից եւ թող բարձրացրո՛ւ ճակատդ այդ խոնաւ աւազների վրայից եւ թող զերը քրքրում են կուրծքդ — երբեք, երբեք չկշտանալու համար. տե՛ս, քո տաք միսերը թրթուում են նրանց կեռ ու սուր կտուցների

տակ : Ալիքները քրքջում են հսկայական հեղնութիւն, բայց հաւատա՛, որ վերջին պայքարն է, դո՞նէ հաւատա՛...

Այնպէս լաւ է հաւատոը...

Օ՛, ես պաշտում եմ քո հաւատոը, ո՞վ մանուկ հսկայ : Հաւատա՛, ընկե՛ր, որ սա «վերջին» պայքարն է, հաւատա՛, քանի որ ամէն մի պայքար մի նոր հորիզոն բաց կ'անի, եւ ամէն մի հորիզոն՝ մի նոր արշալոյս :

Ու, հաւատա՛, ի՞նչ փոյթ որ յուսախաբութեան ճիւաղը ճմուռմ է իմ ուղեղը, իր ցուրտ ոսկրու մասներով . դու չգիտես, եւ չես էլ իմանայ երբեք, որ տանջանքն անվախճան է, այս դատապարտուած, այս ցաւոտ աշխարհում, եւ պայքարը վերջ չունի, ամէն մի յաղթանակ մի նոր յուսախաբութեան մայրն է, որպէսզի հաւատոն ու երազները, պայքարն ու հուր տենչերը ապրեն յաւիտեան :

* * *

Բոլորը հասան եւ կազմեցին մի մութ զանգուած, որ հսկայական ալիքի պէս ու յեղյեղուկ օրօրուում է խաւարի մէջ եւ հազար բերաններ մոնչում են միասին.

«Ո՞վ սպանեց արդարութիւնն աշխարհում,

«Զրահ տուէք եւ բրօնզէ բազուկներ...»

Երգը մեռաւ շրթունքներին, եւ յանկարծ կատաղութեան մի ճիչ պատռեց խաւարը, երիվարների ոտների տակ դետինը թընդաց, աւազները իւշացին :

Խուճապ էր... կարմիր կատաղութիւնը քայլում էր դիակների ու վիրաւորների վրայով, ճիերի սմբակները թաղւում էին պատառուած կրծքերի տաք արեան մէջ, եւ փշրում էին արնաշաղախ գանդերը :

Լո՛ւռ կաց, ծո՛վ, լո՛ւռ...

Գիշերային այս թանձր, այս անթափանցիկ խաւարի մէջ, ուր ո՛չ մի աստղ չի թարթում, արդարութիւնն ու իրաւունքը մեռնում են խոցոտուած, արնաքամ :

Վերջին պայքարը հեռու է, խաւարը թանձր, գիշերը սեւ եւ արշալոյսը երազ է լոկ :

Լո՛ւռ կաց, ծո՛վ, լո՛ւռ...

Բայց ծովն է հեկեկում, ծովն է մոնչում խաւարի մէջ, ա-

լիքները գալիս են ու խորտակւում, եւ էլ չեն քրքջում, չեն հեղնում, այլ մղկտում են ու հեծեծում: Նրանք ողբում են ափերին փոռուած դիակները, որոնք այլ եւս երբեք, երբեք չեն բարձրանայ:

Լո՛ւռ, լո՛ւռ, եւ թող քնեն, ինչպէս քնել են հաղար-հաղար սերունդներ:

* * *

Լուռ եւ դո՛ւ, սի՛րտ իմ, լո՛ւռ, ի՞նչ ես հեծկլտում որբացած, անտէր երեխայի պէս այս մռայլ խաւարի մէջ:

Ցուրտ է, ցո՛ւրտ....

Սատանաները զնդակ են խաղում հանճարների գանդերով, զաւակները լափում են հայրերի աճիւնների մէջ բասած կանաչին, կոյսերն իրենց փարթամ կրծքերի վրայ կրում են գերեզմանի հողից ծլած վարդը եւ մահուան հսկայական չղջիկը հողմահարում է մարդկութեան զալուկ ճակատը: Կատաղի անդղերը բղկտում են աշխատաւորի թրթուուն սիրտը եւ ագահօրէն խմում են նրա տաք արիւնը, ձիերի սմբակները թաղւում են բացուած կրծքերի մէջ, եւ երկաթէ պայտերը վշրում են վիրաւորների գանդերը:

Լո՛ւռ, սի՛րտ իմ, լո՛ւռ, ի՞նչ ես հեծկլտում որբացած ու անտէր երեխայի պէս այս ահաւոր, այս թանձր խաւարի մէջ, ուր եւ ո՛չ մի աստղ չի թարթում:

* * *

Ծովն է հեծկլտում, ծովն է հեկեկում սեւ խաւարի մէջ:

Ի՞նչ ես լալիս, վատարա՛խտ այրի, ե՛լ, ծառացի՛ր եւ ծածկիր այս ախտաւոր, այս ցաւազար աշխարհը, ուր ժամփի տակ՝ լաց եւ խնդի տակ՝ վիշտ է թաղնուած, ուր արշալոյս՝ մահ եւ գեղը գերեզման ունի:

Ո՛ւհ, մի ջրհեղեղ, աշխարհաւեր, համայնատարած ջրհեղեղ, առանց տապանի, որպէսզի մեռնող մարդկութեան երակների թոյնը չկարողանայ պատուաստուել նոր եւ լաւագոյն մարդկութեանը: Մի նոր արշալոյս, որի ցոլքերի տակ այլ եւս թունաւոր օձերը չտաքանան, մի նոր աշխարհ, ուր կուշտ անդղները էլ չբղկտեն աշխատաւորի քրտնաթոր կուրծքը, ուր սէրը աճուրդի չհանուի ցեխերի մէջ իւղոտ խողերի ոտների տակ:

Ջրհեղեղ առանց տապանի...

ԳԱՅԼԵՐԸ ՈՐՆՈՒՄ ԷԻՆ

Անտառումն էինք աշնանային ուշ գիշերին :

Մեղմութեամբ՝ ինչպէս յուսաբեկ սրտի խամրած երազներ, ծառերից պոկւում էին թօջնած տերեւները եւ խաւարի մէջ փոքրիկ հեծեծիւն արձակելով՝ ընկնում էին մեր գլուխների վրայ :

Անյոյս ու անդարձ մահերը երազների...

Մոռայլ, լալկան աշուն էր :

Նա' էր հեծկլում խաւարի մէջ, նա' էր սօսափում անտառի ծառերը, նա' էր փափսում չոր տերեւների մէջ յոդնած, ուժապառ միջատների հետ, որոնք նոյնպէս գնում էին մեռնելու մի փչակում, մի խորշում, կամ հիւանդ ծառի պոկուած, կծկուած կեղեւի տակ :

Եւ գալերը ոռնում էին :

Նրանց մռնչիւնը՝ մերթ սպառնալի, որպէս հեռաւոր արհաւիրքի որոտ, մերթ ողբագին, որպէս անյոյս կատաղութեան հեկեկանք, ձգլում, տարածւում էր քնած ծառերի վրայ. եւ այն ժամանակ խաւարը մնչում էր, միջատների քսոցը դադարում էր, գիշերը պահում էր իր շունչը եւ հեռում մեղմիւ, վախկոտ, անձայն :

Կրակը վառում էր ճարճատելով, բոցերը երերւում էին, հազիւ լուսաւորելով մօտիկ ծառերի բները, եւ նրանց ցոլքերը գողղողալով քսում էին թանձր, անյոյս խաւարին վախեցած մանկան աչքերով, որ նայում է մռայլ հեռուն եւ սիրտ չի անում առաջ շարժուել, անյայտի ու խաւարի սոսկումով բռնուած :

Կրակի մի կողմում, լայն եափունջու մէջ փաթաթուած, հանդարտ քնած էր իմ ընկերներից մէկը, հուժկու, գեղադէմ տղամարդ, որի միայն դէմքն էր երեւում :

Միւս ընկերս՝ մի վտիտ, ջլուտ երիտասարդ, նստած էր իմ դէմ ու դէմ եւ անդադար վայտի կտորներ էր նետում կրակի վըրայ: Նա նոր էր փախել բանտից, եւ մենք վերսկսել էինք մեր խենթ, արկածալից կեանքը անտառներում, ձորերում, լեռներում, միշտ ազատ եւ միշտ վախստական:

Ծնկները գրկած եւ աչքերն անթարթ՝ նա նայում էր կրակին թախծոտ, մտախոհ հայեացքով, եւ կարծես կարդում էր բոցերի լեզուն, դիտում էր նրանց շարժումները եւ, երբ վայտը ճարճա-

տելով մոխիր էր կտրում, վերցնում էր նորը, ձգում կրակի մէջ եւ կրկին ծնկները դրկում, կրկին խոհուն հայեացքը սեւեռում բոցերին:

Լուռ էինք:

Գայլերը վերստին ոռնացին, դիլ, ահաւոր. նրանք երեւի դժուհ էին մեր կրակից եւ զայրոյթով թափառում էին մեր շուրջը աւելի եւ աւելի մօտենալով:

— Լսո՞ւմ ես, ասաց նա, ի՞նչ անախորժ է:

— Կրակից են վախենում, պատասխանեցի:

— Զի՞, նեղ է աշխարհը նոյնիսկ գաղանների համար. նզովուած աշխարհ...

Ես զետացի, որ նրա հոգին կրծում է մի ուժեղ, մի մութ վիշտ: Դէմքը գունատ էր, եւ բոցերի փայլը նրան տալիս էր ուրուականի արտայայտութիւն:

Խօսել չէր լինում:

— Գիտե՞ս, որ ես յոդնած եմ, շարունակեց նա, շատ յոդնած. այնպէս կ'ուզէի քնել, խոր, երկար քնով:

— Քնի՛ր, ես կը հսկեմ, ասացի:

— Յիմար, ասաց նա մեղմ յանդիմանութեամբ, չես հասկանում ինձ. խոր, երկար քուն եմ ասում, յաւիտենական քուն...

— Ի՞նչ է պատահել քեզ:

— Յոդնած եմ, յոդնած:

— Բանտից յետո՞յ, ազատութեան մէջ...

— Հա՛, բանտից յետոյ, ազատութեան մէջ. ո՞ւհ, այդ ազատութիւնը, դիտե՞ս ինչպէս փախայ:

— Գիտեմ, որ փախել ես, այդքանն ինձ բաւական է, մնացածն ի՞նչ արժէք ունի:

— Հէնց մնացածն է հետաքրքիր, միամիտ մարդ, զարհուրելի է, զարհուրելի. հաւատա՛, ընկե՛ր, ազատութիւն կայ, որ բանտից նեղ է. լսի՛ր, պատմեմ քեզ եւ ասա՛ քո հեղինակաւոր, քո անողորմ վճիռը. ասա՛, ե՛ս ոճրագո՞րծ եմ, թէ ոչ:

Գայլերը ոռնացին վերստին:

— Լսո՞ւմ ես, իմ ազատութեան յուղարկաւորութիւնն են կատարում գաղանները, եւ նրանց երդը նոյնն է՝ «աշխարհը նեղ է, նեղ է, նեղ է»... Գիտե՞ս, մօրս երկունքը ձախորդ է եղել, եւ խանձաբուրիս վրայ անէծքն է թառել:

— Այս գիշեր գու տարօրինակ ես, դու...

— Լսի՛ր եւ մի ընդհատիր ինձ։ Ես միշտ գիտէի, որ աշխարհը նեղ է եւ արիւն-արցունքով լեցուն։ ցաւը եռում է ամէն կողմ՝, եւ ինձ միշտ թւում էր, թէ պիտի պայթի այն աշխարհը, եւ երբ պայթի, նրանից կը ծնուի նորը, ուր տառապանքն աւելի նուազ եւ ժաղիտն աւելի փարթամ կը լինի։

Այդպէս էի մտածում եւ երազում էի։

Իմ երազնե՞րը…

Նրանց մէջ տեղ ունէին բոլոր նրանք, որոնք ճխլուած հսկայական ցաւի տակ, սողում են, տնքում եւ ապրում են սոսկ, որպէս շաղախ ուրիշների, հզօրների երջանկութիւնների համար։

Ես հպարտ էի իմ երազներով, հպարտ ու յանդուգն։ ինձ թւում էր, թէ տիեզերքն եմ ընդգրկում, եւ իմ խոհերը մուրճեր են, որոնց տակ պիտի խորտակուի բոլորը, ինչի վրայ բարձրանում է արիւնի ու արցունքի հրէշաւոր շնչնքը։

Բռնուել էի երկրորդ անգամ խիստ վտանգաւոր պարագաներում։ Զինուորական-դաշտային դատարան, կախաղան, որպէս արիւնոտ կօշմար՝ խեղդում էին ինձ։ Ինքս ինձ ասում էի, որ պայքարի գեղեցկութիւնը յաղթանակի մէջ է։ նահատակի փայլուն լուսապսակը թող տան՝ ում ուզում են, իսկ ես պիտի փախչեմ բանտից, ինչ գնով եւ լինի, թէկուզ էլի հազար կամարներ բարձրանան դլխիս աւելի կուռ, աւելի մոայլ ու հաստաբեստ։

Անքուն էի։

Կուռ էր բանառում։

Մերթ ընդ մերթ լսում էր որեւէ բանտարկեալի շղթաների շառաչիւնը, նզովուած ու ժանգոտ մետաղը հաջում էր իր զոհի վրայ եւ նրա ոտները կրծոտում։ այդ ժամանակ միջանցքում հսկող զինուորը կանգ էր առնում մի վայրկեան, ականջ դնում, ապա շարունակում քայլել յետ ու առաջ միեւնոյն դժով, միեւնոյն համաչափ, ծանր քայլուածքով։ Նրա ոտնաձայնը հնչում էր իմ ականջում, որպէս անորոշ գղրդիւն։ ինձ զրադեցնողն այդ ժամին ո՛չ բախտակից հարեւաններիս շղթաների շոինդն էր, ո՛չ սպահապանի միակերպ քայլուածքը։ Զափից դուրս շատ բան ունէի մտածելու, բայց գլխումս գաղափարների շփոթն ահաղին էր, միտքս՝ ամուլ, եւ ես անկարող էի որեւէ վճռական միջոցի վրայ կանգ առնել իմ փրկութեան համար ու սկսեցի մեքենայաբար համրել զինուորի քայլերը՝ «մէկ, երկու, երեք… տաս, տասներկու»… Զայրացայ ինքս ինձ վրայ։ բանտարկութեանս առաջին

օրից քանի-քանի անդամ համարել էի իրար յաջորդող բոլոր իմ պահապանների քայլերը, գիտէի, որ նրանցքի մի ծայրից միւսը երևուն երկու քայլ է, գիտէի, որ պահապանն ստիպուած է քայլել քունն ու ձանձրոյթը վանելու համար: Գիտէի այդ բոլորը եւ դարձեալ ակամայ համարում էի ոտնաձայները, երբ իմ կեանքի ու մահուան խնդիրն էր վճռուում: Նզովեցի պահապանին եւ իր քայլերը ու վերսկսեցի մտքերիս թելը, վճռաբար կրկնելով՝ «պէտք է փախչել, պէտք է փախչել, պայքարի գեղեցկութիւնը յաղթանակն է»:

Յիշեցի մօրս:

Խեղճ պառաւ մայր. կեանքի այս ահուելի ժխորի մէջ, ուր չարիքն ու բարին կատաղած բորենիների պէս իրար կոկորդ են կրծոտում, դու էլ ոտների տակ ընկար, քո ծեր օրերի բեռը շալակած: Մի երկու օր առաջ ինձ այցելութեան էր եկել. սեւաղդեսս ու երկու տակ կուացած՝ նա սրբում էր իր մարած աչքերից քամուող արցունքը եւ ասում ինքն իրան.

«Ես ծնկաչոք կը դամ մինչեւ դատարան, կ'ընկնեմ դատաւորների ոտները, կ'աղաչեմ, կ'աղերսեմ, որ իմ մինուճարին չտանեն, չխեն ինձանից»:

— Հա՛, Հա՛, մայրիկ, դու այդպէս կ'անես, քաջալերում էի ես նրան մի բանով մխիթարելու համար:

«Մեր օրերիս էս սեւը բերիր դլիմիս, շարունակեց նա, քեզ ասում էի, որդի՛, ինձ խնայիր, իմ խեղճութեանն ու անտէրութեանը մեղքացիր, տէրութեան դէմ»...

— Մա՛յրիկ, հանդիսա մնա՛, ընդհատեցի նրան, տեսնելով, որ պահապանների ներկայութեամբ անդիտակցաբար մեղաղը ում է ինձ. մա՛յրիկ, ես մեղք չունիմ, ա՛յ, կը տեսնես, կ'աղատուեմ:

Նա հասկացաւ միտքս, անհանդստութեամբ շուրջը նայեց, աչքերը սրբեց.

«Վա՛յ, քուանամ ես, ցնդուած պառաւ եմ, ինքս էլ չեմ իմանում, ինչ եմ դուրս տալիս. Հա, ոտները կնկնեմ, կ'աղաչեմ, կը լամ, դու ի՞նչ մեղք ունիս, որ չաղատեն...»

Խեղճ պառաւ...

Եւ նա հաւատացած էր, թէ իրան կը լսեն, թէ նա իր արցունքով քարերը կը պատուի. ո՞վ կարող է դիմանալ, երբ մի մայր է լալիս:

Մօր արցո՞ւնքը...

Կրակի բոցերը նուազեցին եւ խաւարը թանձրացաւ մեր շուրջը. ընկերս դարձեալ փայտեր շարեց կրակի վրայ, որոնք ճարճատելով սկսեցին վառուել. միւսը, մի բան մռմռաց քնի մէջ եւ շարունակեց խոմփալ, իսկ դայլերը բոցավառուած կրակի փայլից վերստին ոռնացին աւելի զիլ, աւելի չարագուշակ ու կատաղի:

— Դու չե՞ս քնում:

— Ո՛չ, ասացի:

Եւ նա շարունակեց իր պատմութիւնը.

«Մի երկու օր յետոյ ինձ շղթայակապ պէտք է փոխադրէին նահանգական քաղաքը դատելու: Պէտք էր փախչել ճանապարհին զինուորների ճեռքից, ուրիշ ճար չկար: Բայց ի՞նչպէս. ահա խեղդող հարցը, որի ծանրութեան տակ ընկճում էր միտքս, ու հոգիս թակարդի մէջ բռնուած թռչունի նման թրապտում էր ու տնքում:

«Մէկ, երկու, երեք... տաս»:

Դարձեա՞լ... զայրացած՝ բռունցքով խփեցի ճակատիս ու շուռ եկայ միւս կողքիս: Երկաթէ մահճակալս ճռնչաց, շղթա-ներս շառաչեցին, եւ պահապանը կանդ առաւ իմ դրան առաջ: Սպասում էի, թէ նա ըստ սովորութեան կը կանչի անողորմ ու շշտ ճայնով. «Զաղմկել', քնի՛ր, ապա թէ ոչ...»: Այսպէս են բոլոր պահապանները, մէկը միւսից անսիրտ:

Բայց այս անգամ պահապանը լուռ էր:

Երեւի նա է, մտածեցի ես, իմ բարեկամը, միակը, որ հայ-հոյել չգիտէր, որ իր պաշտօնի խստութեան մէջ պահել էր մի անոյշ մեղմութիւն, մանաւանդ դէպի ինձ:

— Զե՞ս քնել, հարցրեց նա կամացուկ:

— Ո՛չ, ասացի:

— Մօրդ մասին ես մտածում երեւի:

— Հա, նա այնպէս տառապում է:

— Եթե զա պառաւ... եւ նա հեռացաւ ու շարունակեց դնալ-դալ. մէկ, երկու, երեք... տաս, տասներկու:

Մեր բարեկամութիւնն սկսուեց ինձ համար խիստ անսպա-սելի կերպով: Ծեր մօրս առաջին այցելութեանը նա ներկայ էր, լուռ նայում էր նրա արցունքին, եւ նկատեցի, որ խիստ յուղ-ուեց: Երբ մայրս հեռացաւ, նա մօտեցաւ իմ դռնակին, եւ խօ-

սում էր իր մօր մասին, որ հեռու հայրենիքում տարիներից ի վեր սպասում է իր դալստեանը:

— Տարաբախտաբար մեծ եղայրս պահեստի զինուոր է, ասաց նա, եւ զէնքի է կանչուած: Նա այժմ կոռւի դաշտումն է: Այս անիծած պատերազմն էլ վերջ չի առնում. քանի՛ ան ընկան... ի՛նչ լուրեր են գալիս. ո՞վ գիտէ, ի՛նչ է պատահելու. յետոյ եղբայրս կին ունի. խեղճ մայր, ինչպէս են եօլա զնում. երկու կնամարդ, առանց տղամարդի, առանց օգնականի, աղքատ, անհող... ամէնքն աղքատ են մեղ մօտ, օ՛, այնպէ՛ս աղքատ, հող չկայ...

Այս խօսակցութիւնն եղաւ մեր բարեկամութեան սկիզբը: Այնուհետեւ իր պահպանութեան հերթին նա հեշտացնում էր իմ կապը արտաքին աշխարհի հետ, լուրեր էր տալիս դրսում անցած-դարձածից, պատերազմից. ևս խօսում էի իմ մօր վշտերից, բանտից ու շղթաներից, նա, իր զինուորութիւնից, իր եղբօրից ու հեռաւոր ընտանիքից:

— Էհ, ծանր է կեանքը, եղբա՛յր, վերջացնում էր նա:

— Հա, ծանր է, պատախանում էի:

— Բա՛րի դիշեր, քնի՛ր:

— Բա՛րի դիշեր, եղբա՛յր:

Եւ նա սկսում էր գնալ-դալ. ևս համարում էի նրա քայլերը մինչեւ քնեմ:

Նա մի շիկահեր, միջահասակ երիտասարդ էր. պարանոցը մի փոքր թեք դէպի ձախ, որ նրան տալիս էր համեստ, նոյնիսկ խեղճ արտայայտութիւն: Խօսում էր դանդաղութեամբ, համարեա կակաղելով: Ծոյլ շարժումներ ունէր, միշտ մտածկուտ անփայլ դէմք, որ մօտենում էր թախծոտի: Ես այնպէս դրաւուած էի նրա բարի արտաքինով, այնպէս բարեկամ էի համարում ինձ, որ երբեմն տարօրինակ էր թւում ինձ նրան տեսնել իմ պահպանի գերում, հրացանը ձեռքին պատրաստ կրակելու, եթէ փախուստի ամենաշնչին փորձ անեմ: Յաճախ նայում էի նրա աչքերի մեղմ, բարի արտայայտութեանը, անմեղութիւն բուրող նրա խեղճ դէմքին ու ինքս ինձ հարցնում էի՝ մի՞թէ այս մարդն ընդունակ է իր հրացանի փողն ուղղել առաջին պատահած բանտարկեալի կրծքին, որին չի ճանաչում, որի յանցագործ լինել էամ չլինելը նա չի կարող իմանալ:

Այս մարդու արտաքինի եւ նրան վերապահուած արիւնոտ

դործողութեան մէջ եղած հակասութիւնն ինձ թւում էր հրէշաւոր, այլանդակ, եւ ես չէի դադարում մտածել այդ գարշելի հակասութեան մասին, ուր սնունդ է առնում անդիտակից ոճիրը:

Յաճախ երբ նա խօսում էր ինձ հետ, ես չէի լսում, այլ նայում էի աչքերին եւ նոյն միտքը դառնում էր իմ զվարաց, ինչպէս մի ձանձրալի յանկերգ՝ «Եթէ փախչեմ, սա ինձ կը խփի^o, թէ չի խփի, կը խփի^o, թէ չի խփի»... Ես այնպէս կ'ուզէի այդ իմանալ: Հարցնելն անյարմար էր. գիպուտածն ինձ օդնեց: Մի գիշեր բանտում ահակոչ բարձրացաւ, պահապանը մի քանի անդամ հրացան արձակեց. նրան պատասխանեցին բանտի միւս մասերից հրացանների որոտով. յետոյ աղմուկ, խօսակցութիւն, հայհոյանք, զայրացկոտ հրամաններ, շղթաների ձայն, դռների դղըրդոց, տնքոց, հեծեծանք, ապա ամէն ինչ լրեց, ասես ոչինչ պատահած չլինէր: Յաջորդ օրը շատ բանտարկեալների ոտներ չըդթայեցին, ի թիւս որոնց՝ իմ: Յետոյ իմացայ, որ երկու բանտարկեալ փախուստի փորձ են արել, քանդելով առաստաղը, բայց անյաջող:

Երբ իմ բարեկամ պահապանն իր հերթին եկաւ, նա նայեց շղթաներին ու ցաւ յայտնեց:

Խօսք եղաւ փախչողների մասին:

— Սպանուա^oծ են, հարցըի ես:

— Մէկն սպանուած է, միւսը՝ ծանր վիրաւոր. յանդուգն, խելագար բան է, եղբա՛յր... փախչել բանտի՛ց, շարունակեց նա, նոտել ես, ուրեմն օրէնք է... Նստի՛ր, դասաստան կայ. թէ չէ փախչե՛լ. այնպէս չէ^o, դէ ի հարկէ կը խփեն եւ խփողը պարզեւ կը ստանայ. պարտք է, եղբա՛յր, զինուորի պարտք, հօրդ էլ չես կարող խնայել... հա, այդպէս է, եղբա՛յր, նստեցրե՛լ են... ուրեմն մի բան կայ, նստի՛ր եւ սպասիր, օրէնք է...

Եւ նա ասում էր այս բոլորը ոգեւորուած, համարեա զայրոյթով, կարծես նոյնիսկ ցաւում էր, որ ինքը չէ եղել խփողը: Ես զարմացած նայում էի նրա դէմքին ու ճանաչել չէի կարողանում իմ բարի, իմ խեղճ բարեկամին: Սա նո՞յն մարդն էր, որ մի քանի օր առաջ քիչ մնաց արտասուէր, երբ մօրս արցունքը տեսաւ: Իմ առաջ կանգնած այս զինուորի արտաքինի տակ մի մարդ չէր, այլ երկու, եւ զարհուրելին այն էր, որ նրանց մէջ կոխւ չկար:: Նոյն այդ աչքերը, որոնք այնքան բարի, այնպէս մեղմ արտայայտութիւն ունէին, առանց յուզմունքի նշան կը բռնէին ինձ, եթէ ես էլ

փախչելու փոքրիկ փորձ անէի : Այժմ այդ ինձ համար պարզ էր՝ ինչպէս այն, որ ես բանտում էի :

Ահա այդ զինուորն էր, որ գիշերը մօտեցաւ դրանս, կարեկ-ցութեան երկու խօսք ասաց, ապա հեռացաւ, թողնելով, որ ես որոճամ իմ փախուստի ծրագիրը :

«Պէտք է փախչել, պէտք է փախչել» :

Խեղդող, սրտմաշուկ հարց, որ հազար ձեւով դառնում էր գլխումս :

Թէւ աշուն էր, բայց բանտում տօթ էր, նեղիկ երկաթապատ լուսամուտից օդը չէր փոխում : Առաստաղը ճնշում էր, կարծես կամաց կամաց կախում ցածրանում էր ինձ խեղդելու համար : Ճակատս տաքանում էր, ես կարծես տենդում էի, մըտքերս բոց դարձած՝ վառում էին դանդիս մէջ . նստեցի, գլուխս ձեռներիս մէջ առայ յուսահատաբար :

Հոգիս դժոխք էր :

Պահապանը կրկին մօտեցաւ դրանս :

— Դու դեռ անքո՞ւն ես :

— Հա, անքուն եմ, չոդ է, յետոյ վատ երազները...

— Վա՞տ երազները, կրկնեց նա վշտոտ, գողդոջուն ձայնով, քնի՞ր, եղբա՛յր, քնի՞ր, կեանքն անիծուած է, օօ՛ֆ...

Նրա խօսքի շեշտը անսովոր ցաւ ունէր, զգացի, որ նա արտասուելու չափ տխուր է :

— Վատ լո՞ւր ունիս տնից, հարցրի :

— Եղբայրս սպանուած է ... մայրս զրում է ... ինե՛ղն պառաւ ... քնի՞ր, եղբա՛յր, քնի՞ր, կեանքն անիծուած է ...

Նա էլ շարունակել չկարողացաւ, մեղմիւ հեծկլտաց, դռնիցս հեռացաւ եւ սկսեց քայլել նոյն համաշափ քայլուածքով յետ ու առաջ, եւ նրա ոտնաձայնը չոր էր ու անողորմ, ինչպէս միշտ : Ահագին վիշտը կրում էր թիկունքին, ինչպէս իր ծանր հրացանը, եւ մէկը միւսին ասես բնաւ չէր խանդարում :

Մոռացայ իմ ցաւը եւ մտածում էի բարեկամ զինուորի ցաւի մասին :

Մի մութ ու ահաւոր կապ կար այդ ոտնաձայնի, զինուորի վշտի, ուազմի դաշտում ընկած, անծանօթ մարտիկի եւ իմ բանտի շղթաների մէջ : Զէի կարող ասել, թէ դա ի՞նչ կապ է, ինչո՞ւ է զբաղեցնում ինձ մի անծանօթ դիակ, որ ընկած է հեռու, ան-

ծանօթ հորիզոնների տակ իր պէս հազար հազարների հետ : Ինձ թլում էր, որ ե՛ւ իմ բանտն ու շղթաները, ե՛ւ այն դաժան, արիւնոտ մահը, որ այնքան երիտասարդ կեանքեր է հնձում պատերազմի դաշտում, միւենոյն ծագումը, միւենոյն աղբիւրն ունին :

Եւ այս մարդը լալիս էր, ցաւում էր մէկի համար, միայն մէկի . բայց ուրիշ հազարները նոյնպէս ընկել են նոյն գնդակով, նոյն դաշտերում, նոյն պատճառով եւ նոյնպէս արժանի են կարեկցութեան, արցունքի :

Աշխարհում այնպէ՞ս շատ են արցունքի արժանիները, բոլոր նրանք, որոնք ճիւլում են կեանքի մեծ ճանապարհներին այլեւս երբեք չբարձրանալու համար :

Եւ զինուորը գնում էր, գալիս ու հեծկլուում . նա էլ էր դարկլուած, ինչպէս ե՛ւ այն խեղճ, անտէր պառաւը, որ հեռաւոր երկընքի տակ, մի աւերակ խրճիթում նոյնպէս հեծկլուում էր անկընքի սա, այս վշտից խորտակուած զինուորը, ինձ կը գընդակահարի . հէնց այս վայրկեանիս կը դադարի հեծկլուալ ու արցունքուա աչքով նշան կը բռնի, կը զարկի միեւնոյն գնդակով ե՛ւ ինձ, ե՛ւ մօրս, եւ բոլոր խենթ երազներս կը մարեն նրա բութ անդիտակցութեան մի նզովուած հարուածով :

Մութ, կորած մի արարած է, որոնցով լի է աշխարհը, բայց էլի մարդ է, գիտէ խորը զգալ մերձաւորի վիշտը . հեռաւոր եղրոր մահուան կսկիծը գիշտափիչ թուչունի պէս հորիզոններ է կըտրել եւ եկել սրա սիրտը քրքրում է : Եւ այդ կեզիչ ցաւը, սեփական վիշտը նրան ոչինչ չի ասում . իր խաւար գլխի ու խղճուկ սրտի մէջ նա անջատ, ուրոյն տեղ է բռնել՝ միանդամայն դուրս աշխարհի հսկայական չարիքից :

Լալիս է . բայց եթէ փախչեմ՝ առանց արցունքը սրբելու կը զարկի, որովհետեւ նրան է յանձնուած հսկել, որ իմ շղթաները շատ բարձր չշառաչեն, որ բանտը դամբարան լինի ինձ պէս հազարների յոյզերին, յոյսերին եւ բոց տենչերին :

Ո՛ւհ, կեանքը :

Նզովքի, արեան ու արցունքի շաղախ է այն, որի վրայ թառել է բութ անդիտակցութիւնը հսկայ բուի պէս, թառել է եւ վուրգույ է անում, մինչդեռ իր զոհերը խեղդոտում, տրորում, զարկում են իրար, արիւնոտում ու ընկնում առանց իմանալու թէ ինչո՛ :

Դժո՞լսք...

Պահապանը զնում էր գալիս անընդհատ, միակերպ. «մէկ երկու, երեք»... Գլուխս ծանրացաւ, ընկայ կոշտ անկողնի վրայ. շղթաներս շառաչեցին խուլ ու այլանդակ ձեւով. փակեցի աչքերս եւ դարձեալ մտածում էի պատերազմի դաշտում պառկած հազար հազար արիւնոտ դիակների մասին, որոնց վրայ պտտում էին դիշակեր թռչունները, կամ լալկան ամպերն էին գալիս մի քանի կաթիլ արցունք թափում եւ անցնում:

Եւ այսպէս ես չկարողացայ»...

Նրա խօսքն ընդհատուեց ոտների թվիթփոցով, որ լսուեց հէնց մեր թիկունքին բոլորովին մօտիկ եւ նոյն վայրկեանին երկու գայլ, իրար կրծոտելով ու քաշքելով, կատաղի ոստիւններով անցան մեր կողքով: Ընկերս զայրացած խլեց հրացանը, ուղղեց նրանց յետեւից եւ արձակեց: Գայլը կազկանձեց, սուր, անօրինակ ճիշ արձակեց ու լոեց. մեր քնած ընկերը զարթնեց, վեր թըռաւ, ճեռքը դէպի հրացանը տարաւ:

— Քնի՛ր, քնի՛ր, ասաց հրացան արձակողը. ես էի, դայլին խմբեցի, քնի՛ր:

Միւսը մի բան մոմուց քթի տակ, հրացանը թողեց, կըրկին փաթաթուեց եափունջու մէջ եւ իսկոյն քնեց:

— Գայլն ընկաւ, ասացի ես:

«Անկասկած, նրա կազկանձոցը օրհասական ճիշ էր: Եւ լսւ եղաւ, աշխարհում մի տեղ բացուեց. ես քեզ ասացի, որ նեղ է, նեղ է, ամէնիս համար նեղ է:» Եւ նա տարօրինակ կերպով ծիծաղեց, ապա կրակի վրայ փայտեր շարեց ու շարունակեց.

«Ես չկարողացայ փախուստի մէկ վճռական միջոց գտնել, թողեցի պատահականութեան, կոյր դիպուածին:

Եւ չսխալուեցի:

Բարեկամ զինուորի ճեռքով դրսից մի տոմսակ ստացայ. բովանդակութիւնը հետեւեալն էր. «Վաղը քեզ տանելու են. աշխատիր գետափի մօտ անտառում նստել հանգստանալու»:

Տօմսակը պատռտեցի, բայց այս մի քանի բառերը կարծես չիկացած երկաթով տպուեցին ուղեղիս վրայ, եւ ես անդադար կրկնում էի ինքս ինձ: Ո՞վ էր դրել — չդիտէի, ի՞նչ էր ծրագըրուած, նոյնպէս հասկանալ չէի կարողանում. մի բան միայն պարզ էր, որ ինձ ազատելու մասին դրսում մտածել են ընկեր-

ներս, եւ որ դետափին, անտառում նստելը վճռական նշանակութիւն կարող է ունենալ իմ փրկութեան համար:

Վերջապէս ինձ տանում էին՝ կամ դէպի մահ, կամ դէպի փրկութիւն: Երկու զինուորի հսկողութեամբ եւ գլուխս սեւ մըտքերով պաշարուած, ես քաշ էի տալիս իմ շղթաները յամբաքայլ: Մի անսպասելի զուգադիպութեամբ պահապաններից մէկը դարձեալ իմ բարեկամն էր, չիկահեր, տիրադէմ երիտասարդը: Միւսը, մի բարձրահասակ, խոժոռ մարդ, որի իւրաքանչիւր շարժումը, մանաւանդ, դաժան հայեացքը վկայում էր նրա խստութիւնը: Սա չէր ինձ հետաքրքրողը, եւ ես նոյնիսկ ուրախ էի, որ ատում եմ այս մարդուն առանց լուրջ պատճառի: Ինձ զբաղեցնողը իմ բարեկամն էր: Փոխանակ ուրախանալու, որ նա է ինձ ընկերանալու, փոքրիկ դող անցաւ մարմնովս, երբ նրան տեսայ: Եթէ հնար լինէր, կը ճշայի: «Է՞յ, բարեկամ՝ աղաչում եմ քեզ, մի՛ ընկերացիր ինձ»: Ես նման էի այն ձիուն, որ ճանապարհի եղրին ընկած մի մութ զանգուածից վախենում է ու ծառանում, աշխատելով հեռուից անցնել: բայց տէրը քշում է նրան հէնց դէպի սոսկալի առարկան: Ես վախենում էի այս բարեկամի ներկայութիւնից, անորոշ կերպով զգում էի այդ վախի շարժառիթը, առանց սակայն պարզ կերպով ինձ հաշիւ տալու, թէ ի՞նչ էր այն: Մէկ չէ՞՝ նա թէ՞ մի ուրիշը: բոլորն էլ գնդակի կը բռնեն, եթէ փախչելու փորձ անեմ: սա գոնէ ճանապարհին աւելի կարեկից կը լինի դէպի իմ ծանր կացութիւնը, հրացանի կոթով թիկունքիս չի հարուածի, եթէ դանդաղեմ կամ յոդնեմ: Մտածում էի այս բոլորը, բայց եւ այնպէս կ'ուղէի, որ նա չլինէր, այլ մի ուրիշը, անծանօթը, որ ինձանից ոչինչ չունէր, եւ որից ես էլ ոչինչ չունէի:

Ճանապարհը երկար էր ու մանուածապատ. մենք անցնում էինք դաշտերով, ձորերով ու անտառներով: Աշնան սկիզբն էր: Թուզունները ճախրում էին երկնքի տակ մեծամեծ երամներով՝ աղատ ու անհող, եւ նրանց խառն ի խուռն ճիշերը իմ շղթաների չոփնդի հետ կազմում էին մի սրտմաշուկ, հոգեհան համերդ: Կեանքի խօլ աղաղակն է այս,— մտածում էի ես,— ցաւերի ու ցնծութեան հնչիւններից հիւսուած:

Աշնան առաջին նշանը, հատ հատ դեղնած տերեւներ երեւում էին այստեղ, այնտեղ: Փչում էր մոլորուած քամին, քշում, իրար էր խառնում մեռած տերեւները, եւ նրանք հնազանդ ու

խեղճ, լալագին խշոցով տարւում էին գետնի երեսից, առանց իմանալու թէ ո՞ւր եւ ինչո՞ւ:

Կոռւնկների աղեղնաձեւ մի երամ վերեւից կղզաց ու անցաւ: Ճանապարհից քիչ հեռու մի խումբ անդղեր կեռ, ուժեղ կտուցներով քրքրում էին մի դիակ. իմ շղթաների ձայնից նրանք բարձրացան դժոհու ու կատաղի, ապա ցած իջան շարունակելու իրենց նողկալի ճաշը: Աշխատաւոր զիւղացիներ կային ցելերում. գլուխները բարձրացրին ու նայեցին մեղ մի վայրկեան այն սովորական բութ անտարբերութեամբ, որ յատուկ է հողի վրայ կուացած ճակատներին, ապա վերսկսեցին իրանց դանդաղ աշխատանքը:

Երկնքի տակ լողում էին կտոր ամպեր, նօսր ու անձեւ. նրանք տարւում էին այնպիսի դանդաղութեամբ, ասես համարում էին իմ յոդնած քայլերը, եւ ականջ դնում իմ շղթաների շոինդին: Նրանց յեղեղուկ ու այլանդակ ստուերները թուխ շըղարշի պէս մի վայրկեան պարուրում էին մեղ, ապա հանդարտ անցնում սողալով դաշտերի ու անտառների վրայով որպէս դարանակալ դաւադիրներ: Ամպերի այդ դաղտապողի շրժումները, այդ գլուխաւոր ընթացքը այնպէս նման էին իմ մտքերին, որոնք նոյնպէս ծածուկ, նոյնպէս անձեւ դառնում էին իմ գլխում խօլ երամով:

Եւ այդ մտքերը.. բոլորն էլ իմ փախուստի շուրջն էին պըտըտւում: Ի՞նչ է սպասում ինձ, ի՞նչ էին նշանակում խորհրդաւոր տոմսակի մի քանի բառերը, ի՞նչպէս անել, որ կէտ առ կէտ կարողանամ իրագործել դաղտնի հրահանգը առանց ինձ մտքերին, որոնք նոյնպէս ծածուկ, նոյնպէս անձեւ դառնում էին իմ գլխում խօլ երամով:

Հեռուից լսուեց գետի ձայնը. մօտ էինք, եւ սիրտս թունդ ելաւ. քիչ յետոյ մեր ճանապարհն անցնում էր նրա ափերով: Մեղնից դէպի աջ, մի անդնդախոր ձորի մէջ հսում էր նա փրփրած ու կատաղի: Մացառներն ու ծառերը թագցնում էին նրա տեսքը, լսում էր ձայնը միայն, մի ահագին որոտ: Լեռնային գետակ էր, որ սրբնթաց իջնում էր բարձրութիւնից, կատաղաբար դարկւում ափերին եւ մոմոռում ու կրծոտում իր կողերը սղմող ժայռերը: Մենք երեքով էլ նայում էինք դէպի աջ, դէպի բարձր քարափը, որից ներքեւ գետն էր մռնչում, ինչպէս կաշվանդուած վիշապ: Ինչո՞ւ էին նայում իմ պահապանները, չգիտեմ, բայց ես դիտում էի, ամէն վայրկեան սպասելով, թէ մի բան պիտի պատահի, մի

զարհուրելի անակնկալ: Անորոշի, մութ դիպուածի սոսկումը բռնել էր ինձ, ծնկներս ծալում էին ակամայ, եւ գետի որոտը օրորում էր ինձ, որպէս անհունի անհասկանալի աղաղակ:

Առաջ շարժուեցինք. ճանապարհը նախ հեռացաւ գետափից, ապա պտոյտ տալով ցածացաւ դէպի ձորը: Անտառի մէջ էինք: Յուզմունքս իր գաղաթնակէտին հասաւ. այստեղ պէտք էր «հանդըստանալ»: Ճիդ էլ գործ դնում առհարկի իսպաղութեամբ խընդըրել պահապաններիս մի քանի բոպէի հանդիսա, բայց ամէն անդամ, որ փորձում էի բերանս բանալ, ինձ թւում էր, թէ ձայնս, խօսքիս շեշտն ինձ կը մատնի, եւ չրթունքներս կծում էի չխօսելու համար:

Էլ քայլելու ոյժ չկար:

— Յոզնա՞ծ ես, հարցրեց բարեկամ զինուորը:

— Այո՛, շատ յոզնած եմ, հազիւ կարողացայ ասել եւ իսկոյն լուցի, որովհետեւ դողացող ձայնս ինձ վախեցրեց:

— Նստենք մի փոքր հանդստանալու, ասաց նա, դուրս գալով ճանապարհից եւ առաջանալով դէպի ստուերախիտ ծառը: Երեւի ինքն էլ էր յոզնած, իմ բարեկամը: Նա թեք ընկաւ իմ կողքին, իսկ միւսը՝ հրացանն ուսին շարունակեց քայլել իմ առաջից յետ ու առաջ: Ես գաղտագողի կերպով նայում էի չորս կողմը. աշխատում էի հայեացքով թափանցել ծառերի թանձր թաւուտների խորը, պրատել ստուերները: Ոչինչ, ոչինչ չէր նկատում: Ականջս սրած, սպասում էի որեւէ ձայնի, որեւէ շշուկի, ոչինչ շէր լսում: Մի՞թէ ստացած տոմսակը մի անողորմ հեղնութիւն չէր իմ դժոխային վիճակի, կամ գուցէ ծրագիրը չի յաջողուել: Կանգուն զինուորը նոյնպէս մերթ նայում էր իր շուրջը, մերթ ինձ, ապա կանգնում, մի վայրկեան ականջ դնում եւ կրկին քայլում:

— Գնա՞նք, բաւական է, ասաց նա, հազիւ հասնենք ժամանակին:

— Է՛հ, թող հանդստանանք, պատասխանեց միւսը եւ աւելի յարմար ձկուեց կանաչ խոտերի վրայ:

Յուսահատութիւնը խեղդում էր ինձ. բերանս չորանում էր անօրինակ յուզմունքից, թիկունքիս վրայից մի ցուրտ բան էր խաղում, ինչպէս սողուն. ես դողում էի, վայրկեանը փախչում էր արագութեամբ, եւ նրա հետ նոյն արագութեամբ, մօտենում էր իմ անդառնալի կորուստը:

— Գնա՛նք, վերստին կրկնեց կանգնած պահապանը, այս անգամ աւելի վճռական, աւելի խիստ չեշտով:

Եւ նոյն վայրկենին անտառի միջից լառեց մի որոտ: Ես տեսայ թէ ինչպէս խօսող պահապանը կանգնած տեղում վեր ցատկեց, ճշաց անօրինակ ձայնով, ձեռքի հրացանը ճօճեց օդի մէջ եւ ընկաւ, ինչպէս խորտակուած ծառ: Կողքիս պառկած հարեւանս ցնցուեց, խլեց հրացանը, պատրաստում էր ոտքի ելնել, երբ ես առանց ինձ հաշիւ տալու զոյդ ձեռքով նրա կոկորդը բռնեցի: Զէի մտածել, չէի ծրագրել այդ յանդուզն, այդ յուսահատ գործողութիւնը, միայն երբ տեսայ առաջինի ընկնելը, բնազդօրէն երկորդդին բռնեցի իմ երկաթէ մատներով: Սկսուեց կատաղի կոփւ իմ եւ նրա մէջ, նա ներքեւից, ես վերեւից. մենք փաթաթուեցինք իրար զայրացած օձերի պէս եւ ատամների կրճտոցով աշխատում էինք ոչնչացնել իրար: Ես էլ ոչինչ չէի տեսնում, զիտէի մի րան, որ պէտք է խեղդել իմ տակն ընկած այն մարդուն, որ իմ մահն էր, իմ կախաղանը, իմ ճակատագիրը: Ես զգում էի իմ մատների տակ նրա պարանոցի ոսկորների ճարճատիւնը, ես տեսնում էի նրա շրթունքների կարմիր փրփուրը, նրա զարհուրանքից ու կատաղութիւնից չուած աչքերը, եւ սեղմում էի ու սեղմում նրա կոկորդը: Նա խոխուում էր, եղունգներով ծուատում իմ երեսը, չանգըռում աչքերս, փորձում էր բռնել կոկորդս. ի զո՞ւր. ես ատամներով կրծուում էի նրա մատների մսերը, պլոկեցի նրա կաշին, որ արիւնոտ ու զաղբելի լաթի պէս կախիխուեց ձեռքերի վրայ: Տասն անդամ բաղուկներս թուլացան նրա հզօր ճիգերի առաջ, եւ կրկին յուսահատ թափով բռնեցի կոկորդը, մատներս թաղելով նրա պարանոցի մէջ ինչպէս երկաթէ ճիրաններ:

Զարհուրելի պայքարը մօտենում էր վախճանին, հակառակորդիս խոխուոցը նուազում էր եւ կամաց կամաց նրա բազուկները թուլանում էին ու կախուում, ոռւնդներից ու բերանից արիւնը հոսում էր թանձր ու դարշելի, ճոթուած աչքերը մնացել էին անթարթ սոսկումի պատկերով, իսկ ես շարունակում էի սղմել, սղմել նրա կոկորդը բոլոր ուժով:

Մէկը բռնեց թեւիցս:

Վեր նայեցի սասանուած:

— Մեռած է, թո՛ղ, ասաց մի ձայն: Գլխիս վրայ կանգնած էր մի մարդ, նա՛ էր դարանամուտ գնդակի բռնել առաջին պահապանին: Նայեցի նրան եւ չէի ճանաչում. դլուխս մթաղնած,

աչքերս շաղուած, ես հեռում էի եւ չէի հասկանում, թէ ինչ է պատահէլ ինձ: Տեսնում էի միայն իմ առաջն ընկած մի հատիկ դիակը եւ չէի իմանում, թէ ինչու այսպէս եղաւ:

— Խսի՛ր, ասաց իմ վրկիչը, ի՞նչ ես քարացել, կորցնելու ժամանակ չկայ, վեր կաց ու անտառը մտիր: Այս դիակները պէտք է հեռացնել ճանապարհից:

Ես ոյժ չունէի, ես մտածում էի, ես մեռնում էի. ինձ թւում էր, թէ ես էլ չկամ, ոչնչացած, չոգիացած եմ: Ալա ես տեսայ, թէ ինչպէս նա նախ մէկ, ապա միւս դիակը քաշէքաշ տարաւ անտառի խորքը եւ կրկին յետ եկաւ ինձ մօտ:

— Վե՛ր կաց, ասում եմ. ապուշ է կտրել:

— Խփի՛ր ինձ հրացանով, ասացի, ոյժ չունիմ:

Ես զգացի նրա հուժկու բազուկները, որոնք անցան թեւերիս տակ եւ քիչ յետոյ անտառի խորքումն էինք, այնտեղ, ուր ընկած էին դիակները: Ինչո՞ւ. ինքս էլ չգիտեմ, բայց նտեցի իմ բարեկամ զինուորի դիակի մօտ, անծայր լքումը վրաս եկաւ, ու զգացի, որ անկարող եմ բաժանուել:

Անտառի խորքից դուրս թռաւ մի եղնիկ, մի գեղանի արարած. նա կանգնեց ականջները խլած իր խոշոր, սիրուն աչքերով մի վայրկեան նայեց դէպ մեզ, դէպի դիակներն ու մարդասպանները, եւ կարծես հասկանալով, թէ ինչ է կատարուել, չեշտակի փախաւ դէպի հակառակ կողմը, անիծելով ե՛ւ մարդուն, ե՛ւ աշխարհը:

Հեռո՞ւ, հեռու լսուեց մի զանդակի ձայն. չուտով ծառերի արանքից տեսնուեց ճանապարհի վրայ մի քառածի կառք եւ մէջը մի ուրախ զոյդ — մի տղամարդ եւ մի կին, երկուսն էլ ջահիլ ու կենսուրախ. նրանք կողքի կողքի սղմուած՝ խօսում էին ու ծիծառում. ջահիլ կինը ճեռքի կանաչ սոսով խփում էր երիտասարդի դէմքին, եւ երկուսն էլ քրքջում էին: Կառապանը նոյնպէս ուրախ, նոյնպէս անհոդ սուլում էր ձիերին, չըխկացնելով մտրակը:

Դեռ երբեք կեանքն իր վայելքներով այդ աստիճան չէր զայրացրել ինձ. ես զգացի, որ ընդունակ եմ մեր դարանից դուրս ընկնել, երեքին էլ խողխողել այդ գեղեցիկ ձիերի հետ:

Կառքն անցաւ սրարշաւ. անտառում վերստին լուռթիւն տիրեց: Մնացինք մենակ մեր զոհերի եւ մեր ոնցի հետ: Ընկերս վաղուց էր խարտոցել շղթաներս, բայց ես չէի էլ մտածում ոտքի ելնել, կարծես կապուած էի այդ դիակներին, կամ աւելի ճիշդ՝ դը-

ըանցից մէկին եւ փախչել չէի կարող: Նայում էի միայն մէկին, իմ դժբախտ բարեկամին. նայում էի եւ մտածում այն խեղճ պառաւի մասին, որ հեռաւոր երկրում, ուր ամէնքն էլ աղջատ են, ամէնքը դժբախտ, լալիս է իր մի որդու համար, սկզում է մէկի մահը, մինչդեռ նա պէտք է արցունքը կրկնապատկի այժմս եւ չդիտէ՛, չդիտէ՛... վերջին մահացու հարուածն է ստացել եւ չդիտէ՛...

Եւ այս բոլոր արցունքն ու արիւնը նրա համար, որ ես աղատ լինեմ, եւ մայրս էլ կ'ուրախանայ անշուշտ: Այն միւսը՝ այն հեռաւոր, անծանօթ մայրը պիտի լայ, նրա զաւակը պիտի մեռնի օտար հորիղոնների տակ, որպէսզի ես ապրեմ, իմ մայրը խընդար:

Ո՞ւս, զարհուրելի հակասութիւնը կեանքի. երբ մէկը պիտի մեռնի, մէկ չէ^o, ով. երբ մի մայր պիտի արցունք քամի, մէկ չէ^o, թէ ով:

Նե՛ղ է, նե՛ղ է այս նղովուած աշխարհն աղատութեան հահամար:

— Գնա՛նք, կրկնեց ընկերս:

Ես լուռ էի եւ չէի կարողանում հայեացքս պոկել բարեկամիս չուած, արիւնոտ աչքերից, նրա կապտած դէմքից, նրա դուրս ընկած լեզուից, որի մէջ թաղուել էին ատամները:

Արեւն իջաւ, իջաւ կամացուկ եւ ծածկուեց լեռների թիկունքում: Վերջալոյսն այն երեկոյ աւելի արիւնոտ էր քան երեք: Մառախուղը կախուեց լեռների ստուերների հետ: Անտառը կամաց կամաց մթնեց. խաւարի հետ մէկտեղ սոսկումն իջաւ անտառի եւ մեր գլուխների վրայ: Ծառերը սսկուեցին, ինչպէս մի ահաւոր գաղտնիքի իրազեկ: Գետակը մոնչում էր խուլ ձորում աւելի կատաղի, աւելի թափով: Աստղերը մէկիկ մէկիկ փայլեցին երկնքում. նրանք սահում անցնում էին, եւ ամէն մէկն ասես աշխատում էր ծառերի արանքից նայել դէպի վար՝ այնտեղ, ուր չորս աչքեր ապակու պէս սառած՝ անշարժ յառած էին մնացել երկընքին, նայում էին յաւիտենական մի հարց շրթունքների քարացած:

Խաւարն ինձ աղատեց, դիակներն էլ չէի տեսնում. մէկ դետակն էր շարունակում իր ողբը, փրփրում, կատաղում ձորի մութ անդունդներում, ծեծում էր, ծեծում ժայռերը մի փոքր աղատու-

թեան համար, եւ այդ ազատութիւնը չկար, չկար, հարկաւոր էր ափերը խորտակել, աւերած ու մահ սփռելով ամէն կողմ:

Նո՞յնն էր, նո՞յնն էր, ազատութեան համար աւերած ու ոչնչացում, ամէն կողմ բնութեան մէջ, որի վրայ ծանրացել է մի հին անէծք:

— Գնա'նք, կրկնեց ընկերս տասներորդ անգամ:

Եւ երբ շղթաներից ազատուած ոտքի ելայ, որ հեռանամ, զգացի որ բեռս աւելի ծանր է, աւելի դաժան, քան շղթայուած ժամանակ:

... Ու գայլերը ոռնում էին ինչպէս այս գիշեր:

Քայլում էի ընկերոջս յետեւից, թիկունքիս գրել էի երկու ահաւոր ոճից եւ մայրերի արցունքների ծանր բեռը. ծնկներս ծալւում էին այդ բեռի տակ, ու հոգիս միտում էր մութ ցաւից: Վերըստին նստեցի ուժասպառ եւ դլուխս ձեռներիս մէջ առած՝ երկար, երկար արտասւում էի:

Ազատ էի եւ չգիտէի ուր տանել այդ ծանր, այդ դժնղակ ազատութիւնը: Եւ թւում էր ինձ թէ, ես վաղուց հետէ մոլորուած եմ անտառում, կորել եմ գիշերուայ մթութեան մէջ անդառնալի կերպով, ե՛ւ անտառ, ե՛ւ գիշեր՝ երկուսն էլ ո՛չ սկիզբ ունեն, ո՛չ վախճան, կեանքի պէս սեւ, կեանքի պէս անհուն:

— Գնա'նք, յիմա'ր, ի՞նչ ես կնոջ պէս հեծկլուում, կրկնում էր ընկերս, առաջս կանգնած:

Չոր խոտերը խշխացին, եւ նոյն վայրկենին մեր կողքով շեշտակի անցաւ սարսափից խենթացած մի նապաստակ, որին հալածում էր մի կատաղի գաղան. «Նոյնն է, ամէնքը խեղդուում, բզկտում, լափում են իրար», մոմուացի ես: Վերստին ոտքի ելայ:

Պէտք էր քայլել, քայլել....

Գնում էի խարխափելով խաւարի մէջ, դիպչում էի ծառերին, վայր ընկնում, կրկին բարձրանում, կրկին ընկնում, դետակը շարունակում էր որոտալ, մոմուալ. խաւարը ճնշում էր իմ թիկունքը, ինչպէս ծով անէծքի մի թանձր բեռ, եւ գայլերը շարունակում էին ոռնալ մեր յետեւից:

Պէտք էր քայլել, քայլել կեանքի մեծ ու ցաւոտ ճանապարհով:

Ես «ազատ էի»...

Նա վերջացրեց ու լռեց եւ մի փայտի կտորով խառնում էր կրակի մոխիրները:

— Բայց դու չասացիր, թէ ո՞վ էր այն ընկերը, որ այդպէս անակնկալ քեզ աղատեց:

— Ո՞վ էր այն ընկերը... ահա սա, եակունջու մէջ փաթաթ-ուած այս մարդը, որ երկաթէ ջղեր ունի եւ բրօնդէ հողի: Տե՛ս, ինչպէս քնած է, երանի՛ սրան...

Ես էլ կ'ուզէի քնե՛լ, քնե՛լ, որպէսզի էլ չտեսնեմ այն ճոթ-ուած աչքերը, այն քաշ ընկած լեզուն, այն կարմիր փրփուրով ծածկուած շրթունքները: Օ՛, չի ապրուում, չի ապրուում, ի՛մ ընկեր, այս դժոխքի աշխարհում ո՛չ աղատ, ո՛չ անազատ կեանքով, նե՛ղ է, նե՛ղ է...

Արցունքները խեղդեցին նրա կոկորդը, նա գլուխը բոնեց ձեռների մէջ եւ հեկեկաց:

Կրակը վառուեց ու մոխիր կտրեց. խաւարը թանձրացաւ մեր դլսի վրայ. ծառերը մեղմիւ փափսում էին:

Ես լուռ էի, խօսք չէի դտնում միսիթարելու ընկերոջս:

Եւ գայլերը ոռնում էին...

ՄԵՆԱԿՈՐ ԾԱՌԸ

Եւ հսկայ ծառը տնքաց կացնի հզօր հարուածներիտակ։

— կա՛ց, կա՛ց . . .

Փայտարի ձեռքը սառեց օդի մէջ. կացինը սպառնալի կերպով կախուած մնաց երկնքի տակ եւ իր պապուն բերնով ժպտում էր արեւի պայծառ շողերին, ասես հեղնում էր վիրաւոր ծառի ցաւաղին ճիչը: Բայց մարդը քարացած էր ու գունատ, բարձրացած կացինը ցած չէր իշնում, հարուածը դողում էր օդի մէջ. փայտարը լսում էր, աչքերը չուած նայում էր առաջը, մի՞թէ ծառն է ճուրն-չում ու լալիս, մի՞թէ նա է բողոքում այդպէս. կա՛ց, կա՛ց . . .

Ծառի արմատին բացուած վէճքը լայն էր ու խորը եւ նրանից կաթ-կաթ ծորում էր գարաւոր հսկայի կեանքը:

Ծառը լալիս էր ու հառաչում եւ նրա արցունքը մերթ բոսոր էր, մերթ վճիտ. նա արիւն-արցունք էր լալիս:

Ծառը լալիս էր արիւն-արցունք, նա ապրել էր ուղում:

Հրա՛չք էր, ահաւո՞ր հրաշք:

Ալեւոր անտառը չկար այլեւս. անթիւ սէզ ու հպարտ ծառեր, երկնարերձ կաղնիներ, սղատերեւ նոճիներ, բուրաշատ եղեւնիներ, որոնք այնքան տարիներ համբուրուել էին ամպերի ու արեւի շողերի հետ, աստղերը դիտել ու հողմերն անիծել, բոլորն ընկան մէկիկ-մէկիկ, եւ ո՛չ մէկը, որ այսպէս ճռնչար ցաւով, եւ ո՛չ մէկը, որ այսպէս հօնքուր-հօնքուր արիւն-արցունք քամէր ու տնքար՝ «կա՛ց, կա՛ց»:

Փայտարը յետ յետ քաշուեց, հոգին սոսկումով եւ ոտները դողով բռնուած՝ ու նայում էր, թէ ինչպէս ընկնում են ծառի վէճքից կաթիլները, մէկ կարմիր՝ ինչպէս արիւն, մէկ վճիտ՝ ինչպէս արցունք:

Հինաւուրց անտառի վերջին ծառն էր այն, վերջին մնացորդը այն հպարտ ցեղի, որ իշխում էր լեռնակատարների ու երկնարերձ ժայռերի վրայ, վերջին կեանքն էր, ուր ապրում էին այնքան անցած սերունդներ, բոլոր իրանից առաջ ընկած մեռելները, որոնք ապրում էին այնքան դարեր՝ չար ու բարիով բեռնաւոր-ուած:

Վերջին ծառն էր եւ մեռնել չէր ուղում, լալիս էր, հեծեծում ու բողոքում:

Հինաւուրց ծառը արիւն-արցունք էր լալիս եւ նրա հետ սղում էր իր ցեղի գերազոյն մահուան սուգը.

— կա՛ց, կա՛ց...

Զարհուրելի էր. եւ փայտարը բոլոր ոյժով շալրտեց իր կացինը երկնքի երեսին:

Կացինը վերստին պապղաց օդի մէջ, չողերը խաղացին նրա փայլուն շրթունքներին. մի վայրկեան նա պտոյտներ գործեց երկնքի տակ, թուաւ հեռո՞ւ, կատաղաբար զարկուեց կարծր ժայռի կրծքին, գողաց ու զրնդաց, կայծերի խուրձեր ցանեց իր շուրջը, ապա վար ընկաւ, թափ անցաւ գետնի մէջ: Ոճրի գործիքն էր այն, որ գնաց թաղումելու հողի մէջ, չէ՞ որ ծառն էր բողոքում ու լալիս, նա արիւն-արցունք էր լալիս: Եւ ընկնում էին կաթիւները մերթ կարմիր որպէս արիւն, մերթ վճիտ՝ որպէս արցունքը կոյսի:

Եւ փախաւ փայտարը առանց յետ նայելու, սիրուր դող, հոդին ցաւած, գնաց աշխարհին պատմելու ահաւոր հրաշքը, մինչդեռ վիրաւոր ծառը շարունակում էր նրա յետեւից հեծեծալ ու լալ. նա լայն բացել էր իր վէրքը երկնքի առաջ, մենակ սղում էր հսկայ ցաւը մեռած անտառի:

Դարե՞ր անցան:

Այնտեղ՝ ուր քամիները սանձ չունեն եւ վազվզում են խելագար թափով եւ ժայռերը լալիս են մըրիկների հետ. այն խրոխտ լերան երկնարերձ կատարին, ուր յոզնած ամպերը՝ երկնքի այս հալածական աղջիկները, գաղար են առնում մի վայրկեանով անէծք մըրնչալու հողմերի ճակատին. այնտեղ՝ ուր բնութեան երգը յոկ հեծեծանք է եւ նրա երկունքի հառաջանքը կորչում է անհունութեան ծոցում առանց արձագանքի, մեն մենակ ցցուած է նա, այն սղաւոր ծառը: Ժայռերը շինած պատուանդան իր ոտքի, նա մերթ թափ առած կարծես նետում է դէպի երկինք, համբուրուելու նրա հետ, եւ փախում է աստղերին կեանքի խորհուրդը, իրերի գոյութեան մեծ առեղծուածն է փնտում. եւ մերթ հինաւուրց հսկայի բոլոր վեհութեամբ մենակ որոճում է դարերի ցաւը, մենակ երկնում է դարերի երկունքը:

Եւ իր մենակութեան մէջ նա հօր է, գեղեցիկ ու անընկճելի այս յետին շառաւիղը մի մէծ անտառի, յետին մնացորդը մի ձըխլըւած ցեղի:

Տարիներ են թաւալւում տարիների յետեւից ոճիրներով ու

արիւնով բեռնաւորուած, երկնաբերձ լերան ոտների տակ ցաւոտ կեանքը սողում է հողը կրծելով ու փրփուր թքելով առանց անուն գտնելու իր անվերջ տառապանքին եւ ծառն այնտեղ է, ամպածը-բար ժայռերից բարձր, բարձր, էլի օրօրում է իր մութ խոհերն ու յոյսերը, իր հին յուշերն ու հաւատը հողմերի գրկում, դողում է մի մութ բանից, որ իր գլխից էլ վեր է, դողում է ու ապրում:

Լերան կատարին տնկուած է նա մեն մենակ, որպէս մի յաւի-տենական պահապան, որ հսկում է աշխարհի վրայ, անհաս բարձունքից դիտում է ներքեւում սողացող կեանքը, լալիս է՝ երբ աշխարհը հրճում է, եւ ծիծաղում ու քրքջում մըրիկների հետ անսանձ ու խօլ ծիծաղով, երբ ներքեւում դժբախտ մարդը մոնչում է ցաւից ճակատադրի ծանր բեռի տակ:

Նրանից յետոյ մի ժայռ է լալիս հողմ ու փոթորիկներից յոդնած. լալիս է ժայռը վճիտ արցունքով եւ մի անվերջ համբոյրով կախուած զառամեալ մօր շրթունքից, դողդողում է անդունդների վրայ, որ իր գերեզմանն է եւ մահից առաջ ուղում է դէպի վեր մենաւոր ծառին, իր ծեր ընկերին հարցնելու համար, թէ չի յոդնել նա այդ խօլ հողմերից, որոնք այնտեղ վերեւում ծեծում են, ծեծում են: Ընկերով մեռնելն էլ մի բան է, ժայռն իր մահուան ընկեր է փնտուում: Ծառը վեհօրէն օրօրում է իր դլուխը. ո՛չ. նա չի յոդնել, նա կրում է իր մէջ այնքան սերունդներ եւ մի մեծ հաւատ: Թաղուած է հողում, սլինդ ու խորը, նայում է առջեւը փուռած կոճկերին, որոնք ամէն գարնան կամաց կամաց ծիլ են արձակում, մատղաշ ծիլեր դալար ու յուսալից, որոնք ժըպտում են իրանց ծեր պապին:

Եւ մենաւոր ծառը սպասում է. նա մենակ է որոճում դարերի ցաւը, մենակ է երկնում դարերի երկունքը, իսկ ծիլերը բարձրանում են հա՛ բարձրանում. նոր անտառն է այն, որ աշխարհ է դամիս:

Այնտեղ, ներքեւում, անդունդի մէջ փրփրուն գետակն է մըռնչում, հեծեծանքով լալիս, ժայռերն է ծեծում յուսահատ թափով, ալիք ալիքի յետեւից հրհրում ու անցնում ծովերին պատմելու անհատնում ցաւը անցնող իրերի եւ վիշտը նրանց, որոնք մեռնում են առանց ապրելու, կամ ապրում են մահը փնտուելով:

Եւ ծառը վերումն է, նայում է ծիլերին ու սպասում. նա մենակ է երկնում իր ցեղի երկունքը:

Գոռ մըրիկների եղբայրն է նա. նրանց հետ է լալիս կամ մոըն-

չում աշխարհի վրայ, նրանց հետ նա խենթ երգեր է հիւսում նիր-հող լեռների համար, նրանց լեզուն դիտէ, նրանց մի մասն է նա:

Ամպերը նրա զլիսին պարեր են կազմում եւ թեւ թեւի տուած՝ գառնում են թափով, կայծակները բոցոտ համբոյր են տալիս նը-րան եւ ժայռերը նրա ոտների տակ փշրում, եւ արծիւների անթիւ սերունդներ ճախրում են նրանից բարձր ու մեռնում են ամպերը քաշելով վրաները, որպէս պատան, եւ ծառն ա'յնտեղ է շարու-նակ, խրոխտ ու մենաւոր:

Նա մենակ է որոճում գարերի ցաւը, մենակ է երկնում իր ցե-ղի երկունքը, որից նորանոր ծիլեր ծնւում են ու բարձրանում:

Եւ հաւատում է ծառը, եւ սպասում է նա, որ անտառը կը բարձրանայ հողի տակից, գերեզմաններից կեանքը կը դարթնի վերստին, ամայի լեռների լերկ կողերն ու կուրծքը նորէն շփեղօ-րէն կը զարդարուին:

Եւ երբ մի կատաղած քամի դալիս է աւերիչ թափով փշրելու մատաղ տունկերը, կամ հովիւն իր հօտով հասնում է այնտեղ յոյսի անդաստանը տրորելու. երբ ուշ զիշերին գայլերը ոռնոցով իրարից խլիլում են նողկալի որսը եւ ոտի տակ տալիս ու փշրում տունկերը արիւնոտ պայքարով, մենաւոր ծառը յանկարծ օրոր-ւում է թափով, ծոնչում է ցաւադին եւ վերստին լաւում է բար-ձունքների վրայ նրա վշտոտ հառաջանքը՝ «կա՛ց, կա՛ց»...

Հին վէրքն այդ ժամին բացւում է իր բոլոր լայնութեամբ ու խորութեամբ, ծառը նորից լալիս է հօնքուր-հօնքուր, կաթիւներն ընկնում են մերթ կարմիր՝ որպէս սրտի արիւն եւ մերթ վճիա՝ որպէս արցունքը սղաւոր կոյսի: Մենաւոր ծառը դողում է մեռ-նող կեանքերի համար, նրանց ցաւից է նա լալիս արիւն ու ար-ցունք:

Եւ նրա ճիչը ահաւոր է, խաւարը դողում է նրանից, լեռները ցնցւում են զարզանդով, գաղանները՝ պոչերը կծկած, գլուխ-ները քաշ շոապում են ծածկուել, հովիւը սոսկումով խաչակըն-քում է երեսը, քաշում է գլիսին իր հին արան, եւ շտապում է դէպի վար, իսկ մատղաշ տունկերը կրկին բարձրանում են ու ժպտում իրանց ալեւոր պապին:

Եւ ծառն սպասում է, ծառը հաւատում է...

Նրանից ներքեւ աշխարհը տառապում է, սղում ու ապրում:

Ամէն շաբաթ սողալով ու չանդուելով լեռն ի վեր է ձգւում դժբախտ մարդկանց խղճուկ կարաւանը, քաշ տալով դէպի մե-

նաւոր ծառը իր ցաւերի բեռը . ով հիւանդ ունի , կամ սիրտն է ցաւած , ով մի սէր ունի , յոյսի է կարօտ , ով որ դարդ ունի ու դարձան չունի , եւ բոլոր դժբախտներն ու ցաւագարները , բոլոր տառապողները խաւարի մէջ , որոնց հոգին լալիս է մեղմիւ եւ հաւատ է փնտուում է , որպէս հիւանդ երեխան իր մօրը . բոլոր մերժուածները կեանքի , բախտի բոլոր խորթ զաւակները ժայռերը չանգոելով ու հողը լիզելով , աչքերում արցունք , սրտերում՝ կրակ , գնուում , հասնուում են մենաւոր ծառին եւ իրանց ցաւին դարձան են ինդերում :

Դողդոջուն ձեռքով իրանց զգեստից մի կտոր , ծլանքի մի ծայր կապում են նուիրական ու հրաշագործ ծառի ոստերից եւ նրա հետ էլ իրանց հողու մի մութ կտորը , մի այրուած , դաղուած կտորը : Ծունկ են չոքում նրա տակը , արմատը թրջում դառն արցունքով . մենաւոր ծառը լալիս է նրանց հետ իր արիւն-արցունքով եւ վըշտացած , ցաւած սրտերին տալիս է մի փոքր հաւատ , մի փոքր յոյս ապրելու :

Եւ մարդիկ ցած են դալիս նուիրական բարձունքներից սփոփուած , գնում են վերստին կրելու իրանց կեանքի ծանր բեռը ճակատագրին հնազանդ . եւ խղճուկ կեանքը փայլ է ստանում , ցաւադար դոյութիւնն էլ անմիտ չի թւում . հաւատը դէպի մի լաւապագայ փրկում է նրանց :

Մենաւոր ծառը մնում է վերում , մենակ է որոճում խեղճերի ցաւը , մենակ է երկնում կեանքի երկունքը , իսկ նրա շուրջը նոր անտառը բարձրանում է , հա՛ բարձրանում :

Ս Ե Ւ Ե Բ Պ Գ Ե Ր

(1906)

ՍԵՒ ԵՐԳԵՐ

«Փա՛ռք յաղբուածներին . . .»

Բոլորն ընկան, բոլո՞րը . . .

Կարմիր վերջալոյսը նահատակների մարող հայեացքների վերջին բոցերով բեռնաւորուած՝ քաշւում է լեռնակատարներից :

Զարհուրանքի ու խենթութեան ահաւոր օրը մեռնում է . սեւ հառաչներն ու զայրոյթի յետին ճիշերը գալարուում են ու մարում եթերի մէջ :

Ո՞վ է հեծեծում այդպէս խորունկ ու անյոյս :

Ո՞ր բոցավառ կուրծքը վիժեց այդ հսկայ վիշտը, որ զառանցում է խելայեղօրէն ընկած հսկաների գունատ ճակատների վըրայ կոացած :

Խե՞ղճ ազատութիւն . . .

Նրա ճակտի պայծառ աստղերը պլազում են արիւնոտ փայլով՝ որպէս մահաբեր դնդակով խոցուած եղնիկի պղտոր աչքերը :

Բոնութեան ժանիքներով կրծոտուած, վիրաւոր ու արիւնաքամ, նա սողում է կարմիր, արիւնաշաղ փոշների միջից . երկիրը սարսուում է նրա հսկայ տնքոցից, թունաւոր օձերը Փշշացնելով սողում են յետելից :

Եւ ծիծաղում են ճիւաղները կատաղութեան ու քինու քրքի-ջով :

Եւ նրանց գարշելի երախներից բարկ փրփուրը՝ ինչպէս թանձրացած նղովք, կաթ-կաթ ընկնում է երկրի վրայ . նղովքի ամէն մի կաթիլից մի վէրք է բացւում մայր-երկրի կրծքին՝ բոսրային ու գարշելի:

Ո՞վ է հեծեծում լոռութեան մէջ :

«Փա՛ռք յաղթուածներին» . . .

Զարհուրանքի ու վսեմ խենթութեան մի մրրիկ էր այն, ուր նրանք մռնչում էին ինչպէս շղթայաղերծ հողմերը :

Կուրծք՝ կրծքի, բազուկ՝ բազկի բախուեցին ազատութեան հոյակապ ու խօլ կոռուի մէջ . բախուեցին ու ընկան բոլո՞րը, բո-

լո՛րը... Այդպէս են ընկնում խորտակուած կաղնիները գոռ փո-
թորկի ժամին:

Եւ օրը մեռնում է արիւնոտ վերջալոյսով այն ըմբոստ ու գու-
նատ ճակատների վրայ:

Շո՛ւտ, շո՛ւտ, ա՛հ, անդա՛րձ անցիր, ո՛վ սոսկումի ու խելա-
գարութեան օր. ի՞նչ երկար է կարմիր հոգեվարքը. ծծուած ա-
րիւնը երկրի կրծքում վշվում է ու տնքում:

Հսկայ վիշտը հեծեծում է խելայեղօրէն:

«Փա՛ռք յաղթուածներին»...

Ո՞ր նզովուած ու ճիւաղային ճեռքը այսքան արիւն շիեց եր-
կընքի ճակատին:

Ո՞ր հրէշի ճիրանները կարողացան պատառուտել երկնքի սիր-
տը, որից կաթ-կաթ արիւն է մաղւում երկրի վրայ:

Վիրաւո՞ր երկինքը:

Բոլոր ընկածների կարմիր ուրուականները ամպերից կախ-
ուած՝ նայում են դէպի վար...

Եւ նրանց շանթի հայեացքները շիկացած նետերի պէս սլա-
նում են կարմիր մթնոլորտով ու գնում մխրճուելու բորենիների
հոգիների մէջ, որոնք քրքջալով լակում են տաք արիւնը, խենթա-
նում ու ոռնում բոնութեան յաղթանակի մահացնող երդը:

Շո՛ւտ, շո՛ւտ, ա՛հ, անդա՛րձ անցիր, ո՛վ սոսկումի ու խելա-
գարութեան օր:

Ի՞նչ երկար է վերջալոյսի կարմիր հոգեվարքը:

Ո՞վ է հեծեծում լուսթեան մէջ:

«Փա՛ռք յաղթուածներին»...

Խաւա՛րը, խաւա՛րը...

Այնքան սեւ՝ որքան բոնաւորի հոգին, այնքան թանձր՝ որ-
քան դարաւոր չարիքը:

Եւ իջաւ նա, այն խաւարը բախումների ու հոյակապ պար-
տութեան վրայ. իջաւ հսկայական չղջիկի պէս եւ իր թեւերի տակ
պարուրեց կարմիր արհաւիրքը:

Խաւարի ծո՛վը՝ սեւ ալիքներով...

Եւ նրա տակ սողում են խորտակուած հսկաները, որոնց հո-
գիները մխուած էին ըմբոստութեան խենթացնող աւազնում,
որոնց ուխտուած ճակատները երկինքն էր կերտել հպարտ խելա-

դարութեան մուրճերով եւ որոնց կրծքերը դու սլայքարների մութորիկներում կարծրացել էին բրօնղի պէս :

Խաւարի հետ մէկտեղ մահը գուրս սողաց գաղտագողի ու երկչու, վիրաւորների գալարումների եւ ցասումների առաջընկճուած, նա հոտոտում է արիւնը եւ օձի աչքերով նայում է զոհերին, մինչեւ կը հասնի գերազոյն վայրկեանը:

Բոլորն ընկան, բոլո՞րը...

«Փա՛ռք յաղթուածներին» :

Ճանապարհը զարհութելի է :

Ճեռո՞ւ, հեռու այս արիւնոտ վայրերից դէպի այնտեղ՝ ուր մոնչում են քամիներն առանց արցունքի, ուր մըրիկները զայրոյթով բախում են կուռ ժայռերն ըմբռոստութեան ուղին հարթելու դէպի անեղը անյայը:

Դէպի խրոխտ մըրիկները, դէպի հպարտ ժայռերը, որոնց յաւիտենական սլայքարը արծիւներն են երդում ու սեւ զիշերները:

Խորտակուած յոյսերի առապարներով քայլում եմ խաւարի մէջ:

Նզովքն ու սոսկումը ոճրի ծոցից սողալով, քաշ են գալիս իմ յետեւից : Նրանց սակորների շնչակոցը հնչում է իմ ականջներում, սառը մատները սղմում են իմ ծոծրակը, եւ նրանց նողկալի հեւքը թափանցում է երակներիս մէջ ինչպէս եռացող թոյնը :

Ամէն տեղ նրանք են, ազատութեան մարտիկները յոյսերի հպարտ բարձունքից դահավէժ :

Թանի՞սն են...

Բոլորն ընկան, բոլո՞րը...

«Փա՛ռք յաղթուածներին» :

Մենաւոր կաղնին հեծեծում է խաւարի մէջ:

Այնքան կորած հառաջանքներ, համր ցաւեր, մոլորուած ճիշեր, բռնութեան լծի տակ տնքացող հողիներ, որոնք գիշերուայ հետ դալիս են փարելու նրա ոստերին :

Գիշերն է լալիս եւ նրա ցող արցունքները կաթիւ կաթիւ ընկնում են տերեւների վրայ:

Հողիս զառանցում է լոռութեան ծոցում գալարուող ցաւից եւ ատելութեան ու զայրոյթի թունաւոր օձը ճգճգւում է ու զարթնում : Լուռ ու հանդա՛րտ կաց, թունաւո՞ր սողուն, կծիկ կծիկ

ուատի՛ր արդար ցասումի շուրջը, ծծի՛ր, ծծի՛ր իմ երակների մէջ
հոսող քէնը, որ բռնութիւնը քամեց այնտեղ:

Լուռ ու հանդա՛րտ, նզովուա՛ծ սողուն. թո՛ղ, որ ես գիշեր-
ուայ մէջ դարանակալ շանթեմ այն կրունկը, որ քայլեց այնքան
հոյակապ ճակատների վրայով, որ տրորեց ու պղծեց այնքան
սրբութիւններ, որի ժանրութեան տակ ճարճատեցին այնքան մէջ-
քեր:

«Փա՛ռք յաղթուածներին» :

Եւ ոչ մի լոյս ազատութեան բոսոր վէրքերի վրայ. վիթխա-
րի քաղաքը մորթոսուեց ու ընկաւ: Ազատող չկայ, այն գիշերն
է լալիս: Եւ բորենիները լակում են տաք արիւնը: Յողնած եմ
այս ցաւոտ ու երկար ճամբաններից:

Պատրանքներս ցնդուեցին արիւնոտ մատախուղի հետ ախտա-
ւոր հողմերի չնչով: Ծանրացած ու դժբախտ դանդիս տակ մոըն-
չում են բոլոր նրանք, որոնք ընկան ահաւոր ու հոյակապ բա-
խումների մէջ:

Մեւ մտքերը ճիւազների պէս չանդում են ուղեղս, եւ ատե-
լութեան ծովը եռում ու փրփրում իմ խոցուած հոգում:

Ո՞ւհ, այս գիշերը, ինչպէ՞ս է հեծեծում:

Եւ նրա ճայնից ազատութեան մարտիկների ոսկորները դո-
ղում են շիրիմների մէջ եւ տաք դիակները զայրոյթով ցնցում են
ու շարժում՝ նզովելով մահը, որ չեն կարող երկրորդ անգամ
դանել, որպէսզի այդ հեծեծանքի փոխարէն յաղթանակի զոռ եր-
դերով փոթորկեն տիեզերքը:

«Փա՛ռք յաղթուածներին» :

Փոթորիկն է դալիս — ահազին ու աւերիչ:

Ազատութեան հեծեծանքից խենթացած լեռները երկնեցին
նրան:

Խաւարը սարսում է ու կծկում:

Ճանապա՛րհ. փոթորիկն է դալիս շանթերից պսակներ գնելու
ուխտացածների բոսոր ճակատներին:

Մենաւոր ծառը երերաց ու դողաց :

— Հանդա՛րտ, մի՛ ճոնչա, իմ իսկ'զմ ընկեր, թո՛ղ որ յաղթ
բնին յենեմ արիւնից ու անէծքից շշմած գլուխս. թո՛ղ՝ որ այս
ցաւով տնքացող գանգս զովացնեմ քո կրծքին եւ ատելութեան ու

թունոտ կատաղութեան բոցերով եփուած սիրտս հանգչի քեզ վլրայ:

Պի՛նդ կաց, ալի՛նդ . փոթորիկն է գալիս, հողմերը ճռնչում են աւերածի ու ոչնչութեան երդը եւ ամպերը՝ շանթերով յղի, իրար դալարուած, իջնում են համբուրելու հսկաների վէրքերը, փըս-փըսալով նրանց ականջներին.

«Փա՛ռք յաղթուածներին»:

Եւ ճայթեց . . .

Երկինքը փուլ եկաւ ահակնաղղորդ թնդիւնով : Խաւարի քօղը պատառ պատառ ցըիւ եկաւ փայլակների ու շանթերի բոցերով եւ արհաւերքը մերկ ու այլանդակ ցցուեց երկնքի առաջ :

Վերաւորների ու դիակների շարքերը . . .

Քանի՛սն են :

Նրանք անշարժ յառել են անհունութեան իրանց չռած աչքե-րը, որոնց մէջ քարացել է անիրաւ ու կանխահաս օրհասի բոլոր խենթ ցասումն ու կիղիչ վիշտը :

Վերաստին որոտաց, տնքաց երկինքը, օձապտոյտ շանթերը դալարուեցին իրար եւ ամպերն ալեկոծւում են անհունութեան ծովում :

Դիակների շեղակոյտը եռում է եւ շարժւում :

Ա՛հ, այդ լայնաթիկունք իրանները, որոնք մըրիկի շնչով ցնցւում են, բարձրանում եւ կրկին խորտակւում անյոյս անէծքի մռնչիւնով :

Եւ միւսները դողդողացին ու բարձրացան յաղթուած հսկա-ների բոլոր վեհութեամբ . շանթերի փայլի տակ նրանց բոլոր վէրքերը բոց են արձակում եւ նրանց մոլոր հայեացքը կախում է կայծակներից :

Բարձրացան ու ընկան . . . անհնարին է, անդարձ են ընկել :
«Փա՛ռք յաղթուածներին» . . .

Ճայթի՛ր, ճայթիր, փոթորի՛կ . . .

Ո՞ւմ է վնտուում այն հերարձակ ու սեւաղղեստ կինը . ո՞ր վշտի արդանդից ծնաւ այդ ողին, որ փոթորիկի ու շանթերի տակ տարւում է որպէս խելադար աստուածութիւն :

Եկա՛ն . . . քանի՛սն են նրանք . . .

Բոլորը հերարձակ, բոլորը սեւաղղեստ ու հոյակապ :

Ամպերի՞ց իջան . . .

Մայրե՛րն են նրանք :

Փա՛յլ տուր նրանց սեւ ուղիին, ո՞վ գոռ փոթորիկ. շանթերդ փոխիր նրանց խոշտանգուած ոտների տակ, յետ քաշիր խաւարը:

Մայրերն են նրանք :

Սոսկումի եւ արհաւերքի մէջ նրանք եկել են ուխտուած ու ընկած զաւակների վառ վէրքերը համբուրելու:

Մայրերն են նրանք եւ չեն լալիս. իրանց թաւիչ ձեռներով մեղմիւ փակում են ազատութեան մարտում ընկած զաւակների աչքերը:

Եթէ լաց լինեն, նրանց արցունքից հողը կը բռնկի եւ անիծուած աշխարհը մոխիր կը կտրի:

Եւ չեն լալիս . . . քեզ են սպասում . . .

Մայրերն են նրանց՝ որոնք ընկան:

«Փա՛ռք յաղթուածներին» . . .

Տե՛ս. խաւարը վերստին թանձրացաւ, ճայթի՛ր, փոթորի՛կ, մըրկոտ չնչով սրբիր վիրաւոր ազատութեան տատասկոտ ուղին:

Ո՞վ է խիզախում արհաւերքի այս կարմիր դիշերը:

Մայրերն են նրանք, ո՞վ գոռ փոթորիկ, եւ քո քոյրերը:

Քեզ պէս ըմբոստութիւնը երկնեցին իրանց կողերի տակ.

Քեզ պէս շանթերը ծնան իրանց բոցոտ արգանդից.

Քեզ պէս արիւն-արցունք լացին տառապող ու ցաւադար աշխարհի վրայ:

Կեանքի բոլոր հպարտ պայքարումների, բոլոր վսեմ խենթութիւնների փրփրուն աղքիւրը նրանց կրծքերի տակն է եռում.

Բոլոր խորունկ ու անյոյս ցաւերը նրանց հոգիների ժէջ են լալիս.

Բոլոր լուռ վշտերը նրանց սրտերի մէջ են վշվում.

Բոնութեան թունոտ ժանիքները նախ նրանց կրծքերի մէջ է թաղնուում.

Մայրերն են նրանք, որոնք իրանց ցաւադար կողերի տակ կեանքի մեծ փոթորիկներն են երկնում.

Եւ չեն լալիս.

Մայրերն են նրանց, որոնք բոլորն ընկան, բոլո՛րը . . .

«Փա՛ռք յաղթուածներին» . . .

Անցա՛ւ . . .

Ե՛ւ շանթ ու փոթորիկ, ե՛ւ որոտ ու կայծակ :

Ցասման ու վրէժի պատրանքներս ցնդուեցին արիւնոտ մասխուղի հետ ախտաւոր հողմերի չնչովլ .

Ծանրացած գանգիս տակ մռնչում են բոլոր նրանք, որոնք ընկան հոյակապ բախումների մէջ :

Ատելութեան ու զայրոյթի ծովը դարձեալ եռում է ու փըր-փըրում իմ վիրաւոր սրտում :

Եւ հեռո՞ւն լեռներն են երկնում փոթորիկների փոթորիկը, աշխարհաւեր ու ահագին :

Եւ մռայլ գիշերն է մենակ հեծեծում ու տնքում .

«Փա՛ռք յաղթուածներին» . . .

ՔԱՂՑԱԾՆԵՐԻ ԵՐԳԸ

Մենք անթիւ ենք . Հին դարերի ցաւն ու նղովքը ծնեց մեզ :

Անթիւ ենք մենք ու բոլորս լալիս ու հեծեծում ենք սեւ երկընքի տակ : Քաղցն ու աշխատանքը , ցաւի զոյտ ամոլ լծուած քաշում են մեր փշուած մարմինները դէպի մութ հեռուն եւ գիշատիչ անդղները կրծոտում են մեր մերկ արնաթաթախ միսերը :

Մենք անթիւ ենք , աշխատում ենք ու քաղցած ենք , քաղցա՛ծ :

Քաղցի ու աշխատանքի դատապարտուածներն ենք մենք . մեր մորթին քրքրուեց տանջանքի քամած բարկ ու դառն քըրտինքից , մեր ջիլերը կարծրացան ցաւի ծանր բեռի տակ եւ անիրաւ ու անարդար հարուածների տակ մեր գանդերը տնքացին : Բոլոր լկտի վայելքները մեր կոշտացած ու գալարուած թիկունքներին բարձրացան :

Մեր արիւն-արցունքի շաղախով անարդ պորտարոյծները յղփացան եւ մենք՝ թշուառ ու հալածական՝ մեր ցաւոտ դլուխները դնելու տեղ չունինք լայնարձակ աշխարհում :

Եւ մենք աշխատո՞ւմ ենք , մենք քաղցած ենք , քաղցա՛ծ :

Մեր կրծքերի տակ , ու բաղուկների մէջ մայր բնութեան ըստեղծագործող ու համր զօրութիւնն ունինք , եւ նրա համբերութեան անծայր ծովի մէջ մեր տանջուած հոդիները մխեցինք :

Արդարութեան եւ իրաւունքի անզրահ մարտիկներն եղանք եւ աշխարհը թունաւոր նետերով մեր կուրծքը խոցուեց :

Մենք չրողոքեցինք , այլ տնքացինք ահագին ցաւից . տնքացինք ու աշխատեցինք մեր դահիճների համար եւ մենք քաղցած ենք , քաղցա՛ծ . . .

Եւ մեր աշխատա՞նքը , տենդուտ , խելագար , յարատեւ քաղցի ու տանջանքի զառանցանքն է այն :

Մեր ձեռքերով բարձրացրինք մեր ուսերին բռնութեան չէնքի խօլ կամարները եւ մեր բաղուկները ճարճատում , եւ մեր ոսկորները ճոնչում են այդ նղովուած բեռի տակ : Կուացած ու դըժ-բախտ՝ մենք խելայեղօրէն դարբնեցինք մեր դահիճների բախտը , երբ բարկ հնոցի կայերի տակ մեր սեւացած կաշին թշուած , ճենճերում էր ու ծուէն-ծուէն կախկխուում մուրացիկի քուրջի պէս :

Մենք աշխատում ե՞նք ու քաղցած ենք, քաղցա՛ծ :

Մենք անթիւ ենք՝ քաղցի ու նզովքի հնագանդ զաւակներ : Եւ բոլորս լալիս ենք, բոլորս հեւում ու տնքում եւ մեր ճիչն ու հեծեծանքը սեւ հողմերն են ցրում անիրաւութեան պղծուած անապատներում : Անմիտ ու անդիտակից՝ մենք թափով կռում ենք մեր բազուկների շղթաները, երբ մեր մուրճերի հարուածների տակ՝ ըմբոստացած զնդանն է բողոքում : Մեր արցունքի կաթիւները թունաւոր ու պղտոր՝ ընկնում են շիկացած երկաթի վրայ եւ մետաղը զայրոյթից ծոմուում է ու վշվում ինչպէս ծեծուածդաղանը :

Այսպէս ենք աշխատում եւ քաղցած ենք, քաղցա՛ծ :

Երբ վաղորդեան ցոլքերից գունատուում են մեր խաւար որջերի մոայլ պատերը, մենք նզովում ենք արշալոյսը եւ դուրս ենք սողում տանջանքի սեւ շարաններով : Եւ գլուխների մի ծով, որի վրայ թուխս է նստել մեծ տառապանքը ինչպէս մութ ամսը հորիզոնում, գնում է թաղուելու լեռների արդանդում, ուր յօրանջում են խաւարն ու նզովքը : Դէպի մեր ամենօրեայ Գողգոթան :

Կարիքի ու ցաւի հսկայական օճն է առաջնորդում մեղ իր սառն ու նողկալի օղակներով զալարուած մեր կոշտացած թիկունքներին . նա շղթայում է մեղ մեր մութ ճակատագրին, Փշչում է մեր ականջների տակ, երբ մեր ուժասպառ բազուկները մի վայրկեան կախւում են մեր ուսերից, երբ մեր վաստակարեկ ծնկները ծալւում են տառապանքի ծանր բեռի տակ :

Այսպէս ենք աշխատում մենք եւ քաղցած ենք, քաղցա՛ծ :

Դարեր է, ինչ ցաւը քաղցած արծուի պէս կրծում է մեր սիրտը, կեանքը կաթիլ կաթիլ թոյն է քամում մեր երակների մէջ . մենք անիծում ենք աշխատանքը, որ ակօսում է մեր սեւ ճակատները լոկ տառապանք ու գանութիւն ցանելու համար, երբ մեր շուրջը մեր արիւն-արցունքը, մեր քրտինքը լափելով՝ մեղկերն ու լկտիները սողում են փայլուն գարշանքի, օրինաւոր ոճիրների եւ անիրաւութեան մէջ : Ո՞վ դատապարտեց մեր քաղցին ու աշխատանքին, ո՞վ դալարեց մեր թիկունքին կարիքի հրէշաւոր օձը . զդո՛յշ, նզովուած սողուն, ըմբոստութեան շղթաները ցնցուում են խուլ չոփնդով եւ հրաբուխը թնդում է մեր հոգիների խորքերում :

Զգո՛յշ, քանի մենք աշխատում ենք ու քաղցած ենք, քաղցա՛ծ :

Նայեցէք մեր հոգիների խորքը, ուր խաւար անդունդներում,

ինչպէս մութ զնդանում, կարմիր չարչարանքն է պրկուած շղթաներով, որ կատաղի բորենու պէս կաղկանձում է ու մոմոռում կըրծոտելով իր ժանդու օղակները: Մեր դարաւոր դահիճների ատելութեամբ է սնուած նա, եւ ամէն մի նոր հարուածի հետ, որ աշխարհն իջեցնում է մեր թիկունքին, հին շղթաները շառաչում են խօլ ու ահաւոր շոփնդով, որպէս դղրդիւնը զարթնող հրաբուխի: Զգո՛յշ, քանի մենք աշխատում ենք ու քաղցա՞ծ ենք, քաղցա՞ծ:

Օ՛, բաւակա՞ն է, նայեցէք մեղ ձեր գիշատիչի աչքերով, մեր կուրծքը պայթում է տարիների ցաւից ու թոյնից. մեր հոգիների մէջ զայրոյթն է եռում, որպէս ամպերի սեւ ծալքերում միացող կայծակ: Մաշուած են շղթաները կապկապուած զարհուրանքի, մենք կը բարձրացնենք մեր տանջուած դլուխները յուսահատ թափով, մենք կը ցնցուենք ու կը ծառանանք ինչպէս խայթուած ու ցասկոտ վիշապը, եւ այն ժամանակ զգո՛յշ, մենք շատ ենք աշխատում ու քաղցած ենք, քաղցա՞ծ:

Բաւական է մեր արցունքը, բաւական է մեր արիւնն ու քըրտինքը. կեանքը կամ խնջոյք է կամ տանջանք ամէնի համար:

Ո՞վ հիւսեց քաղցն ու աշխատանքը եւ մեր տանջուած թիկունքին դրեց, իսկ մեղկութիւնն ու վայելքները չնական երջանկութեան համար զատեց: Լսո՞ւմ էք հեռաւոր փոթորկի խուլ թընդիւնը, որ գոռ արձագանգներով անցնում է աշխարհի վրայով: Մեր ըմբոսառութեան առաջին ճիշն է այն, հազար տարիների քաղցի ու տանջանքի աղաղակը, բոլոր գերեզմանների մոնչոցը, որոնք իրանց բութ ծոցում սղմած ունին մի հին բողոք մեծ լոռութեան ահաւոր բեռի տակ:

Զգո՛յշ, մենք շատ ենք աշխատել ու միշտ ենք քաղցած:

Եւ մենք գուրս կ'ընկնենք մոայլ այրերից, ուր մեր կեանքը մաշուեց ժայռերը չանգուելով, այն բարկ գեհեններից, ուր մեր տրորուած միսերը երկաթները կրծեցին, խոնաւ ու մութ նկուղներից, ուր մենք լացինք ու սողացինք քաղցած: Մենք դուրս կ'ընկնենք որպէս զայրոյթի մրրկուած ու փրփրաղէղ ծով, որ խորտակում է հինաւուրց պատնէշները եւ թաղում իր տակ այնքան աշխարհներ: Մենք հազար տարիներ շարունակ նղովել ենք մեր մայրերի երկունքը, մենք նղովել ենք արեւի առաջին ցոլքը, որ մեր խանձարուրը գուրգուրեց: Եւ այդ նղովքն է, որ զայրոյթով ու թոյնով շաղախուած՝ մենք այժմ ման կ'ածենք մեղ հետ, քանի որ մենք աշխատում ենք ու քաղցած ենք, քաղցա՞ծ:

Լսո՞ւմ էք գետնափորերից ու այլերից բարձրացող մոլն-չիւնը. այն մեր երդն է, հսկայական հեծեծանքը տանջանքի: Ա-ւերիչ մըրբիկներից ենք խլել նրա խենթ հնչիւնները եւ կայծակ-ների թափի վրայ չափել նրա գոռող յանդերը: Մենք երգում ենք մեր հին քաղցը, որ ճիւաղի ճիրաններով մեր միսերն է քրքրել. մենք երգում ենք մեր բզկտուած բաղուկները հոլանի, եւ մեր սղմուած բուռնցքներն ահազին. մենք երգում ենք մուրճե-րը պողպատի, եւ հարուածը որ ժայռերն է խորտակում:

Մենք երգում ենք ու ծառանում. չչ մենք շատ ենք աշխատել ու միշտ ենք քաղցած. ճանապա՛րհ, ճանապարհ նրանց, որոնք տքնել են՝ առանց վայելելու, արիւն-քրտինք են թափել ու միշտ դժբախտ են, որոնք վաստակել են ու լացել, քաղցից ապարանք-ներ են կերտել անապաստան մնալու համար. ճանապա՛րհ, աշխա-տանքն է անցնում հզօր ու ստեղծագործող, որ այլեւս քաղցած չի ուղում մնալ:

Ճանապա՛րհ...



ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Հայ գաւաբարբառներից եւ օտար լեզուներից առնուած բառերի

Անգուման	— անհետ, անհաւանական, անսպասելի
Ամպիդոկլ	— հին Յունաստանի փիլիսոփաներից, որ ըժշկութիւն էլ գիտէր
Բալզամ	— բալասան
Բաղ	— այգի
Բարիկադ	— փողոցային կոփւների պատճէչ
Բլօն	— բղէջ
Եօլա գնալ	— գլուխ թափել, համակերպել
Զարգանդ	— սարսափ, սոսկում
Էներգիա	— ոյժ
Իդէա	— գաղափար
Իլլիւզիա	— պատրանք
Իւրկա	— շրջազգեստ
Խազեյին	— տէր, գործատէր, խանութսլան
Խւեր ու շառ	— բարի ու չար
Խսկի	— բնաւ
Կուրորտ	— ամառային հանդստավայր
Կօշմար	— մղձաւանջ
Հալիւցինացիա	— բանդագուշանք, պատրանք, ցնորք
Ննրվ (ային)	— ջիղ, ջղային
Զէք	— գրպան
Չհաննամ	— դժոխք
Չիգրու	— ի հեճուկս

- Ասրկազմ
 սիտուայէն
 սու
 սվկուել
 սիւրտուկ
 սհաբ-

 Տրագեդիա

 Մանիա
 մախմուր
 մանիփէստ
 մատրոնա
 մէտաֆիզիկա
 մոզայիկ
 միլանիսօլիկ

 Վեստալկա
 Վիտրին

 Պարիա

 Քամբալս
 Քէաֆուր

 Ֆատում
 Փէտա
 Փոն
- դառն, կծու հեղնանք
 - քաղաքացի
 - հինգ սանտիմ (Փրանսական դրամ)
 - լուլ
 - երկար քղանցքներով բաճկոն
 - ժամ
 - ողբերգութիւն
 - դառնանցանք, մոլութիւն
 - թաւիշ
 - հրովարտակ
 - հին Հռոմում պատուաւոր, յարդուած կին
 - բնաղանցութիւն
 - դոյնզդոյն մանր քարերով, ապակիներով եւայլն յօրինուած նկար, դարդ
 - մելամաղձոտ
 - հին Հռոմում Վեստա աստուածուհու քրմուհի
 - ցուցակեղեղ
 - դրկուած (Հնդկաստանի մէջ, մինչեւ վերջերս, անմերձենալիների, դրկուածների դասակարգը)
 - անբախտ
 - չարամիտ
 - ուրուական, տեսիլ
 - պարիկ
 - նկարի մէջ առարկաների ետեւը երեւացող տարածութիւնը

ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿ

	էջ
Երկու Խօսք	1
Լոռութիւն	5
Մոխիբների Տակից	133
Անդուները	175
Կեանիքի Վէպերը (Առաջաբանի տեղ)	213
 ՄԵՐԺՈՒԱԾՆԵՐԸ	215
Խմ Փռքիկլ Բարեկամուհին	215
Արձանի Մօտ	229
Մենաւոր Մարդը	234
Պարիաները	242
Երեխաները	254
 ՀԵՄԵԾԱՆՔՆԵՐ	260
Մուրացիկը	260
Այն Գիշերը	267
Մենի Սողում Ենի	277
Փողոցում	287
 ԲԵՌԸ	295
Զին	295
Դարերի Ճամբորդը	300
Լու'ց, Պա'ռաւ, Լա'ց	310
Քրիչը	315
 ԼԱՑՈՂ ՅՈՅՍԵՐ	322
Չորեքնուկը	322
Վրեժխննիք Զանգը	328
Ծովլը	332
Գայլերը Ոռնում Էին	333
 ՄԵՒ ԵՐԳԵՐ	376
Մեւ երգեր	376
Քաղցածների Երգը	383



Иван Ильин

Иван Ильин
Библи-